ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ



ԿՈՄՍ ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎ

9(47.925)
П-50

ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԿՈՄՄ ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎ

4638

ԵՐԵՎԱՆ 2005

ՀՄԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Պ 505

Գիրքը հրատարակության է երաշխավորել
«Հրաչյա Աճառյան» համալսարանի գիտական խորհուրդը:


Պ 505 **Պետրոսյան Վ.**
«Կոմս Լորիս-Մելիքով»- Եր.: 2005. - 480 էջ

Գիրքը նվիրված է հայ ժողովուրդի արժանավոր զավակ, նշանավոր զորահրամանատար, Ռուսաստանի ականավոր պետական գործիչ Միքայել Տարիելի Լորիս-Մելիքովի կյանքին ու գործին:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 99930-4-394-x

© Վ. Պետրոսյան, 2005թ.



Զրի տպագրությունը հովանավորել եմ այն գիտակցությամբ, որ մեր երիտասարդ ընթերցողը հնարավորություն կունենա ծանոթանալ հայ ժողովրդի փառքն ու պատիվը բազմապատկող նրա արժանավոր զավակներից մեկի՝ Միխայել Տարիելի Լորիս-Մելիխովի կյանքին ու գործին:

ԱՎԱԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Երևանի «Հրաչյա Աճառյան»
համալսարանի ռեկտոր, բանասիրական
գիտությունների դոկտոր-պրոֆեսոր

Գիրքս սիրով նվիրում եմ 1918 թ. մայիսին
Ապարանի ճակատամարտին
և Հայրենական մեծ պատերազմին մասնակցած
Հարթավանի իմ համագյուղացիների սուրբ հիշատակին:

ԽՈՍՔ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Ո՞վ էր Միքայել Տարիելի Լորիս-Մելիքյանը, Լորիս-Մելիքովը:

Հայ ազգային գործի՞չ էր, թե՞ հայ իրականությունից կտրված, հեռու կանգնած օտարամոլ:

Նշանավոր ռազմական գործի՞չ էր, թե՞ ցարական Ռուսաստանի բազմաթիվ գեներալներից մեկը:

Ռուսական կայսրության խոշոր պետական գործի՞չ էր, թե՞ սովորական ցարական չինովնիկ:

Առաջադեմ հայացքներ ունե՞ր, թե՞ կուրորեն ծառայում էր ցարական գահին:

Ռուսաստանի հզորությունն ամրապնդելու կողմնակի՞ց էր, թե՞ գործում էր նրա շահերին հակառակ:

Այս և նմանատիպ բազմաթիվ հարցեր, իրարամերժ պատասխաններով, միշտ հնչել են Լորիս-Մելիքովի հասցեին, ինչպես նրա կենդանության ժամանակ, այնպես էլ նրա հրաժարականից ու մահից հետո:

Լորիս-Մելիքովն իր մարդկային հմայքով, արժանապատվությամբ, նրբանկատ վարվելակերպով, հարգալից ու հոգատար վերաբերմունքով, ազնվությամբ վայելում էր իր ժամանակի Ռուսաստանի շատ գործիչների՝ Ալեքսանդր Երկրորդ ցարից մինչև նշանավոր գրողներ Լ. Տոլստոյի, Ֆ. Դոստոևսկու, Ի. Տուրգենևի, Մ. Սալտիկով-Շչեդրինի ու հասարակ զինվորի համակրանքն ու հարգանքը:

Բայց միաժամանակ, Լորիս-Մելիքովն իր սկզբունքայնությամբ, անաչառությամբ, նպատակին հասնելու անկոտրում կամքով, Ռուսաստանի փառքը բազմապատկելու նվիրվածությամբ, կեղծիքն ու քծնանքը չհանդուրժելով, կաշառակերի ու գանձագողերի դեմ անզիջում պայքարով ձեռք էր բերել շատ թշնամիներ՝ Բիսմարկից մինչև Պոբեդոնոսցև, որոնք ոչ միայն նրա շուրջ բանսարկություններ էին կազմակերպում, այլև խոր ատելությամբ էին լցված, ձգտելով նրան հեռացնել ասպարեզից:

Այսօր էլ Լորիս-Մելիքովի անձի ու գործի նկատմամբ կա հետաքրքրություն: Եվ դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Դրանցից առաջինը վերաբերում է նրան, թե ինչպես 19-րդ դարի վերջին, ավելի ճիշտ 1880-1881 թվականներին հայ ժողովրդի զավակ Միքայել Տարիելի Լորիս-Մելիքյանը դարձավ ռուսական կայսրության կառավարության փաստացի ղեկավարը, Ալեքսանդր Երկրորդ ցարից հետո Ռուսաստանի երկրորդ դեմքը, ունենալով բացառիկ իրավունքներով իշխանություն:

Մինչ այդ, Ռուսաստանի պատմության մեջ այդպիսի դիրքի էին հասել

18-րդ դարի առաջին կեսին հերցոգ Բիրոնը և 19-րդ դարի առաջին կեսին, Նիկոլայ Առաջին ցարի օրոք կոմս Արակչեևը: Բիրոնն իր հզոր իշխանությունը օգտագործում էր անձնական շահերի համար և մեծ վնաս հասցրեց Ռուսաստանին: Իսկ Արակչեևն իր բացառիկ իշխանությամբ Ռուսաստանում ավելի խորացրեց հետադիմությունը և կաշկանդեց երկրի զարգացումը:

Նրանց հակառակ, Լորիս-Մելիքովն իր ամբողջ գործունեությամբ բազմապատկեց Ռուսաստանի ռազմական փառքը: Նա առաջարկեց բարեփոխումների այնպիսի ծրագիր, որի իրականացմամբ ոչ միայն խորացվելու էին 19-րդ դարի 60-ական թվականներին սկսված ռեֆորմները, այլև Ռուսաստանին դուրս էին բերելու զարգացման այն ուղին, որը նրա համար պայմաններ էր ստեղծելու աշխարհի առաջատար երկրների շարքում իրեն պատկանող արժանի տեղը գրավելու համար:

Եվ ի պատիվ Լորիս-Մելիքովի, պետք է ընդգծել, որ նա այս ուղղությամբ, թեև դժվարին պայմաններում, քիչ աշխատանք չկատարեց, չխնայելով ոչ եռանդ և ոչ էլ առողջություն...

Ճիշտ է, մի առժամանակ ընդհատվեց Լորիս-Մելիքովի առաջարկած բարեփոխումների ծրագրի իրականացումը, սակայն կյանքն առաջ էր գնում, պատմական զարգացումը Ռուսաստանի առջև արդեն 20-րդ դարի սկզբին, նոր պայմաններում դրեց Լորիս-Մելիքովի ծրագրով ընթանալու անհրաժեշտությունը: Բայց հանիրավի, այսօր Լորիս-Մելիքովին չեն հիշում, առաջին պլան մղելով Ստոլիպինին, մոռացության տալով նրա անունով կոչված կախաղանները:

Ստոլիպինն, որին այսօր լիբերալները դարձրել են իրենց կուռքը, իսկական դահիճ էր: Նա մտցրեց ռազմա-դաշտային դատարաններ, որոնք Ռուսաստանի հազարավոր քաղաքացիների մահապատժի ենթարկեցին, աքսոր քշեցին: Ինչպես վկայում են փաստերը, Ստոլիպինը 90 անգամ ավելի շատ մարդկանց մահապատժի ենթարկեց, քան նրանից առաջ 80 տարիների ընթացքում:

Ռուսաստանի պանծալի որդիներից մեկը՝ Վ. Ի. Վերնադսկին 1908 թ. գրել է. «Երկիրը հեղեղված է արյունով... Ամեն ինչ պահպանվում է միայն բիրտ ուժով»: Լ. Ն. Տոլստոյը Ստոլիպինի գործունեությունն անվանեց «սարսափելի ու կեղծ»:

Ստոլիպինին պաշտպանում էին միայն միապետականները: Այդ ի՞նչ արդարություն էր, երբ Ստոլիպինի մտցրած օրենքով մեկ կալվածատիրոջ ձայնին հավասարեցվում էր 7 քաղաքաբնակի, 30 գյուղացու և 60 բանվորի ձայն...:

Հայոց պետականության անկումից հետո, բազմաթիվ հայ գործիչներ հանգամանքների բերումով, անցնելով այլ երկրներ, իրենց գործունեությամբ աչքի են ընկել, հասել բարձր դիրքերի: Նույնիսկ Բյուզանդական հզոր կայսրությունում ստեղծվեց հայկական դինաստիա, որի ներկայացուցիչներից Կոնստանդին Արշակունի կայսրի դուստր Աննան 988 թվականին ամուսնացավ Ռուսիայի մեծ իշխան Վլադիմիրի հետ, որի օրոք էլ ռուս ժողովուրդն ընդունեց քրիստոնեություն: Մեծ իշխան Վլադիմիրի և Աննայի ամուսնությամբ

Ռուսիայի իշխանական դինաստիան դարձավ Բյուզանդիայի հայ Արշակունի կայսերական տան բարեկամը: Աննայից ծնված Վլադիմիրի երկու որդիները՝ Գլեբն ու Բորիսը ռուսական ուղղափառ եկեղեցու կողմից հրչակվել են սրբեր: Հետագայում, 1060 թ. Վլադիմիրի և Աննայի թոռնուհին՝ Աննան ամուսնացավ Ֆրանսիայի Հենրիխ Առաջին թագավորի հետ: Այս ամուսնությունից ծնված Ֆիլիպ Չորրորդ թագավորի աղջիկ Իզաբելան դարձավ Անգլիայի թագավոր Էդվարդ Երկրորդի կինը: Մեծ Բրիտանիայի այժմյան թագուհին նրանց շառավիղն է:

Եվ ահա, դարերի ընդմիջումից հետո ասպարեզ է իջնում մի նոր հայ գործիչ, որին վիճակվեց դառնալ Ռուսաստանի նման խոշոր երկրի կառավարության փաստացի ղեկավարը: Այն Ռուսաստանի, առանց որի գործուն աջակցության, անհնար էր ապահովել հայության անվտանգությունն ու դարավոր իղձերի իրականացումը: Այդ գործիչն եղավ Լորիս-Մելիքովը: Եվ դժվար չէ պատկերացնել այն ժամանակվա հայերի հրճվանքը, որոնք Լորիս-Մելիքովի հետ մեծ հույսեր էին կապում հայկական հարցն արդարացի լուծելու համար:

Արդյո՞ք արդարացված էր Լորիս-Մելիքովի հետ հյուսեր կապելը, որն այնպես փայփայում էին հայ ազգայինը պահպանող առաջադիմական գործիչները: Այո, արդարացված էր: Սակայն, դժբախտաբար, հայրենասեր գործիչը դրա համար քիչ հնարավորություն ունեցավ: Բայց այդ ասպարեզում ինչ էլ որ հասցրեց Լորիս-Մելիքովը կատարել, անգնահատելի նշանակություն ունեցավ հայ ազգային ազատագրական պայքարի գաղափարախոսության բյուրեղացման համար:

Մինչև կյանքի վերջը Լորիս-Մելիքովը սերտորեն կապված մնաց հայ ազգայինը պահպանող գործիչների հետ և իր հավատարիմ զինակից Կարապետ Եզյանի միջոցով շատ արժեքավոր խորհուրդներով ուղղություն էր տալիս նրանց գործունեությանը:

Լորիս-Մելիքովն ամբողջովին ու անմնացորդ նվիրվեց Ռուսաստանի ռազմա-քաղաքական, տնտեսական հզորության ամրապնդմանը, ձեռք բերելով հսկայական հեղինակություն ինչպես ռուսական կայսրությունում, այնպես էլ Եվրոպայում:

Միքայել Տարիելովիչը խորությամբ զգում էր Ռուսաստանի նշանակությունը հայոց կյանքում և բարձր էր գնահատում նրա բարերար դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում: Եվ Ռուսաստանի ունեցած այդ դերի համար որպես հատուցում, որպես երախտագիտություն, Լորիս-Մելիքովն որդիական հավատարմությամբ ծառայեց Ռուսաստանին, նպաստեց նրա փառքի բազմապատկմանը: Լորիս-Մելիքովից հետո ասպարեզ են եկել շատ հայ գործիչներ, որոնք ապրելով ու գործելով Ռուսաստանում, զբաղեցնելով տարբեր դիրք, միշտ հետևել են Լորիս-Մելիքովին՝ հավատարմորեն ծառայել Ռուսաստանին որպես երախտագիտության արտահայտություն այն ամենի համար ինչ արել ու անում է Ռուսաստանը ի նպաստ հայ ժողովրդի:

Լորիս-Մելիքովն իրավամբ իր արժանավոր տեղն է զբաղեցնում հայոց այն մեծերի շարքում, որոնք իրենց գործունեությամբ նպաստեցին Ռուսաստանի,

ռուս ժողովրդի հետ Հայաստանի, հայ ժողովրդի ռազմաքաղաքական դաշինքի հաստատմանը, տնտեսական ու մշակութային կապերի ամրապնդմանը:

Գտնվելով 19-րդ դարի 70-80-ական թվականների ռուսական ռազմաքաղաքական նշանակալի իրադարձությունների հորձանուտում, դառնալով կայսրության երկրորդ դեմքը, Լորիս-Մելիքովն իր գործով ու կյանքով ձեռք բերած անձնական մեծ հեղինակությամբ, Ռուսաստանում դեմոկրատական սկզբունքներն արմատավորելու և կիրառելու հետևողականությամբ նպաստեց նաև հայ ժողովրդի միջազգային վարկի բարձրացմանը: Հենց այդ գործունեությունը նկատի ուներ ռուս մեծ գրող Իվան Տուրգենևը, ասելով՝ «ճիշտ են հայերը...»:

19-րդ դարի վերջին, հատկապես Լորիս-Մելիքովի մահից հետո ռուսական մամուլում տպագրվել են մի շարք նյութեր, հուշագրություններ: Հայկական մամուլն էլ որոշ չափով անդրադարձել է կոմսի կյանքին: Բայց այդ բոլորը շատ թերի է: Դրանց հիման վրա հնարավոր չէ ամբողջական պատկերացում կազմել Լորիս-Մելիքովի կյանքի ու գործի մասին:


Հայկական «Մուրճ» ամսագիրը 1889 թ. փետրվարին արտահայտել է հետևյալ միտքը. «Լոռու-Մելիքյանը դարուս ամենախոշոր անձնաւորութիւններից էր. նա ստեղծելու է մի ամբողջ գրականութիւն... Ազգերի հոգեբանութեան, քաղաքականութեան, վարչական գիտութեան, պետական գիտութիւնների և ռազմագիտական գրականութիւնների մէջ նա աչքի ընկնող տեղ է բռնելու, թէ իւր կեանքով և գործունեութեան եղանակով և թէ որպէս հեղինակաւոր գաղափարատէր: Այդ բոլորի մէջ հայկական գրականութիւնը անմաս չը պիտի մնայ, կոմս Լոռու-Մելիքեանի ոգին լուսաբանողը կարող է լինել միայն հայ մարդը, եթէ միայն այդ լուսաբանութիւնը չը պիտի յետաձգի մինչ մի երկու դար հեռու: Հայկական գրականութիւնը ամենայն իրաւունքով կարող է նշանաւոր հանգուցեալի ոգին, բնաւորութիւնը ու մտքի ուղղութիւնը իւր զննողականութեան գործ համարել, իսկ մնացեալը՝ ռուսաց և ուրիշ ազգերի գրականութիւններին աւելի մատչելի բաներ են, բայց առանց որոնց մատակարած նիւթերի՝ նաև հայկական գրականութիւնը իւր այդ գործը միայն թերութեամբ կարող է կատարել»:

Ահա և, նկատի ունենալով ասվածը, իմ առջև նպատակ եմ դրել ինչ որ չափով լրացնել այդ բացը ու ընթերցողի ուշադրությանը հանձնել հայ ժողովրդի արժանավոր զավակներից մեկի՝ Միքայել Տարիելի Լորիս-Մելիքովի կյանքի ու գործի փաստա-վավերագրական պատմությունը:

* * *

Սույն գիրքը գրելիս ինձ մեծ աջակցություն են ցույց տվել Հայաստանի ազգային գրադարանի, Հայաստանի ազգային արխիվի, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, ԳԱԱ հիմնարար գրադարանի աշխատողները, որոնց հայտնում եմ իմ երախտագիտությունը:





ԱՌԱՋԻՆ ՍԱՍ

«Ա՛ր ես որդուս ուղարկում օսար երկիր...»

Միքայել Տարիելի Լոռու- Մելիքյանը, որը հետագայում հայտնի դարձավ Լորիս-Մելիքով անունով, ծնվել է 1825 թ. հունվարի 1-ին Թիֆլիսում: Նրա հայրը՝ Տարիելը սերվել էր Լոռի երկրամասի նշանավոր ընտանիքից, որի արմատներն, ըստ տեղեկությունների, սկիզբ են առնում Հովհան Օձնեցի կաթողիկոսի իշխանական տոհմից:

1801 թ., երբ Վրաստանը միացվեց Ռուսաստանին, այստեղի բարձր խավին պատկանողները մտցվեցին ռուսական ազնվականության շարքը: Այդ ցուցակում էր նաև Տարիել Լոռու-Մելիքյանը: Տարիելը զբաղվում էր առևտրով, գրասենյակ ուներ Լայպցիգում և ինքն էլ հաճախ լինում էր Գերմանիայում: Ուներ երկու որդի՝ Միքայելն ու Վասիլը, որոնց կրթությամբ ու դաստիրակությամբ զբաղվում էր արտակարգ ուշադրությամբ:

Միքայելը սկզբում սովորում էր Արզանյան պանսիոնում, հետո ընդունվեց Ներսիսյան դպրոց: 12 տարեկան հասակում Միքայելն արդեն հիանալի տիրապետում էր ռուսերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներին: Ազատ խոսում էր նաև վրացերեն ու թաթարական /այդպես էին այն ժամանակ անվանում ադրբեջաներենը/ լեզուներով: Բոլորի զարմանքն էր հարուցել, որ 12 տարեկան Միքայելը մայրենի լեզվի նման վարժ տիրապետում էր ևս հինգ լեզվի:

Նկատի ունենալով եվրոպական լեզուներին հիանալի տիրապետելը, հայրը ցանկանում էր Միքայելին ուղարկել Գերմանիա, որտեղ ստանալով լավագույն կրթություն, պետք է ստանձներ հոր առևտրական գրասենյակի կառավարումը:

Հոր մտադրությանը հակառակվում էր մայրը, Կատերինան, միշտ հարցնելով.

- Ո՞ւր ես որդուս ուղարկում օտար երկիր...

«Ծող սոխորի, ինչպես Լոմոնոսովը...»

Տարիելի ընտանիքում ավագ որդու ճակատագիրը դարձել էր ամենօրյա խոսակցության առարկա: Մայրը ոչ մի կերպ չէր համաձայնվում և գնալով ավելի վճռական էր դառնում:

- Չեմ տա, չեմ թողնի, որ իմ Միկոյին Գերմանիա ուղարկես, - ասում էր մայրը ու դառնագին լաց լինում:

Այդ օրերին Տարիելի տան սենյակներից մեկը վարձակալեց մասնա-

գիտությամբ երկրաբան Վասիլի Վասիլևիչ Կլեյմենովը, որը Մոսկվայից էր եկել և հետազոտություններ էր կատարում Թիֆլիսի Տաք ջրերում:

Մի անգամ էլ Միքայելին Գերմանիա ուղարկելու մասին խոսակցությունը բացվեց Վասիլի Վասիլևիչի ներկայությամբ.

- Ի՞նչու Գերմանիա,- հարցրեց նա, - երբ կա Մոսկվայի համալսարանը:

- Ի՞նչ օգուտ դրանից: Ի՞նչ է տղաս բանաստեղծ պետք է դառնա, գիտնական դառնա՞: Թող գնա Գերմանիա, իսկական գործով թող զբաղվի:

- Ի՞նչ եք ասում Տարիել Զախարովիչ, պոեզիան ու գիտությունն էլ կարևոր գործ են և մարդկության համար պիտանի...

- Բայց իմ գործը, - ընդհատեց նրան Տարիելը, - իմ գործը ո՞վ պետք է շարունակի:

- Հարստությունն անցողիկ է, սիրելի Տարիել Զախարովիչ: Դուք Լորիս-Մելիքովներդ այդ ինձանից լավ գիտեք:

- Ահա, հենց դրա համար էլ ուզում եմ տոհմիս համբավը նորից բարձրացնել:

- Ինչո՞վ, առևտրո՞վ, որդուդ Գերմանիա ուղարկելո՞վ:

- Այո: Համոզված եմ՝ որդիս Գերմանիայում մեծ հաջողության կհասնի:

- Տղադ, Տարիել Զախարովիչ, Միշան ընդունակ է, ուշիմ, աչքաբաց և մեղք կգործեք նրա տաղանդը փակելով առևտրի մեջ:

Տարիելը փորձեց առարկել, բայց Կլեյմենովը շարունակեց.

- Միշային պետք է ուղարկել Մոսկվա: Թող գնա Մոսկվա, սովորի ինչպես Լոմոնոսովը, որը փառք բերեց ոչ միայն իր տոհմին, այլև ամբողջ Ռուսաստանին, ռուս ժողովրդին:

Իհարկե, Տարիելը կրթված մարդ էր, գիտեր Լոմոնոսովի մասին, բայց իր որդուն ռուսական հանճարի հետ համեմատելը կարծես զինթափ արեց նրան: Եվ Տարիելը համաձայնվեց: Լորիս-Մելիքյանների ընտանիքում ընդունվեց վերջնական որոշում՝ Միքայելին ուղարկել Մոսկվա սովորելու, սկզբում Լազարյան ճեմարանում, հետո էլ Լոմոնոսովի ստեղծած համալսարանում:

Հետագայում Լորիս-Մելիքովը Կլեյմենովին հիշում էր խոր երախտագիտությամբ, որպես մի մարդու, որը վճռականորեն նպաստել էր նրա կրթությանը...

«Մեկո ջան...»

Մայրը Մոսկվայի հետ էլ չէր համաձայնվում: 12 տարեկան երեխային ինչպես ուղարկել օտար քաղաք: Բայց, երբ իմացավ, որ Լազարյան ճեմարանում սովորում են հիմնականում հայ երեխաներ, ուսուցիչներն էլ հայեր են, իսկ սովորողներն էլ ապրելու են ճեմարանի պանսիոնում, մի կերպ համաձայնվեց:

Ահա, այսպես վճռվեց Միքայելի հետագա ուսման խնդիրը: Մինչև ճանապարհելու օրը, մայրը, ամուսնուց թաքուն, սկսեց դրամ հավաքել: Ընդամենը արծաթե 20 ռուբլի: Ճանապարհելու օրը, մայրը ամուսնուց ծածուկ Միքայելին տվեց մետաքսից կարված մի գեղեցիկ գոտի:

- Միկո ջան, գոտու մեջ դրամ եմ դրել, խնայելով կծախսես:

Միքայելին ճանապարհելու էին եկել բարեկամները, հարևանները, Ներսիսյան դպրոցի համադասարանցիները: Բոլորի աչքերն արցունքով էին լցվել: Հերթով հրաժեշտ էին տալիս, Միքայելին բարին մաղթելով:

Տարիելը, որը խստաբարո մարդ էր, որդուն գրկեց ու պատվիրեց.

- Որդիս, հեռու տեղ ես գնում, ինչ վիճակի մեջ էլ հայտնվես, հիշիր, որ քեզ հետ ես տանում մեր պատիվը, Լոռու-Մելիքյանների պատիվը: Տես, գետնով չտաս:

Հրաժեշտի հերթը հասավ մորը: Նա այլևս անկարող էր զսպել արցունքները, ամուր գրկեց որդուն.

- Որդի ջան, Միկո ջան, - հազիվ ասաց նա ու լուռ համբյուրեց Միքայելի աչքերը...

Անհաջող փախուստ

Միքայելին Մոսկվա էին տանում քեռին՝ Աշոտը և Տարիելի եղբոր որդիներ Այվազն ու Լևոնը: Նրանք իրենց հետ տանում էին նաև զանազան մրգերով բեռնված սայլեր: Առանց արկածների ուղևորները անցան Կովկասյան լեռնաշղթան և դուրս եկան ռուսական անծայրածիր տափաստան: Գիշերելու համար կանգ առան Վորոնեժ քաղաքին մոտ գտնվող Ռոգաչևկա կազակային մեծ ստանիցայում:

Ամբողջ գիշեր Միքայելի հետ տարօրինակ բան էր կատարվում: Հենց աչքերը փակում էր, լսում էր իրեն կանչող մոր ձայնը և տեղից վեր էր թռչում:

Այդպես կատարվեց մինչև լուսադեմ: Վերջին անգամ, երբ մոր ձայնը լսեց, Միքայելը վճռականորեն անկողնուց վեր եկավ, հագնվեց ու կամացուկ դուրս եկավ սենյակից: Նա անցավ երկար բակով ու սկսեց քայլել դեպի հարավ, Թիֆլիս տանող ճանապարհով: Մի քանի օր էր անցել, ինչ Թիֆլիսից դուրս էին եկել, բայց Միքայելին տանջում էր մոր կարոտը: Նա չէր քայլում, այլ վազում էր, համոզված, որ այդպես կհասնի Թիֆլիս, մոր մոտ: Բայց ինչքան կարող էր վազելով անցնել 12 տարեկան երեխան: Շուտով հոգնեց և որոշեց հանգստանալ ճամփեզրին եղած մի փոսի մեջ...

Միքայելի բացակայությունը անմիջապես զգացվեց: Աշոտը, որը լավ գիտեր իր քրոջ որդու բնավորությունը, Այվազի ու Լևոնի հետ ձիեր հեծած սլացան Թիֆլիս տանող ճանապարհով: Նրանք Միքայելին գտան հանգիստ քնած: Աշոտը ձիուց ցած նետվեց ու վազեց դեպի Միքայելը.

- Միկո ջան, գտնվեցիր, - բղավեց քեռին ու ամուր գրկեց Միքայելին: Այսպես ձախողվեց Միքայելի փախուստի փորձը:

Լազարյան ճեմարանում

Միքայելը ընդունվեց Լազարյան ճեմարան:

1814 թ. հիմնադրված Լազարյան ճեմարանը արդեն դարձել էր համբավավոր ուսումնական հաստատություն, որի նպատակները կանոնադրությամբ ձևակերպված էին հետևյալ կերպ. «Հայոց և այլ ազգի երեխաներին տալ կրթության նոր ու լավագույն միջոց, նրանց նախապատրաստել համալսարան ընդունվելու, որտեղ նրանք կարող են պատրաստվել զինվորական և քաղաքացիական պաշտոնավարության համար: Միաժամանակ պատրաստել հայկական դպրոցների համար ուսուցիչներ: Դաստիարակել բարի, ազնիվ քաղաքացիներ»:

Լազարյան ճեմարանը ամբողջ գոյության ժամանակ կարողացավ կատարել իր գլխավոր նպատակը:

Երկար տարիներ, շուրջ 15 տարի, մինչև 1844 թ. ճեմարանի գլխավոր պետն էր Ա. Խ. Բենկենդորֆը՝ երրորդ բաժանմունքի ահարկու շեֆը:

Ճեմարանում դասավանդում էին հայոց լեզու և գրականություն, ռուսաց լեզու և գրականություն, թվաբանություն, քիմիա, երկրաչափություն, եռանկյունաչափություն, հանրահաշիվ, բնագիտություն, ճարտասանություն, տրամաբանություն, աշխարհագրություն, պատմություն, հնագիտություն, վիճակագրություն, վայելչագրություն, նկարչություն, գծագրություն, երգ-պար: Առանձնապես կարևորվում էր ֆրանսերենի, գերմաներենի, հունարենի, լատիներենի, թուրքերենի, պարսկերենի, արաբերենի դասավանդումը:

Լազարյան ճեմարանում բոլոր առարկաները, բացի լեզուներից, դասավանդվում էին ռուսաց լեզվով: Բայց դա չխանգարեց, որպեսզի ճեմարանը կատարեր իր գլխավոր խնդիրը՝ մնալ որպես հայկական դպրոց, ազգային ոգու պահպանման ու զարգացման կենտրոն: Ճեմարանը սկզբում ուներ 4, իսկ հետո՝ 5 դասարան: Ընդունվում էին 10-14 տարեկան երեխաները: Գոյություն ուներ հետևյալ կարգը. առաջին և երկրորդ դասարաններում ընդունվում էին 10-12 տարեկան երեխաները, երրորդ և չորրորդ դասարաններում՝ 13-14 տարեկան երեխաները: Ուսման տևողությունը 7-8 տարի էր: Ճեմարանի աշակերտների մեծ մասը տարբեր դասի պատկանող հայ երեխաներ էին:

Ճեմարանում իբրև դասատուներ աշխատում էին ժամանակի նշանավոր ու բազմակողմանի գիտելիքներ ունեցող հայ, ռուս և այլ ազգության մասնագետներ: Ճեմարանի ռեկտորներից մեկը՝ նշանավոր գիտնական

Վ. Միլլերը իրավացիորեն վկայել է. «Չեմ սխալվի, եթե փաստեմ, որ Լազարյան ճեմարանն ունի այն նշանակությունը հայերի համար, ինչ Մոսկվայի համալսարանը Ռուսաստանի համար»:

Հենց առաջին դասարանից Միքայելը աչքի ընկավ իր արտասավոր ընդունակություններով: Այստեղ նա ոչ միայն կատարելագործեց իր իմացած ֆրանսերենն ու գերմաներենը, այլ տիրապետեց ևս երկու թուրքերեն և արաբերեն լեզուներին: Միքայելի դասընկերներից էին ապագա բժիշկ-բանաստեղծ Գևորգ Ախվերդյանը, «Մեղու Հայաստանի» խմբագիր Պետրոս Սիմոնյանը, Միքայել Նալբանդյանի մտերիմ ընկեր Անանիա Սուլթանշահը և ուրիշներ, որոնք հետագայում, ճեմարանն ավարտելուց հետո աչքի ընկնող ծառայություն մատուցեցին հայ մշակույթի զարգացմանը:

1838 թ. սեպտեմբերի 9-ին գալով Մոսկվա, ճեմարան այցելեց նրա պետ Ալեքսանդր Խրիստոֆորովիչ Բենկենդորֆը: Նրա առջև հանդես եկան ավարտական դասարանի աշակերտները, դրսևորելով իրենց գիտելիքները լեզուների իմացության մեջ: Միքայելը աչքի ընկավ թուրքերենի իմացությամբ և արժանացավ Բենկենդորֆի գովասանքին:

Կարծես ոչինչ չէր խանգարում, որպեսզի Միքայելը հաջողությամբ ավարտեր ճեմարանը և ընդունվեր իր երազած Մոսկվայի համալսարան: Բայց ամեն ինչ միանգամից խառնվեց: Նրան խանգարեց քիմիա առարկան, որը լավ էր սովորում: Հետաքրքրասեր Միքայելը քիմիայի դասերը սովորելիս որոշեց փորձել արտակարգ կպչուն հատկություն ունեցող նյութի ստացումը: Հաջողվեց: Եվ որոշեց այդ սոսինձը փորձարկել չլսված, անթույլատրելի կերպով: Նա իր ստեղծած սոսինձը լցրեց բոլոր աշակերտների համար ատելի դարձած մաթեմատիկայի ուսուցչի աթոռին:

Եվ ահա, չափից ավելի խստապահանջ մաթեմատիկայի ուսուցիչը մտնում է դասարան, խոժոռ հայացք նետում ոտքի կանգնած աշակերտներին և մոտենում սեղանին: Աշակերտները լարված սպասում են՝ ի՞նչ կլինի հիմա: Եղավ այն, ինչ պետք է լիներ: Մաթեմատիկայի ուսուցիչը հանդիսավորությամբ նստեց աթոռին, բայց ինչ որ խոնավություն զգալով, փորձեց տեղից վեր կենալ: Չկարողացավ: Ոչ միայն շալվարն էր կպել աթոռին, այլև կպչուն սոսինձը թափանցել էր ներս և կպել մարմնից: Մաթեմատիկայի խստապահանջ ուսուցչի զավեշտական վիճակը առաջացրել էր աշակերտների անզուսպ քրքիջը:

Խեղճ ուսուցչի բարձրացրած աղմուկի վրա, ներս մտան վերակացուները: Դասը խանգարվեց: Ուսուցչին այդպես աթոռի վրա կպած մի կերպ տարան դասարանից: Միքայելը իր բնավորության համաձայն հանձն առավ կատարվածի պատասխանատվությունը: Անմիջապես հետևեց հեռացման հրամանը և այդ մասին, ըստ կարգի, հայտնվեց ճեմարանի պետ ահեղ Բենկենդորֆին:

«Այնտեղից նա մարդ դուրս կգա...»

Այսպես, 1839 թ. Միքայել Լորիս-Մելիքովը իր քիմիական փորձի պատճառով զրկվեց Լազարյան ճեմարանն ավարտելու հնարավորությունից: Բենկենդորֆի հրամանով Միքայելը պետք է ներկայանար նրան: Եվ այժմ էլ քեռի Աշոտի ուղեկցությամբ նա գնաց Պետերբուրգ: Ամբողջ ճանապարհին Աշոտը նախատում էր Միքայելին.

- Խայտառակեցիր բոլորիս, հիմա ի՞նչ պատասխան պետք է տաս հորդ, անպիտանի մեկը:

Միքայելը լռությամբ տանում էր քեռու նախատինքը: Արդարանալու տեղ չուներ: Բայց ամենից սարսափելին առջևում էր՝ ահեղ Բենկենդորֆը:

Արևելյան Հայաստանը նոր էր միացել Ռուսաստանին: Անցել էր մոտ 11 տարի և ցարական իշխանությունները ամեն կերպ ձգտում էին չփչացնել հարաբերությունները հայ նշանավոր ընտանիքների հետ, մանավանդ, որ Կովկասը դեռ ամբողջովին նվաճված չէր: Կարևորն այս էր և չարժեր ճեմարանում պատահած դեպքին տալ հնչեղություն: Սակայն կատարվածն այնքան զավեշտական էր, որ դրա մասին Բենկենդորֆը պատմեց Նիկոլայ Առաջին ցարին: Ցարը բավականությամբ ծիծաղեց և ասաց.

- Չարժե դրա համար այդ չարաճճի երեխայի ճակատագիրը փչացնել: Տեղավորեք յունկերների դպրոց: Այնտեղից նա մարդ դարձած դուրս կգա...

«Այդ ի՞նչ ես արել...»

Պատանի Միքայելին ուղղակի մտցրին Բենկենդորֆի ընդարձակ առանձնասենյակ: Նայելով նրան, Բենկենդորֆն անմիջապես հիշեց մի քանի ամիս առաջ ճեմարանում թուրքերեն լեզվով խոսող աշակերտին...

Հետագայուն հիշելով Բենկենդորֆի առանձնասենյակ մտնելու պահը, Լորիս-Մելիքովը խոստովանել էր, թե երբեք այդպիսի վատ վիճակի մեջ չէր եղել:

Բենկենդորֆը խոժոռ հայացքով նայեց Միքայելի վրա, մի կերպ զսպելով ծիծաղը, խոսքին խիստ տոն տալով, հարցրեց.

- Այդ ի՞նչ ես արել:

Միքայելը պատասխանեց ինչ որ բառեր արտասանելով: Այնուամենայնիվ, կարողացավ իրեն տիրապետել, ինչ որ մի ներքին ձայն նրան հրամայում էր՝ լաց չլինել, ոչ մի արցունք:

- Դու ձեռք ես բարձրացրել պետական բարոյականության հիմքերի հիմքի վրա, որը կայանում է ղեկավարող անձին անվերապահ պաշտելուն ու հարգելուն: Հասկանու՞մ ես, թե ինչ ես արել դու:

Ի՞նչ պատասխաներ պատանի Միքայելը: Նա շարունակում էր լռել:

- Եվ, - շեշտված ասաց Բենկենդորֆը, - որպեսզի դու այսուհետև սովորես պետական սուբորդինացիան, որպեսզի դառնաս ցարի ու հայրենիքի հավատարիմ ծառա, քեզ տրվում է վերջին հնարավորությունը դրսևորելու լավագույն կողմով...

Բենկենդորֆը ներս հրավիրեց թիկնապահին և կարգադրեց.

- Նա պետք է ընդունելության քննություն հանձնի գվարդիական ենթապրապորշչիկների և հեծյալ յունկերների դպրոցի համար: Եվ հետո դառնալով Միքայելի կողմն ասաց.

- Եթե այդ քննությունը լավ հանձնես, դառնաս համեստության ու արժանապատիվ վարքագծի տեր, ապա քեզ սպասում է մեծ հաջողություն: Հակառակ դեպքում...

Բենկենդորֆը հարկ չհամարեց շարունակել: Թիկնապահի ուղեկցությամբ Միքայելը գլխիկոր դուրս եկավ ահեղ պետի առանձնասենյակից:

«Ծանկ է ազատությունը»

Յունկերական դպրոցի պետը իր պետանդությամբ հայտնի բարոն Շլիպպենբախն էր, որը համոզված էր, թե ով լրջորեն զբաղվում է գիտությամբ, երբեք չի կարող լինել լավ ռազմածակատային սպա: Ահա, այս գեներալ-լեյտենանտի ժամանակ էլ Միքայելը ընդունվեց յունկերական դպրոց, որը դրանից մի քանի տարի առաջ ավարտել էր հայտնի բանաստեղծ դարձած Մ. Լերմոնտովը:

Միքայելը ընդունելության քննություններից վաստակեց բարձր ցուցանիշներ և մտցվեց յունկերների հեծյալ էսկադրոնի 4-րդ դասարան /դա համապատասխանում էր առաջին դասարանին/: Համադասարանցիները Միքայելին այնքան էլ սիրալիր չընդունեցին, ենթարկելով զանազան փորձությունների: Դպրոցում Միքայելը սովորում էր մնալով աննկատ, առանց ոգևորության, բայց առարկաները հեշտությամբ էր յուրացնում:

Ըստ սահմանված կարգի, յունկերական դպրոցի սովորողները իրավունք ունեին հանգստյան օրերին իրենց ազատ ժամանակն անց կացնել քաղաքում: Միքայելը այդ նպատակով իր դասընկեր Ալեքսանդր Նարիշկինի հետ վարձել էր Թիֆլիսից ծանոթ Շահումյանի տանը մի սենյակ: Հենց այդ ժամանակ էլ 1841 թ. տեղի ունեցավ Լորիս-Մելիքովի ծանոթությունը Նեկրասովի հետ:

Զրկված լինելով գոյության միջոցներից, Նեկրասովը պատսպարվել էր պրոֆեսոր Բենիցկու մոտ, որն իր տանը պահում էր Պետրբուրգի տարբեր դպրոցներում ընդունելության նախապատրաստման համար մի քանի սաների: Այդ սաներից մեկը յունկեր Միքայելին ծանոթ էր և նրան հանդիպելու համար հաճախ էր լինում Բենիցկու տանը: Հերթական հանդիպումներից մեկի ժամանակ էլ Լորիս-Մելիքովը ծանոթացավ Նեկրասովի հետ:

Տեղեկանալով, որ Լորիս-Մելիքովն ու Նարիշկինը քաղաքում սենյակ են վարձել, Նեկրասովը ցանկություն հայտնեց միանալ նրանց:

- Թանկ է ազատությունը, - ասաց Նեկրասովը Միքայելի հետ ծանոթանալուց հետո:

Նեկրասովը պատմեց, որ հայրը ցանկացել է որդուն տեսնել գինվորական և Պետրբուրգ է ուղարկել յունկերական դպրոց ընդունվելու: Դրա փոխարեն Նեկրասովը մտել է համալսարան որպես ազատ ունկնդիր և այդ պատճառով զրկվել հոր ֆինանսական օգնությունից:

Լորիս-Մելիքովն ու Նարիշկինը իրենց ծնողներից ամսեկան ստանում էին 25 ռուբլի և դա հնարավորություն էր տալիս նաև օգնել Նեկրասովին: Լորիս-Մելիքովը հետագայում հաճախ էր հիշում Նեկրասովի հետ ընկերության տարիները, պատմում զվարճալի դեպքեր:

Մի անգամ, պատմել է Լորիս-Մելիքովը, նոր տարվա օրերին Նեկրասովը նրան առաջարկում է գնալ Իզմայիլովյան գնդում գտնվող մի չինովնիկի ընտանիքում կազմակերպված երեկոյին, նախապես զգեստափոխվելով: Այդ նպատակով նրանք երեկոյան մտնում են կրպակ և իրենց համար ընտրում համապատասխան հագուստ: Նեկրասովը հագնում է Վենետիկի դոժի տարազ, իսկ Լորիս-Մելիքովը՝ իսպանական ազնվականի: Նրանք կրպակի տիրոջ մոտ թողնում են իրենց հագուստը և պայմանավորվում, որ հաջորդ առավոտյան կգան կվճարեն տարազի համար և ետ կվերցնեն իրենց սեփական հագուստը:

Լորիս-Մելիքովն ու Նեկրասովը կառք վարձեցին և ուղևորվեցին: Ճանապարհին նրանք ստուգեցին ունեցած գումարը, համոզվեցին, որ դա կբավարարի կառքի ու տարազի համար: Բայց այնպես պատահեց, որ երեկոյից հետո նրանք այլ տեղ գնացին, մի քիչ խմեցին և տուն վերադարձան միայն լուսաբացին: Նրանք հանկարծակի եկան, երբ պարզվեց, որ իրենց մոտ մնացած գումարը չի բավարարում հագուստը ետ ստանալու համար:

- Այդ տրագիկոմիկական օրը երբեք չեմ մոռանա, - պատմում էր Լորիս-Մելիքովը և շարունակում,- սկզբում դիմակահանդեսային տարազով վազվզում էինք ցուրտ սենյակում և անհարմար էինք զգում այդ ծիծաղելի վիճակի համար: Որպեսզի մեր սառած մարմինները տաքացնեինք, որոշեցինք վառարան նետել եղած աթոռներից մեկը: Հետո վառարանում հայտնվեցին բազմոցից պոկված ծղոտի կտորները: Շուտով սովը զգացնել տվեց, իսկ ուտելիք գնելու համար փող չէր մնացել: Վերջապես կրպակատիրոջ հետ երկարատև բանակցություններից հետո հաջողվեց նրանից պարտքով ուտելիք վերցնել: Միայն ուշ երեկոյան Նարիշկինին հաջողվեց բազմաթիվ ընկերներից գումար հավաքել և մեզ փրկել:

Լորիս-Մելիքովի ու Նեկրասովի միջև հաստատվեց ջերմ ընկերություն, որը շարունակվեց մինչև դպրոցն ավարտելը: Վերջին անգամ Լո-



Ալեքսանդր Երկրորդ



Ալեքսանդր Երրորդ



Մեծ իշխան
Կոնստանտին Նիկոլաևիչ



Լորիս-Մելիքով



Դ.Ա. Միլյուտին



Ա.Ա.Աբազա

4638

րիս-Մելիքովը Նեկրասովին հանդիպել է 1847 թվականին: Նեկրասովը իր ընկերոջը տարավ Անիչկին կամուրջի մոտ գտնվող իր բնակարանը: Դրանից հետո Նեկրասովը երբեմն-երբեմն իր մասին իմաց էր տալիս, Լորիս-Մելիքովի մոտ երաշխավորագրով ուղարկելով իր մտերիմներին, խնդրելով ցույց տալ աջակցություն: Լորիս-Մելիքովը Նեկրասովից վերջին անգամ նամակ ստացավ 1875 թվականին: Նա խնդրում էր աշխատանք գտնել հիվանդության պատճառով Կովկաս եկած «Ռուսկոե սլովո» թերթի նախկին խմբագիր Բլագովեշչենսկու համար, որին էլ Լորիս-Մելիքովը պաշտոն տվեց Թերեքի մարզում: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Պետրբուրգ եկած Լորիս-Մելիքովը շատ վշտացավ, երբ տեղեկացավ, որ Նեկրասովն այլևս չկա...

«Քիթ» Աբամելիքը

Լորիս-Մելիքովի մտերիմ դասընկերներից Կ. Բորոզդինը հիշում է, որ յունկերական դպրոցում սովորում էր նաև մեկ այլ հայ՝ իշխան Աբամելիքովը, որը Միքայելից մեկ տարի ուշ էր ընդունվել: Աբամելիքը պատկանում էր բարձր շրջաններին և հպարտանում էր, որ իր գեղեցկությամբ հայտնի քույրը թագուհու շքախմբում էր և Կազանի զինվորական նահանգապետ Ֆլիգեր-թիկնապահ Բայրատինսկու կինը:

Աբամելիքին «Քիթ» էին անվանում և երբ մեծ իշխան Միխայիլ Պավլովիչը դպրոց էր գալիս, միշտ իր մոտ էր կանչում նրան և քթից բռնելով քաշում էր: Սա էլ էր Աբամելիքի մոտ առաջացնում հպարտության զգացում: Չնայած մեկ դասարան ցածր էր սովորում, բայց Աբամելիքին դա չէր խանգարում, որ Միքայելին վերևից նայեր, իրեն համարելով արիստոկրատ: Միքայելը իր հայրենակցի առհամարական վերաբերմունքին նայում էր քմծիծաղով: Նա չէր կարողանում թաքցնել իր զարմանքը, թե ինչպես կարող է պատահել, որ մարդը մոռանա իր ազգությունը, իր ազգի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ունենա: Աբամելիքին այս ամենի համար չէր ընդունում Միքայելը, իսկ իշխանն էլ չէր հասկանում, թե Լորիս-Մելիքովն էլ ինչու է հպարտանում իր հայ լինելով: Այս հողի վրա էլ նրանք իրար երբեք չսիրեցին ու չմտերմացան...

«Յունկեր Պետրով»

Լորիս-Մելիքովը դժվարությամբ էր հարմարվում Պետերբուրգի խոնավ կլիմային: Առանձնապես անտանելի էին դառնում գարնանային օրերը, երբ նրա մոտ սկսվում էր դողերոցքը ու ջերմության բարձրացումը: Այդ պատճառով էլ Միքայելը հաճախակի էր հայտնվում հիվանդանոցում...

Վերջապես եկավ 1847 թվականը: Միքայելն ավարտելու էր յունկերական դպրոցը: Այդ տարի էլ դպրոցի նոր պետ էր նշանակվել գնդապետ Ալեքսանդր Սուտգոֆը, որը նույնպես հայտնի էր իր փառասիրությամբ: Շուտով Սուտգոֆին զեկուցեցին, որ դպրոցի մի քանի յունկեր հաճախում են մի տուն, որի վարձակալը անհայտ է: Այդ տանն էլ, ինչպես զեկուցել էին, յունկերները զբաղվում էին հարբեցողությամբ:

Սուտգոֆը որոշեց անձամբ ստուգել և պատժել յունկերներին: Նրանք շուտ նկատեցին դպրոցի պետին և շտապելով բնակարանի հետնամուտքից դուրս եկան բակ ու չքացան: Միքայելը հեռացավ վերջում, ընկերների աննկատ հեռանալն ապահովելու համար: Այդ պատճառով էլ նրան նկատեց դպրոցի պետը:

- Յունկեր, ինչպե՞ս է ձեր ազգանունը, - խիստ տոնով հարցրեց Սուտգոֆը:

- Յունկեր Պետրով:

- Յունկեր Պետրով, ինչո՞ւ եք խախտում կարգը, ինչո՞ւ ձեր հագուստը կարգին չէ: Ես ձեզ կհիշեմ, յունկեր Պետրով:

Լորիս-Մելիքովը հասցրեց պատիվ առնել ու անհետանալ:

Հաջորդ օրը դպրոցի պետի հրամանով բոլոր սովորողները շարք կանգնեցին: Նա հայտնեց իր հետ կատարվածը և ասաց, որ ստուգումից պարզվել է՝ դպրոցում Պետրով ազգանունով յունկեր չկա:

- Բայց ես ,- շարունակեց Սուտգոֆը, - չեմ ցանկանում ձեր առջև բացել «յունկեր Պետրովի» իսկական ազգանունը...

Անցան տարիներ: Լորիս-Մեկիքովը կատարած ծառայությունների համար արժանանում էր շքանշանների, ստանում նոր պաշտոններ, բայց նրան չէր մոռանում Սուտգոֆը և միշտ առաջինն էր շնորհավորում իր ծննդյան սան «յունկեր Պետրովին»:

Սպանների քարեգործությունը

1847 թ. օգոստոսի 2-ին Միքայելը ավարտեց յունկերական դպրոցը և նշանակում ստացավ գվարդիական գնդում: Գրոդնենյան հուսարական գունդը տեղավորված էր Վոլխով գետի ափին, Սպասսկայա Պոլիստ կայարանին մոտ: Ծառայությունը ընթանում էր միապաղաղ՝ վարժանքստուգայց-շքերթ... Նիկոլաևյան ժամանակներից գվարդիական գնդերը վարժեցնում էին ոչ թե մարտական գործողությունների, այլ շքերթների համար:

1838 թվականից սկսած, գնդի հրամանատարն էր երիտասարդ իշխան գեներալ-մայոր Դիմիտրի Բագրատիոն-Իմերեթինսկին, որն հայտնի էր իր դաժան ու անգուսպ բնավորությամբ: Իշխանը մի քանի անգամ մանր թերությունների համար պատժեց կորնետ Լորիս-Մելիքովին: Չորս

տարի Գրոզնենյան հուսարական գնդում ծառայելուց հետո կորնետ Միքայելին շնորհվեց պորուչիկի աստիճան:

Այդ ժամանակ գնդից մոտ 10 կմ հեռավորության վրա ընթանում էր երկաթուղու շինարարություն, որն առաջ էր բերել երիտասարդ սպաների հետաքրքրությունը: Երկաթուղու շինարարության վրա աշխատում էին մոտակայքում գտնվող կալվածատերերին պատկանող ճորտ գյուղացիները, որոնք գտնվում էին անասելի ծանր պայմաններում: Սովը, ցուրտը իրենց սև գործն էին անում: Տասնյակներով մեռնում էին մարդիկ և ոչ ոք չէր մտածում նրանց վիճակը թեթևացնելու մասին:

Եվ Գրոզնենյան գնդի մի քանի սպաներ Լորիս-Մելիքովի նախաձեռնությամբ փորձեցին շարժել շինարարության ղեկավարների գութը՝ օգնել ծանր վիճակի մեջ գտնվող երկաթուղու շինարարության ճորտ գյուղացի-բանվորներին: Սակայն նրանք արդյունքի չհասան: Եվ առաջինը Լորիս-Մելիքովը դրեց 25 ռուբլի: Նրա օրինակին հետևեցին մյուս սպաները: Հավաքվեց մի պատկառելի գումար՝ 500 ռուբլի: Դրանով Սպասսկայա Պոլիստի կայարանում գնեցին ընդարձակ ու մաքուր խրճիթ, վարձեցին բժիշկ ու բուժակներ և ստեղծված հիվանդանոցում կազմակերպվեց դժբախտ բանվորների բուժումը:

Երկաթուղու շինարարության կապալառուները աղմուկ բարձրացրին և սպաների ինքնագործունեության մասին բողոք ուղարկեցին Պետերբուրգ: Սակայն կապալառուների համար բոլորովին անսպասելի ստացվեց մեծ իշխան Միխայիլ Պավլովիչի հրամանը, որով բարձր էր գնահատվում սպաների նախաձեռնած բարեգործությունը: Մեծ իշխանը իր և Նիկոլայ Առաջին ցարի անունից անկեղծ շնորհակալություն հայտնեց Գրոզնենյան հուսարական գնդի սպաներին:

Երբ շարքի առջև հրապարակվեց մեծ իշխանի հրամանը, բոլորի հայացքն ուղղվեց Լորիս-Մելիքովի կողմը: Այդ նրա նախաձեռնության շնորհիվ էր, որ նրանք արժանանում էին ցարի շնորհակալությանը, որն, իսկապես մեծ պատիվ էր:

Իհարկե, Միքայելը հպարտ էր այդ ամենի համար: Բայց հետագայում, երբ արդեն Լորիս-Մելիքովը պաշտոնազրկվել էր, հաճախ էր հիշում այդ դեպքը և ասում.

- Սակայն ցարի ու մեծ իշխանի մտքովն էլ չէր անցնում, որ այնպես անեին, որպեսզի մարդիկ չտառապեին: Նրանք այդպես էլ չհասկացան, որ դա իրենց ուղղակի պարտականությունն էր:

Իրավիճակը Հյուսիսային Կովկասում

Հյուսիսային Կովկասը հայտնի է իր աշխարհագրական ու էթնիկական առանձնահատկություններով: Բնական պայմանները և տնտեսական կա-

ցութածնը որոշում էին Հյուսիսային Կովկասի ժողովուրդների սոցիալ-քաղաքական հարաբերությունների մեջ եղած տարբերությունները: Հարթավայրերում և նախալեռներում գոյություն ուներ ունեցվածքային անհավասարություն: Այստեղ շուտ էին ձևավորվել խոշոր հողատերերի սոցիալական խմբերը և առանձնացել էր տեղական վերնախավը:

Լեռնային շրջաններում շարունակում էին գոյություն ունենալ այսպես կոչված «ազատ համայնքները», որոնք կազմվում էին մի քանի հարևան համայնքների միություններից: Այստեղ մարդկանց կապում էր այրուձակից լինելը: 19-րդ դարի առաջին կեսին «ազատ համայնքներում» նույնպես փոխվեց սոցիալական կառուցվածքը: Տեղի ունեցավ գույքային շերտավորում: Առանձնացավ համայնքային վերնախավը: Ձևավորվեցին զինված ջոկատներ, որոնք հարձակումներ էին գործում հարևան տարածքների վրա:

Ունևոր վերնախավի, ռազմական առաջնորդների կողքին կարևոր դեր էր խաղում մահմեդական հոգևորականությունը, որը օգտվում էր հսկայական հեղինակությունից՝ իրականացնում ունեցվածքի ժառանգական բաժանում, կատարում ամուսնություն շարիաթի հիման վրա, իրականացնում դատական ֆունկցիաներ:

Այս հանգամանքը հասցրեց հոգևորականության հետ խաների ու բեկերի ընդհարմանը, որոնք ձգտում էին պահպանել հասարակական կյանքի կազմակերպման ադաթն ու սովորույթները: Տեղական պայմանների տարբերությունը պայմանավորում էր ադաթի տարաբնույթ լինելը:

Իսլամի բռնի տարածումը և ադաթի փոխարինումը շարիաթով ավելի խորացրեց Հյուսիսային Կովկասում առաջացած սոցիալ-քաղաքական հակասությունները: Այսպիսի պայմաններում, Անդրկովկասի միացումից հետո, Ռուսաստանը փոխեց իր քաղաքականությունը Հյուսիսային Կովկասի ժողովուրդների նկատմամբ: Տեղական վերնախավին կաշառելու, արտոնություններ շնորհելու միջոցով իր կողմը գրավելու եղանակին փոխարինեց ռազմա-քաղաքական պատժիչ ակցիան:

Կովկասի գլխավոր կառավարիչ և բանակային կորպուսի հրամանատար Ա. Երմոլովը1817 թ. սկսեց շարժվել դեպի Չեչնիայի ու Դաղստանի խորքը, այդ նպատակով ստեղծելով անվտանգ ճանապարհներ: 1817-1819 թթ. Երմոլովը կառուցեց Գրոզնայա և Վնեզապնայա ամրոցները: Լեռնականների հարձակումները կանխելու նպատակով Երմոլովը նախաձեռնեց դեպի Չեչնիա, Ինգուշեթիա, Կաբարդա, Հյուսիսային Օսեթիա և այլն, ռազմական արշավներ, որոնք ուղեկցվում էին աուլների, ցանքսերի, այգիների ոչնչացմամբ: Սրա արդյունքում ծագեցին լեռնականների նոր ելույթներ, որոնք դաժանորեն ճնշվում էին ռուսական զորքերի կողմից:

Գնալով իրավիճակն ավելի էր սրվում: Ուժեղացավ հակառուսական քարոզչությունը: Հյուսիսային Կովկասի տարբեր տարածքներում երևա-

ցին մարգարեներ ու գուշակներ, որոնք իբր թե բնակչությանը փրկելու էին ռուսական տիրակալությունից: Աստիճանաբար լեռնական ժողովուրդների մեջ իսլամի հիման վրա սկսեց ձևավորվել կովկասյան մյուրիդիզմի գաղափարախոսությունը: Առաջ քաշվեց Չեչնիայի և Դաղստանի ժողովուրդների իսլամի հիման վրա միավորվելու գաղափարը:

Մյուրիդիզմը յուրատեսակ կրոնա-քաղաքական ուսմունք էր: Դա քարոզում էր մահմեդական կրոնի հիման վրա ոչ միայն հոգևոր կատարելիություն, այլև անվերապահ ենթարկում առաջնորդներին: Մյուրիդիզմի բնորոշ գիծը կրոնական մոլեռանդությունն էր: Դրա նպատակն էր բոլոր լեռնական ժողովուրդների վրա շարիաթի բռնի տարածումը: Մյուրիդական ուսմունքի մեջ մեծապես կարևորվում էր ղազավաթի /ջիհադ/ «սրբազան պատերազմի» գաղափարը:

Չեչնիայի ու Դաղստանի ժողովուրդների քաղաքական և կրոնական ղեկավար, առաջին իմամ Ղազի Մուհամեդը 1830 թ. Ռուսաստանին հայտարարեց ղազավաթ, դառնալով Հյուսիսային Կովկասում պատերազմի փաստացի հրահրող: Հյուսիսային Կովկասում մարտական գործողությունների միջոցով արագ հաղթանակի հասնելու Նիկոլայ Առաջինի հաշվարկները չարդարացան: Կովկասում Ռուսաստանը չուներ բավարար քանակությամբ զորք ու նյութական միջոցներ: Չկար նաև միասնական պայքարի տակտիկա և պրակտիկա: Անմիջականորեն ռազմական գործողությունների ղեկավարումը իրականացնում էր Ա. Չերնիշևի գլխավորած ռազմական նախարարությունը: Այս նախարարի ամբողջ ապաշնորհությունը երևաց 1853-1856 թթ. Ղրիմի պատերազմի ժամանակ:

Լեռնականների պայքարն ավելի ուժեղացավ 1834 թ., երբ իմամ դարձավ Շամիլը /1797-1871 թ.թ./: Լեռնականների նոր առաջնորդը աչքի էր ընկնում կրթվածությամբ /գիտեր արաբերեն, փիլիսոփայության և օրենքների կիրառման հիմունքները/, քաջությամբ, անսովոր ֆիզիկական ուժով, ռազմական փորձով: Շամիլի շուրջ հյուսվեցին բազմաթիվ առասպելներ: Նրան վերագրում էին կանխատեսման ձիրք, իրադարձությունները նախազգալու ունակություն: Շամիլը ուժեղացրեց իր իշխանությունը: Տարբեր ժամանակներում նրա բանակը հասնում էր 10-ից մինչև 20 հազար մարդու: Իմամին չենթարկվելու ամեն մի փորձ համարվում էր դավաճանություն և դատապարտվում մահապատժի:

Շամիլը մի շարք հաղթանակներ տարավ Կովկասյան կորպուսի դեմ: 1845 թ. նա Դարգո աուլի մոտ անհաջողության մատնեց փոխարքա Մ. Վորոնցովի գլխավորած պատժիչ արշավը:

Ահա, այսպիսի էր իրավիճակը Հյուսիսային Կովկասում, երբ Թիֆլիս գործուղվեց Լորիս-Մելիքովը:

Առաջին մարտական մկրտությունը

Սահմանված կարգի համաձայն Գրոդնենյան գնդի սպաներից մեկը ամեն տարի գործուղվում էր Կովկասյան բանակ: Կովկաս մեկնելու հերթը Լորիս-Մելիքովին հասավ միայն 1847 թվականին: Կարելի է ասել, որ Միքայելի բախտը բերեց, որովհետև շուտով վերացվեց այդ կարգը և նա եղավ գնդից վերջին գործուղված սպան:

Վերջապես իրականացավ Միքայելի վաղեմի ցանկությունը: Քանի տարի էր, ինչ նա կտրվել էր հայրական տանից: Վերջապես կլիներ տանը, կտեսներ հարազատ մորը:

- Միկո ջան, - շշնջաց մայրը և ամուր գրկեց իր որդուն, որն արդեն դարձել էր 22 տարեկան...

Լորիս-Մելիքովը անցավ փոխարքա և Կովկասյան բանակի պետ ֆելդմարշալ իշխան Միխայիլ Սեմյոնովիչ Վորոնցովի գրասենյակի տրամադրության տակ:

Փոխարքան Լորիս-Մելիքովից հետաքրքրվեց, թե որտեղ է սովորել, ինչպես է ընթացել ծառայությունը գվարդիական գնդում: Իշխանը շատ զարմացավ, երբ լսեց Լազարյան ճեմարանի վերջին դասարանից դուրս մնալու մասին: Նրա վրա մեծ տպավորություն գործեց երիտասարդ սպայի փայլուն ֆրանսերենի իմացությունը:

Լազարյան ճեմարանում սովորելը, ֆրանսերենին հմուտ տիրապետելը, ինչպես նաև փոխարքայի բոլոր հարցերին հստակ պատասխանելը վճռական նշանակություն ունեցան: Սովորաբար Կովկաս գործուղված սպաներին փոխարքան ուղարկում էր Շամիլի դեմ մարտական գործողություններին մասնակցելու: Բայց Լորիս-Մելիքովին պահեց իր մոտ հատուկ հանձնարարությունների համար: Դա 1847 թ. հուլիսի 27-ին էր:

Լորիս-Մելիքովը փոխարքայի հանձնարարությամբ կազմում էր հրամանների ու գրությունների նախագծեր: Նրա վրա էր դրվել նաև տեղական բնակչության դիմումների քննարկումը, որոնք սովորաբար ստացվում էին մեծ մասամբ պարսկերեն, թուրքերեն ու արաբերեն լեզուներով: Այս նամակներով զբաղվելը Միքայելին մեծապես օգնեց հասկանալու Կովկասում տիրող իրավիճակը:

1847 թ. աշնանը Լորիս-Մելիքովը հասավ իր նպատակին: Փոխարքան ընդառաջեց նրա խնդրանքը և ուղարկեց Չեչնիա: Այստեղ երիտասարդ սպան դարձավ կացիններով զինված կազակական կեսհարյուրակի հրամանատար: Լորիս-Մելիքովի խնդիրն էր՝ կատարել անտառահատում: Դա Չեչնիայի ապստամբներին զրկում էր անտառից օգտվելու հնարավորությունից: Կազակները մաքրում էին անտառային ճանապարհների վրա թափված գերանների կույտերը, որոնք իբրև պատնեշ ստեղծելով, չեչենները օգտագործում էին ռուսական ջոկատների վրա հանկարծակի հարձակումների համար:

Հենց առաջին օրերից մեկում Լորիս-Մելիքովը մասնակցեց չեչենների հետ ընդհարմանը: Չեչենները, ինչպես հանկարծակի հարձակվել էին, այնպես էլ հանկարծակի անհետացան: Երիտասարդ հրամանատարը շուտով զարմացրեց նաև իր ենթականերին, երբ կացինը ձեռքին բոլորի հետ մասնակցեց անտառահատման: Դեռևս ոչ մի սպա այդպես չէր վարվել և դա նպաստեց Միքայելի հեղինակության բարձրացմանը:

Չեչենների հետ ընդհարումը տեղի էր ունենում ամեն օր, որոնց ժամանակ Միքայելը նույնպես աչքի էր ընկնում համարձակությամբ: Կազակների համար անսպասելի էր նաև այն, երբ իրենց հրամանատարը անձամբ էր հարցաքննում գերիներին ու փախստականներին:

1848 թ. փետրվարի 18-ին Միքայելը, հաջողությամբ կատարելով իր առաջադրանքը, վերադարձավ Թիֆլիս:

«Միկո ջան, ես հազ իմ ազգականուհու հետ կամուսնացնեմ»

Փոխարքան գոհ մնաց, երբ նրան զեկուցեցին, թե Լորիս-Մելիքովն ինչպես է իրեն դրսևորել մարտական գործողությունների ժամանակ: Երկար տարիներ ծառայելով Կովկասում, ծանոթ լինելով տեղացի շատ նշանավոր գործիչների, փոխարքա Վորոնցովը համոզվել էր, որ Կովկասում համարձակությունը սովորական երևույթ է և դրանով չեն պարծենում: Փոխարքայի համար հաճելի էր իր երիտասարդ հատուկ հանձնակատարի մոտ տեսնել համեստությունը: Իսկապես, Միքայելը մարտական գործողությունների մասին հարցումներին տալիս էր զուսպ պատասխան:

1848 թ. ամռանը Կովկասյան բանակի շտաբը մշակեց Դաղստանում մարտական գործողությունների նոր պլան, որի նպատակն էր գրավել Գերգեբիլ աուլը և Շամիլին զրկել հենարանից, որտեղից նա անարգել հարձակումներ էր գործում:

Դաղստանյան ջոկատի հրամանատար նշանակվեց նշանավոր գեներալ Մովսես Զախարի Արղության-Երկայնաբազուկը, որը լինելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Հովսեփ Արղությանի հարազատ ազգականը, վայելում էր ռուսական արքունիքում մեծ հարգանք: Գեներալը մտերիմ հարաբերություններ ուներ Տարիել Զախարովիչի հետ, միշտ լինում էր նրա տանը և Միքայելին գիտեր մանկուց: Հաճախ էր նա կատակով Միքայելին ասում.

- Մեծացել ես ծնկներիս նստելով...

Փոխարքա Վորոնցովը համաձայնվեց Լորիս-Մելիքովին գործուղել Մովսես Արղությանի տրամադրության տակ: Սկսվեցին մարտական գործողություններ: Շամիլի ջոկատները դիմադրում էին համառորեն: Մարտերից մեկի ժամանակ ծանր վիրավորված հրամանատարներից մեկին փոխարինեց Լորիս-Մելիքովը և հետևակ գունդը վստահորեն տարավ գրոհի: Այդ գնդի հետ էլ Միքայելը մասնակցեց հուլիսի 7-ին տեղի ունեցած Գերգեբիլի գրոհին: Թվում էր, որ մարտը ավարտված է ու նվաճված ուժեղ ամրացված Գերգեբիլ աուլը, երբ անսպասելիորեն այգիների կողմից գրոհեց լեռնականների հեծելազորը հռչակավոր Հաջի-Մուրատի հրամանատարությամբ: Գեներալ Արղությանը առաջապահ ջոկատի հետ ուղարկեց Լորիս-Մելիքովին, առաջադրանք տալով՝ լեռնականների գրոհը ետ մղել:

Այս գրոհի ժամանակ Միքայելը այնպես աչքի ընկավ իր խելացի ու համարձակ գործողություններով, որ Մովսես Արղությանը հաղթական մարտից հետո, բոլորի ներկայությամբ բացականչեց.

- Միկո ջան, կեցցես, դու իսկական քաջ ես: Ես քեզ իմ ազգականուհու հետ կամուսնացնեմ:

Գերգեբիլում տարած հաղթանակի համար Լորիս-Մելիքովը առաջին անգամ արժանացավ պարգևի: Նրան հանձնվեց «Քաջության համար» Աննայի 4-րդ աստիճանի շքանշան: Լորիս-Մելիքովին շնորհվեց շտաբ-ռոտմիստրի աստիճան:

«Գործիր համարձակ»

Գերգեբիլի հաղթանակը դրեց Շամիլի պայքարին վերջ տալու սկիզբը: Մարտական գործողությունների հետ միասին փոխարքա Վորոնցովը սկսեց լայնորեն կիրառել Շամիլին արդեն չենթարկվելու հակում ունեցող լեռնական տիրակալներին զանազան սոցիալ-քաղաքական արտոնություններ շնորհելու, նաև նրանց կաշառելու պրակտիկան: Իսկ դա պահանջում էր առաջին հերթին կապ հաստատել տեղական ժողովուրդների մոտ ազդեցություն ունեցող խանների ու բեկերի հետ:

Լորիս-Մելիքովն, որն արդեն ամրապնդվել էր Կովկասի փոխարքային կից հատուկ հանձնակատարի պոստում, սկսեց զբաղվել այդ խնդրով: Դրա համար պահանջվեց մոտ երկու տարվա քրտնաջան աշխատանք: Լորիս-Մելիքովին հաջողվեց համարյա բոլոր խոշոր աուլներում ունենալ իր գործակալներին: Իզուր չէր, որ դեռ առաջին մարտի ժամանակ Միքայելը ի տարբերություն մյուս հրամանատարների, անձամբ էր հարցաքննում գերիներին ու փախստականներին:

Իրականում Լորիս-Մելիքովը ոչ թե հարցաքննում էր, այլ լեռնականների հետ խոսում էր հանգիստ, բարեկամաբար, այն էլ նրանց համար հարազատ լեզվով: Լեռնականների համար էլ էր դա անսպասելի, որ ռուսական սպան հետաքրքրվում էր իրենց կյանքով, ընտանիքի վիճակով,

ապրուստի միջոցներով: Ճրույցից հետո հեռատես Միքայելը շատերին ազատ էր արձակում և տուն ուղարկում:

- Դուք հետո կիմանաք դրա նշանակությունը, - պատասխանում էր Միքայելը նրանց, ովքեր թերահավատությամբ էին վերաբերում իր գործելակերպին:

Ոմանք էլ դա համարեցին դավաճանություն և լուրը հասցրին փոխարքա Վորոնցովին: Երբ Վորոնցովը պահանջեց բացատրություն, Լորիս-Մելիքովի պատասխանը արժանացավ հավանության:

- Գործիր համարձակ, - հրամայեց փոխարքան:

Եվ Լորիս-Մելիքովն անցավ գործի: Արդյունքում արդեն փոխարքան տեղյակ էր, թե Շամիլի շրջապատը ինչ տրամադրություն ունի, նրանցից ովքեր են հակված համագործակցել ռուսների հետ, ովքեր են համառում ղազավաթը շարունակելու մեջ և այլն:

Հեշտ չէր կատարվում այս աշխատանքը: Միքայելը գործում էր շատ զգույշ, հաճախ դիմում էր գործակալներին ստուգելու անսպասելի միջոցների: Նրան հայտնի էր դարձել, որ իր գործակալներից մեկը երկակի խաղ է անում և ապակողմնորոշող տեղեկություններ հաղորդելու հետ միասին, լրտեսում էր հենակետերում տեղավորված ռուսական կայազորներին: Նրա տվյալներով Շամիլին հաջողվել էր մի քանի հաջող գրոհ ձեռնարկել: Հարկավոր էր այդ գործակալին շարքից հանել: Լորիս-Մելիքովը նշանակեց հանդիպում: Գործակալը Լորիս-Մելիքովին մի քանի տեղեկություն հաղորդեց և դրա համար ստացավ ոսկե դրամներ: Դրանից հետո նա գործակալին ազատ արձակեց: Գործակալի հեռանալուց հետո Միքայելը իր մոտ կանչեց երկու չերքեզի և հանձնարարեց սպանել գործակալին ու ետ բերել նրան տված ոսկե դրամները: Չերքեզները կատարեցին առաջադրանքը և երեկոյան Լորիս-Մելիքովին վերադարձրին ոսկե դրամները:

Այս ամենին ականատես սպաները չկարողացան իրենց զսպել և Միքայելին մատնացույց արեցին նրա այդպիսի վերաբերմունքի տհաճությունը:

- Իսկ դուք, հոգյակներս, ի՞նչ է, ուզում էիք, որ այդ անպիտանի պատճառով մեր կազակների ամբողջ էսկադրոնը սրի քաշվեր:

«Ես դու, խորամանկ...»

Շամիլի ուժեղ զինակիցներից մեկը Հաջի-Մուրատն էր, ավարների նայիբը, որին ժողովուրդը սիրում էր: Հաջի-Մուրատը տաղանդավոր զորահրամանատար էր: Այդ նա էր, որ 1845 թ. անհաջողության մատնեց Շամիլի դեմ փոխարքա Վորոնցովի արշավը Դարգո աուլի մոտ: Հաջի-Մուրատը տարել էր շատ հաղթանակներ և փաստորեն դարձել էր անո-

սալի: Մնում էր մի ելք՝ հարուցել թշնամանք Շամիլի և Հաջի-Մուրատի միջև: Այս ուղղությամբ ձեռնարկվել էին մի քանի միջոցներ, բայց անարդյունք:

Փորձելու հերթը հասել էր Լորիս-Մելիքովին: Շուտով առիթը ներկայացավ: 1851 թ. ձմռանը Շալիի ճամբարի մոտ տեղի ունեցած մարտում, որին մասնակցում էր Միքայելը, գերի ընկավ Շամիլի նայիբ Դանիել բեկի հարյուրակի հրամանատար Ասլանը: Լորիս-Մելիքովը նրա հետ զրույցից պարզեց, որ գործ ունի Դանիել բեկի մոտիկ ազգականի հետ: Միքայելի մեղմ և ուշադիր վերաբերմունքը կոտրեց երիտասարդ լեռնեցու հպարտությունը և սկսվեց մտերմիկ զրույց: Ասլանը շատ տեղեկությունների հետ միասին հայտնեց նաև, որ Շամիլը պատրաստվում է իրեն փոխարինող նշանակել որդուն:

- Իսկ դրան համաձա՞յն կլինի Հաջի-Մուրատը, - հարցրեց Լորիս-Մելիքովը:

Պարզվեց, որ Հաջի-Մուրատը չի ենթարկվի Շամիլի որդուն: Իսկ Շամիլը համակերպվում է Հաջի-Մուրատին, որովհետև առանց նրա չի կարող հաղթական մարտեր մղել:

- Գուցե՞ Դանիել բեկն էլ է ուզում, որ ավելի լավ է իմամ դառնա Հաջի-Մուրատը, քան Շամիլի որդին, - հարցրեց Միքայելը:

Ասլանը տեղեկացրեց, որ իրենց ցեղի և Հաջի-Մուրատի միջև կա թշնամանք և Դանիել բեկը Շամիլի հրամանի համաձայն համակերպվել ու լռում է: Լորիս-Մելիքովի համար պարզ դարձավ, թե ինչ հակասություն կա Շամիլի և Հաջի-Մուրատի միջև և որոշեց դրանից օգտվել, այդ հակասությունը հասցնելով բացահայտ թշնամանքի:

Իր մտադրությունն իրականացնելու համար հարկավոր էր ազատ արձակել Ասլանին, բայց դա արդեն Լորիս-Մելիքովի իրավունքից դուրս էր, քանի որ Ասլանը աչքի ընկնող հրամանատար էր: Միքայելը իր մտահղացման մասին տեղեկացրեց գեներալ Արղությանին, առաջարկելով Ասլանին ազատել:

- Միկո, դու համոզվա՞ծ ես, որ քո այդ Ասլանի միջոցով հնարավոր կլինի Շամիլին գժտեցնել Հաջի-Մուրատի հետ, -հարցրեց Արղությանը:

Միքայելը համոզված էր դրանում, նկատի ունենալով իր տարիների փորձը, որը ձեռք էր բերել լեռնականների հետ շփվելիս: Ստանալով Արղությանի համաձայնությունը, Միքայելը գործի անցավ: Նա հասկանում էր, թե ինչ կնշանակեր Ասլանի նման մեկին գերությունից ազատ արձակելը: Եթե այդպես վարվեր, ապա իր ծրագիրը կծախողվեր: Ուստի հարկավոր էր պայմաններ ստեղծել Ասլանի փախուստի համար: Ճարպիկ Ասլանը օգտվեց իրեն հսկող զինվորի «ննջելուց» և փախավ: Մի քանի րոպե անց, զինվորները սկսեցին հախուռն կրակել անտառի կողմը, ստեղծելով հետապնդելու տպավորություն...

Երբ Լորիս-Մելիքովն Արղությանին զեկուցեց Ասլանի փախուստի մասին, գեներալը ժպտալով ասաց.

- Այ դու խորամանկ:

«Կամեցամ կամ կոչնչացնեմ Շամիլին»

1851 թ.սեպտեմբերի վերջին Լորիս-Մելիքովը մասնակցելով Շամիլի դեմ մի շարք մարտական գործողությունների, վերադարձավ Թիֆլիս՝ նոր աստիճան ստացած: Իսկ Ասլանի միջոցով ցանած սերմերը առատ բերք էին տալիս: Շամիլի և Հաջի-Մուրատի միջև գժտությունը հասել էր բացահայտ թշնամանքի: Ամենուրեք դնելով հսկիչ կետեր, Շամիլը հետևում էր Հաջի-Մուրատին:

Խուսափելով Շամիլի հետապնդումներից, Հաջի-Մուրատը մոտեցավ ռուսական զորակայանին և հանձնվեց նրա հրամանատարին, որը փոխարքա Վորոնցովի որդին էր:

1851 թ. դեկտեմբերի 8-ին, վաղ առավոտյան, երբ Լորիս-Մելիքովը նոր էր ներս մտել փոխարքայի պալատում գտնվող իր աշխատասենյակ, նրան անմիջապես հրավիրեցին իշխան Վորոնցովի մոտ:

- Դե, սիրելի բարեկամ, - դիմեց նա Լորիս-Մելիքովին, - ինչպես տեսնում ես քո պլանը փայլուն կերպով իրագործվում է:

Շնորհավորելով Միքայելին, փոխարքան, այնուամենայնիվ, ասաց, որ այնքան էլ չի վստահում Հաջի-Մուրատին: Ի պատասխան դրա, Լորիս-Մելիքովն էլ իր կարծիքն արտահայտեց, ասելով, որ Հաջի-Մուրատն էլ իրենց վստահելու քիչ տեղ ունի:

Փոխարքայի համար պարզ էր, որ քանի դեռ մայրը, կինը և երեխաները գտնվում են Շամիլի ձեռքին, Հաջի-Մուրատը չի համարձակվի գնալ բացահայտ գործողությունների: Բայց կարևորն այն էր, որ Հաջի-Մուրատն անցել էր ռուսների կողմ: Միայն հարկավոր էր Շամիլի ձեռքից ազատել Հաջի-Մուրատի ընտանիքը:

Հավանություն տալով Լորիս-Մելիքովի բացատրությանը, փոխարքան ասաց.

- Իհարկե, լավ կլիներ, եթե հաջողվեր Հաջի-Մուրատի ընտանիքը վերադարձնել: Դրա համար ես պատրաստ եմ Շամիլին վերադարձնել մեզ մոտ եղած բոլոր գերիներին: Բայց հազիվ թե Շամիլը համաձայնվի:

Այնուհետև փոխարքան հարկ համարեց Հաջի-Մուրատի բոլոր հոգսերը հանձնարարել Լորիս-Մելիքովին:

...Ամբողջ Թիֆլիսը ոտքի վրա էր: Բոլորն էլ ուզում էին տեսնել Հաջի-Մուրատին, որի մասին անվերջ առասպելներ էին պատմում:

Հաջի-Մուրատին Վորոնցովը ընդունեց 1851 թ. դեկտեմբերի 9-ի առա-

վոտյան: Զրույցն ընթանում էր թարգմանիչի օգնությամբ: Հաջի-Մուրատը խնդրեց փրկել իր ընտանիքը:

- Թող իշխանը փրկի իմ ընտանիքը, - ասաց Հաջի-Մուրատը, - այդ դեպքում ես կմեռնեմ կամ կոչնչացնեմ Շամիլին...

Նույն օրը երեկոյան, Լորիս-Մելիքովի ուղեկցությամբ Հաջի-Մուրատը եղավ Թիֆլիսի թատրոնում...

1896 թ. ռուս մեծ գրող Լ. Ն. Տոլստոյը սկսեց գրել «Հաջի-Մուրատ» վիպակը, հիմք ունենալով, «Ռուսսկայա ստարինա» ամսագրի 1881 թ. մարտյան համարում տպագրված Լորիս-Մելիքովի պատմածը: Վիպակի 11-13 հատվածներում Լ. Տոլստոյը նկարագրում է Հաջի-Մուրատի հետ Լորիս-Մելիքովի հանդիպումները:

«Եթե Լորիս-Մելիքովին չեռնստ է իր վիզը կոտրել...»

Թիֆլիս գալուց ութ օր անց, փոխարքա Վորոնցովը որոշեց հաշվի առնել Հաջի-Մուրատի խնդրանքը և նրան ուղարկել Գրոզնայա ամրոց: Հաջի-Մուրատին ուղեկցելու պարտականությունը դրվեց Լորիս-Մելիքովի վրա: Այդ մասին Վորոնցովը 1851 թ. դեկտեմբերի 20-ին ռազմական նախարար Չերնիշևին գրել է. « Բացի 20 ընտրյալ կազակներից, որոնք նրա /Հաջի-Մուրատի - Վ.Պ./ խնդրանքով ոչ մի քայլ նրանից չեն հեռանում, ես ուղարկել եմ նաև թաթարերեն խոսող, Հաջի-Մուրատին լավ իմացող, արժանավոր, գերազանց և շատ խելացի ռոտմիստր Լորիս-Մելիքովին, որին Հաջի-Մուրատը ամբողջովին վստահում է»:

Գրոզնայա ամրոց գնալու նպատակն էր Շամիլի հետ կապ հաստատել և ամեն գնով ազատել Հաջի-Մուրատի ընտանիքին: Սակայն, բոլոր փորձերն անցան ապարդյուն: Շամիլը փոխանակման ոչ մի պայման չընդունեց: Գրոզնայում մնալն այլևս անօգուտ էր և Լորիս-Մելիքովը դիմեց փոխարքային, խնդրելով իրեն ուղարկել ջոկատ: Վերջապես 1852 թ. հունվարի 14-ին ստացվեց փոխարքայի պատասխանը:

«Շտապում եմ, - գրում էր Վորոնցովը, - քեզ շնորհակալություն հայտնել սիրելի Լորիս-Մելիքով քո դեկտեմբերի 23-ի և հունվարի 5-ի նամակների և այն ամենի համար, որ դու հաղորդում ես Հաջի-Մուրատի մասին: Սրտանց շնորհակալ եմ նաև քեզանից քո ջանասեր և օգտակար ծառայության համար և կարող եմ քեզ հավատացնել, որ այն ծառայությունը, որ դու մատուցում ես ինձ, չի մնա առանց վարձատրության:

Քո ցանկության համաձայն այսօր ես կգրեմ իշխան Բայրատինսկուն քեզ ջոկատ ուղարկելու մասին, որտեղ դու հնարավորություն կունենաս մնալ մի քանի օր մարտական գործերին մասնակցելու համար»:

Այնուհետև փոխարքան հետաքրքրվում է իշխան Բարյատինսկու հաջող շարժման մասին Հաջի-Մուրատի կարծիքով, խնդրում է իր ողջույնը հաղորդել նրան և հույս հայտնում, որ իշխան Արղությանն ու իշխան Օրբելիանին կծգտեն ամեն ինչ անել Հաջի-Մուրատի ընտանիքը ազատելու համար:

«Մնաս բարով սիրելի Լորիս, - գրում էր փոխարքան նամակի վերջում, -եթե Հաջի-Մուրատին փող է պետք, ապա տուր նրան 200-ից 800 ռուբլի հատկացվածից ավելի»:

Հաջի-Մուրատը հավանություն չտվեց իշխան Բարյատինսկու գործողություններին, գտնելով, որ մեծ ջոկատով շարժվելը դանդաղ է և ոչ արդյունավետ: Հաջի-Մուրատը գտնում էր, որ կարելի է հաջողության հասնել միայն սրընթաց ու համարձակ գրոհներով:

Հունվարի 11-ին այդ ամենի մասին Լորիս-Մելիքովը հանգամանորեն զեկուցագիր ուղարկեց փոխարքային: Հունվարի 21-ին փոխարքա Վորոնցովը Բարյատինսկուն գրած նամակում հայտնելով Հաջի-Մուրատի վերաբերյալ Լորիս-Մելիքովի զեկուցագրի մասին, գրում էր. « Եթե Գրոզնայում Հաջի-Մուրատը այլևս անելիք չունի, ապա նա կարող է գալ այստեղ /Թիֆլիս - Վ.Պ./, բայց ես օգտակար եմ համարում, որպեսզի նա նախապես մի քանի օր անցկացնի Ստավրոպոլում: Արտակարգ կարևոր եմ գտնում մի կետ, որի մասին ասում է Լորիսը, դա այն է, որ Հաջի-Մուրատն, ըստ երևույթին, բարի նպատակով խորհուրդ է տալիս թույլ չտալ մեր կողմն անցնելու որոշ պատվավոր չեչենների, այ պահանջել ամբողջ Չեչնիայի ընդհանուր հնազանդություն»:

Այնուհետև փոխարքան հայտնում էր, որ համամիտ է Լորիս-Մելիքովի կարծիքին և խորհուրդ է տալիս իշխան Բարյատինսկուն «հովանավորել յուրաքանչյուրին, ով ցանկություն կունենա անցնել մեր կողմը: Դա մշտապես կթուլացնի հակառակորդին... Եթե մենք չենք ընդունում առանձին անձանց, այլ պահանջում ենք ընդհանուր հնազանդություն, դրանով պահանջում ենք անհնարինը, որովհետև Շամիլի ձեռքին գտնվող բնակչությունը, ինչպիսի ցանկությամբ էլ որ վառվեն, չեն կարող հնազանդվել և մենք չենք կարող հրաժարվել ցանկացողներին ընդունելուց, մեզ համար նոր թշնամիներ ստեղծելով պատվավոր մարդկանցից, որոնց հետո ոչինչ չի մնում, բացի իրենց հանձնել Շամիլի լիակատար ենթակայությանը»:

Ի պատասխան Լորիս-Մելիքովի զեկուցագրի, փոխարքան նրան նույնպես հայտնեց, որ Գրոզնայում Հաջի-Մուրատի մնալն այլևս օգուտ չունի, ուստի ավելի լավ կլինի, եթե նա մինչև Թիֆլիս գալը, մեկնի Ստավրոպոլ: «Չգիտեմ,- այնուհետև գրում էր փոխարքան, - ինչ է արված քեզ և Բարյատինսկուն ուղարկած իմ նամակներից հետո քո ջոկատ մեկնելու հաշվով: Եթե դա կատարվել է, ապա ո՞վ է քեզ փոխարինում Հաջի-Մուրատին նայելու համար: Բոլոր դեպքերում դու ինձ և ծառայությանը մեծ շնորհ արեցիր այդ գործով և ես քեզանից անկեղծորեն շնորհակալ եմ»:

Փոխարքան կատարեց խոստումը և հունվարի 14-ին իշխան Բարյատինսկուն գրեց. «Ես ստացել եմ նամակ Լորիս-Մելիքովից, որ մեզ այնպես եռանդով է ծառայում Հաջի-Մուրատի մոտ, բայց սարսափելի տխրում է, ավելին, վառվում է ցանկությամբ լինել ձեզ հետ և շարունակել քրատելու արհեստը, որի մեջ նա արդեն բազմիցս իրեն դրսևորել է: Ես նրան խնդրել եմ, որպեսզի մի քիչ էլ համբերի, հույս տալով, որ դուք նրան մի քանի օրով կկանչեք ջոկատ, որտեղ նա կարող է օգտակար լինել Հաջի-Մուրատին վերաբերող հանգամանալից զեկուցման համար»:

Ռուսական զորքերի ձախ թևի պետ իշխան Ալեքսանդր Իվանովիչ Բարյատինսկին տանել չէր կարողանում փոխարքայի թիկնապահներին, նրանցից յուրաքանչյուրին համարելով փորձված բանսարկու և կարյերիստ: Այդպիսին էր նաև նրա կարծիքով Լորիս-Մելիքովը և Հաջի-Մուրատի մասին հոգալը պատճառաբանելով, նրան չէր ուղարկում ջոկատ: Ի վերջո, Բարյատինսկին չէր կարող հաշվի չառնել փոխարքայի նամակը, ուստի զիջեց և Լորիս-Մելիքովին դժկամությամբ ուղարկեց ջոկատ.

- Դե, ինչ, - ասաց նա հրամանը ստորագրելիս, - եթե ռոտմիստր Լորիս-Մելիքովին ձեռնտու է իր վիզը կոտրել, ապա դրանում մենք նրան կօգնենք...

Նորից Հաջի-Մուրատի հետ

Հրամանի համաձայն Լորիս-Մելիքովը եկավ Տիպլի առուի մոտ գտնվող ջոկատ, որտեղ հանձնարարություն ստացավ հսկել պահակակետերը: Անցավ մեկ շաբաթ: Եվ 1852 թ. փետրվարի 7-ին իշխան Բարյատինսկին Լորիս-Մելիքովին փորձեց տեղանքի հետախուզության մեջ: Միքայելը լեռնականների հետ ընդհարումների ժամանակ ձեռք էր բերել ուշադրություն՝ նկատել գազանների բացած արահետը, ժայռերի միջով անցնող ճեղքերը: Նրա սրատես աչքից ոչինչ չէր վրիպում: Եվ փետրվարի 7-ին, հետախուզության ժամանակ Միքայելը նկատեց հազիվ նշմարելի մի արահետ, որը թիկունքից տանում էր դեպի չեչենների դիրքերը: Լորիս-Մելիքովը կարողացավ համոզել Բարյատինսկուն այդ արահետով էլ իրականացնել գրոհը: Գրոհը հանկարծակի բերեց չեչեններին: Հաջողվեց գլխովին ջախջախել Շամիլի որդու ջոկատը:

Լորիս-Մելիքովն աչքի ընկավ նաև փետրվարի 18-ին տեղի ունեցած մարտի ժամանակ: Իշխան Բարյատինսկին հանուն արդարության, հարկ համարեց փոխարքային հանգամանորեն զեկուցել Լորիս-Մելիքովի քաջագործության մասին, գրելով, թե 1852 թ. փետրվարի 7-ին «ձեռք բերված փայլուն գործի մեջ հերոսը եղավ Լորիս-Մելիքովը»:

Փետրվարի 18-ին Բարյատինսկուն շնորհակալություն հայտնելով հաղթանակի մասին լուրը հաղորդելու համար, փոխարքա Վորոնցովը

գրում էր. « Ես հիացած եմ մեր քաջարի Լորիս-Մելիքովի հրամանատարությամբ կազակների փայլուն գրոհով, նա մշտապես որոնում և առիթ է գտնում աչքի ընկնելու համար... Նա Աստծո օգնությամբ հեծելազորի մեջ գեղեցիկ կարյերա է անում: Ես այժմ Պետրբուրգ կուղարկեմ նրան ներկայացնելով պարգևի»:

Իր հերթին փոխարքան հարկ համարեց նաև Լորիս-Մելիքովին գրել հետևյալը. «...Ուզում եմ քեզ ասել, սիրելի Լորիս-Մելիքով, որ ես շատ ուրախացա ստանալով լուրն այն մասին, թե դու ինչպիսի քաջությամբ ես գրոհել Շամիլի որդու լեռնականների հեծելազորի վրա: Այդ ամենի մասին ինձ գրել է իշխան Բարյատինսկին: Ես միշտ վստահ եմ եղել, որ դու ինչպես միշտ, եղել ես և այդպես էլ կմնաս ու միշտ քեզ քաջաբար կդրսևորես»: Նույն նամակում փոխարքան հայտնում էր Միքայելի քեռի Աշոտի մահվան լուրը:

Փետրվարի 20-ին փոխարքա Վորոնցովը Միքայելին հանձնարարեց Թիֆլիս վերադարձած Հաջի-Մուրատին ուղեկցել Չերվլենոյից մինչև Տաշ-Կիչու առւլ, որտեղ նա պետք է մնար մինչև Բարյատինսկու վերադարձը Գրոզնայա:

Տաշ-Կիչու առւլում ուղղափառ մահմեդականները, որոնք ընդունում էին Հաջի-Մուրատի հեղինակությունը, նրան հրավիրեցին մզկիթ նամազ կատարելու համար: Տեղի իշխաններն իմանալով այդ մասին, հայտարարեցին, թե դավաճանին թույլ չեն տա մտնել և պղծել մզկիթը: Երկու կողմի միջև սկսվեց վեճ, որը սպառնում էր վերածվել արյունահեղության:

Տեղեկանալով այդ մասին, Լորիս-Մելիքովը տանից դուրս թռավ թեթև հագնված և վազեց դեպի մզկիթ: Նրան հաջողվեց զսպել կատաղած ամբոխին: Հենց այդ մարտյան ցուրտ օրվա երեկոյան Միքայելի մոտ նկատվեց ջերմության բարձրացում և ուժեղ տենդ: Երեք օր շարունակ նա տենդի մեջ էր: Դրանից էլ օգտվելով տեղական իշխաններից մեկը՝ Արսլան խանը փորձեց գնդակահարել Հաջի-Մուրատին: Սակայն խանի կրակոցը դիպուկ չեղավ: Դրանից էլ ելնելով, Միքայելը հարկադրված եղավ Հաջի-Մուրատին իր մոտ բնակեցնել:

Երախտագետ Հաջի-Մուրատը պարտքի տակ չմնաց: Նա արտակարգ ուշադրությամբ ու հոգատարությամբ ստանձնեց տենդից տառապող Միքայելի խնամքը:

Իշխան Բարյատինսկուց տեղեկանալով Միքայելի հիվանդության մասին, փոխարքան 1852 թ. մարտի 17-ին նրան գրեց հետևյալը. «Լորիս-Մելիքովի առողջական վիճակը ինձ անհանգստացնում է, բայց, չնայած Տաշ-Կիչուի վատ կլիմային, գուցե և նրա կրցքավանդակին հատկապես վտանգ չի սպառնում: Դուք արեք ամեն ինչ, ինչը, որ լավագույնը կհամարեք, որպեսզի պահպանեք այդ փառապանծ երիտասարդ մարդուն: Միաժամանակ ինձ թվում է, որ Ստավրոպոլը լավագույն տեղը կլինի ինչպես նրա, այնպես էլ Հաջի-Մուրատի համար»:

Նույն օրը փոխարքան նամակ ուղարկեց նաև Լորիս-Մելիքովին: «Բայց, -գրում էր փոխարքան, -ինձ ամենից շատ հետաքրքրում է քո առողջությունը: Ինձ բոլորն ասում են, որ դու լուրջ հիվանդ ես, թեև դու համեստաբար այդ մասին ինձ ոչինչ չես ասում: Ես այդ մասին գրում եմ նաև Բարյատինսկուն և խնդրում ամեն ինչ անի, որպեսզի դու առողջանաս: Եթե քեզ հնարավոր չի լինի մնալ Հաջի-Մուրատի հետ, ապա քանի նա գտնվում է Տաշ-Կիչում, նրան կարող է նայել գնդապետ Կայկովը... Հարկավոր է, որ դու քեզ պահպանես և իմ պարտքն եմ համարում թույլ չտալ քեզ խաղալ քո առողջության հետ»:

Շուտով Տաշ-Կիչ առւլ եկավ Բարյատինսկին: Լորիս-Մելիքովը տենդի մեջ էր: Որոշվեց, որ առայժմ անհնար է Հաջի-Մուրատին Կիզլար կամ Ստավրոպոլ տեղափոխել և միակ միջոցը համարվեց Հաջի-Մուրատին վերադարձնել Թիֆլիս:

1852 թ. մարտի 30-ին փոխարքա Վորոնցովից ստացվեց նամակ, որով, նա հայտնում էր իր համաձայնությունը Հաջի-Մուրատին Թիֆլիս վերադարձնելու մասին: Լորիս-Մելիքովը ստացավ հանձնարարություն՝ Հաջի-Մուրատին ուղեկցել մինչև Թիֆլիս:

Իշխան Բարյատինսկու ձմեռային արշավի ժամանակ աչքի ընկնելու համար Լորիս-Մելիքովը պարգևատրվեց երկրորդ աստիճանի Աննա շքանշանով և անվանական թրով: Կարճ ժամանակ անց, Հաջի-Մուրատի հետ կապված օպերացիան հաջող իրականացնելու համար Լորիս-Մելիքովն արժանացավ գնդապետի աստիճանի:

Իշխանը արդարացի չէր

Վրա հասավ 1853 թ. ձմեռը: Ձմեռային էքսպեդիցիայի խնդիրները կատարելու նպատակով իշխան Բարյատինսկին փոխարքա Վորոնցովից պահանջեց ուժեղացնել իր զորքերը: Ռազմական գործողությունների վարման եղանակի շուրջ տարաձայնություն կար փոխարքայի և իշխանի միջև: Բարյատինսկին գտնում էր, որ լեռնականների դեմ անընդմեջ գործողությունները միակ միջոցն են նրանց հնազանդեցնելու և կովկասյան պատերազմը ավարտելու համար:

Մինչդեռ, ինչպես գտնում էր իշխանը, այսպես կոչված էքսպեդիցիաները կատարվում էին կարճ ժամկետում և ավարտվում էին միայն նշված նպատակին հասնելով: Իսկ դա չհնազանդված բնակչությանը հնարավորություն էր տալիս հանգստանալ, կատարել տնտեսական բոլոր գործերը, ուժեր հավաքել և պատրաստվել նոր դիմադրության: Շամիլն էլ օգտվելով այդ վիճակից նոր միջոցներ էր գտնում պայքարը շարունակելու համար:

Իշխան Բարյատինսկին ձգտում էր վերջ տալ այդ վիճակին և նշանակված էքսպեդիցիան շարունակել ավելի, քան դրա համար ժամանակ էր

հատկացվել: Ահա, հենց այդ նպատակով էլ նա համառորեն պահանջում էր ուժեղացնել իր զորաջոկատը հարևան մյուս շրջանների զորքերի հաշվին: Այս հարցում լուրջ տարաձայնություններ առաջացան նաև Բարյատինսկու և Դաղստանում գտնվող զորքերի հրամանատար իշխան Արղությանի միջև, որին պաշտպանում էր Վլադիկավկազի օկրուգի պետ բարոն Վրևսկին: Վերջիններս չէին համաձայնվում իրենց զորամասերը դնել Բարյատինսկու տրամադրության տակ և փոխարքային ներկայացրին հատուկ զեկուցագիր, առաջարկելով ղեկավարվել նախօրոք հաստատված պլանով: Այս զեկուցագրի վրա փոխարքան մակագրեց. «Հավանություն տալով սույն զեկուցագրին, այն ուղարկում եմ իշխան Ալեքսանդր Իվանովիչին»:

Միաժամանակ փոխարքն իր մոտ ծառայող Լորիս-Մելիքովին տվեց դիվանագիտական հանձնարարություն՝ իշխան Արղությանի, բարոն Վրևսկու և իշխան Բարյատինսկու միջև կազմակերպել հաշտեցման բանակցություններ:

Բանակցությունների արդյունքում Դաղստանից և Վլադիկավկազի օկրուգից տարված գումարտակները վերադարձվեցին իրենց տեղերը: Իշխան Արղությանն ու բարոն Վրևսկին ճիշտ էին, որովհետև չէր կարելի մի տեղում թուլացնել արդեն նվաճված դիրքերը և զորամասերը մասնատել:

Իշխան Բարյատինսկին բանակցություններից հետո Լորիս-Մելիքովի նկատմամբ տրամադրվեց անբարյացակամորեն, նրա գործողությունները համարելով ոչ լրիվ անկեղծ: Հետագա դեպքերը ցույց տվեցին, որ իշխանը Լորիս-Մելիքովի նկատմամբ արդարացի չէր:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

«Մեր շեհերի վրա պառկած է հիվանդ մարդը...»

19-րդ դարի 30-ական թվականներից Ռուսաստանի արտաքին քաղաքականության եվրոպական ուղղությունը հագեցած էր խոշոր իրադարձություններով: Եվրոպայում մոլեգնում էր հեղափոխական շարժումը: Ռուսաստանի դեմ ապստամբվեց Լեհաստանը: Փարիզում գահից հրաժարվեց Կարլ 10-րդ Բուրբոնը: Իշխանության եկավ ֆրանսիական բուրժուազիայի դրածո Լուի Ֆիլիպ Օրլեանցին: Նիկոլայ Առաջինը Լուի Ֆիլիպին անվանում էր, «կեղծ թագավոր», չընդունելով նրա լեգիտիմությունը:

Հաղթեց բելգիական հեղափոխությունը, Բելգիան անջատվեց Նիդերլանդների թագավորությունից և հռչակեց հանրապետություն: Նիկոլայ Առաջինը, որի քույրը՝ Աննա Պավլովնան Նիդեռլանդական թագաժառանգի կինն էր, կոչ արեց եվրոպական տերություններին ինտերվենցիա կազմակերպել Բելգիայի դեմ: Սակայն ցարը մնաց մենակ: Անգլիան ու Ֆրանսիան ճանաչեցին Բելգիայի անկախությունը:

Եվրոպան դեռ ուշքի չէր եկել 30-ական թվականների ցնցումներից, երբ 1848 թ. փետրվարին Ֆրանսիայում սկսվեց հեղափոխություն: Այդ հեղափոխության հրդեհը տարածվեց ամբողջ Եվրոպայում: Ռուսաստանը դարձյալ մնաց մենակ: Ոչ մի տերություն չարձագանքեց հեղափոխության դեմ միասնական ճակատ ստեղծելու մասին Նիկոլայ Առաջինի կոչին: Փաստորեն Ռուսաստանը հայտնվեց լրիվ մեկուսացման մեջ: Իսկ, երբ 1849 թ. Հունգարական հեղափոխությունը սպառնում էր Ավստրիական կայսրությանը, Նիկոլայ Առաջինը Ֆրանց Իոսիֆի խնդրանքով 140 հազարանոց բանակ մտցրեց Հունգարիա և երկու ամսվա ընթացքում պարտության մատնեց ապստամբներին:

19-րդ դարի 40-ական թվականների վերջերից Մերձավոր Արևելքում սկսվեց նոր հակամարտություն: Սրվեցին մի կողմից հակասությունները Ռուսաստանի և օսմանյան կայսրության միջև, մյուս կողմից՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի միջև:

Թուրքիան ցուցադրաբար մերժեց Ռուսաստանի պահանջը և չհանձնեց իր մոտ ապաստան գտած լեհ հեղափոխական վտարանդիներին: Ավելին, սուլթանը նրանց ընդունեց զինվորական ծառայության: Այս միջադեպում Թորքիային պաշտպանեցին Անգլիան ու Ֆրանսիան:

Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև լարվածությունն ուժեղացավ Երուսաղեմի Սուրբ վայրերի շուրջ: Վեճը լուծելու նպատակով նրանք օգտագործում էին սուլթանի վրա իրենց ունեցած ազդեցությունը: Ի վերջո, սուլ-

քանը հակվեց Ֆրանսիայի կողմը, որտեղ 1851 թ. դեկտեմբերին պետական հեղաշրջման արդյունքով հաստատվեց Նապոլեոն Բոնապարտի կրտսեր եղբոր որդի Լուի Նապոլեոնի դիկտատուրան: Ռուսաստանը անգիջում դիրք գրավեց Սուրբ վայրերի վերաբերյալ վեճում: Ցարը քայլեր ձեռնարկեց սուլթանի դեմ Անգլիային ու Ավստրիային ներգրավելու համար:

Դեռևս 1844 թ. Անգլիա կատարած պաշտոնական այցելության ժամանակ Նիկոլայ Առաջինը զգուշորեն փորձել էր քննարկել օսմանյան կայսրության հնարավոր անդամահատման խնդիրը: Անգլիան հրաժարվել էր դրա քննարկումից:

1852 թ. Նիկոլայ Առաջինը Պետրբուրգում անգլիական դեսպան Սեյմուրի հետ հանդիպման ժամանակ նորից դրեց այդ խնդիրը:

- Մեր ձեռքերի վրա, -ասաց ցարը, - պառկած է հիվանդ մարդ: Այդ մարդը լուրջ հիվանդ է: Մեծ անհաջողություն կլինի, եթե մի օր նա ընկնի մեր ձեռքերի վրայից, հատկապես մինչ այն ժամանակ, երբ կավարտվեն բոլոր անհրաժեշտ նախապատրաստությունները:

- Այդ դեպքում, - պատասխանեց անգլիական դեսպանը, - հարկավոր է բժիշկ և ոչ թե վիրաբուժ: Հիվանդի հետ հարկավոր է հոգատարությամբ վերաբերվել, օգնել նրան առողջանալու...

«Ես չեմ կարող Կոստանդնուպոլիսը զիջել Անգլիային»

Կարճ ժամանակ անց, Նիկոլայ Առաջինը նորից հանդիպեց անգլիական դեսպանին: Այս անգամ ցարը վստահեցրեց դեսպանին, որ հրաժարվում է Կոստանդնուպոլսի վերաբերյալ եկատերինա երկրորդ կայսրուհու երազանքի ու ծրագրի իրականացումից, քանի որ Ռուսաստանն այնքան մեծ է ու ընդարձակ և նոր տարածքներ գրավելու կարիք չունի:

Անգլիական դեսպանը գոհունակությամբ ընդունեց ռուսական ցարի դիրքի փոփոխությունը:

- Բայց, - ավելացրեց ցարը, - ես շարունակում եմ մտահոգվել օսմանյան կայսրության մի քանի միլիոն քրիստոնյաների վիճակով, որոնց պաշտպանությունը պայմանագրերով իմ վրա է մնում: Իմ պարտքն է դա և ես պարտավոր եմ կատարել:

Դեսպանը հետաքրքրվեց, թե ցարը ինչ միջոցներով է պատրաստվում պաշտպանել քրիստոնյաներին, եթե հրաժարվում է եկատերինա երկրորդի ծրագրից:

- Եթե, - պատասխանեց Նիկոլայ Առաջինը, - օսմանյան կայսրությունն ընկնի, նա այլևս երբեք ոտքի չի կանգնի և, ըստ երևույթին, ճիշտ կլինի, որպեսզի նախապես կանխատեսել բոլոր անակնկալությունները, քան ենթարկվել քաոսի և եվրոպական պատերազմի հավանականության, որը կարող է ուղեկցել նման կրախին:

Ցարին ուշադրությամբ լսող դեսպանին հետաքրքրեց Կոստանդնուպոլսի ճակատագիրը: Նիկոլայ Առաջինը դեսպանին անվանեց «բարեկամ ու ջենտլմեն» և ամենայն շիտակությամբ ասաց.

- Ես չեմ կարող Կոստանդնուպոլիսը զիջել Անգլիային: Բայց ես պատրաստ եմ խոսք տալ, որ այնտեղ չեմ հաստատվի որպես սեփականատեր: Բայց նաև չեմ ասում, որ ես չեմ կարող չդառնալ նրա ժամանակավոր սեփականատերը:

Դեսպանին պարզ էր դառնում, որ ցարը միայն ձգտում է հասնել Անգլիայի բարեկամությանը, որպեսզի չեզոքացնի Ֆրանսիային և այդ կերպ հասնի իր նպատակին...

1853 թ. փետրվարի 16-ին «Գրոմոնոսեց» /«Շանթակիր»/ ռազմանավով Կոստանդնուպոլիս ժամանեց ցարի արտակարգ դեսպան իշխան Ա. Մենշիկովը, որը հայտնի էր թուրքերի նկատմամբ ունեցած ատելությամբ: Փետրվարի 24-ին Մենշիկովը սուլթան Աբդուլ Մեջիդին հանձնեց Նիկոլայ Առաջինի նամակը: Ցարը սուլթանին առաջարկում էր ստորագրել կոնվենցիա Պաղեստինում և Սիրիայում գտվող ուղղափառ եկեղեցիների կարգավիճակի մասին և պաշտպանողական պայմանագիր կնքել Ֆրանսիայի դեմ:

Սուլթանը սկսեց խուսանավել և ձգձգել պատասխան տալը: Այդ պատճառով էլ 1853 թ. մայիսի 17-ին Մենշիկովը Թուրքիային վերջնագիր ներկայացրեց, պահանջելով ստորագրել կոնվենցիա, որը Ռուսաստանին պետք է իրավունք տար միջամտել ուղղափառ բնակչության իրավիճակին վերաբերող բոլոր հարցերում:

Անգլիական դեսպանի հետ համաձայնեցնելով իր դիրքորոշումը, Թուրքիայի մեծ վեզիր Ռեշիդ փաշան Մենշիկովի վերջնագրի կապակցությամբ հայտնեց, որ զիջում է Սուրբ վայրերի վերաբերյալ Ռուսաստանի բոլոր պահանջներին: Միաժամանակ մեծ վեզիրը վճռականորեն մերժեց օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության նկատմամբ Ռուսաստանի հովանավորության ամեն մի եղանակ, քանի որ դա վնասում էր սուլթանի անկախությանը:

1853 թ. հունիսի 2-ին Մենշիկովը ցուցադրաբար հետացավ Կոստանդնուպոլսից:

Սուլթան Աբդուլմեջիդը կատարում է իր խոստումը

1853 թ. հոկտեմբերի 4-ին սուլթան Աբդուլ Մեջիդը պատերազմ հայտարարեց Ռուսաստանին: Հոկտեմբերի 20-ին Նիկոլայ Առաջինը ստորագրեց «Օսմանյան կայսրության հետ պատերազմի մասին» մանիֆեստը:

Սկսվեց ռուս-թուրքական պատերազմը, որը 19-րդ դարի ընթացքում թվով երրորդն էր: Պատերազմը սկսվեց երկու ճակատով՝ Բալկաններում և Անդրկովկասում: Անդրկովկասյան ռազմաճակատում թուրքերը կենտ-

րոնացրին 100 հազարանոց բանակ Աբդի փաշայի հրամանատարությամբ:

Այդ ժամանակ Կովկասյան առանձին կորպուսն ուներ 128 հետևակ վաշտ, հեծելազորի 11 էսկադրոն, կազակական 52 գունդ և 232 թնդանոթ: Զորքերի մեծ մասը զբաղված էր լեռնականների դեմ շարունակվող պատերազմով: Թուրքական սահմանի վրա այդ պատճառով պահվում էր քիչ զորք, ընդամենը 20 հետևակ վաշտ, դրագունների երկու դիվիզիոն և ոչ մեծ քանակությամբ հեծելազոր: Շուտով Սևաստոպոլից ուղարկվեց 13-րդ հետևակ դիվիզիան, որով էլ ձևավորվեց գործող կորպուսը գեներալ-լեյտենանտ իշխան Վասիլի Օսիպովիչ Բեբութովի /1791-1858 թթ./ հրամանատարությամբ:

Կորպուսը, որը բաժանվեց 5 ջոկատի /Գուրիական, Ախալցխյան, Ախալքալակյան, Ալեքսանդրապոլյան և Երևանյան/ համալրվելով, ուներ 33 վաշտ, 10 էսկադրոն, կազակական 26 հարյուրակ, միլիցիայի 50 հարյուրակ և 80 թնդանոթ:

Կովկասյան ռազմաճակատում մարտական գործողությունները սկսվեցին 1853 թ. հոկտեմբերի 16-ին, երբ թուրքերը հարձակվեցին Սև ծովի ափին գտնվող Սուրբ Նիկոլայ կոչվող պահակակետի վրա: Միաժամանակ Կարսում գտնվող 40 հազարանոց բանակով Աբդի փաշան շարժվեց դեպի Ալեքսանդրապոլ: Նրա դեմ Բեբութովը ուղարկեց 7 հազար զինվորից բաղկացած ջոկատ գեներալ-մայոր իշխան Իլյա Օրբելիանիի հրամանատարությամբ: Նոյեմբերի 2-ին Բայանդուրի մոտ Օրբելիանիի ջոկատն ընկավ թուրքերի ուժեղ կրակի տակ: Ջոկատը կործանումից փրկեց օգնության հասած Բեբութովը: Ճակատամարտում ռուսները կորցրին 800 սպանված ու վիրավոր:

Զգալով, որ ուժերի գերակշռությունը թուրքերի կողմն է, Բեբութովը իր զորամասը ետ տարավ Ալեքսանդրապոլ: Բեբութովը մարտական գործողությունները վարում էր իր նախաձեռնությամբ, քանի որ պատերազմ հայտարարելու մասին ցարի մանեֆեստը նա ստացավ միայն 1853 թ. նոյեմբերի 6-ին:

Թուրքական մեկ այլ զորախումբ /18 հազար զինվոր և 13 թնդանոթ/ Ալի փաշայի հրամանատարությամբ մոտեցավ Ախալցխային և սկսեց ռմբակոծել: Թուրքերի դեմ նոյեմբերի 14-ին մարտի բռնվեց իշխան Ի. Անդրոնիկովի ջոկատը...

Ռազմաճակատից ստացվում էին սարսափելի լուրեր խաղաղ բնակչության նկատմամբ թուրքերի գործած բռնությունների մասին: Նրանք հրկիզում էին հայկական բնակավայրերը, գազանաբար սպանում կանանց ու երեխաներին: Հայրենակիցներին օգնելու համար սկսվեց կամավորական շարժում: Լորիս-Մելիքովը նույնպես դիմեց փոխարքա Վորոնցովին, խնդրելով իրեն ուղարկել Հայաստան, ռազմաճակատ:

- Ներեցեք ծերդ պայծառապայլության, - ասաց նա փոխարքային, - չեմ կարող հանգիստ մնալ Թիֆլիսում, երբ իմ հայրենակիցները ենթարկվում են թուրքերի հալածանքներին ու գազանություններին:

Լորիս-Մելիքովի մտադրությունը ռազմաճակատ մեկնելու մասին հասավ Մովսես Արղությանին:

- Ես իմ խոսքի տերն եմ, Միկո, - ասաց նա Միքայելին, - դու արդեն 28 տարեկան ես, միթե՞ պատրաստվում ես կյանքդ պատերազմներում անցկացնել: Կնշանվես Նունեի հետ և հետո կմեկնես պատերազմ:

Միքայելը փորձեց առարկել, բայց իշխանը պնդեց իր կամքը:

- Ոչինչ, կնշանենք, հետո կգնաս ռազմաճակատ: Այդպես լավ կլինի: Եվ Աստծո աչքը քո վրա կլինի: Անվնաս ու հերոսացած կվերադառնաս: Ես հավատում եմ քեզ:

Բոլորն էլ համաձայն էին Արղությանի առաջարկությանը: Ինքը՝ Միքայելն էլ էր ուզում այդպես լիներ, քանի որ Նունեին գիտեր փոքրուց և նրա նկատմամբ անտարբեր չէր:

Անասելի ուրախության մեջ էր Միքայելի մայրը.

- Միկո ջան, վերջապես կատարվեց երազանքս...

«Չի՛ հնչ, Աստված հետ հես...»

Նշանդրեքից մի քանի օր անց, 1853 թ. հոկտեմբերի վերջին Միքայելը մեկնեց Հայաստան: Նա Ալեքսանդրապոլում ներկայացավ զորքերի հրամանատար իշխան Բեբութովին, ունենալով Մովսես Արղությանի երաշխավորագիրը: Բեբութովը Միքայելին սիրով ընդունեց ոչ միայն նրա համար, որ ուներ Մ. Արղությանի երաշխավորությունը, այլ նրա համար, որ իշխանն, առհասարակ, ուներ բարի բնավորություն: Չնայած արդեն բոլորել էր նրա 70 տարին, բայց իշխանը բավականաչափ առույգ էր: Մասնակցել էր ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմներին, դարձել էր գեներալ Երմոլովի թիկնապահը: Երևանի մարզի կառավարիչ լինելու տարիներին, տեղի ունեցած մի շարք անկարգությունների համար, որոնք աննկատ չմնացին Երևան այցելած Նիկոլայ Առաջինի ուշադրությունից, իշխանը հեռացվել էր պաշտոնից:

Կովկասի փոխարքա դարձած իշխան Վորոնցովը, որը վաղուց ճանաչում էր Բեբութովին, նրան նշանակեց Դաղստանի զորքերի հրամանատար և այստեղ, 1846 թ. նա արժանացավ 3-րդ աստիճանի Սուրբ Գեորգիի շքանշանի՝ Շամիլի ուժեղ զորաջոկատներից մեկին ջախջախելու համար:

Այնուհետև փոխարքան Բեբութովին նշանակեց փոխարքայության քաղաքացիական վարչության պետ...

Իշխան Բեբութովը գնդապետ Լորիս-Մելիքովի վրա դրեց թշնամու թիկունքը հետախուզելու պարտականությունը: Լորիս-Մելիքովն աչքի ըն-

կավ հոկտեմբերի 30-ին Բայանդուրը թուրքերից ազատագրելու մարտում: Նոյեմբերի 19-ին կազակների գլուխն անցած Լորիս-Մելիքովն առաջինը մտավ Բաշ-Կադիկլար: Այս սխրանքի համար Լորիս-Մելիքովն արժանացավ Գերգիևյան ոսկյա սրի «Արիության համար» մակագրությամբ:

Իրավիճակի թելադրանքով, երբ Բեբութովը իր զորքերը վերադարձրեց Ալեքսանդրապոլ, գնդապետ Լորիս-Մելիքովը նշանակվեց շտաբի հատուկ հանձնակատար: Գտնվելով Ալեքսանդրապոլում, Լորիս-Մելիքովն անմիջապես ձեռնամուխ եղավ իր սիրած գործին: Նախ, գտավ ծանոթ հայերի ու վրացիների, նրանց միջոցով ընդլայնեց իր կապերը և Թուրքիայի սահմաններում աստիճանաբար սկսեց կարգավորել հետախուզությունը: Նրան ի վերջո, հաջողվեց իր շուրջը համախմբել 300 մարդ, հիմնականում հայեր: Կային նաև Կովկասի բոլոր ազգություններից: Միքայելը իր նպատակի մասին հայտնեց Բեբութովին: Իշխանը տարակուսանքով ընդունեց Լորիս-Մելիքովի առաջարկը: Պարզապես չէր հավատում, որ երիտասարդ գնդապետը կկարողանա կարգապահությանն անսովոր մարդկանց իրեն ենթարկել: Ծայրահեղ դեպքում կենթարկվեն, քանի դեռ թալանի հնարավորություն կունենան: Բացի դրանից հավաքագրվածների մեջ կային նաև մահմեդականներ, որոնք առաջին իսկ անհաջողության դեպքում կանցնեին թուրքերի կողմը և նրանց կհայտնեին բոլոր գաղտնիքները:

Լորիս-Մելիքովը լեռնականների դեմ գործողությունների փորձից ելնելով, այդ ամենը նախատեսել էր և նաև մշակել դրանց դեմ առնելու միջոցները: Ի վերջո նա կարողացավ համոզել Բեբութովին:

- Դե ինչ, Աստված քեզ հետ, - ասաց իշխանը և հաջողություն մաղթեց Միքայելին:

Լորիս-Մելիքովի որսորդները բռնում են հնարքին

1854 թ. ապրիլի վերջին Լորիս-Մելիքովը Բեբութովին զեկուցեց, որ ամեն ինչ պատրաստ է գործելու համար: Իսկապես ամբողջ ձմեռ Միքայելը զբաղված էր մարդկանց ստուգելով ու հավաքագրելով: Այդ մասին լսելով նրա մոտ եկան նույնիսկ Հյուսիսային Կովկասի հեռավոր աուլներից բազմաթիվ լեռնականներ, որոնք իրենց համար մեծ պատիվ էին համարում Լորիս-Մելիքովի մոտ ծառայելը: Իհարկե, հավաքվածների մեջ կային նաև այնպիսիք, որոնք պարզապես թալանի նկատմամբ մեծ հակում ունեին:

Այդ խայտաբղետ, բազմալեզու ամբոխին կառավարելու, իրեն ենթարկելու գործում Լորիս-Մելիքովին օգնում էին երկու կարևոր հանգամանք: Նախ, նա բոլորին վերաբերում էր հավասար կերպով: Ճաշում էր նրանց

հետ: Կատակում էր, յուրաքանչյուրի համար ուներ պատրաստի սփոփիչ ու սիրալի խոսքեր: Երկրորդ, Լորիս-Մելիքովը բոլորի հետ խոսում էր նրանց համար հարազատ լեզվով՝ թուրքերեն, վրացերեն, հայերեն, քրդերեն, պարսկերեն: Եվ այս ամենի համար էլ որսորդներն արտակարգ համակրանքով էին վերաբերում իրենց հրամանատարին:

Լորիս-Մելիքովն իր ջոկատը կառուցել էր ըստ ազգային պատկանելության, հրամանատար նշանակելով տվյալ ազգությունից իր քաջությամբ ու խելքով հեղինակություն ունեցող զինվորի: Մի տեսակ մրցակցություն էր տեղի ունենում. ո՞վ ավելի արագ ու անթերի կկատարի սիրելի հրամանատար Լորիս-Մելիքովի հանձնարարած առաջադրանքը:

Շուտով առիթը ներկայացավ և Լորիս-Մելիքովը պետք է ցույց տար, թե իր հավաքած ջոկատը ինչի էր ընդունակ: 1854 թ. ապրիլի 12-ին Լորիս-Մելիքովի որսորդների խումբը Նիժնիհնովգորոդյան գնդի հետ միասին դուրս եկան Ալեքսանդրապոլից և ուղղություն վերցրին դեպի Արչին գյուղ, որտեղ կենտրոնացել էր թուրքական մեծաքանակ հեծելազորը:

Լորիս-Մելիքովն իր ջոկատը տարավ հանկարծակի գրոհի և շեշտակի հարվածով թուրքերի մոտ առաջ բերեց անկասելի խուճապ: Թուրքերը նույնիսկ չկարողացան դիմադրություն ցույց տալ: Գերի վերցնելով 20 զինվոր և երկու սպա, Լորիս-Մելիքովը հաղթանակով վերադարձավ Ալեքսանդրապոլ:

Կովկասյան ռազմաճակատում թուրքական զորքերի հրամանատար Մուստաֆա-Զերիֆ փաշան Կարսի մոտ կենտրոնացրեց 60 հազար զինվոր և 84 դաշտային թնդանոթ: Ի՞նչ նպատակ ուներ թուրքական հրամանատարը, ո՞ր ուղղությամբ էր հարվածելու: Լորիս-Մելիքովի որսորդներին հաջողվեց թափանցել Կարս, հետախուզել և բացահայտել թուրքական հրամանատարության մտադրությունը: Դա Բեբութովին հնարավորություն տվեց իր 18 հազարանոց բանակը տեղավորել Քյուրուկ-Դարայի տակ և հանկարծակի հարձակում ձեռնարկել:

Անգլիական խորհրդականների կողմից ոգևորված թուրքական հրամանատարը հույս ուներ ընթացքից գրոհել և գրավել Ալեքսանդրապոլը: Սակայն Բեբութովին հաջողվեց երեք անգամ քիչ ուժերով ոչ միայն կասեցնել, այլև ջախջախել թուրքական 60 հազարանոց բանակը: Գրոհողների առաջին շարքում իր որսորդներին տանում էր Լորիս-Մելիքովը: Նրանք առաջինը մտան թշնամու ճամբար, իրենց աղմուկով ու սուլոցներով այնպիսի խուճապ ստեղծեցին, որ թուրքերը չհասցրին ուշքի գալ: Վրա հասած կանոնավոր գնդերը հաղթանակը դարձրին լիակատար:

1854 թ. հուլիսի 24-ին Քյուրուկ-Դարա գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում կրած պարտությունը թուրքական հրամանատարությանը հարկադրեց հրաժարվել լայնամաշտաբ հարձակողական գործողություններից:

Նիկոլայ Նիկոլաևիչ Մուրավյով

Դեռևս 1854 թ. մարտի մեկին ցարական հրամանով փոխարքա Վորոնցովը /1782-1856 թ.թ./ ուղարկվել էր արծակուրդ: Այն ամբողջ ժամանակ, ինչ Միքայելը հայտնվեց Վորոնցովի միջավայրում, նրանց միջև հաստատվեց իսկական բարեկամություն: Իշխանը ուշադրությամբ էր վերաբերում երիտասարդ Լորիս-Մելիքովին, ուրախանում նրա հաջողություններով և համոզմունք հայտնում, որ կարճ ժամանակ անց նա կդառնա Ռուսաստանի երևելի գործիչներից մեկը:

Ի դեմս Միխայիլ Սեմյոնովիչ Վորոնցովի, երիտասարդ Միքայելը զրկվեց փորձված ղեկավարից ու լավագույն խորհրդատուից:

Ո՞վ կլիներ Վորոնցովի փոխարեն, ինչպե՞ս կլիներին ռազմաճակատում գործերը, վերջապես ինչպե՞ս կդասավորվեր Լորիս-Մելիքովի հետագա ծառայությունը: Այս բոլոր հարցերը հուզում էին Լորիս-Մելիքովին և նրա համար միևնույնը չէր, թե Նիկոլայ Առաջինը ում կուղարկեր Կովկասյան ռազմաճակատ:

Վորոնցովի փոխարեն ժամանակավորապես նշանակված գեներալ Ռեադը քաջասիրտ զինվորական էր, բայց չուներ մասշտաբային մտածողություն: Այս առումով հետաքրքիր է նշել հետևյալ փաստը: 1854 թ. գարնանը Բեբութովը նոր նշանակված Ռեադին ներկայացրեց հարձակողական կամպանիայի պլանը, որի արագ իրագործումը կունենար վճռական նշանակություն: Ռեադը չուզեց պատասխանատվությունն իր վրա վերցնել և Բեբութովի պլանը ուղարկեց ռազմական նախարար Չերնիշովին, որը հայտնի էր իր ապաշնորհությամբ: Չերնիշովը երկար մտածեց, բայց խուսափեց իր խոսքն ասել և Բեբութովի պլանը ներկայացրեց Նիկոլայ Առաջինին: Ծանոթանալով պլանին, ցարը մակագրեց. «Գեղեցիկ է, կանխել են իմ սեփական ցանկությունը»: Պլանը նույն ճանապարհով վերադարձավ կազմողի մոտ: Արդյունքում կորցվեց այնքան անհրաժեշտ ժամանակը:

Վեջապես 1854 թ. դեկտեմբերին Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար և Կովկասի փոխարքա նշանակվեց գեներալ-թիկնապահ Նիկոլայ Մուրավյովը, որի ավագ եղբայրը եղել էր դեկաբրիստ: Ճիշտ է, նա ապստամբությունից երկու տարի առաջ հեռացել էր դեկաբրիստներից, բայց աքսորվել էր Սիբիր: Այստեղ նա մնացել էր շատ կարճ: Շուտով նրան ներում էր շնորհվել և նույնիսկ նշանակվել Արխանգելսկի նահանգապետ:

Նիկոլայ Մուրավյովին ցարի ընտանիքում նույնպես չէին ընդունում, թեև 1812 թ. հայրենական պատերազմի հերոսներից էր: 1830-ական թվականներին ծառայել էր Կովկասում, ծանոթ էր երկրամասին: Շուտով հարկադրված հրաժարական տվեց ու հեռացավ Կովկասից: 1849 թ. հունգարական հեղափոխության ժամանակ Նիկոլայ Առաջինը նորից հիշեց Մուրավյովին և ծառայության կանչեց:

Ն. Մուրավյովը խստապահանջ էր և Թիֆլիս գալով, հենց առաջին օրից սկսեց զբաղվել կարգապահության ամրապնդմամբ: Նոր փոխարքայի առջև կարևոր խնդիր էր դրվել. Թուրքիայի դեմ պատերազմի ընթացքում կարողանալ Շամիլի հետ զինադադար հաստատել: Եվ այդ խնդիրը լուծելու նպատակով Մուրավյովը իր հետ Թիֆլիս էր բերել Շամիլի գերի ընկած երկրորդ որդուն: Մուրավյովը որդուն վերադարձրեց Շամիլին, պայմանով, որ քանի Թուրքիայի դեմ ընթանում է պատերազմ, կնքվի զինադադար: Շամիլը կատարեց իր խոստումը...

1855 թ. փետրվարի 18-ին մեռավ Նիկոլայ Առաջինը: Ցարի մահը բացահայտեց Ռուսաստանի խայտառակ վիճակը և նախախնամության կամքով էր, որ Կովկասի փոխարքա էր նշանակվել եռանդուն ու խստապահանջ Մուրավյովը:

1855 թ. մայիսի 13-ին գլխավոր հրամանատար Մուրավյովը եկավ Ալեքսանդրապոլ, ծանոթացավ բոլոր սպաներին: Բեբութովը նրան ներկայացրեց նաև իր հատուկ հանձնակատար Լորիս-Մելիքովին: Մուրավյովը, առհասարակ, վատ էր վերաբերվում նրանց, ովքեր Վորոնցովի սիրելին էին եղել: Դա հայտնի էր, ուստի Բեբութովը եռանդով երաշխավորեց Լորիս-Մելիքովին, նշելով նրա ունեցած դերը անցած մարտական գործողություններում: Մուրավյովը չթաքցրեց իր դժգոհությունը: Նա լավ իմանալով Կովկասի ժողովուրդների սովորույթները, մտածեց, որ Բեբութովը հայ է, ուստի այդ պատճառով էլ եռանդով երաշխավորում է իր հայրենակցին...

Մուրավյովը հանգամանորեն ծանոթացավ իրավիճակին: Ահա, այս անգամ էլ աչքի ընկավ Լորիս-Մելիքովն իր հետախույզ-որսորդներով: Նրանք պարզեցին, որ Մուստաֆա Զարիֆ փաշայի փոխարեն գլխավոր հրամանատար է նշանակվել զառամյալ Վազիֆ Մուհամեդ փաշան: Բայց դա այնքան էլ կարևոր չէր: Կարևորն այն էր, որ թուրքական զորքերի իրական հրամանատարն անգլիացի գեներալ Վիլյամսն էր, որն հանդես էր գալիս կեղծ անունով, ներկայանալով որպես թուրք: Ավելին, պարզեցին, որ թուրքական բանակում գործում են մի քանի տասնյակ անգլիացի սպաներ ու ինժեներներ: Լորիս-Մելիքովի հետախույզները ճշտեցին նաև, որ անգլիացի ինժեներները զբաղված են Կարսի ամրությունները վերակառուցելով ու նորերը ստեղծելով:

Շուտով Մուրավյովը Բեբութովին տեղափոխեց Թիֆլիս, հանձնարարելով զբաղվել երկրամասի վարչական գործերով, որն այդ ժամանակ մեծ կարևորություն էր ստացել:

Բեբութովի փոխարեն հրամանատար նշանակվեց գեներալ է. Բրիմերը, որը զորքերի աջ թևի հրամանատար գեներալ-լետենանտ Կովալևսկու և ձախ թևի հրամանատար գեներալ Սուսլովի հետ Լորիս-Մելիքովի ձեռք բերած տեղեկությունների համաձայն մշակեց գործողությունների օպերատիվ պլան: Այդ պլանի համաձայն ռուսական զորքերի գլխավոր ուժե-

րը /24,5 հազար զինվոր և 76 թնդանոթ/ կենտրոնացվեցին Ալեքսանդրապոլի մոտ: Այ թևը Ախալցխայում և Ախալքալակում ուներ10,2 հազար զինվոր և 16 թնդանոթ: Ձախ թևը 5 հազար զինվորով և 8 թնդանոթով դիքեր էր գրավել Արարատ լեռան ստորոտում: Ընդհանուր առմամբ Մուրավյովը իր տրամադրության տակ ուներ 40 հազար զինվոր և 100 թնդանոթ:

1855 թ. մայիսի 26-ին Կովկասյան բանակը երեք կողմից մտավ Թուրքիայի տարածք՝ ուղղություն վերցնելով դեպի Կարս: Մայիսի 28-ին գլխավոր ուժերն Ալեքսանդրապոլի կողմից հասան Կարսից 24 կմ հեռու գտնվող Աղջա-Կալա գյուղ, որտեղ էլ նրանց պետք է միանար Կովալևսկու զորախումբը:

Մուրավյովը Ալեքսանդրապոլյան ջոկատի մեջ էր ընդգրկել Լորիս-Մելիքովի հետախուզական հարյուրակը, բայց շարունակում էր կասկածանքով ու տագնապով վերաբերել կանոնավոր երթով շարժվող զորամասերի կողքին այդ ոչ մի կանոնի չենթարկվող մարդկանց խմբին:

- Ինչպե՞ս կարող է փափկասիրտ գնդապետը կառավարել այս խայտաբղետ ամբոխին, - տարակուսում էր Մուրավյովը...

Լորիս-Մելիքովն օգնում է գեներալ Կովալևսկուն

Գեներալ Կովալևսկու զորախումբը չէր երևում: Հայտնի չէր ուշացման պատճառը: Օպերացիայի իրագործումը վտանգի տակ էր: Պարզություն մտցրեց Արդահանից մի կերպ Աղջա-Կալա հասած հայ կամավորը, որը հայտնեց Կովալևսկու դեմ թուրքական մի խոշոր անկանոն հեծելազորի շարժման մասին:

- Թույլ տվեք, ձերդ պայծառափայլություն, գործել, - ասաց Լորիս-Մելիքովը, - դիմելով Մուրավյովին, երբ ամեն ինչ պարզվեց:

Մուրավյովին այլ ելք չէր մնում, բացի համաձայնվելուց, թեև շարունակում էր չվստահել Լորիս-Մելիքովի որսորդներին:

Լորիս-Մելիքովն իր ջոկատով շտապեց Արդահանի ուղղությամբ: Հանկարծակի, ուժգին և սրընթաց գրոհ՝ ահա նրա տակտիկան: Կովալևսկու հետ գործողությունները համաձայնեցնելու նպատակով Լորիս-Մելիքովը նրա մոտ ուղարկեց իր հետախույզներից մեկին: Կովալևսկին պետք է հարվածեր այն ժամանակ, երբ թուրքական հեծելազորը մոտենար Արդահանին: Լորիս-Մելիքովը կենտրոնացավ կիրճի բարձրունքում, սպասելով այն պահին, երբ հակառակորդը կմտներ այնտեղով անցնող ճանապարհը:

Անցավ կես ժամ: Թուրքական հեծելազորը ոչինչ չկասկածելով մտավ կիրճ: Լորիս-Մելիքովն իր մարտիկներով սրընթաց մխրճվեց թշնամու վերջին շարքերը: Թուրք հեծյալները կորցրին կողմնորոշումը: Առջևում գտնվող հեծյալները ետ վերադարձան և խառնվեցին նրանց: Խուճապն ավե-

լի ուժեղացավ: Նշանակված պահին տեղ հասավ Կովալևսկու ուղարկած ջոկատը: Չդիմանալով գրոհին, հանկարծակի եկած ու խուճապի մատնված թուրքական հեծելազորը ցրվեց, կիրճում թողնելով բազմաթիվ սպանվածներ ու վիրավորներ: Քիչ չէին նաև գերի հանձնվածները:

Կովալևսկու առջև ճանապարհը բացվեց: Կարճ ժամանակ անց, նա հասավ Աղջա-Կալա:

Լորիս-Մելիքովը շարք կանգնեցրեց գերի հանձնված թուրքերին և նրանց դիմեց թուրքերեն լեզվով: Գերիները ապշել էին՝ ռուս գնդապետը խոսում է թուրքերեն: Նա բոլորին խոստացավ ազատ արձակել, ներել, եթե նրանք երդվեն, որ այլևս զենք չեն վերցնի ռուսական զորքի դեմ, իսկ ով ցանկանա միանալ իր ջոկատին, կստանա պարգև...

Փոխարքա Մուրավյովը շատ զարմացավ, երբ իմացավ, որ թուրք գերիները միակամ ընդունել են Լորիս-Մելիքովի առաջարկը և երդվել են հավատարմորեն ծառայել նրան...

Կարսի մատույցներում

Վերջապես Մուրավյովը որոշեց սկսել Կարսի շրջափակումը: 1855 թ. հունիսի 12-ին ռուսական զորքերը դուրս եկան Կարսից 12 կմ հեռու գտնվող Քանի-Քյով գյուղ, որը գտնվում էր էրզրում տանող ճանապարհի մատույցներում:

Բայց, թուրքերը կարողանում էին շրջափակված Կարս ուղարկել պարեն, ռազմամթերք և համալրում: Կարսի կայազորի զինվորների թիվը հասցվեց 26 հազար մարդու: Անգլիացիների հսկողությամբ թուրքերը գիշեր-ցերեկ աշխատում էին Կարսի ամրությունների վրա:

Անհրաժեշտ էր փակել բոլոր ճանապարհները, հակառակորդին զրկել օգնություն ստանալու հնարավորությունից, հակառակ դեպքում Կարսի գրոհը հաջողություն չէր ունենա:

Այս գործը դարձյալ իր վրա վերցրեց Լորիս-Մելիքովը, Մուրավյովին հավաստելով չկասկածել հաջողության մեջ: Լորիս-Մելիքովի հետախույզները հայտնաբերեցին թուրքերի հիմնական պահեստները, որոնք տեղավորված էին Բեգլի-Ահմեդ և Չիպչախլի գյուղերում:

Ճշտելով ամեն ինչ, Լորիս-Մելիքովը գիշերը, հանկարծակի գրոհեց պահեստների վրա: Քնաթաթախ պահակազորը անսպասելի հարձակումից ուշքի չեկավ: Կենդանի մնացած թուրք զինվորները կարողացան մի կերպ անհայտանալ գիշերվա խավարի մեջ: Լորիս-Մելիքովը գյուղացիներից շտապ կարգով հավաքեց եղած սայլերը և ինչ որ հնարավոր էր դրանցով տարավ: Մնացածը այրվեց: Գիշերային այս գրոհով թուրքերը զրկվեցին պարենի պաշարից, իսկ ռուսական զորքերը համալրեցին իրենց ունեցածը:

Մուրավյովը, թեև զարմացել էր, բայց անչափ գոհ մնաց Լորիս-Մելիքովի կազմակերպած գրոհից:

Այդ գրոհի ժամանակ Լորիս-Մելիքովը կարողացավ ճշտել նաև այն դաշտերը, որտեղից գիշերները թուրքերը խոտ էին հնձում ձիերի համար: Գիշերները Լորիս-Մելիքովը հարձակվում էր, ցրում թուրք զինվորներին և նրանց հնձած խոտը գրավում: Այս հարձակումները այնքան հանկարծակի ու հաճախակի էին, որ թուրքերը այլևս չէին համարձակվում խոտ հնձելու համար Կարսից դուրս գալ: Փաստորեն նրանց ձիերը մնացին առանց կերի...

Որպես կանոն, գիշերային այդ գրոհների ընթացքում Լորիս-Մելիքովի որսորդները գերի էին վերցնում թուրք զինվորների: Գերիների հետ Լորիս-Մելիքովը հարցաքննության փոխարեն զրուցում էր թուրքերեն լեզվով և շահում նրանց վստահությունը: Գնդապետն այս միջոցով ոչ միայն կարևոր տեղեկություններ էր ստանում, այլև գերիներին ազատ արձակելով, ձեռք բերում բազմաթիվ գործակալների, որոնց մեծ մասը, ի զարմանս շատերի, հավատարիմ էին մնում ռուս գնդապետին տված երդմանը:

Ահա, այս կերպ Լորիս-Մելիքովին հաջողվեց Կարսի ներսում ստեղծել գործակալների լայն ցանց: Նրանց օգնությամբ էլ գնդապետի հետախույզները թափանցում էին նույնիսկ Կարսի ամրոց և վերադառնում արժեքավոր տեղեկություններով:

Կովկասյան բանակի շտաբի փաստաթղթերում հետաքրքիր տեղեկություններ կան Լորիս-Մելիքովի հետախույզներից մեկի, ծնունդով Երևան քաղաքից Դանիել Հարությունյանի մասին: Այս համարձակ ու փորձված հետախույզը հասցրեց մի քանի անգամ լինել Կարսում, յուրաքանչյուր փողոցում ու թաղամասում ուներ հավատարիմ օգնականներ:

Թե ինչպիսի եռանդ, հնարամտություն ու համարձակություն էր դրսևորում Լորիս-Մելիքովն իր հետախույզ-որսորդներին ղեկավարելու գործում, արժե մի ընդարձակ մեջբերում կատարել փոխարքա Մուրավյովի հուշերից:

«Տեղական միլիցիան, - գրել է Մուրավյովը, - հավաքագրվեց արդեն մայիսի վերջին: Նրանց մեջ հիանալի էին գնդապետ Լորիս-Մելիքովի որսորդների երեք հարյուրակները: Դրանք կազմվել էին ամեն կարգի և ունեցվածքի տեր մարդկանցից, մեծամասամբ, ինչպես թուրքահպատակ, այնպես էլ մեր հայերից: Նրանց մեջ կային նաև վրացիներ, մեր մահմեդական գավառների բնակիչներ, մեզնից ու թուրքերից փախած կարապափափախներ, թուրքական հույներ և նույնիսկ մի ռուս: Այս աներես դրուժինան աչքի էր ընկնում արիությամբ, արագաշարժությամբ և տեղանքը լավ իմանալով: Նրանց մեջ դժվար էր պահպանել խիստ կարգ հարյուրակ գրվող հեծյալների գալով ու հեռանալով: Նրանց մեջ պատահում էին դանդահարությամբ և նույնիսկ սպանությամբ ուղեկցվող վեճեր: Բայց այս օտարերկրյա-լեգեոնը շատ դեպքերում մատուցեց մեծ ծառայու-

թյուններ: Նրանում միշտ կարելի էր գտնել հետախույզների և ուղեկիցների, քանի որ այն կազմող մարդիկ ամենուրեք ունեին հարազատներ ու ծանոթներ: Նրանք փոխարինում էին կազակներին հեռավոր հեծյալ պարեկությունների և որոնումների ժամանակ, սիրում էին հակառակորդի հետ փոխհրաձգություն, ամեն կերպ ձգտելով օգուտ քաղել:

Չկային ավելի վստահելի մարդիկ, քան նրանք, որոնք ամեն կերպ ազնվությամբ ու պարտքի զգացումով էին կատարում հեռավոր տեղեր կարևոր թղթեր ու լուրեր հասցնելու գործը: Այս մարդկանց խմբում միշտ երևում էին նոր դեմքեր, պատահում էին նույնիսկ հոգևորականներ: Կասկած չկա, որ նրանց մեջ թաքնվում էին այնպիսիք, որոնք մեզնից լուր էին հաղորդում հակառակորդին: Բայց դրանից հարկ չէր լինում վախենալ, քանի որ հրամանատարը ճամբարում ամեն ինչ գաղտնի էր պահում: Ընդհակառակը, այդ ուղիով հնարավոր էր լինում տարածել ցանկացած լուր և տեղեկություն: Գնդապետ Լորիս-Մելիքովն այդ երեք հարյուրակների վրա հրամանատարություն անելով, արտասահմանյան բնակիչների հետ հարաբերություններ հաստատելով կարողանում էր լրիվ կատարել իր մյուս պարտականությունները»:

Լորիս-Մելիքովի մյուս պարտականությունները

Լորիս-Մելիքովի մյուս պարտականություններն, որոնց մասին հիշատակում է Մուրավյովը, նույնպես բարդ էին և պահանջում էին մշտական հսկողություն: Գնդապետի մյուս պարտականությունների մեջ էին մտնում ղարաբաղցի հայերից կազմված դրուժինայի, թուրքական քրդերի երկու գնդի, կարափափախներից ձևավորված միլիցիայի ղեկավարումը: Փաստորեն Լորիս-Մելիքովի պարտականությունն էր ղեկավարել Ալեքսանդրապոլի գլխավոր ջոկատի կազմում գտնվող բոլոր անկանոն զորամասերը:

Փոխարքա Մուրավյովը քրդերին լավ գիտեր իր նախորդ ծառայության տարիներից և առանձնապես նրանց չէր վստահում: «Քրդերը, - գրել է Մուրավյովը, - քոչվոր կյանքի և ամռանը բաց երկնքի տակ մնալու սովորույթի համաձայն, վրաններ չունենալով, անտրտունջ տանում էին վատ եղանակն ու անծրևը, դիմանում էին մինչև սառնամանիքների սկսվելը: Դրան նպաստում էր գնդապետ Լորիս-Մելիքովի վարվելակերպը, որը մշտապես կարողանում էր փաղաքշանքը փոխարինել խստությամբ, երբ դրա անհրաժեշտությունը լինում էր: Նրանց մտերմացնում էր նաև քրդերի բնական շահասիրությունը, որը Լորիս-Մելիքովը բավարարում էր կանոնավոր, յուրաքանչյուր ամիս, աշխատավարձի և ձիերի պահպանման համար վճարելով: Այս երկուսի գումարը նրանք պահում էին, համարյա ոչինչ չէին օգտագործում իրենց սննդամթերքի համար և միայն զարմանալ կարելի էր, թե ինչով էին ապահովում իրենց գոյությունը»:

Փոխարքա Մուրավյովը միշտ զարմանքով Լորիս-Մելիքովից հետաքրքրվում էր, թե ինչպես է նրան հաջողվում այս ամենը կառավարելի դարձնել: Եվ ամեն անգամ Լորիս-Մելիքովը պատասխանում է.

- Դե, ինչպե՞ս բացատրեմ, ստացվում է և վերջ:

Կաղզվանը հպատակվում է առանց արյունահեղության

Կարսի շրջափակման ընթացքում, ռուսական զորամասերը մյուս ուղղություններով աստիճանաբար խորանում էին դեպի թուրքական տարածք: 1855 թ. հունիսին չդիմանալով ճնշմանը, թուրքական զորքերը հեռացան նաև Կաղզվանից: Կաղզվանի քաղաքացիական կառավարիչները ռուսական հրամանատարությանը խոստացան ներկայանալ Կովկասի փոխարքա, գլխավոր հրամանատար Մուրավյովին և հայտնել իրենց հպատակությունը: Սակայն նրանք կապ ունեին Կարսի հետ և այնտեղից ստացած հրամանին ենթարկվելով, չկատարեցին իրենց խոստումը, հույս ունենալով, որ պատերազմի պայմաններում ռուսներն իրենց մասին չեն հիշի:

Սակայն ռուսական հրամանատարությունը հիշում էր և գիտակցում, թե ինչ հետևանք կունենա Կաղզվանն ու նրա ամրոցը թողնել առաջ շարժվող զորքի թիկունքում:

- Միխայիլ Տարիելովիչ, - ասաց գլխավոր հրամանատարը իր կանչով ներկայացած Լորիս-Մելիքովին, - հույս ունեմ, որ դու գիտես, թե ինչ է նշանակում մեր զորքերի թիկունքում թողնել չհպատակված Կաղզվանը: Միայն դու կարող ես մեկնել այնտեղ և կարգ ու կանոն հաստատել:

1855 թ. հուլիսի 9-ին Լորիս-Մելիքովն իր ջոկատներով ուղևորվեց Կաղզվան: Ճանապարհին նրան միացան այլ զորամասեր: Հարկավոր էր հանկարծակի բերել Կաղզվանի թուրքական իշխանություններին և նրանց զրկել դիմադրություն կազմակերպելու հնարավորությունից: Լորիս-Մելիքովը նպատակահարմար գտավ Կաղզվան մտնել երկու կողմից և այն էլ վաղ առավոտյան: Հաջողությունը կախված էր անաղմուկ շրջանցումից: Ռուսական գնդերի զինվորներն ու հրամանատարները, որոնք աչքի էին ընկնում կարգապահությամբ, սկսեցին անհանգստանալ, որ Լորիս-Մելիքովի անկանոն հարյուրակները չեն երևում: Բայց նրանց անհանգստանալն իզուր էր: Լորիս-Մելիքովը հանգստացրեց հրամանատարներին, հայտնելով, որ իր որսորդներն ու քրդերը արդեն դուրս են եկել ելագիծ:

1855 թ. հուլիսի 11-ի վաղ առավոտյան Լորիս-Մելիքովն իր զորախումբը երկու կողմից մտցրեց Կաղզվան: Դա այնքան հանկարծակի ու սրընթաց կատարվեց, որ թուրքերը չկարողացան որևէ քայլի դիմել: Կաղզվանի դիվանի անդամները հայտնեցին իրենց հպատակությունը: Կաղզվանը հանձնվեց առանց արյունհեղության:

Լորիս-Մելիքովը գիտեր, որ Կաղզվանում ապրում են մեծ թվով հայ ընտանիքներ և եթե արյունահեղություն լիներ, ապա առավելապես տուժելու էին նրանք:

Առհասարակ, դա առաջին դեպքն էր, երբ ռուսական զորքերի ճնշման տակ թուրքական զորքը հեռացել էր մի բնակավայրից և հաշվեհարդար չէր տեսել հայ բնակչության նկատմամբ:

Լորիս-Մելիքովն անհապաղ զբաղվեց Կաղզվանում տեղական կառավարումը կազմակերպելով: Իրենց նախկին տեղերում թողնելով դիվանի անդամներին, Լորիս-Մելիքովը նրանցից խստորեն պահանջեց արդարությամբ կառավարել: Կաղզվանում կարգ ու կանոնին հետևելու համար Լորիս-Մելիքովը թողեց մայոր Իվան Միխայլովիչ Պոպկոյին ու իր հետ եկած զորաջոկատների մեծ մասի գլուխն անցած շտապեց դեպի Կարսի մատույցներ:

«Ձկներ հավերին չեն սովորեցնում...»

1855թ. սեպտեմբերի սկզբին Կովկասյան ռազմաճակատ հասավ Սևաստապոլի անկման մասին լուրը: Միաժամանակ հայտնի դարձավ, որ թուրքական 40 հազարանոց բանակը Օմար փաշայի հրամանատարությամբ Բաթումից գալիս է Կարսում շրջափակված կայազորին օգնության: Օմար փաշան սեպտեմբերի 21-ին մտավ Սուխումի: Աբխազիայի կառավարիչ Միխայիլ Շերվաշիձեն դավաճանեց և անցավ թուրքերի կողմը:

Օմար փաշայի դեմ ուղարկվեց գեներալ-լեյտենանտ Բագրատիոն-Մուխրանսկու /16 հազար մարդ և 28 թնդանոթ/ ջոկատը, որին հաջողվեց իր վրա գրավել թուրքերի ուշադրությունը: Նոյեմբերին սկսվեցին ուժեղ անձրևներ, ճանապարհները դարձան անանցանելի, գետերը դուրս եկան ափերից և Օմար փաշան երկար ժամանակ չկարողացավ Աբխազիայից առաջ շարժվել:

Մինչ այդ, Մուրավյովը իր մշակած պլանի համաձայն ուժեղացրեց Կարսի շրջափակումը: Լորիս-Մելիքովի որսորդներն ու Դունդուկով-Կորսակովի դրագունները հուսալիորեն փակեցին Կարսի բոլոր ելքերն ու մուտքերը: Նրանք մաքրեցին Սողանլու լեռնաշղթայի երկայնքով անցնող էրզրումի և Օլթիի ճանապարհը:

Կարսի թուրքական կայազորի մոտ սկսված խուճապի մասին լուրերը ճշտեցին Լորիս-Մելիքովի որսորդները: Պարզվեց, որ անգլիացի գեներալ Վիլյամսը, որը փաստորեն Կարսի պաշտպանության ղեկավարն էր, խստացրել էր հացի բաժանումը սկզբում խաղաղ բնակչությանը, հետո նաև զինվորներին: Հաճախակի էին դարձել շրջափակված քաղաքից փախուստի փորձերը: Փախստականները բռնվում էին ու Վիլյամսի հրամանով մահապատժի ենթարկվում: Սակայն ոչ մի արգելք ու բռնություն չէին պահում

սովից փախչողներին: Այսպիսի պայմաններում Մուրավյովը որոշեց ձեռնարկել Կարսի գրոհը, քանի Օմար փաշան օգնության չէր հասել:

Կարս քաղաքը տարածված էր Կարս-չայ գետի երկու ափերին: Երեք կողմից քաղաքը պաշտպանվում էր ուղղածիգ ժայռոտ լեռներով: Հյուսիսում, գետի աջ ափին, բարձացված էր քարե միջնաբերդը՝ հզոր պարիսպներով: Քաղաքի մատույցներում անգլիացիները կառուցել էին այն ժամանակվա ինժեներական վերջին խոսքին համապատասխան անմատչելի ամրություններ, որոնք իրար հետ կապված էին փոսերով ու խրամատներով: Գետի աջ ափի կողմից, Կարսի հարավային և հարավարևելյան մասը պաշտպանելու նպատակով կառուցվել էին Սուվարի, Կանլի, Ֆեվզի, Հաֆիզ ամրոցները: Հյուսիսից ծգվում էին Ղարադաղի լեռները, որտեղ նույնպես կառուցվել էին ամրություններ ուղղված դեպի արևելք ու հյուսիս-արևելք: Այստեղ գտնվող Զիարեթ ամրոցը խրամատներով կապված էր Ղարադաղ և Արաբ ամրությունների հետ: Անմատչելի էին նայև գետի աջ ափին գտնվող և քաղաքը հյուսիսից շրջափակող Ինգլիզ, Բլում, Մուխլիս ամրությունները: Կարսի արևմտյան մասում գտնվող ամրությունները զինված էին հզոր մարտկոցներով: Այս ամրությունները գտնվում էին քաղաքից հեռու և Մուրավյովը հույս ուներ դրանք գրավելով բացել ուղիղ ճանապարհ դեպի Կարս: Այս հնարավորությունը այնքան իրական էր թվում Մուրավյովին, որ նա ռազմական խորհրդում ոչ մի առարկություն չընդունեց:

Մուրավյովին առաջարկվեց հետաձգել գրոհը, Կարսի թուրքական կայազորին մի քանի շաբաթ էլ տանջել սովով: Մուրավյովը մերժեց նաև գրոհի այլ ուղի ընտրելու առաջարկությունը:

- Ձվերը հավերին չեն սովորեցնում, - ասաց նա և հայտարարեց, - հարձակման վճիռը վերջնական է:

Հարձակման նախօրյակին Մուրավյովը մեկ այլ անուղղելի սխալ գործեց: Նա հրամայեց Լորիս-Մելիքովի հրամանատարությամբ գործող անկանոն զորամասերին դուրս հանել շրջափակումն իրականացնող հիմնական ճամբարից և տեղափոխել հարձակման հեռավոր թև՝ Մաղարաջիկ գյուղի մատույցներ: Փաստորեն Լորիս-Մելիքովն իր հերոսներով զրկվեց Կարսի գրոհին մասնակցելու հնարավորությունից:

«Ահա, Միխայիլ Տարիելովիչը, մեզ կկերակրի ու կտաքացնի...»

Մուրավովի ձեռնարկած գրոհը, որը սկսվեց 1855 թ. սեպտեմբերի 17-ին, արշալույսից առաջ, հաջողություն չբերեց: Թուրքերը կատաղի պաշտպանվում էին: Ռուսների գրոհը կասեցվեց: Սկսվեց իրարանցում: Դրությունը փրկելու համար Մուրավյովը ուղարկեց օգնական ուժեր գեներալ

Մայդելի հրամանատարությամբ: Սակայն գեներալը ծանր վիրավորվեց, նրա զորամասը ցրիվ եկավ: Վիրավորվել էր նաև գեներալ Կովալևսկին:

Լորիս-Մելիքովը գտնվելով գեներալ Նիրոդի զորասյան կազմում, սպասում էր, թե երբ իր քաջերով կմտնի մարտի մեջ: Նա գտնում էր, որ եթե հարվածեն հարավից, ապա կհասնեն հաջողության:

Սակայն Մուրավյովը հավատարիմ էր իր համառ բնավորությանը և ուզում էր ապացուցել, որ իր ընտրած տակտիկան ճիշտ է: Բայց սեպտեմբերի 17-ի երեկոյան պարզ դարձավ, որ իսկապես ընտրվել էր գրոհի սխալ տակտիկա:

Ուշ երեկոյան Մուրավյովը հիշեց Լորիս-Մելիքովի գոյությունը և նրան կանչել տվեց իր մոտ: Մուրավյովի զորակայանում հավաքվել էր ռազմական խորհուրդ: Տիրում էր մռայլ լռություն: Դժվար էր ճաշակել անհաջողության դառնությունը:

- Ասացեք գնդապետ, - դիմեց Մուրավյովը ներս մտած Լորիս-Մելիքովին, -մենք ունե՞նք հնարավորություն գնել վառելիք և կեր ձիերի համար, որպեսզի երկու ամիս դիմանանք:

Լորիս-Մելիքովը տվեց դրական պատասխան և բացատրեց, թե ինչ միջոցներով նա կարող է հայթայթել փայտ, խոտ և դարման:

Ռազմական խորհրդի անդամները հետաքրքրվեցին, իսկ ո՞վ և ինչպե՞ս պետք է կերակրի զորքերին, երբ գլխավոր հրամանատարը հայտնեց իր որոշումը՝ «Ուժեղացնել Կարսի շրջափակումը, կարգել լրացուցիչ պահակակետեր»:

Մուրավյովը քիչ լռեց, հետո հայացքն ուղղելով Լորիս-Մելիքովի կողմն, ասաց՝

- Ահա, Միխայիլ Տարիելովիչը, նա մեզ կկերակրի և կտաքացնի...

Ռազմական խորհրդի անդամները բուռն հավանություն տվեցին, համոզված լինելով, որ եթե գնդապետ Լորիս-Մելիքովը ստանձնում է ինչ որ բան, ապա անպայման կատարում է: Վերջապես գլխավոր հրամանատարն էլ էր համոզվում, որ Կովկասյան բանակում անհնար է առանց Լորիս-Մելիքովի յոլա գնալ: Նա արդեն Լորիս-Մելիքովին համարում էր ամենավստահելի մարդը, որի միջոցով կարելի է ամեն ինչի հասնել:

Այս պահից սկսած, մինչև իր կյանքի վերջը Մուրավյովը Լորիս-Մելիքովի հետ պահպանեց անչափ ջերմ ու մտերիմ հարաբերություններ, ուրախանալով նրա հաջողություններով...

«Վաղիկարս»

Մուրավովի հրամանով ավելի ուժեղացվեց Կարսի շրջափակումը: Զորամասերը աստիճանաբար կենտրոնացվեցին ամրություններին մոտ տարածքի վրա: Զինվորներն արագորեն կառուցեցին տաք գետնատներ

և ծածկի տակ ախոռներ՝ ձիերի համար: Ռուսների պատրաստած ճամբարը նմանվում էր քաղաքի, որին տրվել էր «Վլադիկարս» անվանումը:

Սովը, սկսված ժանտախտը, Օմար փաշայի ուշանալը մի կողմից, մյուս կողմից էլ՝ ռուսների կառուցած «Վլադիկարսը» քայքայեցին Կարսի ամրոցը պաշտպանող անգլո-թուրքական հրամանատարության բարոյական ոգին:

Ռուսական հրետանին մշտապես գնդակոծում էր քաղաքը, նրա կայազորին անընդհատ պահելով տագնապի մեջ, որն առանձնապես ուժեղանում էր գիշերային ժամերին:

Հոկտեմբերի սկզբից, մութն ընկնելու պես, Լորիս-Մելիքովը Դանիել Հարությունյանի գլխավորությամբ Կարսի պարիսպների մոտ էր ուղարկում մի քանի որսորդի՝ հոթիռային հաստոցներով: Նրանք գիշերային լռության մեջ կրակում էին հոթիռները և արագորեն տեղափոխվում այլ հատված: Եվ այդպես շարունակ, ամբողջ գիշերվա ընթացքում: Արդյունքում հակառակորդի ճամբարում սկսվում էր անհաղթահարելի խուճապ: Այդ խուճապն ավելի ուժեղացավ, երբ Լորիս-Մելիքովի գործակալները Կարսում տարածեցին Օմար փաշայի զորքի ջախջախման լուրը:

Կարսի կայազորի սննդամթերքը սպառվեց: Կայազորի հրամանատարությունը 1855 թ. նոյեմբերի 12-ին առաջարկեց բանակցել ամրոցը հանձնելու պայմանների մասին: Թուրքական հրամանատարությունը դրեց երկու պայման. առաջին՝ թույլ տալ ավագ սպաներին գերության մեջ սուր կրել: Երկրորդ՝ թոյլ տալ ամրոցից հեռանալու բանակում ծառայող լեհացի ու հունգարացի ապստամբներին, որոնք Ռուսաստանում են-թակա էին դատական հետապնդման:

Փոխարքա Մուրավյովը ընդունեց թուրքական կողմի պայմանները:

1855 թ. նոյեմբերի 16-ին, ցերեկվա ժամը 2-ին ամրոցի դարպասներից դուրս եկավ զառամյալ Վազիֆ-Մուհամեդ փաշան անգլիական գեներալ Վիլյամսի և գնդապետ Լեկի ուղեկցությամբ: Գերի հանձնվեց 672 սպա և 8000 զինվոր: Ռուսները ամրոցում ձեռք բերեցին 136 թնդանոթ և 328 տոննա վառոդ:

Նույն օրը, երեկոյան Կովկասի փոխարքա գլխավոր հրամանատար Մուրավյովը հատուկ հրամանով շնորհավորելով ձեռք բերած հաղթանակը, նշում էր. «Որպես ցարական փոխարքա շնորհակալ եմ ձեզանից: Մեր արյամբ ու աշխատանքով թագավոր կայսրի ոտքերի տակ է փռվել Փոքր Ասիայի ամրությունը: Ռուսական դրոշակը ծածանվում է Կարսի պարիսպների վրա: Փոշու նման անհայտացավ 30 հազարանոց անատոլիական բանակը: Գերի է հանձնվել գլխավոր հրամանատարը իր բոլոր փաշաներով, սպաներով, իր շտաբով, պաշտպանությունը ղեկավարող անգլիական գեներալով: Հազարավոր թուրք գերիներ ուղարկվում են իրենց հայրենիք՝ մերոնց սխրանքները վկայելու համար: Դեռևս հաշված չեն

Կարսում մնացած ու մեր ձեռքն անցած զենքի և գույքի մեծ մասը: Բացի կամպանիայի ընթացքում ձեր գրաված թնդանոթներից ու դրոշակներից, էլի 130 թնդանոթ կհարստացնեն մեր զինանոցը: Կրկին շնորհակալ եմ ձեզ նաև անձամբ իմ անունից: Ձեզ եմ պարտական ցարի սիրտը ուրախացնելու երջանկությամբ: Դուք ներկա տարում ավարտեցիք այն, ինչը անում էինք անցած երկու տարիներին...»:

«Դասվով կրեա ու սիրով վայելեա...»

Կարսի անկումը ռուսական զորքերի առջև բացեց Էրզրումի ճանապարհը: Բայց վրա հասած ձմեռն արգելակեց հարձակումը: Մուրավյովը Կարսում թողեց հետևակ բրիգադ, Արդահանում՝ կազակային երեք հարյուրակ, իսկ մնացած զորքերը տեղափոխեց ձմեռային բնակավայրեր:

Հաշվի առնելով Լորիս-Մելիքովի բացառիկ ծառայությունները, Մուրավյովը հատուկ հրամանով նրան նշանակեց Կարսի պարետ և տվեց երկուշաբաթյա արձակուրդ: Միքայելը երկու տարի առաջ, նշանվելուց անմիջապես հետո մեկնել էր Կովկասյան ռազմաճակատ: Եվ հիմա երջանիկ հնարավորություն էր ստեղծվել վերադառնալ տուն:

Հարազատները ուրախանում էին ռազմաճակատից ստացված լուրերի համար՝ Միկոն կենդանի է, Միկոն կռվում է, Միկոն աչքի է ընկնում հերոսությամբ: Ուրախությունն անսահման էր դառնում, երբ լուր էր հասնում, որ Միկոն փրկել է հայերին, նրանց թալանված գույքը ետ բերել, օգնել է թուրքերի կողմից ավերված տները վերականգնելուն:

Լորիս-Մելիքովի որսորդները միայն հետախույզ ու կռվող չէին: Նրանց մեջ կային հմուտ ձեռքեր ունեցողներ, որոնցից Միքայելը ստեղծել էր շինարարական խմբեր: Այդ մարդիկ մեծ սիրով ու պատասխանատվությամբ էին վերականգնում իրենց հայրենակիցների ավերված տները: Ամեն մի վերականգնված տուն Միքայելը անձամբ էր ստուգում և միշտ գոհ էր մնում իր մարդկանց աշխատանքից...

Նունեն չէր կարող հեռու մնալ իր սիրելի նշանածին հուզող այնքան շատ կարևոր գործերից՝ հայրենակիցներին օգնելուց: Թիֆլիսում ստեղծված հոսպիտալ էին բերվում կովկասյան ռազմաճակատում ծանր վիրավորված զինվորներին ու սպաներին: Առաջիններից մեկը Նունեն եղավ, որ դարձավ այդ հոսպիտալի գթության քույր: Հետո նրա օրինակին հետևեցին ուրիշները: Բայց հենց առաջին օրը ծանր վիրավորների տնքոցից, վերքերից տանջվող մարդկանց աղերսական հայացքներից անչափ ազդված Նունեն կարծում էր, որ այլևս չի դիմանա և ուժ չի ունենա հոսպիտալ վերադառնալու համար:

Նունեն այդ մասին պատմեց հորեղբայր Մովսեսին, ասելով, թե ուժ չունի, չի կարող դիմանալ այդ ամենին: Ահավոր տանջանք է՝ նայել մեռ-

նողի օգնություն հայցող աչքերին ու ոչինչ չկարողանալ անել: Իսկապես, անփորձ, մահ ու վիշտ չտեսած երիտասարդ աղջկա համար ծանր էր այդ ամենը տանել, հաշտվել, ընտելանալ:

- Աղջիկս, - սփոփելով Նունեին, ասաց Մովսես Արղությանը, - գիտեմ դժվար է, շատ է դժվար: Բայց կռվում գտնվող նշանածդ ինչ կմտածի, եթե իմանա, որ դու կամքից այդքան թուլացել ես: Գուցե մի տեղ էլ, մի անգամ էլ նա օգնության կարիք կզգա, պատկերացնում ես, ի՞նչ կլինի, եթե մնա անխնամ...

Արղությանի վերջին խոսքերը խոր ազդեցություն թողեցին: Նունեն փոխվեց մի անգամից: Օրեր շարունակ հոսպիտալից դուրս չէր գալիս: Վիրավոր զինվորներն անչափ հուզվում էին, որ արդեն պատերազմի դաշտում իր քաջությամբ անուն հանած գնդապետ Լորիս-Մելիքովի նշանածի ձեռքից ջուր են խմում, որ նա էր փոխում վիրակապը, ասում սփոփիչ խոսքեր...

Վերջապես եկավ երկար սպասված պահը: Հայտնի դարձավ, որ 1855 թ. նոյեմբերի 20-ին Թիֆլիս է վերադառնում Լորիս-Մելիքովը: Քաղաքը հերոսին դիմավորեց մեծ շուքով: Միքայելին դիմավորողներից առաջինը Մովսես Արղության-Երկայնաբազուկն էր, որ նրան մոտեցավ՝ Նունեի ձեռքը բռնած: Բազմության ուղեկցությամբ Միքայելը Նունեի և Արղությանի հետ կառքով դուրս եկավ Գոլովինսկի պողոտա: Այստեղ, փոխարքայի պալատի առջև նրան դիմավորեց գեներալ-լեյտենանտ Վասիլի Բեբութովը:

Հաջորդ օրը, 1855 թ. հոկտեմբերի 21-ին տեղի ունեցավ Միքայել Տարիելի Լորիս-Մելիքովի և Նունե Հովհաննեսի Արղության-Երկայնաբազուկի հարսանիքը: Հարսանիքի ժամանակ Միքայելի մայրը ոտքի կանգնեց: Տիրեց հանդիսավոր լռություն: Նա իր պարանոցից հանեց կախված արծաթե մեդալիոնը, բարձրացրեց գլխից վեր, բոլորին ցույց տվեց, մոտեցրեց շուրթերին, համբուրեց և ամրացնելով Նունեի պարանոցին, ասաց.

- Տես, աղջիկս, այս մեդալիոնը շատ հին պատմություն ունի: Դա Լորիս-Մելիքովների տոհմի թալիսմանն է: Միշտ հանձնել են ավագ որդու հարսնացուին: Այդպես, որդոց-որդի հասել է ինձ և հիմա մեդալիոնը կրելու քո հերթն է եկել: Պատվով կրես ու սիրով վայելես...

Միքայելն ամուսնացավ Մովսես Արղության եղբոր՝ Հովհաննեսի աղջկա՝ Նունեի հետ: Հովհաննես Արղությանը մեծ հեղինակություն էր վայելում, երկար տարիներ աշխատելով Ներսիսյան դպրոցում որպես ուսուցիչ և հոգաբարձական խորհրդի անդամ:

Այդ ամուսնությունը եղավ իդեալապես երջանիկ: Համեստ, հմայիչ Նունեն Լորիս-Մելիքովի համար ընտանեկան կյանքը դարձրեց այնպիսի հանգրվան, որտեղ նա արշավանքներից ու ծանր գործերից հետո միշտ վստահաբար գտնում էր հանգստություն: Այդ երջանիկ ամուսնությունից ծնվեց հինգ զավակ՝ երկու որդի և երեք դուստր...

Կարսի պարետը

Արձակուրդն ավարտելուց հետո Լորիս-Մելիքովը շտապեց Կարս, իր հետ տանելով Նունեին, Նինա Իվանովնային, ինչպես արդեն նրան կոչում էին Թիֆլիսում:

Միանգամից Լորիս-Մելիքովի գլխին թափվեցին բազմաթիվ հոգսեր ու խնդիրներ: Բոլորն էլ կարևոր, բոլորն էլ պահանջում հրատապ լուծում: Առաջին հերթին հարկավոր էր վերականգնել ավերված Կարսը: Քաղաքում անհրաժեշտ էր հաստատել կարգ ու կանոն, վերացնել թալանն ու ավազակությունը: Այս խնդիրները լուծելու համար Լորիս-Մելիքովը դիմեց խստագույն միջոցի: Նա նույնիսկ չխնայեց իր այն որսորդներին, որոնք արդեն խաղաղ պայմաններում թալանով ու գողությամբ էին զբաղվում:

Լորիս-Մելիքովն անչափ ուրախ էր, որ ազատագրվել էր պատմական Հայաստանի նշանավոր նահանգներից մեկը և իրեն է բախտ վիճակվել Կարսը շենացնել ու նրան կենդանություն տալ: Նա հաճախ էր Նունեի ներկայությամբ բարձրաձայն երազում, թե ինչ է պատրաստվում Կարսում անել, ինչ պետք է անի, որ վերջապես հայ բնակչությունը զգա ձեռք բերված ազատության արդյունքը:

Բայց Միքայելը միաժամանակ հասկանում էր, որ Կարս քաղաքն ու մարզը միատար չեն, այստեղ ապրում են մահմեդականներ և ինքը կոչված է վարել պետական քաղաքականություն: Այսինքն՝ նաև չանտեսել մահմեդականների շահերը: Ուստի, սրանից էլ ելնելով շրջահայաց Լորիս-Մելիքովը հայ բնակչության կարիքների լուծումը դրեց իր տեղակալ ռուս մայոր Պոպկոյի վրա, որի ձեռքով էլ արտոնություններ շնորհվեց հայ բնակչությանը:

1970-ական թվականների սկզբին տողերիս հեղինակին բախտ վիճակվեց հանդիպել արդեն պաշտոնաթող Անաստաս Միկոյանին, որը տասնամյակներ շարունակ եղել էր կոմկուսի քաղբյուրոյի անդամ, աշխատել էր ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ և վերջապես ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահության նախագահ:

Մեր զրույցը վերաբերում էր տարբեր ժամանակաշրջաններում Ռուսաստանում և Սովետական Միությունում իրենց ծառայությամբ ու զբաղեցրած դիրքով հայտնի հայազգի գործիչներին: Ա. Միկոյանը հիշեց, որ Հայաստանում ոմանք իրենից դժգոհ են Հայաստանին քիչ օգտակար լինելու համար:

- Իհարկե, այդ ընկերները սխալվում են, - ասաց Անաստաս Իվանովիչը, -ես վարվել եմ ճիշտ այնպես, ինչպես Լորիս-Մելիքովն իր ժամանակին: Ինչ որ Լորիս-Մելիքովն անում էր հայության համար, կատարում էր իր ռուս ընկերների ու պաշտոնակիցների միջոցով: Ղրիմի պատերազմից հետո Կարսի նահանգապետ եղած ժամանակ նա հենց այդպես էլ վար-

վում էր: Այդպես էր նա վարվում, թե 1877-1878 թթ.. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ և, թե այն ժամանակ, երբ նա Ռուսաստանում ցարից հետո երկրորդ դեմքն էր: Եզակի մի երևույթ 19-րդ դարի ընթացքում Ռուսաստանի պատմության մեջ, եթե չհաշվենք Արակչեևին: Արակչեևը դաժան, սահմանափակ գիտելիքների տեր ու ծայրահեղ հետադեմ պահպանողական էր, իսկ Լորիս-Մելիքովը, նույնպես լինելով միապետական, ուներ առաջադիմական հայացքներ, աչքի էր ընկնում ազնվությամբ, խոր գիտելիքներով և պետության կառավարման գործում կազմակերպչական հմուտ ձիրքով: Լորիս-Մելիքովն ամբողջովին նվիրված էր Ռուսաստանի ցարական գահին, բայց մինչև իր կյանքի վերջը էությամբ մնաց հայ, այդպես էլ չտեսնելով իր երազանքների իրականացումը...

Բայց վերադառնանք մեր պատմությանը: Մահմեդական բնակչության նկատմամբ Լորիս-Մելիքովը վերաբերում էր ուշադրությամբ ու նրբանկատորեն: Նա ծայրահեղ ուշադիր էր ազգամիջյան հարաբերություններին և խստորեն պատժում էր դրանց խախտողներին:

Լորիս-Մելիքովին հայտնի դարձավ, որ Կարսում մզկիթները փակվել են և չեն գործում: Նա անձամբ զբաղվեց և պարզեց պատճառը: Քաղաքի պաշարման ժամանակ անգլիական գեներալ Վիլյամսի հրամանով բոլոր մզկիթները վերածվել էին զինապահեստների: Մոլեռանդ հավատացյալները տարածել էին, որ այդ կերպ մզկիթները պղծվել են: Իսկ երբ Կարսը գրավեցին անհավատ ռուսները, ամբողջ փաշայության մեջ լուրեր տարածվեցին, թե անհավատների գրաված քաղաքում սրբապղծություն է կատարել մահմեդական ժամասածություն:

Մահմեդական բնակչության սովորույթներին լավ ծանոթ Լորիս-Մելիքովին հայտնի էր, թե այդպիսի քարոզները ինչի կարող են հասցնել և հրամայեց անմիջապես առավոտյան գլխավոր մզկիթ հավաքել Կարսի մեջլիսի ամբողջ կազմը: Ոչ ոք չգիտեր, թե ռուս գնդապետը ինչի համար է կանչել, այն էլ առավոտյան շուտ: Անմիջապես լուր տարածվեց, թե այդ անհավատ հայը պատրաստվում է ինչ որ չար դիտավորության:


Մինչ մզկիթում հավաքված մահմեդական պարագլուխները մոլաների հետ քչփչում էին, շշուկով խոսում իրենց սպասվող դժբախտության մասին, մզկիթ մտավ Լորիս-Մելիքովը զորահանդեսային համազգեստով, կրծքին՝ ստացած շքանշաններով: Նրա խոսքը, որով դիմեց ներկաներին, շատ կարճ էր.

- Մինչև կեսօր մեկ ու կես ժամ է մնացել: Դա ձեր քարոզի ժամանակն է: Եթե այսօր մոլաները բոլոր մզկիթներում չսկսեն կրոնական արարողությունն, ապա վաղը մեջլիսն ամբողջ կազմով հենց այստեղից կկախվի, - ասաց Լորիս-Մելիքովը, ցույց տալով մզկիթի կենտրոնում հաստ շղթայով կախված ջահը:

Ի՞նչ էին սպասում և ի՞նչ լսեցին մեջլիսի անդամները: Եվ ուղիղ կեսո-



Ա.Խ. Բենկենդորֆ



Մ.Ս. Վորոնցով



Ն.Ն. Մուրավյով-Կարսկի



Ա.Ի. Բարյատինսկի



Ն.Ն. Օբրուչև



Ֆ.Է. Շտոկովիչ

րին Կարսի բոլոր միևարեթներից մոլաները հավատացյալներին հրավիրեցին նամազի: Միաժամանակ քաղաքում լուրեր տարածվեցին, թե իբր մարգարե Մուհամեդը գլխավոր մոլային երազի մեջ հայտնել է, որ մզկիթների վրայից հանվել է անեծքը:

Երբ մայոր Պոպկոն այս մասին հայտնեց Լորիս-Մելիքովին, նա ծիծաղելով պատասխանեց.

- Ոչինչ, դա կարևոր չէ, որ իմ պահանջը վերագրում են Մուհամեդին: Կարևորն այն է, որ քաղաքի կյանքը դնենք կանոնավոր հունի մեջ:

Իսկապես, երբ շրջակա բնակավայրերում տարածվեց, թե մարգարեն Կարսի մզկիթների վրայից հանել է անեծքը, դեպի քաղաք ծգվեցին բազմաթիվ բեռնավորված սայլեր: Մարդիկ Կարս էին գալիս առևտուր անելու: Կյանքը մտնում էր բնական հունի մեջ: Դրան նպաստեցին Լորիս-Մելիքովի մի շարք ձեռնարկումներ: Նա դատական իշխանությունը, ոստիկանությունը թողեց մահմեդականների մոտ: Հարկերի չափը չփոփոխեց: Հավաքված գումարով կարգավորվեց փոստային կապը, կարգի բերվեցին ճանապարհները, փոստային կայանները սկսեցին աշխատել անխափան:

Լորիս-Մելիքովի պահանջով մեջլիսը հետևում էր քաղաքում սանիտարական պատշաճ վիճակ ստեղծելուն: Վերացավ վարակիչ հիվանդությունների տարածման վտանգը:

1856 թ. մարտի 18-ին ավարտվեց Ղրիմի պատերազմը Փարիզում հաշտության պայմանագրի ստորագրմամբ: Ռուսաստանն իրեն պարտված ճանաչեց: Այդ պայմանագրի համաձայն Ասիայում Ռուսաստանի և Թուրքիայի սահմանները վերականգնվեցին այն տեսքով, ինչպիսին գոյություն ուներ պատերազմից առաջ: Ռուսական զորքերը պատրաստվեցին հեռանալ գրաված տարածքներից: Նրանք ինչքա~ն զոհեր էին տվել ու զրկանքներ կրել: Ամեն ինչ հավասարվեց ոչնչի: Մեծ ցավ էր հեռանալ Կարսի ամրոցից, որի գրավման համար հսկայական ջանքեր էին գործադրվել: Բայց տևականորեն կռվի մեջ եղած ռուս զինվորը ծգտում էր տուն վերադառնալ: Դա անհաղթահարելի զգացում էր:

Այդ օրերին Լորիս-Մելիքովի մոտ բերեցին կազակային ավագին սարսափելի հարբած վիճակում: Հազիվ զսպելով իր զայրույթը, գնդապետը հարցրեց.

- Ինչո՞ւ ես այդպես հարբել:

- Ձերդ ազնվություն, դա պատերազմն է իմ միջից դուրս գալիս:

Այո, զինվորը տուն վերադառնալու մեծ ցանկություն ուներ: Պատերազմը նրա մոտ անասելի զզվանք էր առաջացրել:

Հեռատես Լորիս-Մելիքովը պատրաստվելով հեռանալ Կարսից, չէր կարող չմտածել ապագայի մասին: Նա Կարսում թողեց մի քանի վստահելի մարդկանց, որոնց մեջ հայերից բացի, կային նաև մահմեդականներ: Նրանց միջոցով էլ նա ստեղծեց գործակալական ցանց, որն իր մասին իմաց տվեց ապագա պատերազմում:

- Ոչինչ, դեռ մենք կվերադառնանք: Մենք կավարտենք մեր կիսատ թողած գործը, -ասում էր Լորիս-Մելիքովը, հուսադրելով իր մարտական զինակիցներին:

Կարսի ամբողջ բնակչությունը, քրիստոնյա և մահմեդական, 1856 թ. հուլիսի 24-ին մեծ հուզմունքով ճանապարհեցին Լորիս-Մելիքովին, անհուն շնորհակալություն ու երախտագիտություն հայտնելով նրան մարդկային արդարադատ վերաբերմունքի համար, որ նա դրսևորել էր Կարսը կառավարելու ութ ամիսներին, 1855 թ. նոյեմբերի 21-ից սկսած:

Կարսի մահմեդական բնակչությունը, նահանգի մեջլիսը Կովկասի փոխարքային ուղարկեցին հետևյալ շնորհակալական ուղերձը. «Ռուս կառավարության կողմից Կարսի նահանգի կառավարիչ նշանակված գնդապետ Լորիս-Մելիքովն իր պաշտոնը վարելու առաջին օրից ամեն կերպ նպաստում էր բնակիչների կարիքներին ու պահանջներին, ոչ ոքի թույլ չէր տալիս նեղություն պատճառել և իրեն հասած ոչ մի խնդիր առանց գոհացումի չթողեց: Մեր ժողովրդական սովորությունների և շարիաթի կանոնների համաձայն նա գանգատներն ու վեճերը վճռելու համար հանձնում էր մեջլիսին՝ իր անձնական վերահսկողությամբ և կադիի ներկայությամբ: Այս պատճառով ամբողջ նահանգի երախտագիտությունը հայտնելով գնդապետ Լորիս-Մելիքովին նրա բարերար կառավարության համար, կազմեցինք այս ուղերձը մեր ընդհանուր ստորագրությամբ»:

Վերոհիշյալ ուղերձի մասին փոխարքա Մուրավյովը զեկուցագրով հայտնեց ցարին, ընդգծելով Լորիս-Մելիքովի եռանդուն գործունեությունն ու քաղաքական-դիվանագիտական ընդունակությունը: Լորիս-Մելիքովը արժանացավ գեներալ-մայորի աստիճանի, իր ծառայության 13-րդ տարում, ինչը, որ եզակի երևույթ էր:

Լորիս-Մելիքովի հարգանքն այնքան մեծ էր, որ Կարսի մահմեդականները խնդրանքով դիմեցին սուլթանին ռուս գնդապետին պարգևատրելու համար: Սուլթանը Լորիս-Մելիքովին պարգևատրեց Մեջլիսի 2-րդ աստիճանի շքանշանով: Սա եզակի երևույթ էր, երբ հաղթող կողմը պարգևատրում էր պարտվող կողմի զինվորական գործչին:

Լորիս-Մելիքովը չէր մոռանում իր հայրենակիցներին: Կարսից հեռանալուց առաջ նա հանդիպեց երևելի հայերին, նրանց հետ քննարկեց ստեղծված իրավիճակը և խոստացավ նրանց չմոռանալ: Նա հանդիպեց նաև Կարսի մահմեդականների մեջլիսի անդամներին և նրանց հորդորեց չոգևորվել ու չօգտվել ռուսական զորքերի հեռանալուց և հայ բնակչության հետ շարունակել հաշտ ու խաղաղ ապրել: Մեջլիսի անդամները խոստացան պահպանել Լորիս-Մելիքովի դրված կարգը, բայց սուլթանական իշխանությունն այլ մտադրություն ուներ...

Գեներալ-մայոր Լորիս-Մելիքովը

Պատերազմն ունի իր օրենքները: Եվ դրանց վարժված մարդկանց համար պրոբլեմ է խաղաղ պայմաններին հարմարվելը: Ղեկավարման այն մեթոդները, որոնք արդարացվում էին պատերազմի պայմաններում, խաղաղության մեջ չեն կարող օգտակար լինել:

Այդպես էլ եղավ փոխարքա Մուրավյովի հետ: Ընդհանուր առմամբ նա պատերազմում իրեն լավ դրսևորեց և ցարի կողմից ստացավ «Կարսկի» հավելյալ պատվավոր անվանումը: Վերադառնալով Թիֆլիս, Մուրավյով-Կարսկին սկսեց պատերազմի պայմաններին համապատասխան դաժանություններ կիրառել: Չինովնիկները սկսեցին դժգոհել, չկատարել փոխարքայի հրամանները: Մուրավյով-Կարսկու դեմ սկսեցին բանսարկություններ հյուսել: Թելի կծիկը գտնվում էր ցարին մոտ կանգնած իշխան Ալեքսանդր Իվանովիչ Բարյատինսկու ձեռքին, որն ի դեմս ստորության հակումներ ունեցող իշխան Սվյատոպոլկ-Միրսկու, ուներ հավատարիմ կամակատար:

Բարյատինսկու բանսարկությունները հասան նպատակին: Ալեքսանդր երկրորդը Նիկոլայ Նիկոլաևիչ Մուրավյով-Կարսկու փոխարեն Բարյատինսկուն նշանակեց փոխարքա:

Երբ 1856 թ. հուլիսի 28-ին Լորիս-Մելիքովը վերադարձավ Թիֆլիս, արդեն ամեն ինչ վճռվել էր: Մինչ այդ Մուրավյովը հասցրել էր Լորիս-Մելիքովին ներկայացնել գեներալ-մայորի աստիճանի, որի մասին ցարի հրամանը ստացվեց հենց այդ օրերին:

Հեռանալով փոխարքայի պաշտոնից, Ն. Մուրավյովը շարունակեց իր նամակագրությունը Լորիս-Մելիքովի հետ, դրանցում դրսևորելով իր հարգանքն ու համակրանքը ազնիվ գինակցի նկատմամբ: 1856 թ. սեպտեմբերի 3-ին Լորիս-Մելիքովին ուղարկած նամակում Մուրավյովը գրում էր. «Եթե դուք արշավանքի մասին որևէ գրառում ունեք, ապա խնդրում եմ ձեզ ուղարկել դրանք ինձ, ինչքան էլ դրանք լրիվ չլինեն: Ես հավաքում եմ մասնավոր տեղեկություններ Թուրքիայում մեր մղած ռազմական գործողությունների մասին, եթե այդ գրառումներն անբավարար էլ լինեն, միևնույնն է, ինձ կհիշեցնեն կարևոր դեպքերը: Իսկ եթե դուք գրառումներ չունեք, ապա խնդրում եմ գրել, ամեն ինչ պետք կգա ընդհանուր նկարագրության համար... Խնդրում եմ դա կատարել արագորեն»:

Մեկ այլ նամակում, 1856 թ. նոյեմբերի 5-ին Ն. Մուրավյովը Լորիս-Մելիքովին հայտնելով տեսողությունը կորցնելու վտանգի մասին, դարձյալ խնդրում էր արշավանքի վերաբերյալ կազմել համառոտ տեղեկություններ, որոնք կօգնեն իր հիշողության վերականգնմանը: Բացի դրանից, Մուրավյովը առաջարկում է մանրամասն նկարագրել Կարսը կառավարելու մասին, որը, ինչպես նշում էր նախկին փոխարքան, «ոչ ոք չի կարող ձեզնից լավ կատարել դա»:

1857 թ. փետրվարի 21-ին Ն. Մուրավյովը գրում էր, որ իր մոտ է գտնվում Սոլոմոն Արտեմովիչ Տեր-Ղուկասովը և շարունակում. «Ինչ էլ որ լինի, դուք ինձ համար մնում եք նույն Լորիսը, որին մշտապես սիրում եմ և հարգում քո ծառայությունը: Հաճախ եմ հիշում ձեզ ընտանիքիս ներկայությամբ անցյալի մասին պատմություններում, քանի որ 1855 թ. իրադարձությունների ժամանակ քիչ դեր չեք խաղացել և շատ բանով նպաստել եք հաջողության: Ձեր անխոչ աշխատանքը երբեք չի ջնջվի իմ հիշողությունից...»: 1857 թ. մայիսի 24-ին Ն. Մուրավյովը նամակով դարձյալ հորդորում էր Լորիս-Մելիքովին գրել Կարսը կառավարելու հետաքրքիր ժամանակաշրջանի մասին:

Լորիս-Մելիքովը նախկին փոխարքային ուղարկեց շատ փաստաթղթեր, բայց այդպես էլ անչափ զբաղվածության պատճառով հնարավորություն չունեցավ գրի առնել իր կողմից Կարսը կառավարելու «հետաքրքիր ժամանակաշրջանի» մասին:

Իշխան Ալեքսանդր Բարյատինսկին

1856 թ.նոյեմբերի 8-ին Կովկասի նոր փոխարքա իշխան Բարյատինսկին եկավ Թիֆլիս: Նրան ճանաչում էին բոլորը: Շատերին , այդ թվում նաև Լորիս-Մելիքովին նա գիտեր անձամբ և վկա էր նրա գործած սխրանքներին: Ավելին, որպես Վորոնցովի օրոք Կովկասյան բանակի շտաբի պետ, Լորիս-Մելիքովին ներկայացրել էր Աննա 2-րդ աստիճանի պարգևատրման:

Նոր փոխարքան սառնորեն շնորհավորեց գեներալի աստիճան ստացած Լորիս-Մելիքովին և ոչ մի խոսք չասած նրա հետագա ծառայության մասին: Բարյատինսկին հենց առաջին օրից դրսևորեց իր անբարյացակամությունը Լորիս-Մելիքովի հանդեպ, նրան համարելով նախկին փոխարքաներ Վորոնցովի և Մուրավյովի սիրելին:

Պատերազմից հետո Լորիս-Մելիքովը պաշտոնապես մտցվեց Կովկասյան բանակի կազմում, բայց առանց որևէ պաշտոնի: Փաստորեն մարտական գեներալը անգործության էր մատնվել: Լորիս-Մելիքովի հիշեցումներին փոխարքա Բարյատինսկին խուսափում էր ուղղակի պատասխանել:

Լորիս-Մելիքովի դեմ ծածուկ գործում էր իշխան Սվյատոպոլկ-Միրսկին, որը, ինչպես արդեն նշվել է, ոչ մի ստորության առջև չէր կանգնում իր նպատակին հասնելու համար: Նրա ջանքերով էլ Բարյատինսկուն հայտնի էր դարձել Մուրավյովի կարծիքը Լորիս-Մելիքովի մասին: Մուրավյովը Բեբութովին ուղարկած նամակում գրել էր. «Լորիս-Մելիքովը անփոխարինելի է, չգիտեմ, ինչ պետք է անենք առանց նրա»:

Սակայն, կարճ ժամանակ անց, Բարյատինսկին համոզվեց, որ Լորիս-Մելիքովը գործի մարդ է և սիրելի է դառնում իր անկաշառ բնավորությամբ, պարկեշտությամբ, պատասխանատվությամբ ու արտակարգ ազնվությամբ, հատկանիշներ, որ այն ժամանակվա Կովկասյան փոխարքայության մեջ մեծ ու փոքր չինովնիկների մոտ հազվադեպ էին հանդիպում:

Եվ փոխարքա Բարյատինսկին 1857 թ. հուլիսի 17-ին Ռուսաստանի նոր նշանակված ռազմական նախարար Ն. Սուխոզանետին ներկայացրեց առաջարկություն Լորիս-Մելիքովին բանակում պաշտոն տալու մասին: Նախարարը փոխարքայի բոլոր միջնորդությունները մերժեց: Բարյատինսկին, սակայն չէր նահանջում: 1857 թ. օգոստոսի 18-ին նա նորից դիմեց նախարարին, գրելով հետևյալը. «Չեզանից չեմ թաքցնում, որ ինձ վշտացնում են ձեր մերժումները իմ մի քանի ներկայացումներին, որոնք, հավատացեք, մշտապես ունեն մի դրդում՝ օգուտ բերել երկրամասին ու ծառայությանը: Իմիջայլոց, դուք դժվարացել եք միջնորդել կորպուսում հատուկ հանձնարարությունների գծով գեներալ-մայոր Լորիս-Մելիքովի և գնդապետ իշխան Օրբելիանիի նշանակմանը այն պատճառով, որ նրանք ավելին կլինեն կոմպլեկտավորումից: Բայց եթե այդ պատճառը բավարար էր, որպեսզի ծառայությունից դուրս թողնվեին լավ ծառայած ու ծառայության համար դեռ օգտակար սպաները, ապա բոլոր դեպքերում այդպիսի ճակատագիրը չպետք է ընկնի գեներալ-մայոր Լորիս-Մելիքովի վրա, որը իմ կողմից ներկայացվել է մյուսներից ավելի վաղ... Գեներալ-մայոր Լորիս-Մելիքովի վերաբերյալ ծառայական պարտքս եմ համարում նորից կրկնել նրա մասին իմ միջնորդությունը, որքան էլ, որ ինձ համար տհաճ լինի խնդրելը մերժում ստանալուց հետո: Բոլոր դեպքերում նրան կարելի է տեղավորել կորպուսի կազմում քաղաքական գծով»:

Բարյատինսկին չբավարարվեց դրանով: Լինելով Ալեքսանդր Երկրորդ ցարի մտերիմը, նա հաճախ ուղղակի դիմում էր նրան, երբ ռազմական նախարարությունը անտեսում էր իր միջնորդությունը: Այս անգամ էլ նա դրսևորեց վճռականություն և ուղղակի միջնորդությամբ դիմեց ցարին: Այդ միջնորդությունը կարևոր նշանակություն ունեցավ Լորիս-Մելիքովի հետագա ծառայության համար:

Վերջապես, 1858 թ. ապրիլի 30-ին Լորիս-Մելիքովը ստացավ նշանակում՝ դարձավ Լեզգինյան գծի աջ թևի պետ: Սա բավական պատասխանատու պաշտոն էր, որը զբաղեցնողը պետք է շարունակեր պատերազմը Շամիլի դեմ:

Մի քանի օր շարունակ Լորիս-Մելիքովը Կովկասյան բանակի շտաբի պետ Միլյուտինի հետ զբաղվեց գործողությունների օպերատիվ պլանի մշակմամբ: Այս երկու տաղանդավոր գեներալները, որոնց միջև հաստատվել էր ջերմ ընկերական ու փոխարդած վստահության մթնոլորտ, մշակեցին օպերատիվ պլան նաև մյուս ուղղությունների համար, գտնե-

լով, որ Շամիլի դեմ առանձին ուղղություններով պայքարն արդյունք չի տա և առաջ քաշեցին միասնական գործողությունների օպերատիվ պլան:

Սակայն Բարյատինսկին փոխեց իր մտադրությունը, 1858 թ. մայիսի 13-ին նա շտապ կերպով իր մոտ հրավիրեց Լորիս-Մելիքովին և հայտնեց, որ Լեզգինյան գծի փոխարեն նա նշանակվում է Աբխազիայում տեղավորված զորքերի պետի պաշտոնակատար: Փոխարքան հրամայեց անմիջապես մեկնել Սուխումի:

Իշխան Շերվաշիձե

Աբխազիան, որտեղ մեծ էր Թուրքիայի ազդեցությունը, անհանգիստ երկրամաս էր: Կովկասի փոխարքաներին չէր հաջողվել սանձել Աբխազիայի տիրակալ իշխան Միխայիլ Շերվաշիձեին, որին ցարը շնորհել էր գեներալ-թիկնապահի, գեներալ-լեյտենանտի աստիճան: Այս Շերվաշիձեն էր, որ Ղրիմի պատերազմի ժամանակ դավաճանեց ու անցավ թուրքական բանակի հրամանատար Օմար փաշայի կողմը: Պատերազմից հետո Շերվաշիձեն ճարպկորեն կարողացել էր խուսափել պատասխանատվությունից: Ավելին, նրան հաջողվել էր ցույց տալ, թե Օմար փաշայի զորքերի դեմ պարտիզանական պայքարի կազմակերպիչն ինքն է եղել:

Աբխազիայում իշխանը կառավարում էր խախտելով բարոյականության ամենատարրական կանոնները: Նա լիակատար ազատություն էր տվել թուրքական մաքսանենգներին և նրանցից մեծ շահույթ ստանում: Շերվաշիձեն նաև գաղտնի օգնում էր Շամիլին:

Շերվաշիձեն Աբխազիայում տեղավորված ռուսական զորքերի պետերին հաշվի չէր առնում, նրանց բոլորին դարձնելով իր կամակատարը: Նա նույն կերպ պատրաստվում էր վարվել նոր նշանակված պետի հետ: Առաջին հանդիպման ժամանակ իշխանը Լորիս-Մելիքովին ուղղակի հասկացրեց, որ լինելով վրացական հայտնի իշխանական տոհմի ներկայացուցիչ, երբեք որևէ մեկի չի ենթարկվել ու չի պատրաստվում դա անել այժմ, չթաքցնելով իր արհամարանքը նրա հայկական ծագման նկատմամբ:

- Եվ եթե դու, հայի տղա, - վերջացնելով իր խոսքն առանձնապես շեշտված արտասանելով «հայի տղա» բառերը, ասաց, - ուզում ես պահպանել քո պաշտոնն, ապա պետք է ինձ հետ, Աբխազիայի իշխանիս հետ բարեկամություն անես

- Չեմ կասկածում իշխան, - հանգիստ պատասխանեց Լորիս-Մելիքովը, -որ բարեկամությունն ամուր կլինի և հույս ունեմ, որ Աբխազիայի հողում ռուսական կայսրության օրենքները հարգի կլինեն և դրանց իրականացման գործում առաջացած ցանկացած դժվարության պահին պատրաստ եմ ձեզ օգնել:

Իշխանը ինչ էր ասում և ինչպիսի պատասխան ստացավ: Սրանից նա

սկսեց զգուշանալ և աստիճանաբար համոզվում էր, որ այս «հայի տղան» բոլորովին նման չէ նախկին պետերին:

Լորիս-Մելիքովն արագորեն անցավ գործի: Նա նախ հանդիպեց իր մարդկանց, որոնց հետ կապ էր ստեղծել դեռևս Վորոնցովի հատուկ հանձնակատար աշխատելիս: Եկան նաև անցած պատերազմում Լորիս-Մելիքովի մոտ որպես հետախույզ-որսորդ ծառայած աբխազները: Իր մարդկանց միջոցով Լորիս-Մելիքովին հաջողվեց ժամանակին իմանալ Աբխազիայում կատարվող ամեն ինչ:

Իր մարդկանց միջոցով էլ Լորիս-Մելիքովին հայտնի դարձավ, որ իշխան Շերվաշիձեի լկտի վարքագծից շատ դժգոհ է տեղի բնակչությունը, բայց նրանից ազատվելու ելք չէին գտնում: Լորիս-Մելիքովը իր վարմունքով կարողացավ շահել տեղական իշխանների վստահությունը, որոնք համարձակություն ձեռք բերեցին բողոքել Շերվաշիձեի բռնությունների դեմ: Նրանց բոլորին Լորիս-Մելիքովը վերցրեց իր պաշտպանության տակ: Լորիս-Մելիքովը վերցրեց այն տուրքը, որ աբխազները վճարում էին Շերվաշիձեին: Այդ տուրքից հավաքվող գումարը Լորիս-Մելիքովը բանակի գանձարկղի միջոցով ուղարկում էր ռուսական գանձատուն: Այդ գումարներով Լորիս-Մելիքովը սկսեց Սուխումի ճանապարհի ու ամրությունների կառուցումը: Այս ամենի շնորհիվ Շերվաշիձեն զրկվեց եկամտի կարևոր աղբյուրից:

Բոլորն էին տեսնում, որ նոր պետը չի հանդիպում իշխանին, ինչպես նախորդները: Ավելին, նոր պետը գործում է առանց իշխանի կամքը հարցնելու: Զգում էին, որ գործ ունեն ուժեղ կամքի տեր մարդու հետ և ավելի հարգանքով էին լցվում Լորիս-Մելիքովի նկատմամբ: Փոխվել էր ամեն ինչ: Իշխան Շերվաշիձեն առիթ էր փնթրում հանդիպել Լորիս-Մելիքովին, բայց դա նրան չէր հաջողվում: Պարզապես այդպես էր կամենում Լորիս-Մելիքովը:

Վերջապես Շերվաշիձեին հաջողվեց Լորիս-Մելիքովի հետ հանդիպելու առիթը գտնել: Երբ Լորիս-Մելիքովը լեռներից վերադարձել էր Սուխումի, Շերվաշիձեն Աստվածածնի տոնի առիթով կազմակերպեց մեծ ընդունելություն: Լորիս-Մելիքովը չմերժեց հրավերը: Պահը որսալով, իշխանը մի կողմ հրավիրեց Լորիս-Մելիքովին առանձին խոսակցության համար:

- Մեր միջև ի՞նչ առանձին խոսակցություն կարող է լինել, - ժպտալով ասաց Լորիս-Մելիքովը, - մեր հոգսերը ընդհանուր են և բաց բոլորի համար:

Այնուամենայնիվ, իշխանը բացեց այդ առանձին խոսակցությունը: Նա առաջարկում էր վերականգնել տուրքերի ու հարկերի գանձման նախկին կարգը, որովհետև այժմ դրանով զբաղվում են խարդախ մարդիկ և յուրացնում հավաքված գումարը:

- Տվեք ինձ այդ գործը, - պահանջեց իշխանը:

- Ճիշտ է, - ասաց Լորիս-Մելիքովը, - այդ գումարի հավաքումը ինձ համար բեռ է, բայց մի մոռացեք իշխան, որ ձեր չինովնիկների մեջ քչերին

կարելի է վստահել, իսկ մեր գործում ավելի շատ կարգ ու կանոն կա:

Մերժված իշխանը գլուխը կորցրել էր ու ելք էր որոնում: Իսկ Լորիս-Մելիքովը հավաքված այդ գումարով հասցրեց կառուցել Ցեբելդինի ամրությունը Կոդորի գետի ափին: Նա սկսեց նաև ռազմա-սուխումյան ճանապարհի շինարարությունը: Սակայն դրան դեմ էին ոմանք, որոնց ցանկության արտահայտիչը եղավ աջ թևի հրամանատար գեներալ-լետենատ Ֆիլիպսոնը: Հակառակորդները գտնում էին, որ վերջիվերջո անհնար է Աբխազիան պահել Ռուսաստանի ձեռքում, ուստի և կարիք չկա այդքան գումար ծախսել մի բանի վրա, որը Ռուսաստանին չի պատկանելու: Սակայն Լորիս-Մելիքովը հակառակ կարծիքի էր: Նա գտնում էր, որ աբխազները հավատով են լցված ռուսական գահի նկատմամբ և ձգտում են մնալ Ռուսաստանի կազմում: իր համոզմունքը հիմնավորելու համար Լորիս-Մելիքովը բերեց հավաստի փաստեր և կարողացավ իշխան Բարյատինսկուն համոզել այդ ճանապարհի կարևորությունը:

Լորիս-Մելիքովը հասավ իր նպատակին: Շարունակվեց ռազմա-սուխումյան ճանապարհի շինարարությունը:

«Ես չեմ ուզում գործը հասցնել Թիֆլիս...»

Իշխան Շերվաշիձեի եկամտի կարևոր աղբյուր էր նաև թուրքական մաքսանենգությունը: Իշխանը թուրքերից ստանում էր վառոդ, արծիճ և զենք ու գաղտնի վաճառում ապստամբ լեռնականներին:

Թուրքական մաքսանենգությանը վերջ տալու նպատակով Լորիս-Մելիքովը որոշեց անձամբ զբաղվել: Նա իր վրա վերցրեց ծովային օպերացիայի ղեկավորումը: Գերի վերցվեցին մի քանի թուրքական նավաստի, որոնց անձամբ հարցաքննեց Լորիս-Մելիքովը: Սկսվեց բազմակողմանի հետաքննություն: Մաքսանենգության բոլոր ուղիները տանում էին դեպի Աբխազիայի տիրակալը: Ի վերջո, Լորիս-Մելիքովի համար պարզ դարձավ այն, ինչի մասին կռահում էր Սուխումի գալու առաջին օրից:

Լորիս-Մելիքովն իր մոտ հրավիրեց իշխանին: Նրան ցույց տալով թուրք նավաստիների հարցաքննության փաստաթղթերը, Լորիս-Մելիքովը մեկ առ մեկ հիշեցրեց առևտրականների, վերավաճառողների և իշխանի չինովնիկների անունները, որոնք կապված են եղել թուրքական մաքսանենգերի հետ:

Իշխան Շերվաշիձեն ծանոթանալով այդ ամենին, կորցրեց խոսելու ունակությունը:

- Ես, - ասաց Լորիս-Մելիքովը, - չեմ ուզում գործը դատարան հասցնել և չեմ էլ ուզում գործը Թիֆլիս հասցնել: Բայց դուք պետք է հասկանաք, որ այլևս չեմ հանդուրժի թուրք մաքսանենգների մուտքը մեր տարածք և ձեզ էլ խորհուրդ կտամ կասեցնել մաքսանենգության ամեն մի փորձ:

Լորիս-Մելիքովը մի պահ լռեց, հնարավորություն տվեց մեծամտությունը կորցրած իշխանին ուշքի գալ և շարունակեց.

- Եթե ուզում եք ձեր պաշտոնը պահել և տհաճություններ չունենալ, ապա ինձ հետ պահպանեք բարեկամական հարաբերություններ:

Լորիս-Մելիքովը հակառակ իր կամքին, համաձայնվել էր փոխարքա Բարյատինսկու առաջարկին: Փոխարքայի կամքն էր սանձել իշխան Շերվաշիձեին, բայց գործը դատարան չհասցնել:

-Այլապես, - ասել էր փոխարքան, - աղմուկը կհասնի Պետերբուրգ և արի այնտեղ ապացուցիր, որ այդքան տարի անտեղյակ են եղել Շերվաշիձեի խաբեբայական արարքներից...

Լորիս-Մելիքովը խաղաղությամբ հնազանդեցնում է ուբիխներին

Լորիս-Մելիքովը հասցրեց լինել Աբխազիայի համարյա բոլոր գյուղերում: Տիրապետելով Հյուսիսային Կովկասի մի շարք ժողովուրդների լեզվին, նա հեշտությամբ էր շփվում տեղացիների հետ:

Ամենուրեք հարգանքով էին ընդունում պատերազմում փառաբանված գեներալին: Աբխազիայում նույնպես պահպանվում էր հերոս ու քաջ մարդուն մեծարելու, նրան ակնածանքով վերաբերելու սովորույթը: Այդ քաջ մարդը, գեներալ Լորիս-Մելիքովն առավել հարգանք ձեռք բերեց արդարադատ լինելու համար: Իսկ գեներալն էլ իր հերթին հարգանքով էր վերաբերում տեղաբնակների սովորույթներին: Դա նպաստեց նրա անվիճելի հեղինակության աճին:

Տեղաբնակներից ուբիխ անունով լեռնականները ոչ մի հեղինակություն ու իշխանություն չէին ընդունում: Նրանք ռազմաշունչ էին, սովոր կռվի: Ուբիխների բնակավայրերին մոտ տարածության վրա Լորիս-Մելիքովը հարմար գտավ կառուցել Ցեբելդինի ամրությունը, որը հնարավորություն կտար հսկել Աբխազիայի սևծովյան ափը, պայքարել թուրք մաքսանենգների դեմ:

Հարկավոր էր Ցեբելդինի ամրության շինարարությունը պաշտպանել լեռնականների հարձակումներից: Դա հնարավոր կլիներ միայն ուբիխներին հնազանդեցնելով: Ուբիխները հսկում էին Սև ծովի ամբողջ արևելյան ափը և անարգել զբաղվում թուրքերի հետ մաքսանենգությամբ: 1858 թ. հուլիսին Լորիս-Մելիքովը հրամայեց ձերբակալել ուբիխների ավագանու այն անդամներին, որոնք զբաղվում էին Թուրքիայից վառոդի մաքսանենգությամբ: Լորիս-Մելիքովը նրանց մի քանի ամիս պահեց բանտարկված, հետո նրանց հետ առանձին-առանձին զրուցեց ու ազատ արձակեց: Ձերբակալվածների մոտ մեծ տպավորություն էր գործել Լորիս-Մելիքովի բարեկամական զրույցը:

Ավագանու անդամներն ընդունեցին Լորիս-Մելիքովի առաջարկը՝

Գագրայում հրավիրել ուբիխների և նրանց հարևան ջիղեթների բոլոր բնակավայրերի ավագանու հետ հանդիպում, իրենց հուզող բոլոր հարցերը լուծելու համար:

Գագրա եկան բոլորը զինված ու թիկնապահներով, պատրաստ ամեն մի անակնկալի: Իսկ Լորիս-Մելիքովը հավաքին ներկայացավ առանց թիկնապահների: Գեներալի այս կերպ երևալն անսպասելի էր: Տեղացիները չէին հիշում, որ մինչ այդ բանակի հրամանատարներից որևէ մեկը այդպես համարձակ, առանց զենքի ու թիկնապահների երևար տեղաբնակների մեջ: Ամոթահար լեռնեցի ավագները չգիտեին, թե իրենց զենքերն ուր պահեն, միայն կարողացան իրենց զինված թիկնապահներին հեռացնել հավաքից:

Լորիս-Մելիքովը չնկատելու տվեց սկսված իրարանցումը և իսկույն անցավ գործի: Նա առաջարկեց հետևյալը.

1. Ստեղծել ժողովրդական դատարաններ տեղացիների բոլոր հարցերը քննելու համար:

2. Դատարաններին կից ձևավորել 25 եսաուլներից բաղկացած միլիցիա:

3. Դատավորներն ու եսաուլները ռոճիկ կստանան ռուսական կառավարությունից:

4. Կհեշտացվի Թուրքիա գնացողների անձնագրերի ձևակերպումը:

5. Պայմաններ կստեղծվեն թուրքերի հետ օրինական ճանապարհով առևտուրը հեշտացնելու համար:

- Բայց, - ասաց վերջում Լորիս-Մելիքովը, - եթե որևէ մեկին բռնենք մաքսանենգություն անելիս, պատժելու ենք խստորեն:

Լորիս-Մելիքովն իր տված բոլոր խոստումները կատարեց: Տեղաբնակները մնացին գոհ: Նրանք զգացին, որ կա իշխանություն և այդ իշխանությունն իրականացնողը արդարադատ է:

Փոխարքա Բարյատինսկին ուշադրությամբ հետևում էր Լորիս-Մելիքովի գործողություններին և անչափ գոհ էր, որ աբխազական գլխացավից ազատվել է:

Լորիս-Մելիքովը հաջողությամբ ավարտեց Ցեբելդինի ամրության կառուցումը, որի համար էլ Բարյատինսկու ներկայացմամբ արժանացավ «Ստանիսլավ» շքանշանի առաջին աստիճանին:

Հայկական եկեղեցին սանում է մոմ վաճառելու իրավունք

Առաջին անգամ Լորիս-Մելիքովը Ներսես Աշտարակեցուն հանդիպել է 1847 թ., երբ Կովկաս վերադառնալով նշանակվել էր փոխարքա Վորոնցովի մոտ կարևոր գործերով հանձնակատար:

Մի անգամ, երբ փոխարքա Վորոնցովը այցելեց Թիֆլիսում գտնվող

Ներսես Աշտարակեցուն, նրան ուղեկցողների մեջ էր նաև երիտասարդ Միքայելը: Փոխարքան կաթողիկոսին ներկայացրեց երիտասարդ սպային:

Ներսես Աշտարակեցին հետաքրքրվեց երիտասարդ սպայի ընտանիքով: Ուրախացավ, որ իր առջև կանգնած է Թիֆլիսում մեծ հեղինակություն վայելող Տարիել Լորիս-Մելիքովի որդին և փոխարքայից ներողություն խնդրելով զրույցը հայերեն վարելու համար, հարցրեց.

- Հայերենը լա՞վ գիտես, հո՞ չես մոռացել:

Լսելով Լորիս-Մելիքովի դրական պատասխանը, կաթողիկոսը շարունակեց.

- Եթե պաշտոնդ ծառայեցնես ազգիդ ու թագավորին, ապա կփառավորվես, - ասաց կաթողիկոսը և դառնալով փոխարքային, արդեն ռուսերեն լեզվով շարունակեց, - խելացի է, և շատ ուրախ եմ ձերդ պայծառափայլություն, որ երիտասարդ հայրենակիցս պաշտոնավարությունը սկսում է ձեր ենթակայությամբ:

- Սիրելի վեհափառ, - պատասխանեց փոխարքան, - Աստծո կողմից տրված մեր ժամանակը արագ է թռչում: Գալիս եմ մեզ փոխարինողներ: Մեր սկսած գործը նրանք են շարունակելու և հուսով եմ, որ երիտասարդ Լորիս-Մելիքովը կարդարացնի մեր սպասելիքները իր անբասիր ծառայությամբ:

Այնուհետև կաթողիկոսի ու փոխարքայի զրույցը ընթացավ հայ եկեղեցու, հայության հոգսերի ու խնդիրների շուրջ: Կաթողիկոսը փոխարքային պատմեց իր ստեղծած դպրոցի ծանր ֆինանսական վիճակի մասին և օգնության կարիք ունի: Փոխարքան պատասխանեց, որ իր տրամադրության տակ դրա համար միջոցներ չունի և խորհուրդ տվեց Թիֆլիսի հայ անվանի մարդկանց ուժերը ներգրավել, ընդգծելով, որ իր երիտասարդ հանձնակատարը կօգնի այդ գործում:

Կաթողիկոսը շնորհակալություն հայտնելով ասաց, որ կա մեկ այլ միջոց ֆինանսական դրությունը բարելավելու համար:

Այդ ժամանակ գոյություն ունեցող կարգի համաձայն կրոնական ծիսակատարությունների համար մոմ վաճառելու իրավունք ուներ միայն ռուսական ուղղափառ եկեղեցին, որը դրանից հսկայական դրամական եկամուտ էր ստանում:

Ի պատասխան փոխարքայի հետաքրքրության, կաթողիկոսը խնդրեց հայկական եկեղեցիներին թույլ տալ մոմ վաճառել իր հավատացյալներին:

- Եթե թույլ տաք, ապա հավատացեք, որ իմ դպրոցը ազատ շունչ կքաշի, -ասաց կաթողիկոսն, ավարտելով իր խոսքը:

- Եվ ոչ միայն դպրոցը, - կատակով պատասխանեց Վորոնցովը և խոստացավ կատարել կաթողիկոսի խնդրանքը, միաժամանակ հանձնարարելով Լորիս-Մելիքովին կազմել համապատասխան հրաման:

Մի քանի օր անց, Լորիս-Մելիքովը կաթողիկոս Ներսես Աշտարակեցուն տեղեկացրեց, որ հրամանն արձակվել է ու հայկական եկեղեցուն արտոնված է մոմ վաճառել:

Վերջին հանդիպումը կաթողիկոս Ներսես Աշտարակեցու հետ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ներսես Աշտարակեցու և Լորիս-Մելիքովի միջև հաստատվեց ջերմ մտերմություն: Արդեն հայտնի դարձած գեներալը հաճախ էր հանդիպում կաթողիկոսին, երբ վերջինս ժամանում էր Թիֆլիս: Այդ հանդիպումների ժամանակ զանազան հարցերի շուրջ զրույցները շատ բան տվեցին Լորիս-Մելիքովին:

1856 թ. հուլիսի 28-ին վերադառնալով Թիֆլիս, Լորիս-Մելիքովն անմիջապես այցելեց Հայոց Կաթողիկոսին: Ներսես Աշտարակեցին տկար էր և բողոքեց առողջությունից, հետո գեներալից հետաքրքրվեց ռազմաճակատի գործերից, խնդրելով մանրամասն տեղեկություններ տալ Թուրքահայաստանի հայ բնակչության վիճակի մասին:

Լորիս-Մելիքովը կաթողիկոսին պատմեց Կարսի, Բայազետի և այլ բնակավայրերի հայության մասին, ցավով նշելով, որ թափած ջանքերն ու կրած դժվարություններն անտեղի անցան, քանի որ գրաված վայրերը ետ վերադարձվեցին Թուրքիային: Նա հայտնեց նաև, որ շատ հայեր ցանկանում էին ռուսական զորքերի հետ գաղթել Ռուսահայաստան:

Ներսես Աշտարակեցին ափսոսանք հայտնեց, որ հայերին չի հաջողվել անցնել Ռուսահայաստան և ասաց.

- Իհարկե, հայը պիտի կառչի, կառչած մնա իր հողին ու եկեղեցուն, բայց դա, դժբախտաբար, միշտ չէ, որ հաջողվում է: Ես համոզված եմ, որ այժմ կա մի երկիր ու պետություն, որտեղ հայ մարդը իրեն ապահով է զգում, դա Ռուսաստանն է:

Այնուհետև կաթողիկոսը հիշեց 1827-1828 թվականները, երբ ինքը կազմակերպել էր հայերի գաղթը դեպի Երևանի նահանգ: Գոհունակությամբ ասաց, որ իրեն վարձատրված է զգում մեծ քանակությամբ հայ մարդկանց կյանքը փրկելու և Հայոց աշխարհ տեղափոխելու համար:

- Սակայն, - շարունակեց Ներսես Աշտարակեցիին, - երևացել են մարդիկ, որ հայհոյում են ինձ, մեղադրում այդ գաղթը կազմակերպելու համար: Հազարավոր մարդկանց կյանք է փրկվել, բայց իմ կազմակերպած գաղթը անվանում են շատ մեծ չարիք: Մեղադրում են, թե ես գաղթը կազմակերպել եմ իմ անձնական շահի համար: Բայց ո՞րն էր այդ շահը: Այն, որ 1828 թվականից մինչև կաթողիկոս դառնալս, 17 տարի շարունակ կտրված եմ եղել իմ երկրից ու իմ ժողովրդից: Մեղադրում են, բայց ու՞ր է իմ շահը, ինչո՞ւ ցույց չեն տալիս...

Լորիս-Մելիքովն ուշադիր լսում էր ծերունազարդ կաթողիկոսին ու մտածում՝ «Ի՞նչ հզոր կամք ունի փոքրամարմին ու հիվանդ այս մարդը»:

Ներսես Աշտարակեցին նորից անդրադարձավ Թուրքահայաստանի

հայ բնակչության ճակատագրին և Միքայելից հետաքրքրվեց՝ եղե՞լ է Կոստանդնուպոլսում:

- Չեմ եղել:

- Ափսոս, - շարունակեց կաթողիկոսը, - պետք է Պոլսում եղած լիներիր, որ ինձ հասկանայիր: Գիտե՞ս, երիտասարդ բարեկամ, Պոլիսն ու գավառը միևնույնը չեն: Թուրքահայերը բաժանված են երկու մասի և իրար չեն հասկանում:

Այնուհետև կաթողիկոսը հիշեց, որ երիտասարդ ժամանակ որպես Սուրբ էջմիածնի հանգանակ եղել է նաև Պոլսում և մինչև օրս էլ սպասում է, որ ի վերջո Պոլիսն ու գավառը կմիանան: Քանի այդ միավորումը չկա, թուրքահայը գավառներում միշտ կմնա ամենաունեզրկվածն ու հալածվածը:

Կաթողիկոսը հիշեց նաև, որ պոլսահայերը շատ էին խոսում, թե Ռուսաց կայսրությունը նեղում է մեր եկեղեցուն և պատրաստվում է մեզ կուլ տալ, միացնել ու ենթարկել ուղղափառ եկեղեցուն: Ես Ամենայն Հայոց Կաթողիկոսն եմ, բայց այդ վտանգը չեմ տեսնում: Այդ ի՞նչ սատանա են հնարել պոլսեցիները, անհասկանալի է:

- Մեր Սուրբ էջմիածինը գտնվում է Ռուսաց կայսրությանը պատկանող երկրի մեջ և դրա շնորհիվ մեր եկեղեցուն ոչինչ չի սպառնում: Մեր եկեղեցու դռները ամուր փակված են զանազան հոգևորսների առջև, - ասաց կաթողիկոսը և Լորիս-Մելիքովին մեկնեց իր կոնդակներից մեկը, որը վերաբերում էր հասունյանների ու հակահասունյանների պայքարին: Երիտասարդ Միքայելի ուշադրությունը գրավեց կոնդակի այն հատվածը, որտեղ կաթողիկոսն արևմտահայությանը կոչ էր անում չխաբվել եվրոպացի ու ամերիկացի ինքնակոչ քարոզիչների «մեղրածոր լեզվին»:

Լինելով զինվորական գործիչ, Լորիս-Մելիքովը, բնականաբար, գաղափար չուներ Պոլսում ծավալված հասունյանների ու հակահասունյանների պայքարից, ուստի խնդրեց կաթողիկոսին, պարզաբանել դրա էությունը:

Ներսես Աշտարակեցին հանգամանորեն պատմեց իրողությունը և իր խոսքն ամփոփելով, ասաց.

- Հասունյանի կողմնակիցների միջոցով օտարադավ քարոզիչներն ու Վատիկանը մեկ նպատակ ունեն՝ արևմտահայությանը հեռու պահել դեպի Ռուսաստանն ունեցած կողմնորոշումից:

- Խորամանկ ու խարդախ են գործում, - նկատեց Լորիս-Մելիքովը և շարունակեց, - անհասկանալի է, որ պոլսահայերն այդպես մի կողմից վախենում են Ռուսաստանից, մյուս կողմից էլ դառնում են կաթոլիկ: Միթե՞ կաթոլիկ դառնալը իրենից վտանգ չի ներկայացնում: Միթե՞ պոլսահայերը դա չեն հասկանում:

Ներսես Աշտարակեցին պատմեց Հասունյանի կողմնակիցների դեմ պայքարող ազգային գործիչների մասին և ընդգծեց, որ նրանց գործը անչափ դժվարացնում է մեկ կաթոլիկներին, մեկ էլ էջմիածնի կողմնակիցներին պաշտպանելու սուլթանի երկդիմի քաղաքականությունը, որն ուղղված է արևմտահայության պառակտումը խորացնելուն:

- Վերջապես, - ասաց կաթողիկոսը, - դա ուղղված է էջմիածնի կաթողիկոսության դեմ: Այ, եթե ունենայինք մեր պետությունը, կաթոլիկական քարոզչությունը մեզ այդպես չէր վնասի: Պետության փոխարեն մնացել է էջմիածնի եկեղեցին, դրա համար էլ եվրոպացի քարոզիչները հարվածն ուղղել են Մայր Աթոռի դեմ, մեր մեջ տեսնելով իրենց դավադրությանը խանգարող խոչընդոտը...

Այդ օրը երկար զրուցեցին Ներսես Աշտարակեցն ու Լորիս-Մելիքովը:

Երբ Լորիս-Մելիքովն առողջություն մաղթելով հրաժեշտ տվեց, Ներսես Աշտարակեցին դողդոջուն ձեռքերով բռնեց Միքայելի թևն ու ասաց.

- Արդեն 85 տարեկան եմ, մեռնելուց չեմ վախենում: Չեմ էլ ուզում , որ մեռնեմ, ոչ թե նրա համար, որ կյանքից էլի վերցնեմ, այլ նրա համար, որ անելիք շատ է մնացել, ժողովրդիս շատ եմ պարտք...

Ներսես Աշտարակեցու մահը

1857 թ. փետրվարի 14-ին մահացավ Ներսես Աշտարակեցին: Նրան սովորականի պես արթնացնելու համար ներս մտած ծառայողը կաթողիկոսին գտավ մեռած՝ գրիչը ձեռքին:

Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը իր բարձր խելքով ու հիանալի հատկություններով ռուսական իշխանությունների մոտ վայելում էր մեծ հարգանք ու հեղինակություն: Կովկասի փոխարքաները Ներսես Աշտարակեցու հետ հաշվի էին նստում, առանց նրա գործուն մասնակցության ու կարծիքի չէին լուծվում հայությանը վերաբերող հարցերը:

Հայ եկեղեցու կանոնադրությունը ընդունվել էր 1836 թ. առանց Ներսես Աշտարակեցու մասնակցության: Նա ձգտում էր վերանայել կանոնադրության մի շարք կետեր, որոնք կատարյալ չէին: Այս հարցի շուրջ կաթողիկոսն անհրաժեշտ բանակցություններ վարեց փոխարքայի հետ և ստացավ համաձայնություն՝ ներկայացնել իր առաջարկությունները: Ներսես Աշտարակեցին հաշվի առնելով իր առաջացած տարիքը, նաև ցանկություն էր հայտնել հրաժարական տալու մասին: Ահա, այս ամենի մասին գրելու պահին էլ Ներսես Աշտարակեցին կնքեց իր մահկանացուն...

Ներսես Աշտարակեցու մահը մեծ կորուստ էր: Նոր կաթողիկոսի ընտրությունը դարձավ համընդհանուր կարևորություն ներկայացնող հարց: Կաթողիկոսի երկու թեկնածու պետք է ներկայացվեր Ռուսաստանի թագավոր կայսրի ընտրությանը:

Կաթողիկոսության համար քիչ թեկնածուներ չկային: Նրանցից մեկը Ղազար Լազարևն էր /Լազարյան/, որը համոզված էր, որ իր ազգանվան հսկայական հեղինակությունը թույլ է տալիս նոր կաթողիկոսի ընտրության ժամանակ դնել իր թեկնածությունը:

Կովկասի ցարական իշխանությունները մտահոգված էին նոր կաթողիկոսի ընտրությամբ: Այդ մասին է վկայում Ռուսաստանի արտաքին գործերի նախարար իշխան Գորչակովին Կովկասի փոխարքա Բարյատինսկու 1857 թ. մարտի 29-ի նամակը: Խոսելով թուրքահայերի միջոցով Արևելքում Ռուսաստանի ազդեցությունն ամրապնդելու անհրաժեշտության մասին, փոխարքան գրում էր. «...մենք պետք է հակադրենք արևմտյան տերությունների մարտնչող հոգևոր գործունեության դիտավորություններին: Մեր կողմից հովանավորվող հայերի կրոնն ու ազգությունը մեզ հնարավորություն են տալիս օգտվել նրանց համակրանքից:

Հենց այժմ, ինչպես ինձ թվում է, պետք է որոշվի ազդեցության հարցը. կամ հայերը /թուրքական/ կենտվեն մեր գիրկը, կամ էլ իրենց ցանկությունն ու համակրանքը կուղղեն ուրիշ տերության կողմ:

Ներկա ժամանակը հատկապես կարևոր է նրանով, որ էջմիածնի կաթողիկոսի տեղը թափուր է: Միայն նրա համար, որ էջմիածնի վանքը գտնվում է Ռուսաստանում և կաթողիկոսը բոլոր հայերի կողմից առանց բացառության ընդունվում է որպես ազգի հոգևոր առաջնորդ, մենք մեր ձեռքին ունենք մեծ միջոց հայերին մեր կողմը գրավելու համար:

Անկասկած, նրանք, ովքեր մտադիր են Արևելքում թուլացնել մեր ազդեցությունը, ամեն ինչ կփորձեն, որպեսզի հասնեն դրան, ձգտելով նոր ընտրվող կաթողիկոսին դարձնել ժողովրդի մեջ ոչ սիրելի կամ էլ հնարավորություն կփնտրեն այդ տեղում դնել մեզ ամեն տեսակ տհաճություն պատճառելու ընդունակ անձի: Եվ այսպես, մենք նախապես պետք է որոշենք, թե ինչ կերպ պետք է տանենք նոր կաթողիկոսի ընտրությունը: Այժմ ես զբաղված եմ այդ գործով և շուտով նորին մեծությանը կներկայացնեմ մանրամասն զեկուցագիր»:

Այնուհետև Բարյատինսկին անդրադառնալով կաթոլիկությունից Գաբրիել Այվազովսկու և երկու այլ հոգևորականների հրաժարվելուն, հիշեցնելով, որ Ներսես կաթողիկոսը նրանց մեծապես չէր վստահում, գրում էր. «Կաթոլիկ հայերի և գրիգորյան հայերի միջև հաշտության օրինակները հասարակության բոլոր դասակարգերի միջև արտակարգ քիչ են, որովհետև, ինչպես նրանք, այնպես էլ մյուսները մոլեռանդորեն կառչած են իրենց հավատքին... Մինչև այժմ էլ տիրում է այն կարծիքը, որ նրանք կաթոլիկության գործակալներ են, ավելին, առավել վտանգավոր են, որ միայն արտաքուստ են ատում Հռոմի լուծը:

Եթե Թուրքիայում գրիգորյան հայերի մոտ տիրում է անվստահության ոգի այդ հոգևորականների նկատմամբ, ապա ակնհայտ է, որ Օդեսայում նրանց հիմնած կոլեգիան ոչ մի օգուտ չի տա թուրքահայերի վրա մեր ազդեցությանը»:

Ելնելով ասվածից, փոխարքան ընդգծում էր. «Այդ հոգևորականների, ինչպես կաթոլիզմի և Թուրքիայում նրանց ազդեցության նկատմամբ

փոքր ինչ կասկածանքի պայմաններում, անհրաժեշտ է մերժել նրանց առաջարկությունն այն պատրվակով, որ մինչև էջմիածնի նոր կաթողիկոսի հաստատվելը, պետությունը իրեն իրավունք չի վերապահում թույլտվություն տալ կաթողիկոսի գերագույն իշխանության տակ գտնվող արքեպիսկոպոսներին»:

Վերոհիշյալ հարցերի, ինչպես նաև կաթողիկոսի թեկնածուի վերաբերյալ խորհրդակցելու նպատակով Պետերբուրգ մեկնած փոխարքայի օգնական Ա. Կրուզենշտերնը 1857 թ. մայիսի 12-ին հայտնում էր, թե անհրաժեշտ է Թուրքիա ուղարկել վստահելի գործակալ, շոշափել այնտեղ տիրող տեսակետները և եթե դրական կարծիք հայտնի, ապա «մենք պետք է մեր ընտրությունը կենտրոնացնենք Թուրքիայից եպիսկոպոսի ընտրության վրա»: Օգնականը առաջարկում էր հակառակ դեպքում «կաթողիկոսին որոնել մեզնում, եթե ուժ չունենանք պայքարելու Արևմուտքի բանսարկությունների դեմ»:

Փոխարքայի օգնականը գտնում էր, որ Թուրքիա մեկնող գործակալը «մեզ համար պետք է պարզի Ռուսաստանի նկատմամբ թուրքահայերի տրամադրվածության աստիճանը, որն, ինչպես ասում են, հեռու է բարեպաստ լինելուց»:

Իբրև այդպիսի գործակալի, փոխարքայի օգնականը առաջարկում էր Դավիթ Սուրենովի թեկնածությունը, որն Ալեքսանդր Երկրորդի թագադրությանը ներկա էր եղել որպես թարգմանիչ: «Լինելով հայ, -գրում էր օգնականը, - նա բոլորից լավ կհասկանա թորքահայերին, բացի դրանից նա ջերմորեն նվիրված է մեր գործին, ուստի կգործի ազնվորեն»:

Դավիթ Սուրենովը վաճառականի անվան տակ մեկնեց Պոլիս: Դրա արդյունքով Կովկասի փոխարքայի մոտ դրական կարծիք ստեղծվեց Պոլսի պատրիարք Մատթեոսի վերաբերյալ...

ԵՐԲՈՐԴ ՄԱՍ

«Ուրիշ լավագույն թեկնածու չկա...»

1858 թ. մայիսի 20-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց Պոլսի պատրիարք Մատթեոսը: Ռուսաստանի ցար Ալեքսանդր Երկրորդը 1859 թ. մարտի 7-ին հատուկ հրովարտակով հաստատեց նոր կաթողիկոսի ընտրությունը:

Ռուսական կառավարությունը կարևորություն տալով էջմիածնի հետ իր փոխհարաբերություններին՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով, որոշեց ցուցադրել իր հարգանքը նորընտիր կաթողիկոսի նկատմամբ: Կառավարությունը հարկ համարեց իր ներկայացուցիչին ուղարկել Պոլիս կաթողիկոս Մատթեոսին մինչև էջմիածին ուղեկցելու համար: Քննարկվեցին մի շարք թեկնածուներ, սակայն Ալեքսանդր Երկրորդ ցարը գերադասեց ընտրել երիտասարդ գեներալ Լորիս-Մելիքովին:

Միաժամանակ Լորիս-Մելիքովին տրվեց նաև մեկ այլ հանձնարարություն: Ռուսական կառավարությունը նպատակ ուներ օգտագործել Լորիս-Մելիքովի ունակությունները և հասնել նրան, որպեսզի թուրքական սուլթանը համաձայնվեր Հյուսիսային Կովկասից ընդունել մահմեդական վերաբնակիչներին:

Մահմեդական բնակչության վերաբնակեցման շուրջ երկար ժամանակ բանակցելով այդ երկու պետությունները արդյունքի չէին հասել: Սուլթանը հասկանում էր, որ Թուրքիան ուղղակի հնարավորություն չունի ընդունել և տեղավորել մոտ մեկ միլիոն մարդու: Թուրքական կառավարությունը հազիվ կարողացել էր ընդունել Ղրիմի վերաբնակիչներին: Սուլթանը հրաժարվել էր Չեչնիայից ու Դաղստանից վերաբնակիչներին ընդունել մեկ այլ պատճառով: Նա հասկանում էր, որ այդ վերաբնակեցմամբ Ռուսաստանը ձգտում է թուլացնել Շամիլին, որի դեմ ընթանում էին ռազմական գործողություններ: Վերաբնակեցմանը դեմ էր նաև Անգլիան, որը սուլթանին եռանդով աջակցում էր: Անգլիական դեսպանը սուլթանի առջև բացում էր տհաճ հեռանկարի պատկերը: Չեչնիայի ու Դաղստանի մահմեդականները տարիներ շարունակ պատերազմելու պատճառով մոռացել են հող մշակել, արհեստով զբաղվել: Նրանք միայն համալրելու են սուլթանից դժգոհ հայերի, հույների, քրդերի ու այլ հպատակների շարքերը:

Փոխարքա Բարյատինսկին Լորիս-Մելիքովի հետ հանգամանորեն քննարկեց նրա առաքելության շուրջ և հայտնեց Ալեքսանդր Երկրորդի կարծիքը. «Գեներալ Լորիս-Մելիքովից բացի, որիշ լավագույն թեկնածու չկա և համոզված եմ, որ նա կլուծի այդ բարդ խնդիրը»:

Կոստանդնուպոլսի ճանապարհին

1859 թ. ապրիլի 14-ին Լորիս-Մելիքովը «էլբրուս» շոգենավով ուղևորվեց Կոստանդնուպոլիս: Ապրիլի 15-ին նա հասավ Տրապիզոն: Այստեղ Լորիս-Մելիքովին դիմավորեցին մեծ շուքով: Առանձնապես ուրախ էին տեղի հայերը, որոնք Թուրքիայում առաջին անգամ էին տեսնում ռուսական բանակի հայ գեներալի:

Լորիս-Մելիքովը ժողովրդի և ծայրագույն վարդապետի ուղեկցությամբ գնաց հայոց եկեղեցի: Ծիսակատարությունից հետո Լորիս-Մելիքովը հետաքրքրվեց հայկական դպրոցի գոյության մասին և խնդրեց իրեն տանել այնտեղ: Տրապիզոնի հայկական դպրոցում Լորիս-Մելիքովին դիմավորեցին երգեցողությամբ: Դպրոցի հոգաբարձուները նրա պատվին ճաշկերույթ տվեցին: Հնչեցին կենացներ ի պատիվ հայ գեներալի: Իսկ Լորիս-Մելիքովը պատասխան խոսքում դիմելով հոգաբարձուներին և ուսուցիչներին, ձեռքն ուղղեց դեպի ծովն ու ասաց.

- Տեսնո՞ւմ եք ծովը: Օրվա մեջ քա՞նի շոգենավ է այստեղ խարիսխ գցում: Կյանքն առաջ է գնում: Ամեն տեղ առաջադիմություն կա: Արդեն անհնար է ետ մնալ: Ետ մնացիր՝ կխփեն: Իսկ մեզ խելացի ու գիտուն մարդիկ են հարկավոր:

Հետո Լորիս-Մելիքովը հայացքը մի պահ ծայրագույն վարդապետի վրա դարձնելով, ավարտեց իր խոսքն, ասելով.

- Իմ ցանկությունն է, որ հայկական դպրոցներից դուրս գան շնորհաշատ մարդիկ և աշխատեն հայության մեջ առաջադիմություն տարածելու համար: Հույս ունեմ, որ Տրապիզոնի դպրոցն էլ կզգա ծովի մոտիկությունը և կդառնա օրինակելի բոլորիս համար...

Ապրիլի 16-ին Տրապիզոնի հայությունը մեծ շուքով Լորիս-Մելիքովին բարի երթ մաղթեց: Գեներալի մեկնելուց հետո Տրապիզոնի դպրոցի հոգաբարձուները իրենց անհնազանդությունը հայտնեցին ծայրագույն վարդապետին, ասելով, թե կրոնական առարկաները շատ են, իսկ ծովը մեր կողքին է ... Հոգաբարձուները ճիշտ էին հասկացել Լորիս-Մելիքովին: Առաջադիմությունից ետ չմնալու համար երեխաները պետք է բնագիտական ու մաթեմատիկական առարկաներ էլ սովորեն:

«Ամեն ինչ տրամադրվում է ազգիս բարվոքությանը...»

1859 թ. ապրիլի 19-ին Լորիս-Մելիքովը հասավ Կոստանդնուպոլիս: Իբրև ռուսական կառավարության ներկայացուցչի, նրան դիմավորեցին դեսպանը, տեղի հայկական համայքի նշանավոր դեմքերը: Լորիս-Մելի-

քովը բնակության համար ընտրեց Պոլսում մեծ հեղինակություն ունեցող Պողոս Տատյանցի հրավերը: Այստեղ էլ նրան այցելեց նոր ընտրված Գևորգ պատրիարքը:

Հաջորդ օրը Լորիս-Մելիքովը Պ. Տատյանցի ուղեկցությամբ այցելեց պատրիարքարան: Նրան դիմավորեցին ութ վարդապետներ և ուղեկցեցին Մայր եկեղեցի, որտեղ գեներալը աղոթեց ու բարձրացավ պատրիարքարան: Գևորգ պատրիարքը գեներալին դիմավորեց մեծ սրահում, հետո ուղեկցեց ընդունելության սենյակ: Այստեղ պատրիարքը ջերմորեն ողջունեց գեներալին, ասելով հետևյալը. «Ուրախ ենք այսօր հայքս ազգովին՝ տեսնելով ի պատրիարքարանս զձեռդ գերազանցութիւն, այր մեծահռչակ համբաւ պայծառ բարեմասնութեանց քաջածանօթ էր համայնից: Աներկբայ լերուք տեր զի Լորու-Մելիքեանց ազնուափայլ գերդաստանիդ պանծալի անուն դարուց ի դարս փառօք և պատուով յիշատակեսցի և ձերդ այս պատվասիրական այցելութիւն անմոռանալի մնասցէ: Ուստի շնորհավորելով զբարեժաման գալուստ ձեր, և յայտնելով զսրտից մերոց ուրախութիւն և զնորին բարձր սրբազնութեան հոգևոր հօրն իմոյ մշտենջեաւորապես աղօթողն և օրհնող լինել ծանուցանելով ձերումդ պայծառափայլութեան, զբերկրութիւն սրտի և զշնորհակալութիւն համայն ազգայնոցս նուիրեմք ձերում՝ ազգասեր վսեմութեան»:

Լորիս-Մելիքովը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար, որը տևեց երկու ժամ և ավարտվեց նախաճաշով: Պատրիարքի խնդրանքով Լորիս-Մելիքովը պատմեց վերջին պատերազմի, Թուքահայաստանում ապրող հայության վիճակի մասին և նրբանկատորեն ասաց.

- Լավ է, որ Թուրքահայաստանում տիրող քշվառության պայմաններում կարողանում եք Մայր եկեղեցին և պատրիարքարանը այսպես շքեղ ու հարուստ պահել:

Պատրիարքը չհասկացավ գեներալի նուրբ ակնարկը և պատասխանեց, թե «ամեն ինչ տրամադրվում է ազգիս բարվոքությանը»:

Հանդիպում նորընտիր կաթողիկոսի հետ

Պատրիարքարանում զրույցն ավարտելուց հետո Լորիս-Մելիքովը Գևորգ պատրիարքի, Պ. Տատյանցի և այլ երևելիների ուղեկցությամբ գնաց Օրթագյուղ, որտեղ Տիգրան Յուսուֆյան աղայի տանը նրան սպասում էր նորընտիր կաթողիկոս Մատթեոսը, շրջապատված Պոլսի գլխավոր եկեղեցականներով ու ամիրաներով: Պատրիարքը Լորիս-Մելիքովին ներկայացրեց կաթողիկոսին: Ընդունելով Մատթեոսի օրհնանքը, Լորիս-Մելիքովն ասաց.

- Կովկասի փոխարքայի բարեհաճությամբ թագավոր կայսրը իմ վրա հաճելի պարտականություն է դրել. գալ Կոստանդնուպոլիս, շնորհավո-

րել ձեզ և հայտնել օգոստոսափառ կայսրի վստահությունը ու հրավիրել Սուրբ Աթոռ էջմիածին: Ես պատիվ ունեմ ձերդ սրբության ուղեկցել մինչև ռուսաց սահման: Ես ինձ երջանիկ եմ համարում, որ իմ վրա է դրված այդ պարտականության կատարումը և պատիվ ունեմ համբուրելու ձեր սուրբ աջը:

Ներկաների անունից խոսք վերցրեց Տիգրան Յուսուֆյանը, որը դիմելով կաթողիկոսին, ասաց.

- Վեհափառ և սրբազնագոյն հայրապետ. աներկբայ ըլլալով թէ ձերդ վեհափառութեան հայրախնամ սիրտը՝ ի՞նչ աստիճան բերկրությամբ յուզեալ է աս միջոցիս, իւր բոլորտիքը ժողովուած տեսնելով մայրաքաղաքիս մէջ գտնուած ազգային երևելի իշխանաւորաց և բոլոր հասարակութեան պատգամավոր ազգասէր յարգելիները, հրաման կը խնդրեմք ձերդ վեհափառութենէն մեր զգացած անպատում բերկրութեանց հաւաստիքին ալ՝ մէկ քանի խօսքով յայտնել վսեմափայլ Լորու-Մելիքեանց զօրապետին, որն ներկայացուցիչն է աստ մեր ռուսաբնակ ամենասիրելի ազգայնոց:

Ստանալով կաթողիկոսի բարեհաճ համաձայնությունը, Տիգրան Յուսուֆյանը դիմեց Լորիս-Մելիքովին: Տիրող մթնոլորտը հասկանալու համար ամբողջությամբ մեջ բերենք նրա խոսքը.

- Տէր զօրապետ, - ասաց Յուսուֆյանը, - այս ձեր ներկայութիւնը կրկնակի ուրախութեան առիթներ կը մատակարարէ մեզ, տեսնելով նախ՝ ձեզի նման ազգասեր իշխան մը արժանաւորապէս վարձատրեալ օգոստոսափառ ինքնակալէն ամենայն Ռուսաց, և նույնպիսի մեծարանօք պատուեալ մեր օգոստոսափառ սուլթանին, որ ամենամեծ պատիւ մը, ի՞նչ կըսեմ, փառք մըն է մեր ազգին համար, որով կրնամք պարծիլ այսօր և մեծարել յօտար ազգաց: Եւ երկրորդ, մեծ է մեր ուրախութիւնը՝ սրտներուս մէջ արթնցնելով այն քաղցր յիշատակը, որ Ն. Վ. Մատթէոս Սրբազնագոյն կաթողիկոսին՝ Հայաստանեաց եկեղեցւոյ սուրբ լուսաւորչայ Առաքելական աթոռը բարձրանալուն ընտրութեան աւետիսը մեզի պարգեւեց: Վասն զի Ն. Վ. Մատթէոսի ընտրության մասին մեր ռուսաբնակ եղբարոց հետ ունեցած համաձայնութիւններիս՝ ամենամեծ հաւաստիք մըն է արդի համաշխարհական քաղաքակրթութեան պահանջած սիրոյն եւ միաբանութեանը, որն որ անհրաժեշտ կերպիւ կարեւոր է այն լուսաւոր պողոտային մէջ մտնել ցանկացող ընկերութեան մը:

Ուրեմն ուրախութիւն զգալու և մխիթարութիւն յուսալու իրաւունք ունինք Տէր Զօրապետ, տեսնելով ամենայն Ռուսաց և Տաճկաստանի օգոստոսափառ ինքնակալներուն մեր ազգին վրայ ունեցած համարումին, որն որ այս առթիւ աւելի փառաւոր կերպիւ յայտնեցին մեզ և որոց բարեկամական յարաբերութիւնները ազգերնուս յառաջադիմութեան էական միջոցն է:

Մեր ազգը ի վաղուց հետէ իւր հաւատարիմ ծառայութեանը փոխարէն վերոյիշեալ օգոստոսափառ ինքնակալներուն հայրագորով խնամքներն

առատապես վայելած է, և որովհետեւ նոցին վեհափառութիւնը կը պատու իրեն մեզ դարուս պահանջած լուսաւորութեան շաւիղին մէջ մտնել, և հոն դիմելու համար կարւոր եղած առաջին քայլափոխը արդէն ըրած ըլլալով, ազգերնիս կը խոստանայ ամէն ժամանակ այս քաղցր պարտաւորութիւնը կատարելու համար ամենայն ջանք գործի դնել, խնդրելով ձեզմէ, Տէր Զօրապէտ, որ ազգերնուս այս բարի զգացմանց թարգմանը ըլլաք օգոստոսափառ ինքնակալաց քով՝ որոնց կայսերական աթոռին կենացը և յարատեւ բարեկամութեանը համար ցանկացող և միշտ աղոթող եմք:

Առաջիկա օրերին Լորիս-Մելիքովը պետք է հանդիպեր թուրքական նախարարներին, այցելեր սուլթանին, ուստի իր պատասխան խոսքին տվեց ընդգծված դիվանագիտական երանգ:

- Մեծարգո ամիրաներ, - ասաց նա, այն օրից ինչ ազգս հայոց վայելում է օսմանյան և ռուսաց մեծազոր տերությունների պաշտպանությունը, իր գովելի հավատարմությամբ արժանացել է նրանց վստահության ու համակրանքին: Ուրեմն, այսուհետև էլ ջանացեք պահել ազգիս այս պարծանքը, հավատարիմ մնալով դուք ձեր թագավորին, մենք մերին և այդպես կատարելով մեր պարտավորությունը, առաջադիմենք քաղաքակիրթ դարուս շավիղով:

Հանդիսության վերջում Ամենայն հայոց Կաթողիկոսը իր խոսքի բնաբանը դարձնելով Գրիգոր Մագիստրոսի «Ազգ իմ՝ աչք իմ է» ասույթը, հանդիսականներին կոչ արեց, որ «միշտ սիրով և միաբանությամբ ազգին բարօրութեանն ու յառաջադիմութեանը աշխատին և Հայաստանեաց եկեղեցւոյ փառքը պահպանեն»:

«Սա իմ միակ և գլխավոր նպատակը...»

Լորիս-Մելիքովի այցելությունը ուղեկցվում էր չթուլացող ուշադրությամբ: Եվ դա հասկանալի էր, որովհետև Ղրիմի պատերազմից հետո առաջին անգամն էր Թորքիայի մայրաքաղաքն ընդունում Ռուսաստանի բարձրաստիճան ներկայացուցչի:

Լորիս-Մելիքովն այցելում էր Պոլսի երևելի գործիչներին նրանց հրավերով: Ինքն էր ընդունում ազգի երևելիներին: Նրան այցելեցին նաև Թաթարիայի ժողովի նախագահ Մեհմեդ Ռյուշտի փաշան և կայսերական երաժշտական դասի վերատեսուչ Նեծիպ փաշան: Թուրք պաշտոնյաների այցը հետախուզական բնույթ ուներ և Լորիս-Մելիքովը խուսափելով կոնկրետ պատասխաններից, հյուրերին հայտնում էր Պոլսի պատմական հուշարձաններից ստացած հիացմունքը:

Փորձված Լորիս-Մելիքովն անտեղի ժամանակը չէր կորցնում: Առաջին անգամ լինելով Թուրքիայի մայրաքաղաքում, ծանոթանալով հայկական համայնքի առաջնորդներին, հանդիպելով նշանավոր թուրք քաղաքական

ու գինվորական գործիչներին, ընդունելով մամուլի ներկայացուցիչներին, Լորիս-Մելիքովն իր համար օգտակար շատ եզրակացությունների հանգեց:

Այդ նպատակին ծառայեցրեց նաև մեծ վեզիր Ալի փաշայի, արտաքին գործերի նախարար Ֆուատ փաշայի և Թանզիմաթի ժողովի նախագահ Մեհմեդ Ռյուշտիի հետ հանդիպումները:

Նույն օրը, 1858 թ. մայիսի 18-ին, երեկոյան Լորիս-Մելիքովը կաթողիկոսի և Պողոս Տատյանցի ուղեկցությամբ ճաշկերույթի հրավիրվեց Անգլիայի դեսպան Հենրի Բուլվերի մոտ: Այստեղ էին նաև Ռուսաստանի և Բելգիայի դեսպանները:

Ճաշկերույթն անցավ սիրալիր ռեպլիկների փոխանակմամբ, դիվանագիտական տակտի պահպանմամբ: Երբ անգլիական դեսպանը փորձեց նրբորեն ակնարկել Պոլիս եկած Լորիս-Մելիքովի նկատմամբ առաջացած հետաքրքրությունը, որն ուղեկցվում էր զանազան գուշակություններով, Լորիս-Մելիքովը նույնպես դիվանագիտական պատասխան տվեց, բարձրացնելով բաժակը.

- Ահա իմ միակ ու գլխավոր նպատակը, - ասաց նա, նայելով կաթողիկոսի կողմը, -պատվով ու հարգանքով նորին սուրբ օծնությանն ուղեկցել մինչև Ռուսաստանի սահման:

Հանդիպում սուլթան Աբդուլ Մեջիդի հետ

Թուրքիայում այդ ժամանակ տիրապետում էր Աբդուլ Մեջիդը, որին համարում էին չափավոր, հումանիստ, Արևմուտքի նկատմամբ համակրանքով լցված տիրակալ: Սուլթանը աչքի չէր ընկնում ակտիվությամբ, հակված էր իր անձնական նպատակների վրա մեծ ծախսեր կատարելու կողմ:

Աբդուլ Մեջիդը սուլթան էր դարձել հոր՝ Մահմուդի մահից հետո, 1839 թ. 16 տարեկան հասակում: Հենց սկզբից այն ժամանակվա անգլիական դեսպան Ստրետֆորդ Կանինինգը երիտասարդ սուլթանի հետ հաստատեց անձնական կապեր, ինչն անսովոր էր թե դեսպանի և, թե սուլթանի համար: Անգլիական դեսպանը մեծ չափով ազդեցություն ձեռք բերեց սուլթանի քաղաքականության վրա:

Երիտասարդ սուլթանն իր խիստ բնավորությամբ չերքեզուհի մոր հզոր ազդեցությանն էր ենթարկվում: Նրա հովանավորությունից օգտվելով, չորս տարի շարունակ կառավարությունն իր ձեռքում էր պահում սկզբունք չունեցող ու հետադեմ սիրեկան Ռիզա փաշան:

Աբդուլ Մեջիդը կյանքն անց էր կացնում հարեմում: Անգլիական ճանապարհորդ Չարլզ Մակֆերլեյնը զարմացած նրա սերունդ արտադրելու ընդունակությամբ, գրել է, թե սուլթանը քսան տարեկան էր, բայց արդեն ութ երեխայի հայր էր:

Աբդուլ Մեջիդը հսկայական միջոցներ ծախսելով, Բոսֆորի եվրոպա-

կան ափին կառուցել էր մարմարակերտ Դոլմաբախչա պալատը: Սուլթանն իր մահճակալը պատրաստել էր տվել մաքուր արծաթից:

Ահա, այս արծաթասեր սուլթանի հրավերով էլ 1859 թ. մայիսի 25-ին Լորիս-Մելիքովը Ռուսաստանի դեսպան Լոբանովի ուղեկցությամբ այցելեց Դոլմաբախչա: Սուլթանի և Լորիս-Մելիքովի զրույցը տևեց կես ժամ: Նախապես հանդիպելով սուլթանի շրջապատում առավել ազդեցություն ունեցող մեծ վեզիր Ալի փաշայի և արտաքին գործերի նախարար Ֆուատ փաշայի հետ, Լորիս-Մելիքովը նրանց կարողացել էր համոզել Հյուսիսային Կովկասից մահմեդական բնակչության վերաբնակեցման օգտին:

Երբ Լորիս-Մելիքովը շոշափեց վերաբնակեցման խնդիրը, սուլթանը հայտնեց, որ իր երկրում առանց այդ էլ բաշիբուզուկներ շատ կան և դրանց քանակն ավելացնելն օգտակար չէ:

Լորիս-Մելիքովը սուլթանին պատմեց, որ անցած պատերազմում ինքը եղել է կովկասյան կամավորների հրամանատար: Եվ դրա շնորհիվ էլ լավ գիտե, որ վերաբնակվելու ցանկություն են հայտնել հենց այդ կամավորները, որոնք բոլորովին նման չեն բաշիբուզուկներին:

- Ես պատերազմում եմ տեսել այդ կամավորների ցուցաբերած արիությունը, հաղթանակին հասնելու կամքը, - ասաց Լորիս-Մելիքովը:

Լորիս-Մելիքովի խոսքերը սուլթանի վրա տպավորություն գործեցին, չէ՞ որ վկայում էր փառաբանված հրամանատարը, որին ինքը պարգևատրել էր Կարսի մահմեդական բնակչության խնդրանքով: Բայց սուլթանը շարունակում էր վերաբնակեցման առաջարկությանը չհամաձայնվել, ասելով, թե այդ կամավորները երկարատև կռիվներին մասնակցելով, մոռացել են իրենց արհեստը, նույնիսկ կորցրել են հող մշակելու շնորհքը:

Կարծես թե Լորիս-Մելիքովը սուլթանի այդ խոսքերին էր սպասում: Նա խնդրեց ներս բերել իր նվերները: Լորիս-Մելիքովն ընդգծված, մեկ առ մեկ ցուցադրելով սուլթանին էր հանձնում իր բերած նվերները:

- Ահա, ձերդ մեծություն, սրանք Դաղստանի վարպետների պատրաստած արծաթյա սրերն են անգերազանցելի իրենց շքեղությամբ:

Վերցնելով սրերից մեկը, սուլթանը երկար զննեց ու հարցրեց.

- Միթե՞ Դաղստանում մնացել են սրանք պատրաստող վարպետներ:

- Այո, ձերդ մեծություն, մնացել են և հենց նրանք էլ ուզում են վերաբնակվել ձեր պայծառափայլ իշխանության ներքո:

Լորիս-Մելիքովը սուլթանին ցուցադրեց իր բերած գորգերը: Մանկության տարիներից ճոխության մեջ հղփացած սուլթանը չկարողացավ զսպել իր հիացմունքը.

- Եվ այս գանձերի ստեղծողնե՞րն էլ են կամենում վերաբնակվել իմ կայսրության տարածք:

- Այո, ձերդ մեծություն, - պատասխանեց Լորիս-Մելիքովը, - և տեսեք, թե ռուսաց կայսրությունն ինչպիսի վարպետներից է զրկվում:

Սուլթանը հետաքրքրվեց, թե ինչ քանակություն են կազմում վերաբնակության համար ցանկություն հայտնած լեռնաբնակները:

- Ռուսական կայսրությունը, - պատասխանեց Լորիս-Մելիքովը, - եթե բոլոր կամեցողներին վերաբնակության արտոնություն տա, ապա կզրկվի շատ առավելություններից: Իսկ ինչ վերաբերում է քանակությանը, ապա ի դեմս կովկասյան կամավորների, ձերդ մեծության ունեցած ոչ կանոնավոր բանակը կհամալրվի քաջ ու դիմացկուն կռվողներով: Շամիլի որդի Կազի-Մահոման նույնպես ուզում է վերաբնակվել, այնպես որ ձեր սահմանները հուսալիորեն կպաշտպանվեն:

Ռուսական գեներալի խոսքերը համոզիչ էին և սուլթան Աբդուլ Մեջիդը, որը տևական ժամանակ անգլիացիների միջամտությամբ մերժում էր Ռուսաստանին, համաձայնվեց շարունակել Հյուսիսային Կովկասից վերաբնակիչներին ընդունելու մասին բանակցությունները...

«Ունեմ մի հայրենիք Հայաստան...»

Լորիս-Մելիքովի գտնվելը Կոստանդնուպոլսում, նրա բանակցություններն ու հանդիպումները թուրքական բարձրաստիճան պաշտոնյաների ու սուլթանի հետ, հայության մոտ առաջացրել էին ընդգծված ոգևորություն: Պոլսի հայ երիտասարդության մոտ ազգային արժանապատվության դրսևորումը գերազանցեց սպասվածը: Նրանք և, ոչ միայն նրանք, առաջին անգամ էին տեսնում ռուսական բանակում ծառայող հայ ազգի փառաբանված գեներալին:

1859 թ. մայիսի 29-ին, երեկոյան «Բյուզանդիոն» հյուրանոցում Պոլսի հայ երիտասարդներն ի պատիվ Լորիս-Մելիքովի, ճաշկերույթ կազմակերպեցին: Լորիս-Մելիքովը գեներալի գեղեցիկ համազգեստով, կուրծքը զարդարած շքանշաններով, կաթողիկոսի ուղեկցությամբ եկավ ճաշկերույթին: Նրան բուռն դիմավորեցին: Ամենքին տիրում էր խանդավառություն: Հնչում էին կոչեր ի պատիվ հայ գեներալի:

Լորիս-Մելիքովն արդեն ավարտել էր իր դիվանագիտական առաքելությունը և ինչ որ չափով կարող էր ազատ խոսել իր երիտասարդ հայրենակիցների հետ: Արդեն ամիս ու կես նա գտնվում էր Պոլսում և հասցրել էր շատ բան տեսնել ու զգալ: Եվ զգացածն ամփոփեց իր պատվին առաջարկված կենացին պատասխանելով:

- Ես, -ասաց նա, - ապրում եմ Ռուսական կայսրությունում, դուք ապրում եք օսմանյան կայսրությունում: Բայց մենք՝ ռուսահայերս ու դուք՝ թուրքահայերդ, ունենք մի հայրենիք՝ Հայաստանը: Մեր լեզուն, մեր կրոնը, մեր մշակույթը այնտեղ են սկիզբ առել: Կոչ եմ անում բոլորիդ, չմոռանալ Հայաստանը, ամեն ինչ տանք նրան, նրա երջանկության համար ապրենք ու մեռնենք:

Լորիս-Մելիքովի խոսքը հայ երիտասարդները համակ ուշադրությամբ էին լսում և երբ նա ավարտեց, սրահում ներկա գտնվողները երկար ժամանակ օվացիա սարքեցին գեներալի պատվին:

Լորիս-Մելիքովը տիրապետում էր մի հետաքրքիր ունակության: Նա տեսնում էր, թե ինչ է կատարվում իր շուրջը, բայց ցույց էր տալիս, որ չի նկատում: Այսպես նա վարվում էր շատ հաճախ, երբ խնայում էր դիմացինին, չէր ուզում նրան վշտացնել:

Այս անգամ էլ Լորիս-Մելիքովը տեսավ, որ իր խոսքերի վրա Պոլսի որոշ երևելիների դեմքին թթվություն իջավ, բայց չնկատելու տվեց...

«Ուժի արտահայտությունը բռնությունը չէ...»

1859 թ. մայիսի 29-ին մեծ իշխան Կոնստանտին Նիկոլաևիչը երուսաղեմից Ռուսաստան վերադառնալիս կանգ առավ Կոստանդնուպոլսում: Ալեքսանդր Երկրորդ ցարի եղբայր Կոնստանտինը այդ ժամանակ ղեկավարում էր ծովային նախարարությունը, բայց միաժամանակ զբաղվում էր գյուղացիական ռեֆորմի նախապատրաստմամբ: Կոնստանտինը եղբայրների մեջ աչքի էր ընկնում խելացիությամբ և կարողացել էր իր շուրջը համախմբել այն ժամանակվա Ռուսաստանի խելացի ու գործունյա մարդկանց...

Կոնստանտին Նիկոլաևիչին նավահանգստում դիմավորեցին Ռուսաստանի դեսպան Լոբանովն ու Լորիս-Մելիքովը և նրան ուղեկցեցին էմիրկյանի գեղեցիկ ամառանոցը: Հաջորդ օրը մեծ իշխանին այցելեց օսմանյան կառավարության արտաքին գործերի նախարար Ֆուատ փաշան և սուլթանի անունից գոհարազարդ թուր նվիրեց նրան: Նվեր հանձնվեց նաև մեծ իշխանուհուն:

Նույն օրը մեծ իշխանին այցելեցին Պոլսում հավատարմագրված դեսպանները: Նրան այցելեց նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոսը, Գևորգ պատրիարքի, էջմիածնի սինոդի անդամ Մակար եպիսկոպոսի, Պողոս Տատյանցի ուղեկցությամբ: Հանդիպման ժամանակ Լորիս-Մելիքովը հյուրերին ներկայացրեց մեծ իշխանին: Նրա հետ զրույցը երկար տևեց: Կոնստանտին Նիկոլաևիչին ամեն ինչ հետաքրքրում էր: Նրա ուշադրությունը հատկապես գրավեց այն փաստը, որ Պոլսի հայ երևելիները զբաղված են ազգային կանոնադրության մշակմամբ:

Հաջորդ օրը Պեշիկթաշի կայսերական պալատում ի պատիվ մեծ իշխանի, որի հետ էր նաև Լորիս-Մելիքովը, ճաշկերույթ տվեցին թուրքական կառավարության բոլոր նախարարները: Իսկ հունիսի 3-ին մեծ իշխանը ճաշի հրավիրվեց սուլթանի մոտ: Թերթերն այս փաստի վրա ուշադրություն դարձրին, գրելով, թե «առաջին անգամ է, որ օտարազգի կայսերազուն մը պատիւ ունեցաւ օգոստոսափառ ինքնակալին հետ ճաշելու»:

Նույն օրը երեկոյան մեծ իշխանը տիկնոջ հետ հրավիրվեց Պոլմաբախչայում գտնվող կայսերական թատրոն, որտեղ ներկա էր սուլթանն իր որդիների հետ: Հրավիրվել էին նաև դեսպան Լոբանովը, Լորիս-Մելիքովը և Պողոս Տատյանցը:

Հունիսի 3-ին մեծ իշխանը հրաժեշտի համար այցելեց սուլթանին և նույն օրվա երեկոյան ժամը 9-ին «Վլադիմիր» շոգենավով ուղևորվեց Նիկոլաևսկ:

Որքան էլ մեծ իշխանի Պոլիս գտնվելու օրերը հագեցած էին զանազան հանդիպումներով, թեև դրանց մասնակցում էր Լորիս-Մելիքովն, այնուամենայնիվ, նա ժամանակ գտավ առանձին զրույց ունենալ գեներալի հետ:

Մեծ իշխանը հետաքրքրվեց անցած պատերազմով, խնդրելով առանձնապես պատմել կովկասյան ռազմաճակատում ընթացած գործողությունների մասին: Լորիս-Մելիքովը հանգամանորեն ներկայացրեց անցած պատերազմի հետ կապված խնդիրները և հիշեց նաև իր ղեկավարությամբ գործող որսորդների մասին: Մեծ իշխանը զարմանքով ընդունեց Լորիս-Մելիքովի հայտնածը, թե իր ղեկավարած հարյուրակների մեջ ընդրգված են եղել բազմաթիվ ժողովուրդներին ու կրոններին պատկանող մարդիկ:

- Եվ ինչպե՞ս է ձեզ հաջողվել կառավարել այդ խայտաբղետ ամբոխին:

Այն պատասխանը, որ տվեց գեներալը, անսպասելի էր մեծ իշխանի համար:

- Ձերդ բարձրություն, - ասաց Լորիս-Մելիքովը, - ուժի միակ արտահայտությունը բռնությունը չէ: Ես բոլորի նկատմամբ վերաբերվել եմ հարգանքով: Մարդը ինքնասեր է և հարկավոր է մի քիչ համբերություն:

- Բայց նրանք բոլորը վայրենիներ են, սովոր դաժանակահարության, զարմացած ասաց մեծ իշխանը:

Լորիս-Մելիքովը պատմեց, որ իր որսորդների մոտ ամենահեղինակավոր գիվորներից դատարան էր ստեղծել: Եվ դա բավական էր, որպեսզի մնացածները զգաստանային:

- Եվ հետո, ձերդ մեծություն, - ավարտեց իր խոսքը գեներալը, - նրանք բոլորը չէ, որ վայրենիներ են: Նրանց մեջ կային նաև շատ հայեր, իմ ազգակիցներից, որոնք քրիստոնյա են և շատ մոտ ռուսական մշակույթին:

Կոնստանտին Նիկոլաևիչը խնդրեց պատմել Հայաստանի, հայերի մասին: Լորիս-Մելիքովը նախ հիշեցրեց, որ մեծ իշխանի հոր, երջանկահիշատակ Նիկոլայ Առաջինի օրոք Արևելյան Հայաստանը միացվել է Ռուսաստանին, որ հայերը 1837 թ. ուրախությամբ են ընդունել Հայաստան այցելած թագավոր կայսրին:

Այնուհետև Լորիս-Մելիքովը հանգամանորեն ներկայացրեց իր ժողովրդի պատմությունը անհիշելի ժամանակներից: Հայերն, ընդգծեց նա,

ամբողջ Ասիայի միակ քրիստոնյա ժողովուրդն են: Դարերի ընթացքում երկիրը ավերել են պարսիկները, բյուզանդացիները, արաբները, թաթար-մոնղոլները, թուրքերը: Բայց հայերը դիմացել են իրենց լեզվի, կրոնի ու ազգային մշակույթի պահպանման շնորհիվ:

- Ի դեմս ուղղափառ Ռուսաստանի, - պատմական էքսկուրսի ավարտին ասաց Լորիս-Մելիքովը, - հայերը միշտ տեսել են իրենց բնական դաշնակցի և միշտ պատրաստ են աջակցել ամբողջ Արևելքում մեր հզոր պետության ազդեցությանն այնտեղ, որտեղ կա հայ բնակչություն: Եվ ճիշտ կլիներ, եթե Պարսկաստանում ու Թուրքիայում ծավալվի ռուսական հյուպատոսությունների ցանցը, որոնք կարող են գլխավորել կրթված ու բարեհույս հայ գործիչները:

- Ձեր միտքը, հարգելի Միխայիլ Տարիելովիչ հայ-ռուսական հյուպատոսություններ բացելու մասին, անչափ հետաքրքիր է և պետք է մտածել այդ ուղությամբ, - ասաց մեծ իշխանը:

Կոնստանտին Նիկոլաևիչն իր խոսքի տերն եղավ: Նրան հաջողվեց կոտրել արտաքին գործերի նախարար Գորչակովի համառությունը, որը պնդում էր, թե դրա համար գումար չկա և հայաշատ խոշոր բնակավայրերում ստեղծվեցին ռուսական հյուպատոսություններ: Ճիշտ է, դրանցում հայ ծառայողների թիվը մեծ չէր, բայց հետագայում կարևոր դեր խաղացին արևմտահայության կյանքում:

Զրույցի ընթացքում մեծ իշխանը հետաքրքրվեց, թե ինչպես է Լորիս-Մելիքովին հաջողվել ձեռք բերել սուլթանի համաձայնությունը Հյուսիսային Կովկասից մահմեդական բնակչության վերաբնակեցման մասին: Երբ լսեց Լորիս-Մելիքովի պատասխանը, մեծ իշխանն ասաց.

- Որքան դատում եմ իրերի ընթացքից, Փարիզի տրակտատից մենք պետք է դուրս գանք, ընդ որում պատերազմով: Կարծում եմ ապագայում անխուսափելի կլինի Թուրքիայի դեմ պատերազմը: Իսկ դուք հաշվի՞ չեք առնում, որ Հյուսիսային Կովկասցի վերաբնակիչները այդ պատերազմում կկռվեն մեր դեմ:

- Իհարկե, ձերդ մեծություն, - հաշվի առել եմ: Բայց առայժմ մեզ հարկավոր է ամրացնել կայսրության թիկունքը, առանց որի ապագա պատերազմում հաղթանակ չի լինի:

- Այո, ճիշտ եք, Միխայիլ Տարիելովիչ, - համաձայնվեց մեծ իշխանը և շարունակեց, - Փարիզի տրակտատը արգելել է մեզ Սև ծովում ունենալ ռազմանավեր, առափնյա ռազմա-ծովային զինանոցներ: Իսկ կայսրությանը օդի ու ջրի նման հարկավոր է Սև ծովում վերականգնել մեր ռազմական նավատորմը:

Կոնստանտին Նիկոլաևիչը որպես Ռուսաստանի ծովային նախարար անկեղծորեն ցավ էր զգում այդ ամենի մասին պատմելով Լորիս-Մելիքովին, կարծես թե խորհրդի էր սպասում: Ի՞նչ խորհուրդ կարող էր տալ ցամաքային զորքերի գեներալը հզոր կայսրության ծովային նախարարին: Իսկ գեներալ Լորիս-Մելիքովն ուներ այդ առթիվ հետաքրքիր մտահղացում:

- Կա ելք, ձերդ մեծություն, - ասաց Լորիս-Մելիքովը, - և այդ ելքը ծովային առևտրի զարգացում է: Ինչքան երկիրը շատ առևտուր անի, այնքան կմեծանա մաքսանենգությամբ զբաղվելու հրապուրանքը: Իսկ Սև ծովը վաղուց է դարձել մաքսանենգության օջախ: Ռուսաստանի հետ առևտուր են անում նաև Փարիզի տրակտատը ստորագրած տերությունները, հետևապես նրանք շահագրգռված կլինեն պայքարել մաքսանենգության դեմ:

- Իսկ ինչպե՞ս պայքարել, - հարցրեց մեծ իշխանը:

- Այդ տերությունները, - բացատրեց Լորիս-Մելիքովը, - իրավունք չունեն Սև ծով մտցնել ռազմանավեր: Իսկ Ռուսաստանից նրանք անպայման կպահանջեն ապահովել իրենց առևտրական նավերի անվտանգությունը: Ահա, այս կերպ առևտրական ուղիների երկայնքով հարկավոր կլինի պահել ռազմանավեր և դաժանորեն պայքարել մաքսանենգության դեմ:

Ցամաքային զորքերի գեներալի մտահղացումը արժանացավ մեծ իշխանի հավանությանը...

Լորիս-Մելիքովի հայտնած մտքերը ոչ միայն մնացին մեծ իշխանի հիշողության մեջ, այլև ուժեղ տպավորություն գործեցին և վճռական դեր խաղացին հետագայում:

Փոխարեն Բարյատինսկու նախադրյալ

Մեծ իշխան Կոնստանտին Նիկոլաևիչը Կովկասի փոխարքա Ա. Ի. Բարյատինսկուն Կոստանդնուպոլսից 1859 թ. հուլիսի 12-ին ուղարկած նամակում հայտնում էր նաև հետևյալը. «Սիրելի իշխան Ալեքսանդր Իվանովիչ. ես մեծ բավականությամբ այստեղ ծանոթացա գեներալ Լորիս-Մելիքովի հետ և օգտվելով նրա մեկնումից, գրում եմ քեզ մի անգամ ևս Ռուսաստան իմ վերադառնալուց առաջ: Ես այստեղ նրա հետ երկար ու անչափ հետաքրքիր զրույցներ ունեցա Կովկասի մասին...

Մելիքովի հետ մեր խոսակցության համար երկու գլխավոր առարկա էին՝ մեզ նվիրված հայ ժողովրդի միջոցով Արևելքում Ռուսաստանի ազդեցության հնարավորության և Սև ծովի առափնյա գծի կարգավորման մասին: Ես ամբողջովին կիսում եմ Մելիքովի կարծիքը հայկական նշանակալի բնակչություն ունեցող բնակավայրերում կրթված ու բարեմիտ ռուսական հյուպատոսներ նշանակելու անհրաժեշտության մասին»:

Այնուհետև հայտնելով, որ Լորիս-Մելիքովը Բարյատինսկուն կտեղեկացնի իրենց զրույցների մանրամասները, մեծ իշխանը գրում էր, որ համաձայնվել է նաև Սև ծովում Ռուսաստանի ազդեցությունը ուժեղացնելու մասին Լորիս-Մելիքովի առաջարկությանը:

Մեծ իշխանի նամակը, նրանում Լորիս-Մելիքովին տրված գնահատականն անսպասելի էր փոխարքա Բարյատինսկու համար: Փոխարքան պարզապես տանել չէր կարողանում Լորիս-Մելիքովին, ոչ միայն նրա համար, որ մտերիմ էր Միլյուտինի հետ, այլև այն պատճառով, որ նա ինքնուրույն էր ու աչքի էր ընկնում հմուտ գործելակերպով ու քաջությամբ: Պակաս դեր չէին խաղում փոխարքայի շրջապատում գտնվող քծնանքի մեջ վարպետացած զինվորականները, որոնք անգերազանց էին բանսարկություններ կազմակերպելու մեջ:

Իհարկե, միայն նրանք չէին, որ փոխարքա Բարյատինսկուն լարում էին Լորիս-Մելիքովի դեմ: Մեծապես մեղավոր էր ինքը, փոխարքան, որը չէր կարողանում զսպել իր նախանձը և արտահայտվում էր բացահայտորեն:

Մեծ իշխանի վերոհիշյալ նամակի կապակցությամբ փոխարքա Բարյատինսկին իր տեղակալ Ա. Ֆ. Կրուզենշտերնին 1859 թ. հուլիսի 27-ին գրել է. «Ափսոսում եմ, որ Լորիս-Մելիքովին հանձնարարեցի մեկնել Կ. Պոլիս կաթողիկոս Մատթեոսին ուղեկցելու համար և իզուր իմ ընտրությունը չկայացրի Իսահակ Թումանովի վրա. Լորիս-Մելիքովը Կոնստանդնուպոլսում այնքան դժվարություններ է ստեղծել մեր միսիայի համար և մեծ իշխան Կոնստանտինի մոտ իրեն ներկայացրել է որպես հայերի ճակատագիրը տնօրինող: Ես կրկնակի համոզված եմ, որ կատարել եմ տհաճ ընտրություն, նրան վստահելով այդ առաքելությունը»:

Բարյատինսկին մինչև վերջ պահեց չարությունն ու նախանձը Լորիս-Մելիքովի նկատմամբ: Այդ են վկայում 1889 թ. «Ռուսկիյ արխիվ» հանդեսում տպագրված ծավալուն հուշերը, որոնցում նա ձգտել է նսեմացնել Լորիս-Մելիքովի դերը:

«Պատրիարքարանը պետք է տեղափոխվի Հայաստանի մայրաքաղաք Էրզրում...»

Կոստանդնուպոլսի հայությունը մեծ շուքով ճանապարհեց Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոսին, որը էջմիածին էր գալիս Լորիս-Մելիքովի հետ 60 մարդու ուղեկցությամբ:

Տեղավորվելով հարևան նավախցերում, կաթողիկոսն ու գեներալը ամբողջ ճանապարհին խոսում էին իրենց ապագա անելիքների, հայկական դպրոցների, եկեղեցիների, Պոլսում կուտակված հայ պանդուխտների անմխիթար վիճակի և այլ հարցերի մասին:

Զրույցներից մեկի ժամանակ կաթողիկոսը ոգևորությամբ պատմում էր, թե ինչ գործեր է արել պատրիարք եղած ժամանակ և ինչ բարենորոգումներ պետք է աներ էջմիածնում, ինչ նոր գործեր պետք է սկսեր այնտեղ:

Լորիս-Մելիքովն, որը միշտ բարձր կարծիք էր ունեցել հանգուցյալ կաթողիկոս Ներսես Աշտարակեցու մասին, հարկ համարեց Մատթեոսին

հիշեցնել իր նախորդի ազգօգուտ գործերը և իր խոսքը բարեկամաբար ավարտեց ասելով,

- Այնպես, որ նորը սկսելու հարկ չկա, այլ պետք է Ներսես Աշտարակեցու գործը շարունակել ու զարգացնել:

Գեներալը նկատեց, որ իր վերջին խոսքերը դուր չեկան կաթողիկոսին:

Լորիս-Մելիքովին հայտնի էր Մատթեոսին կաթողիկոս ընտրելու հետ կապված պատմությունը: Պոլսի ամիրաները հոգևորականությանը միացած պահանջել էին կաթողիկոս ընտրել պատրիաք Մատթեոսին, հակառակ դեպքում նրանք սպառնացել էին անջատվել Ռուսաստանից: Եվ որպեսզի հայոց եկեղեցին չպառակտվեր, մնար միասնական, որոշվեց կաթողիկոս ընտրել Պոլսի պատիարքին: Ռուսական կառավարությունն էլ շահագրգռված էր Մատթեոսի ընտրությամբ, այդ դիտելով կարևոր միջոց Թուրքիայում իր ազդեցությունը հայերի օգնությամբ ուժեղացնելու համար:

Լորիս-Մելիքովը գիտեր նաև, որ Պոլսի պատրիարքարանը ոչ միայն ինքնուրույն չէր տնօրինում թուրքահայերի հոգևոր և ազգային գործերը, այլ ամբողջապես ենթակա է սուլթանի կամքին: Լորիս-Մելիքովի համար պարզ էր նաև, որ սուլթանը նույնպես շատ էր շահագրգռված, որպեսզի էջմիածնի տիրակալ դառնա Պոլսի պատրիարքը, նրան իր նպատակներին ծառայեցնելու համար:

Այն ամենը, ինչ գեներալը գիտեր Ներսես Աշտարակեցու միջոցով, ավելի ամբողջական դարձավ Պոլսում եղած ամիս ու կեսի ընթացքում:

Եվ Լորիս-Մելիքովն որոշեց իրեն հետաքրքրող հարցերի մասին զրուցել կաթողիկոս Մատթեոսի հետ:

- Վեհափառ, - հարցրեց Լորիս-Մելիքովը, - ինչպես էիք կարողանում զբաղվել թուրքահայերի վիճակով, երբ պատրիարքարանը գտնվում է Պոլիսում:

- Մենք ունենք եկեղեցիներ, թեմական առաջնորդներ, որոնց միջոցով էլ տնօրինվում են բոլոր գործերը:

- Բայց Պոլսում նստած, ի՞նչ գործեր եք տնօրինում: Անցած պատերազմի ժամանակ եղել եմ հայկական շատ բնակավայրերում, տեսել եմ թուրքական կեղեքումների ծանր պատկերը: Եվ այդպիսի վիճակի մեջ հայտնված ժողովուրդը մի կերպ ապրում է, հույսը կտրած ու խեղճացած: Պոլսում գտնվելով, այդ մարդկանց դուք ինչպե՞ս եք օգնություն հասցնում:

- Օգնում ենք Աստծո զորությամբ, - պատասխանեց կաթողիկոսը և հարցրեց, -իսկ դուք գեներալ այդպես չե՞ք մտածում:

- Ես, ասաց Լորիս-Մելիքովը, - Աստծո զորությամբ մտածում եմ, որ ազգօգուտ գործ կլինի, եթե պատրիարքարանը տեղափոխվի Հայաստանի մայրաքաղաք Էրզրում: Պատրիարքարանը պետք է կենդանի կապով կապված լինի իր հավատացյալ ժողովրդի հետ: Իսկ Պոլսում նստած, ժողովրդի կողքին չես կարող լինել:

Լորիս-Մելիքովը կաթողիկոսի անհանգիստ շարժումից հասկացավ, որ իր խոսքերը նրա դուրը չեկան, բայց շարունակեց.

- Տեսեք, վեհափառ, օսմանյան կայսրության մեջ ապրում են բազմաթիվ քրիստոնյա ժողովուրդներ, բայց նրանցից ոչ մեկը, բացի մեզանից, իր հոգևոր ու մշակութային կենտրոնը ժողովրդից ու երկրից չեն կտրել ու Պոլիս տարել: Եվ նրանք ճիշտ են վարվել, դրա համար էլ նրանց առաջնորդները, մտավորական ու երևելի մարդիկ անկախ են սուլթանից: Անկախ են զգում, որովհետև կանգնած են իրենց սեփական հայրենի հողի վրա:

- Մարդուս հայրենիքը իր ծննդավայրն է: Հիմա արդեն պոլսեցիների մեծ մասը Պոլսում են ծնվել ու Պոլիսն է նրանց հայրենիքը:

- Իսկ ո՞ւր մնաց Հայաստանը, - իր վրդովմունքը զսպելով հարցրեց Լորիս-Մելիքովը:

- Ձեր ասած Հայաստանն էլ այնտեղ ծնվածների հայրենիքն է:

- Հետաքրքիր դատողություն ունեք վեհափառ: Բայց իմացեք, քանի դեռ պատրիարքարանը չի տեղափոխվել Հայաստանի մայրաքաղաք Էրզրում, երբեք թուրքահայության վիճակի լավացման գործում հաջողություն չի լինի: Լավագույն դեպքում պատրիարքարանը կարող է միայն գավառներից ստացված բռնությունների մասին խնդրագրեր կազմել ու սուլթանին ներկայացնել: Իսկ ո՞վ է հաշվի առնում այդ խնդրագրերը:

- Այնպես, որ, - շեշտեց Լորիս-Մելիքովը, - պատրիարքարանը պետք է տեղափոխվի Հայաստան, պետք է լինի ժողովրդի մեջ, նրա կողքին, պետք է ժողովրդին կազմակերպի, նրան հույս տա ու ոգևորի:

- Պատրիարքարանը Պոլսից հանել կնշանակի մեզ ամլացնել: Դա լինելու բան չէ, - չհամաձայնվեց կաթողիկոսը:

- Բայց դուք Կոստանդնուպոլսից ինչպե՞ս եք կառավարելու Հայաստանը: Միթե՞ Պոլսում չեն գիտակցում, որ ազգային ժողովը կառավարություն չէ: Դրա հնարավորությունն էլ չկա:

- Մի մոռացեք գեներալ, - դարձյալ խստորեն առարկեց կաթողիկոսը, Պոլիսը մայրաքաղաք է, օսմանյան կայսրության կենտրոնը: Այնտեղ է նստում սուլթանը: Այնտեղ են եվրոպական դեսպանները:

- Վեհափառ, - ասաց Լորիս-Մելիքովը, - եթե հետևենք ձեր դատողությանը, ապա ռուսահայերն էլ Էջմիածնի կաթողիկոսությունը պետք է տեղափոխեն Պետերբուրգ, թագավոր կայսրին ու ռուսաց կառավարությանը մոտ: Կլի՞նի այդպես:

Կաթողիկոսը չպատասխանեց Լորիս-Մելիքովին և իր լռությամբ հասկացրեց, որ ցանկություն չունի խոսակցությունը շարունակել...

«Ախտս, կաթողիկոս Ներսես Աշտարակեցին արժանավոր փոխարինող չունեցավ...»

1859 թ. հունիսի 6-ին շոգենավը հասավ Փոթի: Այստեղից կաթողիկոսն իր շքախմբով, Լորիս-Մելիքովի ուղեկցությամբ շարժվեց դեպի Թիֆլիս: Ճանապարհին նրանց դիմավորեց Լորիս-Մելիքովի նախկին դասընկեր Մինգրելիայի օկրուգի պետ գեներալ Բորոզդինը, որը կաթողիկոսի համար գիշերելու տեղ հատկացրեց Օրնիրի գյուղում

Հետագայում հիշելով այս մասին, Բորոզդինը գրել է, որ Լորիս-Մելիքովը երեկոյան ընթրիքի ժամանակ իրեն ծանոթացրել է կաթողիկոսի ուղեկիցների, այդ թվում եպիսկոպոս Այվազովսկու, կաթողիկոսի քարտուղար Աղանյանցի և մյուսների հետ: Խոսակցությունը սեղանի շուրջ ընթացել է ֆրանսերեն լեզվով և քննարկվում էին Անդրկովկասին վերաբերող հարցեր:

Բորոզդինը հիշում է, որ զրույցին գլխավորապես տոն էր տալիս Լորիս-Մելիքովը, այն դարձնելով աշխույժ ու հետաքրքրական:

Երբ խոսակցություն է բացվել Կոստանդնուպոլսում Լորիս-Մելիքովի գտնվելու շուրջ, գեներալը պատմելով իր ստացած տպավորությունների մասին, ասել է.

- Կոստանդնուպոլսում կենտրոնացած է հայության մեծ, ազդեցիկ ուժ: Այ, եթե հնարավոր լիներ այդ ուժը Հայաստան տեղափոխել, կենտրոնացնել Էրզրում քաղաքում, պատկերացո՞ւմ եք դրա նշանակությունը:

Լորիս-Մելիքովի հարցն անպատասխան մնաց... ճնշող էր կաթողիկոսի ներկայությունը:

Հունիսի 14-ին կաթողիկոսը հասավ Թիֆլիս: Ինչպես ճանապարհին գտնվող բնակավայրերում, այնպես էլ Թիֆլիսում կաթողիկոսին ցույց տրվեց փայլուն ընդունելություն:

Նույն օրն էլ կաթողիկոսին այցելեցին իշխան Օրբելիանին, գեներալ Միլյուտինը և փոխարքայի օգնականը: Իսկ հաջորդ օրը կաթողիկոսին հանդիսավորությամբ ընդունեց իշխան Օրբելիանին, որն այդ պահին ժամանակավորապես փոխարինում էր փոխարքա Բարյատինսկուն:

Իշխանը կաթողիկոսին հանձնեց նրա ընտրությունը հաստատող ցարական վկայագիրը և Սուրբ Ալեքսանդր Նևսկու շքանշան: Կաթողիկոսը համբուրեց վկայագիրն ու շքանշանը և հայերեն լեզվով կարճ ճառ արտասանեց, որը ռուսերեն թարգմանում էր Լորիս-Մելիքովը:

Գտնվելով Թիֆլիսում, կաթողիկոսը օրերն անց էր կացնում շատ լարված: Առավոտից մինչև երեկո, նա ընդունում էր բազմաթիվ մարդկանց, որոնց մեջ քիչ չէին նաև բանսարկուները: Իսկ կաթողիկոսը բոլորովին անծանոթ էր այդ մարդկանց, չգիտեր երկրի իրավիճակը:

Կաթողիկոսը հայտարարեց, որ մինչև իր ներկայանալը փոխարքային, ոչ մի այցելություն չի կատարի: Մինչդեռ, կաթողիկոսն, ըստ գոյություն ունեցող կարգի, պետք է այցելություն տար Կովկասում ռուսական եկեղեցու պետին: Կաթողիկոս Մատթեոսը հրաժարվեց այդ այցելությունը կատարելուց, չլսեց Լորիս-Մելիքովին, որը նրան բացատրում էր այդ էտիկետի պահպանման անհրաժեշտությունը:

Այս խնդիրն այնքան ծեծվեց, որ իր վրա գրավեց հանրության ուշադրությունը: Բոլորին հետաքրքրում էր, թե ինչու կաթողիկոսը չի այցելում ռուսական եկեղեցու պետին: Այդ մասին լսվում էին զանազան դատողություններ: Դրանք այնպիսի բնույթ ստացան, որ Լորիս-Մելիքովը հարկադրված հանդիպեց փոխարքայի օգնական Կրուզենշտերնին և նրան ասաց.

- Իմ կարծիքով այդ այցելությունն ինքնստինքյան ավելին չէ, քան սովորական ձևականություն, որը ոչ մի բարդություն չի ներկայացնում, եթե այդ մասին խոսակցությունը չտարածվեր: Իսկ այժմ այդ հարցը կարևոր է դարձել և այլևս չեմ կամենում դրան խառնվել:

- Իսկ ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, - հետաքրքրվեց փոխարքայի օգնականը:

- Որովհետև կարժանանամ հայերի հավերժական կշտամբանքին և նրանք կարող են անտանելի դարձնել Թիֆլիսում իմ հետագա մնալը:

Միաժամանակ Լորիս-Մելիքովը խորհուրդ տվեց այլևս այցելության հարցի մասին չխոսել և մոռացության տալ:

1859 թ. հունիսի 29-ին կաթողիկոս Մատթեոսը իր շքախմբով մեկնեց էջմիածին, փոխարքայի օգնականի մոտ թողնելով երկու գրություն՝ հասցեագրված իշխան Բարյատինսկուն: Նամակներից մեկում կաթողիկոսն իր երախտագիտությունն էր հայտնում այն ամենի համար, ինչ արվել էր իր Թիֆլիսում գտնվելու ժամանակ: Մյուս նամակը կաթողիկոսը գրել էր Լորիս-Մելիքովի եռանդուն խորհրդով: Այդ մասին 1859 թ. հունիսի 30-ին Ա. Կրուզենշտերնը փոխարքա Բարյատինսկուն գրել է. «Մյուս նամակը վերաբերում է հսկայական նշանակություն ունեցող հարցի, այն է. Փոքր Ասիայի մի քանի քաղաքներում հյուպատոսի կամ հյուպատոսական գործակալների նշանակմանը: Անկասկած մեր ազդեցությունը Թուրքիայում դրանից միայն կարող է շահել, բայց ֆինանսական և քաղաքական պատճառները կարող են նշանակալի չափով դրան խանգարել: Ես գիտեմ, որ Լորիս-Մելիքովն այդ մասին խոսակցություն է ունեցել մեծ իշխան Կոնստանտինի հետ և նորին մեծությունը եռանդով միացել է այդ գաղափարին: Կարող է նա արդեն ձեզ հետ խոսել է այդ մասին»:

Հյուպատոսների նշանակման հարցը, թերևս միակն է, որ կարելի է համարել կաթողիկոս Մատթեոսի դրական գործը, այն էլ Լորիս-Մելիքովի եռանդուն խորհրդի արդյունքով:

Շատ հաճախ, երբ առիթ էր լինում հիշել Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին. Լորիս-Մելիքովը մտերիմների միջավայրում ասում էր.

- Ափսոս, որ կաթողիկոս Ներսես Աշտարակեցին արժանավոր փոխարինող չունեցավ:

Դմիտրի Ալեքսեևիչ Միլյուտին

Կոնսանդնուպոլսից վերադառնալուց հետո Լորիս-Մելիքովը կարճատև հանգստից հետո մեկնեց Սուխումի: Որոշ ժամանակ անց, 1860 թ. մայիսի 25-ին փոխարքա Բարյատինսկու հրամանով նա նշանակվեց Հարավային Դաղստանի և Դերբենդի կառավարիչ: Նույն օրվա մեկ այլ հրամանով գեներալ Լազարևը նշանակվեց Միջին Դաղստանի կառավարիչ:

Լորիս-Մելիքովն իր նոր նշանակումն ընդունեց գոհունակությամբ և իր համախոհ և մտերիմ Դմիտրի Միլյուտինին ասաց.

- Որքան հեռու Թիֆլիսից, այնքան լավ: Այնտեղ փոխարքայի միջավայրում գործող բանսարկություններից հանգիստ կմնամ:

Կովկասյան բանակի շտաբի պետ, գլխավոր շտաբի ակադեմիայի նախկին պրոֆեսոր խելացի, մտածող և իր գործին լավ տիրապետող Դմիտրի Ալեքսեևիչ Միլյուտինը համաձայն էր Լորիս-Մելիքովի հետ: Լինելով ազնիվ ու սկզբունքային, նա նույնպես չէր տանում բանսարկուներին և հաճախ փոխարքայի հետ տհաճ խոսակցություն էր ունենում, երբ վերջինս պաշտպանության տակ էր վերցնում ապաշնորհ մեկին, որը փորձված բանսարկու էր և քծնանքով էր զբաղվում:

Իշխան Բարյատինսկին դժվարությամբ էր համակերպվում Միլյուտինի հետ և նրան Կովկասից հեռացնելու միջոցներ էր որոնում: Ղրիմի պատերազմի ընթացքում Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերի տարած հաղթանակների մեջ զգալի էր շտաբի պետ Միլյուտինի ավանդը և դա աննկատ չմնաց:

Ալեքսանդր Երկրորդը զգում էր իր վրա ընկած ծանր պարտականությունը: Եվ իրավիճակը շտկելու համար հարկավոր էր անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ հենվելով խելացի ու մտածող մարդկանց վրա: Այդ մարդկանցից մեկն էլ եղավ Միլյուտինը, որն էլ 1860 թ. նշանակվեց ռազմական նախարարի տեղակալ:

Նոր նշանակում ստանալու առիթով Լորիս-Մելիքովը նրան սրտանց շնորհավորեց, բայց չթաքցրեց իր մտահոգությունը, որ զրկվում էր ազնիվ ու բանիմաց մարդու հետ հաճախակի շփվելու և ընկերություն անելու հնարավորությունից: Նույնպիսի փոխադարձ զգացում ուներ նաև Միլյուտինը Լորիս-Մելիքովի նկատմամբ: Նրանք իրար ճանաչում էին 1847 թվականից սկսած: Տարիների ընթացքում միասին կիսել էին հաջողությունների բերկրանքը, վշտացել պատահած անհաջողության համար: Եվ դարձել էին մտերիմ՝ հիմնված ընդհանուր գաղափարների ու շիտակ ընկերականության վրա:

Նրանք հաճախ էին միասին քննարկում Ղրիմի պատերազմում կրած անհաջողության պատճառները և գտնում էին, որ հարկավոր է ձեռնարկել կտրուկ միջոցներ ռազմական գործը կարգի բերելու համար: Միլյուտինն ու Լորիս-Մելիքովը համոզված էին, որ եթե երկրի զինված ուժերի կառավարումը չբարեփոխվի, ապա Ռուսաստանը ապագա հնարավոր պատերազմում կհայտնվի ավելի ծանր վիճակում: Երկու տաղանդավոր գործիչների մոտ հասունանում էր ռազմական ուժերի բարեփոխման անհրաժեշտության գաղափարը:

Դմիտրի Միլյուտինը, թեև մայրաքաղաք Պետերբուրգ էր եկել ծայրամաս համարվող Կովկասից, բայց իր հետ ռազմական նախարարություն բերեց թարմ շունչ, նոր գաղափարներ: Նա վաղուց էր զգում Ռուսաստանում ռազմական ռեֆորմի կարևորությունը և գտնում էր, որ գյուղացիական ռեֆորմից հետո անհմաստ է այլևս նախկին վիճակում ռազմական գործի պահպանումը: Բայց ռեֆորմի անհրաժեշտությունը չէր հասկանում նախարար Սուխոզանետը, որը ոչ միայն պահպանողական էր, այև բավականաչափ տգետ:

Գիտակցելով ռազմական գործի բարելավման անհրաժեշտությունը, Ալեքսանդր Երկրորդ ցարը 1861 թ, Միլյուտինին նշանակեց ռազմական նախարար: Նոր պաշտոնում Միլյուտինը սկսեց մշակել ռեֆորմի ծրագիրը, հենվելով Ղրիմի պատերազմի ժամանակ Կովկասյան ռազմաճակատում և Շամիլի դեմ պատերազմում ձեռք բերած փորձի վրա:

Միլյուտինի նոր նշանակումը իշխան Բարյատինսկու համբերության բաժակը լցրեց: Լինելով Ալեքսանդր Երկրորդի մտերիմը, մանկության ընկերը, իշխանը շատ էր ցանկանում իրեն տեսնել ռազմական նախարարի պաշտոնում: Բայց ցարը գերադասեց Միլյուտինին, նկատի ունենալով նրա արժանիքներն ու գիտելիքները:

Չհաշտվելով կատարվածի հետ, ֆելդմարշալ փոխարքա Բարյատինսկին սկսեց Թիֆլիսից բանսարկություններ կազմակերպել, նպատակ ունենալով ձախողել Միլյուտինի սկսած գործը:

Բայց Միլյուտինն անխոչ կերպով գործն առաջ էր տանում և 1862 թ. հունվարի 15-ին Ալեքսանդր Երկրորդին ներկայացրեց ռազմական բարեփոխումների ծրագիրը: Միլյուտինն առաջարկում էր կրճատել խաղաղ պայմաններում բանակի թվաքանակը, վերակառուցել սպայական կազմի նախապատրաստումը և ստեղծել բանակի կառավարման համար նոր կառուցվածք: Առաջին հերթին Միլյուտինը հասավ բանակում զինվորների ծառայության ժամկետի կրճատմանը: Այն 25 տարուց իջեցվեց 15-ի, ընդորում 7-8 տարի ծառայելուց հետո, զինվորը ստանում էր ժամանակավոր արձակուրդ: Բանակում վերացվեց մարմնական պատիժների կիրառումը: Ռուսաստանի տարածքը բաժանվեց 15 ռազմական օկրուգների, որոնք անմիջապես ենթարկվում էին ռազմական նախարարությանը:

Ռազմական ռեֆորմի հաջող իրականացումն ավելի ամրապնդեց Միլյուտինի դիրքերը: Նա ռազմական նախարարի պաշտոնը զբաղեցրեց 20 տարի...

Իսկ մինչ այդ, իշխան Բարյատինսկին վերջապես զգաց, որ իր ժամանակն արդեն անհուսորեն անցել է...

Նոր հանդիպում սուլթանի հետ

Շամիլի հանձնվելուց հետո ռուսական իշխանությունները սկսեցին լեռներից չեչեններին տեղափոխել դաշտավայր: Լեռնականները չէին հաշտվում այդ վերաբնակեցման հետ և գերադասում էին հեռանալ Թուրքիա: Այս կապակցությամբ Ռուսաստանի և Թուրքիայի միջև սկսված բանակցությունները, որոնք մեկ տարի առաջ Լորիս-Մելիքովի շնորհիվ մտել էին կանոնավոր հուն, հարկավոր էր ավարտել, օգտագործելով մեծ թվով գաղթելու ցանկություն հայտնած չեչենների բուռն ձգտումը:

Ցարի հավանությամբ բանակցություններն ավարտելու նպատակով 1860 թ. ապրիլին Կոնստանդնուպոլիս մեկնեց Լորիս-Մելիքովը, չհասցնելով գնալ նոր նշանակված տեղը:

- Թուրքիայից վերադառնալուց հետո նոր կմեկնեք Դաղստան, - ասաց փոխարքա Բարյատինսկին, հայտնելով, որ թագավոր կայսրը Լորիս-Մելիքովի առաքելության հետ մեծ հույսեր է կապում:

Լորիս-Մելիքովը շտապ ծովով մեկնեց Կոստանդնուպոլիս: Թուրքական բարձրաստիճան պաշտոնյաները գեներալին ընդունեցին ընդգծված հարգանքով: Սուլթան Աբդուլ Մեջիդը հանդիպման ժամանակ հիշեցրեց, որ ռուսական գեներալը առաջին այցելությամբ թողել է լավ տպավորություն:

Լորիս-Մելիքովը սուլթանին մատուցեց նոր նվերներ, առաջացնելով նրա հիացմունքը:

- Այս գեղատեսիլ իրերի վարպետներն են հենց ցանկանում գաղթել ձերդ մեծության երկիր: Հույս ունեմ, որ նրանց գալով նորին մեծությունը այս հիասքանչ իրերից արդեն այլոց նվիրելու հնարավորություն կունենա, - ասաց Լորիս-Մելիքովը:

Լորիս-Մելիքովը սկսած բանակցություններն ավարտեց հաջողությամբ: Ստորագրվեց համաձայնագիր չեչեններին գաղթեցնելու մասին:

1860 թ. մայիսի 11-ին փոխարքա Բարյատինսկին Ալեքսանդր Երկրորդին ուղարկած զեկուցագրում անդրադառնալով Կ. Պոլիս Լորիս-Մելիքովի դիվանագիտական առաքելությանը, հայտնում էր, որ դրա արդյունքով երկրամասից կհեռանան խռովարարները և ժողովուրդը կհանգստանա:

Դիվանագիտական ճանապարհով ձեռք բերված հաջողության համար Ալեքսանդր Երկրորդը Լորիս-Մելիքովին պարգևատրեց, Սուրբ Աննա» 2քանշանի առաջին աստիճանով:

Նրան ընդունում էին աղ ու հացով

Գալով Դերբենդ, Լորիս-Մելիքովն իրեն զգաց լրիվ ինքնուրույն և հեռու Թիֆլիսում տիրող բանսարկություններից, որոնք ավելի էին ուժեղացել Միլյուտինի մեկնելուց հետո:

Լորիս-Մելիքովը շրջեց բոլոր բնակավայրերում, եղավ նույնիսկ ամենահեռավոր լեռնային աուլներում: Երկրամասը քայքայված էր, ավերված: Տևական պատերազմի հետքերն ամենուրեք իրենց զգացնել էին տակիս:

Ինչի՞ց սկսել: Պատերազմի բովով անցած մարտական գեներալի համար այս հարցը ճակատագրական նշանակություն ուներ: Պատերազմ, վիշտ, կորուստ ու ավերածություն տեսած մարդկանց հետ հարկավոր էր ուրիշ լեզվով խոսել, հարկավոր էր մարդկանց մոտ ապրելու, ստեղծելու հույս ներշնչել: Հարկավոր էր մարդկանց մոտ խաղաղ ապրելու պատասխանատվություն ներարկել: Իսկ դրանց հասնելու համար հարկավոր էր քաղաքացիական գործերը վարելու հմտություն և ոչ թե ռազմական միջոցների կիրառում:

Եվ մարտական գեներալն այնպիսի եռանդով գործը սկսեց, որ կարծես թե ամբողջ կյանքն անց էր կացրել քաղաքացիական ծառայության մեջ: Նա սկսեց նրանից, որ տեղական իշխանությունը հանձնեց երկրամասում ապրող բազմաթիվ ցեղերի առաջնորդներին:

- Բոլորդ իմ առջև պատասխանատու եք կարգ ու կանոնի համար, - հրամայեց նա, - կպատժեմ խստորեն, եթե որևէ մեկը թերանա իր գործում:

Լորիս-Մելիքովը փորձով գիտեր, որ ցեղային առաջնորդները շահասիրության համար պատրաստ են երդմնազանց լինել և նրանց վրա հսկողություն սահմանելու նպատակով ստեղծեց գործակալական նուրբ ցանց: Որպես կանոն, Լորիս-Մելիքովին հաջողվում էր գործակալներ ունենալ հենց ցեղային առաջնորդների մտերիմ միջավայրից, այնպիսի մարդկանց, որոնց առաջնորդները չէին կասկածում:

Եվ երբ Լորիս-Մելիքովին նախապես հայտնի էր դառնում այս կամ այն առաջնորդի շահադիտական մտադրությունը, անմիջապես իր մոտ էր կանչում և խստորեն զգուշացնում: Այդպիսի առաջնորդներն իրենց մտերիմներին ասում էին, թե պետն իսկական մարգարե է, դեռ գլխումդ միտքդ չի ծագել, նա արդեն այդ մասին գիտե:

Ցեղային առաջնորդները հանգիստ չունեին Լորիս-Մելիքովի հետևողականությունից: Եվ նրանք գտան ելքը՝ չփչացնել հարաբերությունները գեներալի հետ: Ինչո՞վ: Կաշառելո՞վ: Կարճ ժամանակում ցեղային առաջնորդները համոզվեցին, որ պետը անկաշառ է:

Լորիս-Մելիքովն ինքը օգնեց նրանց գտնել ելքը՝ ազնվաբար ծառայել և այդ միջոցով խուսափել գեներալի զայրույթից:

Ճիշտ է, գեներալը ահաբեկում էր, բայց չէր հրապուրվում մարդկանց պատժելով: Դա թուլություն չէր, այլ մեծահոգություն, որն այնպես բարձր էին գնահատում լեռնականները: Աուլներում քիչ չէին այնպիսիք, որոնք չէին կարողանում հրաժարվել զենքից և զբաղվում էին մարդկանց ահաբեկելով: Լորիս-Մելիքովն առանձին-առանձին կանչում էր իր մոտ և բացահայտորեն ասում, թե իբրև զինվորական հասկանում է, որ մարդը չի կարողանում հրաժարվել իրեն հարազատ դարձած զենքից, բայց որպես երկրամասի պետ, չի կարող հանդուրժել նրանց արարքը: Եվ արդյունքում շատերը հրաժարվեցին զենք կրելուց: Քիչ չէին նաև նրանք, որոնք գեներալի խորհրդով հեռացան Թուրքիա:

Կարճ ժամանակ անց, լեռնականները Լորիս-Մելիքովի նկատմամբ լցվեցին համակրանքով: Այս գործում կարևոր դեր էր խաղում այն, որ գեներալը նրանց հետ խոսում էր իրենց հարազատ լեզվով: Մարդիկ առանց թարգմանիչի, իրենց ցավի ու հոգսերի մասին անկաշկանդ խոսում էին ռուսական գեներալի հետ:

Լորիս-Մելիքովի նկատմամբ լեռնականների համակրանքն ուժեղացավ նաև նրանով, որ նա երկրամասում շրջում էր, լինում հեռավոր լեռնային աուլներում ոչ թե զինված կազակային ջոկատի, այլ մի քանի չինովնիկների ուղեկցությամբ: Լորիս-Մելիքովը շրջում էր կառքով, իր հետ տանելով զանազան ապրանքներով բեռնված սայլեր: Գեներալը սիրում էր նվերներ բաժանել:

Ահա, այսպես, իր մեծահոգությամբ, բռնություն չկիրառելով Լորիս-Մելիքովն ոչ միայն հասավ երկրամասում գործերի կարգավորմանն, այլև դարձավ լեռնականների համար սիրելի ու հարգված անձնավորություն: Աուլներում անհամբերորեն սպասում էին նրան, դիմավորում աղ ու հացով, անկեղծորեն խոսում իրենց հոգսերի ու դժվարությունների մասին, որոնք գեներալն ամեն կերպ աշխատում էր լուծել:

Հարավային Դաղստանում ձեռք բերած հաջողությունները գնահատվեցին արժանի կերպով: Փոխարքա Բարյատինսկին Լորիս-Մելիքովին ներկայացրեց Վլադիմիրի երկրորդ աստիճանի շքանշանի: Լորիս-Մելիքովին շնորհվեց գեներալ-լեյտենանտի աստիճան:

«Նամակ առ «Կովկասի» խմբագրին»

Մինչ Լորիս-Մելիքովը նոր էր անցել Հարավային Դաղստանի կառավարիչի պաշտոնին և կատարում էր իր առաջին քայլերն, ենթարկվեց նոր բանսարկության, որն արդեն ընտանի ծագում ուներ:

Պարզվում էր, որ Կոստանդնուպոլսում եղած ժամանակ և հետո ռուսական սահման գալու ճանապարհին Լորիս-Մելիքովի հայտնած տեսակետներն անհետևանք չէին մնացել: Պոլսի մի քանի երևելի ամիրաներ,

ինչպես երևում է, չէին ներել գեներալին, որը կանոնադրության շուրջ ծավալված պայքարն անվանել էր «փոթորիկ մի բաժակ ջրի մեջ», որովհետև այն ամենն, ինչ կատարվում էր թուրքական մայրաքաղաքում, հեռու էր օսմանյան տիրապետության տակ գտնվող արևմտահայության հոգսերից: Լորիս-Մելիքովի ուշադիր հայացքից չէր վրիպել, որ ամիրաների գզվռտոցն ազգային խնդիրների հետ որևէ կապ չուներ և նրանք հետապնդում են միայն անձնական շահեր:

Լորիս-Մելիքովն այս ամենի մասին բարեկամաբար խոսել էր Պոլսի հայրենակիցներից ոմանց հետ և համոզված էր, իր տեսակետի ճշմարիտ լինելու մեջ: Պոլսից վերադառնալուց հետո էլ, երբ մտերիմ հայրենակիցների հետ խոսակցություն էր բացվում արևմտահայության ճակատագրի շուրջ, նա միշտ ասում էր. «Պոլսից Հայաստանի մայրաքաղաք էրզրում պետք է տեղափոխել և պատրիարքարանը և ազգային ժողովը, ու միայն այդ ժամանակ կարելի է լրջորեն խոսել թուրքահայերի դրության բարելավման մասին»:

Իսկ պոլսեցի պոռոտախոս ամիրաները չներեցին հայ գեներալին և 1860 թ. մայիսին Օդեսա քաղաքում լույս տեսնող «Օդեսսկիյ վեստնիկ» թերթում կարողացան տպագրել Լորիս-Մելիքովին վարկաբեկող մի թղթակցություն: Թիֆլիսում գտնվող նրանց համախոհները շտապեցին այդ թղթակցությունը հրապարակել «Կովկաս» ռուսական թերթում:

Այդ ժամանակ Օդեսայում էր գտնվում Գաբրիել եպիսկոպոս Այվազյանը, որը Լորիս-Մելիքովին չէր համակրում՝ Ներսես Աշտարակեցու հետևորդ լինելու պատճառով և պարզ էր, որ թղթակցության հրապարակումը չէր կարող լինել առանց նրա գիտության:

Լորիս-Մելիքովն, որը սովոր էր Թիֆլիսում բանսարկությունների հեղինակներին մերկացնել, այժմ այդպիսին իր դեմ հայրենակիցների կողմից, այն էլ Կոստանդնուպոլսից կազմակերպելը, վեր էր նրա պատկերացումներից: Թե որքան էր վշտացել այդ բանսարկությունից, վկայում է Լորիս-Մելիքովի գրած պատասխանը «Կովկաս» թերթի խմբագրին: Լորիս-Մելիքովի նամակը նրա համաձայնությամբ, թարգմանաբար տպագրվեց «Մեղու Հայաստանի» թերթի 1860 թ. հունիսի 25-ի համարում:

Կատարվածի մասին պատկերացում կազմելու համար ստորև հրապարակում ենք Լորիս-Մելիքովի նամակն ամբողջությամբ, հարազատ մնալով բնագրին: «Կովկաս» լրագրի այս տարվա 46-րդ համարում կարդացի մի թուղթ, առ նորա խմբագրին և հետը մի հարկավոր գրութիւն վերաբերեալ այս փոքր միջոցի անախորժ ձայներին, կամեցայ հայերեն փոխարկել զայն, որովհետև նորա բովանդակութիւնը մեզ հայերիս իմանալու վերաբերեալ բան է:

Մեր նպատակն է հրապարակելու զսոյն այն է, որ ոմանց հիւանդացած միտքն առողջացնենք այս ստոյգ համբաւովս և իրանց հաւատացնենք,



Աջից ձախ՝ Մ.Տ. Լորիս-Մելիքով,
Մեծ իշխան Կոնստանտին Նիկոլաևիչ, իշխան Դ.Ի. Սվյատոպոլկ-Միրսկի
(Կարսը գրավելուց հետո)

թէ այնպիսի ձայները փողոցի խաժամուժ և պարապ մարդկանց գործք են և յապացոյց ասել, թէ հրապարակի մէջ մին անցկացած բանը կէսօրի ժամանակը, մինչի երեկոյ հազար կերպ փոփոխութիւն կը ստանայ և բերանոյ ի բերան ընկնելով ձուն սար կը շինուի և սարը ձու, ապա որքան ես առաւել Կոստանդնուպօլսից այնպիսի բազմամարդ մեծ և երեւելի մայրաքաղաքից առ մեզ հասած լուրը և այնքան սարեր, ձորեր ու ծովեր անցկացած կարէ այլ և այլ կերպ ստանալ և էս ականջեն միւս ականջին դիպչելով սուտը ճշմարիտ կտայ համարել և ճշմարիտը սուտ:

«Նամակ առ Կովկասի խմբագրին...»

Ողորմած տէր, ուղարկելով սորա հետ իմ նամակի պատճենը, որ առ Օդեսայի լրագրի խմբագիրն, խոնարհաբար խնդրեմ ձեզանից, որ չէ չասեք և կամաւրիք զետեղել զայն ձեր լրագրումն էլ. որովհետև Օդեսայի լրագիրն այստեղ շատ սակաւ անձիք են ստանում: Իսկ խնդիրն որոյ առարկա է այս թողքը, շատ հարկաւոր է ինչպես իմ համար անձամբ, նոյնպէս և իմ հաւատակից հայրենակցած համար, որ բնակում են Կովկասում:

Միքայել Լորիս-Մելիքեանց

* * *

Ողորմած տէր: Ձեր հրատարակած, «Օդեսսկի վեստնիկ» ասուած լրագրումն համար 46 ձեր Կոստանդնուպոլսի թղթակցի նամակումն ես կարդացի մին գեներալ Մելիխովի անունով համբավ: Որովհետև գեներալ Մելիխով Կովկասեան աշխարքումն չկայ, իսկ Կոստանդնուպօլսում ես էի այդ ժամանակիդ «Լորու-Մելիքյանց», ապա իմ վերայ եմ վեր առնում այս տեղեկութիւնս իմ անձին:

Աչքերիս չէի հաւատում յիշած համարն կարդալով, որպէս թէ ես գնացել եմ Տաճկաստան այն նպատակաւ, որ խօսակցութիւն անեմ երկուց եկեղեցեաց միաւորութեան մասին: Սրանից յետոյ առաջին համբաւն փոխելու համար և որպէս թէ հռչակուած սխալը արդարացնելու ձեր լրագրի 52 համարումն տպագրուած է, որպէս թէ ես ջանք եմ արել երկու պատրիարգութիւնքը միացնելու, այն է էջմիածինը և Վանինը, այսու եղանակաւ, որ առաջնոյն տրվի բոլոր հոգևոր իշխանութիւն Հայոց ազգի վրայ, իսկ յետնոյն բոլոր աշխարհական իշխանութիւնը: Մտադրութիւն շատ զարմանալի, պատճառ որ կարելի՞ է մի թագաւորութեան հպատակի գործ ունենալ աշխարհական բաներում՝ ուրիշ թագաւորութեան պատրիարգութեան հետ:

Իմ անձին կողմանէ ես ամենևին չեմ նեղանում այս համբաւներիցը, որոց ոչ մի խոհական մարդ կարէ հաւատ ընծայել և որք անտեղի են իմ կոչմանը, իմ անձնանուիրութիւնը զդեպի իմ կրոնը, որի մէջ ես ծնել եմ: Բայց այդ անհիմն համբաւներ աներկբայ պարտին վերածնել զանազանատեսակ մտքեր իմ հաւատակցած մէջ ինչպես մեր Ռուսաստանումը, էնպէս էլ Տաճկաստանումը: Ձեզ պ. խմբագիր, իհարկէ, պետք է հասկանալի լինի, թէ ես երբէք չեմ ցանկանում իմ անուամբ անել բարոյական թէև շատ փոքր անհանգստութիւն իմ հաւատակցածը ձեր Կոստանդնուպօլսի թղթակցի անխոհեմութեամբն և այս պատճառաւ ես գրիչ եմ վեր առնում, որ իմ ճշմարտութիւնը հրատարակեմ առանց խառնելոյ միմ հիմնական մտքի հետ:

Անցած տարին ինչպես ազգաւ լուսավորչական հայ ես ուղարկուեցայ ի Կոստանդնուպօլիս, որ առաջը դուրս գամ և ի Կովկասեան կողմն ուղեկից լինիմ ամենայն հայոց նորընտիր կաթողիկոս Մատթէոսին, որով կառավարութիւնն մեր ցանկանայր պատիւ տալ նորուն Սրբազնութեան աստիճանին և Հայոց ազգին: Իսկ այս տարի ես գնացի, որ մեր գաղթական չերքեզների խնդիրը որոշեմ և ոչ որպիսի և իցէ խոսակցութեանց համար եկեղեցւոյ մասին:

Ահա բոլորն զոր կարաց և հարկադրուած եղև ասել ձեր թղթակիցն իմ Կոստանդնուպօլիս լինելու համար: Ես չեմ կամենում հետաքննին լինել, թէ յորպիսի աղբերանց հանում է նա ձեզ հասցրած տեղեկութիւնքն, Տաճկաստանի զանազանացեղ բնակիչ մայրաքաղաքի փողոցներո՞ւմն արդյոք, կամ էն տեղ տպուած օտարազգի օրագրութեանց մէջ, որք վաղուց մեզ ծանօթ են շատ տգեղ և անվայելուչ համբաւներ հնարելովն և բոլորովին հեռու մնալովն մեր աշխարհի գիտութենէն: Ինչպես որ լինի ես խնդրում եմ ձեզ, ողորմած տէր, որ այս համբաւների առաջինյայ միտքը վերստին ոտքի կանգնեցնէք և իմ նամակը տպագրեք ձեր լրագրումն:

Ճշմարիտ յարգութեամբ և այլն՝ Միքայել Լորիսմելիքեանց»:

«Սա լավ աշխատ է...»

1862 թ. դեկտեմբերին փոխարքա Բարյատինսկին վերջապես համոզվեց, որ այլևս անիմաստ է շարունակել պայքարը Ռուսաստանի ռազմական նախարար Միլյուտինի դեմ և հրաժարական տվեց իր պաշտոնից ու անմիջապես մեկնեց արտասահման:

Ալեքսանդր Երկրորդ ցարը լավ էր հասկանում Կովկասի նշանակությունը Ռուսաստանի համար և փոխարքա ուղարկեց իր եղբորը՝ Միխայիլ Նիկոլաևիչին: Միխայիլը Նիկոլայ Առաջին ցարի չորրորդ որդին էր և համարվում էր ռուսական հրետանու բարձրագույն հրամանատարը, թեև այդ գործից նա ոչինչ չէր հասկանում և գերադասում էր զբաղվել մասնավոր կյանքով:

Ստորագրելով Կովկասի փոխարքա նշանակելու հրամանագիրը, ցարը հարկ համարեց եղբորը հիշեցնել, որ իրենց երջանկահիշատակ հայրը իր ամբողջ թագավորության ընթացքում հետևողականորեն զբաղվել է Կովկասում Ռուսաստանի դիրքերն ամրապնդելով:

Գալով Թիֆլիս, փոխարքա Միխայիլ Նիկոլաևիչը սկսեց փոփոխություններ մտցնել երկրամասի կառավարման մեջ: Բարյատինսկու երաշխավորությամբ նա իշխան Դմիտրի Իվանովիչ Սվյատոպոլկ-Միրսկուն Թերեքի մարզի պետի պարտականություններից ազատեց և նշանակեց իր օգնական:

Այդ օրերին ընտանեկան գործերով Թիֆլիս էր եկել Լորիս-Մելիքովը: Տիկին Նինա Իվանովնան պատրաստվում էր երրորդ երեխան ունենալ: Առաջին երկուսը աղջիկ էին և Միքայելը երազանքով ու հուզմունքով սպասում էր տղայի:

1863 թ. մարտի 23-ին բոլոր հարազատները հավաքվել էին Լորիս-Մելիքովների տանը և անհամբեր սպասում էին լավ լուրի: Այդ օրն էլ Միքայելին շտապ հրավիրեցին փոխարքայի նստավայր: Հետագայում հիշելով այդ մասին, Լորիս-Մելիքովը պատմում էր, թե այնքան էր հուզված, որ չի-մացավ, թե ինչպես էր հասել փոխարքայի նստավայր:

Փոխարքան ըդգծված հարգանքով ընդունեց Լորիս-Մելիքովին.

- Միխայիլ Տարիելովիչ, - ասաց փոխարքան, - դուք գիտեք, թե որքան է մեզ անհանգստացնում Թերեքի մարզը, որի մեջ է մտնում նաև Չեչնիան: Չեմ ուզում թաքցնել ձեզանից, որ Թերեքի մարզը շատ գլխացավանք է պատճառել Կովկասի բոլոր կառավարիչներին: Ես ուզում եմ, որ այդ գլխացավից հեռու մնամ:

Լորիս-Մելիքովը կարծես չէր լսում փոխարքային: Նրա ամբողջ մտքերը Նինայի կողմն էին:

- Ահա հրամանը, Միխայել Տարիելովիչ, դուք այսօրվանից Թերեքի մարզի պետ եք նշանակված: Խնդրում եմ անմիջապես մեկնեք մարզ և ինձ ազատեք գլխացավանքից:

Լորիս-Մելիքովը պատվի առավ և ուղղակի դուրս թռավ փոխարքայի առանձնասենյակից: Նոր նշանակումը զուգադիպեց մեծ ուրախության: Այդ օրը Նինան Միքայելին պարգևեց տղա, որին պապի անունով կոչեցին Տարիել:

- Սա լավ նշան է, որդիս բախտավոր կլինի, - հարազատների շնորհավորանքներին համոզված պատասխանում էր երջանիկ հայրը...

Զեկուցագիր Չեչնիայի մասին

1863 թ. ապրիլի սկզբին Միքայելը հրաժեշտ տվեց հարազատներին, տոկունություն մաղթելով կնոջը, փոխարքայի հրամանի համաձայն մեկնեց Թերեքի մարզ:

Այն իրողությունն, որին ծանոթացավ Լորիս-Մելիքովը, վեր էր իր պատկերացումից: Մարզը նա գտավ սարսափելի վիճակում: Տիրում էր ահավոր քաոս: Ոչ մի օրենք չէր գործում: Չէր զգացվում իշխանության

գոյությունը: Ճանապարհներն անտանելի դրության մեջ էին: Չկար հուսալի կապ: Մեծ էր տեղացի բնակչության դժգոհությունը:

Մարզի վիճակի վատացմանը նպաստել էին իշխան Սվյատոպոլկ-Միրսկու ապաշնորհ գործողությունները: Իշխանը նոր նվաճված հողերը, որոնք պետական էին հայտարարվել, էժան գներով վաճառել էր իրեն հարկավոր մարդկանց, տեղիք տալով մեծ դժգոհությունների:

Մի քանի օր շրջելով մարզում, ծանոթանալով իրավիճակին, Լորիս-Մելիքովը համոզվեց, թե մեծամիտ իշխանը ինչի համար էր այդպես ետռանդավ հրաժարվել մարզը ղեկավարելուց:

Իր ուսումնասիրությունների արդյունքով Միխայիլ Տարիելովիչը փոխարքային ուղարկեց զեկուցագիր: Կովկասի փոխարքայի արխիվում պահպանված զեկուցագրում Լորիս-Մելիքովի նշած շատ հարցեր այսօր էլ չեն կորցրել իրենց այժմեականությունը: Այս հանգամանքն էլ նկատի ունենալով արժե այդ զեկուցագրից մի քանի քաղվածք մեջբերել. «Թերեքի մարզի տեղական ցեղերից թվով առավել նշանակալի և ամենից անհանգիստ չեչենական բնակչության ներկա տագնապալի և անորոշ վիճակը հարկադրում է զգուշանալ նոր անկարգություններից, որոնք գլխավորապես տեղի են ունեցել կառավարման այն ծայրահեղ հակասական համակարգի հետևանքով, որը մարզն իր վրա զգացել է կարճատև ժամանակամիջոցում:

Կովկասի նվաճմամբ և Շամիլի գերությամբ բնակչությունը զրկվել է մեր տիրապետության դեմ հենարանից և ինչ որ մի ժամանակ գտնվել է անորոշ վիճակում: Նա նվաճվել է ընդմիշտ, բայց, ըստ էության, դա հպատակվել չի եղել, քանի որ ժողովրդի մոտ համոզմունք չի ստեղծվել, թե Շամիլի իշխանությանն անխուսափելիորեն փոխարինելու է մերը: Սա արտահայտվել է նրանով, որ չեչենական ցեղի մի քանի աուլներ, նույնիսկ, երբ նվաճվել է ամբողջ Դաղստանը, չէին կորցրել իրենց հույսը, թե կխուսափեն նույն ճակատագրից և զենքը վայր են դրել միայն այն ժամանակ, երբ հետագա դիմադրությունը անօգուտ է եղել: Այդ ժամանակ մարզի նախկին պետ, գեներալ-թիկնապահ կոմս Եվդոկիմովը, որից ծածուկ չի մնացել Չեչնիայի այդ տրամադրությունը, պարզ տեսել է, որ նրա բնակչությունը պահանջում է շատ եռանդուն միջոցներ, առանց որոնց դժվար է մարզում ամրապնդել վերջնական հանգստություն: Դրա համար էլ նա ընտրել է չեչենական ժողովրդին յուրատեսակ հատկություններով պայմանավորված համակարգ...

Մեկ միասնական իշխանության իրավունքի մասին հասկացության հետ չհամակերպվող չեչենական ցեղերի նախնադարյան դեմոկրատական կառուցվածքը նույնիսկ Շամիլին էր դրել այն անհրաժեշտության մեջ, որպեսզի կառավարի նրանց միայն վախի և իր ազդեցությանը հակառակվող անձանց մահապատժի ենթարկելու միջոցով: Կառավարման

այսպիսի ձևը մենք չէինք կարող ժառանգել և դրա համար էլ, որպեսզի չեչենները դրվեն այն վիճակում, որում պետք է գտնվեն պարտվածները հաղթողների նկատմամբ և ենթարկվեն օրինական իշխանությանը, կոմս Եվդոկիմովը ուրիշ միջոց չի տեսել, բացի նրանից, որ գործադրել է չեչենների դեմ, կարծես թե նրանք մեզ բոլորովին էլ չէին ենթարկվել, այսինքն, նա վճռել է, այսպես ասած, Չեչնիան նվաճել խաղաղության ժամանակ:

Դրա համար նա անհրաժեշտ է համարել տեղացի բնակչությանը ոչնչացնել, նրան դուրս մղել նախալեռներից և բնակեցնել Փոքր Կաբարդայի հարթ տարածքներում, կամ էլ օգտվել այն ժամանակ Կովկասի մահմեդականների շարժումից և նրանց տեղափոխել Թուրքիա, որպեսզի այդ միջոցով մարզն ազատի անհանգիստ բնակչությունից, որին հաղթահարելու ուրիշ միջոց նա չի տեսել...

Հազիվ այս մտադրությունը սկսել էր իրագործվել, անմիջապես հանդիպել է ժողովրդի դիմադրության: Չեչենները հասկացան, թե ուր են տանում այդ միջոցները և ապագայում սպասվելիքը նրանց մղեց բոլոր ուժերով հակագործողությունների: Լեռնեցիների մեծ մասը, որոնք կարծում էին, թե կհեռանան Թուրքիա, մնացին՝ պատրաստ բացահայտ դիմադրության համար:

Հետո տեղի ունեցան անկարգություններ Արղունի կիրճում և Իչկերիայում: Երևացին մի շարք բանդաներ, հաղորդակցությունը դարձավ վտանգավոր և ամբողջ չեչեն ժողովուրդը մտավ ընդհուպ ապստամբության սպառնացող վիճակի մեջ:

Երբ գործերն այսպիսի ընթացք ստացան, ապա նախկին ուղիով նախատեսված նպատակին հասնելու համար հարկավոր համարվեց ամեն գնով կոտրել ժողովրդի դիմադրությունը: Դա կհասցներ գուցե և նոր երկարատև պայքարի, որն, անկասկած, կավարտվեր մեր օգտին և ընդմիշտ կլուծեր Թերեքի մարզը վերջնականապես հանգստացնելու հարցը: Մենք, թեև զոհողություններով, բայց կհասնեինք նպատակին, թուլացնելով այն ցեղերին, որոնք ճանաչվել են քիչ ընդունակ պետության կազմի մեջ մտնելու և նրա հպատակների շարքերում կանգնելու համար:

Բայց Արևելյան Կովկասը համարվում էր հպատակված և ծագած անկարգությունները մեր սեփական սխալների արդյունք ընդունելու վախը հարկադրեց փոխել ընդունված համակարգը:

Այս ամենը դադարեցվեց և կոմս Եվդոկիմովը ետ կանչվեց Կուբանի մարզ: Նրա օգնական գեներալ Կեմպֆորդը, թեև ռազմական տեսակետից գործել է հաջողությամբ, բայց ի վիճակի չի եղել վերջնականապես իրականացնել կոմսի նախատեսածը և տեղացի բնակչությանը բերել ցանկալի դրության մեջ:

Կոմս Եվդոկիմովը վերջնականապես մեկուսացվեց Թերեքի մարզի գործերին միջամտելուց և այն հանձնեց իշխան Միրսկուն, որը Չեչնիան

այլ միջոցներով հանդարտեցնելու հնարավորության մեջ համոզված, ընդունեց միանգամայն հակառակ գործողությունների միջոցը...»:

Այնուհետև նկարագրելով իշխան Սվյատոպոլկ-Միրսկու գործողությունները և դրանց հետևանքները, գեներալ-լեյտենանտ Լորիս-Մելիքովն ընդգծում էր. «Եթե Չեչնիան խաղաղեցնելու կոմս Եվդոկիմովի ձեռնարկումները կիսատ չթողնվեին և, կտրուկ չփոխվեին, ապա այժմ շարունակելով նրա գործողությունները, հնարավոր է, որ հասնենք վերջնական արդյունքի»:

«Ընտրեք միայն արդարամիտներին...»

Նկարագրելով Չեչնիայում տիրող իրավիճակը, Լորիս-Մելիքովը զեկուցագրով դնում էր ազատ գործելու հնարավորություն ստանալու անհրաժեշտությունը: Փոխարքան համոզվեց դրանում և Լորիս-Մելիքովին ուղարկեց հրաման՝ «Գործեք համարձակ ձեր ծրագրին համապատասխան»:

Լորիս-Մելիքովն անմիջապես ձեռնամուխ եղավ իր ծրագրի իրականացմանը: Նա սկսեց վարել այնպիսի քաղաքականություն, որն իր հիմքում ամբողջապես տարբերվում էր իշխան Միրսկու և կոմս Եվդոկիմովի գործելակերպից:

Իշխան Միրսկու ձեռնարկածն իրականում նշանակում էր, որ որևէ միջոցառում չի կատարվել: Եթե Եվդոկիմովը Չեչնիային վերաբերվում էր այնպես, որ կարծես թե նվաճված ու հպատակված չէ, ապա Միրսկին համարում էր, որ Չեչնիայում բնակվում են բարի ու օրինապաշտ քաղաքացիներ: Եվ երկու դեպքում էլ եղած պրոբլեմները մնալով չլուծված, ավելի էին խորացել, օր-օրի մեծացնելով վտանգը:

Կշռադատելով ստեղծված իրավիճակը, Լորիս-Մելիքովն առաջին հերթին կարողացավ համոզել մի քանի տասնյակ ընտանիքների տեղափոխվել Թուրքիա: Այնուհետև վերանայվեց Վլադիկավկազի կազակային գնդի տեղավորման խնդիրն, ելնելով չեչենների մոտ եղած զենքի առկայությունից:

Սակայն Լորիս-Մելիքովն իր գլխավոր գործը համարեց 1861 թ. գյուղացիական ռեֆորմի իրականացումը Չեչնիայում: Դա համարձակ քայլ էր, քանի որ ռեֆորմից անցել էր բավական ժամանակ և ցարական իշխանությունը մտադրություն չուներ այն Կովկասում իրականացնել:

Չեչնիայում իրականացնելով 1861 թ. գյուղացիական ռեֆորմը, Լորիս-Մելիքովը փաստորեն Կովկասում առաջինը գյուղացիներին ազատագրեց ճորտատիրական կախումից ինչպես ռուսական բնակավայրերում, այնպես էլ լեռնային աուլներում:

Տեղացի խոշոր հողատերերն այնպես հանկարծակի եկան Լորիս-Մելիքովի վճռական գործողություններից, որ նույնիսկ չկարողացան որևէ

դիմադրություն ցույց տալ: Ցեղային առաջնորդները կորցրին իրենց ուժն ու հեղինակությունը: Ժողովրդի մեծամասնությունն ազատվեց դարերով հաստատված ճորտական կախվածությունից և հնարավորություն ստացավ իր տնտեսական դրությունը լավացնելու համար, որն ոտնահարվել էր տեղական ավագանու գիշատիչ ձգտումների հետևանքով:

Լորիս-Մելիքովի ձեռնարկումները համահունչ էին լեռնականների նահապետական դեմոկրատիային և դրա շնորհիվ էլ Թերեքի մարզը կառավարելու 12 տարիների ընթացքում նա ձեռք բերեց մեծ հեղինակություն: Ամենուրեք նրա անունն արտասանվում էր ջերմությամբ ու շնորհակալական զգացումով:

Կատարված ձեռնարկումների շնորհիվ ստեղծվեց նոր իրավիճակ և դա արագորեն նպաստեց Չեչնիայում հանգստության հաստատմանը: Լորիս-Մելիքովը կազմակերպեց գյուղական համայնքներ, մտցրեց գյուղական դատարաններ ոչ միայն գյուղերում ու ստանիցաներում, այլև հեռավոր լեռնային աուլներում:

Լորիս-Մելիքովի ենթակա չինովնիկները տարակուսանքով էին վերաբերում վերոհիշյալ ձեռնարկումներին: Նրանց գեներալը հանգստացնում էր, ասելով.

- Լեռնային արծիվներին պետք է ինքնուրույն թռչելու հնարավորություն տալ:

Աուլների բնակիչներին հաճելի զարմանք պատճառեց, որ Լորիս-Մելիքովը դատավորներին չնշանակեց և լեռնականներին նրանց ընտրելու հնարավորություն տվեց.

- Ընտրեք միայն արդարամիտներին, - պահանջել էր նա:

Լորիս-Մելիքովի հրամանի համաձայն բնակիչներն ընտրեցին նաև համայնքների ղեկավարներին ու հարկահավաքներին: Թերեքի մարզի պետը այնպիսի եռանդով ու հաստատակամությամբ էր Չեչնիայում իրականացնում բարեփոխումների իր ծրագիրն, որ նրան նույնիսկ չկասեցրեց 1866 թ. Պետերբուրգում Ալեքսանդր Երկրորդի դեմ Կարակոզովի մահափարձից հետո առաջացած շփոթվածությունը:

Լորիս-Մելիքովի ձեռնարկած միջոցների արդյունքները շատ հուսադրիչ էին: Դադարեց արյունահեղությունը, պետության օրենքները սկսեցին գործել:

Լեռնականների հոգսերը թեթևացնելու հետ միասին Լորիս-Մելիքովը մեծ ուշադրություն էր դարձնում նաև կազակների դրության բարելավմանը: Նա կարողացավ ոչ միայն պահպանել կազակների մարտական ավանդույթները, բարձրացնել նրանց բարոյական ոգին ու մտավոր զարգացման մակարդակն, այլև առանց վնասելու նրանց ռազմի կամքին, դարձնել քաղաքացիներ: Եվ այս ամենի շնորհիվ Թերեքի կազակները խոր հավատով ու հարգանքով լցվեցին Լորիս-Մելիքովի նկատմամբ:

Ալեքսանդր Երկրորդ ցարը բարձր գնահատեց Լորիս-Մելիքովի ծառայությունը և նրան նշանակեց Թերեքի կազակների զորքի շարքում, Կովկասում գտնվող կազակային ամենաքաջարի գնդի շեֆ...

Գեներալ Է-ն

Չեչնիայում Լորիս-Մելիքովը հասավ մեծ հաջողությունների, միաժամանակ պայքարելով չարաշահումների դեմ, առանց որի չէին պատկերացնում իրենց կյանքն իշխան Միրսկու կողմից նշանակված շատ չինովնիկներ: Նրանց մեջ առանձնապես աչքի էր ընկնում Լորիս-Մելիքովի օգնական գեներալ է-ն /հուշագիրը հարկ չի համարել հիշատակել այդ գեներալի լրիվ ազգանունը/, որն իր մարդկանց միջոցով մարզի պետի մասին տարածում էր կեղծ լուրեր, փորձելով վարկաբեկել ու այդ կերպ ձախողել բարեփոխումների իրականացումը: Գեներալ է-ն նախանձ, չարամիտ ու գռփելու սովոր մարդ էր: Բոլոր միջոցներն օգտագործում էր Լորիս-Մելիքովի տակը քանդելու համար, զբաղվում էր բամբասանքով և Թիֆլիս էր հասցնում իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ:

Սկզբնական շրջանում, Լորիս-Մելիքովը բնավորության համաձայն չէր չարանում իր օգնական գեներալի վրա, նրա արարքները համարելով մարդկային թուլության հետևանք: Բայց ամեն ինչ, այդ թվում նաև անհիշաչար Լորիս-Մելիքովի համբերությունը, սահման ուներ:

Նա հրավիրեց գեներալ է-ին, ցույց տվեց նրան մերկացնող փաստերը և ասաց.

- Ձեր առջև կա երկու ուղի՝ ազնվաբար ծառայել կամ հրաժարական տալ:

Գեներալն ընտրեց երկրորդ ուղին: Հրաժարական տվեց ու մեկնեց ժնև: Այստեղ նա Սելդերեցկու ազգանվամբ Լորիս-Մելիքովին վարկաբեկելու նպատակով հրապարակեց մի գրքույկ: Այդ գրքույկն իրականության չհամապատասխանող այնպիսի հիմարություններով էր լցված, այնպես անտաղանդ էր գրված, որ բովանդակությունից ու ոճից պարզ էր դառնում, թե ով է այդ կեղծիքի հեղինակը: Շուտով կեղծիքը բացվեց, պարզվեց նաև դրա հեղինակը: Գեներալ է-ին ոչինչ չէր մնում անելու և խայտառակությունից փրկվելու համար դիմեց ինքնասպանության...

Մուսա Գունդուխով

Չնայած Լորիս-Մելիքովի հաստատած համընդհանուր հանգստության, շուտով Չեչնիայում խլրտում սկսվեց: Չեչնիայում նորից սկսեց բորբոքվել մոլեռանդ մահմեդական քարոզչությունը: Աչալուրջ Լորիս-Մե-

լիքովն անհապաղ գործի անցավ: Նրան հաջողվեց պարզել, որ իր մերձավոր օգնական Մուսա Կունդուխովը երկակի խաղ է անում և խռովարարների ոգևորողը հենց նա է և ոչ թե մոլաները:

Մուսա Կունդուխովը դաստիարակվել էր Պավել Առաջինի ցարի անվան կադետական կորպուսում, որտեղից էլ դուրս էր եկել որպես գվարդիական կորնետ: Փոխգնդապետի աստիճանով աչքի էր ընկել Վարշավայում, լեհական ապստամբությունը ճնշելու ժամանակ և նշանակվել Նիկոլայ Առաջինին ուղեկցող ջոկատում: Ղրիմի պատերազմի ժամանակ Կունդուխովը որսորդների ջոկատներից մեկի հրամանատարն էր և ուղղակի ենթարկվում էր Լորիս-Մելիքովին: Հաշվի առնելով Կունդուխովի արիությունը, Լորիս-Մելիքովը նրան ներկայացրել էր Աննա շքանշանի երկրորդ աստիճանով պարգևատրման:

Ղրիմի պատերազմի ավարտից հետո Կունդուխովը վերադարձավ Կովկաս և որպես գնդապետ ակտիվ մասնակցեց ցեղակիցների դեմ պատժիչ գործողություններին: 1859 թ. գեներալ կոմս Եվդոկիմովի երաշխավորությամբ Կունդուխովը նշանակվեց Թերեքի մարզի Վլադիկավկազի օկրուգի պետ և ստացավ գեներալ-մայորի աստիճան:

Կունդուխովը փառասեր էր: Նրան պարզ էր դառնում, որ ռուսական ծառայության մեջ մնալով, ավելին ձեռք չի բերի, մինչդեռ երազում էր փառաբանվել, ինչպես Շամիլը, դառնալ Մեծ ու Փոքր Չեչնիայի և ապագայում նաև անբողջ Դաղստանի իմամ:

Իր գործակալների միջոցով պարզելով ամեն ինչ, Լորիս-Մելիքովը հրավիրեց Կունդուխովին: Սիրալիր ընդունելով օգնականին, Լորիս-Մելիքովը նրանից սկսեց հետաքրքրվել այդ ժամանակ Չեչնիայում տարածված Զիկրի կոչվող մահմեդական տեսությամբ: Ըստ այդ տեսության, մեծ մեղք էր համարվում աղոթել այն հողի վրա, որը պղծվել էր անհավատների կողմից: Եվ այդ պատճառով բազմաթիվ ընտանիքներ ցանկություն էին հայտնել տեղափոխվել Թուրքիա:

- Այո, - համաձայնվեց Կունդուխովը, - դրանում առկա է անմիտ մոլեռանդությունը, ինչպե՞ս չի կարելի իրենց նախնիների հայրենիքում աղոթք անել:

- Բայց Կովկասի շատ մահմեդականներ հավատում են այդ կրոնական ուսմունքին և բոլորն էլ ուզում են Թուրքիա տեղափոխվել, - ասաց Լորիս-Մելիքովը և Կունդուխովին հարցրեց, - արդյո՞ք հնարավոր չէ կանխել Թուրքիա հազարավոր մեկնողների ցանկությունը:

Լորիս-Մելիքովն էլ գիտեր, որ դա հնարավոր չէր և լսելով Կունդուխովի պատասխանը՝ «Գնում են, թող գնան», նրան հայտնեց իր առաջարկությունը.

- Հարկավոր է Թուրքիա տեղափոխելը կազմակերպված իրականացնել: Այս կարևոր գործում անհրաժեշտ է ունենալ մեկին, որը ոչ միայն հե-

ղինակություն ունենա հավատացյալների, այլև թուրքական կառավարության մոտ:

Կունդուխովի հարցին, թե ո՞վ է այդ անձը, Լորիս-Մելիքովը պատասխանեց.

- Այդ անձը դու ես, Մուսա, հավատացյալներն ոչ ոքի այնպես չեն հարգում և ընդունում, ինչպես քեզ:

Լորիս-Մելիքովն ուշադրությամբ հետևում էր, թե իր խոսքերն ինչպիսի ազդեցություն են թողնում փառասեր Կունդուխովի վրա և թույլ չտալով, որ նա ուշքի գա, ավելացրեց.

- Ինձ հայտնի է դարձել, որ դու կարող ես ամբողջ Չեչնիան ոտքի հանել: Բայց, իհարկե, ես չեմ հավատում, որ քո նման խելացի ռուսական գեներալի մտքում այդպիսի պարզամիտ ու հիմար մտքեր առաջանան: Դու նաև լավ ես հասկանում, որ մենք երբեք թույլ չենք տա, որ հանդես գա ինչ որ երկրորդ Շամիլ...

Լորիս-Մելիքովն այս կերպ ուղղակի Կունդուխովին հասկացրեց, որ ինքը տեղյակ է ամեն ինչից և խոսակցությունն ավարտեց Կունդուխովին առաջարկելով գլխավորել Կովկասի մահմեդականներին Թուրքիա տեղափոխելու գործը:

Հեռանալով Լորիս-Մելիքովի մոտից, Կունդուխովն իր համար պարզեց, որ այլևս հեռանկար չունի ռուսներին ծառայելը և մեծապես վտանգված է իր ամբողջ ճակատագիրն, ուստի միակ ելքը մնում է մահմեդականների տեղափոխումը կազմակերպել և նոր միջավայրում հասնել բարձր դիրքի:

Հեռանկարով ոգևորված Կունդուխովն անցավ գործի: Սկսեց մերձենալ Զիկրի ուսմունքի քարոզիչներին, հանդիպեց Թիֆլիսում և Վլադիկավկազում գտնվող թուրքական հյուպատոսներին ու նրանց հետ գաղտնի բանակցություններ վարեց...

Անցավ մի քանի ամիս: Լորիս-Մելիքովն ուշադրությամբ հետևում էր Կունդուխովի գործողություններին: Մարզի պետը իր մտադրությունն իրականացնելու գործում չէր սխալվել: Շուտով Կունդուխովը խնդրեց ընդունելություն: Նա Լորիս-Մելիքովին հայտնեց իր ցանկությունը՝ պատրաստ է ընդունել գեներալի առաջարկությունը, եթե ցարը իրեն ազատի ծառայությունից:

Կարճ ժամանակ անց ստացվեց փոխարքայի համաձայնությունը և Թուրքիա տեղափոխվեց Կունդուխովը, իր հետ տանելով 27 հազար ընտանիք, նրանց ղեկավարելու հույսը փայփայելով...

Մինչդեռ Կունդուխովի հաշիվներն ու հույսերը չէին համապատասխանում թուրքական կառավարության ծրագրերին: Թուրքիայում էլ Կունդուխովը չհասավ իր նպատակներին և հարկադրված մեկուսացավ Էրզրումի սանջակում գտնվող Սվազում...

Կովկասի փոխարքան ցարի ու իր անունից հատուկ շնորհակալություն հայտնեց Լորիս-Մելիքովին դիվանագիտական հնարամտության համար:

Այսպես, գեներալ-նահանգապետի իրավունքով Թերեքի մարզի կառավարիչ Լորիս-Մելիքովին հաջողվեց խաղաղ միջոցներով մարզից հեռացնել խռովարարների կազմակերպչին ու նրա կողմնակիցներին:

Ազդեցության կարևոր միջոցներից մեկը

Լորիս-Մելիքովը չբավարարվեց Չեչնիայում տնտեսական ու վարչական ռեֆորմների իրականացմամբ: Նա հասկանում էր, որ լեռնական ժողովուրդներին լրիվ հպատակեցնելու, կայսրության օրինապաշտ քաղաքացիներ դարձնելու գործում կարևոր դեր են խաղում կրթությունը, մշակույթը: Դրանց միջոցով տեղաբնակիներին ռուսական մշակույթի հետ կապելը Լորիս-Մելիքովն առաջնահերթ խնդիր էր համարում ոչ այնքան նրանց ռուսականացնելու /ինչպես վարվել էին իրենից առաջ/, որքան զարգացման ավելի բարձր մակարդակի հասցնելու համար:

1866 թ. Լորիս-Մելիքովը Վլադիկավկազում հիմնեց արհեստագործական ուսումնարան, որտեղ աշակերտները ձեռք էին բերում տեխնիկական գիտելիքներ, հմտանում երկրագործության, ատաղձագործության, փականագործության մեջ:

- Ապագան տեխնիկայինն է, - ասում էր նա, - և մենք պետք է լավ մասնագետներ ունենանք:

Ուսումնարանում, որը գործում էր Լորիս-Մելիքովի միջոցներով,ընդունելության գործում խտրականություն չկար: Նա առանձնակի ուշադրություն էր դարձնում, որպեսզի այդ ուսումնարանում կրթությունը շարունակեն տեղի հայկական ծխական դպրոցն ավարտածները: 1883 թ., երբ Լորիս-Մելիքովը վերադարձավ արտասահմանից, եղավ Վլադիկավկազում, այցելեց իր հիմնադրած ուսումնարան և շատ վշտացավ, որ տեղի հայ ծնողներն իրենց զավակներին ծխական դպրոցն ավարտելուց հետո չեն տեղավորում ուսումնարանում՝ ուսումը շարունակելու: Այդ ժամանակ արդեն ուսումնարանը կոչվում էր Լորիս-Մելիքովի անունով:

Անչափ արգասաբեր եղավ Լորիս Մելիքովի գործունեությունը հատկապես ժողովրդական կրթության ասպարեզում: Նա Թերեքի մարզում առաջին վեց տարիներին հիմնեց կլասիկական և ռեալական դպրոցներ, ուսուցչական սեմինարիաներ, արհեստագիտական ուսումնարաններ, իգական դպրոցներ: Յուրաքանչյուր բնակավայր, ամեն փոքր ի շատե նշանավոր լեռնային աուլ ունեցավ իր տարրական դպրոցը: Լորիս-Մելիքովին հաջողվեց ստեղծել 300-ից ավելի ուսումնական հաստատություն, որտեղ սովորողների թիվը կազմում էր 4-5 հազար աշակերտ:

1872 թ. Լորիս-Մելիքովի ջանքերով Վլադիկավկազի կենտրոնում կա-

ռուցված հոյակապ շենքերում, որն այսօր էլ հիացնում է իր ճարտարապետական գեղեցկությամբ, հիմնադրվեց ռուսական թատրոն: Թատրոնի շենքում առաջին ներկայացմանը ներկա գտնվող Լորիս-Մելիքովը դժվարությամբ էր թաքցնում իր հուզմունքը...

Թերեքի մարզի զարգացմանն ուղղված ոչ մի հարց չէր վրիպում Լորիս-Մելիքովի ուշադրությունից: Լեռնականների ու կազակների համար Վլադիկավկազում ու Նալչիկում նա հիմնեց ազնվացեղ նժույգների բուծարան: Մարզում ստեղծեց 200-ից ավելի գործարան: Արդյունաբերության զարգացումը շատ կարևոր դեր խաղաց մարզի տնտեսական կյանքի աշխուժացման գործում, որին նպաստեցին բանկերի հիմնումը, նոր ճանապարհների ստեղծումն, առևտրի ծավալումը:

Թերեքի մարզի զարգացման գործում անգնահատելի դեր խաղաց Դոնի Ռոստով-Վլադիկավկազ երկաթուղին, որի կառուցման համար Լորիս-Մելիքովը հսկայական ջանքեր ներդրեց:

Չեչնիայից հեռացած լեռնականները լսելով, որ իրենց հայրենիքում կյանքը մտել է կանոնավոր հունի մեջ, որ ռուսական իշխանությունը մարդկանց կրոնական հալածանքի չի ենթարկում, սկսեցին մասսայաբար Թուրքիայից ետ վերադառնալ: Մի ժամանակ նրանք Լորիս-Մելիքովի կարգադրությամբ գաղթեցին Թուրքիա, իսկ այժմ էլ նրա գործունեության շնորհիվ հնարավորություն ստացան հայրենիք վերադառնալ:

Լորիս-Մելիքովի ձեռնարկած միջոցներն այնքան արդյունավետ էին, որ փոխարքա Միխայիլ Նիկոլաևիչը ցարին ուղարկած զեկուցագրում խոստովանում էր, թե Կովկասում ռեֆորմները սկսվեցին Թերեքի մարզում և հետո նոր տարածվեցին ամբողջ երկրամասում:

Չեռք բերած հաջողությունների համար Լորիս-Մելիքովն արժանացավ Ալեքսանդր Երկրորդի հատուկ բարեհաճությանը: Նրան իբրև նվեր ցարը տվեց Սև ծովի ափին մի կալվածք, որը երբեք չօգտագործվեց և հետո շատ համեստ գնով վաճառեց ոչ անհայտ Մ. Կատկովին:

«Երեք պատ և վատ ծածկ...»

Չնայած բազմակողմանի զբաղվածությանը, Լորիս-Մելիքովը չէր մոռանում Լազարյան ճեմարանից ստացած իր հետաքրքրությունը պատմության նկատմամբ: Նրան հատկապես հետաքրքրում էր ամբողջ Կովկասի, հատկապես Հյուսիսային Կովկասի պատմությունը և երկրամասի նկատմամբ Ռուսաստանի վարած քաղաքականությունը:

Այս առումով առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Լորիս-Մելիքովի «Կովկասի կառավարիչների մասին» պատմագիտական հետազոտությունն, որը տպագրվել է 1873 թ. «Ռուսկիյ արխիվ» ամսագրի առաջին գրքում: Լորիս-Մելիքովն իր հետազոտությունն ուղեկցել է բազ-

մաթիվ ծանոթագրություններով, որոնք վկայում են զանազան արխիվներում նրա կատարած պրպտումների մասին:

Լորիս-Մելիքովն իր հետազոտությունը սկսում է 1768-1774թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո կատարված իրադարձությունների համառոտ շարադրանքով: Պատշաճ գնահատելով իշխան Գրիգորի Պոտյոմկինի, Ալեքսանդր Վասիլևիչ Սուվորովի և մյուսների դերը Կովկասի կառավարումը կարգավորելու գործում, այնուամենայնիվ, Լորիս-Մելիքովն այդ ժամանակաշրջանի Կովկասը Ռուսաստանի համար նմանեցնում էր «մի տան,որը ուներ երեք պատ և վատ ծածք»:

Հանգամանորեն անդրադառնալով Կովկասի փոխարքայության ստեղծմանը, նա նշում էր այդ գործում իշխան Գ. Պոտյոմկինի ազգական Պավել Պոտյոմկինի դերը:

Կովկասի փոխարքայության պատմությունը Լորիս-Մելիքովը քննում է հինգ ժամանակաշրջանների սահմաններում:

1. 1785-1790 թթ. երկրամասի քաղաքացիական և ռազմական գործերը վարում էր փոխարքան իր օգնականներով: Այդ ժամանակաշրջանում Պ. Պոտյոմկինն, որպես Կովկասի առաջին փոխարքա, իր գործունեությամբ, ինչպես նշում է Լորիս-Մելիքովն, «ընդմիշտ երկրամասի պատմության մեջ կհիշվի արժանի հարգանքով»:

Խոսելով Պ. Պոտյոմկինի դրական գործունեության մասին, Լորիս-Մելիքովը հատկապես ընդգծում է Հյուսիսային Կովկասում հայերի նկատմամբ նրա վերաբերմունքը: «Հայերի նկատմամբ, -գրում է Լորիս-Մելիքովը, -որոնց մեր կառավարության կողմից թույլ էր տրվել վերաբնակվել Կովկասի նահանգ, կոմս Պ. Ս. Պոտյոմկինը ձեռնարկել է գործուն միջոցներ նրանց լավ տեղավորելու համար, քանի որ նրանք առևտրի մեջ իրենց ուշիմությամբ կարող էին լեռնականների հետ մերձենալու գործում լինել լավագույն ուղեկցողներ մեր քաղաքների, արդյունաբերական և առևտրական հարաբերությունների մեջ»:

2. 1790-1802թթ., երբ երկրամասի քաղաքացիական վարչությունը տեղափոխվում է Աստրախան: Կառավարիչները կրել են փոխարքայի, Կովկասյան գծի զորամասերի հրամանատարների կոչումներ:

3. 1802-1822 թթ., երբ Կովկասյան նահանգը նորից առանձնացվում է Աստրախանից և նահանգի կենտրոն է դառնում Գեորգիևսկը: Վարչական գործունեությունը կենտրոնացվել է Վրաստանում և Կովկասյան գծում գտնվող գլխավոր հրամանատարին ենթարկվող քաղաքացիական նահանգապետների ձեռքը:

4. 1822-1847 թթ., երբ Կովկասի նահանգը վերանվանվում է մարզ: Մարզի կենտրոնը Գեորգիևսկից տեղափոխվում է Ստավրապոլ, որտեղ զինվորական ու քաղաքական վարչությունները կառավարում են մարզերի պետերը՝ Վրաստանի գլխավոր հրամանատարի իրավասության տակ:

5. 1847 թվականից սկսած, երբ Կովկասյան մարզը վերանվանվում է Ստավրապոլի նահանգի, որը ղեկավարում էր ռուսական կայսրության ընդհանուր նահանգային հիմնարկության կողմից:

Դժբախտաբար, առայժմ մեզ չի հաջողվել գտնել Լորիս-Մելիքովի պատմագրական ուսումնասիրության շարունակությունը:

«Լսում էին, ինչպես երաժշտություն...»

Հետագայում, երբ 1887թ. պաշտոնանկությունից հետո Լորիս-Մելիքովը հարկադրաբար ապրում էր արտասահմանում, չթուլացող ուշադրությամբ շարունակում էր հետևել Կովկասում Ռուսաստանի քաղաքականությանը և ցավով նշում, որ ռուսական հասարակությունն իրեն հատուկ անտարբերությամբ վճռականորեն ոչինչ չի անում, որպեսզի Կովկասը սերտորեն կապվի Ռուսաստանի հետ:

Լորիս-Մելիքովի հետ զրույցները գրի է առել պրոֆեսոր Ն. Բելոգոլովը: Ստորև բերում ենք վերոհիշյալ հարցի մասին Լորիս-Մելիքովի խոսքերը. «Կառավարությունն արել է ամեն ինչ, որքան կարողացել է զենքի ուժով Կովկասը ամրացնել կայսրությանը, բայց որպեսզի այդ միավորումը վերածվի ամուր, անխզելի կապի, անհրաժեշտ է մշակութային ազդեցություն, հարկավոր է, որպեսզի ռուս մարդիկ և կապիտալը ձգտեն այդ բարեբեր երկրամաս և այնտեղ հաստատվեն որպես հողատերեր, արդյունաբերողներ և ֆաբրիկանտներ: Քանի անգամ եմ ես այս մասին ասել մոսկովյան վաճառականներին ու ազդեցիկ անձանց. լսում են, համաձայնվում են, բայց չեն շարժվում իրենց ամուր նստած տեղից: Իսկ օտարերկրացիներն, ինչպես ճանճը մեղրի վրա, կպչում են Կովկասի անսպառ հարստություններին, խծկվում են ամեն տեղ, բնակիչների հետ կնքում ինչ-որ երկարաժամկետ պայմանագրեր և աստիճանաբար ամեն ինչ գցում են իրենց ձեռքը: Դեռ շնորհակալություն պետք է հայտնել երկրամաս վերաբնակված մոլականներին, որոնք միակ ռուս կուլտուրտրեգերներն են և իրենց աշխատասիրությամբ ու ազնիվ բարքերով պաշտպանել են ռուսական անվան բարի հեղինակությունը, բարերար կերպով ազդել են իրենց կողք-կողքի ապրող վայրի ցեղերի վրա և օգնել են նրանց մերձենալու Ռուսաստանի հետ: Բայց այդ ազդեցությունը շատ աննշան է քանակական իմաստով և չափից ավելի միակողմանի որակական իմաստով: Մինչդեռ անհրաժեշտ է, որպեսզի ռուսական ազդեցությունն ընթանա և անընդհատ ու լայն հոսքով լցվի , որպեսզի երկրամասի հարստությունները չմնան թաքնված և արդյունապես մշակվեն:

Մինչև այսօր Անդրկովկասյան նահանգներում համարյա չկան քաղաքային և գյուղական ունեցվածք ունեցող ռուս սեփականատերեր: Եվ այս իրավիճակը բազմիցս առաջ է բերել նույնիսկ արտասահմանյան մամու-

լի զարմանքը, մինչդեռ այդ նահանգներում կան հիանալի հողերի տիրող բազմաթիվ մահմեդական բեկեր ու աղալարներ, որոնք այն վատ են մշակում և պատրաստ են հենց այժմ չնչին գնով վաճառել: Նրանք գյուղատնտեսությամբ զբաղվելու հակում չունեն, զբաղված են բացառապես գողերին ու ավազակներին հովանավորելով և դրանով ավելի շատ խանգարում կարգի ու անվտանգության ապահովմանը:

Կովկասում վաղուց ընդունված է, որ իսլամը չի հաշտվում ժամանակակից քաղաքակրթության հետ, մեր իրավական ու բարոյական հասկացությունները հաճախ հակառակ են գնում մահմեդական դավանաբանությանն, ինչպես օրինակ, կեղծ վկայությունը մեզ մոտ համարվում է հանցանք, բայց մահմեդականի հասկացությամբ հանցագործության կոծկելը և կրոնակցի օգտին կեղծ ցուցմունք տալն աստվածահաճո գործ է: Ահա. թե ինչու հատկապես ցանկալի է, որպեսզի, շուտ դուրս մղեն այդ բոլոր խոշոր սեփականատեր բեկերին և դրանով հավասարակշռեին քրիստոնյա տարրի գերակայությունը մահմեդականների վրա, հենց ցանկալի է, որպեսզի դուրս մղումը կատարվի ոչ թե բռնությամբ ու ոչ կառավարական միջոցներով, այլ խաղաղասեր ճնով և ռուսական հասարակության ձեռներեց անդամների սեփական նախաձեռնությամբ:

Եվ հարկավոր է շտապել, ժամանակը չի սպասում, քանի որ Կովկասում մեր դրությունն ոչ միայն չի ամրապնդվում և մնում է անկանխատեսելի տարբեր պատահականությունների կողմից վտանգված, իսկ մենք մեր անտարբերությամբ ավելի ու ավելի ենք պակասեցնում Կովկասի ժողովուրդների համակրանքը Ռուսաստանի նկատմամբ, համակրանք, որը նախկին ժամանակներում ավելի ջերմ էր ու անկեղծ:

Երբ 1840-ական թվականներին Կովկաս վերադարձա, իմ ազգակիցները հիացան միայն նրանով, որ ես լրիվ յուրացրել էի ռուսական վարվելակերպը և գերազանց խոսում ռուսերեն լեզվով: Հիշում եմ, թե հայկական ու վրացական միջավայրում ինձ դիտմամբ խնդրում էին խոսել ռուսերեն և իմ ուղիղ ու մաքուր խոսքը լսում էին ինչպես երաժշտություն»:

Հանդիպում Միխայիլ Պոգոդինի հետ

Լորիս-Մելիքովի առողջական վիճակը շատ էր ծանրացել և կնոջ՝ Նինայի թախանձագին պնդման արդյունքով նա դիմեց փոխարքային, խնդրելով արձակուրդ բուժման նպատակով:

Մեծ իշխան, Կովկասի փոխարքա Միխայիլ Նիկոլաևիչը հաշվի առնելով Լորիս-Մելիքովի անբասիր ծառայությունը, նրա համար միջնորդեց հաջորդ գինվորական աստիճանը՝ գեներալ-հեծելազորային և 1875 թ. ապրիլի 17-ին թույլ տվեց մեկնել բուժման:

Լորիս-Մելիքովը տիկնոջ հետ մեկնեց արտասահման՝ էմս քաղաք, որ-

տեղ կար բուժիչ հանքային ջուր և հնարավոր էր ապաքինել երիտասարդ տարիքից իրեն անհանգստացնող բրոնխներն ու թոքերը:

Հյուրանոցում տեղավորվելուց հետո Լորիս-Մելիքովը ծառայողից հետաքրքրվեց, թե ռուսներից արդյոք կա՞ն հանգստավայրում: Պարզվեց, որ այդ հյուրանոցում Ռուսաստանից շատ եկվորներ կան: Լորիս-Մելիքովի ուշադրությունը գրավեց Կոշելև ազգանունը:

Լորիս-Մելիքովը չսխալվեց. դա հայտնի Ալեքսանդր Իվանովիչ Կոշելևն էր, Ռուսաստանում մեծ հետաքրքրություն առաջացրած «Մեր դրությունը» գրքի հեղինակը: Նա էլ էր կարդացել այդ գիրքը, որտեղ արտահայտված շատ մտքերի հետ համաձայն էր:

Կոշելևի հետ ծանոթությունը տեղի ունեցավ Լորիս-Մելիքովի նախաձեռնությամբ: Եվ մի օր էլ Կոշելևը Լորիս-Մելիքովին հրավիրեց իր մոտ ճաշի: Այստեղ էլ նա ծանոթացավ նշանավոր պատմաբան Միխայիլ Պետրովիչ Պոգոդինի հետ: Օրեր շարունակ նրանք հանդիպում էին՝ պատմաբան Պոգոդինը, տնտեսագետ Կոշելևը և գեներալ Լորիս-Մելիքովը: Նրանք զրուցում էին տարբեր թեմաների շուրջ, որոնք վերաբերում էին Ռուսաստանին ու նրա ապագային:

- Ռուսաստանը, - ասաց Պոգոդինը, - այնպիսի երկիր է, որը ոչ մի զարգացման աստիճանականություն չի ընդունում: Նրան հարկավոր է ամեն ինչ, կամ՝ ոչինչ: Շարժման համար այսօր Ռուսաստանին հարկավոր է Պյոտրը մահակով:

- Իսկ Ռուսաստանին կանգնեցնելու համար՝ Նիկոլայ Պալկին, - նկատեց Կոշելևը:

Պոգոդինը շատ էր սիրում խոսել Մեծ Նովգորոդի վեչեի մասին և նշում, թե որքան Ռուսաստանին անհրաժեշտ է ունենալ պառլամենտ՝ «ընդհանուր զեմստվոյական դումա»:

- Բայց ինչպե՞ս կարելի է ինքնակալության պայմաններում համաձայնվել պառլամենտի գոյությունը, թեկուզ ինչ անուն էլ դրան տրվի, - չհամաձայնվեց Կոշելևը:

Կոշելևը չէր համաձայնվում Պոգոդինի հետ և գտնում էր, որ պառլամենտը վճռական ձայն չպետք է ունենա: Նա մի նպատակ պետք է ունենա՝ ցարին հասցնի ճշմարտությունը Ռուսաստանի մասին, իսկ հասարակությանը՝ տեղական կարիքների մասին:

- Իսկ եթե պառլամենտը չունենա վճռական ձայն, ապա ինչ կարիք կա դրա հրավիրումը, - ասաց Պոգոդինն, ընդգծելով, որ այդ դեպքում պառլամենտին ոչ ոք չի լսի ու հեղինակություն էլ չի ունենա:

- Հեղինակություն կլինի, եթե մարդիկ ընտրվեն և ոչ թե նշանակվեն, - համոզված պնդում էր Կոշելևը:

- Իսկ դուք, Միխայիլ Տարիելովիչ, ի՞նչ եք մտածում այս մասին, - Պոգոդինը հարցն ուղղեց Լորիս-Մելիքովին և շարունակեց, - դուք եղել եք Թերեքի մարզի պետ, հետաքրքիր է, թե ձեր փորձն ի՞նչ է ասում:

- Ես վաղուց եմ մտածել այդ ամենի մասին և ինչ որ բան փորձել եմ իրականացնել Թերեքի մարզում: Իմ փորձից ելնելով, պետք է ասեմ, որ ժամանակն է նաև Կովկասում մտցնել զեմստվո:

Այնուհետև Լորիս-Մելիքովը պատմեց, թե ինչ դրական ազդեցություն է ունեցել Թերեքի մարզում իր անցկացրած դատավորների ու համայնքների ղեկավարների ընտրությունը:

- Միայն պետք էր ընտրել բնակչության մեջ մեծ հեղինակություն ու հարգանք վայելող մարդկանց, այնպիսիներին, որոնք հասկանում են ու գնահատում իրենց նկատմամբ ցուցաբերած վստահությունը և պատասխանատվությամբ են վերաբերում ստանձնած պարտականություններին,- եզրափակեց Լորիս-Մելիքովը:

- Իսկ գիտելիքնե՞րը, վերջապես կրթությո՞ւնը, մտահորիզոնի լայնությո՞ւնը, որտեղի՞ց այդ բոլորը Ռուսաստանում, - հարցրեց Կոշելևը:

- Մարդկանց ճիշտ ընտրությունը կարևոր է: Ես նույնիսկ կառավարել եմ թուրքական փաշալիկը: Ճիշտ է, Թուրքիան մեզ համար օտար վանք է, բայց այն ամենն, ինչ արվեց Կարսի մարզում, ավելի խելամիտ էր, քան թուրքական կառավարումը: Ես համոզված եմ, որ դեմոկրատական կարգերը Ռուսաստանում հարկավոր է մտցնել, չնայելով ժողովրդի հասունացման մակարդակին, զարգացմանը և այլն: Եթե սպասես ու ոչինչ չանես, ոչ մի բանի չենք հասնի: Իսկ ժողովուրդը կհասունանա ընթացքում, երբ ինքն էլ մասնակից դառնա շարժմանը:

Երկու ռուս նշանավոր գիտնականները հաճելիորեն զարմացած մնացին, որ ռուսական բանակի գեներալն, այն էլ կովկասցի, այդքան խորությամբ տիրապետում է իրողությանը և ունի առաջադիմական հայացքներ Ռուսաստանի ապագայի նկատմամբ:

Պոգոդինը խնդրեց Լորիս-Մելիքովին պատմել, թե որտեղ է նա կրթություն ստացել:

- Սովորել եմ Լազարյան ճեմարանում, հեռացվել եմ վերջին դասարանից և մտել յունկերական դպրոց: Այնուհետև ծառայել եմ փոխարքաներ Վորոնցովի ու Մուրավյով-Կարսկու մոտ, - պատասխանեց Լորիս-Մելիքովը և պարզաբանեց Կովկասի վերաբերյալ նրանց հետաքրքրող հարցերը:

- Մեզ մոտ, - ասաց Պոգոդինը, - Մոսկվայի համալսարանում Լազարյան ճեմարանն ավարտածները միշտ աչքի են ընկնում: Հայերը, որոնք ունեն հինավուրց մշակույթ, շատ աշխուժ ու հնարամիտ ժողովուրդ են...

Այդ օրվա զրույցն երկար տևեց: Ուշ երեկոյան Լորիս-Մելիքովը հրաժեշտ տվեց ու դուրս եկավ: Նրա գնալուց հետո Պոգոդինն ասաց.

- Տեսնում եք, Ալեքսանդր Իվանովիչ, գինվորական է, հայ է, ամբողջ կյանքն անց է կացրել Կովկասում և իրերին ու դեպքերին նայում է ինչպես ռուս մարդը, ժամանակակից զարգացած մարդը:

- Այո, - համաձայնվեց Կոշելևը, - վառ անհատականություն է: Ռուսական պետությանը հենց այդպիսի գործիչներ են հարկավոր...

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

Անապատելի հեռագիր

Մոտ տարի ու կես Լորիս-Մելիքովն իր ընտանիքով մնաց արտասահմանում: Սկզբում ապրեցին Վիսբադեն քաղաքում, որտեղից էլ 1876 թ. օգոստոսին տեղափոխվեցին էմս առողջարան: Կինը՝ Նինան զբաղվում էր երեխաներով, զբոսանքի տանում: Արտաքուստ նա իրեն անհոգ էր պահում, բայց միշտ հետևում ամուսնուն: Եվ անչափ անհանգստանում էր, որ ամուսնու մոտ հազոցը չէր դադարում, ինչն առանձնապես զգացնել էր տալիս գիշերային ժամերին:

- Միկո ջան, ջանիկս, - դիմում էր նրան Նունեն և հորդորում մեկնել Նիցցա, որտեղ բուժումը ավելի արդյունավետ կլիներ:

Լորիս-Մելիքովը կնոջը չէր պատասխանում և մտածված կերպով միշտ խոսակցությունը տեղափոխում էր երեխաների վրա: Նունեն հատկապես մտահոգված էր ավագ որդու՝ Տարիելի ճակատագրով: Նա շատ էր ուզում, որ որդին Թիֆլիսում ավարտեր գիմնազիան և ընդունվեր համալսարան: Եվ ամեն անգամ, երբ Միքայելը փոխում էր խոսակցության թեման, Նունեն, իհարկե, համաձայնվում էր նրա հետ՝ «իսկապես, ինչ կարող են սովորեցնել այդ գվարդիականներին» ասելով:

Լորիս-Մելիքովը մտքում հրճվում էր, որ հաջողվում է Նունեի ուշադրությունը շեղել: Բայց դա միշտ չէ, որ հաջողվում էր: Ու ամեն անգամ, երեխաների մասին խոսակցությունը Նունեն ավարտում էր, նորից ամուսնուն հորդորելով.

- Ջանիկս, առողջությունը թանկ է, հեռագիր տուր Նիցցա:

Տարիներ շարունակ Լորիս-Մելիքովը զգում էր կրցքավանդակում թոքերի խզոց: Նա դրանից շատ էր անհանգստանում, բայց նկատի ունենալով բժիշկներին դիմելը, նրանց խորհրդով դեղերի օգտագործման ժամկետների պահպանումը, հրաժարվում էր բուժում ընդունելուց:

Ի վերջո, կարծես թե Նունեն ամուսնուն համոզեց տեղափոխվել Նիցցա: Եվ այն օրն, երբ Լորիս-Մելիքովը պատրաստվում էր հեռագիր ուղարկել Նիցցա, տիկին Շևալեին հյուրանոցում սենյակներ հատկացնելու նպատակով, անսպասելի Թիֆլիսից ստացվեց հեռագիր: Կովկասի փոխարքան հայտնում էր, որ Ալեքսանդր Երկրորդ ցարի հրամանով Լորիս-Մելիքովը նշանակվել է Կովկասում ռուս-թուրքական սահմանին գտնվող գործող կորպուսի հրամանատար, ուստի պարտավոր է անհապաղ վերադառնալ Թիֆլիս:

- Ահա և քեզ Նիցցա, - չգիտես ուրախացած, թե վշտացած ասաց կնո-

ջը և անհրաժեշտ կարգադրություններ արեց այդ օրն, երեկոյան Թիֆլիս ուղևորվելու մասին:

Փոխարքայի հեռագիրը Լորիս-Մելիքովին զարմանք էր պատճառել: Նա նույնիսկ մոռացավ գիշերային տանջող հազոցներն, ամբողջությամբ կլանվեց ապագա կորպուսի գործողությունները մշակելու գաղափարով: Միաժամանակ Լորիս-Մելիքովին հանգիստ չէր տալիս կորպուսի հրամանատար նշանակվելու հանգամանքը: Նրա հիշողության մեջ բավականաչափ թարմ էին փոխարքա Միխայիլ Նիկոլաևիչի թողտվությամբ նրա շրջապատում ազդեցություն ունեցող փոխարքայի օգնական իշխան Միրսկու, Կովկասյան բանակի շտաբի պետ Պլատոն Պավլովի ու բազմաթիվ թիկնապահների կազմակերպած բանսարկությունները:

Ինչո՞ւ Ալեքսանդր Երկրորդ ցարը գործող կորպուսի հրամանատար չի նշանակել փոխարքայի մտերիմ Սվյատոպոլկ-Միրսկուն: Ինչո՞ւ է ցարը այդ պաշտոնի համար ընտրել իր թեկնածությունը:

Այս և համանման այլ հարցերի մասին մտորելով Լորիս-Մելիքովը ճանապարհվեց Թիֆլիս:

Ռազմական նախարար Միլյուտինի վճռակամությունը

Կովկասի փոխարքա Միխայիլ Նիկոլաևիչն, որը անհեռատես ու քիչ կրթված մարդ էր, ամբողջովին գտնվում էր իր կնոջ՝ Բադենյան արքայադուստր Օլգա Ֆեոդորովնայի ազդեցության տակ: Իսկ Օլգա Ֆեոդորովնան բնավորությամբ դաժան ու ընչաքաղց կին էր, ամեն ինչ ենթարկում էր իր քմահաճույքին, նույնիսկ շատ հաճախ ամուսնու փոխարեն ինքն էր կատարում իր ամուսնուն վստահված Կովկասի ռազմական օկրուգի գլխավոր հրամանատարի պարտականությունները:

Միաժամանակ փոխարքայի կինը լայն ասպարեզ էր տալիս քծնանքի մեջ վարպետացած Սվյատոպոլկ-Միրսկուն, Պավլովին: Կնոջ միջոցով փոխարքայի վրա մեծ ազդեցություն ունեին Թիֆլիսում իրենց արկածախնդրությամբ հայտնի ֆրանսիացի զինվորական կցորդ կոմս դե Կուրսին, ավստրիական գեներալ Վիտգենշտեյնը, իտալացի գնդապետ Վինսպիրը և այլոք:

Հենց կնոջ թելադրանքով էլ փոխարքան կորպուսի հրամանատարի պաշտոնի համար ցարին ներկայացրեց Սվյատոպոլկ-Միրսկու թեկնածությունը: Գործին խառնվեց ռազմական նախարար Միլյուտինը: Նա լավ էր ճանաչում իշխան Միրսկուն և հասկանում էր, թե Կովկասյան կորպուսի հրամանատարությունը նրան վստահելն ինչ ծանր հետևանքներ կունենա և իր անհանգստության մասին հայտնեց Ալեքսանդր Երկրորդ ցարին:

- Իշխան Միրսկին, - զեկուցեց ցարին Միլյուտինը, - իր ունակություններով կարող է միայն գումարտակի հրամանատար լինել: Իհարկե, նա վախկոտ չէ, բայց դա քիչ է կորպուսի հրամանատար լինելու համար: Ռազմական ստրատեգիայի հարցերում նրա ունակությունների վրա բոլորովին վստահ չեմ:

- Բայց, - պատասխանեց ցարը, - պատերազմի պայմանները մարդկանց մոտ անսպասելիորեն բացահայտում են նոր որակներ և միթե՞ դուք համոզված չեք, որ Միրսկու թեկնածությունը ճիշտ է ընտրված:

Միլյուտինը հասկանում էր, որ ցարի համար դժվար է իր եղբոր՝ Կովկասի փոխարքայի կամքը մերժել, ուստի ավելի վճռականորեն պատասխանեց Ալեքսանդր Երկրորդ ցարին.

- Երկար տարիներ գտնվելով խաղաղ պայմաններում, իշխան Միրսկին առավել մեծ փորձ է ձեռք բերել անդրկուլիսային նուրբ բամբասանքների մեջ: Նա պարզապես փորձված բանսարկու է:

- Պատերազմը կփոխի նրան, - չէր համաձայնվում ցարը:

- Կա ձերդ մեծություն, մի կարևոր իրողություն ևս: Իշխան Միրսկին միշտ աչքի է ընկել ուրիշի կամքը կատարելով, երբեք չի ձգտել ինքնուրույն հրամաններ ընդունել և միշտ ճարպկորեն խուսափել է պատասխանատվությունից: Այս բոլորի փոխարեն նա կռահում է ուրիշի ցանկությունը և ճկուն կերպով դա օգտագործում իր օգտին:

Ալեսանդր Երկրորդը երկար մտածեց Միլյուտինի բերած փաստարկների շուրջ և ի վերջո ասաց.

- Դմիտրի Ալեքսեևիչ, ասացեք խնդրեմ, իսկ իշխան Միրսկու փոխարեն ո՞ւմ եք առաջարկում:

- Առաջարկում եմ ձերդ մեծություն, գեներալ-թիկնապահ Լորիս-Մելիքովին:

Իր առաջարկությունը հիմնավորելու համար Միլյուտինը հիշեց, որ իշխան Միրսկին Թերեքի մարզում ահավոր խառնաշփոթություն էր ստեղծել, դրսևորելով միանգամայն անպատասխանատվություն և կարողացել է ճարպկորեն տեղափոխվել Թիֆլիս: Իսկ նրան փոխարինած Լորիս-Մելիքովը կարճ ժամանակում ոչ միայն վերացրեց իշխան Միրսկու անպատասխանատվության հետևանքներն, այլև կանոնավորեց Թերեքի մարզում գործերի կառավարումը:

Ալեքսանդր Երկրորդն ամբողջովին համոզվեց Միլյուտինի փաստարկների մեջ և նախընտրեց Լորիս-Մելիքովի թեկնածությունը: Նա ռազմական նախարարին հանձնարարեց ներկայացնել նշանակման հրամանի նախագիծ:

Այսպես, Ալեքսանդր Երկրորդը 1876 թ. նոյեմբերի 11-ին Լորիս-Մելիքովին նշանակեց Կովկասյան գործող կորպուսի հրամանատար, խառնելով փոխարքայի ու նրա շրջապատի խաղաքարտերը...

«Ես կարող եմ հրաժարական տալ...»

Թիֆլիս հասնելուն պես, Լորիս-Մելիքովը շտապեց փոխարքայի մոտ: Թիֆլիսում Լորիս-Մելիքովին սառն ընդունելություն ցույց տվեցին: Նրա դեմ սկսվել էր բանսարկությունների իսկական պատերազմ իշխան Միրսկու նախաձեռնությամբ: Եվ դա հասկանալի էր: Լորիս-Մելիքովը զբաղեցրել էր իրեն խոստացած պաշտոնն, որը նրան բերելու էր նոր պարգևներ ու արտոնություններ: Բացի դրանից, Թերեքի մարզում Լորիս-Մելիքովի ձեռք բերած հաջողությունները մեծապես վնասել էին իշխանի ինքնասիրությունը և նա ուղղակի վրեժի ծարավ էր:

Իհարկե, այս ամենը զգում էր Լորիս-Մելիքովը, բայց իր բնավորության համաձայն չէր արձագանքում, միշտ հիշելով հորից մնացած խոսքը՝ «լուսնահաչ են տալիս»:

Ինչևէ, ցարի հրամանը տրված էր և ոչ ոք այլևս ի վիճակի չէր այն փոխել:

Փոխարքայի հետ հանդիպելուց հետո, Լորիս-Մելիքովն առանց հանգիստ առնելու, շտապեց սահման և ընտրեց այն անցնելու համար հարմար տեղ:

Վերադառնալով Թիֆլիս, Լորիս-Մելիքովը փոխարքային ներկայացրեց իր առաջարկությունները: Գիտակցելով, թե մոտալուտ պատերազմում ինչպիսի բարդ խնդիրներ են դրվելու կորպուսի առջև, Լորիս-Մելիքովն արտակարգ բծախնդրությամբ ընտրեց ջոկատների, գնդերի, զորասույնների հրամանատարների թեկնածությունը: Իր առաջարկած թեկնածուներից յուրաքանչյուրի համար կորպուսի հրամանատարը հարկադրված էր դրսևորել արտակարգ համառություն և բերել հիմնավոր փաստարկներ:

Լորիս-Մելիքովը գտնում էր, որ կորպուսը պետք է բաժանվի երկու զորասյունի: Երևանի զորասյունի հրամանատար առաջարկեց գեներալ-լեյտենանտ Տեր-Ղուկասովին, իսկ Արդահանի զորասյունի համար գեներալ Լազարևի թեկնածությունը:

Փոխարքայի մոտ հրավիրված ռազմական խորհրդին ներկա գտնվողները չթաքցնելով իրենց դժգոհությունը, դեմ արտահայտվեցին Լորիս-Մելիքովի առաջարկությանը: Իշխան Միրսկին շաղոքորթ հայացքն ուղղելով փոխարքայի կողմ, ասաց.

- Պարոնայք, ուզում եմ հիշեցնել, որ բանակը ռուսական է, իսկ կորպուսի հրամանատարը միայն հայերին է հիշում:

- Իսկ էլ ո՞ւմ պետք է առաջարկեմ, -հանգիստ պատասխանեց Լորիս-Մելիքովը, -եթե ձեր ասած հայերը՝ Տեր-Ղուկասովը, Շելկովնիկովը, Լազարևը աչքի են ընկել Ղրիմի պատերազմում և այդ ժամանակից էլ լավ գիտեն ապագա մարտերի տեղանքը:

Փոխարքան համամիտ էր Լորիս-Մելիքովի հակառակորդներին: Այդ պատճառով էլ կորպուսի հրամանատարին հաջողվեց միայն հասնել Տեր-Ղուկասովի նշանակմանը: Իսկ Լազարևը ստացավ նշանակում սահմանի վրա, Շելկովնիկովն ու Ալխազյանը ուղարկվեցին Ռիոնի զորասյուն, որի հրամանատար նշանակվեց փոխարքայի ու Միրսկու դրածո Օկլոբժիկոն:

Այն ամենն, ինչ կատարվեց ռազմական խորհրդում, համոզեց Լորիս-Մելիքովին, որ եթե գործերն այդպես շարունակվեն, ապա մոտալուտ պատերազմում իր հրամանատարությամբ գործող կորպուսը հաջողության չէր հասնի: Կշռադատելով ստեղծված իրավիճակը, Լորիս-Մելիքովը հաջորդ օրն այցելեց փոխարքային և առանց որևէ նախաբանի ասաց.

- Ձերդ մեծություն, տեսնում եմ, իմ նշանակումը չի համապատասխանում ձեր ծրագրերին և քանի դեռ պատերազմը չի սկսվել և ուշ չէ, կարող եք ամեն ինչ փոխել: Ես համաձայն եմ նույնիսկ ջոկատի հրամանատար լինել: Իսկ եթե ձեզ հարմար է, ապա կարող եմ հրաժարական տալ:

Լորիս-Մելիքովի խոսքերը փոխարքային հանգակարծակի բերեցին: Նա հասկացավ, թե Լորիս-Մելիքովի հրաժարականն ինչ արձագանք կունենա Ալեքսանդր Երկրորդ ցարի մոտ և շտապեց մերժել կորպուսի հրամանատարի ցանկությունը:

- Ի՞նչ ես ասում դու: Ամբողջ Կովկասում քո նման կորպուսի լավագույն հրամանատար չեմ գտնի: Եվ մտքովդ չանցնի:

Հետո փոխարքան ձայնը ցածրացնելով, համարյա շշուկով ասաց.

- Ես միապետի առջև միջնորդել եմ քո համար: Ի՞նչ պետք է ես նրան ասեմ:

Իհարկե, փոխարքան կեղծում էր: Լորիս-Մելիքովը նրա ուզած հրամանատարը չէր, բայց հրաժարականի մասին գեներալի մտադրությունը սթափեցրեց փոխարքային: Նա պատրաստակամություն հայտնեց կատարել գեներալ Լորիս-Մելիքովի կամքը...

Իսկ Լորիս-Մելիքովը միայն հետո պետք է իմանար իր նշանակման մասին իսկությունը:

Քանսարկություններ չեն դադարում

Լորիս-Մելիքովը վաղուց յուրացրել էր այն ճշմարտությունն, որ չպետք է բավարարվել փոխարքայի խոստումներով և անմիջապես պահանջեց դրա կատարումը:

- Ձերդ մեծություն, խնդրում եմ ստորագրել հրաման գործող կորպուսը Կովկասյան Բանակից առանձնացնելու մասին՝ դրանից բխող բոլոր իրավունքներով:

Փոխարքային ոչինչ չէր մնում, քան համաձայնվել Լորիս-Մելիքովի հետ: Վերջին հաշվով ավելի լավ էր կատարել այս համառ գեներալի կամ-

քը, քան նրա հրաժարականով արժանանալ թագավոր կայսրի բարկությանը:

Լորիս-Մելիքովը ստացավ իր ուզած հրամանը: Նա ձեռք բերեց լիակատար իրավունք իր նախատեսմամբ ավարտելու գործող կորպուսի վերջնական ձևավորումը:

Սակայն փոխարքայի հրամանից հետո Լորիս-Մելիքովի դեմ բանսարկությունները վերջ չունեցան: Նրա հակառակորդներն առիթը բաց չէին թողնում ձախողելու կորպուսի հրամանատարի գործողությունները:

Իշխան Միրսկուն հաջողվեց փոխարքային ստորագրել տալ մի հրաման, որով առաջարկվում էր գործող կորպուսից բացի, ձևավորել Ռիոնի զորաջոկատը՝ 32 վաշտից բաղկացած: Այս հրամանը նշանակում էր թուլացնել գործող կորպուսին, որի հետ, բնականաբար, Լորիս-Մելիքովը չէր կարող համաձայնվել: Նա չթաքցրեց իր դժգոհությունը և դիմեց փոխարքային.

- Ձերդ մեծություն, միթե՞ դուք համոզված եք, որ Ռիոնի տարածքում հնարավոր կլինի հարձակում ծավալել: Չէ՞ որ մենք պարտավոր ենք չմոռանալ նախորդ պատերազմի փորձը:

Ներկա գտնվող իշխան Միրսկին չսպասելով փոխարքայի պատասխանին, շտապեց ինքը պատասխանել Լորիս-Մելիքովին, ասելով, թե պարտադիր չէ հենվել անցած պատերազմի փորձի վրա և դեմքին գոհունակության երանգ տալով, հիշեցրեց Նապոլեոնի հետևյալ ասույթը. «Գեներալները ինձ տանուլ են տալիս, քանի որ իմ դեմ կռվում են նախորդ պատերազմների փորձով»:

Փոխարքան լիովին համաձայնվեց իր օգնականի հետ և հասկացնել տվեց, որ խոսելն ավելորդ է:

Իսկ Լորիս-Մելիքովն, որը լավ գիտեր նախորդ պատերազմների փորձը, հարկ համարեց պարզաբանել, որ անհնարին է Ռիոնի ճահիճներով հարձակողական գործողություններ ծավալել, հիշեցնելով, որ զորքերը կխրվեն այդ ճահիճների մեջ: Չպետք է մոռանալ նաև մալարիան:

- Անցած պատերազմում,- հիշեցրեց Լորիս-Մելիքովը, - թուրքական բանակի կեսը շարքից դուրս եկավ դողերոցքի պատճառով: Հարկավոր չէ մոռանալ դա և պետք է մտածել այդ մասին:

- Այն ժամանակ խինին չկար, իսկ հիմա կա այդ բուժիչ միջոցը, -միջամտելով խոսկցությանը, պնդեց շտաբի պետ Պավլովը:

- Իսկ հաշվե՞լ եք, թե ինչքան խինին է պետք 32 գումարտակի համար,- հարցրեց Լորիս-Մելիքովն ու շարունակեց, - միթե՞ կարծում եք, որ հնարավոր կլինի խուսափել մալարիայից: Մի մոռացեք նաև տիֆի վտանգը:

Փոխարքայի մոտ հավաքված խորհրդի մասնակիցները միահամուռ պնդում էին, որ առաջիկա պատերազմը կավարտվի այնպիսի արագությամբ և կարիք չի լինի անհանգստանալ զինվորների հիվանդության համար: Նրանք համոզված պնդում էին, թե մի երկու շաբաթ բավական կլինի Բաթումը գրավելու համար:

Լորիս-Մելիքովն այդպիսի լավատեսությունը համարելով անհիմն, խորհրդին ներկա գտնվողների ուշադրությունը սրեց այն բանի վրա, որ թուրքերն այդքան հեշտությամբ Բաթումը չեն հանձնի և համառ դիմադրություն ցույց կտան Տրապիզոնից բերվող ռազմանավերի օգնությամբ:

- Վերջապես, - եզրափակեց Լորիս-Մելիքովը, - պարոնայք, մի մոռացեք, որ Սև ծովի այդ հատվածում մենք նավատորմ չունենք:

Ոչ ոք մտադիր չէր լսել ու հասկանալ Լորիս-Մելիքովի փաստարկները: Բոլորին հետաքրքրում էր մի բան՝ ձախողել կորպուսի հրամանատարի ծրագիրը, խանգարել նրան: Նրանցից ոչ մեկին չէր մտահոգում, որ խոսքը վերաբերում է ռուսական բանակի ճակատագրին:

Լորիս-Մելիքովը գտնում էր, որ Ռիոնի զորաջոկատում կուտակված 32 գումարտակները մատնվելու են անգործության, որովհետև, ինչպես համոզված էր նա, գլխավոր մարտական գործողությունները ծավալվելու են Կարսի ուղղությամբ և այնտեղ է զգացվելու զորամասերի կարիքը:

Ի վերջո, կարծես Լորիս-Մելիքովի համբերությունը սպառվեց և վճռականորեն պահանջեց Ռիոնի զորաջոկատից իրեն հանձնել 10 գումարտակ: Գլխավոր հրամանատար փոխարքան համաձայնվեց զիջել վերապահումով.

- Մենք, - ասաց նա, դիմելով կորպուսի հրամանատարին, - ձեզ կուղարկենք 15 գումարտակ, բայց Բաթումի գրավումից հետո:

Ահա, այսպես Լորիս-Մելիքովը զրկվեց իր կորպուսը ժամանակին համալրելու հնարավորությունից:

Բայց նրա հակառակորդները դրանով չբավարարվեցին: Հաջորդ խորհրդի ժամանակ փոխարքան հենվելով Թերեքի մարզի ու Դաղստանի պետերի հայտնած տեղեկությունների վրա, հարկ համարեց երկու դիվիզիա պահել Հյուսիսային Կովկասում, որտեղ ըստ լուրերի, թուրքական գործակալները նախապատրաստում են տեղի մահմեդական բնակչության ապստամբություն:

Լորիս-Մելիքովն, որը տեղյակ էր Թերեքի մարզի և Դաղստանի իրավիճակին, հարկ համարեց առարկել այդ առաջարկությանը, գտնելով, որ նշված երկու դիվիզիաները հարկավոր են հենց թուրքական զորքերի դեմ մարտական գործողությունների ժամանակ:

Փոխարքայի հավանությամբ խոսք վերցրեց իշխան Միրսկին և փորձեց առարկել Լորիս-Մելիքովի փաստարկներին:

- Դուք, Միխայիլ Տարիելովիչ, - ասաց նա, - ուղղակի մոռանում եք, թե ինչքան անհուսալի են այդ չեչենները, աբխազները և մյուսները: Հենց որ նրանք առնեն պատերազմի հոտն, առանց սպասելու դաշույնը կխրեն մեր թիկունքը:

Լորիս-Մելիքովը զսպելով իր զայրույթը, իշխանին պատասխանեց, որ վերջինս բոլորովին Կովկասին ծանոթ չէ:

- Դուք, -շարունակեց Լորիս-Մելիքովը, - նույնիսկ չգիտեք, որ Թերեքի մարզում կա հարյուր առաջնորդ և բոլորն էլ իրարից տարբեր: Եվ նրանց զսպելու համար ոչ թե զորք է հարկավոր, այլ կովկասցի այնպիսի չինովնիկ, որը լավագույնս կկարողանա գլուխ հանել նրանց նենգություններից ու բանսարկություններից: Հարկավոր չէ հեռու գնալ, տվեք Թերեքում գտնվող իմ օգնականին մի հարյուր հազար ռուբլի այդ նպատակի համար: Եվ նա, հավատացնում եմ, կգտնի, թե ում կաշառել: Ու այդ առաջնորդները կանեն այն, ինչ նրանց թելադրվի:

Լորիս-Մելիքովի դեմ հանդես եկան բոլորը: Եվ նրանց կամքին համապատասխան, փոխարքան ամփոփելով հարցի քննարկումն, ասաց.

- Դե, իհարկե, կաշառելը, բանսարկությունը դժվար գործ են և մեր բանակի թիկունքում անհանգիստ մարզեր թողնելը վտանգավոր է: Այնպես, որ այնտեղ պետք է թողնել երկու դիվիզիա:

Լորիս-Մելիքովը վերջին անգամ փորձեց համոզել փոխարքային և դիմելով նրան,ասաց.

- Ձերդ մեծություն, կամենում եմ նկատել, որ մոտալուտ պատերազմի օբյեկտն ոչ թե գտնվում է Չեչնիայի ու Դաղստանի գետնախորշերում, այլ Կարսի ու Էրզրումի փաշայությունների ուղղությամբ թուրքական բանակների արագ ջաղջախման մեջ: Եվ Թուրքիայում մեր առաջին հաջողությունները մի ակնթարթում կզգաստացնեն մեր լեռնականներին:

- Եթե իմ ասածներն այդպես չեն, -ասաց կորպուսի հրամանատարն իր խոսքի վերջում, - ապա այդ դեպքում խնդրում եմ ասել, թե ինչպի՞սի զորքերով ենք պատրաստվում սահմանն անցնել: Հյուսիսային Կովկասում թողնում ենք երկու դիվիզիա, Ռիոնի երկրամասում՝ 32 գումարտակ: Իսկ ես ո՞ւմ դեմ և ինչո՞վ պետք է պատերազմեմ:

Նորից խոսք վերցրեց իշխան Միրսկին և ներկաների քմծիծաղի ուղեկցությամբ դիմեց Լորիս-Մելիքովին.

- Հարգելի Միխայիլ Տարիելովիչ, մի մոռացեք Սուվորովին, որն ասում էր, թե պատերազմում են ոչ թե քանակով, այլ հմտությամբ: Իսկ ձեր ունակություններին մենք չենք կասկածում:

- Այո, - պատասխանեց Լորիս-Մելիքովը, - Սուվորովը ճիշտ է ասել, բայց չպետք է մոռանալ, որ պատերազմում հարկավոր է նաև հաշվի առնել հակառակորդի հմտությունը:

Փաստորեն կորպուսի հրամանատարի բոլոր փորձերն ապարդյուն անցան: Փոխարքան մնաց անդրդվելի: Նա էլ չէր սիրում Լորիս-Մելիքովին, և գերի մնալով իր շրջապատի բանսարկուներին, ավելի շատ փայփայում էր գեներալին անհաջողության մատնելու հույսը...

«Կարսի գրավումը կլինի վերջնական...»

Լորիս-Մելիքովը տուն վերադարձավ հոգնած ու անտրամադիր:

- Սիկո ջան, ի՞նչ է պատահել, հո հվանդ չես:

Լսելով մոր ձայնը, Միքայելը սթափվեց մտքերից և ասաց.

- Պատերազմ է սկսվում:

Մայրը խաչակնքեց և իր սովորության համաձայն աղոթք մրմնջալով դուրս եկավ սենյակից:

- Վաղն առավոտյան շուտ մեկնում եմ Ալեքսանդրապոլ, խնդրում եմ պատրաստես անհրաժեշտ իրերս, - դիմեց Միքայելը կնոջը:

Շուտով Լորիս-Մելիքովի հրավերով եկան Տեր-Ղուկասովը, Շելկովնիկովն ու Ալխազյանը: Հետո նրանց միացավ Լազարևը: Լորիս-Մելիքովը նրանց հայտնեց փոխարքայի ընդունած որոշումների մասին և զայրացած ասաց.

- Զարմանում եմ, թե այդ մարդիկ ինչպես են մտածում, ինչով են ղեկավարվում: Չէ՞ որ, վերջապես, խնդիրը ինձ չի վերաբերում: Ինչպե՞ս կարելի է այդ կերպ պատերազմ սկսել:

- Միխայիլ Տարիելովիչ, - ընդգծված ասաց Տեր-Ղուկասովը, -քեզ խորհուրդ տալու հարկ չկա: Որոշումդ ճիշտ է՝ մնալ կորպուսի հրամանատար: Մենք քո կողքին ենք: Մեզ համար վստահ եղիր:

- Ես դրանում սիրելի Արշակ Հարությունովիչ, համոզված եմ: Ինձ ավելի շատ մտահոգում է, որ ռազմական գործողությունների ընթացքում փոխարքան իր մարդկանցով կարող է գործին մեծ վնաս հասցնել:

- Դա, իսկապես, լուրջ խնդիր է և հարկավոր է դրա շուրջ մտածել, համարժեք քայլեր ձեռնարկել, - վրդովված ասաց Շելկովնիկովը:

- Բանակում ծառայում են հիանալի ռուս գեներալներ ու գնդապետներ: Նրանցից շատերին գիտեմ անձամբ: Բոլորն էլ աչքի են ընկնում թե քաջությամբ և թե հատկապես Ռուսաստանի հեղինակության վերականգնմամբ, -ասաց Լորիս-Մելիքովը, - բայց միաժամանակ մենք չպետք է մոռանանք, որ մեզ, հատկապես հայերիս համար, եկել է պատասխանատու պահը: Մեզ վիճակված է ռուսական զորքերի կազմում Ռուսաստանի թագավոր կայսրի կամքով օգնության հասնել մեր հայրենակիցներին: Սա է մեր պարտքը: Եվ հանուն դրա, չպետք է վհատվել: Համոզված եմ, որ այս անգամ մենք նորից կգրավենք Կարսը և դա կլինի վերջնական:

Զինակիցներն երկար քննարկեցին ապագա ռազմական գործողությունների մանրամասները, կատարեցին մի շարք ճշտումներ: Մի քանի հարցեր էլ թողեցին տեղում ճշտելու և որոշելու համար:

Վաղ առավոտյան Միքայելը հրաժեշտ տվեց հարազատներին և մեկնեց Ալեքսանդրապոլ:

Պատերազմի մեջ մտնելու առաջին հրամանը

1877 թ. ապրիլի 4-ին Լորիս-Մելիքովը հասավ Ալեքսանդրապոլ, որտեղ տեղավորված էր գործող կորպուսի հրամանատարի զորակայանը:

Ալեքսանդրապոլի բնակչությունը ջերմ ընդունելություն ցույց տվեց նշանավոր զորահրամանատարին: Քաղաքի բնակիչներից շատերը Ղրիմի պատերազմի ժամանակ կռվել էին Լորիս-Մելիքովի հրամանատարությամբ, կատարել նրա նույնիսկ անհնարին թվացող առաջադրանքները:

Ամեն քայլափոխում կորպուսի հրամանատարը հարկադրված կանգ էր առնում, իջնում կառքից և սիրալիր ողջագուրվում իր հին զինվորների հետ, որոնցից շատերին հիշում էր անուններով:

Հասնելով զորակայան, հրամանատարն անհապաղ գործի անցավ: Պատերազմը սկսելու պահը մոտենում էր: Վերջին անգամ նա ստուգման ենթարկեց իր բոլոր կարգադրությունների կատարման վիճակը: Գեներալը գոհ մնաց: Ամեն ինչ պատրաստ էր:

1877 թ. ապրիլի 11-ին Թիֆլիսից ստացվեց գաղտնագիր: Թագավոր կայսրը հրովարտակով հայտնում էր, որ ապրիլի 12-ից պատերազմ է հայտարարվում Թուրքիային և հրամայում էր նախապես կազմված ծրագրի համապատասխան սկսել հարձակում:

Կորպուսի հրամանատարն անմիջապես տվեց վերջին կարգադրությունները իր ենթակա Ալեքսանդրապոլի, Ախալքալակի և Երևանի զորամասերին: Բոլոր զորամասերին ուղարկվեց Լորիս-Մելիքովի հրամանը, որտեղ ասվում էր. «Թագավոր կայսրի կամքով և Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար նորին կայսերական բարձրության կարգադրությամբ ինձ վստահված կորպուսի զորքերը մտնում են Ասիական Թուրքիայի սահմաններից ներս:

Գործող կորպուսի զորքեր՛.

Թագավորի կամքը, Ռուսաստանի պատիվն ու արժանապատվությունը պահանջում են, որպեսզի մեր գրաված թուրքական նահանգներում բնակչության մեջ հաստատվի ամուր հանգստություն:

Ոչ ոք որևէ առիթով չպետք է զենք բարձրացնի մեր իշխանություններին հպատակվող բնակիչների վրա, չպետք է անվճար օգտագործի բնակիչների ունեցվածքը, ինչ կրոնի ու ազգության էլ պատկանելիս լինեն:

Մեր թշնամին միայն կլինի թուրքական զորքի հետ միասին թուրքական կառավարությանը պաշտպանելու համար զենք վերցնողը:

Նախկին պատերազմների մասնակիցները, մարտերում դաստիարակված պետերն երիտասարդներին ցույց կտան ճանապարհը, որով նրանց ժամանակին տարել են իրենց մարտական ղեկավարները: Զորամասերի զինվորներն, որոնք նախորդ պատերազմների ժամանակ իրենց հերոսական սխրանքներով արժանացել են անմահ փառքի, այժմ նրանք նույն

դրոշների ներքո անում են ամեն ինչ, որպեսզի այդ փառքը մեծանա ու ամրապնդվի և որպեսզի նրանցից յուրաքանչյուրը համբերությամբ, ազնվությամբ, եռանդուն ծառայությամբ արժանանա թագավոր կայսրի և բանակի նորին թագավորական բարձրության գլխավոր հրամանատարի գթասիրտ բարեհաճությանը, հրամանատարության շնորհակալությանը և բոլոր ռուս մարդկանց օրհնությանը:

Կորպուսի հրամանատար, գեներալ-թիկնապահ՝
Լորիս-Մելիքով. 12-ը ապրիլի 1877 թ»:

Իսկապես, կորպուսի հրամանատարի կոչը կարևոր դեր խաղաց: Ռազմաճակատում գտնվող «Գոլոս» թերթի թղթակից Գ. Գրադովսկին գրել է, որ ռուսական զորքերին ջերմորեն էին ընդունում հայ բնակիչներն, ամեն կերպ դրսևորում իրենց համակրանքը ռուսների ու ռուսական ցարի նկատմամբ, խնդրելով, որ իրենց նորից չթողնեն թուրքերի իշխանության տակ:

Ծերունի հայերից մեկը թղթակցին ասել է.

- Ռուսներն ամեն ինչի համար վճարում են, ձրի ոչինչ չեն վերցնում, սպաներն ու զինվորները լավն են ու բարի: Իսկ թուրքերը միշտ թալանում են, ամեն ինչ վերցնում են և ոչինչ չեն վճարում:

Հայ հոգևորականներից մեկն էլ թղթակիցներին ներկայացնելով հայերի վիճակն, ասել է, որ հայ քրիստոնյաները սլավոներից քիչ չեն ճնշվում և նրանցից ավելի են երազում Ռուսաստանին միանալու մասին:

«Ափսոս, Երևես Աշտարակեցու գահը մինչև այսօր թափուր է մնացել...»

Սկսված ռուս-թուրքական պատերազմը հայությունը միատեսակ չընդունեց: Մի կողմից դա առաջ բերեց մեծ ոգևորություն: Թևածում էր ազատագրության հույսը: Այս ամենի շնորհիվ 42 հազար հայ կամավոր մասնակցեց պատերազմին: Հայերն ամեն ինչով օգնում էին ռուսական զորքին: Նրանք խնամում էին վիրավոր ու հիվանդ զինվորներին, օգնում պարենի ու ռազմամթերքի փոխադրմանը: Քիչ չէին անվախ հետախույզներն, որոնք ոչ միայն անգնահատելի տեղեկություններ էին հաղորդում, այլև կենդանի կապ էին ստեղծում տարբեր վայրերում գտնվող ռուսական զորամասերի միջև: Ինչ հնարավոր էր, անում էին հայերն, որպեսզի ռուսական զորքերը զգային, որ մտել են բարեկամական երկիր:

Սակայն սկսված ռուս-թուրքական պատերազմի նկատմամբ Կոստանդնուպոլսում կար միանգամայն հակառակ վերաբերմունք, որի վառ արտահայտությունն եղավ պատրիարք Ներսես Վարժապետյանի կոնդակը:

Նկատի ունենալով, որ 2002 թ. Երևանում տպագրված «Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան» գրքի 10-րդ հատորում մտածված կերպով

դուրս է թողնվել այդ կոնդակը, հարկ ենք համարում այն մեջ բերել ամբողջությամբ: «Այն օրէն ի վեր, որ հայոց ազգին ամենամեծ մասն օսմանեան հզօր տէրութեան հպատակասէր քաղցր հովանոյն ներքոյ մտաւ, իր հինգ դարուց պատմութիւնը կը ցուցնէ թէ ինչ մեծամեծ շնորհներ իրեն պարգևած է այս հզոր տերութիւնը: Եթէ այսօր Թիւրքիոյ մէջ կը տեսնենք հայ ազգը, որ կը պահէ իր կրօնը, իր եկեղեցին, իր լեզուն, իր պատմութիւնն ու աւանդութիւնները և վէրջապէս եթէ այսօր հայ ազգը կը զգայ իր էութիւնը, նոյն բարեխնամ տէրութեան շնորհած արդիւնք են: Այս ճշմարտութեան՝ ամէն հայու միտք համոզուած է, և չկայ հայ մը գրեթէ, որ այսօր դէմ խօսի առանց իր պատմութիւնը անգիտանալու և ազգին շահերը չճանաչելու:

Հայ ազգն ալ իր այս վայելած շնորհներուն փոխարէն հաւատարիմ հպատակութիւն ցուցած է արդեամբ և յարատև երախտագիտութիւն իր ստին մէջ կրած է յորդուց յորդիս: Ինչ ասպարէզ, որ բացուած է իր առջև, հոն բերած արգասաւորած է իր բոլոր մտաւորական, բարոյական և նիւթական կարողութիւնները և ապացուցած է այսու, թէ օսմանեան պետութեան ամենակարևոր տարրն է:

Ստոյգ է թէև, որ հայ ազգը մերթընդմերթ գաւառներու մէջ բարեխնամ տերութեան կամաց հակառակ հարստահարութեանց ենթակայ եղած ալ է, հարստահարութիւնք, որոնք միայն մարմինը կը վնասեն և հեռի են այն տեսակ հարստահարութիւններէն, որոնք ոգին և մարմինը միանգամայն կը վնասեն և ազգին գոյութեանը կը սպառնան, սակայն վերջին օրերս ձեռք առնուած միջոցներով, մանաւանդ վեհափառ սուլթանի գահակալութեան առթիւ հրատարակուած հրովարտակին սկզբանց յենելով, մեծ յոյս ունինք, որ այնպիսի մասնաւոր ճշմարտութեանց ալ հիմնական բարեկարգութեամբք առաջքը պիտի առնուի և մեր գաւառցի ազգայինք լիովին պիտի վայելեն բարեխնամ տէրութեան մեր ազգին վրայ ունեցած մասնաւոր սիրոյ և համակրութեան արդիւնքը:

Արդ՝ հայ ազգն, որոյ ճակատագիրն այսչափ դարերէ ի վեր նուիրագործեալ կապերով միացած է օսմանցւոյն ճակատագրին հետ, չի կրնար անտարբեր մնալ օսմանեան տէրութեան գտնուած արդի ծանրակշիռ պարագայից մէջ, այլ պարտաւոր է ինչպէս ամէն ժամանակ, նոյնպէս և առաւել ևս ներկայ ժամանակիս մէջ անկեղծ օժանդակութիւն մատուցանել: Այս օժանդակութիւնն ընելով հայրենասէր հայը՝ նոյն իսկ իր ազգային շահը պաշտպանած կըլլա, վասնզի օսմանեան երկիրը պաշտպանել՝ Հայաստանը պաշտպանել ըսել է, նոյն իսկ հայուն կրօնը, դպրոցը, ինչքը, տունը, ընտանիքը և պատիւն ու կեանքը պաշտպանել ըսել է:

Ուստի խորհրդակցութեամբ խառն ժողովոյ ազգային վարչութեան, նուիրական պարտք կը համարիմ այսու շրջաբերական կոնդակաւ յորդոր կարդալ բոլոր հայ ժողովրդեան, որ ամէն ոք իր կարողութեան սահմանին մէջ հայրենեաց պաշտպանութեան համար պէտք եղած օգնու-

թիւններն ընել փութայ՝ նախ աղօթելով հրապարակաւ յատենի եկեղեցւոյ առ ամենաբարձրեալն Աստուած, թագաւորն թագաւորաց, որպէս զի հոր նախախնամութեան հզոր հոլաթևաց պաշտպանութեամբն՝ մեր օգոստոսափառ սուլթան Մուրադ Ե կայսրն ու նորա աթոռն անսասան պահպանէ, իր նախարարաց և պաշտօնէից խոհեմութիւն և իմաստութիւն պարգևէ, և կայսերական արիագունդ բանակաց և զինուց յաջողութիւն շնորհէ: Նոյնպէս աղօթելով այն ամէն ազգէ կամաւրելոց համար, որք հայրենասիրական եռանդով վառուած զէնք կառնուն հայրենեաց թշնամիներուն դէմ: Երկրորդ ըստ կարողութեան իւրաքանչիւր ուրուք և ըստ յօժարութեան կամաց օգնելով թէ նիւթական, թէ անձնական ծառայութեամբ:

Վերջապէս ամենքս ի մի բերան և մի սիրտ չխնայենք մեր վեհապետին և մեր հայրենեաց պաշտպանութեան համար որևէ զոհողութիւն և ծառայութիւն, որոնք ներկայիս և ապագային մէջ մեր ազգին համար փառք և օգուտ կը բերեն»:

Պատրիարք Ներսես Վարժապետյանի այս կոնդակը ոչ այնքան թուրքական սուլթանի ձեռքին պատանդ լինելու արդյունք էր, որքան որ համոզմունք: Այդ կոնդակը պատրիարքի թուրքամոլության դրսևորումն էր: Դա Պոլսի ամիրաների և նրանց խոսափող պատրիարքի քաղաքականությունն էր:

Պոլսի ամիրաներն այն գաղափարն էին քարոզում, թե դավաճանություն է Ռուսաստանի օգնության դիմելը: Նրանք համոզված էին, որ Ռուսաստանի կազմում գտնվող Հայաստանի հայ բնակչությունը վաղ թե ուշ դատապարտված է ոչնչացման և դրա փոխարեն գտնում էին, որ Թուրքիայում ապրող հայն է անվտանգ վիճակում:

Այսպիսի գաղափարից չէր ազատվել նույնիսկ էջմիածնի կաթողիկոս Գևորգ Չորրորդը, որը մինչև ընտրվելը Պոլսի պատրիարքն էր:

Ալեքսանդրապոլ գալուց առաջ Լորիս-Մելիքովն անհարաժեշտ համարեց այցելել էջմիածին, հանդիպել կաթողիկոսին, որին ծանոթ էր Պոլիս այցելելու ժամանակից: Կաթողիկոսը ոչ միայն չորությամբ ընդունեց զորավարին, այլև վճռականորեն ու բացահայտ մերժեց Լորիս-Մելիքովի խնդրանքը:

- Վեհափառ,- դիմելով կաթողիկոսին, ասաց Լորիս-Մելիքովը, - հասել է վաղուց սպասված պահը: Իմ հրամանատարությամբ ռուսական զորքը մտնելու է Թուրքահայաստան: Մոտ է ազատության օրը: Խնդրում եմ ձեր հայրական խոսքն ու կոչն ուղղված հայերին: Կոչով դիմեք նրանց, որպեսզի կանգնեն ռուսների կողքին և մեզ հետ կռվեն մեր պատմական հայրենիքն ազատագրելու համար:

- Գեներալ, - չոր պատասխանեց կաթողիկոսը, - կոչի կամ կոնդակի հարկ չկա: Առանց իմ հորդորի էլ հայերը կօգնեն ռուսներին:

- Բայց վեհափառ, ձեր խոսքը հնչելու է Սուրբ էջմիածնից:

- Գեներալ, հարկ չկա, որ կաթողիկոսը մտնի քաղաքականության մեջ, -պատասխանեց կաթողիկոսը և հասկացնել տվեց, որ խոսակցությունն ավարտված է:

Երբ վեհարանից Լորիս-Մելիքովը դուրս եկավ, իրեն սպասող ազգական Հովհաննես Լորիս-Մելիքովին ասաց.

- Ափսոս, մինչև այժմ Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի գահը թափուր է մնացել:

Երիտասարդ Հովհաննեսի համար գեներալի ակնարկն անհասկանալի մնաց:

«Զարնանայի, մի րնկեր երևակայության մեջ...»

Ալեքսանդրապոլի հրապարակում, եկեղեցու մոտ շարք կանգնած զինվորներին ու սպաներին Լորիս-Մելիքովը դիմեց բոցաշունչ խոսքով:

- Արդեն երկու անգամ մեր Հայաստանի շարունակությունը կազմող տարածքը 1828 և 1853-1854 թվականներին ազատագրվել է մեր կողմից: Շատ ռուս զինվորներ ու հայ կամավորներ արյուն են թափել, իրենց կյանքն են զոհել այս բազմաչարչար երկրի համար: Երկու անգամ այդ տարածքի հայ բնակչությունը սիրով ու մեծ հույսերով է դիմավորել ռուս զինվորին: Բայց երկու անգամ էլ հայերը հուսախաբ են եղել: Նրանք նորից մնացել են թուրքական ծանր լծի տակ:

Կորպուսի հրամանատարը մի փոքր դադար տվեց և հետո բացականչեց.

- Իմ քաջարի զինվորներ, մեզնից է կախված, որ այդ տանջված ժողովուրդն երրորդ անգամ չխաբվի:

Շարք կանգնած զինվորներն ուշադրությամբ լսում էին իրենց հրամանատարին:

Իսկ Լորիս-Մելիքովն իր բոցաշունչ խոսքի վերջում ասաց.

- Կանցնենք երկու ժամվա ճանապարհ և դուրս կգանք օտար հող: Եվ այնտեղ մենք բոլորս, մեզանից յուրաքանչյուրն այլևս իրեն չի պատկանի: Բայց մեր ձեռքին է կենտրոնանալը, համարձակությունը և մենք հաղթահարելով ճակատագրի քմահաճույքները, կջախջախենք թշնամուն: Երիտասարդ զինվորներ, նայեք ձեր կողքին կանգնած պատերազմների փորձություններով անցած հին զինվորներին, հետևեք նրանց օրինակին, եղեք ուշադիր ու զգույշ, որովհետև պատահական գնդակից ու ռումբից փրկություն չկա:

Լորիս-Մելիքովը նայում էր իր առջևով անցնող զինվորներին ու սպաներին և ուրախանում նրանց առույգ քայլքով: Բայց կորպուսի հրամանատարը ներքուստ անհանգիստ էր: Իրեն վստահված կորպուսը լրիվ համալրված չէր: Միակ հույսը նրա համար հարձակման հանկարծակիությունն էր և թշնամու անպատրաստ լինելը...

1877 թ. ապրիլի-12-ի վիճակով Ռուսաստանի Կովկասյան բանակն ուներ 160 հազար մարդ, 456 դաշտային և 148 պաշարման հրետանի: Թուրքիայի դեմ անմիջական մարտական գործողությունների մեջ դրվեց 70 հազար սվին ու 237 դաշտային թնդանոթ: Լորիս-Մելիքովի հրամանատարության տակ գտնվող գործող կորպուսն ուներ 47 հազար մարդ և 160 թնդանոթ, Քոբուլեթի ջոկատը՝ 11 հազար մարդ և 48 թնդանոթ, Գուրիա-Քութայիսյան ջոկատը՝ 12 հազար մարդ և 24 դաշտային ու 66 առափնյա թնդանոթ: 9 հազար մարդ և չորս թնդանոթ առանձնացվել էր Փոթից մինչև Նովոռոսիյսկ Սև ծովի ափերը պաշտպանելու համար: 13 հազար զինվոր և 8 թնդանոթ թողնվեցին պահեստում: Կովկասյան բանակի մնացած զորամասերը /շուրջ 90 հազար մարդ/ թողնվեցին Կուբանի, Թերեքի և Դաղստանի մարզերում:

Լորիս-Մելիքովի գործող կորպուսը պետք է գործողություններ ծավալեր 350 կիլոմետր երկարությամբ ռազմաճակատի վրա, որը ծգվում էր լեռնային դժվարանցանելի տեղանքով: Այս հանգամանքը նկատի ունենալով կորպուսի հրամանատարն իր զորաբանակը բաժանեց երեք զորամասի.

1. Գլխավոր ուժերը /30հազար մարդ և 96 թնդանոթ/ նա պահեց իր հրամանատարության ներքո:

2. Ախլցխայի զորաջոկատը /9 հազար մարդ և 24 թնդանոթ/՝ գեներալ Դեվելի հրամանատարությամբ:

3. Երևանյան զորաջոկատը /11 հազար մարդ և 32 թնդանոթ/՝ գեներալ Տեր-Ղուկասովի հրամանատարությամբ:

Թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Մուխթար փաշան իր տրամադրության տակ ուներ 30 հազար զինվոր և 116 թնդանոթ:

1877 թ. ապրիլի 12-ին գործող կորպուսի երեք զորասյուներն էլ միաժամանակ անցան ռուս-թուրքական սահմանը: Թուրքերն, որոնք կարծում էին, թե ռուսական բանակը բավարար ուժ չունի հարձակման համար, հանկարծակի եկան: Կարսում թողնելով 10 հազարանոց կայազոր, Մուխթար փաշան շտապեց փակել Էրզրում տանող ճանապարհը:

Հայկական բնակչությունը ռուսական զորքերին դիմավորում էր աղ ու հացով, ինչպես վաղուց սպասված բարեկամների, ինչպես ազատարարների:

Լորիս-Մելիքովն իր զորաջոկատին առաջին դադարը տվեց Մոլա-Մուսա գյուղի մոտ: Կատարվեց զարմանալին: Գյուղի թուրք բնակչությունը տոնախմբությամբ դիմավորեց Լորիս-Մելիքովին: Նախորդ պատերազմից անցել էր 22 տարի, բայց թուրք գյուղացիները չէին մոռացել ազգությամբ հայ ռուսական գեներալին՝ արդարադատ վերաբերմունքի շնորհիվ:

Հաջորդ օրն առավոտյան, Մոլա-Մուսա գյուղում հավաքվեցին շրջակա թուրքական գյուղերի ավագներն, իրենց հետ բերելով բազմաթիվ

գյուղացիների: Բոլորն էլ ուզում էին տեսնել, «Սարդար Մելիքին», ինչպես անվանում էին գեներալին:

Հավաքվածների առջև հանդես եկավ Լորիս-Մելիքովն, որի կրծքին ռուսական շքանշանների շարքում երևում էր թուրքական Մեջլիսի երկրորդ աստիճանի շքանշանն, որով սուլթանը նրան պարգևատրել էր 1855 թ. Կարսի մարզը արդարացի ղեկավարելու համար:

Կորպուսի հրամանատարը մաքուր թուրքերեն լեզվով դիմեց հավաքված բնակչությանը.

- Մենք այս պատերազմը չէինք ուզում, բայց այնպես ստացվեց, որ մեր բանակը հարկադրված մտել է Թուրքիայի սահմանը: Համարձակորեն ձեզ վստահեցնում եմ, որ այս պատերազմը չի ընթանում ժողովուրդների միջև: Այն ընթանում է պետությունների միջև: Ռուսական զորքերը խաղաղ բնակչության նկատմամբ ոչ մի բռնություն չեն գործի: Դրանում դուք համոզվեցիք հենց այսօր: Եթե դուք շարունակեք առաջվա նման զբաղվել ձեր տնտեսությամբ ու կատարեք ռուսական իշխանությունների օրինական պահանջներն, ապա դուք չեք ենթարկվի որևէ նեղության: Մեր զորքերի կողմից գրաված տարածքների քաղաքացիական կառավարման համար ստեղծվում է Շորագյալի օկրուգ գեներալ-մայոր Իվան Միխայլովիչ Պոպկոյի գլխավորությամբ: Անցյալ պատերազմի ժամանակ նա ղեկավարում էր Բաշ-Շորագյալի գավառը և դուք գոհ էիք նրանից:

Այնուհետև Լորիս-Մելիքովը հայտնեց, որ մինչև Պոպկոյի գալը, նրա փոխարեն ժամանակավորապես նշանակվում է գնդապետ Ստեփան Հովսեփի Քիշմիշյանը:

Իր խոսքի վերջում Լորիս-Մելիքովը հատկապես դիմեց հավաքված մահմեդական հոգևորականներին.

- Հարգելի մոլլաներ, դուք պետք է առաջվա նման խստորեն հետևեք, որպեսզի ձեր հոտը կատարի պապենական կրոնական ծեսերը: Մենք քրիստոնյաներս չենք պատրաստվում ձեզ պարտադրել մեր կրոնը: Ներկա պատերազմն ընթանում է թուրքական պետության ու թուրքական ռազմական ուժերի դեմ: Իսկ կրոնը անզեն է ու արդարացի: Մենք հարգում ենք կրոնը և ձեզ կոչ ենք անում աղոթել Ալահին նույնպիսի ջերմեռանդությամբ, ինչպես խաղաղ ժամանակ: Այսպիսին է Ռուսատանի թագավոր Ալեքսանդր Երկրորդի կամքը, այսպիսին է Կովկասի փոխարքա գլխավոր հրամանատար նորին կայսերական մեծության մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչի կամքը:

Երբ կորպուսի հրամանատարն ավարտեց իր խոսքը, հավաքված ամբոխն երկար ժամանակ չէր լռում: Նրանք ուրախ բացականչություններով ողջունում էին գեներալին, նրան մաղթելով արևշատություն: Թուրք բնակչությունն իրենց երկիր մտած թշնամական բանակի հրամանատարին ողջունում էր որպես ազատարարի:

Կորպուսում ծառայող շատ սպաներ, որոնք առաջին անգամ էին մասնակցում Թուրքիայի դեմ պատերազմին, չէին թաքցնում իրենց զարմանքը գեներալի նկատմամբ թուրքերի այդպիսի ջերմ վերաբերմունքի համար: Եվ դրանից էլ ելնելով, նրանք կարծում էին, առջևում իրենց միայն այդպիսի հաջող իրողություն է սպասվում:

- Պարոնայք, մի ընկեք երևակայության մեջ, այդ նրանք ուժն են հարգում, իսկ երբ սկսվեն անհաջողությունները, հետքն անգամ չի մնա ոչ սիրո և ոչ էլ հպատակության, այնպես որ հուսախաբ չլինեք, - զգուշացրեց Լորիս-Մելիքովն իր սպաներին:

«Իսկ որտեղի՞ց ձարևմ փոխարքայի կնիքը»

Գնդապետ Քիշմիշյանը փորձված գինվորական էր, կարգապահությամբ ու ջանասիրությամբ վայելում էր Լորիս-Մելիքովի վստահությունը: Նա լավ գիտեր մահմեդական բնակչության հոգեբանությունը և շտապեց Թիֆլիսում տպագրել տալ Կովկասի փոխարքայի կոչն ու տարածել:

Փոխարքայի կոչում ասվում էր. «Ինձ վստահված Կովկասյան բանակի զորքերը մտել են ձեր սահմանները:

Ռուսաստանի թագավոր միապետի անունից, որպես նորին մեծության Կովկասի փոխարքա հայտարարում եմ ձեզ. ռուսական զորքերը գալիս են ոչ թե թուրքական տերության խաղաղ հպատակներին քայքայելու, այլ նրա համար, որպեսզի փրկության ձեռք մեկնեն անմեղ տառապողներին ու ճնշվողներին:

Մի վախեցեք ձեր հանգստության և ունեցվածքի պահպանման համար: Ձեր գլխից մազ չի ընկնի, եթե դուք վստահությամբ վերաբերեք մեր զորքին, հանգիստ կմնաք ձեր տներում:

Զորքերի պետ, գեներալ-թիկնապահ, հեծելազորի գեներալ Լորիս-Մելիքովին հրամայել եմ խստորեն հետապնդել ձեզ նեղացնողներին ու ձեր նկատմամբ անարդարացի վարվողներին, եթե դրանք հակառակ սպասվածի, հանդիպեն: Դրա փոխարեն, յուրաքանչյուրն, ով կդիմադրի մեր զորքերին և հատկապես զենքը ձեռքին կկանգնի մեր դեմ, կլինի մեր թշնամին և թող նա իրեն մեղավոր համարի այն դժբախտության համար, որը կարող է նրան հասնել»:

Քիշմիշյանը այս կոչը նաև մեծ քանակությամբ արտագրել տվեց ու սկսեց տարածել թուրք բնակչության մեջ: Բայց անսպասելիորեն պարզվեց, որ ձեռագրով գրված կոչին բնակիչներն ոչ միայն անվստահությամբ են վերաբերում, այլև համարձակվում են ետ վերադարձնել:

Այս իրողությունն այնպես հանկարծակի էր բերել Ստեփան Քիշմիշյանին, որ նա անմիջապես այդ մասին զեկուցեց Լորիս-Մելիքովին.

- Ի՞նչ անեմ, այս թուրքերը չեն ուզում վերցնել մեր կոչը: Պահանջում

են, որ դրանցից յուրաքանչյուրի վրա կնիք դրվի: Իսկ որտեղի՞ց ճարեմ փոխարքայի կնիքը:

Լորիս-Մելիքովը ժպտալով Քիշմիշյանին հիշեցրեց, որ լինելով կովկասցի, պետք է լավ իմանա, որ Արևելքում ոչ մի թուղթ զորություն չունի առանց կնիքի և հեղինակություն չի ունենա անկախ իր բովանդակությունից:

- Այնպես որ, - եզրափակեց կորպուսի հրամանատարը, - Ստեփան Օսիպովիչ, հարկավոր չէ փոխարքայի կնիքը: Դրա փոխարեն կոչի տակ դրեք կորպուսի կնիքը: Թուրքերի համար կարևորն երկգլխանի արծիվն երևա:

Քիշմիշյանն այդպես էլ վարվեց: Հենց թուրքերի ներկայությամբ գրագիրները կոչը կնքում էին կորպուսի կնիքով և հանձնում նրանց: Շտաբի մոտ կուտակվեց հսկայական հերթ: Բոլորն էլ շտապում էին ստանալ Կովկասի փոխարքայի կոչն, այն էլ կնքված իրենց ներկայությամբ: Նույնիսկ, եթե կնիքի վրա երկգլխանի արծիվը լավ չէր երևում, թուրքերը պահանջում էին նորից կնքել:

Թուրքերը համոզված էին, որ այդ կնքված կոչերն իրենց կփրկեն հետագա անախորժություններից: Նրանք այնքան էին հավատացել դրան, որ շատերը պահել էին այդ կոչերը և ռուս զինվորներին ներկայացրին նույնիսկ 1914 թ. սկսված պատերազմի ժամանակ: Նրանք չգիտեին, որ այդ պատերազմն ուրիշ էր: Բանակն էլ նույնը չէր: Եվ այդ կոչերն այլևս ազդեցություն չունեին:

«Կուշտ զինվորը հաղթանակի գրավականն է...»

Կորպուսի հրամանատարն անձնական փորձով համոզված էր, թե ինչ է նշանակում զինվորին ժամանակին և լիարժեք կերակրելն ու այդ պատճառով էլ հատուկ հսկողություն էր սահմանում բանակի մատակարարման ծառայության վրա:

Այժմ նա դրա վրա հատկապես առավել ուշադրություն էր դարձնում, քանի որ այդ ծառայության մեջ ընդգրկվել էին փոխարքայի շրջապատի մարդկանց հովանավորությամբ, հանգամանք, որ նրան պատճառելու էին բավականաչափ հոգսեր:

Հենց այս ամենն էլ նկատի ունենալով, Լորիս-Մելիքովը հրաման արձակեց պարենի և անասնակերի հայթաթման համար վճարում կատարել ոչ թե ոսկե դրամով, ինչպես հանձնարարված էր փոխարքայի հրամանով, այլ մատակարարներին վճարել թղթադրամով:

- Հենց որ սկսենք ոսկով վճարել, - ասաց Լորիս-Մելիքովը հրամանը ստորագրելիս, - ապա նախորդ պատերազմի փորձով գիտեմ, որ ոսկին կվերադառնա ձեռքից ոչ մաքուր ինտենդանտների ու հրամանատարների գրպանը:

Լորիս-Մելիքովի այս հրամանն առաջին լուրջ հարվածն էր ինտենդանտական ծառայությանը, որից, բնականաբար, պետք է հիասթափվեին զինվորների հաշվին հարստանալու համար կորպուսս գործուղված վերոհիշյալ անձինք: Խորն էր նաև նրանց դժգոհությունը: Այս ամենը կանխատեսելով Լորիս-Մելիքովն որոշեց ուժեղացնել իր անձնական հսկողությունը:

...Վաղ առավոտյան զորամասերը դուրս եկան Մոլա-Մուսա գյուղից և շարժվեցին Կարսի ուղղությամբ: Լորիս-Մելիքովը թիկնապահների ուղեկցությամբ մոտեցավ զորասյան վերջից շարժվող հետևակ գնդին: Զինվորների դեմքերի թթված արտահայտությունը գրավեց կորպուսի հրամանատարի ուշադրությունը:

Զինվորներից մեկին հարցնելով նրա անունը, Լորիս-Մելիքովը հետաքրքրվեց, թե ճանապարհ ընկնելուց առաջ, արդյոք կերե՞լ են տաք կերակուր: Զինվորը շփոթվեց գեներալի հարցից և անկապ պատասխան տվեց:

- Իսկ, ախպերս, - նորից հարցրեց Լորիս-Մելիքովն, - առավոտյան երթից առաջ, ձեզ մսով նախաճաշ տվե՞լ են:

Զինվորի լռությունից ամեն ինչ պարզ էր: Սարսափելի զայրացած Լորիս-Մելիքովը կարգադրեց իր մոտ կանչել գնդի հրամանատարին:

- Ապա, հոգյակս, - զայրացած դիմեց Լորիս-Մելիքովը հևոցով մոտեցած հրամանատարին, - ինչո՞ւ է գունդը արշավի դուրս եկել սոված վիճակում:

Գնդի հրամանատարի ոչ մի բացատրություն չընդունեց գեներալը և խստորեն զգուշացրեց, որ եթե մեկ անգամ էլ այդպիսի երևույթ կրկնվի, ապա բոլորին դատի կտա: Կորպուսի հրամանատարը կարգադրեց ամբողջ զորախմբին դադար տալ և սկսեց գունդ առ գունդ անձամբ ստուգել զինվորներին ժամանակին կերակրելու վիճակը: Մեծ էր նրա զայրույթը, երբ պարզվեց, որ երեք գունդ ևս արշավի են դուրս բերվել առանց նախաճաշի: Լորիս-Մելիքովը հրամայեց անմիջապես կազմակերպել զինվորներին կերակրելը: Նա շարժման հրաման տվեց միայն այն ժամանակ, երբ վերջին զինվորը նախաճաշեց ու ստացավ ճանապարհի մթերաբաժինը՝ կազմված երկու ֆունտ պաքսիմատից և մեկ ու կես ֆունտ տավարի մսից:

Կորպուսի հրամանատարը կատարվածից ճիշտ եզրակացության եկավ: Նրա համար պարզ դարձավ, որ ինտենդանտական ծառայության աստիճանավորներն որոշել էին այդ միջոցով կորպուսի հրամանատարին դաս տալ: Բայց սխալվեցին: Ցարական գանձարանից ստացված ոսկին թալանելու հույսից կտրված ինտենդանտները սսկվեցին:

- Կուշտ զինվորը հաղթանակի գրավականն է, - ասաց կորպուսի հրամանատարը և գրագրին թելադրեց իր հերթական հրամանը. «Եթե ապագայում կրկնվի նման դեպք, եթե այդ գործում թեկուզ և աննշան թերություն լինի, ապա մեղավորները կպատժվեն պատերազմի ժամանակվա խստագույն օրենքներով»:

Իսկ դա նշանակում էր գնդակահարություն: Ովքեր վաղուց ճանաչում էին Լորիս-Մելիքովին, գիտեին նրա բնավորությունը, համոզված էին, որ գեներալը նահանջողը չէ և հաստատուն կամքով կիրականացնի իր հրամանը:

Իսկապես, Լորիս-Մելիքովի հրամանը կարևոր դեր խաղաց և սթափեցրեց ինտենդանտական ծառայողներին: Ամբողջ պատերազմի ժամանակ գործող կորպուսում պարենի մատակարարման գործում խոշոր բացթողումներ չեղան: Կորպուսը խուսափեց սովից: Պետական միջոցները չվատնվեցին:

Ահա, թե ինչ է վկայում «Գոլոս»-ի թղթակից Գ. Գրադովսկին. «Չգիտեմ ինչպիսին է մյուս ջոկատներում, ապա գործող Կովկասյան կորպուսի զինվորները միշտ լավ կերակրվում էին: ...Բազմիցս վկա եմ եղել, երբ կորպուսի հրամանատար գեներալ-թիկնապահ Լորիս-Մելիքովը հանդիպելով զինվորներին անպայման հարցնում էր. «Տաք կերակուր կերե՞լ եք», կամ էլ՝ «Մսաբաժին տվե՞լ են...»:

Մոլա-Մուսա գյուղից դուրս գալուց հետո Լորիս-Մելիքովի զորաջոկատն ուղղվեց դեպի Կարս: Այդ ընթացքում հաջորդաբար տեղում էին ձյուն ու անձրև: Ճանապարհը պատված էր ջրիկացած տիղմով: Ձյունախառն քամու, ցեխի, տեղատարափ անձրևի պայմաններում զինվորները քայլում էին մեծ դժվարությամբ, իրենց հետ քաշելով տանում թնդանոթներն ու բեռնավորված սայլերը:

Չնայած ճանապարհի մեծ դժվարություններին, Լորիս-Մելիքովի զորաջոկատին հաջողվեց հասնել Կարսի մատույցներ:

Թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Մուխթար փաշան տեղեկանալով ռուսական զորամասերի շարժման մասին, հեռացավ Կարսից, ամրոցի պաշտպանությունը դնելով կայազորի վրա:

Լորիս-Մելիքովն այնուամենայնիվ, կորցրեց հանկարծակի հարձակման պահը: Հետագայում, տասնյակ տարիներ անց, մի շարք ռազմական պատմաբաններ հանիրավի մեղադրեցին անվանի զորահրամանատարին, գտնելով, որ նա պետք է հետապնդեր Կարսից դեպի էրզրում հեռացած Մուխթար փաշային:

Կարսը գրոհով գրավելու համար կորպուսի հրամանատարը բավարար ուժեր չուներ: Ուստի նա ձեռնամուխ եղավ Կարսի պաշարմանը:

Գեներալ Արշակ (Արզաս) Տեր-Ղուկասով (Տեր-Ղուկասյան)

Գեներալ Արշակ Տեր-Ղուկասովը ծնվել է 1819 թ. հոգևորականի ընտանիքում: 1836 թ. պորուչիկի աստիճանով ավարտել է հաղորդակցության ճանապարհների ինժեներների կորպուսը: 11 տարի այդ տեղ ծառա-

յելուց հետո, 1852 թ. ընդունվել է Ապշերոնյան հետևակ գունդ և մասնակցել Դաղստանում ու Չեչնիայում մարտական գործողություններին: Արդեն գնդապետի աստիճանով մասնակցել է Գունիբի գրավմանը:

1865 թ. գեներալ-մայորի աստիճան ստացած Տեր-Ղուկասովը նշանակվում է 19-րդ հետևակ դիվիզիայի հրամանատարի օգնական, իսկ 1868 թ. ստանձնում է Միջին Թերեքի մարզի կառավարչի պաշտոնը:

Ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին Տեր-Ղուկասովը նշանակվում է գործող կորպուսի Երևանյան ջոկատի հրամանատար: Երևանյան ջոկատն ուներ 7000 զինվոր: Ջոկատին տրվել էր բարդ և դժվարին խնդիր՝ նախ փակել թշնամու զորքերի ճանապարհը դեպի Երևանի նահանգ և երկրորդ՝ իր վրա գրավել Մուխթար փաշայի ուշադրությունը: Խորանալով հակառակորդի տարածք 200 կիլոմետրով, Տեր-Ղուկասովը ջախջախեց թուրքերին և ամրապնդվեց Դրամ դաղի մատույցներում, սպասելով օգնական ուժերի:

Մուխթար փաշան իր գլխավոր ուժերը կենտրոնացրեց Երևանյան ջոկատը ջախջախելու նպատակով: 10 ժամ տևած համառ մարտից և Ջիվինի անհաջողությունից հետո օգնական ուժ չստանալով, Տեր-Ղուկասովն որոշեց նահանջել: Ընդունելով նահանջելու որոշում Տեր-Ղուկասովն ասել է. «Շատ եմ կարդացել պատերազմների պատմությունը: Բայց ոչ մի տեղ չեմ հանդիպել, որպեսզի փրկության համար նահանջեն, փրկության համար սովորաբար հարձակվում են»: Վիճակը դառնում էր անելանելի: Առջևում թշնամու ուժեղ բանակն էր, շուրջբոլորը թշնամաբար տրամադրված մահմեդական բնակչությունը, թիկունքում Բայազետը պաշարած Ֆայիկ փաշայի բանակն, որն սպառնում էր փակել նահանջի ճանապարհը: Այս ամենին ավելացրած պարենի և զինամթերքի պակասը, վիրավորներով լի տրանսպորտը և վերջապես մոտ 3000 փախստական հայեր, որոնք թուրքական գազանություններից փրկվելով, միացել էին ջոկատին:

Ահա, այսպիսի պայմաններում, Տեր-Ղուկասովին հաջողվեց 10 օրում նահանջել 180 կիլոմետր և վիրավորների ու փախստականների հետ միասին բարեհաջող հասնել սահման:

Այս նշանավոր նահանջը հետագայում դարձավ ռազմական պատմության հետաքրքրության առարկան: Ինչպես թուրքերն, այնպես էլ նրանց հետ եղած անգլիական սպաները մնացել էին զարմացած այդ անօրինակ, բայց հերոսական նահանջի համար:

Պատերազմի ավարտից հետո Տեր-Ղուկասովը նշանակվեց Կովկասյան Գրենադերյան դիվիզիայի հրամանատար: 1879 թ. գեներալ Լազարևի մահից հետո Տեր-Ղուկասովը դարձավ Անդրկասպյան երկրամասի զորքերի հրամանատար: Սակայն կարճ ժամանակ անց, հիվանդության պատճառով հրաժարվեց այդ պաշտոնից և նշանակվեց Կովկասյան

2-րդ կորպուսի հրամանատար: Տեր-Ղուկասովը մահացավ 1881 թվականին, վաստակելով քաջարի զորահրամանատարի ու բարոյական բարձր հատկություններ ունեցողի արժանի համբավ:

Տեր-Ղուկասովը փրկում է հայ ընտանիքներին

Թուրքերը ձգտում էին շրջապատել ու ոչնչացնել Տեր-Ղուկասովի զորաջոկատը: Նրան էին միացել կործանումից փրկված 3000 ընտանիք, որոնց չէր կարելի թողնել բախտի քմահաճույքին: Ուստի Տեր-Ղուկասովն որոշեց նահանջել և իր հետ տանել թուրքական հրոսակներից մի կերպ փրկված հայ ընտանիքներին ու ապահով հասցնել ռուսական սահման:

Նահանջը կատարվում էր թուրքական զորքի չդադարող գրոհների պայմաններում: Ի վերջո Տեր-Ղուկասովին հաջողվեց հայ ընտանիքներին հասցնել էջմիածին և 1877 թ. հունիսի 26-ին սկսեց արշավ Բայազետի ուղղությամբ...


Սակայն այդ հայ ընտանիքների ծանր վիճակը չթեթևացավ: Բոլորին հնարավոր չէր պահել էջմիածնում: Նախ, հարկավոր էր բնակության տեղ հատկացնել, մշակելու համար հող տալ: Գաղթածների համար հարկավոր էր պայմաններ ստեղծել, որպեսզի կարողանային իրենց աշխատանքով ապահովել իրենց գոյությունը: Իհարկե, ամենից դժվարն առաջին խնդիրն էր: Հարկավոր էր ընտրել այնպիսի վայրեր, որոնք իրենց պայմաններով՝ դիրքով, օդով, ջրով ու մշակության հարմարությամբ նման լինեին իրենց նախկին բնակավայրերին: Ահա, այս պատճառով էլ ընտրվեցին Ապարանն ու Նոր Բայազետը: Բայց այդ շրջանների աղքատ գյուղացիները, թեև մեծ ցանկությանը /չէ՞ որ եկել էին իրենց հարազատները Ալաշկերտից ու Բայազետից, որտեղից իրենք գաղթել էին 1828-1832 թվականներին/, բայց հնարավորություն չունեին լիարժեքորեն հոգալու նրանց բոլոր կարիքները:

Անդրկովկասի հայաշատ վայրերում Թիֆլիսի հայության նախաձեռնությամբ սկսվեց հանգանակություն գաղթականներին օգնություն կազմակերպելու համար: Այսպիսով, ինչ որ չափով հայ գաղթականությունը ստացավ օգնություն: Բայց կարևորն այն էր, որ նրանք Տեր-Ղուկասովի շնորհիվ փրկվեցին ֆիզիկական բնաջնջումից:

Թուրքական իշխանություններն օգտվելով պատերազմական վիճակից, կազմակերպում էին բաշիբուզուկների միջոցով հարձակումներ հայկական բնակավայրերի վրա: Ավերվում էին բնակավայրերը, թալանվում հայերի ունեցվածքը: Սրի էին քաշվում անմեղ ու անպաշտպան կանայք ու երեխաներ:

Իսկ նրանց ո՞վ պետք է փրկեր թուրքական բռնություններից...

Կարսի գրոհի պլանը 1877 թ. նոյեմբերի 5-6-ին



«Հայ ազգը շատ աւելի կը գերադասէ օսմանեան վարչութեան տակ մնալը...»

Երբ Ռուսաստանը Թուրքիային պատերազմ հայտարարեց, թուրքական իշխանությունների թելադրանքով անգլիական դեսպանին ներկայացան թուրքահպատակ քրիստոնյա հոգևոր առաջնորդները՝ հայ լուսավորչական պատրիարքը, հայ կաթոլիկ պատրիարքի փոխանորդը, սիրիական պատրիարքը, հունական պատրիարքարանի ներկայացուցիչը և հայտարարեցին, թե դեմ են Ռուսաստանին ու նախընտրում են մնալ թուրք կառավարության հպատակ, քան թե ենթարկվել ռուսական կառավարությանն, որովհետև «Թուրքիայում նրանք դաւանութեան կատարեալ ազատութիւն էին վայելում, մինչդեռ ռուսական կառավարութիւնը կրոնական հարցերում աննեողամիտ է»:

Այդ դիմումների նպատակն էր ցույց տալ, թե Ռուսաստանի առաջ բերած պատճառը պատերազմի համար, այն է՝ քրիստոնյաների պաշտպանությունը, ճիշտ չէր, քանի որ իրենք՝ քրիստոնյաները հակառակ են Ռուսաստանին և, այս կերպով Թուրքիայի կողմը գրավել Եվրոպայի, մանավանդ Անգլիայի համակրանքը:

1877 թ. ապրիլի 14-ին Անգլիայի դեսպան Լեարդը Լոնդոն ուղարկած զեկուցագրում հայտնում էր, որ իրեն այցելած Կոստանդնուպոլսի պատրիարք Ն. Վարժապետյանը ասել է հետևյալը. «Հայ ազգը շատ աւելի կը գերադասէ օսմանեան վարչութեան տակ մնալը, քան թէ ռուսական իշխանութեան ենթարկուելը: Հայերը Թուրքիայում բոլորովին ազատ են իրանց կրօնը դաւանելու և գործադրելու, մինչդեռ Ռուսաստանում այդպես չէ. և նրանք ապացույցներ ունեն, որ Ռուսաստանը մտադիր է ճնշել ու հարկադրել, որ հայերն իրանց հայրերի հաւատը թողնեն և յունադաւանութիւնն ընդունեն: Բայց հայերն որոշել են երբէք այդպես բան չանել: Հայերի շահերը նոյնն են թիւրքերի շահերի հետ և, նրանք յոյս ունեն աւելի զարգանալ և աւելի մեծ ազատութիւն վայելել օսմանեան հպատակ մնալով, քան թէ ռուսահպատակութիւն ընդունելով: Կ. Պոլսի և յարակից նահանգներում բնակվող հայերը բնաւ գանգատի տեղի չունեն, սրանք պատուաւոր և կարևոր պաշտօններ են գրաւած, մեծ ազդեցութիւն ունեն երկրի կառավարութեան և վարչութեան մէջ... Նորին սրբազանութիւնը պնդեց, թէ թիւրք կառավարութիւնը պարտաւոր է հայ ժողովրդի մէջ տիրող այս ոգին քաջալերել, ամէն հնարաւոր հովանաւորութիւն և պաշտպանութիւն ցոյց տալով հայերին: Թուիւրք կառավարութիւնը թող չմոռանայ, որ էջմիածնի կաթողիկոսն, որ դեռ ահագին ազդեցութիւն ունի հայ ազգի վրայ, ռուսահպատակ է, և թէ ռուսական կառավարութիւնը Հայաստան արշաւող իր բանակում հայերին դիտմամբ բարձր և վստահելի

պաշտօններ է տուած, որպես զի հայ քրիստոնեաների աջակցութիւնն և համակրութիւնը գրաւէ: Նորին սրբազանութիւնը հաւատացած է, որ ռուսական կառավարութեան այս նպատակը չի իրագործուի, եթէ Բ. Դուռը փաստերով ցոյց տայ, թէ մտադիր է հայերի հետ արդարութեամբ վարուել և նրանց կեանքն ու գոյքը պաշտպանել: Եթէ Բ. Դուռն այսպէս վարուի, նա կարող է հայերից մի ազգային պահակախումբ /milie/ կամ քաղաքային պահակների գունդ կազմել, որ մահմեդականների հետ միասին իրանց ընդհանուր հայրենիքն և քաղաքները կը պաշտպանեն ռուս արշաւողների դէմ...»:

Իհարկե, Անգլիայի դեսպանը անչափ գոհ մնաց Ն. Վարժապետյանի հայտարարությունից և նրան խորհուրդ տվեց դիմել մեծ վեզիր Սավֆեթ փաշային, որի հանձնարարությամբ էր պատրիարքը դիմել անգլիական դեսպանին:

Հայ կաթոլիկների պատրիարք Հասունյանի ներկայացուցիչներն էլ շնորհակալություն հայտնեցին անգլիական թագուհու կառավարությանը հայերին պաշտպանելու և աջակցելու համար ու, ինչպես Լեարդն է գրում իր զեկուցագրում, «նրանք խիստ լեզուով խօսեցին ռուսական վարչութեան և ազդեցութեան ենթարկուելու դէմ և բաղձանք յայտնեցին թիւրքահպատակ մնալ»:

Ահա, այսպես կրոնական հարցում իրար դեմ անզիջում պայքարող Հասունյանն ու Վարժապետյանը միասնական էին, երբ խոսքը վերաբերում էր Ռուսաստանին ու Թուրքիային և հանդես էին գալիս օսմանյան կայսրության պաշտպանությամբ:

Կրոնական առաջնորդներց ետ չէին մնում նաև օսմանյան պառլամենտի հայ երեսփոխաններն, որոնց պարագլուխ Սեպուհ Մաքսուդյանը անգլիական դեսպանին 1877 թ. ապրիլի 3-ին հայտարարեց. «Ամէն դաւանութեան քրիստոնեայ հասարակութիւնները վայելում են և անշուշտ պիտի վայելեն անհամեմատ աւելի մեծ կրոնական ազատութիւն և զարգացման աւելի մեծ յոյս ունեն թիւրքական իշխանութեան տակ, քան թէ ռուսական»:

Երբ սկսվեց ռուս-թուրքական պատերազմը, օսմանյան պառլամենտը 1877 թ. ապրիլի 30-ին անգլիական դեսպան Լեարդին հանձնեց շնորհակալական ուղերձ, որտեղ ասվում էր. «Բազմաթիւ նախկին փորձերից յայտնի է, որ ամէն անգամ, երբ օսմանեան կայսրութեան մէջ յառաջադիմութեան նշան է երևացել, Ռուսաստանը՝ մեր ազգի այս դարաւոր թշնամին անմիջապէս որևէ չնչին առիթ է գտել մեզ դեմ պատերազմ հրատարակելու...»:

Այս ուղերձում, որի կազմմանն ակտիվ մասնակցել էին հայ երեսփոխաներն, ասվում էր նաև. «Ոչ մահմեդական ժողովուրդներն, որոնք «օսմանցի» տիտղոսն առին և, զանազան քրիստոնեայ հասարակութիւն-

ներն, որոնք կատարեալ ազատութիւն են վայելում օսմանեան կայսրութեան հովանու տակ, սոսկումով և քամահրանքով լսեցին մեր թշնամու պնդումը, թէ նա ուզում է եղել պաշտպան հանդիսանալ քաղաքակրթութեան և յառաջադիմութեան, որն իրանք արդէն վայելում են, ինչպէս քանիցս յայտարարել են...»:

1877 թ. ապրիլի 13-ին թուրքական պառլամենտում հայ երեսփոխանները իրենց ելոյթներով անցան ամեն մի սահման: Հալեպից ընտրված երեսփոխան Մանուկ Խարաճյանը հերքելով, թե Ռուսաստանը պատերազմը սկսել է քրիստոնյաների պաշտպանության համար, հայտարարեց. «Հայ ժողովուրդը, մանավանդ Հալեպի իմ ընտրողները պատրաստ են ամէն կերպ զոհողութիւն յանձն առնել իրանց հայրենիքն և իրանց սիրելի թագաւորն օտար յարձակման դէմ պաշտպանելու համար»:

Կարինից ընտրված երեսփոխան Պալլարյանը հայտարարեց, թե «կարնեցիք արդէն մի տարուց ի վեր է զենքի են դիմել իրանց իսլամ հայրենակիցների հետ ընդհանուր հայրենիքը պաշտպանելու համար արտաքին թշնամու դէմ»:

Պատրիարք Ն. Վարժապետյանն էլ իր հերթին 1877 թ. ապրիլի 28-ին «Մասիս» թերթում տպագրված կոնդակով հայությանը կոչ էր անում «հաւատարիմ հպատակ մնալ և աղոթել առ Աստուած վասն պահպանութեան անգին կենաց օգոստոսափառ թագաւորին օսմանեանց՝ սուլթան Համիդ Բ-ի և վասն անդորդուելի զօրութեան և յաջողութեան օսմանեան արիագունդ բանակին»:

Օսմանյան պառլամենտի հայ երեսփոխանների և պատրիարք Ն. Վարժապետյանի խոստումներն ու հավաստիացումները բոլորովին էլ չէին արտահայտում արևմտահայության բաղձանքները: Նրանք պարզապես իրենց եսասիրական շահերն էին պաշտպանում և կեղծում իրականությունը:

Իսկ, թե ինչպիսին էր իրականությունը, փաստում էր անգլիական դեսպան Լեարդը, որը դեռևս 1876 թ. սեպտեմբերի 11-ին իր կառավարությանը հայտնել էր հետևյալը. «Հայերի մէջ արտահայտուած է դժգոհութեան շարժում, որ կարող է լուրջ կերպարանք ստանալ: ... Մի բարձրաստիճան հայ անձնաւորութիւն, որ ամենեւին կապ չունի կառավարութեան հետ, ինձ յայտնեց այսօր, որ թեպետ Բ. Դուռն է սկզբնական պատճառն իր ազգակիցների /հայերի/ այժմեան դժգոհութեան, բայց տարակոյս չկայ, որ ներկայ յուզումը ռուսական գրգռումների արդիւնք է: Նա կրկնեց, ինչ որ ես արդէն լսել էի. այն է, որ հայոց ուսեալ դասակարգի մեծամասնութիւնը խիստ կերպով հակառակ է Ռուսաստանին, բայց ժողովուրդը, բազմութիւնն, որոնք իսկապէս տանջվում են այդ հարստահարութիւններից, այդպէս չեն և հաւատացած են, որ եթէ փոփոխութիւն լինի /այսինքն եթէ ռուսական տիրապետութիւն գայ/ աւելին լաւ կը լինի»:

Շուտով Կ. Պոլիս լուրեր հասան օսմանյան իշխանությունների, զորքի և քուրդ հրոսակների գործադրած զանգվածային բռնությունների մասին: Ավերվում ու թալանվում էին հայկական գյուղերը, սպանվում էին բազմաթիվ անմեղ մարդիկ: Այս ահավոր բռնությունների մասին տեղեկանալով վերոհիշյալ երեսփոխանները պառլամենտի հունիսի 14-ի նիստում սկսեցին բողոքել: Բայց ո՞վ էր նրանց լսողը: Թուրքական կառավարությունը հասել էր իր նպատակին: Իր կամակատար հայ երեսփոխանների ու պատրիարքի միջոցով ոչ միայն բթացրել էին հայության զգոնությունն, այլև նրանց ելույթներով եվրոպական տերություններին հավատացրել, թե օսմանյան կայսրության մեջ հայերն օգտվում են պետության հովանավորությունից և վայելում են ազատություն:

«Ձեզ նման չհաշխարհիկ հրեշտակային սիրտ կրող...»

Այն ժամանակ, երբ թուրքական հրոսակներն ավերածություններ էին գործում հայկական գավառներում, սպանում ու թալանում անմեղ մարդկանց, Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը 1877 թ. օգոստոսի 10-ին այցելեց սուլթան Աբդուլ Համիդին:

Որպեսզի պարզ լինի, թե ինչ էր այդ հանդիպման իմաստը, ստորև բերենք Կ. Պոլսում լույս տեսնող «Մասիս» թերթի հաղորդումն ամբողջությամբ:

Հանդիպման ժամանակ հիշելով օսմանյան գահին հայերի անձնվեր ծառայությունը, սուլթանն ասել է. «Գիտեմ, որ իմ սիրելի հայ ժողովուրդս գաւառանց մէջ տեղտեղ նեղութիւն կկրէ, բայց վստահ թող ըլլայ որ այն նեղութիւններն Աստծոյ շնորհիվ ի մօտոյ վախճան պիտի գտնեն, և երջանիկ ու անդորր վիճակ մը պիտի ստանայ. կը խնդրեմ իմ հայ ժողովրդեանս թէ յուր հանգստութիւնն ու բարօրութիւնն, որուն իրաւամբ արժանի եղած է մանաւանդ ներկայ դժուարին պարագայից մէջ մատուցած մեծամեծ ծառայութեամբք, իմ ջերմ բաղձանացս և հոգացութեանս առարկայ եղած է: Վկայ են երկինք, թէ ես մրջիւնի մը վրայ կոխել չեմ ուզեր, և երբեք չէի կամեր որ այսչափ անմեղ արիւն հոսեր և այսչափ աւերմունք և աղետք յառաջ գային, բայց դժբախտաբար իմ բաղձանացս հակառակ տեղի ունեցան, որով հրատարակած խարթերուս մէջ առաջադրած բարեկարգութիւններս գործադրելու դեռ ժամանակ չունեցայ. սակայն յոյս մեծ ունիմ, որ ներկայ պատերազմը վերջ գտնելուն պէս՝ անոնց ամենն ալ կատարելապէս պիտի գործադրին:

Ուստի կը խնդրեմ, բարև ըրեք իմ սիրելի հայ ժողովրդեանս և վստահ ըրեք զինք որ իւր հաւատարիմ և անձնուէր ծառայութեանց և խոհական ընթացից պտուղը պիտի վայելէ»:

Ս. պատրիարք վեհա. սուլթանին աշխարհաշէն բաղձանաց և դիտաւորութեանց լիովին կատարման համար սրտագին բարեմաղթութիւններ ընելով՝ յայտարարեց, թէ հայոց ազգն անբաժանելի կերպիւ կապուած է օսմանեան հզօր և փառաւոր գահոյից հետ և նորա քաղցր հովանւոյն ներքև կը բաղձայ վայելել իւր կրոնական և ազգային իրաւունքներն ու ազատութիւնները և թէ ն. կ. վեհափառութենէն զատ ուրիշ պաշտպան և ապաւեն չունի և չի փնթռեր: Վեհափառ սուլթանը կրկին գոհութիւն յայտնելով, առաջին Օսմանիէ պատուանշանը շնորհեց ս. պատրիարքին, ըսելով, թէ յանուն հայոց ազգին կը նուիրեմ ձեզ զայս և հրաման ըրաւ արարչապետ Քեամիլ պեյին ս. պատրիարքին կուրծքը կախէ:

Ս. պատրիարք հայրն յանուն հայոց ազգին շնորհակալութիւն յայտնելով ըսաւ թէ «հայոց ազգը բարեբախտ կը դաւանի զինքը ձեզ նման հնաշխահիրիկ բարեմասնութեամբք օժտել և հրեշտակային սիրտ կրող մեծ ինքնակալի մը հպատակ գտնուելուն համար»:

Երբ պատրիարքն ազգային ժողովում հանգամանորեն պատմեց Աբդուլ Համիդի մոտ ընդունելության մասին, ազգային երեսփոխանները շնորհավորեցին նրան և որոշեցին շնորհակալական ուղերձ ներկայացնել սուլթանին, ընդգծելով նրա հայասիրական ջերմ զգացմունքները:

Ազգային ժողովի երեսփոխաններն ու պատրիարքն այդպես էլ չհասկացան, որ սուլթանն իր փաղաքշական ու մեղրածոր խոսքերով և հնարքներով աշխատում էր շլացնել հայոց, նրանց մոռացնել բազմաթիվ հայկական գյուղերի ավերումը, հայ բնակչության գազանային ջարդը:

«Ես օսմանեան տէրութեան հաւատարիմ մնալու միտս առած եմ...»

Բայազետի հայ բնակչության կոտորածի և Տեր-Ղուկասովի հետ դեպի ռուսական սահման հեռացած 3000 ընտանիքների ծանր վիճակի մասին ժամանակի մամուլը բազմաթիվ հաղորդումներ տվեց:

Դրանց վրա հենվելով, Կ. Պոլսի ազգային ժողովի երեսփոխան Թորգոմյանը պատրիարք Ն. Վարժապետյանին ուղղեց երկու հարց.

1. Ալաշկերտի և Բասենի մեջ 5-6 հազար հայերի կոտորածի կապակցությամբ պատրիարքը ի՞նչ միջոցներ է ձեռնարկել դրանց չկրկնվելու համար:

2. Տեղեկություններ կան, որ թուրքական կառավարությունն որոշել է 16-60 տարեկան հայ տղամարդկանց բռնի զինվոր տանել: Ի՞նչ գիտե այս մասին պատրիարքը:

Տրված հարցերին պատրիարքը պատասխանեց 1877 թ. օգոստոսի 12-ին գումարված ազգային ժողովում:

- Պայազետի և Ալաշկերտի մեջ, - ասաց պատրիարքն, - անցած իրո-

ղութեանց վրայ առած պաշտօնական տեղեկութիւններս թէև մանրամասն չեն, և ես ի խնդիր եմ տակաւին ստուգելու, սակայն յայտնի է, որ այս պատերազմն աղետաբեր եղաւ աշխարհի և մարդկային ազգին. շատ ծաղկեալ քաղաքներ աւերակ դարձուց, շատ տուներ արտասուօք լցուց. աղետաբեր եղաւ նաև Հայաստանի մէկ մասին...

Այնուհետև, հայտնելով, որ ավերածությունների ու սպանությունների մասին լուրերը ստանալով դիմել է Բ. Դռան և նախարարներին՝ աղաչելով անառակ քրդերին պատժելու համար, պատրիարքը շարունակեց.

- Նախարարութիւնն ալ շատ ցաւած է և կը ցաւի այս անցից համար, և հաստատապէս որոշած է ժողովրդեան անդորրութեան և ապահովութեան համար ամէն ազդու միջոց ի գործ դնել...

Երկրորդ հարցի վերաբերյալ պատրիարքը հայտնեց, թե տեղեկություններ չունի և ավելացրեց.

- Միայն ի լրոյ գիտեմ, որ Կարնոյ մէջ և շրջականերէն քանի մը հազար հոգի մեր ազգայիններէն կամաւոր գրուեր են, և առանց պատերազմի երթալու միայն արքունի բանակած մէջ ծառայութիւն կը մատուցանեն եղեր...

Իր խոսքի վերջում Ներսես Վարժապետյան պատրիարքը հայտարարեց.

- Դուք գիտէք մեր ազգային քաղաքականութիւնն ինչ ըլլալը. ես պատրիարք եղած օրէն ի վեր քանիցս յայտարարեցի ձեզ, թէ մեր ազգն անբաժանելի կերպով կապուած է օսմանեան տէրութեան հետ, թէ մենք անոր յառաջադիմութեամբն ու բարեկարգութեամբը բարեբաստ պիտի լինինք, թէ անկէ զատ ուր նեցուկ և ապաւեն մը չունինք և չենք ուզում ունենալ և թէ՝ Աստուած չընէ որ ուրիշ տէրութեան մը յարինք: Ես ալ պատրիարք եղած օրս օսմանեան տէրութեան հաւատարիմ մնալ ուխտ ըրած եմ, և գիտեմ, որ մեր ազգն օսմանեան տէրութիւնը չատէր, երբեք չուզէր անոր դեմ ուղղակի կամ անուղղակի թշնամութեան մը մէջ գտնուի, միայն եթէ գանգատ կամ դժգոհութիւն մը ունի, այն ալ գաւառական հայ ժողովրդեան վրայ գործուած գեղծմանց համար, որոց դէմ կը մրցի նոյն կառավարութիւնը և կը ջանայ բոլորովին բնաջինջ ընել...

Պատրիարքի պատասխանն առաջ բերեց բուռն քննարկում: Նախ, երեսփոխան Թորգոմյան էֆենդին պատրիարքի պատասխանը գոհացուցիչ չհամարեց և առաջարկեց հաջորդ նիստում նորից անրադառնալ դրանց:

Խիստ ելույթ ունեցավ երեսփոխան Ստեփան Փափազյանը: Դժգոհելով, որ պատրիարքը տեղեկություններ չունի Հայաստանում կատարվող դեպքերի մասին, Ս. Փափազյանն ասաց.

- Կառաջարկեմ, որ մեր ամեն. Ս. պատրիարք հայրը հետն առնելով ի Կ. Պոլիս գտնուող կուսակրօն եկեղեցական պէտք եղածին չափ, երթայ յերզրում, և անկէ բաժնէ հետը գտնուող եկեղեցականները այն վայրերը, որ պատերազմին կեդրոնն են, և բանակաց տեղի, անոնց միջոցաւ հսկէ իր հօտին վրայ ի մօտուստ, այսպէս ըրած են մեր երանաշնորհ նախնիք ալ:

Այնուհետև հիշելով, որ վերջին օրերին պատրիարքն արժանացել է սուլթանի կողմից առաջին աստիճանի Օսմանիե շքանշանի, Ս. Փափազյանն ընդգծեց.

- Պատրիարքի ներկայութիւնը էրզրումի մէջ մեծ տպաւորութիւն յառաջ պիտի բերէ, մէկ կողմեն պիտի խրախուսէ օսմանեան բանակին ծառայող հայերը, որ հասարակած թշնամւոյն դէմ արիանան, միւս կողմէն այն կողմանց մեր հայ եղբարց կեանքը, պատիւն ու ստացուածքը մօտէն պիտի պաշտպանէ ընդդեմ խուժադուժ քրդաց, որ հակառակ կայսերական կառավարութեան կամաց և օրինաց վայրագաբար կը վարուին անմեղ հպատակաց դէմ:

- Մենք, - եզրափակեց Ս. Փափազյանը, - ուրիշ քաղաքականութիւն չունինք, բայց միայն մեր ազգայնոց կեանքը, պատիւն ու ստացուածքը պահպանելու քաղաքականութիւնը. և այսպիսի ժամանակի մէջ առ այս հասնելու համար ուրիշ միջոց և հնարք չեմ գտներ:

Ս. Փափազյանի առաջարկից ազգային ժողովի երեսփոխաններից շատերը դժգոհեցին և հայտնեցին իրենց անհամաձայնությունը: Նրանց բոլորի կամքն արտահայտեց երեսփոխան Պողոս Պառնասյանը, ասելով. «Գալով ուրիշ կողմանէ եղած սպանման և անգթութեանց, կառավարութիւնը թէև ամէն ջանք ի գործ կը դնէ քրիստոնէից վնաս մը չըզգալու համար, բայց դժբախտաբար պատերազմի ժամանակ անկարելի է, որ քիչ կամ շատ անկարգութիւնք չպատահին: Սա ալ կայ, որ թշնամին կը մեծցնէ գործը, մէկը 10 կընէ, որպէսզի աւելի մեծցնելով Եւրոպայի առջեւ հաւատացնելու յաջողի թէ քրիստոնեաք մեծ նեղութեան մէջ են և թէ՝ ինք անոնց փրկութեանը համար պատերազմ մղել ստիպուած է:

- Եթէ, - շարունակեց Պառնասյանը, - ս.պատրիարքին առաջարկենք, որ բուն վտանգին տեղն երթայ, այս բանը քաղաքականապէս մեծ նշանակութիւն կունենայ և թշնամւոյն անբաստանութիւնները արդարացնելու կօգնէ: Ուրեմն պաղ արեամբ իրերը նկատենք և երկչոտներու խօսքին հաւատ չընծայենք:

Ազգային ժողովը ձայների ճնշող մեծամասնությամբ համաձայնվեց Պառնասյան էֆենդու առաջարկությանն, ինչը և գոհացրեց պատրիարքին...

Առաջին հարվածը

Գեներալ Դեվելի Ախալցխյան ջոկատը 1877 թ. ապրիլի 16-ին շրջապատեց Արդահանի ամրոցը: Արդահանի թուրքական կայազորն ուներ 8100 զինվոր և 95 ամրոցային նորագույն խոշոր տրամաչափի թնդանոթ: Ամրոցի երկու կողմով անցնում էր Կուր գետը: Այստեղ անգլիացիների օգնությամբ ստեղծվել էր ամուր պաշտպանական համակարգ, որի ամրությունները իրար կապված էին 5 մետր բարձրությամբ հողաշերտով: Քաղաքի պաշտպանության հիմքը կազմում էին 10 բերդամասերը, որոնց 8-ն անմիջապես մոտ էին քաղաքին: Ինչպես քաղաքային, այնպես էլ առաջապահ բերդամասերն ունեին 4,5 մետր բարձրությամբ և 11,5 մետր հաստությամբ հողապատնեշներ, որոնք շրջափակված էին 23 մետր լայնություն և 5 մետր խորություն ունեցող խրամատներով:

Արդահանի ամրությունների դեմ գեներալ Դեվելն ուներ ընդամենը 76 թնդանոթ, որից 5-ն էին ամրոցային:

Արդահանը կարևոր հանգույց էր և մեծ դեր էր խաղում Կարսից դեպի Բաթում և Ախալքալակից ու Ախալցխայից դեպի էրզրում կոմունիկացիաները պաշտպանելու գործում: Հենց այդ էլ նկատի ունենալով և կարևորելով Արդահանի գրավումը կորպուսի հրամանատար Լորիս-Մելիքովը վճռեց իր ձեռքը վերցնել գրոհի կազմակերպումն ու ղեկավարումը:

Թուրքերը վստահ էին, որ անգլիացի ինժեներների կողմից այն ժամանակվա տեխնիկայի վերջին խոսքով ամրացված Արդահանի ամրոցն անառիկ է և ռուսական զորքերին չի հաջողվի այն գրավել: Ավելին, նրանք նաև փայփայում էին Արդահանի տակ ռուսներին ջախջախելու հույսը և համոզված էին դրանում:

Ծանոթանալով իրավիճակին, կորպուսի հրամանատարը խստորեն հանդիմանեց Դեվելիին՝ իր դեմ կանգնած թուրքական ուժերի մասին մոտավոր պատկերացում ունենալու համար: Լորիս-Մելիքովն անմիջապես կազմակերպեց Արդահանի ամրությունների հետախուզում: Վերլուծելով հետախուզության ձեռք բերած թարմ տվյալները, Լորիս-Մելիքովն որոշեց առաջին հարվածը հասցնել Էմիր-օղլի կոչված ամրության ուղղությամբ: Գրոհը սկսվեց 1877 թ. մայիսի 3-ի առավոտյան: Երեկոյան թուրքերը փախան իրենց դիրքերից:

Ավելորդ արյունահեղությունից խուսափելու նպատակով Լորիս-Մելիքովը մայիսի 3-ի գիշերն Արդահանի թուրքական կայազորին ուղարկեց վերջնագիր: Ամրոցի պարետ Ալի փաշան վստահ իր ուժերին ու բերդի ամրություններին, մերժեց վերջնագիրը:

Մայիսի 4-ի առավոտյան ստանալով թուրքերի մերժումը, Լորիս-Մելիքովը հրամայեց. «Բոլոր ուժերով դեպի գրոհ»: Ռուս հրետանավորները գործում էին արտասավոր եռանդով: Չնայած թուրքերի առավելությանը, ռուս մարտիկներին հաջողվեց շարքից հանել հակառակորդի մարտկոցները:

Արդահանի ճակատամարտում Լորիս-Մելիքովն առաջին անգամ կիրառեց ձիաքարշ հրետանու օգտագործումը: Ձիաքարշ հրետանին, որը կատարում էր գնդային ու գումարտակային հրետանու դեր, արագորեն տեղաշարժվում էր և թշնամուն հարվածում անսպասելի տեղերից: Իմիջայլոց, ձիաքարշ հրետանու օգտագործումը չէր նախատեսված այն ժամանակվա ռազմական կանոնագրքերով: Միայն 1915-1917 թթ. ռուսական բանակում լիակատար կերպով սկսեցին օգտագործել ձիաքարշ հրետանին:

1877 թ. մայիսի 5-ի երեկոյան, չդիմանալով ռուսական զորքերի ուժեղացող գրոհին, Արդահանի թուրքական կայազորը բարձրացրեց սպի-

տակ դրոշակ և զենքը վայր դրեց: Արդահանի ճակատամարտում ռուսներից զոհվեց 385 մարդ:

Մայիսի 5-ի ուշ երեկոյան Լորիս-Մելիքովին զեկուցեցին. թուրքերը տվել են 2000 սպանված, գերի է հանձնվել 800 զինվոր, մնացածը դիմել են փախուստի: Իբրև ռազմավար թշնամուց վերցվել էր 92 թնդանոթ, որի կեսից ավելին անգլիական նորագույն արտադրությամբ, մի քանի հազար հրացան, 6 միլիոն փամփուշտ, մեծ քանակությամբ գույք ու պարեհամթերք:

Արդահանի գրավումը ռուսական զորքերի տարած առաջին խոշոր հաղթանակն էր: Արդահանի գրավման հաջող օպերացիան իրականացնելու համար Լորիս-Մելիքովն արժանացավ Գեորգի Պոբեդոնոսցևի 3-րդ աստիճանի բարձրագույն շքանշանի:

Ամփոփելով Արդահանի գրավման համար ձեռնարկված գործողությունների արդյունքները, Լորիս-Մելիքովը հայացքն ուղղելով գեներալ-Դեւելի կողմն, ասաց.

- Հիշեք, յուրաքանչյուր ռազմական գործողության հաջողությունը կախված է նաև ճշգրիտ ու խելացի հետախուզությունից:

Արդահանից վերադառնալով, Լորիս-Մելիքովն ավելի ուժեղացրեց Կարսի շրջափակումը:

Մուսա Կունդուխովի երդումը

1877 թ. հուլիսի 2-ին 35 հազարանոց զորքով ու 56 թնդանոտով Մուխթար փաշան սկսեց հարձակում Ալեքսանդրապոլի ուղղությամբ, դրանով ձգտելով ռևանշի Արդահանի պարտության համար:

Միաժամանակ թուրքական զորքերը ակտիվացրին իրենց գործողությունները Տեր-Ղուկասովի ջոկատի դեմ: Գլխավոր հրամանատար Մուխթար փաշան լրացուցիչ ուժեր ուղարկեց Տեր-Ղուկասովի դեմ: Փաշայի բոլոր հաշվարկներն ուղղված էին նրան, որ իրեն ի վերջո կհաջողվի Լորիս-Մելիքովի կորպուսի դեմ կենտրոնացնել ավելի մեծաքանակ ուժեր և հասնել հաղթանակի:

Մուխթար փաշան Աբդուլ-Ազիզ սուլթանի որդին էր: Ավարտել էր ֆրանսիական զինվորական քոլեջը, որտեղ կարևորվում էր Նապոլեոնի տարած ռազմական հաղթանակների ուսումնասիրումը: Մուխթար փաշան, որն աչքի էր ընկել 1876 թ. ապստամբած սերբերին ու չեռնոգորցիներին ճնշելու գործում, իրեն համարում էր մեծ ստրատեգ և երազում էր հասնել Նապոլեոնի փառքին:

Իմանալով գլխավոր հրամանատարի թուլությունը, նրա ենթակաները քծնելով Մուխթար փաշային համեմատում էին Նապոլեոնի հետ: Այս համեմատությունը սնապարծ փաշային շատ էր շոյում: Համեմատվելով Նապոլեոնի հետ, հիշելով նրա տարած հաղթական ճակատամարտերը, փաշայի մտքով նույնիսկ չէր անցնում գոնե մեկ անգամ հիշել, թե Նապոլեոնը ինչ վիճակով հեռացավ Ռուսաստանից:

Մուխթար փաշան իր ծրագրերի մեջ անչափ կարևորում էր Կովկասից գաղթած չեչեններից, ինչպես նաև քրդերից ոչ կանոնավոր ջոկատներ կազմակերպելու և դրանց միջոցով ռուսական զորքերին թիկունքից հարվածելու գործը: Այս նպատակով նա իր մոտ կանչել տվեց Մուսա Կունդուխովին:

Մուսա Կունդուխովը վաղուց էր սպասում իր ժամին: Լսելով փաշայի առաջադրանքը, նա ոգևորությամբ պատասխանեց.

- Երդվում եմ փաշա, այդ անհավատ Լորիս-Մելիքովին կենդանի բռնել և նետել քո սուրբ ոտքերի առջև:

- Իսկ եթե չհաջողվի՞, - հարցրեց փաշան:

- Այդ դեպքում կսպանեմ այդ շուն հային ու նրա գլուխը կնետեմ ոտքերիդ առջև:

Մուխթար փաշան հավատում էր Մուսա Կունդուխովին և լավ գիտեր, թե ինչ էր նշանակում մահմեդականի ատելությունը քրիստոնյայի նկատմամբ: Լցված վրեժի ահավոր ցասումով, Մուսա Կունդուխովը կարճ ժամանակում կազմակերպեց իր ջոկատը և ներկայացավ գլխավոր հրամանատարին: Նա պատրաստ էր ռուսների գրաված տարածքներում սկսել պարտիզանական պատերազմ:

- Եվ հետո, - խոստացավ Կունդուխովը, - իմ գործողությունները կտեղափոխեմ անմիջապես Ռուսաստանի տարածք, Կովկաս: Ես Կովկասն էլ կդնեմ քո ոտքերի առջև պատվելի փաշա...

Կարս քաղաքից արևմուտք գտնվող Բեգլի-Ահմադ գյուղն էլ դարձավ Կունդուխովի ջոկատի հավաքատեղին: Կունդուխովի ջոկատի կազմակերպման մասին Լորիս-Մելիքովն իմացավ իր գործակալներից և անմիջապես, քանի դեռ վերջնականապես չէր ավարտվել դրա կազմավորումը, վճռեց հետախուզությամբ պարզել ամեն ինչ: Լորիս-Մելիքովի շտապողականությունը պատճառաբանված էր: Նա նախորդ պատերազմից գիտեր, թե այդ ոչ կանոնավոր ավազակախմբերն ինչքան վնաս պատճառեցին ոչ միայն ռուսական բանակին, այլև տեղի հայ բնակչությանը:

Կորպուսի հրամանատարը հանձնարարեց Նիժնիհնովգորոդյան դրագունյան գնդի հրամանատար Ալեքսանդր Վիտտեին կատարել հետախուզություն: Ալեքսանդր Վիտտեն էսկադրոնի գլուխն անցած, կարողացավ աննկատ հասնել մինչև Բեգլի-Ահմադ գյուղ: Գյուղի մատուցներում Վիտտեի մարտիկները մարտի բռնվեցին բաշիբուզուկների հետ և մի քանի զոհ տալով ետ վերադարձան:

Ընդունելով Վիտտեի զեկույցը, Լորիս-Մելիքովը գեներալ-մայոր Ճավճավածեին հրամայեց հետևել Կունդուխովի ջոկատին և առաջին իսկ հնարավորության դեպքում հասցնել հանկարծակի հարված:

Բեգլի-Ահմադ գյուղը գտնվում էր էրզրում տանող ճանապարհին: Դա

պատահական չէր ընտրվել: Կունդուխովն առաջադրանք ուներ ապահովել էրզրումից ուղարկվող օգնության անվտանգ անցումը դեպի Կարս և պաշտպանել ռուսների հարձակումից: Գեներալ Ճավճավաձեն իր հեծելազորով կենտրոնացավ Բեգլի-Ահմադ գյուղին մոտ գտնվող Արդոստ բնակավայրում: Հենց այստեղ էլ գեներալին ներկայացավ մի հայ հոգևորական: Ճավճավաձեի մոտ գտնվող Միքայել Տարիելովիչի մոտիկ ազգական Հովհաննես Լորիս-Մելիքովի ներկայությունից ոգևորված հոգևորականը հայտնեց, որ Բեգլի-Ահմադ գյուղ է եկել թուրքական մի նոր զոկատ՝ երկու թնդանոթով:

1877թ. մայիսի 18-ի գիշերը Ճավճավաձեն երեք կողմից հանկարծակի գրոհեց Բեգլի-Ահմադ գյուղի վրա: Մի կերպ ուշքի գալով Կունդուխովի զինվորները կատաղի դիմադրություն ցույց տվեցին: Սակայն աստիճանաբար դիրքերը զիջելով, նրանք փախան մարտադաշտից: Փախչողների առջևից շնչակտուր վազում էր Մուսա Կունդուխովը:

Ռուսական նախկին սպան իր չորս հազարանոց զոկատից փրկված 300 զինվորների հետ դադար առավ Սողանլու լեռներն անցնելուց հետո: Կունդուխովի զոկատի սրընթաց ոչնչացումը խառնեց Մուխթար փաշայի հաշիվները: Թուրքական հրամանատարության մոտ Կունդուխովը կորցրեց երբեմնի վստահությունը:

Հետագայում, 1878 թ. հոկտեմբերի 20-ին Թիֆլիսում լույս տեսնող «Մշակ» թերթի թղթակից Գրիգոր Նիկողոսյանն էրզրումում հանդիպում է Մուսա Կունդուխովին: Այդ մասին նա «Մշակ» թերթում գրել է հետևյալը. «Մուսա փաշա Կունդուխովը՝ իբրև ամենայայտնի մարդ Տաճկաստան գաղթած լեռնականներից, ուներ գեներալ-մայորի աստիճան, երբ անցավ սուլթանի ծառայությանը և կոչվեց Լիվա փաշա: Նա յայտնի է ևս իբրև ոխերիմ թշնամի կոմս Լորիս-Մելիքովի, որին պատերազմի սկզբում երդվել էր կամ կենդանի բռնել կամ սպանել, բայց Աստված այնպես տնօրինեց, որ կոմսն առաջին յաղթութիւնն ունեցավ նորա վրայ, որը Բեգլի-Ահմադ հայբնակ գյուղի մոտ ջարդ ու փշուր լինելով, միանգամայն կորցրեց իր նշանակութիւնը պատերազմի բոլոր ընթացքում»:

Լորիս-Մելիքովի երեք հարցերը

1877 թ. մայիսին տարած հաղթանակը հարկավոր էր ամրապնդել և թույլ չտալ թշնամուն համախմբել իր ուժերը:

Սակայն, չնայած Մուսա Կունդուխովի ջախջախմանը, Մուխթար փաշան կարողացավ հավաքել 35 հազարանոց բանակ և 56 թնդանոթով հուլիսի 2-ին ձեռնարկեց հարձակում Ալեքսանդրապոլի ուղղությամբ:

Դրանից մի քանի օր առաջ, մայիսի 29-ին Կովկասի փոխարքա, գլխավոր հրամանատար Միխայիլ Նիկոլաևիչը իր շքախմբով եկավ Կարսը

շրջափակած Լորիս-Մելիքովի զորակայան: Փոխարքան անմիջապես իր վրա վերցրեց ռազմական գործողությունների ղեկավարումը:

Լորիս-Մելիքովը հայտնվեց ծանր վիճակի մեջ: Նա գիտեր, որ փոխարքայի շքախմբի անդամներն իր դեմ կկազմակերպեն բանսարկություն: Գիտեր նաև, որ ամեն մի խոսք փոխարքային կհասցվեր այնպիսի աղավաղված ձևով, ինչը հետո հնարավոր չէր լինի շտկել կամ էլ ճշմարտությունը բացահայտել: Կորպուսի հրամանատարի համար անտանելի էր դառնում իր վիճակի երկդիմությունը:

Հավատարիմ իր ուղղամիտ բնավորության, Լորիս-Մելիքովը դիմեց գլխավոր հրամանատարին, խնդրելով, որպեսզի նա, ըստ ծառայական պարտականության, հրաման տա զորքերի անմիջական հրամանատարությունն ընդունելու մասին: Դրանով գործող կորպուսն անմիջապես կենթարկվեր գլխավոր հրամանատարին և անվերապահորեն կկատարեր նրա բոլոր հրամանները:

Փոխարքան կարծես թե չէր սպասում այդպիսի առաջարկության և խոստացավ մտածել այդ մասին: Հաջորդ օրը փոխարքան չտվեց Լորիս-Մելիքովի առաջարկած հրամանը: Եվ նա հարկադրված էր այդ մասին հիշեցնել փոխարքային: Լորիս-Մելիքովին փոխարքան հանգստացրեց, հայտնելով, որ իր գրասենյակն աշխատում է այդ հրամանի վրա և վաղը կստորագրի:

Հաջորդ օրը, իսկապես, փոխարքայի ստորագրած հրամանը հանձնվեց Լորիս-Մելիքովին: Այդ հրամանում ասվում էր. «Ժամանելով գործող կորպուսի զորամասեր, ես առաջվա նման թողնում եմ կորպուսի հրամանատարի վրա բոլոր կարգադրություններն ու գործողությունները»:

Լորիս-Մելիքովն, իհարկե, հասկանում էր, թե ինչ խորամանկություն կար այդ հրամանի մեջ թաքնված: Դա նշանակում էր, որ բոլոր անհաջողությունների համար մեղավորը լինելու է ինքը, կորպուսի հրամանատարն, իսկ հաջողությունները վերագրվելու էին իր ներկայությամբ զորքերին ոգևորող գլխավոր հրամանատարին: Այսպիսով, տրված հրամանն ոչնչով չփոխեց կորպուսի հրամանատարի վիճակը: Բայց նա այն զինվորականներից էր, որոնց մոտ բարձր էր պարտքի զգացումը: Այդ պարտքի գիտակցությունն էլ Լորիս-Մելիքովին տալիս էր վճռականություն, պատասխանատվություն, որոնք նա դրսևորում էր այն պահին, երբ վտանգ էր սպասվում իրեն վստահված զորքերին:

Ալեքսանդրապոլի ուղղությամբ Մուխթար փաշայի հարձակումը պահանջում էր էական փոփոխություն մտցնել գործողությունների նախապես մշակված պլանում, որի համար էլ Լորիս-Մելիքովն, ըստ կարգի, դիմեց փոխարքային: Պատասխանատու պահ էր և Միխայիլ Նիկոլաևիչը կտրականապես հրաժարվեց որևէ ցուցում տալուց և ասաց Լորիս-Մելիքովին.

- Հավաքիր քո ռազմական խորհուրդը և թող քո գեներալներն որոշեն:

Փոխարքայի հրամանի համաձայն Լորիս-Մելիքովը հրավիրեց կոր-

պուսի ռազմական խորհուրդ, որին մասնակցում էր նաև իշխան Սվյատոպոլկ-Միրսկու թիկնապահը...

Խորհրդի նիստում կորպուսի հրամանատարը դրեց երեք հարց:

Առաջին. Կարելի՞ է Կարսի պաշարման հետ միասին միաժամանակ հարձակվել էրզրումի ուղղությամբ:

Երկրորդ. Եթե չի կարելի, ապա հնարավո՞ր է զբաղվել Կարսի պաշարմամբ և ուշադրություն չդարձնել Մուխթար փաշայի բանակի վրա:

Երրորդ. Չի՞ կարելի ամբողջապես թողնել Կարսի պաշարումը և բացառապես զբաղվել Մուխթար փաշայի ջախջախմամբ:

Լորիս-Մելիքովն ուշադրությամբ լսում էր իր գեներալներին: Նրա աչքից չէր վրիպում, որ իրենց կարծիքը հայտնելով, գեներալները դիմում էին ոչ թե իրեն՝ կորպուսի հրամանատարին, այլ իշխան Միրսկու թիկնապահ փոխգնդապետին:

Լորիս-Մելիքովը կանգնած էր երրորդ տարբերակի վրա, գտնելով, որ քանի թուրքերը չեն ավարտել նոր զորահավաքը, հարկավոր է ժամանակ չկորցնել, ջախջախել Մուխթար փաշայի բանակը, որից հետո քիչ ուժեր ծախսելով, հնարավոր կլինի գրավել Կարսը:

- Նկատի ունեցեք, որ այսօր Մուխթար փաշան ներկայացնում է ամենալուրջ վտանգը և նրա դեմ պետք է ուղղել կորպուսի ամբողջ ուժերը, - եզրափակեց իր խոսքը Լորիս-Մելիքովը:

Կորպուսի գեներալները հակված էին Կարսը գրավելու կողմը: Կարսի գրավումն այդ պահին կլիներ խոշոր հաղթանակ: Այսպես պնդող գեներալները շատ լավ գիտեին, որ Կարսի գրավումն էր փոխարքայի նպատակը: Նա հենց դրա համար էր եկել ռազմաճակատ: Փաստորեն, կորպուսի հրամանատարն իր ռազմական խորհրդում մնաց մենակ: Գեներալներից ոչ մեկը նրա առաջարկը չպաշտպանեց: Եվ Լորիս-Մելիքովը հարկադրված էր համաձայնվել ռազմական խորհրդի անդամների հետ՝ շարունակել Կարսի պաշարումը:

Գայազորը հրաժարվում է սպիտակ դրոշ բարձրացնել

Այդ ընթացքում Տեր-Ղուկասովի Երևանյան զորաջոկատը , որը նույնպես սահմանն անցել էր ապրիլի 12-ին, կարողացավ հաջողությամբ առաջ շարժվել և 14-ին հասավ Սուրբ Հովհաննես վանք: Իսկ մայիսի 17-ին առանց մարտի գրավեց Բայազետի ամրոցը, փախուստի մատնելով այն պաշտպանող թուրքերին:

Վանի Ֆայիք փաշան, հավաքելով 11 հազարանոց զորք, զինված քրդերի աջակցությամբ սկսեց գրոհել Տեր-Ղուկասովի վրա: Հունիսի 5-ին

փաշային հաջողվեց շրջապատել Բայազետի ամրոցը, որի ռուսական կայազորը բաղկացած էր 34 սպայից և 1587 շարքային զինվորից:

Հունիսի 8-ին թուրքերի հերթական գրոհից հետո ամրոցի պարետ փոխգնդապետ Պացևիչն որոշեց հանձնել ամրոցը և հրամայեց բարձրացնել սպիտակ դրոշ: Պացևիչի որոշումն առաջ բերեց զինվորների բուռն վրդովմունքը: Սպաներից մեկը Պացևիչի թիկունքին կրակելով, մահացու վիրավորեց նրան: Կայազորի հրամանատարությունն իր վրա վերցրեց կապիտան Շտոկովիչը:

Գոտեպնդված փոքրաթիվ կայազորը հայ բնակչության օգնությամբ մի քանի անգամ ետ մղեց թուրքերի ուժեղ գրոհը: Պաշտպանների վիճակը օր-օրի վատանում էր: Համարյա խմելու ջուր չկար: Վերջանալու վրա էր սննդամթերքը: Ավելանում էին վիրավորներն ու հիվանդները:

Հարկավոր էր Բայազետի պաշտպանների ծանր վիճակի մասին հայտնել գեներալ Տեր-Ղուկասովին: Անհնարին էր թուրքական ուժեղ շրջապատման օղակից դուրս գալ և լուր հասցնել Տեր-Ղուկասովին:

Այդ անհնարին գործը ստանձնեց էջմիածնի գավառային ոստիկանության նախկին գրագիր Սամսոն Պետրոսյանցն, որը կամավոր մտել էր ռուսական բանակ: Սամսոնը խենթ ձևանալով կարողացավ դուրս գալ շրջապատված բերդից և լուրը հասցրեց Տեր-Ղուկասովին: Այս սխրանքի համար Սամսոն Պետրոսյանցին տրվեց միլիցիայի պրապորշչիկի աստիճան և պարգևատրվեց Սուրբ Գեորգիևյան ոսկե խաչով:

Բայազետի բերդի պաշտպանությանն է նվիրել վիպասան Րաֆֆին իր հանրահայտ «Խենթը» վեպը, որտեղ Սամսոն Պետրոսյանցին տրվել է վիպական անուն՝ Վարդան Տեր-Պողոսյանց: Այդ հերոսական պաշտպանությանն է նվիրել նաև ռուս նշանավոր գրող Վ. Պիկուլը իր «Բայազետ» վեպը:

Մինչ Բայազետի ամրոցի փոքրաթիվ կայազորը դիմադրում էր թուրքական զորքի գրոհներին և Տեր-Ղուկասովը ռազմաճակատային անհրաժեշտությունից ելնելով, նահանջում էր դեպի ռուսական սահման, նրան կրնկակոխ հետապնդող Մուխթար փաշան ուղղություն վերցրեց դեպի էջմիածին ու Երևան:

Այսպիսի պայմաններում կաթողիկոս Գևորգ Չորրորդն, որը նախկինում եղել էր Պոլսի պատրիարք, փրկությունը տեսնում էր նրանում, որ թուրքական զորքերն որքան հնարավոր է շուտ հասնեն էջմիածին: Երբ Լորիս-Մելիքովին հայտնի դարձավ կաթողիկոսի այս խայտառակ քայլի մասին, նա իր մտերիմ հայ զորականներին ասաց.

- Ես չեմ հավատում այդ մարդուն: Նա չի սիրում Հայաստանը: Նրա ատելությունը ռուսների հանդեպ փոխանցվել է Հայաստանի դեմ: Նա, ով սիրում է իր հայրենիքն, երբեք այդպիսի քայլ չէր կատարի...

Հետագայում անդրադառնալով այդ իրողությանը, Մեծն Կոմիտասը գրել է. «...Մեր փրկությունը կռել և կոփել ենք Փերպուկի /Պետերբուրգի-

Վ. Պ./ պարիսպներու դռներուն առջև. այս էր պնդել ժամանակին Լորիս-Մելիքով Գևորգ Դ Կաթողիկոսին զգուշացնելով /երբ սա ռուս-տաճկական պատերազմի ժամանակ, փրկութիւնը տեսնելով ու յուսալով տաճիկներէն, գրեթէ բացարձակապես սպասելիս է եղել տաճիկներին էջմիածնի մէջ/»:

Տեր-Ղուկասովի հետ կապ չկար: Կապ հաստատելու փորձերը ձախողվում էին: Նրա մոտ ուղարկված կապավորներին բռնում էին թուրքերը կամ էլ վերադառնում էին, չկարողանալով հասնել Տեր-Ղուկասովին:

Լորիս-Մելիքովը հրամայեց նշանակել 2000 ռուբլի պարգև նրան, ով կկարողանա հասնել Երևանյան ջոկատ և լուր կբերի:

- Ինչ ուզում է լինել, ես պետք է փրկեմ Տեր-Ղուկասովին, - ասաց Լորիս-Մելիքովը:

«Ահա և ձեզ հաղթանակ Կարսի դեմ...»

Փոխարքան անչափ գոհ էր մնացել ռազմական խորհրդի որոշումից: Նա փայփայում էր Կարսի նման անառիկ ամրոցը գրավելու հույսն, որի իրականացմամբ փառաբանվելու էր...

Ռազմական խորհրդից մեկ շաբաթ անց, հայտնի դարձավ, որ Մուխթար փաշան ակտիվացնելով գործողությունները, ձգտում է շրջապատել ու ոչնչացնել Տեր-Ղուկասովի Երևանյան զորաջոկատը: Եթե դա հաջողվեր, ապա թուրքերի առջև կբացվեր էջմիածին ու Երևան տանող ճանապարհը: Այս վտանգը զգում էր Լորիս-Մելիքովը և գլխավոր հրամանատարից պահանջեց Տեր-Ղուկասովին օգնելու համար Ռիոնից կանչել 10 գումարտակ: Գլխավոր հրամանատարն, առանց լրջորեն քննելու ստեղծված իրավիճակը, մերժեց Լորիս-Մելիքովի պահանջը:

Լորիս-Մելիքովը հասկանում էր, որ դանդաղելը նշանակում էր ամբողջովին կորցնել Տեր-Ղուկասովի զորաջոկատը և պատկերացնում էր, թե դա ինչ հետևանքներ կունենա, ինչ կլինի, եթե թշնամին մտնի էջմիածին, գրավի Արարատյան դաշտը...

Հարկավոր էր շտապել և կորպուսի հրամանատարը դիմեց վճռական քայլի: Նա իր մոտ հրավիրեց Արդահանի հերոս գեներալ Գեյմանին, որը ռազմական խորհրդում նույնպես չէր պաշտպանել Լորիս-Մելիքովին: Գեյմանին բացատրելով ստեղծված ծանր վիճակը, կորպուսի հրամանատարն ասաց.

- Ահա, հոգյակս և, քեզ հաղթանակ Կարսի դեմ: Հանում եմ քո դիվիզիան Կարսի պաշարումից, տալիս եմ քեզ հեծելազոր, շտապիր Սողանլու և հասիր Տեր-Ղուկասովին օգնության: Իմացիր, Արզաս Արտեմովիչի գործերը շատ վատ են:

Փոխարքայի շքախմբի ներկայությունից լկտիացած ինտենդանտները ժամանակին Գեյմանի դիվիզիան չապահովեցին անհրաժեշտ պաշարով: Այդ պատճառով էլ Գեյմանը կորցրեց երկու օր:

Օգտվելով ստեղծված իրավիճակից, թուրքերն ամբողջովին խափանեցին Տեր-Ղուկասովի հետ եղած կապը: Երևանյան զորաջոկատը համառ մարտեր էր մղում թուրքական գերազանց ուժերի դեմ: Վճռական նշանակություն ունեցավ Դայարի մոտ տեղի ունեցած ճակատամարտը: Հունիսի 9-ին Մուխթար փաշան իր զորքն, որը երկու անգամ գերազանցում էր Տեր-Ղուկասովի զորաջոկատին, գրոհի տարավ՝ նպատակ հետապնդելով ճզմել նրան: Բայց Երևանյան զորաջոկատի մարտիկները հենց առաջին պահից կարողացան կազմակերպել դիմադրություն և անցան հակագրոհի:

Դայարի ճակատամարտն ավարտվեց Երևանյան զորաջոկատի հաղթանակով, որը ձեռք բերվեց մեծ դժվարությամբ: Զորաջոկատը կորցրեց 450 զինվոր: Թուրքերի կորուստը 4000 մարդ էր:

Զորաջոկատում սպառվում էր սննդամթերքն ու ռազմամթերքը: Օգնական ուժերն ուշանում էին: Տեր-Ղուկասովին չհաջողվեց կապ հաստատել կորպուսի հետ: Մնում էր մի ելք՝ նահանջել:

Գնահատելով իրավիճակի ծանրությունը, գեներալ Գեյմանի զորասյան հետ Լորիս-Մելիքովը շարժվեց դեպի Սողանլուի լեռնաշղթա: Զորասյունը դուրս եկավ անգլիացիների կողմից տեխնիկայի վերջին խոսքով սարքավորված Զիվինի ամրոցի դեմ, որը պաշտպանում էր էրզրում տանող ճանապարհը:

Ինչպե՞ս վարվել: Շրջանցել ամրոցը, թե՞ գրոհել: Այս հարցը պարզելու համար Լորիս-Մելիքովը հրավիրեց ռազմական խորհուրդ: Նրա առաջարկն էր՝ շրջանցել Զիվինի ամրոցը և շարունակել արշավը: Բայց այս անգամ էլ նա մնաց մենակ: Գեներալներ Գեյմանն ու Ճավճավածեն, և հատկապես գործող կորպուսի շտաբի պետ Դուխովսկին, որն երբեք չէր պաշտպանում իր հրամանատարին, դեմ դուրս եկան Լորիս-Մելիքովի առաջարկին:

Կորպուսի հրամանատարն երկրորդ անգամ զիջեց իր գեներալներին և որոշվեց գրոհել ամրոցն, իհարկե, նախապես կազմակերպելով հետախուզություն:

Առաջին անհաջողությունը

Այնուամենայնիվ, կորպուսի հրամանատարը տատանվում էր՝ սկսել, թե չսկսել մարտը: Ոմանք դա հետո որակեցին որպես Լորիս-Մելիքովի կողմից ցուցաբերած անվճռականություն, այն դեպքում,երբ կարծում էին, թե երկու ժամվա ընթացքում հնարավոր էր գրավել թուրքերի ճամբարը:

Այս առումով առանձնապես ոգևորված էին գեներալներ Գեյմանն ու Կոմարովը, որոնք պահանջում էին արագ ու վճռական հարվածով վերջ տալ թուրքերին, քանի դեռ նրանք չէին դուրս պրծել:

Երբ Գեյմանին հարցրին, թե որտեղ բացել վիրակապական կետը, գեներալը հպարտորեն պատասխանել է. «հակառակորդի ճամբարում»:

Ջիվին ամրոցի վրա գրոհ կազմակերպելու համար Լորիս-Մելիքովը հանձնարարեց իր շտաբին կատարել տեղազննում և մշակել օպերացիան: Այս գործում Դուխովսկին ընդգրկեց 20-րդ դիվիզիայի շտաբի պետի տեղակալ Վոյնովին, որը մինչև պատերազմը եղել էր էրզրումում ռուսական զինվորական գործակալ:

Լորիս-Մելիքովի հրամանով գիշերները վառում էին շատ խարույկ, որով ստեղծվում էր ոչ միայն տպավորություն ռուսական զորքերի մեծ քանակի մասին, այլև գիշերային ուժեղ հրավառություն, որից Տեր-Ղուկասովը կհասկանար զորքերի մոտենալը, որը նրան կոգևորեր և նրան շրջապատած թուրքական զորքին կստիպեր նահանջել:

Վճռվեց հունիսի 18-ին սկսել մարտը: Հնարավոր էր Ջիվինը գրավել ավելի շուտ, քան Մուխթար փաշան կհասներ օգնության, որը զբաղված էր Տեր-Ղուկասովի զորաջոկատով:

Հունիսի 12-ի վաղ առավոտյան Վոյնովը հիշողությամբ Լորիս-Մելիքովին ներկայացրեց Ջիվինի ամրությունների դասավորությունը և տեղադրեց քարտեզի վրա: Կորպուսի հրամանատարը տիրապետում էր նաև այլ տեղեկության, ըստ որի թուրքերը ռեդուտների առջև կառուցել էին երեք շարք ամրություններ: Վոյնովը Գեյմանի հավանությամբ պնդեց իր տեղեկությունը, վստահեցնելով, որ ռեդուտների առջև ամրություններ չկան: Ավելին, նա իր քարտեզի վրա ցույց տվեց մի ճանապարհ, որով հնարավոր էր կարճ ժամանակում հասնել ամրոցին:

Այնուամենայնիվ, կորպուսի հրամանատարը չէր համոզվում և հրամայեց Գեյմանին, Վոյնովի գլխավորությամբ մի անգամ էլ հետախուզություն կազմակերպել, ճշտել կարճ ճանապարհի գոյությունը, թշնամու պաշտպանական գծի վիճակը:

Փոխգնդապետ Վոյնովի հետ հետախուզության մեկնեց նաև «Գոլոս»-ի թղթակից Գ. Գրադովսկին: Վերջինս այս մասին պատմել է 1878 թ. լույս տեսած «Պատերազմը Փոքր Ասիայում 1877 թվականին» գրքում: «Հունիսի 12-ին,- գրել է նա,-առավոտյան ժամը 10-ին մենք 30-40 կազակների ուղեկցությամբ շարժվեցինք Ջիվինի ուղղությամբ: Հասկանալի է, թե ինչպիսի անհամբերությամբ էի սպասում տեսնելու թշնամու ճամբարը»: Այնուհետև նա պատմում է, որ հեռվում երևացող Միջինկերտ գյուղի մոտ գոյություն ուներ շատ հազվադեպ հայկական եկեղեցի, որը կառուցված է ժայռերի մեջ և հեռվից դժվար էր տարբերվում իրեն շրջապատող քարերից: «Դժբախտաբար, - շարունակում է թղթակիցը, - ինձ չհաջողվեց տեսնել այդ տեսարժան հուշարձանը»:

Հետախուզական ջոկատը բարձրանում է բլուրի վրա: Այստեղից 6-8 վերստի վրա երևում են սպիտակ վրաններ: Դա թուրքերի ճամբարն էր:

Ճամբարի առջևում Գրադովսկին նկատում է մի քանի սև շերտեր: Դրանք թուրքական մարտկոցներն էին:

Վոյնովը հաշվում է դրանք՝ թվով չորսն են: Գրադովսկին մատնացույց է անում վրաների թիկունքում նույնանման շերտեր: Վոյնովը նայելով այդ ուղղությամբ, պատասխանում է, թե դրանք խոհանոցներն են : «Ես, -պատմում է Գրադովսկին, - լռեցի մտածելով, որ խաղում եմ աներես ճանճի դեր, որին հարկ է լինում լուրջ գործի պահին քշել: ...Փոխգնդապետ Վոյնովն երևում էր ամբողջապես բավարարված էր իր դիտարկումով: Իմ դիտարկումը, ընդհակառակը: Ծայրահեղ բորբոքված էր: Ինձ թվաց, որ մենք քիչ բան իմացանք»: Թղթակցին, այնուամենայնիվ, մնում էր «վստահել մասնագետի իմաստությանը»:

Վոյնովը վերադարձավ հետախուզությունից և պնդեց իր հայտնած տեղեկությունները: Լորիս-Մելիքովին մնում էր հավատալ շտաբային սպային: Թեև նրա մոտ մնաց կասկածանքն, այնուամենայնիվ, հանձնարարեց շտաբին օպերացիայի պլանը մշակել Վոյնովի տեղեկությունների համաձայն:

Այդ ժամանակ էլ, երբ կորպուսի հրամանատարը շրջում էր գրոհին պատրաստվող զորաջոկատների դիրքերով, նրան մոտեցավ Տեր-Ղուկասովի մոտ ուղարկված լրաբերը և Լորիս-Մելիքովին հանձնեց դեղին գույնի մի գնդիկ:

- Ահա գնդիկը, -բացականչեց Լորիս-Մելիքովն, - որն արժե 2000 ռուբլի:

Նա իրեն շրջապատած սպաներին ցույց տվեց փոքրիկ դեղնագույն գնդիկն, որի մեջ տեղավորված էր Տեր-Ղուկասովի ծածկագիրը: Միխայիլ Տարիելովիչը հրամայեց վերծանել այն: Դա հունիսի 9-ին տեղի ունեցած հերոսական ճակատամարտի մասին համառոտ հաղորդում էր: Գեներալ Տեր-Ղուկասովի 6000-ոց ջոկատը դիմացել էր Մուխթար փաշայի անմիջական հրամանատարությամբ գործող 22 գումարտակի, հրետանու և հեծելազորի ուժեղ գրոհին, նրան պատճառել մեծ կորուստ և հարկադրել նահանջել:

...Տեր-Ղուկասովին հաջողվեց ոչ միայն ջախջախել Ֆայիդ փաշայի հրամանատարությամբ եկած թուրքական զորքերին, այլև օգնության հասնում Բայազետի պաշտպաններին:

Տարած փայլուն հաղթանակի մասին Տեր-Ղուկասովը հետևյալ հեռագիրն է ուղարկում Կովկասի փոխարքա, Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար Միխայիլ Նիկոլաևիչին. «Այսօր առավոտյան ժամը 8-ին ինձ վստահված զորախմբի զինվորները՝ 8 բատալիոն /վաշտ/, 24 թնդանոթով, 1500 կազակներ և 4 էսկադրոն հարձակվեցին թշնամու 18 հազար հոգուց բաղկացած բանակի վրա, որը, պաշարել էր Բայազետի ամրոցը: 8 ժամ տևող հրաձգությունից և ռմբակոծությունից հետո զորքերը հարձակվեցին ու գրավեցին քաղաքի վրա իշխող բարձունքները: Թշնամին ջախջախված է»:

Փոխարքան ի սրտե շնորհավորելով տարած հաղթանակը, հեռագրեց. «Շնորհակալ եմ և գրկում եմ: Նորին մեծությունը բարեհաճեց շնորհել ձեզ երրորդ աստիճանի Սուրբ Գեորգիևսկի շքանշանի»:

Նրանք, ովքեր գիտեին Երևանյան ջոկատի ծանր վիճակի մասին, թեթևացած շունչ քաշեցին: Տեր-Ղուկասովի հետ կապը վերականգնվեց:

Իսկ դրանից մեկ օրն առաջ :Голос:-ի թղթակցին Լորիս-Մելիքովն ասել էր. «Կարող է պատահել, որ բոլորիս վիճակվի այստեղ էլ մեռնել», նկատի ունենալով Զիվինի համար առաջիկա մարտի ծանրությունը: Նույն թղթակիցը, Տեր-Ղուկասովից ստացած լուրից ուրախացած Միխայիլ Տարիելովիչին շնորհավորում է այդ կապակցությամբ, հիշեցնելով նախորդ օրը նրա մռայլ տրամադրությունը:

- Ինչի՞ց դուք գիտեք, - հարցրեց Միխայիլ Տարիելովիչը:

- Դե իմանալ էլ հարկավոր չէ, ձեր դեմքից ամեն ինչ երևում է...

:Голос:-ի թղթակիցը, որը ներկա էր Զիվինի ճակատամարտին, մեզ է թողել Լորիս-Մելիքովի արտաքին նկարագիրը. «Նա միջահասակ է, թխահեր, արդեն նկատելի ճերմակած (ծնվել է 1825 թվականին), թուխ երկարավույն դեմքով, խիտ աճած երկար այտամորուքով ու բեխերով: Դեմքի զարդն են մեծ, սև արտահայտիչ աչքերը: Նրա արտաքինն ընդհանրապես շատ զգայուն է մտերիմ տպավորության համար և երբ խորամանկ ժպիտը երբեմն երևում է շրթունքներին, աչքերն արագորեն վառվում են ուրախությամբ և դեմքի ամբողջ ծալքերով ծիծաղում է: Այդպիսի արտաքինը, սովորաբար, առաջ է բերում համակրանք և շնչում խելքով: Նրանցում ավելի քիչ է կոպտությունը կամ կամայականությունը»:

Կազմված պլանի համաձայն զորամասերին տրվեց համապատասխան հրահանգավորում: Մարտի ղեկավարումն իրականացվելու էր Գեյմանի հրամանատարությամբ:

Լորիս-Մելիքովը ճավճավածեին ճանապարհ դնելիս, բարձրաձայն, որպեսզի բոլորը լսեն, ասաց նրան.

- Նորից եմ խնդրում, պահպանեք մեր ձախ թևը:

Դա անչափ կարևոր էր, քանի որ Տեր-Ղուկասովի ջոկատից հեռանալով, Մուխթար փաշան մտադիր էր շարժվել դեպի Զիվին և կարող էր մարտի ժամանակ հարվածել ռուսական զորքերի ձախ թևին: Սկսվեց գրոհը: Թուրքերը ցույց տվեցին համառ դիմադրություն: Ամբողջ օվա ընթացքում զինվորներին չհաջողվեց առաջ շարժվել: Պարզվեց, որ Վոյնովի տեղեկություններն ոչ միայն հնացած էին, այլև փոխգնդապետը բարեխղճորեն չէր կատարել հետախուզությունը: Ավելին, նրա ցույց տված ճանապարհն էլ գոյություն չուներ: Իսկ այդ ճանապարհով, որն, ըստ Վոյնովի տեղեկության, ուներ մոտ 10 կմ երկարություն, պետք է թշնամու թիկունք դուրս գար գեներալ Ճավճավածեի հեծելազորը հրետանու հետ և այնտեղից հարվածեր:

Մարտը գնալով համառ բնույթ էր ստանում, զոհերի թիվը շատանում էր: Ճավճավածեն էլ ուշանում էր: Ճավճավածեի փոխարեն մարտադաշտ հասավ Մուխթար փաշան իր հիմնական ուժերով և սպառնաց ձախ թևին:

- Իսկ ու՞ր է մեր հեծելազորը, - հարցրեց կորպուսի հրամանատարը:

- Շուտով կերևա, - պատասխանեց այն սպան, որը հետազոտել էր հեծելազորի անցման համար նախատեսված ճանապարհը: Դեռ համարյա երեք ժամ է անցել, ինչ գեներալ Ճավճավածեն սկսել է շարժումը:

Գեներալ Ճավճավածեն կորպուսի հրամանատարին մի կերպ լուր ուղարկեց, որ Վոյնովի նշած ճանապարհն, առհասարակ, գոյություն չունի և անհնար է կատարել հրամանը:

Զիվինի մոտ ճակատամարտում ռուսները կորցրին 900 մարդ: Թուրքերը մնացին իրենց դիրքերում: Մուխթար փաշան տարավ իր առաջին հաղթանակը: Զիվին ամրոցը մնաց անառիկ: Դա Լորիս-Մելիքովի առաջին անհաջողությունն էր:

Չնայած Զիվինի տակ կրած պարտությանն, այնուամենայնիվ, հաջողվեց Տեր-Ղուկասովի զորաջոկատից շեղել Մուխթար փաշայի ուշադրությունը:

Իսկ Տեր-Ղուկասովը սպասում էր Զիվինի ճակատամարտի ելքին, մնալով իր դիրքերում, որտեղից նա հունիսի 9-ին փառահեղ գրոհ էր կազմակերպել Մուխթար փաշայի գերազանց ուժերի դեմ: Եթե Զիվինում ռուսական զորքը ձեռք բերեր հաջողություն, ապա Տեր-Ղուկասովը կկարողանար միանալ Գեյմանի զորաջոկատին և միասնական ուժերով ջախջախել Մուխթար փաշային: Զիվինից հետո Տեր-Ղուկասովին ոչինչ չէր մնում անելու, բացի նահանջելուց և շտապել օգնելու Բայազետի կայազորին: Հենց այսպիսի հրաման էլ ուղարկվեց Տեր-Ղուկասովին:

Գեներալներն, որոնք այնպես պնդում էին Զիվինը գրոհել, այժմ ամբաստանում էին կորպուսի հրամանատարի առջև: Բոլորն էլ իրենց մեղավոր էին զգում անհաջողության, տված կորուստների համար և սպասում էին Լորիս-Մելիքովի պատժին, որն ինչքան էլ խիստ լիներ, բայց արդարացի կլիներ:

Սակայն այստեղ էլ երևաց Լորիս-Մելիքովի մարդկային բնավորության վեհ հատկություններից մեկը: Նա, առհասարակ, սովորություն չուներ մարդկանց պատժել, մանավանդ, եթե զգում էր դրանում նաև իր մեղքը: Նա շատ ու շատ զորահրամանատարներից տարբերվում էր նաև նրանով, որ չէր խուսափում պատասխանատվությունից և սովորություն չուներ ուրիշի վրա մեղք բարդել:

Կորպուսի հրամանատարը բավարարվեց միայն Վոյնովին հանելով շտաբային օպերատիվ աշխատանքից և նշանակեց զինվորական թղթակցությունների գրաքննիչ...

«Վոյնովի եզրակացություններն անհիմն են»

Հետագայում, 1888 թ. հուլիս-օգոստոս ամիսներին «Ռուսկայա ստարինա» ամսագիրն ընդարձակ առաջաբանով, որը 1887 թ. հուլիսի 17-ին համաձայնեցրել էր Լորիս-Մելիքովի հետ, տպագրեց Վոյնովի « Ասիական Թուրքիայում 1877 թ. հունիսի 13-ի մարտը Զիվինի տակ» վերնագրով ծավալուն հոդվածը:

Ամսագրի խմբագրության առաջաբանում ասվում էր հետևյալը. «Տպագրելով պ. Վոյնովի հոդվածը 1877 թ. հունիսի 13-ին Զիվինի տակ թուրքական դիրքերի վրա անհաջող գրոհի մասին, խմբագրությունը իր պարտքն է համարում ընթերցողներին զգուշացնել, որ այդ հոդվածը նշանակալիորեն տարբերվում է մինչև այժմ ձեռնարկված գրոհի անհաջողության պատճառների մասին հրապարակված ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական տեղեկություններից, հեղինակը տեղի ունեցած իրադարձությունները ներկայացնելով գլխի վրա շուռ տված, փորձում է իր վրայից հանել Զիվինի տակ կրած անհաջողության անձնական պատասխանատվությունը»:

Ահա, այդ նպատակով էլ Վոյնովը Զիվինի գրոհի անհաջողությունը փորձում է բացատրել հետևյալ երեք պատճառներով.

1. Գեներալ Գեյմանի ջոկատում հրամանատարության միասնության բացակայությամբ և կորպուսի հրամանատարի ներկայության հետևանքով ստեղծված երկիշխանությամբ:

Ռազմական գործողությունների ընթացքում կորպուսի հրամանատար Լորիս-Մելիքովի գտնվելը իր ենթակայության զորամասերում բացառիկ դեպք չի եղել: Լորիս-Մելիքովը ներկա էր եղել Արդահանի, Ալաջայի, Կարսի և այլ ճակատամարտերին և անձամբ է հրամաններ արձակել, որոնց կատարման պարտականությունն ընկած է եղել զորաջոկատի հրամանատարի վրա: Բոլոր այդ գործողություններն ավարտվել են փայլուն հաղթանակով և կորպուսի հրամանատարն իր զեկուցագրերում միանգամայն արդարացիորեն նշել է իր ենթակա գեներալներ Դեվելի, Գեյմանի, Լազարևի, Կոմարովի, Ճավճավածեի, Ռոոպի, Ալխազովի, Գրաբբեի, Ֆոն Շակի և շատ ուրիշների անձնուրաց մարտական ծառայությունները:

Այնպես, որ անհասկանալի է, թե ինչու պետք է Զիվինի ճակատամարտում կորպուսի հրամանատար Լորիս-Մելիքովի ներկայությունն այդպես բացասաբար անդրադառնար ճակատամարտի ընթացքի վրա:

2. Իր հոդվածում Վոյնովը երկար խոսում է ճանապարհի հետախուզման մասին և մեղքը բարդում է հեծելազորի վրա, հրամանատարությանը մեղադրելով դանդաղաշարժության մեջ:

Մինչդեռ իրականությունն այն էր, որ 42 էսկադրոնից ու հարյուրակներից կազմված հեծելազորը հեծյալ հրետանիով ու արկերի մեծաքանակ արկղերով բեռնված սայլերով 3 ժամում չէր կարող կտրել անցնել 27-30 կմ ճանապարհից զուրկ տեղանքով ու դուրս գալ հակառակորդի թիկունք, հարվածել նրան:

Ըստ Վոյնովի, մեղավորն ոչ թե ինքն էր, որ սխալ տեղեկություններ էր տվել գոյություն չունեցող ճանապարհի մասին, այլ հրամանատարությունն, որը հավատացել էր նրա տեղեկությանը:

3. Զիվինի տակ կրած մյուս անհաջողությունը Վոյնովը համարում է այն, որ կորպուսի հրամանատար Լորիս-Մելիքովը թույլ չտվեց հաջորդ օրը կրկնել գրոհը:

Միչդեռ ամուր պաշտպանված Զիվինի վրա ունեցած ուժերով հաջորդ օրը գրոհի կազմակերպումը կարող էր բերել նոր անհաջողություն:

Վոյնովը ուշացած կերպով բանավեճի մեջ է մտնում գեներալ Քիշմիշյանի հետ, որը դեռևս 1884 թ. հրատարակած «1877-1878 թթ. պատերազմը Թուրքական Հայաստանում» գրքում օբյեկտիվորեն շարադրել էր ռազմական գործողությունների պատմությունը:

Այսպիսով, Վոյնովը, բավական ուշացած, ոչ միայն փորձում է արդարանալ, այլև ձգտում է Զիվինի անհաջողությունը բարդել Լորիս-Մելիքովի վրա և վարկաբեկել անվանի զորահարամանատարին:

Չնայած 1887-1888 թթ. , երբ Ռուսաստանում քչերն էին հիշում Լորիս-Մելիքովին, այնուամենայնիվ, գտնվեցին ազնիվ ու սկզբունքային մարդիկ, որոնք հանդես եկան Վոյնովի կեղծիքի դեմ և վճռականորեն պաշտպանեցին Լորիս-Մելիքովի հեղինակությունը:

«Ռուսսկայա ստարինա» ամսագրի խմբագրությունն ընդգծում էր. «Ավելի գիտակ մարդկանց հնարավորություն տալով արտահայտել իրենց կարծիքը, մենք, այնուամենայնիվ, հարկ համարեցինք մեր հիշողության մեջ տպագիր սկզբնաղբյուրների միջոցով թարմացնել վերջին պատերազմի պատմությունը և դրանց հիման վրա չենք կարող չնկատել, որ պ. Վոյնովի եզրակացությունները մեզ թվում են քիչ համոզիչ և նույնիսկ անհիմն»:

Այցելություն Էջմիածին

Զիվինի տակ կրած անհաջողությունը հնարավորություն չտվեց Տեր-Ղուկասովին օգնություն ուղարկել: Երևանյան զորաջոկատը համառ մարտերում արյունաքամ լինելով, ետ էր քաշվում դեպի սահման: Տեր-Ղուկասովին կրնկակոխ հետապնդում էր իր գերազանց ուժերով էրզրումի Իսմայիլ փաշան, որն իր գլխավոր հրամանատարին խոստացել էր գրավել էջմիածինը:

էջմիածնում ուժեղացել էր տագնապը: Բնակչությունը պատրաստվում էր հեռանալ ապահով վայրեր:

Լորիս-Մելիքովին էին հասնում էջմիածնում առաջացած խուճապի մասին լուրերը: Հարկավոր էր դիմել վճռական քայլի: Հենց այդ ժամանակ էլ փոխարքան ցանկություն էր հայտնել իր շքախմբով վերադառնալ Թիֆլիս: Փոխարքան իր բնավորության համաձայն չէր ուզում իր վրա վերցնել կատարվածի պատասխանատվությունը:

Տեղեկանալով փոխարքայի մտադրության մասին, Լորիս-Մելիքովն եղավ նրա մոտ և ներկայացրեց էջմիածնում ու Արարատյան դաշտում բնակչության մեջ ստեղծված խուճապային վիճակը: Բայց ի՞նչ կարող էր անել փոխարքան, ինչո՞վ նա կարող էր օգնել, երբ կորպուսի զորամասերը գամված էին Կարսի մատույցներում, երբ Տեր-Ղուկասովի զորաջոկատի ճակատագիրն էլ հայտնի չէր:

Կռահելով փոխարքայի թերհավատությունը, Լորիս-Մելիքովը տատանվող Միխայիլ Նիկոլաևիչին ասաց.

- Ձերդ կայսերական մեծություն, դուք եկել եք Հայաստան և կարծում եմ, որ կհետևեք ձեր երջանկահիշատակ հոր՝ Նիկոլայ Առաջինի օրինակին և կայցելեք էջմիածին:

- Իսկ ի՞նչ կտա այդ այցելությունը, - տարակուսած հարցրեց փոխարքան:

- Նախ, - պատասխանեց Միխայիլ Տարիելովիչը, - ռազմաճակատից Թիֆլիս մեկնելուց առաջ կստանաք Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնանքը և երկրորդ, ձեր այցելությամբ կոգևորեք Տեր-Ղուկասովի զորաջոկատի զինվորներին ու հայ բնակչությանը: Նրանք կհամոզվեն, որ թուրքերին չի հաջողվի մտնել էջմիածին:

Լորիս-Մելիքովի խոսքերը համոզիչ էին և փոխարքան համաձայնվեց: 1877 թ. հուլիսի 4-ին, առավոտյան ժամը 11-ին փոխարքան իր շքախմբով ժամանեց էջմիածին: Քաղաքի մուտքից նա էջմիածնի միաբանների ուղեկցությամբ հասավ Մայր տաճար: Տաճարի մուտքի մոտ փոխարքային հանդիսավորությամբ դիմավորեց կաթողիկոսը: Էջմիածնում փոխարքան մնաց մեկ ժամ, զրուցեց կաթողիկոսի հետ, հետաքրքրվեց հայոց եկեղեցու գործերով և մեկնեց Իգդիր, որտեղ գտնվում էր Տեր-Ղուկասովի զորակայանը...

Փոխարքայի այցելությունը հայերի մոտ ամրապնդեց վստահությունն, որ թուրքերին չի հաջողվի մտնել էջմիածին:

Էջմիածին ու Իգդիր այցելելուց հետո փոխարքան շտապեց վերադառնալ Թիֆլիս:

Լորիս-Մելիքովին այլևս ոչ ոք չէր կարող խանգարել: Վերջապես նա ստացավ ազատ գործելու հնարավորություն:

Իսկապես, փոխարքայի հեռանալը փրկություն էր:

Նահանջն էլ արվեստ է

Ձիվինի անհաջողությունը վերջապես գեներալներին համոզեց, թե որքան ճշմարիտ էր ու հեռատես կորպուսի հրամանատարը:

Այլևս պարզ էր, որ անհնար է շարունակել Կարսի պաշարումը: Անհմաստ էր դառնում Մուխթար փաշայի ուժեղացած բանակի դեմ որևէ գործողություն ձեռնարկել: Ավելին, Կարսը պաշարող զորամասերին սպառնում էր հայտնվել շրջապատման մեջ, քանի որ Վանի կողմից դեպի Կարս էր շարժվում Ֆայիկ փաշայի ուժեղ խմբավորումը: Օգտվելով Ձիվինի խառնաշփոթությունից, Մուխթար փաշան 30 հազար զինվորով համալրեց Կարսի կայազորը:

Ռուսական զորքերի համար ստեղծվել էր ծանր վիճակ: Լորիս-Մելիքովն ելք էր որոնում: Հարկավոր էր մշակել նոր տակտիկա: Հրավիրված ռազմական խորհրդում կորպուսի հրամանատարը դրեց Կարսի պաշարումը վերացնելու խնդիրը: Ներկաներից ոչ մեկը, նույնիսկ նրանք, ովքեր առհասարակ մշտապես հանդես էին գալիս Լորիս-Մելիքովի առաջարկությունների դեմ, չառարկեց կորպուսի հրամանատարին: Բոլորն էլ լռությամբ համաձայնվեցին: Բոլորն էլ զգում էին, թե ինչքան անխոհեմ գտնվեցին ժամանակին մերժելով կորպուսի հրամանատարի ծրագիրը: Ըստ երևույթին հարկավոր էր ճաշակել պարտության դառնությունն, որպեսզի ընդունեին Լորիս-Մելիքովի այլևս անառարկելի հեղինակությունը:

Եվ այսպես, որոշվեց վերացնել Կարսի շրջափակումը և հեռանալ: Կորպուսի հրամանատարը համոզված էր իր ընդունած որոշման ճշմարտացիության մեջ, բայց և գիտեր, թե իր վրա ինչպիսի պատասխանատվություն էր ընկնում:

Բոլոր դեպքերում Կարսի շուրջ տեղավորված էր զորքը, հարյուրից ավելի ծանր թնդանոթ, զգալի քանակությամբ զենք, զինամթերք ու պարեն: Այդ ամենը հարկավոր էր աննկատ տեղափոխել, այն էլ մի անգամից, մի գիշերվա մեջ: Շատերն էին տարակուսում հրամանատարի վճռի մեջ, մտածելով, թե բավարար չափով տրանսպորտային միջոցների բացակայությամբ հնարավոր չէ այդ ահռելի քանակությունը տեղափոխել, այն էլ մի գիշերվա մեջ ու թշնամուց աննկատ: Սակայն նախորդ փորձից ելնելով, նրանք գերադասում էին լռել և հստակությամբ կատարել կորպուսի հրամանատարի կարգադրությունները:

Ռազմական խորհրդում Լորիս-Մելիքովն ամբողջությամբ չբացահայտեց զորամասերի էվակուացման մանրամասները, հայտարարելով, որ դրա պլանը շուտով կհանձնվի զորամասերի հրամանատարներին:

Ռազմական խորհրդից հետո Լորիս-Մելիքովն իր մոտ կանչեց գնդապետ Քիշմիշյանին:

- Քեզ հանձնարարում եմ մի գործ, որի կատարումը բավականաչափ

դժվար է: Բայց գիտեմ նաև, որ կորպուսում բացի քեզանից ուրիշ մեկը չկա, որ ընդունակ լինի դա իրագործելու, - ասաց Լորիս-Մելիքովն ու Քիշմիշյանին բացատրեց իր մտադրությունը:

Հարկավոր էր շրջակա գյուղերից հավաքել մոտ 2 հազար սայլ, բայց այնպես, որ ոչ ոք գլխի չընկներ, թե ինչ նպատակով: Պետք էր շատ զգույշ լինել, որովհետև հենց թուրք բնակչությունն իմանար, որ ռուսական զորամասերը հանում են պաշարումը և հեռանում, անմիջապես կհարձակվեին և կխփեին թիկունքից:

Գնդապետ Քիշմիշյանը կորպուսի հրամանատարի հանձնարարությունը կատարեց փայլուն կերպով, ստանալով հայկական գյուղերի բնակիչների լայն աջակցությունը:

Լորիս-Մելիքովի հրամանով պաշարումն իրականացնող զորամասերը ուժեղացրին Կարսի գնդակոծումը: Ստեղծվեց այնպիսի տպավորություն, թե ռուսները պատրաստվում են գրոհի: Պաշարման հրետանին սկսեց ուղիղ նշանառությամբ խփել քաղաքին և նրա ամենից ուժեղ ամրությանը՝ Քարադաղին:

Իսկ այդ ընթացքում Քիշմիշյանի հավաքած սայլերը ցերեկը տարվում էին Ալեքսանդրապոլի ճանապարհին գտնվող Կյուրուկ-Դարա գյուղում տեղավորված ճամբար: Դա ոչ մի կասկած չառաջացրեց: Տպավորություն էր ստեղծվում, թե ռուսները պարեն ու ռազմամթերք են տեղափոխում Կարսը շրջապատող զորքերին: Իսկ գիշերներին Կարսի մատույցներից արդեն սայլերով տեղափոխում էին զինվորական գույքն ու ռազմամթերքը: Հունիսի 27-ի լույս 28-ի գիշերը թնդանոթները վերջին անգամ կրակեցին Կարսի վրա և անաղմուկ հանվեցին դիրքերից ու տեղափոխվեցին:

Առավոտյան թուրքերը սպասում էին ռմբակոծության վերսկսմանը, բայց ռուսական հրետանին լռում էր: Կարսի պարետը ուղարկեց հետախուզություն: Ռուսական զորամասերի հետքը չէր երևում:

Այսպես, Լորիս-Մելիքովի մտահղացմամբ ոչ միայն հանվեց Կարսի պաշարումն, այլև զորամասերն առանց վնաս կրելու կարողացան հեռանալ մինչև Բաշ-Կադիկլյար գյուղ, որտեղ էլ Լորիս-Մելիքովը տեղավորեց իր զորակայանը:

Կարսի պաշարման աննկատ վերացումն, այն էլ մեկ գիշերվա ընթացքում, պատերազմների պատմության մեջ դիտվում է որպես աչքի ընկնող, բացառիկ իրադարձություն: Գործող կորպուսին հաջողվեց ոչ միայն աննկատ հեռանալ երկու թևերից սպառնացող թուրքական 30 հազարանոց բանակի քթի տակից, այլև ոչինչ չթողեց հակառակորդին:

Կորպուսի հրամանատարի ծառայությունը կայանում է հենց նրանում, որ նա կարողացավ հակառակորդից թաքցնել իր մտադրությունը, բթացնել նրա զգոնությունը, դուրս գալ ոչ միայն սպառնալի վիճակից, այլև

զբաղեցնել այնպիսի դիրք, որով թուրքերին զրկեց հետագա գործողություններ ծավալելու հնարավորությունից:

Անդրադառնալով այս իրողությանը, Քիշմիշյանը գրել է. «Այսպիսի երջանիկ ելքի համար մենք բացառապես պարտական ենք կորպուսի հրամանատարի եռանդին, որն առանձնապես դրսևորվեց պաշարման վերջին օրերին: Նա ամեն ինչ կանխատեսել էր, ամեն ինչ նախատեսել էր, անձամբ էր ամեն ինչ կարգադրում, ամեն ինչ կշռադատում: Գործի հաջողությունն այդ օրերին գեներալ-թիկնապահ Լորիս-Մելիքովի ներդրած հսկայական աշխատանքի ու հոգսերի արժանի և լավագույն պարգևն եղավ»:

Մուխթար փաշան ուշացումով տեղեկանալով ռուսների հեռանալու մասին, շտապեց Կարսից զորք ուղարկել նրանց հետապնդելու համար: Թուրքական ուժերը հաջողության չհասան, քանի որ նախապես հաշվի առնելով այդ հանգամանքը, Լորիս-Մելիքովն առանձնացրել էր հատուկ թեթևաշարժ ջոկատներ, որոնք գիշերային հարձակումների հետ միասին, մեկ այս, մեկ այն տեղում ուժերը կենտրոնացնելու տպավորություն էին ստեղծում: Միաժամանակ տեղացի բնակիչների միջոցով լուրեր էին տարածում, թե ռուսները պատրաստվում են ուժեղ հակահարձակման: Այս ամենը Մուխթար փաշայի շտաբում ստեղծեց այնպիսի խառնաշփոթություն, որը նրան հնարավորությունից զրկեց կենտրոնանալ և որոշել իր անելիքը:

Եվրոպական լրագրողները Լորիս-Մելիքովի մոտ

Առաջին անգամն էր, որ եվրոպական թերթերը իրենց թղթակիցներին ուղարկեցին ռուս-թուրքական պատերազմի ռազմաճակատներ: Նրանց մի մեծ խումբ էլ եկավ Թիֆլիս՝ լուսաբանելու Կովկասյան ռազմաճակատի իրադարձությունները: Բոլոր թղթակիցներն էլ առաջին անգամ էին լինում երկրամասում և նրանց ամեն ինչ հետաքրքրում էր:

Այդ թղթակիցներից Ուիլլերը և Միկկեն ներկայացնում էին ամերիկյան «Նյու-Յորք հերալդ» թերթին, իսկ Դե. Կուտուլին և Ֆորբզը ֆրանսիական «Times»-ին:

Նրանց հետ էին նաև "С. Петербургские ведемости"-ի թղթակից Ն.Ա. Պոտեխինը, "Новое время"-ի թղթակից Ն. Վ. Սիմբո րսկին, "Тифлиские ведемости"-ի թղթակից Ն. Յու. Նիկոլաձեն և "Голос"- ի թղթակից Գ. Կ. Գրադկովսկին:

Թղթակիցների զարմանքն ավելի ուժեղացավ, երբ տեղեկացան, որ ռազմաճակատում գործող կորպուսի հրամանատարը ռուս չէ, այլ հայ է: Այդ պատճառով էլ սկսեցին հետաքրքրվել հայերով: «Մշակ» թերթը 1877 թ. հու-

նիսի կեսերին հայտնում էր այն մասին, թե ինչպես ֆրանսիական «Times»-թղթակից Դե. Կուտուլին զարմացել էր, երբ «Անդրկովկասում գտավ մի ազգ, որն իր բոլոր պակասությունների հետ միասին, այնուամենայնիվ, ներկայացնում է արևելքում եվրոպական տարր իր ձգտումներով, ոգով, իր բնավորությամբ, իր ընդունակություններով և կյանքի եղանակով»:

Այդ թղթակցի համար հայտնագործություն էր, որ հեռվից լսել էր, թե «հայերը վախկոտ, պատերազմելու հատկությունից զուրկ ժողովուրդ են և հանկարծ համոզվում է, որ հայերը համարվում են ռուս զորքի մեջ ամենաքաջ զինվորա կանների շարքում, իրենց միջից ընդունակ և տաղանդավոր զորապետներ են ընծայել ռուս զորքին»:

«Նա, այնուհետև հայտնում էր «Մշակը», սպասում էր մեզ մոտ տեսնել խորին տգիտություն, հարեմ, հանկարծ գտնում է եվրոպական ընտանիք և օրիորդական դպրոցներ, որտեղ կանայք են դասատու: Նա գտավ մի ազգ, որ ունի սեփական ազգային եկեղեցի, հին դասական լեզու, հարուստ գրականություն, նոր կենդանի մշակվող լեզու և այդ լեզվով կենդանի մամուլ»:

Եվրոպական թղթակիցներին հետաքրքրում էր ռազմական թատերաբեմը և նրանք շտապեցին ռազմաճակատ: Հասնելով Ալեքսանդրապոլ, թղթակիցները դիմում հղեցին կորպուսի հրամանատարին, խնդրելով ընդունել իրենց և տալ հարցազրույց:

- Ի՞նչ թղթակիցներ, - զարմանքով հարցրեց Լորիս-Մելիքովն եվրոպական լրագրողների նամակը բերող արտաքին գործերի նախարարության չինովնիկին, որը նրանց ուղեկցում էր Պետերբուրգից:

Եվրոպական լրագրողներին կորպուսի հրամանատարն ընդունեց իր երթային վրանում:

- Ի՞նչ լեզվով ենք զրուցելու, - հարցրեց նա արտաքին գործերի նախարարության չինովնիկին:

- Դուք, ձերդ գերազանցություն, խոսեք ռուսերեն, իսկ ես կթարգմանեմ ֆրանսերենով:

Լորիս-Մելիքովը զրույցը սկսեց կատակով և նկատեց, որ չինովնիկը դժվարանում է որոշ արտահայտություններ ճիշտ թարգմանել, սկսեց նրան ուղղել, լրագրողներին հաճելիորեն զարմացնելով իր փայլուն ֆրանսերենով:

Առաջին հերթին լրագրողներին հետաքրքրում էր, թե ինչ հանգամանքների շնորհիվ է Լորիս-Մելիքովը դարձել կորպուսի հրամանատար: Պատասխանելով այդ հարցին, Լորիս-Մելիքովը նշեց, որ ինքը իբրև հայ միակ գեներալը չէ և հիշեց Տեր-Ղուկասովին, Լազարևին, Ալխազյանին, Շելկովնիկովին և այլոց:

Այնուհետև կորպուսի հրամանատարը պատասխանեց հետևյալ հարցերին:

ՀԱՐՑ. Հայկական թերթերը գրում են, թե սուլթանը հալածում է հայերին: Բայց ահա, սուլթանը Կոստանդնուպոլսի հայ պատրիարքին շնորհում է բարձրագույն պարգև, հայ մարդկանց նշանակում է բարձր պաշտոնի, պատժում է բռնություն գործադրած քրդերին ու չերքեզներին: Մի՞թե, պարոն գեներալ, այդ ամենը չի նշանակում, որ թուրքական պետությունը հայերին թշնամի չէ, որ այդ տպավորությունը ներմուծվում է դրսից:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մի՞թե կարելի է մի ամբողջ ազգ խեղդելուց հետո, նորից գրավել նրա համակրանքը ոչ թե ազգին մարդկային բնական իրավունքներ տալով, այլ այդ ազգի մի քանի անհատների առանձին արտոնություններ շնորհելով հավատացնել, թե ինքը միշտ այդ ազգի պաշտպանն է եղել:

ՀԱՐՑ. Ի՞նչ կարծիք ունեք, «Ռուսսկիյ վեստնիկ» ամսագրի այս տարվա հունիսի /1877 թ. թիվ 6/ համարում տպագրված պարոն Վենյուկովի «Միջազգային հարցերը Ասիայում» հոդվածի մասին, որտեղ հայերի վերաբերյալ խոսվում է անհարգալից տոնով: Դուք, պարոն գեներալ, չե՞ք վիրավորվում, երբ այդ հեղինակը գրում է, որ հայերը միայն առևտրական ազգ են, հարստահարող և վնաս են բերում Ռուսաստանին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նախ, հայերը զբաղվելով վաճառականությամբ, ծառայում են Ռուսաստանին՝ օգուտ տալով: Եվ եթե հայերը չլինեին, ապա մեր երկրի առևտուրը իրենց ձեռքը կվերցնեին անգլիացիներն ու մյուսները և կգործեին Ռուսաստանի օգուտների դեմ:

Երկրորդ. դուք եղել եք Թիֆլիսում, այնտեղից անցել եք Հայաստանով և եկել հասել այստեղ: Մի՞թե ամենուրեք դուք չեք տեսել, որ հայը երկրագործ ժողովուրդ է, ունի հին ու փառահեղ մշակույթ: Խորհուրդ կտամ վերադարձին անցնեք Անի քաղաքի ավերակներով: Հայաստանի երբեմնի մայրաքաղաքի ավերակները ձեզ շատ բան կասեն:

Եվ երրորդ. ավելորդ եմ համարում Վենյուկովի հոդվածի վրա երկար կանգ առնել, որովհետև նա ոչ միայն խակ հայացքներ է արտահայտում, այլև չի կարողանում թաքցնել իր տգիտությունը հայերի մասին, նույնիսկ ծիծաղելի է նրան հերքելը:

ՀԱՐՑ. Պարոն գեներալ ձեր կարծիքով հայերի ռուսասիրությունը չի՞ վնասում ձեզ: Մի՞թե Եվրոպայից հեռանալը օգտակար է:

ՊԱՏԱՍԽԱՆ. Իսկ մի՞թե Եվրոպան չի կարող հասկանալ, որ հայերի ռուսասիրությունը շատ բնական է, քանի որ Թուրքիան ոչ մի կերպ չի ապահովել հայերի անվտանգությունը: Այնտեղ հայերի նկատմամբ այնպիսի հալածանք է իրականացվում, որ ժողովրդին հասցրել է կործանման եզրին: Այսպիսի պայմաններում, ինչպե՞ս կարող են հայերը համակրանք չունենալ Ռուսաստանի, Ասիայում այն միակ քրիստոնյա պետության նկատմամբ, որ պաշտպանել ու ապահովություն է տվել հայերին:

ՀԱՐՑ. Պարոն գեներալ, թույլ տվեք նկատել, որ Կոստանդնուպոլսում բոլորովին այլ տեսակետ կա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դուք ճիշտ եք, այնտեղ կա այլ տեսակետ: Բայց դա ամբողջ թուրքահայության կարծիքը չէ: Անցեք հայկական գավառներով, եթե դրա հնարավորությունը կունենաք և, դուք կտեսնեք այն մեծ տարբերությունն, որ կա օսմանյան մայրաքաղաքում ապրողների ու գավառներում ապրող հայության պայմանների միջև:

ՀԱՐՑ. Պարոն գեներալ, դուք շատ ջերմ խոսեցիք Ռուսաստանի դերի մասին, իսկ ո՞ւր մնաց Եվրոպան:

ՊԱՏԱՍԽԱՆ. Մի անհանգստացեք, Եվրոպան մնացել է իր տեղում: Մեզ, հայերիս համար դա ուրիշ իմաստ ունի: Անցյալ ժամանակներում, շարունակաբար Եվրոպան մեր ազգային-եկեղեցական գործիչների դիմումները թողել է անպատասխան: Եվրոպան իր տեղից չի շարժվել: Խոստումներ տալուց այն կողմ չի անցել: Այնպես, որ համոզված եմ՝ Եվրոպան մի օր կզգա իր պատասխանատվությունը հայերի համար:

ՀԱՐՑ. Բայց, պարոն գեներալ, Եվրոպան ի՞նչ մեղք ունի, որ թուրքերը հայերին հալածում են ոչ թե Եվրոպային, այլ Ռուսաստանին համակրելու համար:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինչպես երևում է, պարոնայք, դուք լավ չգիտեք պատմությունը: Օսմանյան Թուրքիան հայերին հալածում էր, երկրից բռնությամբ տեղահանում ու գերության էր քշում այն ժամանակներից, երբ Ռուսաստանը շատ հեռու էր Հայաստանից, երբ հայերը բախում էին եվրոպական արքունիկների ու Հռոմի պապի դռները:

Հարցազրույցի վերջում թղթակիցները հետաքրքրվեցին առաջիկա ռազմական գործողությունների մասին: Լորիս-Մելիքովը տվեց խուսափողական պատասխան, ասելով, թե առայժմ ոչինչ չի արվում, դեռ շտաբում չեն սկսել աշխատել այդ ուղղությամբ:

Լորիս-Մելիքովն այս խուսափողական պատասխանը տալով, հասկացրեց, որ սպառվել է թղթակիցներին հատկացված ժամանակը: Լրագրողները շնորհակալություն հայտնելով, խնդրեցին թույլ տալ մի քանի զորամաս այցելել, ծանոթանալ կռվին մասնակցող զինվորների առօրյային: Կորպուսի հրամանատարն անհրաժեշտ կարգադրություն արեց և հաջողություն ցանկացավ եվրոպացի լրագրողներին:

Բանսարկություններ շարունակվում են

Ռազմաճակատից փոխարքայի հեռանալով թվում էր, թե վերջ կունենան Լորիս-Մելիքովի դեմ բանսարկությունները: Բայց այդպես չեղավ: Շուտով ռազմաճակատ լուրեր հասան այն մասին, թե գլխավոր հրամանատարը մտադիր է Երևանյան ջոկատը վերածել գործող կորպուսի: Դա

նշանակում էր, որ Լորիս-Մելիքովի փոխարեն հրամանատարությունն անցնելու էր Տեր-Ղուկասովին:

Գեներալներից շատերն այդ լուրերն ընդունեցին իբրև հավաստի տեղեկություն և սկսեցին ակտիվանալ, ձգտելով ստանալ գլխավոր հրամանատարի համաձայնությունը և իրենց ջոկատով անցնել Տեր-Ղուկասովի հրամանատարության տակ:

Գեներալ Դեվելը հավատալով վերոհիշյալ լուրերին, թողեց Արդահանը և իր զորամասով մեկնեց Տեր-Ղոկասովին միանալու համար: Օգտվելով դրանից, Մուխթար փաշան 1877 թ. օգոստոսի 13-ին մեծ ուժերով հարձակվեց Բաշ-Կադիքլարի վրա ու կարողացավ գրավել պաշտպանության առաջին գիծը:

Լորիս-Մելիքովը կազմակերպելով պաշտպանությունը, միաժամանակ հեռագրեց գեներալ Դեվելին, հրամայելով ճանապարհից վերադառնալ ու թուրքերին հարվածել թիկունքից: Անցնում էր ժամանակը, իսկ Դեվելի զորաջոկատը չէր երևում: Երեկոյան հայտնի դարձավ, որ Դեվելը իր զորամասն ետ չի վերադարձրել:

Մինչ այդ, մարտը գնալով բորբոքվում էր: Երկու կողմից շատ զոհեր եղան: Ծանր վիրավորվեց կորպուսի հեծելազորի հրամանատար գեներալ Ճավճավածեն, որին փոխարինեց գեներալ-մայոր Հովհաննես /Իվան/ Լորիս-Մելիքովը:

Դժվար չէ պատկերացնել, թե ինչ վիճակի մեջ էր հայտնվել կորպուսի հրամանատարը Դեվելի բացահայտ դավաճանության պատճառով: Եվ իր իրավունքների սահմաններում Լորիս-Մելիքովը Դեվելին մեկուսացրեց հրամանատարությունից ու Թիֆլիս ուղարկված հեռագրով պահանջեց անմիջապես նրան հեռացնել իր պաշտոնից:

Պրոֆեսոր Օրուչևի վճռականությունը

Ռուսաստանի ռազմական նախարար Միլյուտինը, թեև գտնվում էր Բալկանյան ռազմաճակատում, բայց չէր թուլացնում իր ուշադրությունը Կովկասյան ռազմաճակատի վրա:

Դմիտրի Ալեքսեևիչ Միլյուտինը դժգոհ էր Կովկասի փոխարքա, մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչի գործունեությունից, որն ամեն ինչ վստահել էր բանսարկությունների մեջ վարպետացած իշխան Սվյատոպոլկ-Միրսկուն:

Չնայած Կովկասյան ռազմաճակատի տրամադրության տակ դրվել էր մոտ 200 հազարանոց բանակ, բայց փոխարքան անընդհատ նոր օգնություն էր պահանջում, այդ էլ այն դեպքում, երբ եղած զորքերի մեծ մասը հեռու էին պահվում ռազմաճակատից:

Միլյուտինն անչափ դժգոհ էր նաև նրա համար, որ փոխարքան առանց որևէ լուրջ պատճառաբանության հեռացել էր գործող կորպուսից:

Միլյուտինի համբերության բաժակը լցվեց, երբ Բալկանյան ռազմաճակատում Ալեքսանդր Երկրորդի անունով ստացվեց փոխարքայի նոր նամակն օգնություն ստանալու խնդրանքով: Եվ Միլյուտինը որոշեց Կովկասյան ռազմաճակատ ուղարկել գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայի պրոֆեսոր, գեներալ-լեյտենանտ Նիկոլայ Նիկոլաևիչ Օբրուչևին:

Հանգամանորեն ներկայացնելով Կովկասյան ռազմաճակատում ստեղծված իրավիճակը, դրանում փոխարքայի ու նրա շքախմբի անխոհեմ գործողությունների հետևանքները, ռազմական նախարարն Օբրուչևին ասաց.

- Խնդրում եմ չքաշվել Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարի բարձր դիրքից: Նա վախկոտ է և բնավորությամբ թույլ: Դրանից ճարպկորեն օգտվում է նրա շրջապատը և նրա հետ վարվում, ինչպես տիկնիկի: Նաև հիշեք, Նիկոլայ Նիկոլաևիչ, որ փոխարքան սարսափելի վախենում է թագավոր կայսրի զայրույթից և դրանով դուք կարող եք նրան ահաբեկել:

Գալով Թիֆլիս, որտեղ մնաց երեք օր, գեներալ Օբրուչևը հանգամանորեն ծանոթացավ Կովկասյան բանակի զորակայանի գործերին, որոնք փոխարքայի բացակայությամբ տնօրինում էր իշխան Միրսկին: Օբրուչևին անչափ զարմացրել էր, որ շտաբի գեներալներն ու գնդապետները պարապությունից տրվել են բանսարկությունների, իսկ դրության տերը փոխարքայի օտարերկրացի խորհրդականներն են:

Գեներալ Օբրուչևը շտապեց ռազմաճակատ, չսպասելով Հանքային ջրերից փոխարքայի վերադարձին: Բաշ-Կադիքլյարում Օբրուչևը հանդիպեց կորպուսի հրամանատար Լորիս-Մելիքովին: Փորձված ռազմական պրոֆեսորը հաճելիորեն զարմացավ, հանդիպելով կայուն բնավորություն ունեցող հրամանատարին: Նա հանգամանորեն ծանոթացավ իրավիճակին: Պարզվեց, որ կորպուսի մատակարարումը կատարվում է անկանոն: Զինվորների օրապահիկը հիմնականում պաքսիմատն էր: Տարածված էր դիզենտերիան: Կարևորելով այդ հիվանդության կանխարգելումը, կորպուսի հրամանատարը հատուկ ուշադրություն էր դարձնում բանակային ճամբարի աղբահանությանը, հետևում էր, որ զինվորները ուտելուց առաջ ձեռքերը լվանան: Այս ամենի վերաբերյալ նա տվել էր հրաման և խստորեն պատժում էր խախտողներին:

Օբրուչևին դուր եկավ, որ այդպիսի պայմաններում կորպուսի հրամանատարն ուշադրություն է դարձնում սանիտարական վիճակին: Պրոֆեսորը հավանություն տվեց Լորիս-Մելիքովի մշակած տակտիկային՝ Մուխթար փաշային ցուցադրել իր ուժն, որն իրականում գոյություն չուներ:

Պրոֆեսորի սուր աչքը նկատեց, որ կորպուսի շտաբի գործունեությունը չի համապատասխանում հրամանատարի պահանջներին և իր առա-

ջարկությամբ շտաբի նոր պետ նշանակվեց գեներալ-մայոր Գուրչինը, որն իրեն լրիվ արդարացրեց:

Գեներալ Օբրուչևը հանգամանորեն ծանոթացավ կորպուսի գործունեությանը, գտավ, որ նրա հրամանատար Լորիս-Մելիքովը լիակատար կերպով տիրապետում է գործը և կարող է հաջողությունների հասնել, եթե ռազմաճակատի հրամանատարությունից ստանա ոչ միայն անհրաժեշտ օգնություն, այլև նրան այնտեղից չխանգարեն:

Լորիս-Մելիքովը ռազմական նախարարի ներկայացուցչին ծանոթացրեց իր նկատառումներն, որոնք վերաբերում էին հրամկազմին, տակտիկական ու ստրատեգիական խնդիրներին: Օբրուչևը հավանություն տվեց կորպուսի հրամանատարի բոլոր առաջարկություններին ու մտահղացումներին և խոստացավ Թիֆլիս վերադառնալիս դրանք ներկայացնել փոխարքայի ուշադրությանը և դրական լուծում տալ: Հակառակ դեպքում, ինչպես նրբորեն հասկացնել տվեց Օբրուչևը, դրանք կլուծվեն ռազմական նախարարի ձեռքով...

Թիֆլիս վերադարձած գեներալ Օբրուչևին փոխարքան ընդունեց ընդգծված հարգանքով, որպես նորին կայսերական մեծության զորակայանի ներկայացուցիչ: Օբրուչևը հանգամանորեն զեկուցեց, թե ինչ տպավորություն է ստացել գործող կորպուսում իրավիճակին ծանոթանալուց հետո, ընդգծելով, որ իրեն ծայրահեղորեն անհանգստացնում է Կովկասյան ռազմաճակատում ստեղծված դրությունը:

Փոխարքան համաձայնվեց և հայտնեց, որ թագավոր կայսրին ուղարկել է հեռագիր օգնություն ստանալու խնդրանքով: Օբրուչևը, կարծես, թե չլսեց փոխարքայի խոսքերը և հիշելով Միլյուտինի խորհուրդն, ասաց.

- Ձերդ մեծություն, ես ուզում եմ ուղղակի հասկանալ, թե ում դեմ է կռվում Կովկասյան բանակի զորակայանը: Թուրքերի՞, թե՞ Լորիս-Մելիքովի դեմ:

Փոխարքան չհասցրեց ուշքի գալ Օբրուչևի այս ուղղակի հարցադրումից: Իսկ փորձառու պրոֆեսորը հանգիստ շարունակեց.

- Ռազմական գործողությունների հենց սկզբից բանակի շտաբը միանգամայն սխալ է տեղաբաշխել զորամասերին: Մենք կորցրինք ժամանակ և Մուխթար փաշային հնարավորություն տվել զորահավաք կատարել և, հիմա, երբ գործող կորպուսը հայտնվել է դժվարին կացության մեջ, նրա հրամանատարի շուրջ հյուսվում են ինչ որ բանսարկություններ:

Փոխարքան փորձեց ընդհատել, բայց Օբրուչևը ներողություն խնդրելով, ավելացրեց.

- Ես լսել եմ, որ ինչ որ մեկի խելքին փչել է կորպուսը վերաենթարկել Տեր-Ղուկասովին և գործողությունները շարունակել՝ բազա դարձնելով Իգդիրը: Դա անմտություն է, ձերդ բարձրություն:

Այս խոսքերը լսելուն պես, փոխարքան տեղից վեր կացավ և սկսեց ետ

ու առաջ քայլել: Օբրուչևը հասկացավ, որ այդ կերպ փոխարքան փորձում է թաքցնել իր հուզմունքը, բայց ուշադրություն չդարձնելով, ինքն էլ ոտքի կանգնելով, ավարտին հասցրեց իր միտքը.

- Բացի այն, որ ձեր շտաբը և Տեր-Ղուկասովին և թե Լորիս-Մելիքովին դնում է երկիմաստ վիճակում, այլև լավագույն նվեր է մատուցում թուրքերին, պատերազմի եռուն պահին հնարելով կորպուսի վերածնավորում:

Օբրուչևը նկատեց, որ փոխարքան ցանկանում է առարկել, ընդգծված ասաց.

- Ես հարկադրված կլինեմ այս ամենի մասին զեկուցել նորին կայսերական մեծության զորակայանին:

Փոխարքան սկսեց արդարանալ, ասելով, թե, ըստ երևույթին, կորպուսի վերածնման մտադրությունը քննարկվել է իր բացակայության ժամանակ:

- Դուք, իհարկե, ճիշտ եք, - ասաց փոխարքան, - իսկապես չի կարելի խառնվել գործող կորպուսի գործերին, նրա համար այդքան դժվար պահին:

Փոխարքայի ձայնի մեջ վախի արտահայտությունը զգալով, Օբրուչևը վճռեց իր առաքելությունը հասցնել մինչև վերջ:

- Հենց այդ պատճառով էլ, - ասաց Օբրուչևը, - կորպուսի շուրջ ստեղծված քաշքշուկը արդեն փաստ է: Գեներալ Դեվելը համարձակվել է չենթարկվել կորպուսի հրամանատարին և վիժեցրել է Կիզիլ-Թափա բարձունքը ետ գրավելու օպերացիան: Թույլ տվեք, ձերդ բարձրություն, ձեզ խորհուրդ տալ՝ հաստատեք Լորիս-Մելիքովի որոշումը Արդահանի ջոկատի հրամանատարությունից Դեվելի մեկուսացման մասին: Գործող կորպուսի հրամանատարը միջնորդում է գեներալ Լազարևին նշանակել այդ պաշտոնում, ինչը, որ իմ կարծիքով շատ տեղին է:

Հովհաննես /Իվան/ Դավիդովիչ Լազարևը, մարտական այդ գեներալը, որ աչքի էր ընկել համարձակ ու անհապաղ լուծումներ գտնելու մեջ, չնայած անմիջական ռազմական գործողություններին մասնակցելու նրա բուռն ցանկությանը, փոխարքայի հրամանով նշանակվել էր սահմանամերձ գավառներում անգործության մատնված զորամասերի հրամանատար: Քանիցս Լազարևը դիմել էր գլխավոր հրամանատարին, բացատրել, որ իր գլխավորած զորամասերի տեղը ռազմաճակատն է, մանավանդ, որ գործող կորպուսը համալրման կարիք ուներ:

Փոխարքան նույնիսկ չէր լսել և Լազարևի զեկուցագրերն ու խնդրանքը թողել էր անհետևանք: Այդպես էլ ոչ մեկին հայտնի չէր փոխարքայի համառության պատճառը:

Իսկ, ահա, այժմ Օբրուչևն է խոսում ոչ միայն Լազարևին ռազմաճակատ ուղարկելու մասին , այլև պահանջում է նրան նշանակել իր սիրելի Դեվելի փոխարեն:

Ահա, թե ինչու Օբրուչևի խոսքերը լսելուն պես, փոխարքան վճռական քայլերով մոտեցավ պրոֆեսորին և ձայնը բարձրացնելով ասաց.

- Բայց ինչ է, Նիկոլայ Նիկոլաևիչ, ինչպե՞ս կլինի դա: Հայը հայի վրա և հային է թոցնում:

- Իսկ ի՞նչ եք դուք ուզում: Ուզում եք, որ ռուսական բանակին թուրքը թոցնի՞: Մեզ, ձերդ բարձրություն, վճռականորեն միևնույնն է, թե թշնամուն հաղթելու ընդունակ գեներալը ինչ ազգության է պատկանում:

Ռազմական պրոֆեսորը այնպիսի շեշտադրությամբ արտասանեց «մեզ» բառը, որով ուզեցավ հասկացնել, թե դա է թագավոր կայսրի ու նրա զորակայանի կարծիքը:

Եվ պետք է ասել, որ փոխարքան այդպես էլ հասկացավ...

«Ինչման եմ ուզում տոռել այդ անապատծ փաշայի ողնաշարը...»

Նորին կայսերական մեծության զորակայանի ներկայացուցիչ Օբրուչևի ստույգայցն արդյունավետ եղավ: Լորիս-Մելիքովը սկսեց ազատ շունչ քաշել: Նրա համար մեծ օգնություն էր գեներալ Լազարևի ռազմաճակատ գալը: Լազարևին երաշխավորելիս կորպուսի հրամանատարը չէր սխալվել: Նա համոզված էր, որ Լազարևը կարգի կբերի Արդահանի զորաջոկատը: Իսկապես, գեներալ Լազարևն արագորեն մտավ գործի մեջ և շատ շուտով զգացվեց նրա ներկայությունը:

Մինչ այդ, Մուխթար փաշան հասցրել էր Ալաջայի բարձունքներում կառուցել անառիկ պաշտպանության համակարգ 22 կմ ընդհանուր երկարությամբ և հուսով էր, որ Կարսի անվտանգությունը վերջնականապես ապահովված է: Մուխթար փաշան նաև համոզված էր, որ ի վերջո կհաջողվի ջախջախել Լորիս-Մելիքովի կորպուսը և նախածեռնությունը կվերցնի իր ձեռքը:

Դեռևս հուլիս ամսին, երբ գեներալ Օբրուչևը գտնվում էր կորպուսում, Լորիս-Մելիքովը նրան ծանոթացրել էր Ալաջայի բարձունքները գրոհելու և հակառակորդին այնտեղից դուրս քշելու պլանին: Օբրուչևը հիմնականում հավանություն տալով դրան, այն գնահատեց, որպես խելացի ու համարձակ մտահղացում: Իր հերթին Օբրուչևն այդ պլանի մեջ մտցրեց մի քանի էական լրացում:

Լորիս-Մելիքովը նախատեսել էր հարձակումը կազմակերպել երեք ուղղությամբ, ընդորում ակտիվ գործելու էին կենտրոնի և ձախ թևի զորախմբերը: Աջ թևի առջև դրվում էր խնդիր՝ հաճախակի հարձակումներով գամել թուրքերի ուժերին և Մուխթար փաշային զրկել իր թույլ տեղերին օգնության հասնելու հնարավորությունից: Բացի դրանից, աջ թևով պետք է թշնամու թիկունք անցնեին շրջանցող զորամասերը և հանկարծակի հարված հասցնեին:

Օբրուչևն առաջարկել էր մինչև գլխավոր հարձակման սկսելը, իրականացվող ակտիվ հետախուզության հետ միասին ստեղծել հատուկ ջոկատներ և դրանց միջոցով շոշափել թուրքերի պաշտպանական գիծը՝ հանկարծակի ու արագաշարժ գրոհներ ձեռնարկելով: Հենց այս խնդիրն էլ դրվեց Արդահանի զորաջոկատի հրամանատարությունը ստանձնած գեներալ Լազարևի առջև: Լազարևը փայլուն կերպով իրագործեց այդ առաջադրանքը, հետախուզության և հատուկ ջոկատների միջոցով շոշափելով թուրքերի պաշտպանական գիծը՝ ձեռնարկելով հանկարծակի ու արագաշարժ գրոհներ: Լազարևը առանձնակի եռանդով սկսեց իրագործել Լորիս-Մելիքովի մշակած օպերատիվ պլանով իրեն հանձնարարված գործը:

Ծանոթանալով իրավիճակին, Օբրուչևը նույնպես համոզվել էր ,որ կորպուսը միայն իր ուժերով չէր կարողանա տիրել Ալաջայի բարձունքներին և բացել Կարս տանող ճանապարհը: Հենց այդ էլ նկատի ունենալով նա որոշակի ճնշում գործադրելով փոխարքայի վրա , Սև ծովի ափին գտնվող զորքերի մի մասը հանել տվեց և ուղարկեց Լորիս-Մելիքովի տրամադրության տակ:

Անդրադառնալով Կովկասյան ռազմաճակատից գեներալ Օբրուչևի վերադարձին, ռազմական նախարար Միլյուտինը 1877 թ. հոկտեմբերի 30-ին իր օրագրում գրել է, որ Օբրուչևի հայտնած տեղեկությունները հաստատում են իր կանխատեսումները Կովկասյան ռազմաճակատում տիրող իրավիճակի մասին: Այդ տեղեկությունները «պատկերում են մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչի կամազուրկ, թուլամորթ լինելը, նրա վրա իշխան Սվյատոպոլկ-Միրսկու վնասակար ազդեցությունը»:

Այս ամենի մասին Օբրուչևը նաև զեկուցեց Ալեքսանդր երկրորդին, հատկապես ընդգծելով գեներալ-թիկնապահ Լորիս-Մելիքովի դրական ու կարևոր դերը ռազմական հաջողությունների գործում:

Ստանալով համալրում, կորպուսի հրամանատարն ամբողջովին տրվեց հարձակումը նախապատրաստելուն: Երբեմն-երբեմն Լորիս-Մելիքովը դառնում էր անհամբեր, չէր թաքցնում, որ շտապում է վրեժ լուծել Զիվինի անհաջողության համար:

- Իվան Դավիդովիչ, ինձ հազիվ եմ զսպում: Չես կարող պատկերացնել, թե ինչքան եմ ուզում տրորել այդ սնապարծ փաշայի ողնաշարը, - հաճախ ասում էր Լորիս-Մելիքովը, Լազարևի հետ օպերացիայի պլանը քննարկելիս:

- Բայց միթե՞ միայն Զիվինի համար, - մի անգամ էլ հարցրեց Լազարևը:

- Զիվինը համարիր որպես խորհրդանիշ: Մենք քեզ հետ միասին, Իվան Դավիդովիչ, ավելի մեծ խնդիր ունենք: Ավելի ճիշտ՝ մեծ պարտք ունենք: Ահա, հիմա մենք գտնվում ենք Բաշ-Կադիքլյար կոչվող գյուղում:

Հայկական գյուղ է եղել: Տեսե՞լ ես, հայի ոչ մի տուն կանգուն չի մնացել: Այդպես է ամենուրեք:

- Էհ, Միխայիլ Տարիելովիչ, - հոգոց հանեց Լազարևը, - կկարողանա՞նք ինչ որ կերպ ամոքել այդ դժբախտների վիշտը:

- Մի քանի օր առաջ ինձ հանդիպեցին Եվրոպայից եկած թղթակիցներ: Նրանց էլ էր հետաքրքրում այդ հարցը, - ասաց Լորիս-Մելիքովը և պատմեց նրանց հետ ունեցած զրույցի մասին:

- Եվ գիտես, Իվան Դավիդովիչ, բանը միայն մեր հայ լինելու և հայերին օգնելու մեջ չէ: Տես մեր ռուս սպաներն ու հասարակ ռուս զինվորներն ինչպիսի հոգատարությամբ ու կարեկցանքով են վերաբերվում դժբախտության մեջ հայտնված հայերին:

- Ճիշտ է, - համաձայնվեց Լազարևը և Լորիս-Մելիքովին պատմեց հետևյալ դեպքի մասին, -երբ մեր զորամասերից մեկը մտնում է Քյոփրի-Քոյ հայկական գյուղ, կանայք չկարողանալով զսպել իրենց ուրախությունը, ջերմեռանդությամբ աղոթում էին ու բարևելով ասում «Աստված, էլի ռուս տեսանք, մենք քո ոտքիդ մեռնենք այ ռուս»: Իսկ փոքրիկ հայ տղաները ռուսներեն զինվորներին հարցնում էին “брат, хочешь хлеб кушай”...

Այդ օրը ռուսական բանակի երկու նշանավոր գեներալներն երկար զրուցեցին ու խորհեցին իրենց ազգի ու պատմական հայրենիքի մասին...

Գեներալ Հովհաննես Լազարյան (Լազարև)

Հովհաննես Դավթի Լազարյանը ծնվել է 1820 թ. Շուշի քաղաքում չքավոր ընտանիքում: Երիտասարդ տարիներին Շուշի քաղաքում զբաղվել է դերձակությամբ: 1839 թ. մտել է զինվորական ծառայության մեջ և ռազմական գործողություններում աչքի ընկնելու համար 1842 թ. ստացել է սպայի աստիճան: Մասնակցել է Կովկասյան մի շարք արշավանքների:

Հովաննես Լազարևն աչքի էր ընկնում փայլուն տաղանդով: Չունենալով ոչ հարստություն, ոչ կապեր և ոչ էլ երևելի ծագում, կարողացել է հասնել փառքի ու պատվի բարձր աստիճանի: Թաթարերեն լեզվին տիրապետելու շնորհիվ Լազարևը դարձել էր մատչելի լեռնականների համար: Նրա մոտ ընդունելության հատուկ ժամ չկար: Բոլորի առջև դռները բաց էին: Դրա հետ միասին Լազարևը կարողանում էր պահպանել հպարտ հրամայողի տոն, թույլ չէր տալիս կատակներ, որոնք կարող էին վնասել նրա հեղինակությունը:

Լազարևի հեղինակությունը լեռնականների մոտ ավելի բարձրացավ, երբ Գունիբը առլում նրան հանձնվեց Շամիլը:

1859 թ. օգոստոսի 10-ին ռուսական զորքերը շրջապատեցին անառիկ Գունիբը: Փորձ արվեց բանակցել Շամիլի հետ: Բայց անարդյունք: Ռուսների առաջարկությանը Շամիլը պատասխանեց. «Թող կատարվի Ալահի

կամքը: Գունիբը բարձր լեռ է: Ես կանգնած եմ լեռան վրա, ինձնից ավելի բարձր՝ Աստվածը: Ռուսները ներքևումն են, թող գրոհեն»:

Ռուսական զորքին օգոստոսի 25-ին հաջողվեց գրավել Գունիբը: Շամիլը բարձրացրեց սպիտակ դրոշակ և ուղարկած բանագնացի միջոցով հարցրեց. «Եթե այդտեղ է գնդապետ Լազարևը, ապա թող գա առլ՝ բանակցելու համար»: Շամիլը հայտնում էր նաև, որ կամենում է Լազարևից խորհուրդ լսել և միայն նրա խոսքին է հավատում:

Իշխան Բարյատինսկին, հաշվի առնելով, թե Լազարևը ինչպիսի հեղինակություն ունի լեռնականների մոտ, համաձայնվեց նրան ուղարկել Շամիլի մոտ՝ համոզելու հանձնվել ռուսաց ցարի մեծահոգությանը:

Չնայած հանձնարարության վտանգավոր լինելուն, Լազարևը մենակ մեկնեց Շամիլի մոտ: Աուլի հրապարակում Լազարևին դիմավորեց զինված մյուրիդներով շրջապատված Շամիլը:

Լազարևն արևելյան սովորությամբ ողջունեց մյուրիդներին և ցույց չտալով, թե դեմքով ճանաչել է Դաղստանի ահեղ տիրակալին, խնդրեց իրեն տանել Շամիլի մոտ:

Երբ մյուրիդները կատարեցին Լազարևի խնդրանքը, նա մոտեցավ, պատվի առնելով ասաց. «Շամիլ, ամբողջ աշխարհին հայտնի են քո քաջագործությունները և նրանց փառքը չի խամրի լեռներում, քանի այդ լեռները կանգուն են: Հպատակվիր ճակատագրիդ և հանձնվիր ռուսական միապետի մեծահոգությանը: Դու դրանով կփրկես քեզ հավատարիմ մնացածներին դժբախտությունից: Ցույց տուր, որ դու մեծ ես ինչպես երջանկության, այնպես էլ դժբախտության մեջ և որ կարող ես խոնարհաբար ու հաստատակամությամբ տանել Բարձրյալի նախասահմանումը»:

Ի պատասխան դրա, Շամիլը պահանջեց, որպեսզի Լազարևը մնա պատանդ իր ընտանիքի մոտ:

Հարկ եղավ Լազարևին եռանդուն ջանքեր գործադրել և ի վերջո համոզել Շամիլին հանձնվելու:

Շամիլի հանձնվելուց հետո Լազարևը ստացավ գեներալ-մայորի աստիճան և նշանակվեց Դաղստանում զորքերի հրամանատար ու Դարգինյան օկրուգի կառավարիչ:

Յոթը տարի անց Լազարևը ստացավ գեներալ-լեյտենանտի աստիճան և նշանակվեց 21-րդ հետևակ դիվիզիայի հրամանատար:

1877 թ. ռազմական գործողությունների վճռական պահին Լազարևը կանչվեց Գործող կորպուս:

Կարսի գրավման համար Լազարևը պարգևատրվեց Սուրբ Գեորգի 2-րդ աստիճանի բարձրագույն շքանշանով: Պատերազմից հետո հրավիրվեց Պետերբուրգ: Այստեղ նրան շնորհվեց գեներալ-թիկնապահի կոչում և նշանակվեց Կովկասյան 2-րդ կորպուսի հրամանատար:

Գեներալ-թիկնապահ Լազարևը 1879 թ. գարնանը նշանակվեց թուրք-

մենական անապատներ շարժվող երրորդ էքսպեդիցիոն զորքերի հրամանատար: Սակայն նրան չվիճակվեց ավարտել արշավը: 1879 թ. օգոստոսի 14-ին Լազարևը մահացավ: Ռուսաստանի ռազմական նախարար Դ. Միլյուտինը իր օրագրում կատարել է հետևյալ գրառումը. «Կովկասից ստացվել է տխուր հաղորդում գեներալ Լազարևի հանկարծակի մահվան մասին: Նա մեռել է Չատում, կարբունկուլից (թարախուռուցք)... մտադրություն կա նրա փոխարեն նշանակել գեներալ Տեր-Ղուկասովին»:

Հովհաննես Դավիդի Լազարևը թաղվել է Թիֆլիսում, հայկական Վանքի տաճարում:

Ալաջայի հերոսը

Ալաջայի բարձունքում հուսալիորեն ամրապնդվելով, Մուխթար փաշան օգոստոսի 13-ից սկսեց հարձակումներ գործել, իր հերթին փորձելով շոշափել ռուսական զորքերի թույլ կետերը: Տեղի էին ունենում արյունահեղ ընդհարումներ:

Լորիս-Մելիքովը ստանալով օժանդակ ուժեր, իր զորքերի թիվը հասցրեց 60 հազարի և, ըստ ծրագրի, լայնամասշտաբ հարձակումը պետք է սկսեր 1877 թ. սեպտեմբերի 20-ին:

Հարձակման նախօրյակին, ամբողջ օրը կորպուսի հրամանատարը շրջեց գրոհին պատրաստ զորամասերում, զրույցեց սպաների ու զինվորների հետ, յուրաքանչյուրի համար գտնելով ոգևորիչ խոսքեր:

Երեկոյան հրավիրված ռազմական խորհրդում նորից ճշտվեցին հարձակման հետ կապված բոլոր հարցերը: Կորպուսի հրամանատարի համար ոչ մի մանրուք չկար: Նրան հետաքրքրում էր ամեն ինչ՝ զինվորի սնունդից մինչև զենքերի պատրաստ լինելը:

Ռազմական խորհուրդն ավարտելուց առաջ Լորիս-Մելիքովը դիմեց իր զինակիցներին.

- Բոլորիդ խնդրում եմ չմոռանալ և միշտ հիշել: Երբ տալիս եք գրոհի հրաման, իմացեք, որ դրանով դուք ինչ որ մեկի ենթարկում եք մահապատժի՝ առանց դատի ու հետաքննության և որ գլխավորն է՝ առանց մեղքի: Իմացեք նաև, որ մեզ չի փրկում և այն, որ տալով գրոհի հրաման, չենք էլ իմանում, թե ում կհասնի թշնամու գնդակը կամ էլ նետած նռնակը:

Ներկաները զարմացել էին կորպուսի հրամանատարի այս խոսքերից: Եվ կարծես կռահելով այդ, Լորիս-Մելիքովն ասաց.

- Ես այս բոլորը, պարոնայք, ասում եմ ձեզ նրա համար, որպեսզի ուշադիր լինեք ամեն մի զինվորի կյանքի նկատմամբ, առաջիկա ճակատամարտում գործեք խելացի ու մտածված, խնայենք մեր մարդկանց, քանի որ անտեղի զոհեր շատ ենք տվել...

Սեպտեմբերի 20-ի վաղ առավոտյան կորպուսի զորամասերը սկսեցին

հարձակումը: Դա այնքան ուժեղ էր, որ թուրքերը չդիմացան ճնշմանը և հարկադրված հեռացան Մեծ Յանգի կոչված բարձունքից: Թուրքերը նկատելով Մեծ Յանգիի բնական հարթության վրա կանգնած ռուս սպաների խմբին, Փոքր Յանգի բարձունքից հեռահար հրետանային կրակն ուղղեցին նրանց վրա: Ռումբերից մեկը պայթեց մարտական գործողությունները անձամբ ղեկավարող Լորիս-Մելիքովի ձիու ոտքերի մոտ: Լորիս-Մելիքովը մի կերպ կարողացավ ցատկել տապալվող ձիու վրայից:

Վրա հասան հրամանատարի թիկնապահները: Լորիս-Մելիքովը բարեբախտաբար չէր վիրավորվել: Հանգստացնելով վախեցած թիկնապահներին նա ընկած տեղից վեր կացավ և շարունակեց ղեկավարել մարտը:

Սեպտեմբերի 20-ի ընթացքում զորամասերին հաջողվեց ամրապնդվել գրաված դիրքերում: Հաջորդ օրվա համար կորպուսի հրամանատարը գլխավոր խնդիրը համարեց դեպի Ալաջայի բարձունքները տանող ճանապարհին գտնվող Հաջի-Վալի կոչվող խոշոր ամրության գրավումը:

Ո՞ւմ հանձնարարել այս դժվար ու պատասխանատու առաջադրանքը: Եվ կորպուսի հրամանատարն ընտրեց իր ազգականին Հովհաննես Լորիս-Մելիքովին: Երեք օրվա համառ մարտերից հետո կորպուսի զորամասերը թուրքերին դուրս մղեցին առաջապահ դիրքերից: Թուրքերը քաշվեցին պաշտպանական գծի խորքը:

Հասավ շրջանցող զորամասը մարտի մեջ մտցնելու ժամանակը: Գեներալ Լազարևը իրեն վստահված զորամասը /23 գումարտակ, հեծյալ էսկադրոններ և 72 թնդանոթ/ մոտ 80 կմ տարածքով այնպես անաղմուկ ու արագ տարավ, որ նույնիսկ թշնամին չկարողացավ նկատել: Ավելին, այդ հսկայական ուժը Լազարևը նախատեսված տեղը հասցրեց երեք օր շուտ:

Ջորքերը պատրաստ էին նոր հարձակում սկսել: 1877 թ. հոկտեմբերի մեկի առավոտյան ժամը 5-ին սկսվեց գրոհը: Ըստ երևույթին Մուխթար փաշան սպասում էր այդ գրոհին և պատասխանեց հրետանային հուժկու գնդակոծությամբ: Չեր լռում նաև գործող կորպուսի հրետանին: Փաշան փորձեց ետ գրավել Մեծ և Փոքր Յանգի բարձունքները և այդ միջոցով ռուսական զորքին զրկել Ալաջայի բարձունքները գրոհելու հեռանկարից:

Լորիս-Մելիքովը կռահել էր Մուխթար փաշայի մտադրությունը և թուրքական զորամասերի համար հնարավորություն ստեղծեց ընդհուպ մոտենալ բարձունքներին: Բարձունքներին մոտենալը Մուխթար փաշան գնահատեց որպես իր զորքերի առաջին հաջողություն: Բայց դա իսկական ծուղակ էր: Ռուսական զորամասերն անսպասելիորեն ակցանի մեջ վերցրին Մեծ ու Փոքր Յանգի բարձունքները գրոհող թուրքերին և գլխովին ջախջախեցին: Երեկոյան Մուխթար փաշայի համար պարզ դարձավ, որ այլևս հնարավորություն չունի ետ գրավել այդ բարձունքները:



Մ.Զ.Արղության-Երկայնաբազուկ



Բ.Հ. Բեյբութով




Հ.Դ. Լազարև



Ա.Հ. Տեր-Գուկասով



Բ.Մ. Շելկովնիկով



Հ.Խ. Ալխազյան

Իսկ հոկտեմբերի 2-ին թուրքական զորամասերը հանկարծակի եկան իրենց թիկունքում հայտնաբերելով գեներալ Լազարևի շրջանցող զորամասը: Մուխթար փաշան շտապ կերպով Լազարևի դեմ ուղարկեց 9 ջոկատ Ռաշիդ փաշայի հրամանատարությամբ: Հարմար դիրք գրավելով, Լազարևը արագորեն մարտի մեջ մտավ և ուժգին գրոհով թշնամուն դուրս մղեց Կարսի ճանապարհին գտնվող վերջին պաշտպանական կետից՝ Օրլոքյան բարձունքից: Լազարևն շարունակեց գրոհը և գրավելով մի քանի կարևոր բարձունքներ, հիմնավորվեց Մուխթար փաշայի բանակի աջ թևի խոր թիկունքում:

Ալաջայի ճակատամարտում կռվող կողմերը ունեին հետևյալ ուժերը: Մուխթար փաշան ուներ 40 հազար զինվոր և 96 թնդանոթ: Լորիս-Մելիքովը մարտի մեջ մտցրեց 55 հազար զինվոր և 200 թնդանոթ:

Հոկտեմբերի 3-ի գիշերը Լորիս-Մելիքովը վերանայեց զորքերի դասավորությունը և համապատասխան հրամաններ ուղարկվեցին զորամասերի հրամանատարներին: Ալաջայի բարձունքներ տանող ճանապարհը բաց էր արդեն: Հասել էր վերջնական ու վճռական գրոհի պահը:

Ռուսական զորքերը տարան փայլուն հաղթանակ, որի մեջ մեծ դեր խաղաց կորպուսի հրամանատար Լորիս-Մելիքովի զորավարական տաղանդը:

Ալաջայի բարձունքում թուրքերի անառիկ ամրություններն, որոնք կառուցվել էին անգլիական ինժեներների ղեկավարությամբ, չարդարացրին Մուխթար փաշայի հույսերը: Նրա բանակը լիովին ջախջախվեց: Ռուսական հաղթական դրոշը բարձրացվեց Ալաջայի բարձունքի վրա: Գերի հանձնվեցին թուրքական յոթ փաշա, 252 սպա և 7000 զինվոր: Ռուսական զորքերի ձեռքն անցան 35 թնդանոթ, 8000 անգլիական նորագույն հրացան: Թուրքական բանակը կորցրեց 20 հազար սպանված ու վիրավոր: Ռուսական զորամասերը կորցրին 56 սպա և 1385 զինվոր:

Մուխթար փաշայի բանակից մի քանի գումարտակ հազիվ կարողացավ փրկվել ու փախչել Կաղզվանի ուղղությամբ, որտեղ էլ նրանց զինաթափեց գեներալ Տեր-Ղուկասովը: Մուխթար փաշան էլ փախավ ու պատսպարվեց Կարսի ամրոցում:

Լորիս-Մելիքովը չէր մոռացել Մուսա Կունդուխովին և հանձնարարել էր իր հետախույզներին բռնել նրան, որն, ըստ տեղեկությունների, գտնվում էր Մուխթար փաշայի կողքին: Բայց չհաջողվեց: Կունդուխովը բոլորից շուտ էր փախել Կարս:

Ալաջայի բարձունքների համար մարտերում տարած հաղթանակը երկար ժամանակ ուսումնասիրվում էր ռազմական դպրոցներում ու ակադեմիաներում: Այդ հաղթանակի կազմակերպիչ Լորիս-Մելիքովը ստացավ «Ալաջայի հերոս» պատվավոր անունը:

Մուսա Կունդուխովը նորից ծողպրում է...

Ալաջայի հաղթանակից հետո Լորիս-Մելիքովն որոշեց թուրքերին զրկել ուժերը համախմբելու հնարավորությունից և հարձակումը զարգացնել Կարսի ուղղությամբ: Լորիս-Մելիքովը գեներալ Օբրուչևի հետ միասին եղավ զորամասերում և Լազարևի, Շելկովնիկովի, Գեյմանի, Հովհաննես Լորիս-Մելիքովի հետ քննարկեցին հետագա գործողությունների ծրագիրը:

Ընդունվեց հետևյալ որոշումը.

1. Հեծելազորային շրջանցող զորասյունը գեներալ-մայոր Լորիս-Մելիքովի հրամանատարությամբ հետապնդելու էր թուրքերին Կարսի ուղղությամբ:

2. Գեներալ Գեյմանի զորաջոկատի հեծելազորը իշխան Շչերբատովի հրամանատարությամբ շրջապատելու էր Փոքր Յանգի մոտ գտնվող թուրքական զորքին և փակելու էր Կարս նահանջելու ճանապարհը:

Համապատասխան հանձնարարականներ ստացան նաև մյուս զորամասերը: Գլխավոր նպատակն էր թույլ չտալ Չիֆթ-թեփեսում կուտակված մեծաքանակ զորքին հեռանալ դեպի Կարս: Այստեղ էր նաև Մուսա Կունդուխովը:

Գեներալ-մայոր Լորիս-Մելիքովը փայլուն կերպով կատարեց առաջադրանքը: Չիֆթ-թեփեսում շրջապատված թուրքական հրամանատարությունը սպիտակ դրոշ բարձրացրեց և բանագնացներ ուղարկեց հանձնվելու պայմանների շուրջ բանակցելու համար:

Բանագնացներին ընդունեց կորպուսի հրամանատարը: Թուրքական գեներալներ Օմեր և Հասան-Քյազիմ փաշաները Լորիս-Մելիքովին հայտնելով իրենց մտադրությունն, ասացին հետևյալը.

- Առավոտյան մեր գլխավոր հրամանատարը հեռացել է մեր մոտից, մենք արեցինք ամեն ինչ մեր դիրքերը պահելու համար, բայց այժմ, երբ բոլոր կողմերից շրջապատված ենք և չենք ուզում զինվորներին անտեղի կործանման մատնել, որպեսզի նրանց պահպանենք պետության համար, ցանկանում ենք հանձնվել որպես ռազմագերի, միայն խնդրում ենք սպաներին թույլ տալ զենք կրել:

Լորիս-Մելիքովը համաձայնվեց թուրքերի խնդրանքին և թելադրեց կապիտուլացիայի պայմանները:

1877 թ. հոկտեմբերի 4-ին գիշերը ստորագրվեց ֆրանսերենով կազմված կապիտուլացիայի ակտն, որը և հաստատեց Լորիս-Մելիքովը:

Լորիս-Մելիքովը հրամայեց գերի հանձնվածների մեջից գտնել Մուսա Կունդուխովին և բերել իր մոտ: Սակայն Կունդուխովը չգտնվեց: Պարզվեց,

որ նա փոխելով հագուստը, օգտվել է մթությունից, մոտեցել է ռուս զինվորներին և նրանց հետ մաքուր ռուսերեն խոսելով, հարցրել է գլխավոր հրամանատարի տեղը, իբր թե կարևոր հաղորդում հանձնելու համար: Ահա այս կերպ Կուտուզովը նորից ճողոպրում է, փրկելով իր կյանքը...

Կուրսին հեռանում է

Ալաջայի փայլուն հաղթանակը յուրովի ընդունեց փոխարքան: Ինչպես միշտ, այս անգամ էլ նա գերի էր իր շրջապատին, որտեղ ավելի կարևոր դիրք էին ստացել ավստրիացի իշխան Ֆերդինանտ Վիտգենշտեյնը և ֆրանսիացի խորամանկ կոմս դե Կուրսին: Հենց նրանց դրդմամբ էլ փոխարքան հանգեց այն կարծիքին, որ արդեն ջախջախված է Մուխթար փաշայի խոշոր բանակը և չարժե այլևս շարունակել պատերազմը:

Կոմս դե Կուրսին փոխարքային համոզում էր, թե Կարսն, առհասարակ, անհնարին է գրավել, քանի որ պաշտպանական կետերը կառուցել են անգլիացի ինժեներները և ամրոցը դարձրել անառիկ:

- Այնպես, որ ձերդ կայսերական մեծություն, - պնդում էր դե Կուրսին, - մենք կկորցնենք մեր ամբողջ բանակը, չենք կարողանա մոտենալ Կարսին և նույնիսկ ոչ մի արգելափակոց չենք գրավի:

Փոխարքան, որը վախկոտ ու նախաձեռնությունից զուրկ անձնավորություն էր, որևէ կասկած չունենալով, որ իր օտարերկրացի խորհրդականները գործում են միայն իրենց երկրների շահերից ելնելով, հավատաց նրանց և որոշեց հոկտեմբերի 6-ին հրավիրել Կովկասյան ռազմաճակատի ռազմական խորհուրդ: Դրան մասնակցելու համար հրավիրվեցին նաև Լորիս-Մելիքովը , Լազարևը և Տեր-Ղուկասովը:

Փոխարքայի կամքով ֆրանսիացի կոմսը ներկայացրեց իր փաստարկները, պնդելով, որ Կարսը անհնար է գրավել, դրա գրոհը կկործանի Կովկասյան բանակը և հարկավոր է անցնել ձմեռային կացարաններ:

Կոմսից հետո Լորիս-Մելիքովն անմիջապես խոսք վերցրեց ու ներկայացրեց Ալաջայի հաղթանակից հետո ստեղծված իրավիճակը, նշելով, որ թուրքական բանակի մնացորդներն ամբողջովին բարոյալքված են ու դարձել անմարտունակ:

- Այնպես որ, - պնդեց կորպուսի հրամանատարը, - Կարսի գրավումը չպետք է հետաձգել և թուրքերին չպետք է շունչ քաշելու հնարավորություն տալ: Ես գտնում եմ, որ Կարսի գրավումը միանգամայն հնարավոր է և դրանից հրաժարվելը վերջին հաշվով նշանակում է ջուրը լցնել մեր տարած բոլոր հաղթանակները, հարգանքով չվերաբերվել մեր կրած զոհերի հիշատակին:

Կոմս դե Կուրսին Լորիս-Մելիքովի տեսակետ ուղղակի անվանեց անխոհեմություն: Սա արդեն բացահայտ լկտիություն էր և Լորիս-Մելիքովն

իրեն հատուկ հեգնանքով ակնարկեց ֆրանսիական քաջարի գեներալների սեղանյան խայտառակությունը, ընդգծելով, որ ռուսական գեներալները թշնամուն հաղթելու իրենց սեփական գիտությունն ունեն:

Լորիս-Մելիքովի ակնարկը կատաղության հասցրեց ֆրանսիական զինվորական կցորդին, որը տեղից վեր ցատկելով, հոխորտանքով դիմեց փոխարքային.

- Եթե իմ խելամիտ խորհուրդներն ուշադրության չեն արժանանում և պարոն Լորիս-Մելիքովին թույլ է տրվում ծաղրել հին ու փորձված զինվորին, ապա հարկադրված կլինեմ հեռանալ Թիֆլիսից:

- Ես, ձերդ կայսերական մեծություն, ես ինքս զորքերը կտանեմ ու կպաշարեմ Կարսը և, հենց որ իրավիճակը թույլ տա, կգրոհեմ, - բորբոքված խոսեց գեներալ Լազարևը:

Ստացվեց այնպես, որ ռազմաճակատում գործող զորահրամանատարներ Լորիս-Մելիքովն ու Լազարևը իրենց վրա են վերցնում ամբողջ պատասխանատվությունը: Փոխարքան արտահայտվեց նրանց առաջարկության օգտին, մանավանդ, ինչպես մտածում էր նա, անհաջողության դեպքում այդ երկուսն էլ կկրեն պատասխանատվության ամբողջ բեռը:

Իսկ դե Կուրսին չստանալով փոխարքայի աջակցությունը, իսկապես, իրականացրեց իր ահաբեկումը: Կարճ ժամանակ անց նա հեռացավ Թիֆլիսից:

Գոհ էր Լորիս-Մելիքովն այսպիսի ելքից: Այս անգամ նա լիակատար հաջողության հասավ նաև գլխավոր հրամանատարի զորակայանում:

Գեյմանի կամայականության հետևանքը

Ալաջայի խայտառակ պարտությունից հետո Կարսում պատսպարված Մուխթար փաշան ամրոցի պաշտպանությունն ամրապնդելու նպատակով լրացուցիչ միջոցներ ձեռնարկեց: Այնուհետև նա իր զորքի մի մասը Սողանլուի լեռնաշղթայի վրայով տարավ դեպի Էրզրում: Նրա հրամանով Էրզրում շտապեց նաև Իսմայիլ փաշան:

Իսկ Լորիս-Մելիքովը մտածում էր Ալաջայի հաղթանակն ամրապնդելու և զարգացնելու մասին: Այդ նպատակով էլ, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, կորպուսի հրամանատարն որոշեց իր ուժերը բաժանել երկու մասի: Դրանցից մեկը /18 հազար զինվոր և 98 թնդանոթ/ հանձնվեց գեներալ Գեյմանին, որին տրվեց առաջադրանք՝ հետապնդել Մուխթար փաշային: Իհարկե, Գեյմանի նշանակումը տարակուսանք առաջացրեց. ինչպե՞ս կարելի էր Ջիվինի անհաջողության համար մեղավոր Գեյմանին վստահել այդպիսի պատասխանատու առաջադրանք: Ըստ երևույթին այդ նշանակմամբ կորպուսի հրամանատարը թույլ տվեց սխալ: Ինչպես հետագայում նշեցին ռազմական պատմաբանները, ճիշտ կլիներ, եթե Լո-

րիս-Մելիքովն անձամբ, մոտիկից ղեկավարեր Գեյմանի ջոկատի գործողությունները:

Երկրորդ ջոկատը Լորիս-Մելիքովը հանձնեց գեներալ Լազարևին, առաջադրանք տալով կազմակերպել Կարսի շրջափակումը: Հոկտեմբերի 9-ին Լազարևը մոտեցավ Կարսին: Կարսն այդ ժամանակ իրենից ներկայացնում էր Թուրքիայի առավել ուժեղ ամրացված ամրոցներից մեկը: Կարսի ամրոցն ուներ չորս խումբ ամրություն վեց մետր բարձրությամբ և 10 մետր լայնությամբ հողապատնեշներով: Ամրություններն իրար հետ կապված էին ուղիղ խրամատներով, որոնց մեջ տեղադրված էին դաշտային մարտկոցները: Ամրությունների ու խրամատների առջև ստեղծվել էին 18 մետր լայնությամբ և 3 մետր խորությամբ փոսեր: Ամրոցային հրետանին կազմված էր 192 ակոսավոր և 111 հարթ փողերով թնդանոթներից: Պաշարման սկզբում Կարսի թուրքական կայազորն ուներ 25 հազար զինվոր: Բերդի պարետն էր Հուսեյին Համի փաշան:

Կարսի պաշարման համար Լորիս-Մելիքովը կենտրոնացրեց 28 հազար զինվոր և 56 թնդանոթ: Իսկ հոկտեմբերի 20-ին Կարս բերել տվեց զանազան տրամաչափի 64 ամրոցային թնդանոթ: Միաժամանակ Լորիս-Մելիքովն իր զորակայանը տեղափոխեց Կարսի տակ:

Իսկ Տեր-Ղուկասովը առաջադրանք ստացավ հետապնդել Իսմայիլ փաշային: Տեր-Ղուկասովն ուներ 32 հազար զինվոր, 146 թնդանոթ:

Լորիս-Մելիքովը նախատեսել էր նաև թույլ չտալ Մուխթար փաշայի և Իսմայիլ փաշայի զորքերին միավորվել, որի համար էլ Գեյմանն ու Տեր-Ղուկասովը պետք է համատեղ գործեին և միասնական ուժերով շարժվեին դեպի էրզրում:

Հաշվի առնելով Տեր-Ղուկասովի առջև դրված բարդ խնդիրը, Լորիս-Մելիքովը ցանկացավ Սողանլուի ջոկատը դնել նրա ենթակայության տակ: Սակայն Կովկասյան բանակի զորակայանում, որը նույնպես տեղափոխվել էր Կարսի տակ, սկսեցին աղմկել և Լորիս-Մելիքովին մեղադրել գործող կորպուսը հայերով լցնելու համար: Բայց փոխարքան, այնուամենայնիվ, հիշում էր գեներալ Օբրուչևի զգուշացումը և որոշեց չխանգարել Լորիս-Մելիքովի մտադրության իրականացմանը:

Բանակի զորակայանում Գեյմանին պաշտպանում էին ու աստվածացնում Արդահանի համար: Բայց, դժբախտաբար, Գեյմանը, որքան նրան գովաբանում էին, այնքան նա դառնում էր անփույթ, կորցնում զգոնությունը, դրսևորում անասելի մեծամտություն: Եվ այս ամենի արդյունքում Գեյմանը բաց թողեց Մուխթար փաշային ու նրան հնարավորություն տվեց միանալ Իսմայիլ փաշային: Արդյունքում Լորիս-Մելիքովը կորցրեց թուրքական փաշաներին առանձին-առանձին ջարդելու հնարավորությունը:

Հոկտեմբերի 22-ին գեներալ-լեյտենանտ Գեյմանն առանց կորպուսի հրամանատարի գիտության, խախտելով հաստատված օպերատիվ

պլանն, ինքնակամ կատարեց հակառակորդի դասավորության հետախուզում: Հոկտեմբերի 23-ին Գեյմանը մարտի բռնվեց Մուխթար փաշայի զորամասերից մեկի հետ և տարավ հաղթանակ, ավար վերցնելով 46 թնդանոթ: Տարվելով այս հաղթանակով, Գեյմանը դադարեցրեց իր արշավը և հինգ օր անգործության մատնվելով Մուխթար փաշային հնարավորություն տվեց կատարել նոր զորահավաք:

Օգտվելով ստեղծված պայմաններից, Մուխթար փաշան ժամանակ չկորցրեց և կարճ ժամանակում կարողացավ ամրապնդել էրզրումի պաշտպանությունը:

Վերջապես Գեյմանը առանց միանալու Տեր-Ղուկասովին, որոշեց միայնակ հարձակվել էրզրումի վրա: Գրոհը ձախողվեց: Այս անհաջողությունից Գեյմանն իրեն այնպես էր կորցրել, որ չկարողացավ ի մի բերել իր բզկտված ջոկատը: Միայն շտապ կերպով օգնության հասած Տեր-Ղուկասովին հաջողվեց նրա ջոկատի մեկուսի խմբերին հավաքել ու անվնաս դուրս բերել մարտադաշտից:

Գեյմանի այս անմիտ քաջագործությունը թանկ նստեց գործող կորպուսի վրա: Մինչդեռ, եթե նա կամայականություն չաներ և միանար Տեր-Ղուկասովին, ապա հաջողությամբ կլուծվեր էրզրումի խնդիրը: Ինչևէ, ձեռքից բաց թողնվեցին թե ժամանակը և, թե նպաստավոր պայմանները...

«Մենք էլ մեր Ասլածն ունենք...»

Լորիս-Մելիքովը լի էր վճռականությամբ: Նա համոզված էր, որ կգրավի Կարսը: Բայց գիտեր նաև, որ կմղվեն համառ մարտեր, երկու կողմից կլինեն շատ զոհեր:

Կարսում տիրող տագնապալի վիճակը հայտնի էր Լորիս-Մելիքովին: Թուրք զինվորները հրաժարվում էին ծառայությունից: Բնակչությունն էլ նույնպես դեմ էր հրամանատարությանը: Բնակիչները հաճախ հավաքվում էին պարետի տան մոտ և խնդրում հանձնել ամրոցը, խուսափել անտեղի զոհերից:

Իսկ Հուսեյին փաշան բնակիչներին հուսադրում էր, թէ շուտով Բաթումից ու Տրապիզոնից կհասնեն օգնական ուժեր և կքշեն ռուսներին: Բայց անցնում էին օրեր, օգնական ուժերը չէին երևում: Կարսում գնալով ուժեղանում էր ընդհանուր բարոյալքումը:

Ահա այսպիսի պայմաններում կորպուսի հրամանատարն որոշեց վերջնագիր ներկայացնել Կարսի պարետին, առաջարկելով հանձնվել առանց մարտի և այդ կերպ նվազեցնել քաղաքում գտնվող զորքի ու խաղաղ բնակչության աղետը:

Լորիս-Մելիքովի նամակը հոկտեմբերի 12-ին Կարս տարավ Ալեքսանդրապոլի բնակիչ Չիթողցյանը:

Վերջնագիրը ստանալուց 3 ժամ անց, Կարսի պարետ Հուսեյին Համի փաշան իր պատվիրակների միջոցով հայտնեց, որ վերջնագրի պատասխանը կտրվի հաջորդ օրը: Հոկտեմբերի 13-ին Լորիս-Մելիքովին ներկայացան Կարսի պարետի ներկայացուցիչներ ամրոցի հրետանու պետ Հուսեյին բեյը և թուրքական գլխավոր շտաբի սպա Ֆեխիմ-էֆենդին, բերելով փաշայի նամակը: Այդ նամակում Հուսեյին Համի փաշան խնդրում էր բացատրել, թե ինչ է նշանակում «կնվազեցվի աղետը» արտահայտությունը, քանի որ առանց դրա պարետը հնարավոր չի համարում հարցը լուծել: Միայն այդ բացատրությունը ստանալուց հետո փաշան հնարավոր էր համարում տեսակցել «նորին մեծության ռուսական միապետի պատվարժան գեներալ-թիկնապահ Լորիս-Մելիքովի հետ, և խնդրում էր պարզել թե «ինչ հանգամանքներում և ինչպիսի կարգավիճակով կարող է տեղի ունենալ այդ տեսակցությունը»:

Ծանոթանալով Կարսի պարետի նամակին, Լորիս-Մելիքովը շատ հանգիստ ձայնով ասաց փաշայի լրաբերին.

- Ես դժվարանում եմ պատկերացնել, թե պատվարժան Հուսեյին փաշան ինչպես չի կանխատեսում սովը, ցուրտը, հիվանդությունները, որոնք անխուսափելի են պաշարված քաղաքում:

Լրաբերը ընդգծված պատասխանեց, որ պարետը գիտե այդ դժվարությունների մասին, բայց նա գտնում է, որ Կարսը երկար ժամանակ ապահոված է բոլոր անհրաժեշտ միջոցներով:

Լորիս-Մելիքովին զարմացրեց լրաբերի պատասխանը, ուստի հարկ համարեց հիշեցնել, թե Ղրիմի պատերազմի ընթացքում իր Կարսի պարետ եղած ժամանակ, քաղաքը, որը պաշարված չէր, նույնպես ծմեռվա պայմաններում ծանր կացության մեջ էր գտնվում:

- Իսկ հիմա առջևում ծմեռ է և Կարսն էլ պաշարված վիճակում, դուք մտածո՞ւմ եք այդ մասին, - հարցրեց Լորիս-Մելիքովը և շարունակեց, - հայտնեք արժանապատիվ փաշային, որ ռուսական հրամանատարությունը պնդում է իր պահանջը և առաջարկում է անտեղի զոհեր տալուց խուսափելու, կայազորի զինվորների ու քաղաքի բնակչության կյանքի անվտանգության շահերից ելնելով, զենքը վայր դնել ու խաղաղությամբ հանձնել ամրոցը:

Ամբողջ խոսակցության ժամանակ Լորիս-Մելիքովն երբեք չակնարկեց Կարսը գրոհով վերցնելու նպատակը, այլ միշտ շեշտում էր բնակչության ու զինվորների անվտանգության մասին:

Հոկտեմբերի 14-ին Կարսի պարետը ուղարկեց երկրորդ նամակը: «Կարսը հանձնելու բոլոր պայմանները քննարկելիս, - հայտնում էր փաշան, - ամբողջ հրամանատարությունը միակամ որոշել է դիմադրել, մինչև վերջ ապավինվելով ամենազոր ալահի և մարգարեի հոգևոր օգնության վրա»:

Կարդալով Կարսի պարետի նամակը, Լորիս-Մելիքովը բարձրաձայն թուրքերեն լեզվով ասաց, դիմելով փաշայի լրաբերին.

- Դե ինչ, հայտնեք պատվարժան փաշային, որ մենք էլ մեր աստվածն ունենք և գուցե նա էլ մեզ օգնության գա:

«Ինչ շեզ մոտ է քերել հորս երախտագիտությունը...»

Երկու անգամ Լորիս-Մելիքովն ընդունեց Կարսի պարետի բարձրաստիճան լրաբերներին: Գրոհի մասին Լորիս-Մելիքովի կողմից որևէ ակնարկ չանելուց նրանք եզրակացրին, որ ռուսները պատրաստվում են երկար ժամանակով պաշարված պահել Կարսը: Սրանից էլ Կարսի պարետը յուրովի համոզվեց, թե ռուսները գրոհի համար բավարար ուժեր չունեն: Ուստի հարկավոր է դիմանալ պաշարմանը, մինչև որ կստանան օժանդակ ուժեր, որոնք կշրջապատեն ռուսական զորամասերին, նրանց կհարվածեն, թե դրսից և թե քաղաքից ու հաղթանակը ապահոված կլինի:

Գուցե և Կարսի պարետի ծրագիրը հիմնավոր էր և կհասցներ նրանելի նպատակին, եթե նրա դեմ կանգնած չլիներ Լորիս-Մելիքովի նման տաղանդավոր զորահրամանատար:

Լորիս-Մելիքովի մշակած օպերոտիվ պլանը ոչ թե նախատեսում էր Կարսը երկար ժամանակ պահել շրջապատման մեջ, այլ գրոհ, հուժկու գրոհ:

Մինչ Կարսի պարետի ներկայացուցիչները գնում ու գալիս էին, այդ ընթացքում Լորիս-Մելիքովը հրահանգ տվեց բոլոր զորամասերի պետերին՝ անձամբ ծանոթանալ իրենց դիրքերի առջև գտնվող տարածքին, բոլոր ամրությունները տանող մինչև վերջին կածանը հետախուզել: Այս հրահանգի կատարման մասին զեկույցները լսելուց հետո, հոկտեմբերի 12-ին Լորիս-Մելիքովը տվեց հրաման, որի համաձայն շրջապատմանը մասնակցող բոլոր ջոկատների պետերին հանձնարարվում էր գիշերը վրա հասնելուն պես, հետիոտն ու հեծյալ խմբերի միջոցով կատարել հետևյալը.

1. Հետախուզել տեղանքը:
2. Բռնել ամրոց մտնող և այնտեղից դուրս եկող բոլոր անցորդներին:
3. Որքան հնարավոր է մոտենալ ամրություններին:
4. Հրացանային համազարկերով տագնապ առաջացնել Կարսի կայազորում:

Գիշերվա կեսին հետախույզները բռնեցին ամրոցից դուրս եկող մի թուրք սպայի: Այդ սպան խնդրեց իրեն անմիջապես ներկայացնել կորպուսի հրամանատար Լորիս-Մելիքովին: Լորիս-Մելիքովի մոտ պարզվեց, որ թուրք սպան իր հետ բերել էր ամրությունների քարտեզը, թաքստոցների տեղադրման սխեման: Սպան հայտնեց նաև թուրքական հրամանատարության մտադրությունների մասին և խոստացավ հետագայում էլ բերել կարևոր տեղեկություններ:

Թուրք սպային հարցաքննելուց և նրա բերած քարտեզն ու սխեման ուշադիր նայելուց հետո, Լորիս-Մելիքովը նրան հարցրեց.

- Ձեզ ի՞նչն է ստիպել կատարել այս քայլը, չէ՞ որ դա դավաճանություն է:

- Ոչ, ոչ, - պատասխանեց սպան, - դա դավաճանություն չէ: Ինձ ձեզ մոտ է բերել ձեր նկատմամբ հորս ունեցած երախտագիտությունը:

Լորիս-Մելիքովի պահանջով թուրք սպան պատմեց հետևյալը. 1855 թ., երբ Լորիս-Մելիքովը Կարսի պարետն էր, անգնահատելի օգնություն է ցույց տվել իր հորը, փրկելով նրան ու ընտանիքի բոլոր անդամներին անխուսափելի մահից: Այժմ, երբ ծերունի հայրը լսել է, որ Կարսը շրջապատած ռուսական զորքերի հրամանատարն իրենց փրկիչն ու բարերարն է, հանձնարարել է որդուն թողնել թուրքական ծառայությունը և անցնել Լորիս-Մելիքովի տրամադրության տակ:

- Ահա և հորս հանձնարարությունը կատարեցի, մնացածը դուք որոշեք, - ավարտեց իր պատմությունը թուրք սպան:

Այդ սպան, հետագայում էլ իր կյանքը վտանգի ենթարկելով շատ անգամ Լորիս-Մելիքովին էր հասցնում կարևոր տեղեկություններ: Մի անգամ էլ նա կորպուսի հրամանատարին տեղեկացրեց, որ Հուսեյին փաշան անչափ վստահ է, որ ռուսները չեն հարձակվի Կարսի վրա, իսկ եթե նրանց խելքին փչի դիմել ինքնասպանության, ապա անկասկած կփորձեն գրոհել հյուսիս-արևմտյան ամրություններն, որտեղ էլ կուտակել են իրենց հիմնական ուժերը...

«Պետք է անմիջապես պատրաստվել գրոհի»

Թուրք սպայի բերած վերջին տեղեկությունը հաստատում էր, որ կորպուսի հրամանատարի մշակած օպերատիվ պլանը կենսագործելու պահը հասել է: Լորիս-Մելիքովի հրամանով Կարսի ամրոցի հյուսիս-արևմտյան ամրությունների առջև ռուսական զորամասերը ցուցադրական կուտակումներ էին անում, իբր թե պատրաստվում են այդ ուղղությամբ հասցնել գլխավոր հարվածը:

Իհարկե, Լորիս-Մելիքովը նաև զգուշանում էր: Չնայած թուրք սպան արդեն վայելում էր նրա վստահությունը, բայց հրամայեց ստուգել նրա բերած տեղեկությունները: Իսկապես, պարզվեց, որ Հուսեյին փաշան հավատացել է և իր գլխավոր ուժերը կենտրոնացրել է հյուսիս-արևմտյան ամրությունների վրա:

Ստացված տեղեկությունները վերլուծելուց հետո Լորիս-Մելիքովը հրավիրված ռազմական խորհրդում կայացրեց վերջնական որոշում՝ գլխավոր հարվածը հասցնել Կարսի հարավ-արևելյան ամրությունների ուղղությամբ, որտեղից թուրքերը չէին սպասում ռուսների հարձակմանը:

Հոկտեմբերի 13-14-ի գիշերը խստագույն զգուշության պայմաններում

հարավ-արևելյան ամրությունների կողմ բերվեց պաշարողական հրետանին, որը և հոկտեմբերի 15-ի վաղ առավոտյան սկսեց ռմբակոծել Կարսը Կանլի և Հաֆիզի ամրությունների ուղղությամբ, չորս կիլոմետր հեռավորությունից:

Հուսեյին փաշան ուղարկեց 6 գումարտակ և երկու հեծյալ հարյուրակ, հրամայելով զավթել ռուսական պաշարողական մարտկոցները: Սակայն նրանք հանդիպեցին Իմերեթյան գնդի Հակոբ Խոսրոֆի Ալխազյանի հրամանատարությամբ գործող գումարտակի ուժեղ գրոհին և փախուստի դիմեցին: Հուսեյին փաշան Կանլի ամրության կողմից ձեռնարկեց նոր գրոհ: Բայց այս անգամ էլ տալով մեծ զոհեր, թուրքերը փախուստի դիմեցին: Ալխազյանը չբավարարվեց դրանով: Գնդապետ Ֆադեևի հետ միասին գիշերը կազմակերպեցին ուժեղ գրոհ, մտան ամրություն և բռնվեցին սվինամարտի ու գրավեցին թուրքական ամրություններից մեկը, այնտեղից փախուստի մատնելով թուրք զինվորներին: Գրավելով թուրքական թնդանոթները, Ալխազյանն ու Ֆադեևը նույն գիշեր հեռացան գրաված ամրությունից:

Առավոտյան պարզվեց, որ Ալխազյանի ու Ֆադեևի գրաված ամրությունը անգլիացիների կողմից կառուցված անառիկ «Հաֆիզ փաշա» կոչված ամրությունն է եղել: Իհարկե, մեծ էր քաջարի հրամանատարների ափսոսանքը: Իսկ զայրացած Լազարևը խոսքեր չէր գտնում իր վրդովմունքը հայտնելու համար: Նա այնքան բուռն էր զայրացած, որ չնկատեց էլ, թե ինչպես էր Հակոբ Ալխազյանին «նախշում» հայերեն լեզվով: Լազարևը կատարվածի մասին տեղեկացրեց Լորիս-Մելիքովին: Իհարկե, նա էլ զայրացավ, բայց հանկարծ ժպտալով ասաց Լազարևին.

- Դե, հոգյակս, Իվան Դավիդովիչ, ինչպես ասում են՝ չկա չարիք առանց բարիքի:

- Այդ ի՞նչ բարիքի մասին է խոսքը, երբ ձեռքից բաց է թողնվել թուրքական շատ կարևոր ամրությունը, - չէր հանդարտվում Լազարևը:

- Ալխազյանի ու Ֆադեևի քաջությունն, ինչպես նաև նրանց անհոգությունը մեզ մատուցում են անգնահատելի ծառայություն: Մերոնք գիշերն են կազմակերպել գրոհը և մտել «Հաֆիզ-փաշա» ամրություն: Այնպե՞ս չէ: Կռահո՞ւմ ես Իվան Դավիդովիչ:

Լազարևը գլխի շարժումով ցույց տվեց, որ հասկանում է հրամանատարի միտքը:

- Ուրեմն,-շարունակեց Լորիս-Մելիքովը,-մեզ հարկավոր է Կարսի ամրությունների վրա գրոհել գիշերը և այն էլ հանկարծակի: Եթե առավել ուժեղ ամրության կայազորն է դիմում փախուստի, ապա մյուսների վիճակը նույնպես նախանձելի չի լինի:

Լազարևը համաձայնվեց Լորիս-Մելիքովի հետ և նրան զեկուցեց Կարսից ստացված նոր տեղեկությունների մասին.

- Պարզվում է, - ասաց նա, - որ քաղաքը բավականաչափ ապահոված է պարենով ու անասնակերով և կարող է դիմանալ մինչև գարուն: Թուրքերն ունեն անհրաժեշտ քանակությամբ զենք ու զինամթերք: Նրանց թնդանոթների թիվը հասնում է 303-ի:

- Իսկ մենք ի՞նչ ունենք, - հարցրեց Լորիս-Մելիքովը,- մենք չենք կարող, պարզապես իրավունք չունենք վրա հասնող ձմռանը մեր զինվորներին պահել վրաններում, առանց տաք հագուստի ու թաղիքե ոտնամանների և մշտապես անհանգստանանք պարենի հայթայթման մասին:

Լորիս-Մելիքովը մոտեցավ քատեզին, ուշադրությամբ նորից նայեց հետախուզության հաղորդած թարմ տվյալների հիման վրա կատարված նշումներին և շարունակեց.

- Այսպիսի պայմաններում զորքին պահելը հղի է վտանգներով: Բայց և միաժամանակ, Իվան Դավիդովիչ, անմտություն կլինի նաև հանել պաշարումը: Երկրորդ անգամ չենք կարողանա բթացնել թուրքերի զգոնությունը:

- Համաձայն եմ, - ասաց Լազարևը, - մնում է ստանալ գլխավոր հրամանատարի համաձայնությունը:

- Այո, բայց Միխայիլ Նիկոլաևիչը չի համաձայնվում Կարսը գրոհելու մեր պլանի հետ:

- Նա նույնիսկ վախենում է հաշվի առնել, որ Կարսի բնակիչները պարետից պահանջում են ամրոցը հանձնել առանց դիմադրության, - ասաց Լազարևը:

Լորիս-Մելիքովը քիչ մտածեց ու հետո վճռականորեն ասաց.

- Բոլոր դեպքերում մեզ հարկավոր չէ սպասել գլխավոր հրամանատարի համաձայնությանը: Պետք է անմիջապես պատրաստվել գրոհի, այլապես կկորցնենք նախաձեռնությունը: Թող պատմությունը մեզ դատի...

«Տուսեյին փաշան համարձակ է, բայց հիմար...»

Լինելով բնավորությամբ մեղմ ու արդարամիտ, Լորիս-Մելիքովը միշտ ձգտում էր պրոբլեմները լուծել խաղաղությամբ, առանց ավելորդ քաշքշուկի: Այդպես էր նա վարվում, առհասարակ, քաղաքացիական կյանքում: Բայց պատերազմի պայմաններում, այն էլ հակառակորդի զինվորների կամ խաղաղ բնակչության նկատմամբ այդպիսի վերաբերմունքը շատերի համար անհասկանալի էր:

Եվ Լորիս-Մելիքովն այսպես մտածողներին բացատրում էր, որ անտեղի զոհեր տալը, թե յուրայիններից և թե հակառակորդից, ընդունելի չէ ու, եթե հնարավորության կա թեկուզ և շատ աննշան, պետք օգտագործել դրանից խուսափելու համար:

Այդպիսի խոսակցությունները հատկապես տեղի էին ունենում Կարսի գրոհի նախօրյակին:

- Բայց չէ՞ որ, - հարցնում էին շտաբայինները, - Միխայիլ Տարիելովիչ, այդ Հուսեյին փաշան շատ համառ է և չի ընդունում մեր վերջնագիրը:

- Դուք ճիշտ եք: Այդ Հուսեյին փաշան համարձակ է, բայց հիմար: Այնուամենայնիվ, խիղճս հանգիստ լինելու համար, պետք է մի անգամ էլ նրան առաջարկել առանց դիմադրության հանձնվել, - եզրափակեց կորպուսի հրամանատարը:

1877 թ. հոկտեմբերի 26-ին Լորիս-Մելիքովը մի նոր նամակ ուղարկեց Հուսեյին փաշային՝ առաջարկելով հրաժարվել արյունահեղությունից և առանց դիմադրության հանձնել քաղաքն ու ամրոցը: Այս անգամ Հուսեյին փաշան նույնիսկ հարկ չհամարեց պատասխանել:

- Դե ինչ, - ասաց Լորիս-Մելիքովը, փակելով կորպուսի ռազմական խորհուրդը, - մենք արեցինք ամեն ինչ արյունահեղությունից խուսափելու համար: Զստացվեց: Մեղքը ընկնում է Հուսեյին փաշայի վրա:

Լորիս-Մելիքովի արձակած հրամանը շատ հստակ էր: Կարսը վերջնականապես գրոհելու նախապատրաստման համար տրվեց 4-5 օր, որը բավարար էր: Գրոհի վերջնական ժամկետ հաստատվեց 1877 թ. նոյեմբերի 1-ի լույս 2-ի գիշերը: Նախօրյակին Լորիս-Մելիքովը կարողացել էր համոզել վերջնականապես նաև գլխավոր հրամանատարին, որը համաձայնվել էր գրոհի ժամկետի հետ:

Իհարկե, ռազմական խորհրդին ներկա գտնվողներից նրանք, ովքեր գիտեին փոխարքայի վերաբերմունքի մասին, զարմացան, որ նա համաձայնվել էր Լորիս-Մելիքովի առաջարկությանը: Միայն Լազարևին էր հայտնի եղելությունը: Նրանք երկուսով էին հանդիպել գլխավոր հրամանատարին: Միխայիլ Նիկոլաևիչը համաձայնվել էր միայն այն բանից հետո, երբ Լորիս-Մելիքովը հարցը դրել էր կտրուկ՝ կամ գրոհով գրավել Կարսը կամ ինքը հրաժարական կտա կորպուսի հրամանատարությունից: Փոխարքան արագորեն հաշվարկել էր, թե Լորիս-Մելիքովի հրաժարականը ինչպիսի սկանդալ կառաջացնի և... համաձայնվել էր, պատասխանատվությունը թողնելով կորպուսի հրամանատարի վրա:

«Նրա հայհոյանքը ռուսավարի է ստացվում»

Գեներալ Լազարևն, որի վրա էր դրված Կարսը գրոհող զորամասի հրամանատարությունը, անսովոր եռանդով հետևում էր գրոհի նախապատրաստմանը, անձամբ լինում էր ստորաբաժանումներում, ստուգում ամեն ինչ:

- Կարսի ամրոցն այնպիսի ընկույզ է, որը ջարդելու համար ոչ մի մանրուք ու երկրորդական հարց չկա, - կրկնում էր Լազարևն, ամեն տեղ լինելով:

Ամեն ինչ պատրաստ էր նշանակված ժամին գրոհը սկսելու համար: Սակայն, հոկտեմբերի 1-ի առավոտյան անձրևն աստիճանաբար հորդա-

նալով, ճանապարհները դարձրեց անանցանելի: Շուտով սկսվեց ուժգին քամի: Քայլելը դարձավ անհնար: Զինվորները, ծիերը սայթակում էին ու վայր ընկնում:

Լազարևն, որն այնպես անհամբեր սպասում էր գրոհի սկսմանն, իր տեղը չէր գտնում: Տարօրինակ էր դարձել Լազարևը: Հայաստանում չէր մեծացել և շատ վատ էր խոսում հայերեն լեզվով: Իսկ հիմա, երբ տեղատարափ անձրևը, ծույնախառն սառը քամին նրան հանել էին հուսից, զինվորների ու սպաների հետ խոսում էր նրանց համար ինչ որ անծանոթ լեզվով: Միայն հայ զինվորներն էին հասկանում և հազիվ էին զսպում իրենց ծիծաղը: Երբ ռուս զինվորները հետաքրքրվեցին հայերից, թե ինչ է ասում գեներալը, նրանք ծիծաղելով ասում էին՝ «հայերեն է հայհոյում»:

- Բայց ինչո՞ւ եք ծիծաղում, ի՞նչ կա ծիծաղելի հայհոյանքի մեջ, - զարմանում էին ռուս զինվորները:

Եվ հայ զինվորները մի կերպ բացատրում էին, թե ծիծաղում են գեներալի առոգանության համար, ասելով.

- Գեներալի հայհոյանքը ռուսավարի է ստացվում:

Եղանակը չէր հանդարտվում: Երեկոյան այն ավելի վատացավ: Պարզ էր դառնում, որ այդպիսի պայմաններում նշանակված գրոհը սկսելն անմտություն է: Եվ գեներալ Լազարևը կորպուսի հրամանատարին առաջարկեց հետաձգել գրոհը, ինչի հետ էլ համաձայնվեց Լորիս-Մելիքովը:

Աննախադեպ ռազմական գործողություն

Վերջապես եղանակը կայունացավ: Սկսված ցրտից սառեց գետինը: Ճանապարհները դարձան անցանելի: Հարկավոր էր շտապել, ժամանակ չկորցնել, մանավանդ, որ զորամասերը դեռ նոյեմբերի 1-ին էին պատրաստ գրոհի:

Ռազմական խորհրդում որոշվեց հարձակումը սկսել ոչ թե գիշերը, այլ երեկոյան ժամը 8-ին: Հետախուզությունը պարզել էր, որ ամրություններում գտնվող թուրք զինվորները երեկոյան ժամը վեցին հեռանում են սնվելու, հանգստի ու զինամթերք ստանալու համար: Ամրություններում այդ ընթացքում մնում էին միայն ժամապահներն, իսկ զինվորներն ետ էին վերադառնում գիշերվա ժամը մեկին:

Գրոհը սկսելուց մեկ ժամ առաջ, երեկոյան ժամը 7-ին Լորիս-Մելիքովն եկավ Ղարաջվերան գյուղ, որտեղ տեղավորված էր գեներալ-մայոր Գրաբբեյի զորաջոկատը: Շարք կանգնած զինվորները «ուռա» բացականչությամբ դիմավորեցին իրենց սիրելի զորահրամանատարին: Կորպուսի հրամանատարն ընդունեց Գրաբբեյի զեկույցը և հետո դիմելով զինվորներին ասաց.

- Եղբայրներ, ես հավատում եմ ձեզ և համոզված եմ, որ Աստծո զորությամբ կհաղթենք...

Գրոհը ղեկավարելու համար կորպուսի հրամանատարը շտապեց «Կանլա» ամրությունից մոտ մեկ կիլոմետր հեռավորության վրա գտնվող դիտակետ: 1877 թ. նոյեմբերի 5-ին երեկոյան ժամը 8-ին Լորիս-Մելիքովի հրամանով կորպուսի զորամասերը սկսեցին Կարսի գրոհը:

Առաջինը գրոհի նետվեցին Գրաբբեյի մարտիկները: Սվինամարտով նրանք մտան «Կանլա» և «Սուվարի» ամրությունները կապող խրամատներ: Գրաբբեն, որն անձամբ էր ղեկավարում սվինամարտը, մահացու վիրավորվեց: Մարտավայրին մոտ գտնվող Լորիս-Մելիքովին անմիջապես հայտնեցին սիրելի հրամանատար Գրաբբեյի զոհվելու մասին: Լորիս-Մելիքովն արագորեն որոշեց անմիջապես Գրաբբեյին փոխարինող ուղարկել, այլապես գրոհը կարող էր խափանվել: Գրաբբեյի փոխարեն ուղարկվեց գեներալ Ճավճավածեն, որի վրա դրվեց նաև Կարս-չայից մինչև «Ֆեվզի փաշա» գծի հրամանատարությունը:

- Իվան Զախարովիչ, ես քեզ հավատում եմ, - ասաց կորպուսի հրամանատարը, Ճավճավածեին հաջողություն մաղթելով:

Երեկոյան ժամը 11-ին Հակոբ Ալխազյանին հաջողվեց գրավել «Հաֆիզ» ամրությունը, իսկ գեներալ Շատիլովը՝ «Արաբ» ամրությունը: Գնդապետ Ֆադեևը մտավ «Քարադաղ» ամրոց, որը խրամատներով կապված էր «Արաբ» ամրության հետ: Փոխգնդապետ Մելիքովի մարտիկները վերցրին «Սուվարի» ամրությունը և անցնելով Կարս-չայի ձախ ափ, ուղղվեցին «Չիմ» ամրություն: Սակայն մարտի ժամանակ Մելիքովը զոհվեց և նրա մարտիկները ետ վերադարձան: Գեներալ Կոմարովին վիճակվեց ծանր մարտ մղել «Թոխմաս» ամրության համար: Այստեղ թուրքերը ցույց տվեցին կատաղի դիմադրություն: Կոմարովին օգնելու համար կորպուսի հրամանատարն ուղարկեց գեներալ Դենի պահեստային զորաջոկատը:

Սակայն այստեղ գործին խառնվեց գլխավոր հրամանատարը, որը վախենալով Դենի զորաջոկատը օգտագործել, զորակայանում գտնվող իր շտաբի պետ Պավլովին շտապ ուղարկեց, որպեսզի կասեցնի գեներալ Դենի արշավը: Արդյունքում գեներալ Կոմարովն օգնություն չստանալով, տվեց անտեղի զոհեր: Սա, իմիջիայլոց, առաջին դեպքը չէր, երբ գլխավոր հրամանատարն անմտորեն միջամտում էր Լորիս-Մելիքովի հրամանների կատարմանն, ինչը և ունենում էր բացասական հետևանքներ...

Գնդապետ Չերեմիսովն ընդհուպ մոտեցավ «Տախ-Թեփես» ամրությանն, որի կարևորությունը հարկադրեց Հուսեյին փաշային օգնության ուղարկել իր ունեցած պահեստային զորամասը:

Առավոտյան ժամը 7-ին ռուսական զորաջոկատները գեներալ Լազարևի գլխավորությամբ մտան Կարս: Կարսի պարետ Հուսեյին փաշան այլևս անելիք չուներ: Իր կայազորը թողնելով հաղթողների ողորմածությանը, Հուսեյին փաշան մի քանի թիկնապահներով դիմեց խայտառակ փախուստի: Գերի հանձնվեց 18 հազար թուրքական զինվոր ու սպա:

Թուրքական կայազորը կորցրեց 7 հազար սպանված: Ռուսական զորամասերի ձեռքն անցան ամբողջ հրետանին /303 թնդանոթ/, զենքի ու զինամթերքի հսկայական պահեստները: Գրոհի ընթացքում ռուսական զորքերը ունեցան 2300 սպանված ու վիրավոր:

Առաջին պատասխանը

1877 թ. նոյեմբերի 6-ին, առավոտյան ժ. 10-ին Լորիս-Մելիքովը ժամանեց Կարս: Երբ մոտենում էր քաղաքին, նրան դիմավորեցին բնակիչների և հոգևորականության պատվիրակները: Նրանց մոտ կանգնած էր նաև գերի հանձնված Կարսի հրետանու հրամանատար Հուսեյին բեյը: Նկատելով նրան, Լորիս-Մելիքովը մոտեցավ ու ասաց.

- Ավելի լավ չէ՞ր Կարսը հանձնել և խուսափել արյունահեղությունից, քան դառնալ այս տխուր պատկերի վկան:

Այս խոսքերն ասելիս Լորիս-Մելիքովը ձեռքով ցույց տվեց դաշտի վրա ընկած բազմաթիվ դիակները, ջարդված զենքերը:

Հուսեյին բեյը, խոնհարվելով Լորիս-Մելիքովի առջև, տվեց հետևյալ պատասխանը.

- Այնպիսի ամրոց, ինչպիսին Կարսն է, չէր կարելի առանց մարտի հանձնել:

Թուրք գերի հրամանատարը ճիշտ էր: Նա նկատի ուներ Կարսի կարևորությունը թուրքական տերության համար: Լորիս-Մելիքովն էլ շատ լավ էր հասկանում, թե Կարսն ինչ կարևորություն ուներ թե Ռուսաստանի և թե Հայաստանի համար:

Նկատի ունենալով թուրքական հրամանատարի վերոհիշյալ պատասխանը, հարկ եմ համարում ընթերցողի ուշադրությանը ներկայացնել 1918 թ. գարնանը տեղի ունեցած ողբերգական փաստերից մեկը:

1918 թ. ապրիլին թուրքական զորքերը մոտեցան Կարսին: Ապրիլի 19-ին Հայոց ազգային խորհրդի անդամները և Տրապիզոնում թուրքերի հետ բանակցությունների մասնակիցները նիստ գումարեցին Ալեքսանդրապոլում: Բոլորն էլ համակված էին պարտվողական տրամադրությամբ: Նրանց նույնիսկ չսթափեցրեց Կարսի պարետ Միշա Արզումանյանի առաջարկությունը. «Կարսը հեռու չէ այս տեղից... եկեք գնանք Կարս... տեսնենք նրա ամրությունները, նրա զինվածության չափը, եթե այս բոլորը տեսնելուց հետո դուք կասեք, թե կարելի է այդպիսի մի բերդ թշնամուն տալ առանց պատերազմի, այդ ժամանակ հարցը միանգամայն լուծված կլինի»:

Սակայն Հայոց ազգային խորհրդի անդամներից ոչ ոք ցանկություն չհայտնեց Կարս մեկնել: Պարզվում էր, որ Կարսի ճակատագիրն արդեն որոշված էր և ամբողջ դժբախտությունն էլ այն էր, որ դրանից անտեղյակ էին դիրքերում կռվող հայ զինվորները:

Կարսի վրա շարժվող թուրքական զորքը ուներ 12-13 հազար զինվոր, 36 թնդանոթ և 108 գնդացիր: Կարսը պաշտպանող հայկական ուժերը ունեին 7 հազար զինվոր, 162 թնդանոթ և 70 գնդացիր: Կարսի ամրոցի ինժեներական կառույցները հուսալի վիճակումն էին, կար մի քանի ամսվա պարեն: Ամրոցն ապահոված էր անհրաժեշտ սանիտարական միջոցներով, հսկայական քանակությամբ ռազմամթերքով: Այդ ունեցած միջոցները բավական էին ոչ միայն Կարսը չհանձնելու, այլև թուրքական բանակին մեծ վնաս պատճառելու և կասեցնելու համար:

1918 թ. ապրիլի 23-ին անդրկովկասյան կառավարության զորքերի հրամանատար Օդիշելիձեն հեռագրով գեներալ Նազարբեկովից պահանջեց դադարեցնել ռազմական գործողությունները: Թուրքական զորքերի հրամանատար Վեհիբ փաշան պահանջեց հանձնել Կարսը: Ապրիլի 24-ին գիշերվա ժամը 12-ին Նազարբեկովը հրաման ստացավ Կարսը թուրքերին հանձնելու մասին:

Ապրիլի 25-ին առանց որևէ կրակոցի թուրքերին հանձնվեց Կարսը: Այս մասին հայտնի դաշնակցական գործիչ բժիշկ Հովակիմ Մելիքյանը գրել է.

«Կարսի անըմբռնելի անկումը միանգամայն յուսալքեց և խուճապի մատնեց հայ բանակը: Ամբողջ ճանապարհին հրամանատարությանը չհաջողվեց գոնէ մի գումարտակ կազմել, գաղթն ապահովելու համար: Զինուորները սպառազինված քայլում էին, առանց աչք դարձնելու և լսելու տրուած հրամաններին»:

Իբրև բողոք Կարսը թուրքերին հանձնելու դեմ, Չխենկելու կառավարության մեջ մտած դաշնակցական երկու մինիստրները դուրս եկան նրա կազմից: Բայց երկու օրից նրանք ետ վերցրին իրենց հրաժարականը:

Վրաց մենշևիկները Կարսը Հայոց ազգային խորհրդի ձեռքով հանձնեցին թուրքերին, փոխարենը թուրքերը հեռացան Քութայիսի և Թիֆլիսի նահանգներից:

Իսկ դաշնակցության անդամ երկու մինիստրներն էլ վերադարձան կառավարության մեջ, որովհետև, Ա. Խատիսյանի վկայությամբ «ամէն բանէ վեր կը դասէինք Անդրկովկասի ժողովուրդներու համերաշխութեան գաղափարն ու անհրաժեշտութիւնը»:

«Ձեր հրամանատարին ուղա՞»

Նոյեմբերի 7-ին Կովկասի փոխարքա, գլխավոր հրամանատար Միխայիլ Նիկոլաևիչը ժամանեց Կարս: Քաղաքի դարպասների մոտ նրան դիմավորեցին բնակիչները, մեջլիսի անդամները: Այստեղ էր նաև հայոց եպիսկոպոսը, որը սրտանց ողջունելով փոխարքային, հայտնեց հայերի երախտագիտությունը:

Նոյեմբերի 8-ին, առավոտյան ժ. 11-ին տեղի ունեցավ զորահանդես: Կարսի կենտրոնում հանդիսավորությամբ շարք էին կանգնել հաղթանակ բերած զինվորները: Շքախմբի ուղեկցությամբ, ձիու վրա նստած փոխարքան մոտեցավ գործող կորպուսի հրամանատարին, ողջունեց նրան ու դիմելով զորքին, բացականչեց.

- Ձեր հրամանատար, հեծելազորի գեներալ Միխայիլ Տարիելովիչ Լորիս-Մելիքովին ուռա՜:

Սա, իմիջիայլոց, բացառիկ երևույթ էր: Ցարական Ռուսաստանում ընդունված չէր որ կոչումով ավագը ողջուներ կրտսերին: Իսկ այս դեպքում առավել ևս ընդունված չէր, որ կայսերական ընտանիքի անդամը ողջուներ ստորադաս զինվորականին: Բայց Միխայիլ Նիկոլաևիչ Ռոմանովն որքան էլ վախկոտ, բանսարկությունների մեջ վարպետացած էր, այնուամենայնիվ, հասկանում էր, թե ինչ էր նշանակում իր կողմից Լորիս-Մելիքովին ողջունել ու պատիվ տալ:

Ահա, այսպես ավարտվեց Կարսի գրոհը, որը Կովկասյան ռազմաճակատում ամենախոշոր ռազմական գործողությունն եղավ: Կարսի գրավումը Լորիս-Մելիքովին պատիվ բերող հաղթանակ էր: Այդ հաղթանակի մեջ դրսևորվեց ոչ միայն կորպուսի հրամանատարի կամքը, համառությունը, նպատակին հասնելու ձգտումը, այլև իսկական զորավարական տաղանդը:

Հետագայում, երբ Լորիս-Մելիքովը հրաժարական էր տվել ու հարկադրված հեռացել էր արտասահման, չարակամ մարդիկ նրա հասցեին տարածեցին բամբասանքներ, թե Կարսը Լորիս-Մելիքովը գրավել է ոչ թե գրոհով, այլ կաշառելու միջոցով: Պատասխանելով այդ չարամիտ բամբասանքների հեղինակներին, արդեն Լորիս-Մելիքովի մահից հետո, 1889 թ. հունվարին «Ռուսկայա միսլ» ամսագիրը նշում էր. «Փոքր Ասիայում պատերազմի ճակատագիրը վճռվեց Կարսի հաղթական գրոհով՝ անցած պատերազմում միակ մեծ գրոհով, որն ավարտվեց հաջողությամբ /հայտնի է, որ Պլևնան վերցվեց այնտեղից թուրքերի հեռանալու հետևանքով/: Կարսը գրոհով վերցնելու փայլուն հաջողությունն առաջ բերեց բամբասանք, իբր թե Կարսը գրավվել է կաշառքով: Այս բամբասանքի անմտության մասին վկայում են ինչպես գրոհի ժամանակ մերոնց նշանակալի կորուստները, այնպես էլ Կարսում ընդամենը 17 հազար թուրքերի գերի հանձնվելը: Ակնհայտ է, որ ամբողջական պաշտպանական ճամբար ներկայացնող ամրոցը չէր կարող հանձնվել 20 հազարանոց կայազորով, այնպես որ կաշառելու ոչ մի կարիք չկար, չխոսելով այլևս դրա անհավանականության մասին...»:

Կարսի հաղթանակը բացեց Կոստանդնուպոլսի ճանապարհը

Կարսի շրջապատման ընթացքում Բալկանյան ռազմաճակատի զորքերը մի քանի գրոհ էին ձեռնարկել Պլևնա ամրոցը գրավելու համար, բայց հաջողության չէին հասել: Պլևնայում շրջափակված թուրքական կայազորը գլխավոր հրամանատար Օսման փաշայի գլխավորությամբ համառորեն դիմադրում էր:

Շուտով հայտնի դարձավ, որ պաշարված ամրոցում սկսվել է սով և ռուսական զորքերի գլխավոր հրամանատար, մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչը Օսման փաշային առաջարկեց հանձնվել, քանի որ դիմադրությունն այլևս անմտություն էր:

Օսման փաշան մերժեց և ուղարկեց հետևյալ պատասխանը. «Բաժանելով մարդկային զգացմունքները, որոնք ձերդ մեծությունը հարմար էր գտել ինձ արտահայտել, ես, այնուամենայնիվ, չեմ կարող իմ քաջարի զինվորներին հրամայել զենքը վայր դնել: Իմ զինվորներն ու ես հաստատապես որոշել ենք թափել մեր արյունը մինչև վերջին կաթիլը հանուն մեր հայրենիքի պատվի ու նրա իրավունքների պաշտպանության»:

Ռազմաճակատում գտնվող Ալեքսանդր Երկրորդը ցնցվել էր այս հպարտ պատասխանից: Սակայն նա նոյեմբերի 7-ին ստացավ ուրախ լուր՝ գեներալ Լորիս-Մելիքովը գրավել է Կարսի անառիկ ամրոցը: Այս հաղթանակի լուրը բարձրացրեց Պլևնան շրջապատած զորքի ոգին: Բայց Կարսի անկումը ծանր տպավորություն գործեց թուրքական կայազորի վրա; Հուսահատված Օսման փաշան դադարեցրեց դիմադրությունը և իր զորքերի հետ հանձնվեց:

Կարսի հաղթանակն, այսպիսով նպաստեց Պլևնա ամրոցի անկմանն, որից հետո ռուսական զորքերի համար բացվեց Կոստանդնուպոլիս տանող ճանապարհը...

«Դիմացիր, դիմացիր սպրեհիկս»

Կարսի գրավման հաջորդ օրը, վաղ առավոտյան, Լորիս-Մելիքովն իր սովորության համաձայն, սովորություն, որը երբեք նա չէր խախտում, այցելեց հոսպիտալ: Այցը սկսեց թեթև վիրավորներից: Պարտադիր կերպով նա մոտեցավ բոլորին, հետաքրքրվեց վիճակով ու յուրաքանչյուրի համար գտնում սփոփանքի ու հուսադրության խոսքեր: Շատերին նա արժանացրեց Գեորգիևյան խաչի: Այնուհետև կորպուսի հրամանատարն անցավ ծանր վիրավորների բաժին: Նրանց մեջ առանձնապես շատ էին ոտքերից ու թևերից զրկված զինվորները: Քիչ չէին նաև տեսողությունից զրկվածները:

Լորիս-Մելիքովը մոտենում էր այդ դժբախտներին, ձեռքը անխոս դնում ահավոր ցավից տնքացող զինվորի ուսին ու ցածրաձայն ասում.

- Դիմացիր, դիմացիր աղբերիկս...

Բայց ինչպե՞ս դիմանար երկու ոտքից զրկված զինվորը: Հրամանատարը սրտի ցավով զգում էր իր անզորությունը, նաև պատասխանատվությունը մարդուն հասած դժբախտության համար: Ավարտելով վիրավորների տեսակցությունը, կորպուսի հրամանատարը հետաքրքրվեց հոսպիտալի կարիքներով, անհրաժեշտ կարգադրություններ անելուց հետո, ծանր տպավորությամբ վերադարձավ զորակայան:

Հաջորդ օրերին Լորիս-Մելիքովը զբաղվեց Կարսում տեղավորված զորամասերի հետ կապված հարցերի լուծմամբ: Ընդունում էր Կարսի բնակիչներին, կարգադրություններ անում նրանց խնդրանքների շուրջ: Կարսի բնակիչներն առանձնակի ջերմությամբ էին վերաբերվում Լորիս-Մելիքովին: Նրանք հիշում էին, թե որքան արդարադատ էր երիտասարդ Լորիս-Մելիքովն անցած պատերազմի ժամանակ Կարսի նահանգապետի պաշտոնը զբաղեցնելիս: Այժմ էլ էին նրան դիմում և ստանում օգնություն:

Կարսը գրավելուց հետո Լորիս-Մելիքովի առաջարկությամբ Կարսի պարետ նշանակվեց գեներալ-մայոր Պոպկոն, որն անցած պատերազմում Կարսի պարետ եղած ժամանակ Լորիս-Մելիքովի օգնականն էր:

- Կշարունակեմ մեր կիսատ թողած գործը, Միխայիլ Տարիելովիչ, - պատասխանեց Պոպկոն, լսելով Լորիս-Մելիքովի շնորհավորանքը:

Լորիս-Մելիքովն անհարաժեշտ կարգադրություններ արեց Պոպկոյին և անձամբ հետևում դրանց կատարմանը: Մի քանի օրվա ընթացքում քաղաքի փողոցներում կուտակված ցեխն ու աղբը մաքրվեց, բացվեցին խանութները: Ամենուրեք կենդանություն էր երևում: Թուրք բնակչությունն էլ սկսեց կամաց-կամաց չվախենալ ու փողոց դուրս գալ:

Լորիս-Մելիքովի աչքից չվրիպեց, որ Կարսի թուրքերը փակ են պահում իրենց մզկիթները: Իր մոտ կանչել տվեց խոջաներին, որոնցից շատերին ճանաչում էր անցյալ պատերազմից:

- Գնացեք ու բացեք ձեր մզկիթներն, առաջվա նման կատարեք ձեր կրոնական պարտավորությունները, - հորդորեց նրանց Լորիս-Մելիքովը:

Ոգևորված մահմեդական մոլլաները համարձակվեցին բարձրանալ մինարեթների վրա և հրավիրել ուղղափառներին:

Հետևելով Լորիս-Մելիքովի խորհրդին Կարսի նոր պարետը իր վարվելակերպով թուրք բնակչության մեջ ձգտում էր ամրապնդել հավատ ու վստահություն ռուսական իշխանությունների նկատմամբ:

Ռուսական իշխանություններն առանձնահատուկ բայրացկամ վերաբերմունք ունեին հայերի ու հույների նկատմամբ: Հայերն անմիջապես սկսեցին նորոգել իրենց տները: Նրանք հիմքից վերանորոգեցին ավերված 12 առաքյալների անունով եկեղեցին:

Լորիս-Մելիքովը հաճախ էր հանդիպում Կարսի աչքի ընկնող հայ բնակիչներին, նրանց հետ քննարկում քաղաքի ապագայի հետ կապված խնդիրները: Այդ նրա խորհրդով էր, որ Կարսում կազմակերպվեց հայերի հավաք, որտեղ քննարկվեց ուսումնարան ստեղծելու, երեխաներին կրթության տալու գործը: Հավաքում ընտրվեցին հոգաբարձուներ Կարսում մեծ հեղինակություն ունեցող Գևորգ Էհրամճյանցը, Ղուկաս Սաղաթելյանցը, և Մելիք Շեխեյանցը: Այս հոգաբարձուներն եռանդով գործի անցան: Նախ, պարզեցին երեխաների թիվը, հետո Լորիս-Մելիքովի երաշխավորական նամակով մեկնեցին Թիֆլիս՝ ուսուցիչներ հրավիրելու և ուսումնարանին հարկավոր պիտույքներ ձեռք բերելու համար:

Հոգաբարձուները շատ չարչարվեցին և ի վերջո կարողացան ավարտել գործը: Կարսի ուսումնարանը իր դռները աշակերտների առջև բացեց միայն 1878 թ. սեպտեմբերին...

«Տվիանանես, ինչի՞ց է պետք ուրիշի փառքը...»

Թեև զբաղվածությանն, այնուամենայնիվ, Լորիս-Մելիքովը ժամանակ գտնում էր ծանոթանալ Պետերբուրգից ստացված թերթերին, որոնք մշտապես տեղեկություններ էին հաղորդում ռազմաճակատներից: Երբեմն շտաբի սպաները զայրանում էին, երբ որևէ լրագրում կարդում էին սխալ տեղեկություններ այն իրադարձությունների մասին, որոնց մասնակից էին եղել:

- Ոչինչ, ոչինչ, - այսպիսի դեպքերում հանգստացնում էր նրանց Լորիս-Մելիքովը, - մի զայրացեք, մի զարմացեք, հեղինակ-թղթակիցը գրել է այնպես, ինչպես հասկացել է: Կանցնի ժամանակ և մեր տեսած դեպքերն ու իրադարձությունները կգրվեն ճշմարտացիորեն: Այնպես, որ մի անհանգստացեք...

Եվ մի անգամ էլ, երբ մայրաքաղաքից ստացվել էր թերթերի նոր խմբաքանակ, զարմանալու հերթը հասավ Լորիս-Մելիքովին: Թերթերի մեծ մասը միաբերան գրում էին Կարսի գրավման մասին և առանձնապես ընդգծում գեներալ Լազարևի ունեցած բացառիկ դերը: Լորիս-Մելիքովին զարմանք էր պատճառել այն հաղորդումն, ըստ որի միայն գեներալ Լազարևի հրամանների, նրա մշակած գրոհի պլանի շնորհիվ է հաջողվել գրավել Կարսը: Շատ աչքի ընկած գեներալների ծառայությունը վերագրվում էր բացառապես Լազարևին:

Գեներալներին ու մյուս սպաներին հետաքրքրում էր, թե ինչպես կվերաբերվի Լորիս-Մելիքովն այս անարդարությանը: Իսկապես, ստեղծվել էր տհաճ իրավիճակ: Բոլորին էր հայտնի Լորիս-Մելիքովի և Լազարևի ջերմ մտերմությունը, վերջինիս նկատմամբ կորպուսի հրամանատարի անվերապահ վստահությունը: Իսկ հիմա կատարվել էր բացահայտ անարդարություն: Այդ անարդարությունը Լորիս-Մելիքովը ևս համարեց

ժուռնալիստների թեթևամիտ ու անպատասխանատու վերաբերմունքի արդյունք:

Բայց, այնուամենայնիվ, Լորիս-Մելիքովն որոշեց բացատրվել Լազարևի հետ, պարզել իրեն հետաքրքրող հարցը՝ թերթերի այդպիսի հաղորդումը արդյո՞ք կազմակերպված չէ Կովկասյան ռազմաճակատի շտաբում նստած իր հակառակորդների, հատկապես իշխան Միրսկու ձեռքով, թե՞ պատահականության հետևանք է:

Եվ ինչքան մեծ եղավ Լորիս-Մելիքովի զարմանքը, երբ Լազարևի հետ ունեցած զրույցից իմացավ, որ այդ բոլոր հաղորդումները տվել է ինքը՝ Իվան Դավիդովիչ Լազարևը:

- Իսկապես, Հովհաննես, - դիմեց Լազարևին Լորիս-Մելիքովը, - նրան կոչելով հայկական անունով, ըստ երևույթին ձգտելով այդ կերպ զրույցին տալ մտերմիկ բնույթ, - քեզ ինչի՞դ է պետք ուրիշի փառքը, միթե՞ քիչ են քո ծառայությունները, որ դու մատուցել ես: Չե՞ որ բոլորն են ընդունում քո հերոսությունը, բոլորն են քեզ հերոս համարում:

Լորիս-Մելիքովի համար բոլորովին անսպասելի, Լազարևը տեղից վեր թռավ և համարյա գոռալով հարցրեց.

- Իսկ դու, ի՞նչ է, մոռացե՞լ ես, թե ով էր ղեկավարում Կարսի գրոհը: Ես չէ՞ի: Ո՞վ էր գրոհում Կարսի մատույցների ամրությունները: Ե՞ս չէի: Իսկ հիմա դու զարմանում ես, որ իմ մասին են գրում:

Վերջին նախադասությունն Իվան Դավիդովիչն այնպիսի տոնով արտասանեց, որով հասկացնում էր, թե Լորիս-Մելիքովն իրեն նախանձում է: Զգաց դա նրբանկատ Լորիս-Մելիքովը և որոշեց չշարունակել խոսակցությունը: Նա համոզվեց, որ Լազարևի հետ այլևս անհնար է խոսել, քանի որ նա բավականաչափ մեծամտացել է, իրեն այնպես ամուր վերագրելով կարծեցյալ ծառայություններ...

Լորիս-Մելիքովն, որը շատ լավ գիտեր մարդկային թուլություններն, այդ միջադեպը շուտ մոռացավ: Բայց նրա նման չվարվեց գեներալ Լազարևը...

Էրզրումը Հայաստանի մայրաքաղաքն է

Մեծ էր Կարսի գրավման նշանակությունը: Դրանով Լորիս-Մելիքովին հաջողվեց կոտրել Կովկասյան ռազմաճակատում թուրքական զորքերի հրամանատար Մուխթար փաշայի ողնաշարը: Փաստորեն դադարեցին ռազմական գործողությունները:Թվում էր, որ ավարտվում է պատերազմը:

Բայց ի՞նչ ավարտի մասին էր խոսքը, երբ Մուխթար փաշան ամրացել էր էրզրում քաղաքում: Եվ ինչպե՞ս կարելի էր էրզրումը թողնել թուրքերին:

Փոխարքայի մոտ հրավիրված ռազմական խորհրդում, ինչպես նաև կորպուսի ռազմական խորհրդում Լորիս-Մելիքովը խոսելով էրզրումի մասին, միշտ ավելացնում էր «Հայաստանի մայրաքաղաք» բառերը:

- Կովկասյան ռազմաճակատում մեր հաղթանակը վերջնական կլինի, եթե գրավենք Հայաստանի մայրաքաղաք էրզրումը, - ասաց նա փոխարքայի հրավիրած ռազմական խորհրդում և հանգամանորեն պարզաբանեց էրզրումի նշանակությունը Թուրքիայի համար և նաև նրա դերը, եթե անցնի Ռուսաստանին:

Լորիս-Մելիքովի փաստարկները հիմնավոր էին և վճռվեց օգտվել ստեղծված իրավիճակից ու ձեռնարկել էրզրումի գրավումը:

- Իսկ ո՞ւմ եք երաշխավորում էրզրումի գրոհի հրամանատարությունը, - հարցրեց փոխարքան:

- Ձերդ կայսերական մեծություն, Իվան Դավիդովիչ Լազարևն իրեն լավ դրսևորեց Կարսի գրոհի ժամանակ: Ձեռք է բերել փորձ և կարծում եմ, որ էրզրումի գրոհն էլ կարելի է վստահել նրան, - պատասխանեց Լորիս-Մելիքովը:

Ներկաներից շատերը, որ տեղյակ էին Լորիս-Մելիքովի ու Լազարևի միջև ստեղծված սառնությունից, ուրախացան կորպուսի հրամանատարի վեհանձնության ու օբյեկտիվության համար: Իսկ Լորիս-Մելիքովն առաջարկելով Լազարևի թեկնածությունը, հատկապես հաշվի էր առնում, թե դա ինչպիսի բարոյական ազդեցություն կունենա էրզրումի հայ բնակչության մոտ:

- Դու տեսնում ես, թե մեզ, հայ հրամանատարներիս ինչպես են ընդունում հայերն, ինչպես են ոգևորվում, մարդիկ մեր աչքերի առջև կարծես նորից են ծնվում: Դու պատկերացնում ես, թե էրզրումի հայերն ինչքան կոգևորվեն, երբ լսեն, որ հայ գեներալն է գալիս իրենց ազատագրելու, - ահա այսպես էր բացատրում իր առաջարկության իմաստը իր մոտ հրավիրված գեներալ Լազարևին:

«Եթե մենք չարդարացնենք նրանց հույսերը...»

Այդ օրերին Լորիս-Մելիքովը հաճախ էր գեներալներ Տեր-Ղուկասովի, Լազարևի, Շելկովնիկովի և մյուսների հետ քննարկում արևմտահայության առնչվող խնդիրները, անրադառնում ռուսահայերի, հայտնապես իրենց՝ ռուսական բանակում գտնվող հայ զինվորականների անելիքներին:

- Մեզ հայերիս, - ասում էր նա, -բացի այն ընդհանուր մարդկային զգացմունքներից, որ մեզնից յուրաքանչյուրն ունի սուլթանական տիրապետության տակ գտնվող ազգությունների ճնշված դրության նկատմամբ, պետք է առավելապես հետաքրքրի թուրքահայերի վիճակը: Մեր վրա մեծ հույս ունեն նրանք: Եվ եթե մենք չարդարացնենք նրանց հույսերը, ապա մեր արածը ոչ մի արժեք չի ունենա: Եվ առաջին անգամ իր զինակիցների միջավայրում Լորիս-Մելիքովը վերհիշեց տարիներ առաջ Կոստանդնուպոլիս կատարած ուղևորության մասին; Կ. Պոլսում երբեք

չէին եղել ոչ Տեր-Ղուկասովն ու Լազարևը, ոչ Շելկովնիկովն ու Ալխազյանը, ուստի նրանք մակերեսային պատկերացում ունեին գոյություն ունեցող վիճակի մասին:

Իր զինակիցների առջև Լորիս-Մելիքովը բացեց այն հակասական պատկերը, որ գոյություն ուներ հայկական գավառների բնակչության և պոլսեցի հայերի միջև: Եթե այդ վիճակը մնա անփոփոխ, ապա գավառներում ապրող հայության ապագան կդրվի մեծ հարցականի տակ: Այստեղից էլ գլխավոր խնդիրը՝ որքան հնարավոր է թուրքերից շատ տարածքներ մաքրել ու արագացնել էրզրումի գրավումը...

Մուխթար փաշան դիմում է խարդախության

Կորպուսի շտաբն եռանդով մշակում էր էրզրումի գրոհի օպերացիան: Լորիս-Մելիքովն ամեն ինչ հաշվի էր առնում: «Մանրուք չկա», ասում էր նա, ինչպես միշտ և հանձնարարում նորից ու նորից ստուգել հետախուզության հաղորդած տվյալները:

Կարսի գրավումը շատ թանկ էր նստել ռուսական զորամասերի վրա: Հարկավոր էր էրզրումի գրավումն այնպես կազմակերպել, որ քիչ զոհեր լինեին: Այս էր կորպուսի հրամանատարի մտահոգությունը: Ահա, թե ինչու նա արտաքուստ թվացող դանդաղկոտություն էր դրսևորում:

Մինչ այդ ռուսական զորքերի կողմից ամբողջապես շրջապատված էրզրումում դրությունը գնալով ծանրանում էր: Մուխթար փաշան գլուխը կորցրել էր: Գիտեր, որ ունեցած ուժերով անկարող է դիմադրել ռուսական զորքերի գրոհին և տենդորեն ելք էր որոնում: Եվ նրա գլխում առաջացավ մի հրեշավոր միտք: Թուրքական զորքերի գլխավոր հրամանատարն երկրի հարավային սահմաններից էրզրումի առաջապահ դիրքեր բերեց տիֆով հիվանդ զինվորներից կազմված գունդը:

1878 թ. փետրվարի սկզբին Լորիս-Մելիքովի հրամանով սկսվեց էրզրումի գրոհը: Թուրքերի դիմադրությունն արագորեն կոտրվեց և փետրվարի 9-ին ռուսական զորքերը մտան էրզրում: Մուխթար փաշան մի կերպ ճողոպրեց քաղաքից:

Մեծ էր էրզրումի հայ բնակչության ցնցությունը: Վերջապես ազատվեցին թուրքական բռնակալությունից և ազատ շունչ քաշելու հնարավորություն ստացան:

Էրզրումի գրավումից հետո պարզվեց Մուխթար փաշայի խարդախությունը: Էրզրումի երևելի հայերը Լորիս-Մելիքովին տեղեկացրին անսպասելի ու սարսափելի լուր: Հայտնի դարձավ, որ կայսրության հարավային սահմաններում բռնկվել էր տիֆի համաճարակ և թուրքական հրամանատարությունը մտադրվել էր հիվանդ զինվորներին ուղարկել Բալկանյան ռազմաճակատ: Սակայն անգլիական վերահսկող գործակալությունն ար-

գելել էր, վախենալով, որ տիֆը կտարածվի Եվրոպա: Բայց հետո, անգլիացիներից գաղտնի Մուխթար փաշան հիվանդ զինվորներին տեղափոխել էր Կովկասյան ռազմաճակատ: Այստեղ էլ պարզվել էր, որ զինվորները հիվանդ են ոչ թե տիֆով, այլ ժանտախտի համաճարակ է:

Հիմա արդեն պարզ դարձավ, թե էրզրումի գրոհից առաջ ինչու էին թուրք զինվորներն այդպես մասսայաբար գերի հանձնվում: Նրանցից շատերը ոտքի վրա չէին կարողանում մնալ և անմիջապես տապալվում էին գետին: Կորպուսի բուժակները դա վերագրել էին ցրտին ու սովին և հրամանատարության գիտությամբ բոլորին տեղավորեցին հոսպիտալում:

Ստանալով ահավոր տեղեկությունը, Լորիս-Մելիքովն անմիջապես հրամայեց՝ մեկուսացնել թուրք ռազմագերիներին: Բայց արդեն ուշ էր: Գերիներից վարակը անցել էր ռուս զինվորներին և հասավ մինչև Կարս:

Սկսվեց մի ճակատամարտ, որն ավելի դաժան էր ու ահավոր: Հարկավոր էր փրկել զորքին ու էրզրումի բնակչությանը: Լորիս-Մելիքովը մոռացավ հանգիստն ու Հայաստանի մայրաքաղաք էրզրումը գրավելու ուրախությունը: Նրա գլխավոր հոգսը դարձավ սանիտարական մաքրությունը: Անձամբ լինում էր ռուսական զորամասերի տեղակայման վայրերում, սահմանելով դաժան կարանտին: Ավելացվեց աղբահանող գումարտակների թիվը: Հարկավոր էր ամեն միջոցով կասեցնել համաճարակի տարածումը:

Կորպուսը չուներ բավարար քանակությամբ բժիշկներ, համաճարակը կանխելու հարկավոր միջոցներ: Լորիս-Մելիքովը շտապ կերպով դիմեց Թիֆլիս և Պետերբուրգ, պահանջելով ուղարկել բժիշկներ: Բայց օգնության փոխարեն, Լորիս-Մելիքովին ուղարկում էին Բալկանյան ռազմաճակատում հսկայական քանակությամբ վիրավորների մասին տեղեկություններ, հասկացնել տալով, թե բժիշկների կարիքն այնտեղ էլ շատ է զգացվում: Ավելին, Պետերբուրգից ուղարկված հանձնաժողովը ստացած ցուցումի հիման վրա արձանագրեց, որ ժանտախտի համաճարակ չկա, այլ ընդամենը կա տիֆի տարածման վտանգ:

Անչափ մեծ էր կորպուսի հրամանատարի զայրույթը, երբ իրական վտանգն այդպես կոծկվում էր:

- Լավ, -ասում էր նա, - քաղաքական, թե ռազմական տեսակետից հարկավոր չէ բացահայտ ընդունել ժանտախտի համաճարակի փաստը, բայց, այնուամենայնիվ, հարկավոր են կտրուկ միջոցներ...

Պետերբուրգից եկած հանձնաժողովն անտեսեց կորպուսի հրամանատարի պահանջը և ստացած խստագույն հրամանի համաձայն չարձանագրեց ժանտախտի համաճարակը և այդ եզրակացությամբ էլ հեռացավ ռազմաճակատից:

Լորիս-Մելիքովին մնում էր գործադրել իր հնարավորությունները: Նա ավելի խստացրեց պահանջները: Ուժեղացվեց առանց այն էլ դաժանության աստիճանի հասցված կարանտինը: Կորպուսի բուժական անձնա-

կազմը, սպաներն, առանց զբաղեցրած պաշտոնը հաշվի առնելու, բոլորը, բոլորը մի խնդիր ունեին՝ կանխել համաճարակի տարածումը: Եթե հրամանատարն անձամբ էր ստուգում նույնիսկ զորամասերի պետքարանների ախտահանումը կամ էլ հավաքված աղբի մինչև վերջ այրվելը, մնացած բոլորն ուղղակի պարտավորված էին զգում՝ վարվել այնպես, ինչպես կորպուսի հրամանատարը...

Կորպուսի հրամանատարի ձեռնարկած կտրուկ միջոցները, նրա անձնական վերահսկողությունը ճիշտ է, օգուտ տվեցին, բայց, դժբախտաբար, քիչ չեղան և զոհերը: Համաճարակի զոհ դարձան ռուսական բանակի փառաբանված վեց գեներալ, այդ թվում նաև Շելկովնիկովը: Հիվանդությունը քաջարի գեներալին տապալեց Հասան-Կալայում, որտեղ էլ երկու օր անց, 1878 թ. փետրվարի 10-ին նա մահացավ:

Մեծ էր Լորիս-Մելիքովի վիշտը: Նա կորցրեց իր քաջարի զինակիցներից մեկին ու հավատարիմ ընկերոջը: Կորպուսի հրամանատարի կամքով Շելկովնիկովի դին տարվեց Թիֆլիս:

- Հերոսի դին պետք է ամփոփվի Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցու գավիթում: Ժողովուրդն իր հերոսին չպետք է մոռանա, - այս խոսքերով էլ Լորիս-Մելիքովն իր հավատարիմ զինակցին «գնաս բարով» մաղթեց...

Գեներալ Բեբութ Շելկովնիկովյան (Շելկովնիկով)

Գեներալ Բեբութ Մարտիրոսի Շելկովնիկովը ծնվել է 1837 թ. Նուխիում, մի պատվավոր հայ ընտանիքում: Հայրը նրան ուղարկում է Մոսկվա, որտեղ էլ 1855 թ. ավարտում է կադետական կորպուսը և ծառայության անցնում 21-րդ հրետանային բրիգադի պահեստային մարտկոցում:

Այստեղ երիտասարդ սպան կարճ մնաց: Շուտով որպես հրետանային դասակի հրամանատար տեղափոխվեց Չեչնիա և աչքի ընկած ծառայության համար արժանացավ Սուրբ Ստանիսլավի և Սուրբ Աննայի շքանշանների:

Կովկասում պատերազմի ավարտից հետո Շելկովնիկովն ընդունվեց Գլխավոր շտաբի զինվորական ակադեմիա, որի դասընթացն ավարտելուց հետո նշանակվեց Լեհաստանում գտնվող 7-րդ հետևակային դիվիզիայի հրամանատարի ավագ համհարզի պաշտոնում: Լեհական ապստամբների դեմ մղած մարտերում աչքի ընկնելու համար Շելկովնիկովը պարգևատրվեց Գեորգիևյան 4-րդ աստիճանի շքանշանով:

1864 թ. Շելկովնիկովը տեղափոխվեց Կովկասյան բանակ և 1867 թ. նշանակվեց Ջաքաթալայի օկրուգի պետ: Կարճ ժամանակում նրան հաջողվեց ծեռք բերել օկրուգի բնակչության համակրանքը:

Լեհական դեպքերի ժամանակ ստացած վերքերը հանգիստ չէին տալիս և Շելկովնիկովը հարկադրված մեկնեց Պյատիգորսկ՝ բուժման: Սակայն շուտով օկրուգում Թուրքիայի հրահրմամբ ծագեց խռովություն: Շելկովնիկովը շտապ կանչվեց Թիֆլիս: Գալով Թիֆլիս, նա խնդրեց ոչ մի գործողություն չձեռնարկել, մինչև որ անձամբ ծանոթանա իրավիճակին: Թիֆլիսում Շելկովնիկովին խորհուրդ տվեցին Ջաքաթալա մեկնել զորքի ուղեկցությամբ:

Շելկովնիկովը մերժեց այդ խորհուրդը և միայնակ մեկնեց Ջաքաթալա: Նա առանց զենքի ու թիկնապահների հանդես եկավ հավաքված ամբոխի առջև: Նրա համոզիչ խոսքը հասավ նպատակին: Օկրուգում, առանց զորքի միջամտության, վերահաստատվեց խաղաղություն: Այս հաջողության համար Շելկովնիկովը 1869 թ. ստացավ փոխգնդապետի, իսկ 1870 թ. գնդապետի աստիճան:

Հիանալի տիրապետելով թաթարական լեզվին, Շելկովնիկովը հեշտությամբ ճանապարհ էր գտնում դեպի լեռնականների սրտերը: Նրան հաջողվեց լեզգիների մոտ արմատավորել ազնիվ աշխատանքի մղումը: Նույնիսկ հասավ նրան, որ լեզգիները հրաժարվեցին զենք կրել:

Շահ Աբասի ժամանակներից լեզգիների մոտ հողային վեճերը կրում էին արյունալի բնույթ: 1874 թ. Շելկովնիկովը կարողացավ լուծել այդ հարցը, կատարելով արդարացի հողաբաժանում:

Շելկովնիկովը Ջաքաթալայի պետ աշխատեց յոթ տարի և հասավ նրան, որ օկրուգում զարգացան այն ճյուղերն, որոնք ավելի օգտակար էին: Բնակիչները նրանից անչափ գոհ մնացին, երբ օկրուգ բերել տվեց ավելի թեթև ու հարմար գութաններ: Որպեսզի տեղացի վարպետները պատրաստեին այդպիսի գութաններ, Շելկովնիկովը սահմանեց պարգև՝ յուրաքանչյուր գութանի համար 20 ռուբլի: Օկրուգի պետի ջանքերով բերվեցին խաղողի, խնձորի, տանձի, դեղձի և նույնիսկ բանջարեղենի լավագույն սերմեր, որոնք տեղական բնակչությանը մինչ այդ հայտնի չէին:

Օկրուգում չկային հարմար ճանապարհներ: Բնակչությունը նույնիսկ չէր կարողանում իր բերքը իրացնել մոտակա շուկաներում և հարկադրված չնչին գներով հանձնում էր սպեկուլյանտներին: Շելկովնիկովն այս անարդարության վրա ուշադրություն դարձրեց և որոշեց դա վերացնել՝ ճանապարհներ կառուցելու միջոցով: Նրա ջանքերով կառուցված ճանապարհներն ունեցան տնտեսական խոշոր նշանակություն:

1876 թ. Շելկովնիկովը ստացավ նոր նշանակում:

Եկավ հրաժեշտ տալու պահը: Ջաքաթալայում հավաքված բազմությանը Շելկովնիկովը ներկայացրեց իրեն փոխարինողին.

- Տեսնում եք, թե փոխարքան ինչ քաջի է ուղարկել ձեզ մոտ: Ընդունեք, լսեք ու սիրեք նրան:

- Խոսք չունենք, քաջ է, - պատասխանեցին լեզգիները, - միայն թող

Նրա հոգին ու սիրտը լինեն այնպես, ինչպես քոնն է: Մեզ ավելին պետք չէ: Լավ չէ Բեբութ բեկ, որ մեզնից հեռանում ես: Միթե դու լսել ես երբևէ, որ հայրը լքի իր զավակներին:

Հարյուրավոր հեծյալ լեզգիներ Շելկովնիկովին ուղեկցին մինչև Թիֆլիս:

1876 թ. հուլիսի 29-ին Շելկովնիկովը նշանակվեց Սևծովյան օկրուգի պետ: Օկրուգը ձգվում էր Անապայից մինչ Սուխումի, Նովոռոսիյսկ կենտրոնով: Օկրուգն ուներ 400 հազար բնակիչ:

Սկսված պատերազմի պայմաններում Շելկովնիկովի առջև խնդիր դրվեց՝ ապահովել Սև ծովի արևելյան ափերի անվտանգությունը թուրքերի հարձակումներից: Շելկովնիկովը համարձակ ու խելացի գործողություններով խափանեց Սոչիի մոտ ուժեղ թուրքական զորաջոկատի ափ դուրս գալը: 1877 թ. օգոստոսի սկզբին Շելկովնիկովն իր զորաջոկատով դժվարագույն պայմաններում կոտրելով թուրքերի դիմադրությունը, գրավեց Գագրան և շարժվեց Սուխումի: Օգոստոսի 20-ին նա գրոհով գրավեց Սուխումին: Այս սխրագործության համար Շելկովնիկովը ցարի հրամանով արժանացավ գեներալ-մայորի աստիճանի:

Շելկովնիկովի զինվորները իրենց քաջարի հրամանատարի մասին երգ հյուսեցին, որտեղ ասվում էր.

Թիֆլիսից եկած հրամանով
Մենք Սոչիից ճանապարհ ընկանք,
Որպեսզի Ֆազլի, էդրիս փաշաներին
Բոլորին Սուխումից դուրս վռնդենք:
Թուրքերը չեն ուզում կռվել
Չոր տեղերով էլ չեն ուզում մեր վրա գալ:
.....
Ախ դու թուրք, հիմարի մեկը,
Այստեղ չի վերցնի քոնը
Զրահաճավը սարսափելի չէ մեզ
Քանի որ Շելկովնիկովն է մեր առաջնորդը:

Երբ Աբխազիան մաքրվեց թուրքերից, Սուխումի բաժինը դրվեց Շելկովնիկովի ենթակայության տակ: Դեռ չէր սկսել ծանոթանալ Աբխազիային, երբ նա հեռագրով կանչվեց Գործող կորպուս:

1877 թ. սեպտեմբերի կեսին Շելկովնիկովն եկավ Գործող կորպուս: Ալաջայի գրոհի նախօրյակին: Շելկովնիկովն առաջադրանք ստացավ թշնամուն գրոհել թիկունքից: Գրոհից առաջ, սեպտեմբերի 19-ի երեկոյան նա իր զինվորներին դիմեց հետևյալ խոսքերով. «Տղաներ, կարող է վաղվա օրը հակառակորդի հետ ավարտվի մեր պայքարը, մենք պետք է անցնենք նրա թիկունքը: Մենք քիչ ենք, բայց մենք մեր որակով կփոխարի-

նենք քանակին: Արշալույսին մենք պետք է լինենք Նախրչի լեռան վրա, որը հեռու է, բայց մենք շուտ պետք է լինենք այնտեղ, ինչ գնով էլ որ լինի: Ես գիտեմ, որ դուք հոգնած եք, բայց դուք կհաղթեք հոգնածությունը: Ջեզնից է կախված վաղվա մարտի հաջողությունը»:

Սեպտեմբերի 20-ի առավոտյան ժամը 8-ին Շելկովնիկովի ջոկատն արդեն Նախրչի լեռան վրա էր: Եվ հանկարծակի բերելով թուրքերին, ուժեղ գրոհով նրանց դուրս մղեցին դիրքերից: Շելկովնիկովը պարգևատրվեց Սուրբ Գեորգի 3-րդ աստիճանի բարձրագույն շքանշանով:

Շուտով Շելկովնիկովը նշանակվեց էրզրումի զինվորական նահանգապետ: Նա ոչ միայն պետք է հանգստացներ բնակիչներին, այլև զորքերին ապահովեր պարենով, կարգավորեր ճանապարհները, փոստը, հեռագիրը, հոսպիտալները:

Այս ամենը պահանջում էր հսկայական ջանքեր:

Էրզրումի շրջափակումը ծանր վիճակի մեջ էր դրել ռուսական զորքերին: Կործանարար տիֆը գերեզման էր տանում զինվորներին, սպաներին ու գեներալներին: Միակ միջոցը այդ չարիքի դեմ պայքարում լավ սնդամքերքի հավաքումն էր: Այդ նպատակով էլ Շելկովնիկովն եղավ բոլոր բնակավայրերում: Բավական եղավ մեկ շաբաթ և Շելկովնիկովին հաջողվեց հավաքել ավելի քան 100 հազար փութ պարենամթերք:

1878 թ. հունվարի 20-ին Շելկովնիկովը վերադարձավ ուղևորությունից բավական հոգնած:

Չնայած դրան, նա մեծ ոգևորությամբ մասնակցում էր էրզրումը հանձնելու բանակցություններին: Բայց նրա օրերը հաշված էին: 1878 թ. փետրվարի 10-ին Շելկովնիկովը մահացավ տիֆից: Նրա մահից մեկ օր անց, ռուսական զորքերը մտան էրզրում:

1878 թ. փետրվարի 25-ին գեներալ Շելկովնիկովին թաղեցին Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցու գավիթում: Թաղմանը ներկա էր Թիֆլիսի ամբողջ հայությունը, բազմաթիվ չինովնիկներ փոխարքայի գլխավորությամբ: Այդ օրերին Թիֆլիսում լույս տեսնող «Մշակ» թերթը հայտնում էր, որ Շելկովնիկովը «թողեց մի երիտասարդ կին իր երեխաներով: Միակ մխիթարությունը, որը կը կարողանայ գտնել նորահաս կինը իր կեանքի մէջ, կը լինի դարձնել իր բոլոր սէրը իր երեխաների դաստիրակութեան վրայ: Նորա անձի և նորա երեխաների վրա կը կենտրոնանայ այժմ հասարակութեան և մանաւանդ հայերի համակրութիւնը, որ մենք ամենքս ունէինք դեպի տաղանդաւոր երիտասարդը, որին մահը այդքան շուտ խլեց թէ մեր շրջանից և թէ լայն կառավարչական ասպարեզից»:

Հետագայում, մինչև իր կյանքի վերջը, Լորիս-Մելիքովն ուշադրության կենտրոնում էր պահում Շելկովնիկովի զավակներին, դառնալով նրանց նեցուկը...

Գեներալ Շելկովնիկովի թաղման օրը, 1878 թ. փետրվարի 25-ին Պե-

տերբուրգի հայկական եկեղեցում տեղի հայ ուսանողների ցանկությամբ վանահայր Վահան Բաստամյանցը կատարեց հոգեհանգիստ, որի ժամանակ նա ասաց հետևյալը. «Գեներալ Շելկովնիկովն իր ամբողջ կյանքը նվիրեց ռուսաց տերության ծառայությանը, նա իր կյանքի մեջ պատիվ բերեց ռուսաց զենքին իր նշանավոր հանճարով, իսկ կառավարչական ասպարեզում ստացավ ժողովրդի ամենաջերմ համակրությունը: Այդ երիտասարդ հանճարը, ինչպես և նրա արժանավոր պաշտոնակիցները՝ Լորիս-Մելիքով, Տեր-Ղուկասով, երիտասարդ Լորիս-Մելիքով, Լազարև, Ալխազով, Դենիբեկով և ուրիշներ պատիվ են բերում հայոց ազգին, կենդանի ապացույց տալով համայն աշխարհին, որ այդ ազգը ապրում է և պարունակում է իր մեջ այնպիսի բարոյական ու մտավոր առողջ ուժեր, որոնք այդպիսի ճգնաժամում կարող են ներկայացնել այդ տեսակ նշանավոր անձինք իրենց տերությանը»:

Մի նոր ծանր հարված

1878 թ. մարտի սկզբներին Լորիս-Մելիքովը մի նոր ծանր հարված ստացավ: Համաճարակի զոհ դարձավ նրա երիտասարդ ազգական, հորեղբայր եգորի որդի գեներալ Հովհաննես Լորիս-Մելիքովն, որին զորամասերում «Փոքր Լորիս» էին անվանում: Մեծ էր հրամանատարի վիշտը: Ինչպե՞ս չկարողացավ պահպանել նրա կյանքն, որի հետ լուրջ հույսեր էր կապում: Լորիս-Մելիքովը մերժեց հարազատների խնդրանքը՝ գեներալի հուղարկավորությունը Թիֆլիսում կատարելու համար:

Իր հարազատին վերջին հրաժեշտը տալու նպատակով Լորիս-Մելիքովը 1878 թ. մարտի 9-ին եկավ Կարս: Գեներալի կամքով երիտասարդ Հովհաննեսի մարմինը բերվեց Ալեքսանդրապոլ: Մարտի 11-ին նրան մեծ պատվով թաղեցին տեղի գերեզմանատանը, իսկ մարտի 16-ին Թիֆլիսի Մուղնու սուրբ Գևորգ եկեղեցում կատարվեց Հովհաննես Լորիս-Մելիքովի հոգեհանգիստը:

...Լորիս-Մելիքովի գործադրած միջոցները, որոնք հասնում էին դաժանության աստիճանի, տվեցին արդյունք: Հաջողվեց համաճարակը մեղմել: Թույլ չտրվեց, որ այն անցներ Անդրկովկաս:

«Ուր որ ազգի ճշմարիտ շահերն են...»

Ռուսական զորքերի տարած հաղթանակներն ի վերջո սթափեցրին Կ. Պոլսի հայերին: 1877 թ. հոկտեմբերի 21-ին ազգային ժողովի սթափ մտածողների նախաձեռնությամբ Ղալաթիայի կենտրոնական վարժարանում հրավիրված մասնավոր խորհրդակցությունն որոշեց դիմել Ռուսաստանի կայսր Ալեքսանդր Երկրորդին: Այսպիսի որոշում ընդունելիս, խորհրդակցության մասնակիցները մեծ ուշացումով հարկադրված էին հետևել Թիֆլիսի հայության օրինակին, որը դեռևս 1876 թ. դեկտեմբերի 3-ին հատուկ ուղերձով դիմել էր Ալեքսանդր Երկրորդին:

Կովկասի փոխարքա Միխայիլ Նիկոլաևիչի միջոցով ցարին հասցեագրված ուղերձում Թիֆլիսի հայերը նշելով, որ Ռուսաստանի հովանավորության շնորհիվ արևելահայությունը ձեռք է բերել հանգստություն ու խաղաղություն, գրում էին. «...չենք կարող անտարբեր մնալ դեպի այն աներևակայելի տանջանքներն, որ կրում են Ասիական Թուրքիայի սահմաններում բնակվող մեր ցեղակիցներն և համադաւանները, ուր ոչ անհատն, ոչ սեփականութիւնն, ոչ կրօնն, ոչ քրիստոնեաների կեանքն և ոչ նրանց ընտանիքի, կանանց և աղջիկների պատիւն ոչնչով չէ ապահովուած... Քրիստոնէական արդարասիրութեան խոր ցաւակցութեան զգացմունքը դէպի մեր եղբայրները դրդեց մեզ դիմել ձերդ կայսերական օգոստափառ միջնորդութեան և ամենահաւատարմաբար խնդրել ձերդ բարձրութեանն արկանել թագաւոր կայսրի ոտների մօտ մեր ամենահպատակ խնդիրը՝ պաշտպանել իր հզօր ձեռքով, Թիւրքիայի այլ քրիստոնեաներին հաւասար կերպով, մահմեդականութիւնից միշտ ճնշուած հայոց ազգն, այն միջոցներով, որ նախախնամութիւնը յանձնել է նորին մեծութեանը և որ նա աւելի յարմար կը համարի»:

Կարճ ժամանակ անց, Ալեքսանդր Երկրորդը փոխարքայի միջոցով շնորհակալություն հայտնեց Թիֆլիսի հայոց հասարակությանն այդ ուղերձի համար:

Կոստանդնուպոլսում հրավիրված վերոհիշյալ խորհրդակցությունում քննարկվեց նաև այն հարցը, թե ո՞վ պետք է լինի ռուսաց ցարի մոտ իրենց միջնորդը: Միաձայն որոշվեց այդ նպատակով դիմել էջմիածնի կաթողիկոսին և նրա մոտ ուղարկել Մատթեոս եպիսկոպոս Իզմիրլյանին, որպես հատուկ պատգամավոր; Պոլսի հայերը ծանոթ էին էջմիածնի Գևորգ կաթողիկոսի հակառուսական կեցվածքի մասին, ուստի նամակով փորձեցին նրան համոզել փոխել դիրքորոշումը: «Գոնէ, - գրում էին նրանք կաթողիկոսին, - արդի քաղաքականութեան այս վտանգաւոր ժամանակին կը խնդրուի նորին վեհափառութեան՝ փոխել իր մինչև ցարդ բռնած քաղաքականութիւնը»:

Պատրիարք Ն. Վարժապետյանն էլ աստիճանաբար փոխեց իր դիրքորոշումը և Մկրտիչ Խրիմյանի ու մյուսների ճնշման տակ նահանջելով, ասաց.

- Ուր ազգի ճշմարիտ շահերն են, ես ալ այնտեղ եմ...

Գևորգ վարդապետ Ռուսճուգլյանի վկայությունը

Երբ 1878 թ. հունվարի 19-ին Ադրիանապոլսում ստորագրվեց զինադադարի պայմանագիրը, պատրիարք Ն. Վարժապետյանը սկսեց գործել, իր հրահանգներն ուղարկելով Ադրիանապոլսի առաջնորդական փոխանորդ Գևորգ վարդապետ Ռուսճուգլյանին:

Վարդապետը պատրիարքի ցուցումով դիմում է ռուսական հյուպատոս Մ. Կիրովին, խնդրելով իրեն ներկայացնել ցարական դեսպան Ն. Պ. Իգնատևին: Վերջինիս հետ հանդիպման ժամանակ վարդապետն ասաց. «Ռուսիոյ բանակն Հայաստանի մէկ մասը գրաւած է, ընդ որս Կարս և Կարին և գուցէ ուրիշ գաւառներ ևս. քաղցր է մեզ յուսալ, թէ հայք ևս, ինչպէս պուլգարք, այն ազատութիւնը կը վայելեն և որքան փափաքելի է մեզ գիտնալ այս, քանզի մեր ամեն յարաբերութիւնք ընդ Կ. Պոլսոյ խզուած լինելով՝ բնաւ տեղեկութիւն մի չեմք կարող ստանալ Հայաստանի մէջ բնակող մեր եղբարց վրայ»:

1907 թ. «Ռազմիկի» մեջ տպագրված Գ. Ռուսճուգլյանի հիշատակագրում բերված է Ն. Իգնատևի հետևյալ պատասխանը. «Այո, Ռուսիոյ բանակն մինչև Կարին յառաջացած է և գրաւած է: Հայաստանի այդ մասն այժմ ազատութիւն կը վայելէ, բայց հայ ժողովուրդն ազգովին կամ Հայաստանի մեծ մասը պիտի չկարենայ գտնել առ այժմ այն ազատութիւնը, զօր ունեցած են պուլղարք, վասնզի հայք անպատրաստ գտնուեցան և Հայաստանի մէջ դարձած են մեռեալ տարերք: Ես երեք տարիէ ի վեր հայոց դատին պաշտպանն և փաստաբանն եղած էի. թողունք գաւառցի հայոց աղքատութիւնն և անտարբերութիւնը, մանաւանդ ցիրուցան պանդխտութեան դատապարտեալ վիճակը, մինչև իսկ Կ. Պոլսոյ հայոց ողջախոհ և գործոն մասն՝ սկսեալ Նուպար փաշայէ, արգելք եղած են իմ բարենպաստ գործոցս: Բայց մի վհատիք, կը յուսադրեմ զձեզ: Քանի որ Թուրքիոյ հպատակ եք, ապագային յուսով, այս վայրկեանէս սկսեցեք պատրաստ լինիլ. պատրաստ՝ դաստիարակութեամբ, ուսմամբ և քաղաքագիտութեամբ, պատրաստ՝ նիւթապէս և բարոյապէս, պատրաստ՝ ներքին կազմակերպութեամբ. պատրաստ եղիք այն օրուան համար, յորում քաղաքականութիւնը պիտի առաջնորդէ զձեզ յազատութիւն, և ես պատրաստ եմ միշտ օգնել ձեզ: Պատրիարքնիդ թող ժամավաճառ չլինի, թող սկսէ գործելու, ժամ է»:

Իգնատևի պատասխանը հուսադրող էր և ոգևորված պատրիարքը դիմեց վճռական գործողությունների:

«Հայաստանէն երկիր չտրուի...»

Մինչ Կ. Պոլսի հայոց առաջադեմ գործիչները, որոնց հաջողվել էր իրենց կողմը գրավել պատրիարքին, միջոցներ էին ձեռնարկում արևմտահայության անվտանգությունն ապահովելու և Ռուսաստանի հովանավորությունը շահելու համար, օսմանյան պառլամենտի հայ երեսփոխանները գործում էին բոլորովին հակառակ ուղղությամբ:

Պատերազմի եռուն ընթացքում տեղի ունեցան օսմանյան պառլամենտի «ընտրությունները»: Ընտրվեց 107 երեսփոխան, որից 60 մահմեդական, 47-ը ոչ մահմեդական: Այդ 47-ից 13-ը հայ էին: Հիշենք այդ ծախված հոգիներին: Հովհաննես Ալավերդի, Ալեքսան Սարգսյան, Հակոբ Գազազյան /Կ. Պոլսից/: Վերջինս սուլթան Աբդուլ Համիդի մտերիմն էր, երկար ժամանակ նրան ծառայեց, դառնալով ֆինանսների նախարար: Գևորգ Փափազյան /Սեբաստիայից/, Հովհաննես Կյուրեղյան /Տրապիզոնից/, Խաչատուր Ներսիսյան /Կարսից/, Կիրակոս Գազանճյան /Երզնկայից/, Ռուբեն /Ադրիանապոլսից/, Մանուկ Խարաճյան /Հալեպից/, Հակոբ Գազանճյան /Դանուբյան նահանգից/, Յավրույան /Բրուսայից/, Պզտիկյան /Ադանայից/, Հակոբ Սպարթալյան /Զմյուռնիայից/: Հովհաննես Ալավերդին ընտրվեց նաև պառլամենտի փոխնախագահ:

1878 թ. հունվարի 28-ին օսմանյան պառլամենտի նիստում հայ երեսփոխանները համարձակվեցին խոսել գավառներում շարունակվող հարստահարությունների մասին: Բայց դա կարևոր չէր: Կարևորն այն էր, որ հայ երեսփոխաններն իրար հերթ չտալով իրենց ջերմ օսմանցի էին ներկայացնում: Հալեպից ընտրված Մանուկ Խարաճյանը տեսնելով, որ պատերազմն ավարտվում է և, ըստ լուրերի, Թուրքիան իր տարածքների մի մասը պետք է զիջեր Ռուսաստանին, սուլթանի ներկայությամբ ելույթ ունենալով, ասաց. «Յանուն 500.000 հայոց, որոնք կգտնուին Հայաստանի մէջ և որոնց նախնիքը 500 տարի է ի վեր այնքան հաւատարմութեամբ ծառայեր են օսմանեան պետութեան, յանուն և երեսփոխանական ժողովոյն մէջ գտնուած իր ընկերներուն, կը խնդրենք վեհափառ սուլթանէն, որ եթե Ռուսիոյ տէրութեան պատերազմական ծախք հարկ ըլլայ վճարել, Հայաստանէն երկիր չտրուի, տեղը դրամ վճարուի և եթէ այս անհնար ըլլայ, մեր բողոքն յանուն ազգին՝ բարեկամ տէրութեանց ուշադրութեանը ներկայացուի: Իսկ եթէ ռուսաց անպատճառ հող պիտի տրուի, կը խնդրենք, որ չտրուի Հայաստանէն, տէրութեան ամեն ժամանակ տագնապ բերող կողմերէն տրուի»:

Հայ երեսփոխանները համոզված էին, որ եթե Արևմտյան Հայաստանն անցներ Ռուսաստանի տիրապետության տակ, ապա հայությունն այնքան կվտանգվեր, որ կկորցներ իր լեզուն ու կրոնը:

Այս սխալ համոզմունքն, որը հավասար էր դավաճանության, այնքան

խորն էր ննտած, որ դրանից չհաջողվեց ձերբազավել ընդհուպ մինչև Առաջին համաշխարհային պատերազմ, որի ընթացքում թուրքական իշխանություններն իրականացրին հայոց ցեղասպանությունը և հայաթափեցին ամբողջ Արևմտյան Հայաստանը:

«Ձեր վսեմությունը թող չզարմանայ...»

1878 թ. փետրվարի մեկին Ներսես Վարժապետյանն ութ այլ եպիսկոպոսների ստորագրությամբ աղերսագրով դիմեց Ալեքսանդր Երկրորդին: Դրանում ասվում էր հետևյալը. «Ձեր վսեմությունը թող չզարմանայ, որ Արեւելքի մէջ տեղի ունեցած մեծ-ամեծ փոփոխութեանց ժամանակ, հայերն իրենց կողմանէ բոլոր յոյսերնին Ռուսիոյ մեծազոր կայսեր, որ թէ Ասիոյ և թէ Եվրոպիոյ մէջ փառաւոր յաղթանակ կանգնեց, վեհանձնութեան և նորին գլխաւոր պաշտօնէին բարձր իմաստութեան վերայ կը դնեն, որոյ հանճարը իբր քառորդ դարէ ի վեր իւր երկրին քաղաքականութիւնը փառաւորապէս կը վարէ: Չեն ուզեր մանրամասնաբար իրենց տառապանքներն նկարագրել, որովհետեւ հարկ չէ այսօր նոր դատախազութիւն մը կազմել իրենց տէրերուն դէմ»:

Այնուհետև ընդգծելով, որ հայերը կրկնապատիկ «հարստահարեալ են, այնպիսի թշնամեանց մէջ լինելով», որոնք ամենուրեք անտարբերությամբ են վերաբերում իրենց ցավերին, պատրիարքը գրում էր. «Այսօր երեսի վրայ իջուած կկարծուի, միայն իրենք կզգան, թէ պիտի պաշտպանուին, սա բարեբախտութիւն ունենալով՝ թէ Ռուսիոյ համար օտար չեն, զի իրենց ազգութենէն մի նշանաւոր հատուած արդէն այս երկրին մէջ բնակին և իրենց Մայր եկեղեցին նորին կայսերական մեծութեան բարձր պաշտպանութիւնը կը վայել է»:

Առաջ քաշելով Արևմտյան Հայաստանի ինքնավարության խնդիրը, պատրիարքը գրում էր, թե «Այս խնդիրը կը կներկայացնենք անոր՝ որ իւր սուրը արեւելեան քրիստոնէից պաշտպանութեան համար մերկացուց. ուրիշ բան չենք խնդրել եթէ ոչ Ռումէլիի մեր կրօնակից եղբարց նմանել. Թուրքիոյ մէջ կայ մաս մը, որ իւր նախնեաց անունը կը կրէ և ուր հայոց մեծամասնութիւնը ժողված է, ուստի վարչութիւն մը հաստատելն շատ դիւրին պիտի լինի, կուզենք որ այնտեղ ազգային կենօք ապրենք ընդ օրինօք տանուտէրական վարչութեան առանց քաղաքական որևէ ամբարտաւանութիւն և արգելիչ կառավարութեան մ' ազդեցութիւն ունենալոյ, և այն տեղ պաշտպանել մեր հայրենիքն ու տաճարները...»:

1878 թ. փետրվարի 13-ին պատրիարք Վարժապետյանը նորից նամակով դիմում է Ալեքսանդր Երկրորդին, գրելով. «Հայերն այս նշանաւոր պարագային մէջ, յորում իրենց կրօնակից եղբարց վիճակն կորոշուի, կը համարձակին ձեր կայսերական մեծութեան զորաւոր պաշտպանութիւնն

հայցել: Նոքա ալ վշտացած են, նոքա ալ կը յուսան: Խառնաղանճ վայրենիներէ շրջապատեալ և Եւրոպայէն հեռի են անկիւն նետուած, իրենց տառապանքներն աւելի անգթաբար կը գործուին, քան թէ միւս քրիստոնէից, առանց իրենց աղաղակներն լսելի լինելոյ: Ինչ բան որ այսօր կը խնդրենք և ինչ բան որ համարձակութիւն առած կը հայցենք ձեր կայսերական մեծութեանէն յանուն նոցա, ուրիշ բան չէ, եթէ ոչ եւրոպական Թուրքիոյ քրիստոնէից վիճակին նմանութիւնն»:

Մատթեոս Իզմիրլյանի անհաջողությունը

1878 թ. փետրվարի 13-ին Ալեքսանդր Երկրորդին ուղարկած աղերսագրի մասին պատրիարք Վարժապետյանը տեղեկացրեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Չորրորդին, խնդրելով, որ նա իր հերթին անձամբ դիմի կայսրին մինչև դեսպանական խորհրդի գումարումը «և շնորհի խնդրել ի նմանէ վասն Հայաստանի...»:

Ներսես Վարժապետյանի նամակն էջմիածին հասցրեց Մատթեոս եպիսկոպոս Իզմիրլյանը: Կ. Պոլսում հայտնի էր, որ Գևորգ կաթողիկոսը դեմ էր Ռուսաստանի օգնության դիմելուն և այս հարցում նրան աջակցում էր Պոլսից էջմիածին տեղափոխված ռուսատյածությամբ աչքի ընկնող Վահրամ եպիսկոպոս Մանկունին: Այս էլ նկատի ունենալով Մ. Իզմիրլյանը նախ որոշեց Մանկունու վրա ներազդել, նրան ուղղված նամակում գրելով. «ժամանակին ըրածը ոչ ոք կրնայ ընել, ժամանակը շատ բան կը փոխէ, պարագաններուն և դեպքերուն պետք է հնազանդինք, մեր հին ընթացքը փոխելու ենք, մեր խորագիտութիւնը և շրջահայեցողութիւնը պահելով դիմելու ենք կայսեր: Այսօր Թուրքիա անոր ոտից ներքև է. մէկ մեծ ու նշանաւոր մասը կորոյս, Ասիական մասին ալ մենք տէր ըլլալու ջանալու ենք. Թուրքիա այդ մասին մնայ ալ, այսուհետև Ռուսիոյ խոնարհ ծառան է: Ամէն պարագայի մէջ Ռուսիոյ պաշտպանութիւնը կը կարօտինք, փութամք միշտ նորա համակրութիւնն ու սէրը գրաւել. փութամք այս անգամ բան մը ըլլալ, կամ գէթ ապագայի նախապատրաստութիւն ընել, հայկական խնդիրն այժմէն հանելով և օր մը, որ շատ չպիտի ուշանայ, երբ Ասիական Թուրքիոյ խնդիրն իրմէ /եթէ այս անգամ չելլէ/ մեր երկրին վրայ մեր բաժնին տէրն ըլլանք»:

Հաղթահարելով ճանապարհի դժվարությունները, վերջապես Մ. Իզմիրլյանը հասավ էջմիածին: Հենց առաջին օրը Մանկունին Իզմիրլյանին հայտնեց, թե կաթողիկոսը հիվանդության պատճառով նրան չի կարող ընդունել:

Ահա, թե ինչ է հայտնում այդ մասին Երևանից Վարդան Եղիազարյանը 1878 թ. մարտի 10-ին Թիֆլիսում գտնվող Գ. Եվանգուլյանին. «Սիրելի Գևորգ. կաթողիկոսն իմանալով Մատթէոս եպիսկոպոսի ուղևորվելը դէ-

պի էջմիածին, պատրաստութիւն էր տեսել հիւանդանալու և նորա գալուն պէս ՍԱՍՏԻԿ ՀԻՎԱՆԴԱՑԵԼ /ընդգծումը Վ. Եղիազարյանինն է- Վ.Պ./, այնպէս որ մինչեւ այս օրս չէ ընդունել նորան և յոյս էլ չկայ, որ ընդունի: Մանկունին առաջարկել է եպիսկոպոսին յայտնել նորան իւր ասելիքն և յանձնել իւր թղթերը, բայց եպիսկոպոսը չէ համաձայնել և վճռել է մնալ էջմիածնում մինչև այս կիրակի, ամսյոս 12-ը, եթէ մինչեւ այդ օրն էլ վեհափառը նորան չընդունեց, նա վերադառնալու է Թիֆլիս:

Թէ ի՞նչ է պատճառն, որ կաթողիկոսն այդ տեսակ է վարվում, դա անհասկանալի է, միմիայն թէ միաբանութիւնն և թէ հասարակութիւնը շատ է գրգռված այդ պատճառով նորա դէմ»:

Կաթողիկոսի վարմունքն անհասկանալի էր: Հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող խնդիրը լուծելու համար Գևորգ Չորրորդ կաթողիկոսն ուղղակի պարտավոր էր ընդունել Կ. Պոլսից եկած պատվիրակ եպիսկոպոսին:

Սակայն Իզմիրլյանը համառ էր և կարողացավ մի կերպ, շրջանցելով Մանկունուն, կաթողիկոսին ուղարկել անձնական գրություն, խնդրելով ընդունել իրեն: Իզմիրլյանն իր գրության մեջ հույս էր հայտնում, թե կաթողիկոսը «մինչև իսկ իր անձնական տկարության ժամանակ հայոց ազգին այս կենաց և մահու խնդրոյն լուծմանն համար կը հաճի ի գործ դնել իւր հայրապետական սրբազան պաշտօնը»:

Կաթողիկոսն ի վերջո զիջեց և համաձայնվեց ընդունել Մ. Իզմիրլյանին: Սակայն տեսակցությունն արդյունք չտվեց: Կաթողիկոսը չհրաժարվեց իր հակառուսական կեցվածքից:

Տեղի ունեցածի մասին Վ. Եղիազարյանը 1878 թ. մարտի 18-ին Գ. Եւանգուլյանին գրել է հետևյալը. «Սիրելի Գևորգ, երբ դու իմ այս նամակը կը ստանաս, Իզմիրլեան եպիսկոպոսն արդէն Թիֆլիսումը կը լինի: Կաթողիկոսն, ինչպէս կիմանաս նորանից, վերջապէս ընդունել է նորան, միմիայն մերժել է նորա առաջարկութիւնը:

Այժմ էջմիածնայ միաբանութիւնն է կամենում կատարել այն, ինչ որ պիտի կատարեր կաթողիկոսը. պատրաստել մի ադրես մեր կայսեր անունը՝ Տաճկաստանի հայերի դրութիւնը բարելաւացնելու մասին: Մինչև անգամ Մակար եպիսկոպոսն էլ է համաձայնվել ստորագրելու ադրեսն, որ կարծիօք պատրաստ է»:

1878 թ. ապրիլի սկզբին Իզմիրլյանը ձեռնունայն վերադարձավ Կ. Պոլիս և ազգային ժողովում պատմեց էջմիածնում իր անհաջողության մասին:

Սերվիչեի նամակը

Կոստանդնուպոլսի առաջադեմ ու լրջախոհ գործիչներն որոշեցին մեկ անգամ էլ դիմել կաթողիկոսին և ներազդել նրա վրա, կոչ անելով փո-

խել իր տրամադրությունը: Կատարելով բոլորի կամքը, Սերվիչեն /Սերովբե Վիչենյան/ 1878 թ. ապրիլի 12-ին Գևորգ Չորրորդ կաթողիկոսին ուղարկեց մի ծավալուն նամակ, որտեղ հատկապես ընդգծվում էր հետևյալը. «... Երբ կը տեսնէինք պուլղարը, յոյնը, պօշնակը /բոսնիացի/, նմանապէս արաբացին ազգայնութեան խնդիր մէջ կը բերեն, մենք, հայք, ի՞նչ պէտք էր որ ընէինք: Տաճկաց հետ միանա՞լ. անցեալը արդէն ապացուցած է, որ ասոնց հետ միանալու համար ուրիշ ճար չկայ, այլ մահմեդականն ըլլայ, այսինքն ազգը ուրանալ: Ահա հայ խնդիրը այսպէս երևան եկաւ. մենք երևան չհանեցինք, պարագաները հանեցին»:

Այնուհետև նշելով, որ նախնիներից ժառանգած ավանդույթները, կրոնը, լեզուն պաշտպանելու վճռականությունը, Սերվիչեն նկատի ունենալով Ռուսաստանին, հարկ էր համարում կաթողիկոսին տեղեկացնել, թե «ճար մը փնթռեցինք յաղթողին դիմելով, յաղթողը քաջ ճանչնալով և յաղթողին ապագային մէջ ունենալիք դիրքը աղէկ գիտնալով: Իրեն դիմեցինք խնդիրքներով, որպես զի մեր ազգը օրինաւոր կացութիւն մը ունենայ: Մենք, ինչպէս որ քաջ գիտեք ոչ թրքանալ և ոչ ալ ռուսանալ գիտենք, հայ ենք և մինչև ի վախճան հայ պիտի մնանք: Հայութեան նպատակին ծառայելու դիտմամբ գործեցինք և պիտի գործենք. թէև արդիւնք ալ ձեռք չբերենք, գոնէ մէկը չի կրնար մեզ ամբաստանել, որ հայութեան պարտքը չկատարեցինք. թէև սխալինք, գոնէ պարտազանց չենք ըլլար»:

Սերվիչեն կաթողիկոսի կասկածանքները փարատելու համար հասկացնում է, որ Ռուսաստանի օգնության դիմելը չի նշանակում, թե «ազգը կը ծախենք» ու հարց է տալիս. «Կը սխալի՞նք արդեօք այս բռնած ընթացքնուս մէջ» և այնուհետև շարունակում. «Աղէկ գիտցէք, որ այսօր թուրքաց կառավարութիւն չկայ. միակ քրդերու հարստահարութիւն կայ հայոց համար. միանգամայն ազգ կազմելու կամ անհետանալու խնդիրը կայ մէջտեղը: Ասանկ պարագային մէջ քրեական յանցանք է ընդ մեզ թէ որ չգործենք»:

Իր նամակի վերջում Սերվիչեն գրում էր, դիմելով կաթողիկոսին. «Դուք, որ մեր լոյսը ըլլալու կոչուած էք, ձեր Աթոռը, որ մեր նախնեաց սրբազան աւանդութեան կեդրոնն է բոլոր ազգայնոց համար, նաև անոնց համար, որ ձեր Աթոռոյն հակառակ կը համարիք, պարտազանց կըլլաք թէ որ մեզ աջակից չըլլաք: Ի՞նչ կը վախէք, մենք մահկանացու ենք. պարտք կատարելու համար մինակ այս աշխարհ եկած ենք, պարտք կատարելով պէտք է կեանքերնիս կնքենք. ահա իմ կարծիքս, իմ սկզբունքս. չեմ կարծեր, որ այս մասին մէկզմէկէ զատուինք»:

Գևորգ կաթողիկոսը Սերվիչեի նամակն էլ մատնեց անուշադրության: Նա այդպես էլ չկարողացավ հասկանալ Ռուսաստանի դերը հայոց ճակատագրում և իր անհեռատես քաղաքականությամբ մեծ վնաս հասցրեց հայ ժողովրդին...

«Դուք պատասխան չտուիք...»

Գևորգ Չորրորդ կաթողիկոսն իր վարքագծով առաջացրել էր մեծ դժգոհություն: Մամուլում երևացին նրան դատապարտող հոդվածներ: Կաթողիկոսը ստանում էր բողոքի բազմաթիվ նամակներ: Բայց նա համառորեն լռում էր:

Որպեսզի պարզ լինի կաթողիկոսին ուղղված բողոքների բովանդակությունն, արժե այստեղ հիշատակել 1878 թ. փետրվարի 15-ին Բաքվից նրան ուղարկված նամակը: Նշելով, «թէ մեծամեծ և փոքրիկ ազգութիւններն աշխատում են որքան հնար է շատ օգուտներ քաղել» պատերազմից հետո ստեղծված վիճակից, բայց «սրտի ցաւով տեսնում ենք, որ ոչ մի տեղ հայի և Հայաստանի անունը չկայ», նամակի հեղինակները դիմելով կաթողիկոսին, գրում էին. «Ձեր օրով աշխարհի մէջ մեծ պատմական իրողութիւն է կատարվում... Արդյոք մի հոգացութիւն, մի նախագիծ ունի՞ք պատրաստած, մի որևիցէ գործնական քայլ արած կամ անելո՞ւ էք այդ մասին: Ռուսաց կայսեր եւ միւս եւրոպական տէրութիւնների առջեւ միջնորդելու և քաջութեամբ պաշտպանելո՞ւ էք Հայկական խնդիրը: Բայց առհասարակ ամենքը կարծում են, որ դուք անհոգ նստած էք և միայն ձեր անձնական հանգստութեան վրայ էք մտածում»:

Այնուհետև հիշեցնելով, որ 1877 թ. ամռանը Բաքու քաղաքի հայ հասարակայնության աղերսագիրը կաթողիկոսը թողել է անհետևանք և դրան ոչ մի նշանակություն չի տվել, նամակի հեղինակները հայտնելով իրենց դժգոհությունը, նշում են. «Դուք պատասխան անգամ չտուիք հասարակութեան, որը երկար խորհելուց յետոյ էր որոշում արել ձեզ դիմելու... Այս տասնամսեայ պատերազմի ժամանակ Ռուսաստանի մեր հոգևորականութիւնը բոլորովին անտարբեր մնաց, ոչինչ չգործեց, երբէք գործնական կերպով չաշխատեց մեր թշուառ եղբայրների ապագայի համար: Կարծում ենք, որ նոքա ամենքը ձեզ էին նայում, ձեր քաղաքականութեանն էին հետևում որ լուռ և անտարբեր նստեցին մինչև այժմ, եթէ ոչ հոգևորականութիւնը կարող էր մեծ գործ գործել, եթէ հետևէր իւր աշխարհական եղբայրների քաղաքականութեանը... Տէրութեան /Ռուսաստանի/ քաղաքականութիւնը ոչ միայն չէր արգելի այլ և ամենայն ուրախութեամբ կօժանդակէր մեզ գործ տեսնելու...»:

Կոմս Լորիս-Մելիքովը

Պատերազմը ավարտվեց: Հաղթանակն ապահոված էր: Սան-Ստեֆանոյում սկսվել էին հաշտության բանակցությունները: Տիրում էր խաղաղություն: Այլևս չկար նախկին լարվածությունը:

Եվ հանկարծ Միխայիլ Տարիելովիչը կոկորդում զգաց սուր ցավ: Սկսվեց ուժեղ հազոց, ինչի մասին նա մոռացել էր պատերազմի ամբողջ ընթացքում: Նա հաճախ մտածում էր, թե պատերազմի ընթացքում հազն ու կոկորդի ցավը գուցե միշտ եղել են, բայց չի զգացել: Ինչևէ, հիվանդությունը գնալով սրվում էր և Լորիս-Մելիքովը դիմեց փոխարքային, խնդրելով երկարաժամկետ արձակուրդ բուժման նպատակով:

Փոխարքան, որն առհասարակ, Լորիս-Մելիքովի ներկայությամբ իրեն մի տեսակ կաշկանդված էր զգում, անմիջապես արձակեց հրամանն, որում համաձայնվելով կորպուսի հրամանատարի խնդրանքին, նշում էր նաև հետևյալը. «Ես վստահ եմ, որ Կովկասյան բանակը ինձ հետ կիսում է խոր ափսոսանք, որ գեներալ-թիկնապահ Լորիս-Մելիքովը մեզ թողնում է, թեև ժամանակավորապես, բայց նրա անունն ընդմիշտ կապված կմնա անցած կամպանիայում գործող կորպուսի զորամասերի քաջարի սխրանքների հետ: Նրան վստահված զորքերն իրենց տարեգրության մեջ փառքի շատ էջեր գրեցին,որոնց մեջ նա 18 ամիսների ընթացքում կիսեց նրանց բաժին հասած հերոսական գործն ու ծանր զրկանքները: Իսկ Արդահանի գրավումն, Ալաջայի բարձունքներում մղված մարտերը, Դևե-Բոյնի ճակատամարտը և պատմության մեջ Կարսի անօրինակ գրոհը առհավետ կապում են ռուսական բանակի հպարտությունը: Իմ սրտի խորքից երախտագիտությունն, իրենց կորպուսի հրամանատարի անխոնջ հոգատարությանն ընտելացած, մարտական ընկերների և զինվորների անկեղծ ռուսական շնորհակալությունը, սերը և հարգանքը թող գեներալ-թիկնապահ Լորիս-Մելիքովին ծառայեն որպես գրավական այն զգացմունքների, որոնցով Կովկասյան բանակը կդիմավորի նրան, երբ վերականգնված առողջությունը թույլ կտա նրան նորից վերադառնալ իր շարքերը»:

Շուտով ստացվեց նաև Ալեքսանդր Երկրորդի հրամանը, որով գեներալ- թիկնապահ Լորիս-Մելիքովին շնորհվում էր ռուսական կայսրության կոմսի տիտղոս: Այդ տիտղոսը տարածվում էր նաև Լորիս-Մելիքովի հաջորդ ժառանգների վրա:

Մեծ էր Լորիս-Մելիքովի զինակիցների ուրախությունն, որ իրենց սիրելի հրամանատարն արժանացել էր այդպիսի բարձր պարգևի և հույս ունեին, թե նա առողջանալուց հետո նորից կվերադառնա Կովկասյան բանակ:

Այցելություն Անիի ավերակներ

1878 թ. ապրիլի կեսերին Լորիս-Մելիքովը հրաժեշտ տվեց Կարսում գտնվող զորքերին և ուղևորվեց դեպի Թիֆլիս:

Պատերազմի ընթացքում նա հնարավորություն չէր ունեցել գնալ Անի: Ուստի այժմ որոշեց անպայման լինել այնտեղ: Շատերն էին ուզում իրենց

սիրելի հրամանատարին ուղեկցել մինչև Ալեքսանդրապոլ: Բայց նա բոլորին մերժեց, մատնացույց անելով թե ճանապարհի դժվարությունները և թե նրանց զբաղվածությունը: Լորիս-Մելիքովը խնդրեց գեներալ Պոպկոյին իրեն ուղեկցել մինչև Անի: 1878 թ. ապրիլի 9-ին զորքերն ու Կարսի բնակիչները ճանապարհեցին կոմս Լորիս-Մելիքովին:

Ճանապարհին կոմսը Կարսի նահանգապետ Պոպկոյին ծանոթացնում էր հայ ժողովրդի պատմությանն, առանձնակի թախիծով հիշում պատմության ընթացքում հայ ժողովրդի տված կորուստները: Երբ հեռվից երևացին Անիի ավերակները, կոմսը դիմելով նահանգապետին ասաց.

- Գիտես, հոգյակս, հին խոսք է՝ «Հռոմում լինել և պապին չտեսնել, ամոթ է»: Բայց Կարսում կամ Ալեքսանդրապոլում լինել ու Անին չտեսնել, ավելի մեծ ամոթ է ոչ միայն հայ մարդու համար, այլև ամեն մի զարգացած խելք ու սիրտ ունեցող մարդու համար:

Շուտով երևացին Անիի աշտարակները: Ձախ կողմից, հեռվում երևում էր Ալաջա սարը, իսկ աջ կողմից՝ սարերի ետևից արևի տակ փայլում էր Արարատի ծույնապատ գագաթը: Դիմացից ամբողջ հորիզոնը բռնել էր Արագած լեռը:

Լորիս-Մելիքովն, որն Անիում եղել էր 1853-1856 թթ. պատերազմի ժամանակ, այժմ, իբրև հին ծանոթ, Կարսի նահանգապետի էքսկուրսավարն էր դարձել: Նրանք անցան ավերակների միջով: Եվ Լորիս-Մելիքովը բացատրում էր՝ սա միջնաբերդն է եղել, սրանք արքունական շենքերի ու պալատների մնացորդներն են:

- Տեսնո՞ւմ ես, հոգյակս, բոլոր շինությունների քարերը սեպաձև են, որոնց մեջ կապող ոչ մի նյութ չի լցված: Եվ առանց այդ նյութի, կամարները շատ ամուր են մնացել հենց սեպի ձև ունենալու շնորհիվ:

Կոմսը հիշեցրեց, որ, իմիջիայլոց, Փարիզի հռչակավոր կամուրջները կառուցվել են նույն եղանակով, որն իմացել են հայ ճարտարապետները հարյուրավոր տարիներ առաջ:

- Անիի ավերակները, - շարունակում էր բացատրել Լորիս-Մելիքովը, - այսօր վկա են այն բանի, որ հայերը աշխատասեր ու կառուցող ժողովուրդ են, որ նրանք ընդունակ ազգ են: Այս ավերակներն են, որ ցույց են տալիս, թե հայը գետնափորում չի ապրել, այլ շինարար ու կառուցող է եղել, երբ ունեցել է ազատություն, աշխատանքի ապահովություն:

Գնալով Կարսի նահանգապետի հետաքրքրությունն ավելի էր բորբոքվում: Նա առաջին անգամ էր տեսնում այդ ամենը և իր զարմանքն արտահայտեց, ասելով.

- Ավերակ են, բայց գեղեցիկ:

Պոպկոյին հետաքրքրեց, թե երևացող ավերակների կույտերից զգացվում է, որ դրանք երկրաշարժի հետևանք չեն եղել ու հարցրեց, թե ի՞նչն է դրանց ավերածության պատճառը:



Ռազմական գործողությունների սխեման

- Այո, ճիշտ նկատեցիր, հոգյակս, դրանք թուրքական կառավարության ձեռքի գործն են: Առաջին անգամ, երբ եղա այստեղ, ինձ համոզում էին, թե Անիի շինությունները քանդում են տեղաբնիկները, որպեսզի պատրաստի տաշած քարից իրենց համար տուն կառուցեն: Բայց դա բացահայտ սուտ է:

Լորիս-Մելիքովը նահանգապետին տարավ միջնաբերդի բակ և ցույց տվեց այնտեղ թափված մեծ քանակությամբ տաշված քարեր:

- Եթե, - տեղաբնիկներին տաշած քար էր պետք, ապա այստեղից հեշտությամբ կտաներն դրանք և ոչ թե կքանդեին ամուր կանգնած պատերը:

Ահա, այս եղանակով էլ, բացատրում էր Լորիս-Մելիքովը, կանգուն պատերի քանդումը իրականացվում է թուրքական կառավարության կողմից:

- Բայց ի՞նչ իմաստ ունի այդ բարբարոսությունը, - վրդովված հարցրեց Պոպկոն:

- Թուրքական պետությունը մի նպատակ է ունեցել՝ քանդել, ավերել Անին և երկրի երեսից վերացնել այն ամենն, ինչ ստեղծել է հայ մարդը, ինչ հիշեցնում է նրա գոյությունը...

Երեկոն մոտենում էր: Հարկավոր էր լուսով հասնել Ալեքսանդրապոլ: Լորիս-Մելիքովը ջերմորեն հրաժեշտ տվեց իրեն ուղեկցող Կարսի նահանգապետ, իր հավատարիմ զինակից Պոպկոյին ու բռնեց Ալեքսանդրապոլի ճանապարհը:

Կարս վերադարձած Պոպկոյի մտքից չէր հեռանում Անիի ավերակների պատկերը: Եվ Լորիս-Մելիքովին տված խոստման հաստձայն, նա 1878 թ. մայիսի 16-ին արձակեց իր 32-րդ հրամանն, որտեղ, մասնավորապես, ասվում էր հետևյալը. «Իր սրբազան պարտքն է համարում ամեն միջոց գործադրելու, որպեսզի Հայաստանի մայր քաղաքի սրբազան մնացորդները անխախտ պահպանվեն գեթ այսուհետև սրբապիղծ ձեռքերից, որոնք համարձակվել են մինչև այժմ դրանդ քանդել ու տանել քարերը...»:

Այնուհետև նույն հրամանով նահանգապետը Ղոշավանքի վանահայր Ստեփանոս Շիրակունու վրա էր դնում Անիի հսկողությունը, ընդգծելով, եթե նա «կնկատի որևէ հափշտակություն Անիի ավերակներից, իսկույն իմաց տա Շորագյալի գավառապետին, որն անհապաղ կանի կարևոր նշանագրությունը հանցավորը պատժվելու և ավերակները պաշտպան համար»:

Մի քանի ամիս անց, գեներալ Պոպկոն ձեռնարկեց Անիի մայր տաճարի վերանորոգումն, այդ նպատակով հայտարարելով հանգանակության հավաքում:

Գեներալ Պոպկոն իրեն անսահման երջանիկ էր զգում, երբ ի պատասխան իր ձեռնարկումների մասին ուղարկած նամակի, ստացավ Լորիս-Մելիքովի սրտալի շնորհակալությունն ու երախտագիտությունը...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

Թիֆլիսը դիմավորում է Կարսի հերոսին

Լորիս-Մելիքովի վերադարձի լուրն արագորեն տարածվեց Թիֆլիսում: Այստեղ լույս տեսնող բոլոր թերթերը հաղորդումներ տպագրելով այդ մասին, առանձնապես ընդգծում էին կոմսի հիվանդ լինելը: «Մշակ» թերթը, օրինակ, հայտնում էր, թե «գեներալը տկար է և կամենում է հանգստանալ պատերազմի մեջ կրած սովորական նեղություններից և տարած հոգսերից»:

Լորիս-Մելիքովը Թիֆլիս էր հասնելու 1878 թ. ապրիլի 15-ի երեկոյան ժամը 7-ին: Այդ օրը, ճաշից հետո, մարդկանց բազմությունը սկսեց շարժվել դեպի Օրթաճալա: Մեյդանից մինչև քաղաքի սահմանը ձգվող փողոցները զարդարված էին դրոշակներով: Կորպուսի փառապանծ հերոսին դիմավորելու համար հին մաքսատան մոտ հավաքվել էին քաղաքի ներկայացուցիչները, բազմաթիվ զինվորականներ փոխարքայի օգնական իշխան Սվյատոպոլկ-Միրսկու գլխավորությամբ:

Շուտով երևաց Լորիս-Մելիքովի կառքը: Հասնելով հավաքվածներին, գեներալն իջավ կառքից: Առաջինը նրան մոտեցավ քաղաքագլուխը, որը գրկախառնվեց Լորիս-Մելիքովի հետ և ոգևորված խոսքով նրան շնորհավորեց պատերազմում տարած փայլուն հաղթանակի համար:

Ճանապարհից հոգնած Լորիս-Մելիքովը շնորհակալություն հայտնեց այդքան սրտալի դիմավորման համար և իր խոսքն ավարտեց հետևյալ խոսքով.

- Բոլորիդ ցանկանում եմ այն բախտավորությունն, ինչը այս րոպեին զգում եմ ես:

Հավաքված բազմության կեցցեների ուղեկցությամբ Լորիս-Մելիքովը նստեց կառք և անթիվ հեծյալ ու հետևակ մարդկանց ուղեկցությամբ շարժվեց դեպի իր տունն, որը գտնվում էր Գոլովինսկի պողոտայի վրա: Այստեղ նրան սպասում էին իշխան Գ. Դ. Օրբելիանին, փոխարքայի տեղակալ Դ. Ս. Ստարոսելսկին և շատ այլ բարձրաստիճան պաշտոնյաներ: Լորիս-Մելիքովը բոլորին մոտենալով, շնորհակալություն հայտնեց նրանց՝ ցուցաբերած ուշադրության համար, հետաքրքրվեց նրանց որպիսությամբ, հետո ներողություն խնդրելով ասաց.

- Ցանկանում եմ մորս տեսնել...

«Լա՞վ չեմ արել...»

Լորիս-Մելիքովին փոխարինած Հ. Լազարևը 1878 թ. մայիսի 31-ին հասավ Էրզրում: Հաղորդելով այդ մասին «Մշակը» գրում էր. «Նրա գալը լսելով էրզրումի մեծաթիվ բնակչությունը տները և խանութները փակած, ալիքների պես պատել էր ու հեղեղել այն ճանապարհը, որով պետք է անցներ մեծահռչակ զորապետը:

...Քաղաքի դռան առջև նրան սպասում էին նշանավոր քաղաքացիք նահանգապետ գեներալ Դուխովսկայի առաջնորդությամբ, իսկ քիչ հեռու նրանց ետև շարված էին 39-րդ դիվիզիայի գնդերը: Գնդերի ստույգայցից հետո տրվեց ճաշկերույթ, որի ժամանակ Լազարևն ասաց. «Պարոններ, դարձյալ կրկնեմ, որ մենք հազար անգամ պարտական ենք այն քաջասիրտ հերոս զինվորներին մեր այժմ էրզրում գտնվելով, դուք այստեղ հավաքվածներդ նրանց արժանավոր առաջնորդներն եք, իսկ ես ձեր ընդհանուր ուղեցույցը, քաջահույս եմ, որ դուք իմ վրա վստահ լինեք, իսկ ես ձեր վրա, մեր գործը այն ժամանակ այնպես հաջող կանցնի, ինչպես անցավ մեր միասին եղած ժամանակը, դեհ, թույլ տվեք, պարոններ, խմել այս բաժակը ձեր և ձեր ստորադրյալների կենացը, որոնց հզոր բազուկը տնկեց մեր հաղթական դրոշը Հայաստանի բարձրության վրա»:

Էրզրումում շուտով լուրեր հասան ռուսական զորքերի հեռանալու մասին: 1878 թ. սեպտեմբերի սկզբին Լազարևը կոչով դիմեց հայ բնակչությանը: «Լուր հասավ մեզ, ասվում էր այդ կոչում, որ քրիստոնեա բնակիչք Կարնոյ և շրջակայքից, ուսկից այս մօտերս ըստ դաշնագրութեան, որ ի մէջ ռուսաց և օսմանեան պետութեանց մէկնելու է մեր զօրքը, անհանգստութեան մէջ են իրանց ապագայ վիճակի համար:

Վստահ եղեք, որ այսուհետև անդորր և հանգիստ կեանք պիտի վայելեք առանց գաղթելոյ տեղերէդ, ուր ձեր նախնեաց գերեզմաններն են և ձեր գերդաստանները կը բնակին, մի հեռանայք ձեր երկրեն, ուսկից ձեր երջանկութիւնը կախեալ է, գիտցեք, որ գաղթականութեան հետևանքները պէսպէս զրկանք և թշվառութիւն են, մանավանդ մեր սահմանները գաղթելը, ուր երկիրները ձեզ անծանոթ լինելով անորոշ և մութ ապագայի դիմելու եք...»:

Լազարևի կոչը որոշ չափով թուլացրեց տագնապը, բայց ստացվող լուրերը համառորեն պնդում էին ռուսների հեռանալու մասին:

Իր ժամանակին Լորիս-Մելիքովը գիտեր, որ էրզրումից ու գավառից ռուսական զորքերի հեռանալը ծանր հետևանքներ կունենա տեղի հայ բնակչության համար: Գեներալը գտնում էր, որ հատկապես կարևոր է գավառի հայկական գյուղերի բնակիչների անվտանգության ապահովումը: Դրա համար կար երկու միջոց: Նրանք պետք է վերաբնակվեին էրզրում քաղաքում: Բայց դա համարյա դժվար խնդիր էր, քանի որ էրզրումում այդքան շատ ազատ տներ չկային: Մնում էր երկրորդ միջոցը՝ էրզրումի գավառի հատկապես փոքրաթիվ գյուղերի բնակիչներին տեղափոխել Կարսի մարզ, որն արդեն անցել էր Ռուսաստանին: Այստեղից հեռացել էին թուրք բնակիչների մեծ մասը և ազատված տները կարող էին զբաղեցնել վերաբնակյալ հայերը: Այս ամենն էլ հաշվի առնելով Լորիս-Մելիքովը ձեռք էր բերել կառավարության համաձայնությունը:

Բայց ահա, զբաղեցնելով Լորիս-Մելիքովի տեղը, Լազարևը շատ բան փոխեց, որպեսզի ցույց տար նրանից իր առավելությունը: Չնայած Լորիս-Մելիքովի հավասակշռված վերաբերմունքին, որ նա մշտապես արտահայտում էր Իվան Դավիդովիչ Լազարևի նկատմամբ, ամեն կերպ անկեղծորեն ընդգծում էր իր համակրանքը, բայց վերջինս կարծես թե չէր նկատում և շարունակում էր կոմսին վերաբերվել ոչ հարգալից կերպով և առիթը բաց չէր թողնում իր անձն առաջ մղելու համար: Ահա, բազմաթիվ փաստերից մեկը, որը մեզ է հասցրել ազգային գործիչ Գրիգոր Նիկողոսյանը «Արաքս» ամսագրի 1889 թ. դեկտեմբերյան համարում տպագրված հուշերի մեջ:

Երբ Գ. Նիկողոսյանն էրզրումում ներս է մտնում Լազարևի աշխատասենյակ, վերջինս նրան մի հեռագիր է տալիս կարդալու:

- Լա՞վ չեմ արել, - հարցնում է ինքնագոհ Լազարևը:

Լսելով Գ. Նիկողոսյանի հավանություն արտահայտող խոսքը, Լազարևն ակնարկելով Լորիս-Մելիքովին, ասում է.

- Ինչ անեմ, տեսայ, որ մեր հայի ասածը հավանել է թագավորը. ինչ որ հայեր կան Հայաստան, պիտի վեր կենան քոչին Աստուած գիտէ, թէ ո՞ւր. հենց որ նշանակեցին ինձ նորա տեղը, շատ երկար խոսեցի այդ մասին Միխայիլ Նիկոլաևիչի հետ. նա ասեց,թէ էլ ուշ է, ոչինչ չի կարելի անել. այն ժամանակ սկսեցի խնդրել, որ գոնե Շիրակայ գաւառը յատկացնեն քոչող հայերի համար...

Այնուհետև, Լազարևը գովելով փոխարքային, նշում է, որ վերջինիս խորհուրդով դիմել է թագավորին և Պետերբուրգից ստացել է հետևյալ պատասխանը. «Թագավոր կայսրը հավանություն է տվել ձեր ներկայացրած նախագծին, գործեք, ինչպես ուզում եք»:

Գ. Նիկողոսյանը հայտնելով իր անհանգստությունը, նկատում է, թե էրզրումի հայերը վախենում են, որ իրենց կկոտորեն ռուսական զորքերի հեռանալուց հետո:

- Ո՞վ կարող է նրանց դիպչել, միթե՞ ես մեռած եմ: Ոչ ոք չի համարձակվիլ մեկ հայի քիթը արիւնացնել, հոգիները կհանեմ...

Բայց ի՞նչ կարող էր անել խրոխտ Լազարևը, երբ պայմանագրով էրզրումը թողնվում էր Թուրքիային: Արդյունքում ձախողվեց հեռատես Լորիս-Մելիքովի մտադրությունը...

Հանդիպում Ալեքսանդր Երկրորդի հետ

Լորիս-Մելիքովը Թիֆլիսում մնաց երկու օր, վայելեց մոր կարոտը, այցելեց բարեկամներին, պսակ դրեց Շելկովնիկովի գերեզմանին և Նինա Իվանովնայի հետ շտապեց մեկնել Պետերբուրգ: Նրա նպատակն էր մինչև արտասահման բուժման մեկնելը, հանդիպումներ ունենալ Ռուսաստանի բարձրաստիճան պաշտոնյաներին, վաղեմի ընկերներին և նրանց միջոցով օգտակար լինել իր հայրենիքի ճակատագրին:

Լորիս-Մելիքովն իր վաղեմի ընկեր Կարապետ Եզյանի միջոցով հանդիպեց Պետերբուրգ եկած Խորեն Նար-պեյին, որը նպատակ ուներ Ռուսաստանի թագավոր կայսրին հանձնել Հայաստանում նախատեսվող վերանորոգությունների ծրագիրը: Հանգամանորեն քննարկելով այդ ծրագիրը Լորիս-Մելիքովն ու Կարապետ Եզյանը կատարեցին մի շարք ճշտումներ, ավելի հստակեցնելով այն: Նրանք առանձնապես կարևորեցին հետևյալը. ռուսական զորքերը չպետք է հեռանան գրաված տարածքներից, քանի դեռ չի իրագործվելու Հայաստանի ինքնավարությունը:

Նար-պեյի բերած ծրագիրը հետևյալ հարցերն էր դնում.

«Ա. Հայաստանը պիտի ունենայ ընդհանուր կառավարիչ, անպատճառ հայ-լուսավորչական, որին պիտի ընտրէ սուլթանը ռուսական ցարի հաճութեամբ: Կառավարիչը պիտի կոչուի մարզպան և վալի, պիտի ունենա «միւշիրի» աստիճան:

Բ. Հայաստանի նահանգապետները և գաւառապետները նոյնպէս լուսավորչական պիտի լինեն, բայց սրանք պիտի ընտրուեն Հայաստանի երեսփոխանական ժողովից և վավերացուեն Բ. Դռնից:

Գ. Երկրի կարգապահութիւնը հայոց ձեռք պիտի լինի. ոստիկանութիւնը հայերից պիտի կազմուի:

Դ. Դատարանները շէրիաթից ազատ պիտի լինեն և պիտի գտնուեն հայ դատավորների նախագահութեան տակ:

Ե. Քուրդ արտօնեալների / չօրբաջի, դէրէբէի / արտոնությունների ջնջումը:

Զ. Տուրքերի նոր և արդար բաշխում:

Է. Վաքըֆի / մահմեդական հոգևորական կալուածք / բարեկարգութիւն. առհասարակ կալուածական օրէնքի վերաքննութիւն:

Ը. Թուրքերի զինաթափում Հայաստանում:

Թ. Հայաստանի համար վարչական նոր կանոնադրութիւն, որը պիտի վավերացնէ սուլթանը՝ Ռուսաստանի հաւանութեամբ:

Ժ. Ջեյթունի հնադարեան ինքնավարութեան երաշխավորումը»:

Փորձված Լորիս-Մելիքովը խորհուրդ տվեց ամենից առաջ հանդիպել արտաքին գործերի նախարար Գորչակովին և այդ ժամանակ Պետերբուրգում գտնվող դեսպան Իգնատևին: Հենց նույն օրն էլ Լորիս-Մելիքովի միջամտությամբ Նար-պեյին ընդունեց Գորչակովը: Իսկ Իգնատևի հետ հանդիպումը, որին Նար-պեյը լավ ծանոթ էր, հանդիպումը կայացավ երեկոյան, Կարապետ Եզյանի տանը:

Այս հանդիպումներից հետո, Լորիս-Մելիքովը պատրաստակամություն հայտնեց միջնորդել ցարի առջև Նար-պեյին ընդունելու մասին:

Գոյություն ունեցող կարգի համաձայն գեներալ-թիկնապահները մայրաքաղաքում լինելու ժամանակ պարտադիր պետք է ներկայանային ցարին և հերթապահեին պալատում:

Իսկ Կարսի հերոս կոմս Լորիս-Մելիքովին սպասվում էր հատուկ հրավեր: Ալեքսանդր Երկրորդ ցարն ընդառաջ գալով, Լորիս-Մելիքովին դիմավորեց իր ընդարձակ առանձնասենյակի կենտրոնում: Թագավորը շնորհակալություն հայտնեց մատուցած ծառայությունների համար և հետաքրքրվեց, թե կոմսն ինչ կարիք ունի, ինչպիսին է նրա առողջությունը:

Մոտ մեկ ժամ տևեց ցարի ու Լորիս-Մելիքովի զրույցը: Ալեքսանդր Երկրորդին հետաքրքրում էր այն ամենն, ինչ վերաբերում էր Կովկասին: Կոմսը տալիս էր սպառիչ պատասխան, դրսևորելով իր գիտելիքները, մոտեցումներն առանձին պրոբլեմների վերաբերյալ:

Կոմսը ցարին հայտնեց, որ Թուրքահայաստանի հայության անունից Պետերբուրգ է եկել նրանց լիազոր պատվիրակը և խնդրեց ընդունել:

- Իսկ ո՞ւմ հետ է տեսակցել այդ պատվիրակը, - հարցրեց ցարը:

Լսելով Լորիս-Մելիքովի պատասխանը, ցարը համաձայնվեց ընդունել հայոց պատվիրակին:

Ալեքսանդր Երկրորդ ցարը ընդունում է Նար-պեյին

1878 թ. ապրիլի 20-ին Նար-պեյին հանդիսավորությամբ ուղեկցեցին Ձմեռային պալատում գտնվող թագավոր կայսրի առանձնասենյակ: Թեև ընդունարանում սպասողները քիչ չէին, Նար-պեյին նրա թարգմանիչ Կարապետ Եզյանի հետ անմիջապես ներս հրավիրվեցին:

Ալեքսանդր Երկրորդն ընդառաջ ելնելով Նար-պեյին, ասաց.

- Գիտեմ ձեր մասին և ուրախ եմ այսօրվա հանդիպման համար:

Նար-պեյը չհասցրեց պատասխանել, քանի որ ցարը շարունակեց իր խոսքը.

- Հիշում եմ ձեր ուղերձները և եթե քաղաքական հանգամանքները ներեն, կանեմ այնպես, որ ապագայում հայ ժողովուրդը գոհ մնա:

Ալեքսանդր Երկրորդը նստեց իր բազկաթոռին և Նար-պեյին հրավիրեց նստել իր դիմացի աթոռին:

- Սրբազան, ի՞նչ եք մտածում Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի կատարումն ապահովելու մասին, - հարցրեց ցարը:

Պատասխանելով ցարի հարցին, Նար-պեյն ասաց.

- Բազմիցս պատրեալ ի տաճկաց, չկարեմք այլ ևս յուսալ ի խաբուպատիր խօստմանս նոցա. թող զի՝ և եթէ կամիցին իսկ չկարասցեն զսպել զքիւրդս և զայլազգի վոհմակս բարբարոսաց, բնակելոց ի Հայաստան:

Նար-պեյը դադար առավ և երբ Կ. Եզյանն ավարտեց թարգմանելը, շարունակեց.

- Թէ չիք մեզ այլօրինակ զերծանիլ ի հարստահարութեանց, բայց եթէ պաշտպանութեամբ Ռուսիոյ և յերկարացմամբ զինուորական գրաւման, մինչև հաստատեսցի ի Հայաստան ինքնավարական իմն վարչութիւն պէս զուսակ Լիբանանի:

Խոսքն ավարտելով Նար-պեյը տեղից վեր կացավ, խոնհարվեց ու Ալեքսանդր Երկրորդին հանձնեց Հայաստանի վերաբերյալ իր ծրագիրը: Ցարը վերցրեց այն և մինչև վերջ կարդալով, նկատեց, որ հավանում է ներկայացված ծրագիրը:

- Աղոթեք Աստծուն, - ասաց նա, - որ ինձ օգնի ձեր ցանկությունը կատարելու համար:

Նար-պեյը հիշեցրեց, որ պատերազմի ժամանակ հայ ազգը օգնել է իր ձեռքում քրիստոնեության ազատարար դրոշը պահող Ռուսաստանի հզոր թագավորին:

- Գովելի էր ձեր այդ քաջությունը, - համաձայնվեց ցարը և շարունակեց, - պատերազմի ժամանակ հայ զորահրամանատարների ցուցաբերած հավատարմությունից ու քաջությունից շատ գոհ եմ:

Այնուհետև Նար-պեյը ցարին խնդրում է նպաստել, որպեսզի «առաքելական Աթոռոյ մերոյ տարածել զլուսարձակ և զփրկաւէտ ազդեցութիւն իւր ի վերայ տաճկաստանեաց Հայոցս»:

Ցարը հետաքրքրվեց, թե ի՞նչ է խանգարում դրան: Նար-պեյը հայտնեց, որ Բ. Դուռն է ընդդիմանում և խնդրեց լուծել այդ կենսական խնդիրը «ի բարգաւաճանս եկեղեցւոյ մերոյ»:

Ալեքսանդր Երկրորդ ցարի մոտ ընդունելության մասին իր նկարագրության վերջում Նար-պեյը գրում է. «Ներեսցէ ինձ վեհափառ տէրդ, - ասացի, - զի ստրջացայ աւետել համազգենցս զսիրալիր համակրանս և զխոստմունս զոր բախտ եղև ինձ լսել օգոստափառ շրթանց ձերոյ»: «Ասացէք համազգեացդ զի ես սիրեմ զազգն հայոց», պատասխանի ետ կայսրն: Եվ մինչև խոնարհէաք միմիանց, յափշտակեցի զձեռն նորա և համբուրելով գոչեցի. «Օծեալդ Աստուծոյ, թոյլ տուր զի յանուն չորս միլիոն տառապեալ հայոց համբուրեցից զաջն զայն, որ տայ փրկութիւն Հայաստանի»:

«Այո, ունիցիք դուք միշտ զիմ համակրութիւն, վստահ լերուք յիմ վերայ»: Այս եղեն վերջին բանք ինքնակալին, և ես մեկնեցայ արտասուա-

գին խնդութեամբ, խնդրելով ի Տեառնէ և բարեմաղթական բանս ինչ ասելով վասն կենաց նորա և օգոստափառ ընտանեացն և զաւակացն»:

Խորէն Նար-պեյի պատարագը

1878 թ. ապրիլի 23-ի կիրակի օրը Պետերբուրգի հայոց եկեղեցում մատուցվեց հոգեհանգստյան պատարագ այն քաջ զինվորների համար, որոնք իրենց կյանքը զոհել էին Կովկասյան ռազմաճակատում:

Պատարագին ներկա էր Լորիս-Մելիքովը շրջապատված բարձրաստիճան պալատականներով ու ցարական նախարարներով: Եկեղեցում, հայերի հետ կողք-կողքի աղոթում էին շատ ռուս մարդիկ Կովկասյան ռազմաճակատում զոհված իրենց հարազատների համար:

Պատարագը մատուցեց Խորեն արքեպիսկոպոս Նար-պեյը, որը պատմելով ցարի հետ հանդիպման մասին, ասաց.

- Ռուսաստանի թագավոր կայսրը բարեհաճ վերաբերմունք դրսևորեց թուրքահայոց բազմաչարչար ազգի նկատմամբ:

Ռուսական «Գոլոս» թերթը տպագրել է պատարագի ժամանակ Նար-պեյի խոսքը, որն արտատպվել է թարգմանաբար «Մեղու Հայաստանի» էջերում: «Մեր արտասուքերը, - ասել է Նար-պեյը, - թափվում են ի յիշատակ այն երևելի զինուորների, որոնք ոռոգեցին իւրեանց արիւնով Ասիական Տաճկաստանի սրբազան դաշտերը, որ մեր սրտերը պահպանում են նոցա անուններ կրոնական երախտագիտութեամբ, որ մեր շրթունքները արտասանում են նրանց խորին զգացմունքով:

Դուք, մանաւանդ արժանի փառաց զորականներ Շելկովնիկեանց և Յովհաննես Լորիս-Մելիքեանց, ձեր յիշատակը, մեզ համար յաւիտեան սուրբ կլինի: Ձեր երիտասարդ գլուխները զարդարած փառաւոր յաղթութեանց պսակով, աւաղ, վաղաժամ հանգչում են Ասիական Տաճկաստանի դաշտերի վերյա, որոնց համար դուք երևակայում էիք ձեռք բերել ազատութիւն նորա ճնշող թշնամիների լուծից:

Ձեր թափած արիւնը վրեժխնդրութիւն կմաղթէ Ամենաբարձրեալի առաջ և ձեր հայրենիքը կարող է ձեզ տալ յաւիտենական երախտագիտութիւն ձեր փառաւոր անունները մտցնելով իւր նահատակների անուանց շարքը, որովհետև դուք նորա համար զոհեցիք ձեր ապագայն և ձեր կեանքն, որ այնքան թանգ է ձեր ընտանիքների համար, այնքան ծանրագին ձեր հայրենիքի համար: Միշտ ձեր գերեզմանները ծաղիկներով կզարդարին ձեր հայրենակիցների ձեռքերեն և արտասուքներով կոռոգեն...

Լալով մեր կորուստները, գոնե մենք մեզ պետք է մխիթարենք նորանով, ինչ որ մեզ մնայ: Այո, շնորհիվ մեծ հուանավորութեան նորին մեծութեան, բարեհաճութեան մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչի և զինվորական նախարար պ. Միլիւտինի, հայերը բաղդ ունեցան բոլոր աշխարհի

առաջ հանդես բերելու ներկայ պատերազմում իւր զինուորական հանճարը: Նշանաւոր զորականները Լազարեանց, Տեր-Ղուկասեանց և Ալխազեանց ցոյց տուեցին իւրանց քաջութեամբ, որ Մադաթեանցները, Արղութեանցները, Բեհբութեանցները ունին իւրեանց արքունի յաջորդները կայսերական զօրքերում, նրանցից բաւական էր մէկը, որ տաներ փառաւոր և երեւելի յաղթանակներ թշնամու դեմ:

Եվ դուք, ով մեծ զօրապէտ, որ այսօր եկել եք այստեղ մեզ հետ աղոթելու այն քաջերի համար, որոնց այնպէս փառաւոր կերպով հրամայում էիք, դուք, որ այսօր խառնում եք ձեր արտասուքները մերերի հետ ձեր զինակից ընկերների համար, որոնք այնպէս փառաւոր կերպով կատարեցին իրենց պարտականութիւնները շնորհիվ ձեր օրինակի և հանճարի-օրինեալ լինիք:

Ղարսի նվաճող, զորավար յաղթող փաղանգների, դուք, որ բոլոր աշխարհի զարմանքը շարժեցիք, արժանի եղաք ստանալու անսովոր վարձատրութիւն ձեր քաջութեան համար, որ պակաս հազվագիւտ չէր: Թագաւոր կայսրը բարեհաճեցաւ պսակել ձեր հաւատարիմ հպատակական ծառայութիւնները կոմսական տիտղոսով, որ կյաւերժացնէ ձեր յիշատակը ձեր սերնդի մեջ և կոգևորէ նորան ձեր շաւղով ընթանալու:

Հայերը ուրախանում են ի բոլոր սրտէ և իւր պատգամաւորի բերնով շնորհակալութիւն է անում նորին կայսերական մեծութեան այս պատուոյ նշանի համար, որ ցոյց է տրուած նոցա արժանաւորագոյն որդուց մէկին, նոքա կդասեն ձեր անունն իւր նախնի դիւցազների անուանց շարքում, տալով ձեզ «Քաջ» անունը, այս այն անունն է, նա տուել է միայն Վարդանին և Վահանին՝ հայրենեաց և կրօնի պաշտպաններին: Քաջդ Լորիս-Մելիքով, թող օրինեալ լինի սուրդ, թող նա փառաւորվի միշտ ի պաշտպանութիւն սուրբ գործոյ, որ նոյնպէս փառաւորեց մեծահոգութիւնը քրիստոնէիդ Ազատչի, որ կպսակէ իւր ժամանակին հայերի յոյսերը, շնորհելով Տաճկահայաստանին ցանկալի ազատութիւնը»:

«Մեր զորքերը պետք է գրավեին Կոստանդնուպոլիսը...»

Պետերբուրգում եղած օրերին Լորիս-Մելիքովը մի քանի կարևոր հանդիպումներ ունեցավ Գորչակովի, Միլյուտինի և այլոց հետ: Հանդիպեց նաև այդ ժամանակ Պետերբուրգ եկած Անգլիայում Ռուսաստանի դեսպան Պ. Ա. Շուվալովի հետ:

Լորիս-Մելիքովն իր ուսերի վրա էր տարել Կովկասյան ռազմաճակատի ամբողջ ծանրությունը, զգում էր պատասխանատվություն մարդկային կորուստների համար: Բայց և միաժամանակ հպարտանում տարած հաղթանակով և նրան հետաքրքրում էր միայն մեկ հարց՝ որքանով էր

պատրաստ ռուսական դիվանագիտությունը պատերազմում տարած հաղթանակն ամրապնդելու համար:

Շուվալովը խուսափում էր Լորիս-Մելիքովի հարցերին ուղղակի պատասխանելուց, բայց ի վերջո ինչ որ չափով տեղի տվեց, կոմսին հասկացնելով, որ իրենց զրույցը կկրի կոնֆիդենցյալ բնույթ:

- Չնայած, - ասաց նա, - մենք պատերազմի ընթացքում հասանք փայլուն հաջողությունների, մեր ազգային ձգտումները չբավարարվեցին:

- Բայց մենք, Պյոտր Ալեքսանդրովիչ, ռազմաճակատում արեցինք ամեն ինչ:

- Այո, Միխայիլ Տարիելովիչ, - ընդհատեց Շուվալովը, -արեցինք ամեն ինչ, նույնիսկ անհնարինը: Գիտե՞ք, Լոնդոնում համոզված էին, որ ռուսական զորքերին, որոնց հրամանատարը դուք էիք, չի հաջողվի գրավել անգլիական ինժեներների կողմից կառուցված Կարսի ամրությունները: Բայց դուք արեցիք անհնարինը: Գոհունակությամբ նշեմ, որ անգլիացիներն ապշել էին և չէին թաքցնում իրենց հիասթափությունը:

- Հենց դրա համար էլ, - շարունակեց իր ընդհատված խոսքը Լորիս-Մելիքովը, -մենք, պատերազմի անմիջական մասնակիցներս ուզում ենք, որ մեր հաղթանակն ու կրած բազում զրկանքներն արժանիորեն հատուցվեն:

- Ահ, սիրելի կոմս, - պատասխանեց դեսպանը, - դրա համար հարկավոր էր միայն մի բան՝ մեր զորքերը պետք է գրավեին Կոստանդնուպոլիսը: Չգրավեցինք, որովհետև գլխավոր հրամանատար, մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչն ոչ միայն չհամարձակվեց, այլև հավատաց, թե Կոստանդնուպոլսի գրավումը հնարավոր չէ: Իսկ հիմա մտադրություն կա միապետի եղբոր վրայից հանել այդ քայլի պատասխանատվությունը և ամեն ինչ բարդել դիվանագիտության վրա:

Շուվալովի բերած փաստարկն, իհարկե, համոզեցուցիչ էր, որովհետև ինքն էլ Կովկասյան ռազմաճակատում էր վայելել միապետի մյուս եղբոր՝ Միխայիլ Նիկոլաևիչի անվճռականության դառը պտուղները: Եվ երբ այդ մասին Լորիս-Մելիքովը պատմեց, Շուվալովն ասաց.

- Այստեղ, Պետերբուրգում, մի երկու օր առաջ հանդիպել եմ երկու գլխավոր հրամանատարներին: Նրանք ինձ պարտադրանքով խնդրում էին անել ամեն հնարավորն, որպեսզի կանխվի պատերազմի շարունակումն, որն ըստ նրանց համոզմունքի, կարող է փչացնել արդեն ձեռք բերված արդյունքը:

- Իսկ ինչ է մտածում կայսրը, - հարցրեց Լորիս-Մելիքովը:

Շուվալովն այս հարցը թողեց անպատասխան և Լորիս-Մելիքովից հետաքրքրվեց Փոթիի ուղղությամբ ռուսական զորքերի ունեցած ամրությունների և Կովկասյան բանակի մարտունակության մասին: Կոմսը դեսպանին հանգամանորեն ներկայացրեց բանակի վիճակը և ասաց.

- Չնայած ունեցած կորուստներին, Կովկասյան բանակը մարտերում

ձեռք է բերել կռվելու և հաղթելու հարուստ փորձ: Մեր բանակը մարտունակ է:

- Իսկ Փոքի՞ն, - հարցրեց Շուվալովը:

- Իսկ ինչո՞ւ եք դրա մասին հետաքրքրվում:

- Ինձ հետ այդ մասին խոսել է մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչը: Նրան լուր է հասել, որ անգլիացիները կազմել են 35 հազարանոց էքսպեդիցիոն կորպուս և պատրաստվում են դեսանտ իջեցնել Փոքի:

- Եվ ի՞նչ:

- Մեծ իշխանը, - շարունակեց Շուվալովը, - տեղեկանալով անգլիացիների այդպիսի մտադրության մասին, ինձ հայտնեց, որ Կովկասյան բանակն այնքան կորուստ է ունեցել, որ իր տրամադրության տակ մնացած զորքերը հազիվ բավարարում են թուրքերի դեմ: Ուստի անգլիական մի քանի գնդի երևալն իրեն կդնի տագնապալի վիճակի մեջ:

- Մեծ իշխանի աչքին, ինչպես միշտ, վախն ու անվճռականությունն են երևում: Անգլիացիներն այդ քայլին չեն դիմի երկու պատճառով: Նախ Կովկասյան բանակը մարտունակ է և տեղանքին ծանոթ: Երկրորդ. Սև ծովի հարավային ափը մեր կողմից բավականաչափ ամրապնդված է և անգլիացիները նույնիսկ չեն հասցնի ափ իջնել: Բայց կա նաև մեկ այլ պատճառ: Անգլիացիները գիտեն, որ թուրքական հրամանատարությունը մտածված կերպով ժանտախտի համաճարակը հասցրեց Կովկասյան ռազմաճակատ: Թուրքերը մտադիր էին սկզբում այդ անել Բալկանյան ռազմաճակատում: Անգլիացիները վախեցան, որ այդ կերպ համաճարակը կանցնի Եվրոպա, թուրքերին արգելեցին իրականացնել իրենց մտադրությունը: Իսկ հիմա, երբ անգլիացիները գիտեն, որ Կովկասյան ռազմաճակատում կա ժանտախտի համաճարակի վտանգ, երբեք չեն համարձակվի Փոքի մտնել:

- Ուրեմն, կոմս,- ասաց Շուվալովը, - դուք վստա՞հ եք դրանում:

- Իհարկե, ես անգլիացիներին լավ եմ ճանաչում Ղրիմի կամպանիայի ժամանակներից: Նրանք ինչքան խորամանկ են, այնքան էլ վախկոտ: Նրանք երբեք չեն համարձակվի դառնալ Եվրոպայում համաճարակի տարածողներ:

Դիվանագետի ու զորավարի զրույցն «աննկատ» անցավ առօրյա խնդիրներին...

Այդպես էլ Շուվալովը չհամարձակվեց Լորիս-Մելիքովին ասել գլխավորն, ինչի մասին նա անհանգստանում էր...

Միլյուտինը զգուշացնում է

Լորիս-Մելիքովն երեկոյան այցելեց իր վաղեմի ընկեր, այժմ ռազմական նախարար Միլյուտինին: Առաջվա նման նրանք իրար վստահում էին և շարունակում մտերմությունը:

- Հանդիպեցի այսօր Շուվալովին: Վախենում եմ, որ պատերազմի դաշտում մեր կրած զրկանքները լիովին չհատուցվեն, - ասաց Լորիս-Մելիքովը և պատմեց Շուվալովի հետ իր զրույցի մասին:

Միլյուտինը մինչև վերջ լսեց Լորիս-Մելիքովին ու նրան հայտնեց թագավոր կայսրի կարծիքը, երբ Շուվալովը նրան զեկուցել է Լոնդոնում ընթացող գաղտնի բանակցությունների մասին:

- Ի՞նչ գաղտնի բանակցություններ, - զարմացավ Լորիս-Մելիքովը:

Եվ Միլյուտինը պատմեց Լոնդոնում ընթացող գաղտնի բանակցությունների մասին: Անգլիան ձգտում է Բուլղարիան բաժանել երկու մասի, այնպես, որպեսզի Բալկանյան լեռնաշղթայից հարավ ընկած տարածքը մնա սուլթանին, որը և նրան հնարավորություն կտա պաշտպանվել մեր ապագա հարձակումներից:

- Նկատի ունեցեք, - Միխայիլ Տարիելովիչ, որքան էլ մեզ համար կարևոր են Փոքր Ասիայում սահմանների փոփոխությունը, Ռուսաստանին Կարսն ու Բաթումը թողնելը, մեզ համար բալկանյան հարցը մնում է գլխավորը:

- Բայց ինչո՞ւ միայն Կարսն ու Բաթումը, - զայրացած հարցրեց Լորիս-Մելիքովը, չէ՞ որ մենք գրավել ենք Հայաստանի մայրաքաղաք Էրզրումը, Բայազետը, ամբողջ Ալաշկերտի հովիտը:

- Սիրելի Միխայիլ Տարիելովիչ, - ասաց Միլյուտինը, - հենց խնդիրն էլ դրանումն է: Գաղտնի բանակցությունները վերաբերում են Թուրքիայի արևելքում մեր գրաված տարածքների զիջմանն այն հաշվով, որպեսզի մեր ձեռքում մնան Կարսն ու Բաթումը:

- Իսկ ի՞նչ է, Սան-Ստեֆանոյի պայմանագիրը վերանայվում է:

- Դժբախտաբար, այո, -պատասխանեց Միլյուտինը:

- Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ կստացվի, - ասաց Լորիս-Մելիքովը, - այդ տարածքներում տասնյակ հազարավոր հայերի կյանք ենք փրկել, նրանց վերադարձրել ենք իրենց բնակավայրերը: Ամբողջ հայությունն իր հույսը կապել է Ռուսաստանի հետ: Ինչպե՞ս հիմա պետք է նայել նրանց աչքերին, ինչպե՞ս նրանց թողնես վրեժով լցված թուրքերի ու քրդերի դեմ դիմաց միայնակ:

- Հասկանում եմ այդ բոլորը, սիրելի Միխայիլ Տարիելովիչ, բայց նկատի ունեցեք, որ անգլիացիների ճնշումն անչափ ուժեղ է: Եվ գիտե՞ք, թե ինչ կարծիք ունի թագավոր կայսրը Լոնդոնում ընթացող գաղտնի բանակցությունների մասին, - ասաց Միլյուտինը և շարունակեց, - կայսրը Շուվալովին ասել է. «Ինձ համար միևնույնն է, թե կլինի երկու, նույնիսկ երեք Բուլղարիա, միայն թե դրանք ապահովված լինեն այնպիսի հիմնարկություններով, որոնք երաշխավորեն նրանց այն սարսափների կրկնությունից, ինչպիսիք մենք տեսել ենք: Ինչ վերաբերում է մնացածին Կարսը, Բաթումը և այլն, ես ոչնչի չեմ հավատում: Երբ գործը հասնի հաշտության ստորագրմանը, անգլիացիները կհրաժարվեն դրանից»:

- Ցարն, - ավարտելով իր խոսքն, ասաց Միլյուտինը, - համոզմունք է հայտնել, որ անգլիացիները կխաբեն Շուվալովին:

- Ինչպե՞ս, կայսրն էլ է համոզված Կարսն ու Բաթումը զիջելու մեջ:

- Այո, միայն թե պատերազմ չլինի:

- Իսկ դո՞ւք, Դմիտրի Ալեքսեևիչ, որպես ռազմական նախարար, դո՞ք էլ եք այդպես մտածում:

- Իհարկե, ոչ: Մենք պետք է կարողանանք կայսրին վճռականություն ներշնչել: Բայց ամեն ինչ կախված է Լոնդոնի բանակցությունների ավարտից ու Բեռլինի կոնգրեսից...

«Ծառն առմաստով է ծառ...»

Շուվալովի ու Միլյուտինի հետ զրույցներից Լորիս-Մելիքովի առջև բացվեց տխուր ու անհայտություններով լեցուն հեռանկար: Իր մտահոգության մասին նա հայտնեց իր մոտ հրավիրված Կարապետ Եզյանին ու արքեպիսկոպոս Նար-պեյին:

- Այնպես որ, - ավարտեց Լորիս-Մելիքովն իր խոսքը, - հարկավոր է դիմել անհրաժեշտ քայլերի, քանի որ, ինչպես երևում է, Անգլիան թուրքերին պաշտպանելու համար և ընդդեմ Ռուսաստանի, մոբիլիզացրել է ամբողջ Եվրոպան:

Իհարկե, նա իրավունք չուներ իր հյուրերին տեղեկացնել Լոնդոնում ընթացող գաղտնի բանակցությունների մասին, բայց հարկ համարեց ասել, որ ենթադրում է, թե Սան-Ստեֆանոյի պայմանագրով նախատեսված տարածքներից զատ Ռուսաստանին հարկ կլինի կատարել ուրիշ զիջումներ:

- Պատրիարք Ներսես Վարժապետյանը պատգամավորներ է ուղարկել եվրոպական մայրաքաղաքներ, իսկ ես էլ նույն նպատակով եկել եմ Պետերբուրգ, - հիշեցրեց Նար-պեյը:

- Հարգելի սրբազան, - Նար-պեյին դիմեց Լորիս-Մելիքովը, -պատգամավորությամբ ոչինչ չի ստացվի: Միթե՞ դուք այդքան միամիտ եք: Ո՞վ է պատրիարքի պատգամավորներին հաշվի առնելու: Այդ ի՞նչ անհիմն հույսերով եք ձեզ ու ժողովրդին կերակրում:

- Ահա, - շարունակեց նա, - Կարապետը շատ լավ գիտե մեր ժողովրդի պատմությունը: Թող նա ասի, ճի՞շտ չեմ, արդյոք...

Այնուհետև Լորիս-Մելիքովը հիշեց տարիներ առաջ իր Կոստանդնուպոլիս կատարած այցելությունը, պատմեց ունեցած հանդիպումներից իր հիշողության մեջ մնացած տպավորությունների մասին:

- Ես դեռ այն ժամանակ նկատեցի, -ասաց կոմսը, - Պոլսում հավաքված հայ բնակչությունը պատրիարքի հետ միասին պատանդ են սուլթա-

նի ձեռքին: Կաթողիկոս Մատթեոսին նույնպես ասել եմ այդ մասին: Վերջերս նույնն ասել եմ Գևորգ կաթողիկոսին:

- Ի՞նչ եք ասել, - չհամբերեց Նար-պեյը:

- Ասել եմ, որ եթե պոլսահայերն ուզում են Թուրքահայաստանի հայության փրկել, ապա պատրիարքարանը և Պոլսի ազգային ժողովը պետք է տեղափոխվեն ու հաստատվեն Հայաստանի մայրաքաղաք Էրզրումում:

- Ի՞նչ եք ասում, այդ անկարելի է, - զարմացավ Նայ-պեյը:

- Եթե դա անկարելի է, ապա առավելապես անկարելի է Թուրքահայաստանի փրկությունը: Դուք եվրոպական մայրաքաղաքներ պատվիրակներ ուղարկելուց առաջ պետք է Պոլսից Հայաստան տեղափոխեիք պատրիարքարանն ու ազգային ժողովը: Միթե՞ թուրքահայերն այնքան միամիտ են, որ կամենալով հասնել Հայաստանի ինքնավարության, կարող են իրենց երկրի կառավարումն իրականացնել նստած մնալով Պոլսում:

Լորիս-Մելիքովն իր միտքը հաստատելու համար բերեց սուլթանի տիրապետության տակ գտնվող մյուս ժողովուրդների օրինակը և դիմելով Նար-պեյին, ասաց.

- Տեսեք սրբազան, այդ ժողովուրդներից ոչ մեկը իր երկրի կենտրոնը չի թողել ու Պոլսում չի հաստատվել: Նրանք կռվում են իրենց ազգային շահերի համար, հենվելով իրենց երկրի ու ժողովրդի վրա: Իսկ դու՞ք ինչ եք անում: Պոլսում հանգիստ նստած, ազգային ժողովի նիստ եք անում, սահմանադրություն եք խաղում, առանց մտահոգվելու, որ այդ ամենը շատ հեռու է Հայաստանից: Ձեր այդ սահմանադրությունն էլ ոչ մի նշանակություն չունի Թուրքահայաստանի հայ բնակչության համար:

- Ինչպե՞ս եք այդպես ասում, - փորձեց հակաճառել Նար-պեյը:

- Ի՞նչ է, սիրելի սրբազան, դուք չգիտե՞ք, որ այդ սահմանադրությունն անզոր է հայերին պաշտպանել թուրքերի ու քրդերի հարստահարություններից:

Նար-պեյը, անշուշտ, զգում էր, որ Լորիս-Մելիքովը դառն իրականության մասին էր խոսում, և այդ պատճառով էլ չփորձեց այլևս առարկել: Իսկ կոմսն իր խոսքը շարունակելով, հարցրեց.

- Ահա և դուք, սրբազան, ինչո՞ւ եք եկել Ռուսաստան:

- Եկել եմ, որպեսզի հայցեմ Ռուսաց ամենազոր կայսրի աջակցությունը մեր դատին:

- Այո, եկել եք, բայց ո՞ւմ անունից, - հարցրեց Լորիս-Մելիքովը և Նար-պեյին թույլ չտալով պատասխանել, շարունակեց, - Պոլսի հայերի նպատակն է հարստանալ, հասնել պետական նշանավոր պաշտոնների, ապրել իրենց համար, առանց մտածելու Թուրքահայաստանի հայության մասին: Եվ հետո, միթե՞ կարծում եք, թե ռուսաց կառավարությանը հայտնի չէ, որ սուլթանի տիրապետության տակ ապրող հայերը տարբեր վերաբերմունք ունեն Ռուսաստանի նկատմամբ:

Նար-պեյը դարձյալ ցանկացավ պատասխանել, բայց Լորիս-Մելիքովը կանխեց, իր խոսքը շարունակելով.

- Այո, այո, դա այդպես է: Պոլսում եղած ժամանակ ես համոզվեցի, որ այնտեղ ապրող հայերի շահերը պահանջում են, որպեսզի ամեն կերպ պաշտպանեն սուլթանի թույլ պետությունը, պահպանեն այդ պետության ամբողջականությունը, իսկ իմ մասնակցած երկու պատերազմների ժամանակ էլ համոզվեցի, որ Թուրքահայաստանի ճնշված հայը անհամբերությամբ էր սպասում ռուսաց զորքի գալուստին, փափագում նրա միջոցով տեսնել սուլթանական լծից ազատվելը:

Խոսքն ավարտելով, Լորիս-Մելիքովը դիմեց Կարապետ Եզյանին.

- Թող մեր պատմաբանը դատի, արդյո՞ք, սխալ են իմ բերած փաստարկները:

Կարապետ Եզյանը հավանություն տվեց Լորիս-Մելիքովի արտահայտած մտքերին, դրանք համարելով դառն ճշմարտություն:

- Կա նաև կրոնական խնդիր, - ասաց Եզյանը, - միթե՞ Պոլսի հայերը չեն գիտակցում, որ դրա արծածումը մեզ ոչ միայն օգուտ չի բերում, այլ մեծապես վնասում է մեր ընդհանուր գործին:

Հաստատելով Եզյանի տեսակետը, Լորիս-Մելիքովն ասաց, դիմելով Նար-պեյին.

- Դուք, պոլսահայերդ, անընդհատ խոսում եք այն մասին, թե Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող հայոց վրա ճնշում է գործադրվում ուղղափառություն ընդունելու համար և այդ պատճառով էլ պոլսահայերը կտրականապես դեմ են Ռուսաստանին: Այս ամենի հետևանքով էլ Ռուսաստանի օգնությանը դիմելու և մանավանդ նրա հպատակ դառնալու միտքը պոլսեցիներից շատերի մոտ դավաճանության շատ մոտ գաղափար է համարվում: Նրանք այն համոզմունքն ունեն, թե Կովկասի և ընդհանրապես Ռուսաստանի հայութունը վաղ թե ուշ, դատապարտված է կորստի: Նրանց մոտ տիրում է նաև այնպիսի համոզում, թե Ռուսաստանում հայն իբրև ազգություն բոլորովին ապագա չունի և մատնված է կորստյան: Այս սխալ հայացքի դեմ ոչ մի էական միջոց չի գործադրվում նույնիսկ էջմիածնում, ուր գրեթե նույն գաղափարն է տիրում բարձրագույն կղերական միջավայրում:

Ի պատասխան Լորիս-Մելիքովի խոսքերի, Նար-պեյը նրան հանձնեց Ռուսաստանի ցար Ալեքսանդր Երկրորդին ուղղված Պոլսի պատրիարքի 1878 թ. փետրվարի 1-ի և փետրվարի 13-ի աղերսագրերի պատճենը:

Դրանց բովանդակությանը ծանոթանալուց հետո, Լորիս-Մելիքովը հետաքրքրվեց, թե Բեռլինի կոնգրեսին ովքեր են ներկայացնելու հայոց խնդիրը: Նար-պեյը թվարկեց պատվիրակության կազմը և հիշեցրեց, որ պաշտոնական փաստաթղթերը ստորագրելու իրավունքը վերապահվել է Մկրտիչ Խրիմյանին և իրեն:

Այստեղ արդեն Լորիս-Մելիքովը չկարողացավ զսպել իր զայրույթը և հարցրեց.

- Դուք գիտե՞ք, թե ովքեր են Բեռլինի կոնգրեսում ներկայացնելու իրենց պետություններին:

Ստանալով դրական պատասխան, կոմսը շարունակեց.

- Խնդրում եմ սրբազան, չընդհատեք ինձանից, եթե ասեմ. ի՞նչ կարող եք անել դուք այդ վեհաժողովում, ո՞ւմ լիազորությամբ եք գործելու, ո՞ւմ անունից եք ներկայանալու: Պոլսի հայոց պատրիարքի՞: Իսկ ո՞վ է պատրիարքը: Սուրբ էջմիածնին ենթակա եկեղեցիներից մեկի ղեկավարը: Ինձ ճիշտ հասկացեք: Միթե՞ կարծում եք, որ եվրոպական տերությունների ղեկավարները այդ ամենը չեն հասկանում: Հասկանում են և դրան համարժեք էլ վերաբերմունք ցույց կտան:

- Իսկ ի՞նչ կառաջարկեիր Միխայիլ Տարիելովիչ, - հարցրեց Կարապետ Եզյանը:

- Առաջարկս մեկն է: Պոլսի պատրիարքը պետք է թողնի բոլոր գործերը և Բեռլին ներկայանա որպես հայոց պատվիրակության ղեկավար: Տերությունների կոնգրեսում այլ բան է պատրիարքի ներկայացուցիչներից կազմված պատվիրակություն, մեկ այլ բան է պատրիարքի գլխավորած պատվիրակություն: Միթե՞ այս հասարակ ճշմարտությունը չեն հասկանում Պոլսում: Հայտնեցեք, սրբազան, իմ կարծիքը պատրիարքին: Նա պետք է Բեռլին ներկայանա որպես հայոց պատվիրակության ղեկավար:

Միաժամանակ Լորիս-Մելիքովն անչափ տարօրինակ համարեց, որ հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող իրադարձություններից իրեն շատ հեռու է պահում էջմիածնի կաթողիկոս Գևորգ Չորրորդն, որն ինչպես կարծում էր կոմսը, պետք է դառնար շարժման դրոշակակիր...

Լորիս-Մելիքովն այնուհետև Նար-պեյի ու Կ. Եզյանի հետ երկար խորհրդակցեց առաջիկայում Բեռլինում հրավիրվող վեհաժողովի հետ առնչվող հարցերի շուրջ, հայտնեց նաև, որ չի հավատում, թե հայերը Թուրքահայաստանում կստանան իրենց ինքնավարությունը և դիմելով Նար-պեյին ասաց.

- Բայց դա չի նշանակում, որ ձեռքներս ծալած նստենք ու ոչինչ չանենք: Մենք էլ մեր հերթին կանենք ամեն հնարավորը մեր նպատակին հասնելու համար: Ես պատրաստ եմ բուժման մեկնելու ճանապարհին լինել Բեռլինում և ուժերիս ներածի չափ օգտակար լինել հայոց պատվիրակությանը:

Հրաժեշտ տալով իր հյուրերին, Լորիս-Մելիքովն ասաց.

- Այնուամենայնիվ, ես մնում եմ իմ կարծիքին: Եթե ուզում եք Թուրքահայաստանի վերաբերյալ մեր նպատակին հասնել, քանի ուշ չէ, իսկ դրա համար այժմ կան նպաստավոր պայմաններ, պատրիարքը պետք է դիմի վճռական քայլի՝ պատրիարքարանը տեղափոխել Հայաստանի մայրաքաղաք Էրզրում, ոչ մի դժվարության առջև չկանգնելով:

- Հավատացեք, սրբազան, - դիմելով Նար-պեյին, ասաց Լորիս-Մելիքովը, - ծառն արմատով է ծառ դառնում: Եթե պատրիարքարանը տեղափոխվի Էրզրում ու իր հետ չտանի նաև ազգային ժողովը, Թուրքահայաստանի հարցը միշտ կմնա օդում կախված, իսկ պատրիարքն ու ազգային ժողովը՝ պատանդ սուլթանի ձեռքին...

Լորիս-Մելիքովի երազանքներից մեկը

Պետերբուրգում մնալու մոտ մեկ ամսվա ընթացքում Լորիս-Մելիքովի առողջական վիճակն ավելի վատացավ: Նա հարկադրված եղավ դիմել այդ ժամանակ Պետերբուրգում հայտնի բժիշկ Ն. Բելոգոլովին: Պրոֆեսորն այցելեց Լորիս-Մելիքովին, ուշադրությամբ զննեց նրան և պարզեց, որ զորավարը տառապում է շնչուղիների խրոնիկ կատարով, հաճախակի արյուն է թքում: Պրոֆեսորը խստորեն զգուշացրեց, որ նրա թոքերում առայժմ դադարած պրոցեսը կարող է իր մասին իմաց տալ, եթե անմիջապես չմեկնի արտասահման բուժվելու:

Հետևելով պրոֆեսորի խորհրդին, Լորիս-Մելիքովը պատրաստվեց մեկնել բուժման: Արտասահման մեկնելուց առաջ Լորիս-Մելիքովի մոտ էին հավաքվել նրա մտերիմները: Այստեղ էին Դմիտրի Ալեքսեևիչ Միլյուտինը, պետական խորհրդի անդամ Ալեքսեյ Ագեևիչ Աբազան, Պյոտր Ալեքսանդրովիչ Վալուևը, ինչպես նաև Կարապետ Եզյանը, Մկրտիչ Սանասարյանցը:

Հյուրերն անկաշկանդ զրուցում էին ռուսական հասարակությանը հուզող գլխավոր նյութի՝ ավարտված պատերազմի և հրավիրվելիք Բեռլինի վեհաժողովի շուրջ: Ռուսաստանի բարձրաստիճան պաշտոնյաների ներկայությունից օգտվելով, Լորիս-Մելիքովը խոսակցությունն ուղղեց Թուրքահայաստանի շուրջ:

Միլյուտինն, որն առհասարակ դժգոհ էր պատերազմից հետո Ռուսաց արտաքին քաղաքական քայլերից, տարակուսանք հայտնեց, թե ինչու են Թուրքիայի հայերը դիմում Անգլիային:

- Դիմում են, - պատասխանեց Միխայիլ Տարիելովիչը, - որովհետև մենք հաստատակամ չենք Անգլիայի ամբիցիոզ քաղաքականության նկատմամբ: Նկատի ունեցեք, որ Անգլիան ձգտում է Կովկասով դառնալ Ռուսաստանի հարևան, այստեղից բխող բոլոր հետևանքներով:

- Ի՞նչ են ուզում հայերը, - հարցրեց Վալուևը և հայացքն ուղղելով Լորիս-Մելիքովին, ինքն էլ պատասխանեց իր հարցին, - մի փոքրիկ անկախ Հայաստան: Իմ կարծիքով Ռուսաստանին հարկավոր է ունենալ մի փոքրիկ անկախ, իրեն հավատարիմ ու երախտագետ Հայաստան, քան թե Անգլիայի նման խարդախ ու թշնամի հարևան:

Խոսկցությանը ներկա հայ գործիչները հաճելիորեն զարմացել էին ռուս բարձրաստիճան գործիչների հայանպաստ դատողություններից և

իրենց գոհունակությունը հայտնեցին Լորիս-Մելիքովին, հյուրերի գնալուց հետո:

- Մի շտապեք, - պատասխանեց Միխայիլ Տարիելովիչը, - մեզ ավելի ծանր կացություն է սպասվում:

Լորիս-Մելիքովն իր բարեկամներին հանգամանորեն տեղեկացրեց Բեռլինում գումարվող վեհաժողովի շուրջ ծագած դիվանագիտական անցուդարձին:

- Ամենայն հավանականությամբ մեր զորքերը հեռանալու են ավելի շատ գավառներից քան նախատեսված էր Սան-Ստեֆանոյի դաշնագրով: Անգլիայի և մյուսների ճնշումը բավական մեծ է և թագավոր կայսրը հակված է զիջումների: Այնպես, որ հարկավոր է դրան պատրաստվել:

Լորիս-Մելիքովը հայտնեց իր նկատառումները և խնդրեց Կարապետ Եզյանին այդ մասին տեղյակ պահել Թիֆլիսի ազդեցիկ հայ գործիչներին: Նկատի ունենալով Ռուսաստանի կողմից ավելի շատ տարածքներ զիջելու հնարավորությունը, կոմսը կարևոր համարեց կազմակերպել հատկապես գյուղական բնակավայրերի հայ բնակչության տեղափոխում դեպի նոր ձևավորված Կարսի մարզ:

- Իսկ Էրզրումը՞, - հարցրեց Կ. Եզյանը:

- Էրզրումը Հայաստանի մայրաքաղաքն է և այնտեղ բոլոր միջոցներով հարկավոր է ամրապնդել հայ տարրը:

- Իսկ ես, Միկո ջան, ինչով կարող եմ օգտակար լինել, - հարցրեց դեռևս Թիֆլիսից Միքայելի հետ մտերմություն ունեցող Մկրտիչ Սանասարյանցը:

Մկրտիչ Սանասարյանը ծնվել է 1818 թ. Թիֆլիսում, վանեցի Սարգիսի ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է Ներսեսյան դպրոցում, աշակերտելով Հարություն Ալամդարյանին: Հոր մահից հետո նրա խնամակալը դարձավ հայտնի գեներալ Երեմիա Արծրունին: Պատանի Մկրտիչը շատ էր ուզում ստանալ եվրոպական կրթություն և մի օր էլ ընկերոջ հետ որոշում են փախչել Վենետիկ, Մխիթարյանների մոտ սովորելու: Պատանի փախստականներին բռնում և ճանապարհից ետ են վերադարձնում: Քեռին որպես պատիժ՝ Մկրտիչին ուղարկում է Սինգրելյան գունդ՝ շարքային ծառայության: Դա արդեն 1835 թ., երբ Մկրտիչը 17 տարեկան էր: 10 տարի գտնվելով բանակում, նա մասնակցում է մի շարք պատերազմների և զորացրվում բազմաթիվ վերքեր ստանալու հետևանքով: Նա քաջության համար արժանացել էր Գեորգիևյան խաչի:

Զորացրվելուց հետո Մկրտիչը մեկնում է Մոսկվա և տեր դառնում գեներալ Արծրունու մեծաքանակ ժառանգությանն ու սկսում ազգային-բարեգործական գործունեություն: 1870 թ. նա իր միջոցներով Վանում հիմնում է առաջին իգական Սանդուխտյան դպրոցը, որը կարճ ժամանակում հասավ բարձր աստիճանի: Այնուհետև հիմնադրեց Մարիամյան դպրոցը

Խառակոնիս գյուղում: Այս գործում ազգային բարերարին աջակցում էր Մկրտիչ Խրիմյանը:

Մկրտիչ Սանասարյանցը մեծ օգնություն էր ցույց տալիս Պետերբուրգի հայ ուսանողներին, առանձնապես ուշադրություն դարձնելով չունևորների վրա: Այդ նրա շնորհիվ էր, որ Պետերբուրգի ու Մոսկվայի համալսարաններում սովորող բազմաթիվ հայ երիտասարդներ կարողացան հաջողությամբ ավարտել ուսումը: Դեռևս 1859 թ. Միքայել Նալբանդյանը նկատի ունենալով Մկրտիչ Սանասարյանցի գործունեությունը, նրա մասին գրել է. «Պարծանք քեզ, Հայաստան, որ թեև փոքր, այնուամենայնիվ, ունիս զավակներ, որոնք իրենց ազգասիրությամբ փառավորում են քո մոռացված ու փշոտված անունը, որի հիշատակն անգամ ջնջված է քո շատ զավակների սրտից»:

Հենց այս ամենի համար էլ Լորիս-Մելիքովը բարձր էր գնահատում Մկրտիչ Սանասարյանցին, ընդգծելով, «եթե մեր բարերարները գործում են ապահով վայրերում, ապա Մկրտիչ Սանասարյանցն իր բարեգործության ասպարեզը դարձրել է վտանգներով լեցուն Հայաստանը»:

Պատասխանելով Մկրտիչ Սանասարյանցի հարցին, Լորիս-Մելիքովն ասաց.

- Իսկ դու, հոգյակս, շատ օգուտ ես տվել: Բայց ունեմ երազանք՝ Հայաստանի մայրաքաղաք Էրզրումում ստեղծված տեսնել Մոսկվայի Լազարյան ճեմարանի նման մի ուսումնական հաստատություն:

Լսելով Լորիս-Մելիքովին, Մկրտիչ Սանասարյանցը հանձն առավ Էրզրումում ստեղծել բարձրակարգ ճեմարան: 1881 թ. Կարապետ Եզյանի և Կարինի թեմական առաջնորդ Մաղաքիա Օրմանյանի աջակցությամբ Էրզրումում բացվեց Լորիս-Մելիքովի երազած վարժարանը, որին շնորհվեց Սանասարյանցի անունը:

«Սանասարյան» վարժարանին կից գործում էր արհեստագիտական բաժանմունք: Աշակերտները սովորում էին դաշնամուրի ու ջութակի վրա նվագել...

Մեծ էր «Սանասարյան» ուսումնարանի դերը Կարինի «Պաշտպան հայրենաց» կազմակերպության ստեղծման մեջ: Տարիներ անց, 1896 թ. հունիսի 25-ին Խաչատուր քահանա Զարիֆյանին ուղարկած նամակում Կ. Եզյանը բացատրում է, թե ինչու է առավելություն տրվում «Սանասարյան» վարժարանին և գրում, թե «այն պատճառով, որ Տաճկահայաստանում է գտնվում, ուր Տաճկաստանի հայ տղայքը ուսումն առնելով կը մնան իրենց երկրում և կը մխիթարեն իրենց ծնողներին, այն ինչ Ռուսաստանի հայ դպրոցներում ուսում ստացած տաճկահայ պատանիք ավարտելուց յետոյ սովորաբար չեն ախորժում դառնալ հայրենիք, ինչպես այդ ապացուցեցին ճեմարանի տաճկահպատակ աշակերտները»:

...Մեծ բարերար Մկրտիչ Սանասարյանցը մահացավ 1890 թ. մայիսի

19-ին: Նրա ցանկության համաձայն Կարապետ Եզյանի վրա դրվեց «Սանասարյան» վարժարանի ղեկավարումն, որն այդ նպատակով էլ մի քանի անգամ այցելեց Կ. Պոլիս և Էրզրում:

Պատրիարքի ցուցումը

Սան-Ստեֆանոյի պայմանագիրը չէր համապատասխանում արևմտյան տերությունների շահերին: Նրանք նորից սուլթանական Թուրքիային վերցրեցին պաշտպանության տակ:

Ինչպես Ղրիմի պատերազմից հետո, այնպես էլ հիմա Անգլիան, Ֆրանսիան ու Իտալիան հայտարարեցին, թե ընդդեմ Ռուսաստանի Թուրքիային պաշտպանելով, պաշտպանում են քաղաքակրթությունը բարբարոսությունից:

Պոլսահայերի մեծ մասն էլ հավատում էր դրան, համոզված լինելով, թե Ռուսաստանը «ազգակուլ երկիր է»:

Թուրքական կառավարությունն իր հայ գործակալների ու մատնիչների միջոցով շողոմ խոստումներ տալով, պոլսահայերին համոզում էր, թե ավելին կտա հայերին, քան նրանք սպասում են Ռուսաստանից:

Եվ երբ հայտնի դարձավ Բեռլինում մեծ տերությունների վեհաժողով հրավիրելու լուրը, պատրիարք Ներսես Վարժապետյանը թուրքական կառավարության թույլտվությամբ դիմեց եվրոպական տերություններին, դրանց մայրաքաղաքներ ուղարկելով պատվիրակներ:

Թուրքական կառավարությունը նույնիսկ Բեռլին մեկնած հայոց պատվիրակությանն իրավունք տվեց պատրիարքարանի հետ ծածկագրով կապվել...

Պատրիարքն իր համախոհների հետ միասին համոզված էր, որ եվրոպական վեց տերությունների օգնությամբ ավելին կստանան, քան ռուսական գրավումից: Եվ այդ «ավելին» Հայաստանի անկախությունն էր, որ պետք է շնորհեին եվրոպական տերությունները:

Սուլթանի լարած թակարդը հասկանալով, մի խումբ պոլսահայ լրջմիտ գործիչներ հարկ համարեցին զգուշացնել պատրիարքին: Սակայն նա մերժեց երեսփոխանական ժողով գումարելու պահանջը և իր համախոհների հետ միասին ավելի խճճվեց սուլթանի սարքած որոգայթի մեջ: Ավելին, պատրիարքը հեռագիր ուղարկեց Պետերբուրգ, զգուշացնելով, թե այնտեղ գտնվող Նար-պեյը պաշտոնապես լիազորված չէ Ալեքսանդր Երկրորդ ցարի հետ բանակցելու համար: Չբավարարվելով այդ հեռագիրն ուղարկելով, պատրիարքը «Մասիս» թերթում հրապարակեց մի ծանուցագիր, հայտարարելով, որ «Նարպէյ եպիսկոպոսը Ցարին ներկայացնելու համար Հայոց պատրիարքին կողմէ պաշտօն չէ ստացած»:

Եվրոպական թերթերն անմիջապես արտատպեցին թուրքական կա-

ռավարության թելադրանքով գրված պատրիարքի ծանոցումը: Փաստորեն իր այս քայլով Պոլսի հայոց պատրիարքը բացահայտորեն դարձավ թուրքական կառավարության կամակատարը:

1878 թ. հուլիսի 1-ին Բեռլինում բացված վեհաժողովին հայոց խնդիրը ներկայացնելու համար կազմվել էր պատվիրակություն հետևյալ կազմով՝ Մկրտիչ Խրիմյան և Նար-պեյ /Խորեն Գալֆայան/: Պատվիրակության խորհրդական, ավելի ճիշտ Մ. Խրիմյանի թարգմանիչ էր նշանակվել Սինաս Չերազը: Հետագայում նրանց միացավ Ստեփան Փափազյանը:

Պատվիրակության անդամներն, որոնք նախապես այցելել էին եվրոպական մայրաքաղաքներ ու Պետերբուրգ, եկել էին Բեռլին, միասնական կարծիք չունենալով: Խորեն Գալֆայանը կողմնակից էր հայոց հարցը Ռուսաստանի միջոցով լուծելուն: Նա ռուսասեր էր: Մկրտիչ Խրիմյանն էլ պնդում էր, թե ով որ լուծի մեր խնդիրը, պետք է նրա կողմը լինել: Ավելի շատ հակվելով դեպի Անգլիա, միաժամանակ Մ. Խրիմյանը դեմ էր Թուրքիայի կազմից Արևմտյան Հայաստանը դուրս բերելու գաղափարին: Ավելին, Մ. Խրիմյանը հայտարարեց, թե «հայերը ուղղակի դժգոհություն մը չունին թուրք կառավարութենէն, թուրքն ալ հայուն չափ կը չարչարուի քիւրտին ու չէրքէզին ձեռքէն, հայոց խնդրածը ուրիշ բան չէ բայց եթէ բարենորոգումներ և հայերը չեն ուզեր «ազգակուլ» ռուսին ճանկը իյնալ»: Սինաս Չերազն էլ բացահայտ կանգնած էր Անգլիայի կողմը: Նա անգլիասեր էր:

Այսպիսով, հենց սկզբից, հայկական պատվիրակությունը դատապարտված էր անմիաբան գործողությունների: Պատվիրակության անդամներն ամեն օր վիճաբանում էին, նրանցից յուրաքանչյուրը պաշտպանում էր իր տեսակետը և ոչ մեկը մյուսին լսելու մտադրություն չուներ:

Անգլիայի կողմնակիցները մեծամասնություն էին կազմում և նրանց գործելակերպի նշանաբանն էր պատրիարք Ներսես Վարժապետյանի ցուցումը. «Մեր քաղաքականութիւնն է Ռուսիոյ երախտագէտ ըլլալով՝ յուսալ Յանգղիա և Յանգղիոյ շնորհիւ ապահովել մեր բարոյական և նիւթական բարեկեցութիւնը»:

Այս ցուցումի հիման վրա էր, որ կոնգրեսի ժամանակ Սինաս Չերազը հանդիպել էր լորդ Բիկոնսֆիլդի քարտուղարին և ասել.

- Եթե ձեր լիազորները կոնգրեսում մեր հարցը չպաշտպանեն, դրանով նրանք իրանց ձեռքով հայերին ռուսաց գիրկը պիտի նետեն:

Նուպար փաշայի գանկությունը

Այդ օրերին Բեռլին էր եկել նաև Նուպար փաշան, որին եվրոպական մայրաքաղաքներում ընդունում էին հարգանքով, ուներ մեծ հեղինակություն: Տարիներ շարունակ նա եղել էր Եգիպտոսի նախարարապետը: Փարիզում էր Նուպար փաշան գտնվում, երբ տեղեկացավ, որ պատ-

րիարքը պատրաստվում է Բեռլինի վեհաժողով ուղարկել պատգամավորություն և շտապեց կազմել հայկական գավառներում բարենորոգումներ իրականացնելու ծրագիր:

Այդ ծրագրում ասվում էր «Հայերը քաղաքական գոյութեան մը, քաղաքական անկախութեան մը աչք չունին, քաղաքային (civil) ազատութիւններ կուզեն, հաստատութիւններ, որոնք երաշխավորեն իրենց ապահովութիւնը, իրենց ինչքը, իրենց կիներուն ու աղջիկներուն պատիւը, իրենց կեանքի իրաւունքը՝ վերջապես»:

Այնուհետև, առաջարկելով Հայաստանի ընդհանուր կառավարիչ նշանակել հայի, Նուպար փաշան ընդգծում էր. «Պետութիւնները, հիմնուելով Սան-Ստէֆանօի սկզբնական դաշնագրին վրայ. (ԺԶ յօդուած), հետեւաբար առանց դպչելու Ն. Կ. Վեհափառութեան գերագոյն հեղինակութեանը, կրնան իրենց հաւանութեամբ գործակցիլ այդ ընտրութեանը, ինչպէս որ կըլլուի Լիբանանի կառավարիչին ընտրութեանը համար, եւ այսպէսով այդ ընտրութիւնը պաշարել ամէն բաղձալի երաշխաւորութիւններով»:

«Հայերը, - ասվում էր ծրագրում, - աչք չունին ոչ քաղաքական անկախութեան մը, ոչ օսմանեան պետութենէն ոևէ բաժանման. իրենց նպատակը բոլորովին հակառակն է: Յաւակնութիւն չունին որ իրենց երկրին հասոյթները իրենց ուզածին պէս եւ միմիայն իրենց պէտքերուն համար գործածուին: Իրենց համար ուրիշ բան չեն խնդրեր եթէ ոչ իրաւունք ունենալ իրենք իրենցմէ տուրք ժողվելու՝ ընդհանուր տուրքերը կայսերական գանձուն յատկացնելէ յետոյ, որպէս զի այդ կերպով մասնաւոր հասոյթներ ստեղծեն նահանգին մասնաւոր ծախքերուն համար, ինչպէս են պահակազօրքի, արդարութեան, ամէն ազգի դպրոցներու եւ կրօնական հաստատութեանց, հանրօգուտ շինութենց»:

Ընդհանուր գծերով Նուպար փաշայի ծրագիրը նույնպես աչքի էր ընկնում իր չափավորությամբ: Ինչպես նկատել է Արշակ Չոպանյանը «Նուպար փաշա կուզէր կերպով մը կրկնել Հայաստանի մէջ ինչ որ փորձած եւ յաջողած էր Եգիպտոսի մէջ. հաստատել եւրոպական արդարութիւն մը հայկական գաւառներուն մէջ»: Ընդգծելով, որ Նուպար փաշայի ծրագիրն ազգային անկախության մասին որևէ ակնարկ չէր պարունակում, Արշակ Չոպանյանը գրել է. «Նուպար կառաջարկէր թրքահպատակ քրիստոնեայ կուսակալ մը եւրոպացիներէն վաւերացուած, եւ թերեւս կը մտածէր որ ամբողջ ազգը ուշիմութիւնը պիտի ունենար այդ պաշտօնը յանձնել իրեն որ միակ կրողն էր այդ գործին. եւ ինքը գիտէր որ երբ արդարութիւնը եւ հաւասարութիւնը լրջօրէն տիրել տար Թուրքիոյ Հայկական նահանգներուն մէջ, հայ տարրը պիտի աճէր, զօրանար եւ իր ինքնութիւնը ինքնին պիտի գտնէր»:

Վստահ իր ծրագրի իրականացման վրա, Նուպարն այն Փարիզից ուղարկեց Ներսես պատրիարքին, խնդրելով իրեն լիազորել Բեռլինի վեհաժողովին անձամբ ներկա գտնվել որպես հայության ներկայացուցիչ:

Միջնորդներն ու մատնիչները գործի անցան: Նրանց մատուցմամբ էլ թուրքական կառավարությանը հայտնի դարձավ այդ ծրագիրը:

Թուրքական կառավարությունը գիտեր, թե եվրոպական մայրաքաղաքներում Նուպար փաշան ինչպիսի հարգանք ու հեղինակություն ուներ: Եվ նա հասկանում էր, թե ինչ հետևանքներ կունենար, եթե Բեռլինի վեհաժողովում Նուպար փաշայի նման ազդեցիկ գործիչը ներկայացներ հայերին:

Նուպար փաշան թուրքական կառավարության համար անցանկալի էր ոչ միայն որպես հայերի ներկայացուցիչ, այլև ապագա Հայաստանի ղեկավար:

Դրան դեմ էր նաև Ներսես Վարժապետյանը: Եվ պատրիարքը թուրքական կառավարության հանձնարարությամբ մերժեց Նուպար փաշայի առաջարկությունը:

Չնայած պատրիարքի այսպիսի վերաբեմունքին, Նուպար փաշան մի կողմ դրեց անձնական վիրավորանքը և շտապեց Բեռլին, իր ժողովրդին ինչ որ չափով օգտակար լինելու բուռն ցանկությամբ:

Հանդիպում Նուպար փաշայի հետ

Լորիս-Մելիքովը Նար-պեյից տեղեկանալով Նուպար փաշայի ժամանման մասին, ցանկություն հայտնեց հանդիպել ու ծանոթանալ նրա հետ:

Երկու նշանավոր գործիչներն էլ չթաքցրին իրենց անձնական համակրանքը հենց առաջին հանդիպումից, որը հետո վերածվեց մեծ բարեկամության:

Նուպար փաշան Լորիս-Մելիքովին ծանոթացրեց իր ծրագրին և հայտնեց խոր վիրավորանքը պատրիարքի կողմից մերժում ստանալու կապակցությամբ: Նա նաև պատմեց, թե Եվրոպայում ինչպիսի ջանքեր է գործադրել «հայը ճանչցուանելու համար» և իբրև դրա ապացույցներից մեկը, Լորիս-Մելիքովին նվիրեց իր ծախսերով հայասեր Վիկտոր Լանկլուայի ֆրանսերեն թարգմանությամբ Փարիզում լույս տեսած «Historie de L' Armenie» գրքի երկու հատորները:

Ինչպես ծրագրի, այնպես էլ, առհասարակ, Բեռլինի կոնգրեսին առնչվող բազմաթիվ հարցերի շուրջ երկու նշանավոր հայ գործիչներն երկար զրուցեցին, խնդիրները բազմակողմանի քննարկեցին:

Նուպար փաշան չէր թաքցնում իր բացասական վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ, արտահայտելով պոլսահայերի մոտ նստած կարծիքի հետ իր համաձայնությունը:

- Ես ծանոթ եմ պոլսահայերի այդ տեսակետին դեռևս այն ժամանակից, երբ Պոլիս էի մեկնել կաթողիկոս Մատթեոսին ուղեկցելու նպատակով: Բայց դուք, - շարունակեց Լորիս-Մելիքովը, - սիրելի Նուպար, նույն-

պես սխալվում եք: Եթե Ռուսաստանին համարում եք «ազգակուլ», այդ դեպքում, ասացեք խնդրեմ, ի՞նչ են նշանակում ձեր ծրագրի այս տողերը:

Եվ այս ասելով Լորիս-Մելիքովը բարձրաձայն կարդաց ծրագրի հետևյալ հատվածը. «Եթէ այս քաղաքային ազատութիւնները, որոնք 1840 էն ի վեր հանդիսաւորապէս խոստացուած են Կիւլհանէի Հաթթի Շերիֆին մէջ, եւ յաջորդ Հաթթերով շեշտուած են, իրականապէս գործադրուած ըլլային, այդ աշխատասէր հայ ցեղը, շատ տարիներէ ի վեր իր երկրին կերպարանքը փոխած կըլլար: Երեւանի ռուսօ-հայկական նահանգին ժողովուրդը երեսուն տարուան ընթացքին մէջ կրկնապատկուած է»:

- Կարո՞ղ եք բացատրել, - կարդալն ավարտելով, մեղմ ժպտալով հարցրեց Լորիս-Մելիքովը, - «ազգակուլ» երկրում հայերն ինչպես են կրկնապատկել իրենց քանակը:

Նուպար փաշային մնում էր նույնպես մեղմորեն ժպտալ ու չպատասխանել կոմսի հարցին:

Լորիս-Մելիքովը հարկ համարեց իր նոր բարեկամին հանգամանորեն բացատրել Արևելյան հարցում Ռուսաստանի քաղաքականությունը.

- Պետք է իմանաք, - ավարտելով իր խոսքն, ասաց Լորիս-Մելիքովը, - Ռուսաստանը չի համաձայնվի իր հարևանությամբ գտնվող Արևմտյան Հայաստանում սուլթանի հովանավորությամբ ինքնավարություն հաստատելու գաղափարին: Նախ, սուլթանը հայերին երբեք չի տա այդ ինքնավարությունն, այն էլ Ռուսաստանին սահմանակից տարածքում: Եվ երկրորդ, այդ տարածքում կհաստատվի Անգլիան: Իսկ դա ձեռնտու չէ Ռուսաստանին, որովհետև հարմար պահին դա օգտագործելու է Ռուսաստանի դեմ:

«Այդ ի՞նչ եք անում...»

Հունիսի 21-ին հայոց պատվիրակության մոտ եկավ Լորիս-Մելիքովը: Նրանք մտքեր փոխանակեցին իրավիճակի շուրջ: Զորավարին տեղեկացրին մինչ այդ կատարած աշխատանքի մասին և նրան խնդրեցին խոսել Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Գորչակովի հետ, նրան համոզել պաշտպանելու հայոց խնդիրը:

- Անպայման կխոսեմ, - ասաց Լորիս-Մելիքովը, - թեև ես մասնավոր անձ եմ: Իսկ դուք մի հուսահատվեք:

Հաջորդ օրը Լորիս-Մելիքովի մոտ նրա հրավերով գնաց Նար-պեյը: Հայտնելով Գորչակովի հետ իր զրույցի մասին, Լորիս-Մելիքովն ասաց.

- Այդ ի՞նչ եք անում դուք: Երեկ ես ձեզ խորհուրդ էի տալիս, առանց խտրականության դիմել բոլոր պետություններին, իսկ այսօր առավոտյան Գորչակովի հետ հանդիպելիս, նա անչափ դժգոհեց, որ մինչև այսօր նրան չեք այցելել: Այս ի՞նչ խաղ եք անում: Դուք հասկանո՞ւմ եք, թե դա ինչ է նշանակում:

- Միխայիլ Տարիելովիչ, ասել էր նրան Գորչակովը, - այս ի՞նչ դիրք են բռնել ձեր հայրենակիցները: Ձեր հրամանատարությամբ ռուսական զորքերը հսկայական զոհերի ու զրկանքների գնով հայկական նահանգներն ազատեցին թուրքական բռնություններից, իսկ ձեր հայրենակիցներն անգլիացիների մոտից չեն հեռանում: Ես հայերին հրաժարվում եմ հասկանալ...

Այնուամենայնիվ, հետևելով Լորիս-Մելիքովի խորհրդին, նույն օրը Մկրտիչ Խրիմյանն ու Խորեն Գալֆայանն որպես Պոլսի հայոց պատրիարքի և հայոց ազգային ժողովի լիազորված ներկայացուցիչներ, դիմում ներկայացրին իշխան Գորչակովին: Կրկնելով պատրիարքի վերոհիշյալ միտքը, նրանք միաժամանակ դիմումի մեջ ընդգծում էին. «Արևելքի մարդկանց ու իրերի մեր անձնական ճանաչողությունն ու փորձը մեզ մղում է համարձակվել հայտարարելու, որ որևէ թուրքական կառավարություն և մուսուլմանական վարչություն չեն կարող մեր երկրին անհրաժեշտ ռեֆորմներ իրականացնել: Եթե թուրքական կառավարությունն ազատ թողվի հայ կուսակալի ընտրության գործում, ապա Կոնստանդնուպոլսի քմահաճույքները ճակատագրորեն տևական կդարձնեն այն ի չար գործադրումները, որոնց վերացմանն է ձգտում Եվրոպան»:

Այնուհետև շարադրելով խնդրի վերաբերյալ իրենց նկատառումները, հայ պատվիրակները Գորչակովին խնդրում էին «բարյացակամ հենարանը շնորհելու կոնգրեսում»:

Լորիս-Մելիքովին հաջողվել էր հիվանդ Գորչակովի դժգոհությունը մեղմել, և ձեռք էր բերել նրա համաձայնությունը հայոց պատվիրակությանն ընդունելու համար: Խորեն Նար-պեյը ու Մկրտիչ Խրիմյանը հունիսի 23-ին դիմեցին Գորչակովին, խնդրելով «տեսակցություն շնորհել մեզ և ընդունել մեր բարձրագույն հարգանքի հավաստիքը...»:

Սակայն Գորչակովը հիվանդության սրման պատճառով չկարողացավ ընդունել հայոց պատվիրակներին: Նրա փոխարեն Նար-պեյն ու Մ. Խրիմյանն հունիսի 24-ին հանդիպեցին Շուվալովին:

Այս հանդիպումից մի քանի օր անց, հունիսի 29-ին Նար-պեյն ու Խրիմյանը երկիմաստ բովանդակությամբ դիմում հղեցին Շուվալովին. «Հայերը,- գրում էին նրանք, - որոնց դատը կոնգրեսը պետք է քննարկի Սան-Ստեֆանոյի հաշտության դաշնագրի 16-րդ հոդվածի հիման վրա, ցանկանում են ստանալ այն բարելավումները, որոնք տրվում են եվրոպական Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդներին, քանի որ այն վարչակարգն, որի տակ ապրում են նրանք այսօր Հայաստանում, մի քանի անգամ ավելի ճնշիչ է, քան կրում են եվրոպական Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդները: Ուրեմն մենք քաղաքական ազատություն չենք պահանջում և չենք դնում թուրքական կառավարությունից անջատվելու պահանջ: Մենք ցանկանում ենք, որպեսզի կատարվի Թուրքահայաստանի բաժանում, այն է՝ Էրզրումի ու Վանի վիլաեթներում և Դիարբեքիրի վիլայեթների հյուսիսային մասում, որտեղ մենք մեծամասնություն ենք կազմում թուրքերի նկատմամբ»:

Այդ հանդիպումից կարճ ժամանակ անց, ըստ պայմանավորվածության Լորիս-Մելիքովն ու Նուպար փաշան եկան Մ. Խրիմյանի մոտ: Այստեղ էին պատվիրակության բոլոր անդամները:

Լորիս-Մելիքովն ու Նուպար փաշան համաձայնության էին եկել, որպեսզի միասին ներազդեին Մ. Խրիմյանի վրա և վեհաժողովին ներկայացնեին ավելի իրատեսական ծրագիր, ինչի շուրջ նրանք նախօրյակին բանակցել էին նաև Բիսմարկի հետ:

Սակայն Մ. Խրիմյանն ոչ մի կերպ չհամաձայնվեց, ցույց տալով Ներսես պատրիարքի հեռագիրն, որով նա պահանջում էր նույնիսկ ոչ մի տող չփոխել:

Մ. Խրիմյանը հույս ուներ, որ Անգլիան հայոց անպատճառ տալու է թագավորություն, «ռուսին առջև պատնեշ կանգնելու համար»:

Լսելով Մ. Խրիմյանի դատողությունները, Լորիս-Մելիքովը հարկ համարեց նկատել, որ այդպիսի դիրքորոշումով հայոց պատվիրակությունը վիրավորում է Ռուսաստանին, հարկադրում է Ռուսաստանին բռնել ոչ նպաստավոր դիրք:

- Միթե՞ չեք հասկանում ձեր արածի հետևանքը: Ինչպե՞ս եք չարախոսում Ռուսաստանին, երբ ռուսական զորքերը գտնվում են հայկական հողի վրա, պատրաստ հայերին պաշտպանելու թուրքերի ու քրդերի ասպատակությունից:

Նուպար փաշան էլ, որ իր հերթին համոզված էր Լորիս-Մելիքովի փաստարկներին, նկատեց.

- Մեզ հարկավոր չէ ամբողջապես ու միայն փարվել Ռուսաստանին: Ռուսաստանին դիմելու հետ միասին կարելի է խնդրել նաև եվրոպական մյուս տերությունների պաշտպանությունը: Սխալվում ենք նախատելով Ռուսաստանին:

Այնուհետև Նուպար փաշան իր մտահոգությունն արտահայտելով 16-րդ հոդվածի սպասվող փոփոխության համար, ասաց.

- Սան-Սթեֆանոյի դաշնագրին մեջ 16-րդ յոդուածը դնել տալու յաջողիլը այնպիսի գործ մըն է, որուն համար հայ ժողովուրդը ոսկի արծան մը պէտք է կանգնէ Ներսէսի յիշատակին:

Համաձայնվելով Նուպար փաշայի ասածին, Լորիս-Մելիքովը նկատեց, որ եթե 16-րդ հոդվածը փոխվի, այդ դեպքում այլևս ոչ ոք չի կարողանա շտկել իրավիճակը:

Այս հանդիպման ժամանակ էր, որ Լորիս-Մելիքովը դիմելով Նուպար փաշային ու պատվիրակության անդամներին, ասաց.

- Դուք վերևում ոչինչ մի հուսացեք, ներքևում մի բան ձեռնարկեք, այնտեղ էլ թերևս հնարավոր լինի օգնել ձեզ:

Իր այս ակնարկով Լորիս-Մելիքովը հայոց պատվիրակներին հասկացնել տվեց, որ Ռուսաստանը պարզապես իր շահերից ելնելով, քաջալերում է օսմանյան կայսրության լծի դեմ քրիստոնյա ժողովուրդների պայքարը և հարկավոր է դրանից օգտվել: Կոմսն ուղղակի հիշեցրեց, որ եթե կան թուրքական լծից ազատագրված քրիստոնյա ժողովուրդներ, ապա դա բացարձակապես կատարվել է Ռուսաստանի օգնությամբ:

Բայց Լորիս-Մելիքովն ո՞ւմ էր հիշեցնում այս բոլորը...

Հետագայում Լորիս-Մելիքովի այս արտահայտությունը հայ իրականության մեջ դարձավ լայն քննարկման առարկա: Լորիս-Մելիքովը «վերև» ասելով նկատի էր ունեցել Ռուսաստանին անցած հայկական տարածքները, իսկ «ներքևը»՝ Կիլիկիան: Լորիս-Մելիքովը լավ գիտեր Կիլիկիայի հայության պայքարի մասին: Նրա համոզմամբ Կիլիկիան այն միակ կենտրոնն էր, որտեղ հայերի համար կար հավանականություն ինքնուրույն գոյության համար:

Իմիջիայլոց Լորիս-Մելիքովի ակնարկը լավ էր հասկացել նշանավոր վիպասան Ծերենցը, որը 1877 թ. «Թորոս Լևոնի» վեպից հետո 1879 թ. գրեց իր նշանավոր «Երկունք Թ դարու» պատմավեպը:

Հայոց պատվիրակության հետ համաձայնության չգալով Լորիս-Մելիքովն ու Նուպար փաշան հեռացան տհաճ տպավորությամբ:

Ի Վերջո, Լորիս-Մելիքովի համար աստիճանաբար պարզ էր դառնում, որ հայոց պատվիրակության անդամների, հատկապես Մկրտիչ Խրիմյանի ու Սինաս Չերազի վրա մեծ ազդեցություն ուներ Մելքոն խանն, որը բացահատորեն կանգնած էր Անգլիային ապավինելու դիրքերում:

Երբ այս ամենի մասին Լորիս-Մելիքովը խոսեց Նուպար փաշայի հետ, վերջինս, որը լավ գիտեր Մելքոն խանին, նրա հետ ոչ միայն ցանկություն չհայտնեց տեսակցել այլև Լորիս-Մելիքովին էլ խորհուրդ տվեց խուսափել հանդիպելուց:

Մկրտիչ Խրիմյանը նույնիսկ հրաժարվեց հանդիպել Լորիս-Մելիքովին, այդ համարելով վնասակար: Մ. Խրիմյանն այնպես էր ենթարկվում Մելքոն խանի ազդեցությանը, որ ցանկանում էր Նար-պեյին հեռացնել պատվիրակության կազմից, ասելով.

- Վնասակար է, մեր խորհուրդները Ռուսաց կիմացնէ, ղրկենք զինք Բարիզ կամ Լոնտրա...

Դժվար չէ պատկերացնել հայրենասեր գեներալ Լորիս-Մելիքովի հիասթափությունը այն բանից, որ հայոց պատվիրակությունը մերժել էր իր խորհուրդը՝ Ռուսաստանի պատվիրակության հետ աշխատել համագործակցված, նրա հետ սերտ կապ պահպանելով: Եվ անվանի զորավարն անչափ վշտացավ, որ իրեն լսող չկա և դառնությամբ համոզվեց, որ իր ներկայությունը Բեռլինում այլևս ավելորդ է: Բնավորությամբ չար ու նախանձ չլինելով,, այնուամենայնիվ, Լորիս-Մելիքովի համար անչափ

տարօրինակ էր, որ հայոց պատվիրակությունը գերադասում էր լսել Մելքոն խանի խորհուրդներն, անտեսելով իրեն, որն այնքան ջանք ու եռանդ էր դրել պատերազմի ժամանակ հայոց փրկության համար: Ազնիվ զորավարի համար հասկանալի չէր այդ ամենը...

Բեռլինից մեկնելուց առաջ Լորիս-Մելիքովն այցելեց Նուպար փաշային, որն անչափ վշտացած ու վիրավորված էր իր նկատմամբ հայոց դրսևորած վերաբերմունքից: Բայց Նուպար փաշան դեռ մի առ ժամանակ մնաց Բեռլինում, քանի որ լուրջ խոսակցություն էր գնում նրան Թուրքիայից անկախացած Բուլղարիայի կառավարիչ նշանակելու մասին: Այս կապակցությամբ նա հանդիպել էր Բեռլինում գտնվող տերությունների ներկայացուցիչներին: Գործակովը նույնպես դեմ չէր եղել Նուպար փաշայի թեկնածությանը:

Սակայն լուրը հասավ Պոլիս: Նուպար փաշայի թշնամիները սկսեցին գործել...

Լորիս-Մելիքովին, մեկնելուց առաջ, այցելեց Նար-պեյը: Ջերմ էր նրանց հրաժեշտը: Միխայիլ Տարիելովիչն անչափ վշտացած էր այն ամենից, ինչ տեսել ու զգացել էր Բեռլինում հայոց պատվիրակության հետ հանդիպումների ժամանակ:

Արդեն մոտիկից ճանաչելով Նուպար փաշային, տեսնելով նրա ունեցած հեղինակությունը եվրոպական տերությունների ղեկավարների մոտ, պետական գործերին տիրապետելու հմտությունը, Լորիս-Մելիքովն այս մասին իր մտորումները հայտնելով Նար-պեյին, ասաց.

- Ինչո՞վ են ղեկավարվել այնտեղ, Պոլսում, երբ Նուպար փաշայի նման հեղինակություն ու հմտություն ունեցող գործչի փոխարեն Բեռլինի վեհաժողով են ուղարկել դիվանագիտությունից ու քաղաքականությունից շատ հեռու կանգնած, Եվրոպայում բոլորովին ճանաչում չունեցող մեկի, ինչպիսին Խրիմյանն է, որն իր պատրիարքից ու Մելքոն խանից այն կողմ ոչինչ չի տեսնում:

«Հայերը հենց նոր իմացան, որ խարված են...»

Ավարտվեց Բեռլինի վեհաժողովը: Ստորագրված պայմանագրի 61-րդ հոդվածում նույնիսկ չհիշատակվեց Հայաստանի անունը: Արևմտահայության հույսերը չարդարացան: Ձախողվեց Պոլսի պատրիարքարանի որդեգրած քաղաքականությունը: Հայոց պատվիրակությունը ձեռնունայն հեռացավ Բեռլինից, պայմանագիրը ստորագրած տերությունների ներկայացուցիչներին հանձնելով հետևյալ դիմումը. « Հայկական դեպուտացիան գալիս է արտահայտելու ձերդ բարձր պայծառափայլությանն իր վիշտը, որն իր ինչքան օրինական, այնքան էլ չափավոր խնդրանքները չարժանացան կոնգրեսի ուշադրությանը:

Մենք կարծում էինք, որ մի քանի միլիոնից բաղկացած ազգը, որը մինչև այժմ չի եղել օտար քաղաքականության գործիք, ոչ մի գլխացավանք չի պատճառել թուրքական կառավարությանը, թեև վերջինս նրան ավելի է ճնշել, քան Թուրքիայի մյուս քրիստոնյա ցեղերին, և որ ցեղային ու կրոնական կապեր չունենալով մեծ տերություններից որևէ մեկի հետ, այնուամենայնիվ, նույնքան քրիստոնյա է, որքան Թուրքիայի մյուս քրիստոնյա ժողովուրդները և մեր դարում կարող էր ձգտել նույն պրոտեկցիային /հովանավորությանը/, մենք կարծեցինք, որ այդպիսի ազգը կստանար իրավունք ապրելու իր սեփական կյանքով առանց քաղաքական որևէ ամբիցիայի /պատվասիրության/ և Հայաստանի հողի վրա իր պաշտոնյաներով կառավարելու:

Հայերը հենց նոր իմացան, որ խաբված են, որովհետև խաղաղասեր են եղել, նրանց իրավունքները չեն ճանաչվել և ոչինչ չեն ստացել, որպեսզի կարողանան պաշտպանել իրենց հինավուրց եկեղեցին և ազգային անկախությունը:

Հայկական դեպուտացիան շուտով կմեկնի Արևելք՝ իր հետ տանելով այս դասը: Այնուամենայնիվ , նա հայտարարում է, որ հայ ժողովուրդը երբեք չի դադարի իր ձայնը բարձրացնել, մինչև որ Եվրոպան կատարի նրա պահանջների արդար դատաստանը»:

Այս դիմումը, որը ստորագրել էին Բեշիկթաշի արքեպիսկոպոս Խորեն Նար-պեյը և Տարոնի արքեպիսկոպոս, Թուրքիայի հայոց նախկին պատրիարք Մկրտիչ Խրիմյանը, մեծ տերությունների ներկայացուցիչներին հանձնվեց 1878 թ. հուլիսի 13-ին:

Իսկ Լորիս-Մելիքովը 1878 թ. օգոստոսի 5-ին Ցյուրիխից Պետերբուրգում գտնվող Մ. Սաֆասարյանցին ուղարկած նամակում հայտնում էր հետևյալը. «Ձեզ հայտնի հարցի կապակցությամբ հայտնում եմ օրերս իմ ունեցած տեղեկությունների համաձայն, ինչպես նաև այն միջոցներն, որոնք իմ կարծիքով անհարաժեշտ են ձեռնարկել, որպեսզի բոլոր խոստումները չվերածվեն մեռած տառի»:

Լորիս- Մելիքովից ստացված այս տեղեկությունն, որը վերաբերում էր Բեռլինի կոնգրեսում հայկական հարցի արծարծման անհաջողությանը, Մ. Սաֆասարյանցը օգոստոսի 15-ին նամակով հայտնում է Թիֆլիսում գտնվող Գ. Եվանգուլյանին՝ հանձնարարելով այդ օրերին Թիֆլիս մեկնող Կ. Եգյանի հետ քննարկել ստեղծված իրավիճակը և անհրաժեշտ քայլեր ձեռնարկել:

Մ. Սաֆասարյանցը Լորիս-Մելիքովի հանձնարարությամբ Թիֆլիսում գտնվող հայ գործիչներին խորհուրդ էր տալիս չվհատվել ու շարունակել առաջ տանել Արևմտյան Հայաստանն ազատագրելու ծրագիրը:

Հետագայում, երբ Բեռլինի կոնգրեսում քխված մեռելածին 61-րդ հոդվածի վրա այլևս ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, երբ 1890-ական

թվականներին սուլթանական Թուրքիայում սկսվել էին հայկական կոտորածները, վշտացած Նուպար փաշան, որը 16-րդ հոդվածի համար առաջարկել էր Ներսես պատրիարքի ոսկե արծանը կանգնեցնել, այժմ նրան համարում էր «բոլոր ջարդերուն գլխավոր պատասխանատուն», 16-րդ հոդվածի փոխվելուց հետո Ներսեսի ընթացքը գնահատելով «քրեական սխալներու շարք մը»:

Սուլթանի «գեղեցիկ գործը»

Բեռլինի կոնգրեսն ոչինչ չտվեց, բայցի տխրահռչակ 61-րդ հոդվածից: Կոնգրեսից հետո 1878 թ. հուլիսի 21-ին Ներսես Վարժապետյանն ազգային ժողովի առջև հանդես եկավ ընդարձակ ատենախոսությամբ:

Ազգը, - ասաց նա, - անընդհատ տասը տարի, իր հանճնաժողովների, քաղաքական և երեսփոխանական ժողովների, պատրիարքների միջոցով Բարձրագույն Դռնից խնդրում էր վերջ տալ կրած հարստահարություններին: Ահա, ընդգծեց նա, այս էր միայն հայոց խնդիրը: Սակայն հանդես եկան Բոսնիա-Հերցոգովինան և Բուլղարիան, որոնք դրեցին ազգային ինքնօրինության խնդիրը: «Այս գավառներն, ընդգծեց պատրիարքն, ապստամբութեան դրօշը պարզեցին օրինաւոր տիրոջը դեմ», ինչի կապակցությամբ էլ Պոլսում հրավիրվել էր դեսպանաժողով:

- Ի՞նչ ըրաւ հայոց ազգը, - հարցրեց պատրիարքը և ինքն էլ պատասխանեց, - օրինաւորութենէն դուրս չելաւ: Հայերը գոհ էին, որ օսմանեան տերութեան ներքեւ էին, այլ իրենց վիճակէն դառնապէս դժգոհ էին, և որովհետեւ ընդհանուր քրիստոնէից վիճակը բարւոքելու խօսքեր կըլլային, հայերն ալ ընդհանուր բարեկարգութենէն սպասեցին իրենց վիճակին բարւոքումը:

Այնուհետև անրադառնալով վերոհիշյալ դեսպանաժողովին, պատրիարքն այն հետևյալ կերպ գնահատեց, ասելով.

- Օսմանեան կայսերութեան ալ քայքայումը կը պատրաստէր՝ ապստամբութիւնը քաջալերելով:

Պատմելով, թե ինչպես է հաջողվել «դաշնադրութեան մէջ» «հայոց յիշատակութիւնը» մտցնել, պատրիարքը մեջբերում է Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը, հիշում է, որ հայ ժողովրդի համար պատուհաս են եղել ոչ միայն քրդերն ու չերքեզները, այլև «անարժան պաշտօնատարները» և այնուհետև նկատի ունենալով սուլթան Աբդուլ Համիդին, ասում է.

- Պատերազմէն առաջ մեր վեհափառ ինքնակալը... սահմանադրութեամբ և հաւասարութեան սկզբունքով փորձեց լուծել Արեւելեան խնդիրը, կրօնքի խտրութիւնը վերցնելով քաղաքական ու վարչական խնդիրներու մէջ, ու տերութեան պաշտօնները հաւասարապէս բաշխելով իր ա-

մէն կարգի հպատակած, եւ անոնց մէջ մէկ հատիկ խտրութիւն մը ընդունելով՝ այն որ յուրաքանչիւրին կարողութեանէն ու անձնական արժանիքէն կը ծագի: Հայոց ազգը ոչ դժկամակ, ոչ ընբոստ գտնուեցաւ այս հայրենասիրական վերջին ջանից, նա մանաւանդ քանի քանի իր զաւակունքը ինքզինքնին նուիրեցին գործին յաջողութեանը. ինչո՞ւ, վասնզի տեսան որ փառաւոր դեր մը պահուած էր հայուն՝ խնդրոյն այդ եղանակ լուծման մէջ, վասնզի հայն իր ինքնորոյն եկեղեցիովն ու ինքնորոյն ազգութեամբը, որ չէ խառնուած ոչ օտար եկեղեցւոյ մը հետ եւ ազգի մը հետ, ամենէն աւելի կրնար անխառն եռանդով աշխատիլ երկրին վերածնութեանը համար:

Պատրիարքը սուլթանի ձեռնարկումը անվանելով «գեղեցիկ գործ», ցավով նշում է, որ դա չհաջողվեց պատերազմում «թշնամւոյն յաղթութեան» պատճառով:

Պատրիարքն իր ատենախոսության մեջ մեծ տեղ է հատկացնում Պետերբուրգ և Արևմտյան Եվրոպա ուղարկված պատվիրակությունների մասին, և դառնորեն նշում, որ «առաջուց գիտէի, թէ այս դարուս մէջ շահը միայն կը խօսի եւ մանաւանդ շահը միայն պիտի խօսի... այն ակումբին մէջ՝ որ պիտի գումարէր ի Բեռլին»:

Պատրիարքը մեջբերում է 61-րդ հողվածը և որպես ամփոփում, ասում.

- Հայոց վարչութիւն Հայաստանի մէջ առանց քաղաքական փառասիրութեան զոր երբէք չենք ունեցած և չենք կրնալ ունենալ, մեր վեհափառ սուլթանին հովանաւորութեանը եւ վեհապետական իշխանութեանը ներքեւ:

Պատրիարքը խոստովանում է, ընդգծելով, թե «այո, խնդիրն ամբողջապէս չէ կատարուած. այլ մեծ է արդէն ինչ որ ստացանք դաշնադրութեան այն յօդուածով. եւ մեծ է՝ ոչ ոք կրնայ ուրանալ զայս եւ ես քան զայլ ոք աւելի նուազ Անգղիոյ մասնաւոր պաշտպանութիւնը»:

Եվ ամբողջ հույսը կապելով Անգլիայի հետ, պատրիարքը կոչ է անում գնալ Հայաստան, որտեղ Անգլիայի օգնությամբ չեն լինի սով, հարստահարություն:

«Ուղիներ պիտի բացուին, ոգևորված համոզում էր պատրիարքը ներկաներին, ջրանցքներ պիտի շինուին, գործարաններ պիտի կառուցուին: Անգղիոյ դրամատէրք հոն պիտի երթան իրենց դրամը գործածելու. քող երթան մեր դրամատէրք ալ, ընկերութիւններ կազմեն այս օրուընէ»...:

Թադեոս Պեկյանը մեղադրում է

Որպեսզի հնարավոր լինի պատկերացում ունենալ, թե ինչ վիճակ էր ստեղծվել Բեռլինի կոնգրեսից հետո,արժե ծանոթանալ Կ. Պոլսի հայոց ազգային ժողովի 1878 թ. հոկտեմբերի 6-ին տեղի ունեցած նիստի արձանագրությանը:

Ազգային ժողովը երկար վիճաբանությունից հետո վերջապես համաձայնվում է լսել Պոլսի Իսկյուտար թաղամասից երեսփոխան ընտրված Թադեոս Պեկյանի հարցադրումները:

Պեկյան էֆենդին հայկական խնդրի վերաբերյալ ներկայացնում է հետևյալ երեք հարցերը.

«1. Ազգային կամք մը պետք էր յայտնել եւրոպիոյ՝ օրինաւոր և հանդիսաւոր կերպով: Զայդ կամքը չուզեցին յայտնել:

2. Փոխանակ ազգային իսկական և անկեղծ կամքին, տարբեր կամք յայտնեցին Եւրոպիոյ, իսկ Քոնկրէին բնաւ կամք չներկայացուցին պաշտօնապէս:

3. Քաղաքական սխալներ գործեցին, մերթ այս և մերթ այն քաղաքանութեան հետևանքով, որով ներկային մէջ մէկմէկու հետ մրցող երկու հզօր քաղաքականութեանց ալ վստահութիւնն ու համակրութիւնը կորսնցուցին»:

Այնուհետև Պեկյանը հիշեցնում է 1876 թ. դեկտեմբերի 10-ին ազգային ժողովի որոշումն, որտեղ ասվում էր հետևյալը. «Ազգային ժողովս վստահ ըլլալով թէ օսմանեան կայսերական կառավարութիւնն ինչ առանձնաշնորհութիւններ որ պիտի տայ ուրիշ ազգաց, նոյնը պիտի շնորհէ նաև հայոց ազգին՝ անոր արդի վիճակին բարւոքմանը համար, և այս կերպով որևէ զրկանք տեղի չպիտի ունենան՝ որ բողոքոյ առիթ ընծայեն հայոց ազգին, այս մասին պէտք եղած միջնորդութիւնը յանձնարարելով Ամեն. Ս. պատրիարք հոր, կանցնի իր օրակարգին»: Այս որոշումն ընդունվել էր Կ. Պոլսում հրավիրված դեսպանաժողովի կապակցությամբ, որը հույս էր ներշնչել հայկական հարցի լուծման համար:

Հայտնի է, որ դեսպանաժողովն որևէ արդյունք չտվեց և սկսված ռուս-թուրքական պատերազմն արևմտահայության առջև նոր խնդիրներ դրեց: Ահա, այս կապակցությամբ էլ Պեկյան էֆենդին քննադատում է պատրիարքին, որ նա ազգային ժողով չհրավիրեց և հաշվի չառավ, որ պատերազմից հետո հայկական հարցի լուծման եղանակը բոլորովին ուրիշ կերպարանք էր ստացել: Պատրիարքը պարտավոր էր դիմել ազգային ժողովին, որպեսզի ստեղծված իրավիճակին համապատասխան ստանար ազգային քաղաքականության համար նոր որոշում ու հրահանգ:

- Քանի որ, - ընդգծեց Պեկյանը, - Եւրոպիոյ քաղաքականութիւնը փոխուած էր, ազգն ալ անշուշտ պիտի փոխէր իր քաղաքականութիւնը:

Այնուհետև, անդրադառնալով իր երկրորդ հարցադրմանը, Պեկյանն ընդգծում է, ռուս-թուրքական պատերազմը սկսվելուն պես պատրիարքը արձակեց մի կոնդակ, որը կարդացվեց եկեղեցիների մեջ և ուղարկվեց գավառներ:

- Այս կոնդակն, - ասաց Պեկյանը, - Յունաց պատրիարքին կոնդակին չնմանիր, այս կոնդակին լեզուն ու պարունակութիւնը ծեր ամենուն

միտքն է. թէ գտնուեցաւ այն ատեն հայ մը՝ որ իր հաւանութիւնը տուած ըլլար այդ կոնդակին պարունակութեանցը. ամեն հայ արդար զայրույթ զգաց ատոր դէմ, որովհետեւ հայոց հինաւուրց՝ առ բարեխնամ կառավարութիւնն ունեցած հավատարմութեամբը հանդերձ չեզոք քաղաքականութեան սահմաններէն դուրս ելնելով,դիւանագիտական գործիք կըլլար նորա հեղինակը՝ ճշմարտութիւնը բոլորովին կեղծելով:

Նշելով, որ հասկանալի չէ, թե ի՞նչ նպատակով պատրիարքն իր այդ կոնդակը տարածեց եվրոպական թերթերի միջոցով, Պեկյանը շարունակեց.

- Այս ալ բաւական չէ, դեկտեմբերի 10-ի որոշումը ս. պատրիարքն իր ձեռքին ունենալէ ետեւ, 1877 ապրիլ 14/26-ին Անգղիոյ դեսպան Լայարդի առջև ըսած խօսքերն, որք դարձեալ ճշմարտութեան բոլորովին հակառակ էին, ձեր ամենուդ միտքն է դեռ, այլ սակայն աւելորդ չեմ համարիր յիշեցնել ձեզ սա հետեւեալ խօսքերը. «Ռուսաստանի մէջ գտնուող հայոց վրայ օրթոդոքս կրօնքն ընդունել տալու համար ռուսաց կողմանէ բռնական միջոցներ գործածուիլն ապացոյցներով հաստատեալ է: Ահա Տաճկաստանի հայոց ազգը ռուսաց այս նպատակին մինչեւ վերջին աստիճան ընդդիմութիւն և դիմադրութիւն ընելու հաստատապէս որոշում ըրած է: Մայրաքաղաքիս և գաւառաց մէջ գտնուող հայերը գանգատ ընելու բնաւ բան մը չունենալով, մինչեւ իսկ հայոց անհատներէն տերութեան բարձր աստիճաններուն արժանացող շատեր գտնուելուն, տերութեան վարչութեան իսկ մասնակից եղած են»:

Պեկյան էֆենտին նաև նշում է, որ պատրիարքի այս տեսակետը հեռու է ճշմարտությունից, «ազգային կամաց արտահայտութիւնը չըլլալէ ի զատ, հզօր կառավարութեան մը դէմ, որոյ հովանաւորութեանը տակ կը գտնուին մէկ միլիոն չափ մեր արեանակից հայ եղբայրներն, անխնայ ամբաստանութիւններ ու վատահամբաւութիւններ կը պարունակէին, որք վիրավորեցին հայոց զգացումները»:

Մաթեոս Պեկյանի ելույթն ընդմիջվում էր ինչպես պատրիարքի, այնպես էլ ազգային ժողովի անդամների կողմից: Բայց նրա ուղղակի հարցադրումներին ու մեղադրանքներին պատասխանելու փոխարեն պատրիարքը հիշեցնում է, թե «երբ սպառնալիք ու բարձրագոյն հրաման եկաւ ինձ Դռնէն պատգամավորները Պերլիճէն յետս կոչելու. որուն պատասխանեցի, թէ աւելի լաւ կը համարէի կախուիլ պատրիարքարանի դռնէն»:

ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍ

Կարգապահություն և խստություն

Լորիս-Մելիքովը բավական երկար մնաց էմս առողջարանում: Որոշ չափով վերականգնվեց նրա առողջությունը: Նա արդեն իրեն այնքան էր լավ զգում, որ որոշեց վերադառնալ Թիֆլիս:

Լորիս-Մելիքով ամուսինները նախ կամեցան անցնել Պետերբուրգ, հանդիպել որդիներին՝ Տարիելին ու Զաքարին, որոնք սովորում էին պաժական դպրոցում: Կոմսը մտադիր էր անցնել թոշակի և զբաղվել տնտեսությամբ: Դեռևս 1868 թ. Ալեքսանդր Երկրորդ ցարը նրան Կուբանի տարածքում նվիրել էր 5 հազար դեսյատին հողամաս, որը փաստորեն մատնվել էր անուշադրության: Նինա Իվանովնան ավելի գործնական էր: Նա մտածում էր, որ այդ կալվածքից ստացված եկամտով կարելի էր թեթևացնել իրենց հինգ երեխաների ապագա կյանքը:

Պետերբուրգում Լորիս-Մելիքովը բնակարան չուներ և նրան հյուրընկալեց Ալեքսանդր Ագեևիչ Աբազան, որի հետ մտերմություն էր անում դեռևս յունկերական դպրոցից: Աբազան բարձր դիրք էր զբաղեցնում Պետերբուրգում, լինելով պետական խորհրդի անդամ:

Ժամանելով Պետերբուրգ, Լորիս-Մելիքովն ըստ կարգի, պետք է ներկայանար ցարին: Դա տեղի ունեցավ 1879 թ. հունվարի 11-ին: Ալեքսանդր Երկրորդը պատշաճ հարգանքով ընդունեց Լորիս-Մելիքովին, գոհունակություն հայտնելով նրա առողջական վիճակի բարելավման համար:

-Դուք, կոմս, ասացեք խնդրեմ, ինչպե՞ս Կովկասյան կամպանյաի ժամանակ հաղթահարեցիք ժանտախտի համաճարակը, - խոսակցության թեման փոխելով, հարցրեց ցարը:

Լորիս-Մելիքովը համառոտակի զեկուցեց իր կատարած աշխատանքի մասին և առանձնակի ընդգծեց, որ հաջողությունը ձեռք է բերվել կարգապահության ու խստության շնորհիվ:

Այս խոսակցությամբ էլ ավարտվեց ցարի հետ հանդիպումը:

Անսպասելի հրավեր

1879 թ. հունվարի 12-ին նշանակված էր Կովկասի փոխարքա Միխայիլ Նիկոլաևիչի աղջկա հարսանիքը: Լորիս-Մելիքովը տիկնոջ հետ հրավիրվել էր Ձմեռային պալատ երեկոյան պարահանդեսի:

Սակայն, բոլորովին անսպասելի, ցերեկվա ժամը 15-ին Լորիս-Մելիքովին հրավիրեցին Ձմեռային պալատ:

Ռուսաստանի հարավային նահանգներում մոլեգնում էր ժանտախտի համաճարակը, որը սպառնում էր տարածվել ամբողջ երկրով ու անցնել Եվրոպա: Եվրոպական տերությունները փակեցին Ռուսաստանի հետ ունեցած սահմանները, դադարեցրին առևտուրը:Կառավարությունը տենդորեն ելք էր որոնում: Հարկավոր էր շտապ միջոցներ ձեռնարկել: Երբ նախարարների կոմիտեում քննարկվում էր այս հարցն, որոշվեց համաճարակի շրջան ուղարկել լայն լիազորություններով օժտված մեկի, որը կկարողանար կտրուկ միջոցներով արդյունքի հասնել:

Առաջարկվեց երեք թեկնածու: Երկուսն անցած պատերազմում փառաբանված հերոսներն էին՝ գեներալ Գուրկոն և գեներալ Լորիս-Մելիքովը: Երրորդը՝ Տրեպովն էր: Լորիս-Մելիքովի թեկնածությունն առաջարկեց ռազմական նախարար Միլյուտինն, ասելով, որ ծիշտ կլինի ուղարկել համարձակ գեներալի, բայց ավելի ծիշտ կլինի, որ այդ համարձակ գեներալը նաև խելացի լինի: Նախարարների կոմիտեն չկարողացավ ընտրություն կատարել և երեք թեկնածությունները ներկայացրեց ցարին:

Ալեքսանդր Երկրորդն անվանեց Տրեպովին:

- Ձերդ մեծություն, - ասաց Միլյուտինը, - ծիշտ է, Ֆեոդոր Ֆեոդորովիչ Տրեպովը աչքի է ընկնում կամային հատկություններով, բայց, ներեցեք, Զասուլիչի կրակոցից հետո նրան նշանակելն օգտակար չի լինի: Երաշխավորում եմ այդ շատ պատասխանատու գործի համար գեներալ Լորիս-Մելիքովին:

Ալեքսանդր Երկրորդը նախորդ օրը ընդունել էր Լորիս-Մելիքովին և այժմ Միլյուտինի առաջարկից հետո, հիշեց նրա զեկույցը և հրամայեց անմիջապես Լորիս-Մելիքովին հրավիրել իր մոտ:

... Ահա, թե ինչն էր անսպասելի հրավերի պատճառը:

- Հայտնի է ձեզ կոմս, - դիմեց ցարն իրեն ներկայացած Լորիս-Մելիքովին, - որ Սամարայի, Սարատովի և Աստրախանի նահանգներում ժանտախտի համաճարակ է սկսվել:

Ստանալով դրական պատասխան, ցարը շարունակեց.

- Ինչպե՞ս եք վերաբերում, եթե ձեզ գործուղեմ Ստորին Վոլգայի երկրամաս այդ համաճարակի դեմ պայքարը կազմակերպելու համար:

- Պատրաստ եմ կատարել ձերդ մեծության կամքը, - հստակ պատասխանեց Լորիս-Մելիքովը:

Ալեքսանդր Երկրորդը կոմսին ցանկացավ հաջողություն և ներքին գործերի նախարարին հանձնարարեց ներկայացնել հրամանագիր կոմս Լորիս-Մելիքովին Սամարայի, Սարատովի և Աստրախանի նահանգների ժամանակավոր գեներալ-նահանգապետ նշանակելու մասին: Ցարը հրամանագիրը ստորագրեց 1879 թ. հունվարի 24-ին:

Հետագայում Ցարիցինի քաղաքագլուխ Ի. Մելնիկովը հիշելով այդ մասին, գրել է. «Հանգուցյալ ցարի կողմից կոմս Լորիս-Մելիքովի անձնա-

կան ընտրությունը մեծագույն հաջողություն էր: Կովկասյան այդ գինվորն իր վրա դրված պարտականությունների կատարման գործում խելքին, էներգիային ու անխոնջությանը միացրեց անսովոր վարվեցողությունն ու մարդասիրությունը: Այդպես, 1879 թ. նա ամբողջովին դրսևորեց իրեն բնորոշող բարձրագույն որակով»:

Այդ օրն էլ Ալեքսանդր Երկրորդը Լորիս-Մելիքովին ճաշի հրավիրեց: Ներկա էին նաև բավարական թագաժառանգ Արնուլֆը, Մակովը, Ուրալի ատաման իշխան Գոլիցինը և Միլյուտինը:

Ցարը խոսակցությունը սկսեց անցած պատերազմի հետ կապված դեպքերից, Լորիս-Մելիքովից հատկապես հետաքրքրվելով Կարսը գրավելու գործողությունների մասին:

Կոմսը հստակ պատասխանելով բավարարեց ցարի հետաքրքրությունը:

Ուշադրությամբ լսելուց հետո, ցարն անմիջապես փոխեց խոսակցության թեման և, ըստ երևույթին, նկատի ունենալով բավարական թագաժառանգի ներկայությունն, ասաց.

- Ահա, այժմ մեզ սպառնում է մի նոր պատերազմ՝ Ստորին Վոլգայում տարածված վարակն, որի կապակցությամբ Եվրոպան կարանտինային ապահովիչ միջոցներ է ձեռնարկել, որոնք Ռուսաստանի նկատմամբ թշնամական դավադրության տեսք ունեն: Նույնիսկ Ռումինիան մեզնից սահմանազատվում է ոչ միայն Պրուտ գետի կարանտինային սահմանագծով, այլև փակել է բոլոր ճանապարհները:

Այնուհետև, հայացքն ուղղելով Լորիս-Մելիքովի կողմը, ցարը դիմեց նրան.

- Այնպես որ, Միխայիլ Տարիելովիչ, ձեր վճռականությունից է կախված եվրոպական դավադրության ձախողումը և կյանքը կանոնավոր հուն վերադարձնելը...

Իսկ երեկոյան պարահանդեսի ժամանակ բոլորը մոտենում էին Լորիս-Մելիքովին և շնորհավորում բարձր պաշտոնում նշանակվելու համար: Լորիս-Մելիքովի նշանակմամբ առանձնապես ուրախ էին Կովկասի փոխարքան ու նրա օգնական իշխան Միրսկին: Ուրախ էին, որովհետև այդ նշանակմամբ փակվեց Լորիս-Մելիքովի համար Թիֆլիս վերադառնալու ճանապարհը: Լորիս-Մելիքովին շնորհավորելիս, փոխարքան հասկացնել տվեց, որ այդ նշանակումն առանց իր մասնակցության չի եղել: Լորիս-Մելիքովին մնում էր մեղմորեն ժպտալ, քանի որ փոխարքան պարզապես ստում էր:

«Սահման հոլտում»

Նշանակման մասին ցարական հրամանը ստանալուց հետո Լորիս-Մելիքովը ռազմական նախարար Միլյուտինի ու ներքին գործերի նախա-

րար Մակովի հետ հանգամանորեն քննարկեց իր նոր նշանակման հետ կապված բոլոր խնդիրները: Ներքին գործերի նախարարությունում ստացված տեղեկություններից պարզվեց Ստորին Վոլգայում տիրող ահավոր վիճակը: Անզուսպ տարածվող ժանտախտի համաճարակն ուղեկցվում էր սովով: Հայտնի չէր, թե մարդիկ ավելի շատ ինչից էին մեռնում. ժանտախտի՞ց, թե՞ սովից:

- Մի խոսքով, մահվան հովիտ, - մտահոգ ասաց Լորիս-Մելիքովը, - իսկ մարդիկ ինձ շնորհավորում են, չիմանալով իրական պատկերը:

Մինչև նոր նշանակման վայր մեկնելը, Լորիս-Մելիքովն անհրաժեշտ համարեց հանդիպել նշանավոր բժիշկ, պրոֆեսոր Սերգեյ Պետրովիչ Բոտկինին, խնդրելով նրան տալ հիվանդության արտաքին նկարագիրը: Բոտկինը պարզաբանեց, որ այդ հիվանդությունը սկսվում է գեղձերի ուռչելուց, այնուհետև ընդունում է թոքերի բորբոքման տեսք: Լորիս-Մելիքովը Բոտկինին պատմեց, որ անցած պատերազմում, ձմռանը,Կովկասյան ռազմաճակատում օրական քսան մարդ էր մեռնում գեղձերի ուռչումից: Բոտկինը զարմացած հարցրեց, թե ինչու այդ մասին ժամանակին չեն հայտնել:

- Հայտնել ենք, - պատասխանեց Լորիս-Մելիքովը, - այն էլ մի քանի անգամ: Բայց Պետերբուրգում չէին ուզում հավատալ, որ մեզ մոտ ժանտախտ է սկսված: Մեզ համոզում էին, թե տիֆ է:

1879 թ. հունվարի 27-ին Լորիս-Մելիքովը մեկնեց «Մահվան հովիտ»: Նա իր կայանը դարձրեց Ցարիցինը, որը գտնվում էր համաճարակի էպիկենտրոնում: Ցարիցինը Լորիս-Մելիքովն ընտրեց այն պատճառով, որ այնտեղ վերջանում էր երկաթուղին և, հետևաբար, ժանտախտից Ցարիցինը շրջափակելով, վերացվում էր նրա հետագա տարածումն երկաթուղիով:

«Հայտնում եմ ձեզ իմ դժգոհությունը...»

Հասնելով «Մահվան հովիտ» Լորիս-Մելիքովը կտրուկ միջոցներ ձեռք առավ: Նրա հրամանով ամբողջ Աստրախանի նահանգը շրջափակվեց զորքերի չորս շղթայով: Բոլոր բնակավայրեր ուղարկվեցին բժշկական խմբեր՝ սանիտարներով, դրամական և այլ անհրաժեշտ միջոցներով: Լորիս-Մելիքովը ժանտախտով բռնկված շրջանն ուղղակի վերցրեց երկաթե օղակի մեջ:

Ցարիցին գալու հաջորդ օրը գեներալ-նահանգապետն անսպասելի այցելեց տեղի կալանատուն, որը կառուցվել էր 1865 թ. և նախատեսված էր 50 մարդու համար: Կոմսի այցելության պահին այնտեղ կար 250 կալանավոր: Մարդիկ պարզապես թափված էին իրար վրա, անասելի կեղտի մեջ: Այդ վիճակն այնպիսի ծանր տպավորություն գործեց, որ Լորիս-

Մելիքովը հարկ համարեց իր մոտ պաշտոնական ընդունելության հրավիրել նաև տեղական իշխանության ներկայացուցիչներին:

«Կոմս Լորիս-Մելիքովը, - ինչպես հիշում է Ցարիցինի քաղաքագլուխը, - դահլիճ մտավ խոժոռ դեմքով, գլխի թեթև շարժումով բարևեց ու դիմեց ներկաներին.

- Այսօր ես այցելել եմ այստեղի կալանատուն և սարսափի մեջ ընկել այն նեղվածությունից ու կեղտից, ինչ այնտեղ տեսա: Դա անպատկերելի կալանատուն է: Հայտնում եմ ձեզ իմ դժգոհությունը և ձեզ նախազգուշացնում եմ, եթե իմ տեսած անկարգություններն անհապաղ չեն վերացվի, ապա ձեզ, պարոնայք, ձեզ բոլորիդ կարտաքսեմ Ցարիցինից»:

Գեներալ-նահանգապետի ահաբեկումը սթափեցրեց տեղի իշխանության ներկայացուցիչներին: Անմիջապես ստուգվեց կալանքի տակ գտնվող անձանց գործերը: Նրանց մեծ մասը կալանավորվել էին չնչին զանցանքների համար և տևական ժամանակ, առանց որևէ քննության կալանատանն էին պահվում վարչական չինովնիկների կամայականության հետևանքով: Ստուգման արդյունքով կալանավորների մեծ մասն անհապաղ ազատ արձակվեց:

Տեղական չինովնիկներից նրանք, որոնք սովոր էին անպատիժ կամայականության միջոցով տաքացնել իրենց ձեռքերը, փորձեցին տրտնջալ, թե կոմսը շփոթում է իր անելիքը, համաճարակի դեմ պայքարելու փոխարեն, զբաղվում է կալանատանը պահվող հանցագործների ազատմամբ:

Սակայն, Լորիս-Մելիքովն արտասավոր ուշադրությամբ հետևում էր իր հանձնարարությունների կատարմանը և դրսևորած վճռականությամբ հարկադրեց չինովնիկներին լռել և, ինչպես ասում են, փորձանքից հեռու մնալ...

Վետլյանկա ստանիցան

Գեներալ-նահանգապետն անհապաղ ծանոթացավ իրավիճակին և Վոլգայի ձախ ափով, կալմիկական տափաստանի միջով մեկնեց Աստրախան, եղավ առավել վտանգավոր կետերում, այդ թվում նաև Վետլյանկա ստանիցայում: Պարզվեց, որ կազակների այդ ստանիցան, չնայած ուներ 2000 բնակչություն, բայց չկար բժիշկ: Ստանիցայի սանիտարական վիճակն անտանելի էր: Վետլյանկայում ժանտախտ հիվանդությունն երևացել էր 1878 թ. հոկտեմբերին, երբ Կովկասյան ռազմաճակատից վերադարձել էր կազակային գունդը: Եվ փոխանակ անմիջապես շտապ միջոցներ ձեռնարկվեին, տեղական իշխանավորներն որոշել էին թաքցնել ժանտախտը: Ահա, այսպես Վետլյանկայից արագորեն տարածվում էր ժանտախտի համաճարակը, որի մասին պաշտոնապես Պետերբուրգ է

հաղորդվում 1878 թ. նոյեմբերի 9-ին: Մեկ ամիս անց, կարգադրվում է կարանտին մտցնել:

Համաճարակի կենտրոն Վետլյանկա ստանիցայում հիվանդները գնալով շատանում էին, իսկ հիվանդանոցում նրանց խնամող չի եղել: Առողջները վախեցել են մոտենալ հիվանդներին: Լորիս-Մելիքովին պատմեցին նաև, թե ինչպես մայրերը պատուհանից դուրս էին գցում իրենց հիվանդ երեխաներին: Նույնիսկ մեռածների դիակներն օրերով մնացել են առանց թաղելու: Ստանիցայում հիվանդացած 430 մարդուց փրկվել է միայն 60-ը:

Լինելով բոլոր վայրերում, ծանոթանալով իրավիճակին, 1879 թ. փետրվարի 2-ին Լորիս-Մելիքովը հրավիրեց հատուկ հանձնաժողովի նիստ: Այդ հանձնաժողովի մեջ մտցվեցին նաև գեներալ-նահանգապետի հետ եկած մեծ թվով արտասահմանյան բժիշկներ:

Բացելով հանձնաժողովի նիստը, կոմսը ասաց, որ նկատի ունենալով իր վրա դրված պարտականությունների ծավալը, որն իրականացնելու համար հարկ կլինի շրջել երկրամասի բոլոր բնակավայրերով, հանձնաժողովի ղեկավարումը դրվում է Սարատավի նահանգապետ Մ. Ն. Գալկին-Վրասկու վրա:

- Բայց ես, - շարունակեց կոմսը, - մշտապես հետևելու եմ հանձնաժողովի աշխատանքին և հանձնարում եմ քննարկվող բոլոր կարևոր հարցերի մասին նախապես զեկուցել ինձ:

1879 թ. փետրվարի 2-ից մինչև մարտի-22-ը հանձնաժողովի նիստերում քննարկված 28-ից ավելի կարևոր հարցերի վերաբերյալ ընդունված որոշումները հաստատվեցին Լորիս-Մելիքովի կողմից և դարձան պարտադիր կատարման համար: Այդ հարցերից էին.

1. Երկաթուղով Ցարիցին բեռներ ուղարկելու ժամանակ առաջացած դժվարությունները վերացնելու մասին:

2. Ապրանքների բեռնման ու բեռնաթափման ժամանակ Ցարիցինից ներքև գտնվող նավահանգիստներում հսկողություն իրականացնելու մասին:

3. Սանիտարական ջոկատների պետերի նշանակման մասին:

4. Այրման ենթակա ունեցվածքի արժեքի գնահատման և վճարման կարգը հաստատելու մասին:

5. Վոլգա գետի ափերի կարանտինային շրջափակման մասին:

6. Վետլյանկա ստանիցայում ախտահանիչ միջոցառումների մասին և այլն:

1879 թ. փետրվարի կեսերից Ցարիցին եկան բազմաթիվ արտասահմանյան պատվիրակներ /Բեռլինից, Վիեննայից, Բուխարեստից և այլ տեղերից/ , որոնց կոմսը թույլ տվեց մասնակցել հանձնաժողովի նիստերին, այցելել համաճարակի վայրեր...



Հայոց պատվիրակությունը Բեռլինի կոնգրեսում՝
Մկրտիչ Խրիմյան, Խորեն (Նար-Պեյ) Գալֆայան, Չերազ Միհաս, Ստեփան Փափազյան



Ներսես Վարժապետյան



Նուբար փաշա Նուբարյան



Ծերենց

Տանտիրոջ հնարամտությունը

Ինչպես Ցարիցինում գտնվելու օրերին, այնպես էլ երկրամասում շրջագայելիս, Լորիս-Մելիքովն իր բնավորության համաձայն վարում էր սպարտանական կյանք, մերժելով շքեղությունը: Թեև իր բարձր դիրքին, Միխայիլ Տարիելովիչն իրեն շատ հասարակ էր պահում և արտակարգ մատչելի էր ու սիրալիր մարդկանց հետ շփումների ժամանակ: Նրա մոտ կարող էին գալ օրվա ցանկացած ժամին: Կոմսի այսպիսի վարքագիծն աննկատ չմնաց և դա ավելի խորացրեց հարգանքը նրա նկատմամբ:

Այդ ժամանակ, երբ բոլորը հարգանքով էին խոսում կոմսի մարդկային բարձր հատկությունների մասին, Ցարիցինում տեղի ունեցավ մի զավեշտական դեպք: Լորիս-Մելիքովի հետ Ցարիցին եկած բարձրաստիճան չինովնիկների համար առանձնացվեցին լավագույն տները: Այդպիսի տներից մեկում բնակություն էր հաստատել մի պճնամոլ գեներալ: «Այդ գեներալը,- հիշում է Ցարիցինի քաղաքագլուխը, - սիրում էր լողանալ և դրա համար էլ հրամայել էր սենյակներից մեկում տեղադրել լոգարան, որն օրվա մեջ մի քանի անգամ լցվում էր ջրով, ինչը ոչ միայն թափվում էր հատակին, այլև խոնավացնում պատերն ու կահույքը: Տան տերը երկար ժամանակ քաշվում էր զգուշացնել իր նշանավոր կենվորին, ենթադրելով, որ նա ի վերջո գլխի կընկնի վերջ տալու դրան: Բայց, երբ հատակին թափվող ջուրը ներծծեց ու սկսեց կաթալ ներքևի հարկում գտնվող սենյակ, որտեղ տեղավորված էր մանուֆակտուրայի խանութը, տան տերն որոշեց այդ մասին հայտնել գեներալին: Գեներալը նրան դուրս վռնդեց: Այդ ժամանակ տան տերը հետևյալ հնարը գտավ: Որպեսզի ազատվեր անհանգիստ կենվորից, տան տերը սկսեց գեներալի հարևանությամբ սենյակում ամեն օր հոգեհանգիստ կատարել վերջերս մեռած իր որդու համար: Երգեցողությունն այդ գեներալի «զահլան» այնքան տարավ, որ նա հարկադրված էր տեղափոխվել ուրիշ տուն:

Փոքր Ցարիցինում այս դեպքը գրավել էր բոլորի ուշադրությունը: Լուրը հասավ նաև Լորիս-Մելիքովին: Սկզբում գեներալը ծիծաղեց այդ զավեշտալի դեպքի վրա, բայց հետո հրամայեց այդ գեներալին հեռացնել երկրամասի տարածքից, ասելով.

- Մենք այստեղ ենք եկել դժբախտ մարդկանց օգնելու և ոչ թե անձնական վարվեցողությամբ նրանց ավելի զայրացնելու համար:

Լորիս-Մելիքովի զեկույցը

Լորիս-Մելիքովն անդադար շրջում էր համաճարակի վայրերում: Ամենուրեք տիրում էր աղտոտություն ու աղքատություն: Վոլգայի ափին

փռված ձկնորսական արտելներն, ինչպես պարզվեց, վարակի գլխավոր տարածողներն էին: Դրանք անմիջապես փակվեցին: Ջուկն էժան գնով վաճառվում էր առանց աղադրման, որը և անչափ վտանգավոր էր: Պարզելով վարակի տարածման գլխավոր օջախը, Լորիս-Մելիքովը ճշտեց նաև դրա առաջացման գլխավոր պատճառը:

Աղի համար գյուղացին վճարում էր բարձր հարկ: Գյուղացին միշտ չէ, որ աղ գնելու հնարավորություն ուներ: Եվ սովից փրկվելու համար ստիպված էր ձուկն օգտագործել առանց աղադրման: Փաստորեն գյուղացին օգտագործում էր արդեն փչացած ու նեխած ձուկը:

Պարզելով այս ամենը, Լորիս-Մելիքովն անմիջապես զեկուցագիր ուղարկեց Պետերբուրգ, առաջարկելով վերացնել աղի հարկը: Դա փրկություն կլիներ: Բայց Ռուսաստանի ֆինանսների նախարար ծովակալ Գրեյգը աղմուկ բարձրացրեց. չի կարելի վերացնել աղի հարկը, որը պետական գանձարանին մեծ օգուտ է բերում:

Համաճարակի տարածումը կանխելու նպատակով գեներալ-նահանգապետը դիմեց կտրուկ սանիտարական միջոցների, միաժամանակ աշխատելով որքան հնարավոր է քիչ այրել ախտահարված խրճիթները: Անձամբ հետևում էր մաքրությանը, վարակը կանխելու նպատակով գցեց նոր ճանապարհներ: Նահանգներում բացեց հեռագրական կայաններ:

Երկու ամիս անց, Լորիս-Մելիքովը համաճարակով բռնկված Պետրոպավլովյան ձկնորսարանից ներքին գործերի նախարարություն ուղարկեց հետևյալ զեկույցը.«Կարանտինային հիմնարկությունները ստուգելու ժամանակ ես այստեղ մի կարճ դադար առա, որպեսզի օգտվեմ երեկ այստեղ նոր բացված հեռագրակայանից, որի նշանակությունը կարևորվում է ոչ այնքան առևտրի և արդյունաբերության շահերով, որքան նրա օգտակարությունը նահանգի հարավում գտնվող լեռնային շրջաններին կարգադրություններ հասցնելու համար:

Վետլյանկա ստանիցայում, ինչպես նաև Ստարիցկ, Պրիշիբինսկ, Նիկոլսկ, Ուդաչնի և Միխայլովսկ գյուղերում արդեն հիվանդներ չկան: Սելիտրենսկ գյուղում երեկ հայտնաբերվեց հիվանդ մի աղջիկ, որի ընտանիքում արդեն կային հիվանդներ: Գյուղերում համաճարակը շարունակվում է մեկուսացվել իմ ուղարկած նախորդ հեռագրում նշված միջոցներով՝ տների շրջափակումով: Երեկվա իմ հեռագրին որպես լրացում զեկուցում եմ, որ բժիշկ Պոգուսկին հայտնել է ինձ, որ Սելիտրենսկ գյուղի մոտակայքում տեղավորված կիբիտկայում մեռած կիրգիզներն, անկասկած, համաճարակի զոհ են: Կիբիտկան աղտահանվել է և տեղափոխվել է այլ տեղ ու լրիվ մեկուսացված է: Դրան հետևում է այդ նպատակի համար հատկապես դրված զինվորական հսկիչ կետը: Կիբիտկայում եղած բոլոր իրերը, մեռածների շորերը, սպիտակեղենն այրվել է բժշկի ներկայությամբ, որը տուժողներին ապահովել է նոր հագուստներով, անկողնով, ինչպես նաև անհրաժեշտ ամաններով:

Այնքանով, որքանով այժմ համաճարակի իրավիճակից ելնելով ուշադրությունը բևեռված է Սելիտրենսկ գյուղի և նրա խուտորների, ինչպես նաև այս վայրերում անցնող քոչվոր կիրգիզների վրա, դրան համապատասխան էլ տվել եմ հատուկ հանձնարարություն: Երկու բժիշկների և տեղական ոստիկանների հաղորդմամբ Ցարևսկ գավառի Նիկոլաևսկ սլոբոդայում հայտնաբերված հիվանդները կապ չունեն Վետլյանկայի համաճարակի հետ: Սառնամանիքը 8 աստիճան է:

Գեներալ-թիկնապահ՝ Լորիս-Մելիքով»:

Ժանտախտի համաճարակը վերացնելու համար եռանդուն միջոցներ ձեռնարկելու հետ միասին Լորիս-Մելիքովը չէր մոռանում նաև գործի գիտական կողմը՝ հիվանդության առաջացման պատճառների բացահայտումը, որի ուսումնասիրումը նա դրել էր իր հետ եկած ռուս և արտասահմանյան բժշկական գիտության նշանավոր ներկայացուցիչների վրա:

1879 թ. մարտի 22-ին Լորիս-Մելիքովն Աստրախանում հրավիրեց հանձնաժողովի վերջին նիստ, որին ներկա էին արտասահմանից եկած բազմաթիվ լրագրողներ: Նիստում քննարկվեց կատարված աշխատանքի արդյունքները և արձանագրվեց, որ համաճարակի վտանգը վերացված է: Այդ մասին Լորիս-Մելիքովը կազմեց հանգամանալից զեկուցագիր և մարտի 30-ին մեկնեց Պետերբուրգ:

Ճանապարհ անհասկանալի մութ

Ամբողջ Պետերբուրգը ցար Ալեքսանդր Երկրորդ հետ միասին հետևում էին Ստորին Վոլգայում բռնկված ժանտախտի համաճարակի վերացմանն ուղղված Լորիս-Մելիքովի գործունեությանը:

Ռուսաստանը Բիսմարկի խարդախ նախաձեռնությամբ մեկուսացվել էր արտաքին աշխարհից: Բիսմարկը հասավ նաև նրան, որ այդ մեկուսացմամբ Ռուսաստանի առևտուրն ու արդյունաբերությունը միլիոնավոր ռուբլիների վնաս կրեց: Վնասվում էր պետության վարկը: Արտասահմանյան թղթակիցներն ավելի էին բորբոքում Եվրոպայում տարածված սարսափը:

Ռուսաստանի հասարակական կարծիքն էլ միատարր մոտեցում չուներ: Ժանտախտն արագորեն վերացնելու կողմնակիցների կողքին կային նաև ամեն ինչ սև գույներով պատկերացնողներ և չարախնդում էին, թե առանց Եվրոպայի օգնության հնարավոր չէ հաղթահարել համաճարակը: Իսկ Եվրոպան էլ Գերմանիայի կանցլեր Բիսմարկի թելադրանքով ինքնամեկուսացվել էր Ռուսաստանից: Հետևապես Եվրոպան չի օգնի և ի վերջո կպարզվի, որ Ռուսաստանը չունի դրա համար անհրաժեշտ ուժ ու կարողություն:

Սկսված համաճարակի շուրջ պայքարը բորբոքվեց սլավոնոֆիլների և արևմտականների միջև: Վերջիններս սլավոնոֆիլներին մեղադրում էին, ասելով, թե միայն խոսել գիտեն և հարցնում էին սարկազմով՝ ինչո՞ւ ժամանակին ուշադրություն չեն դարձրել Աստրախանում գտնվող ծկնորսական արտելների վիճակին և այլն:

Մայրաքաղաքում տիրող շփոթի, համաճարակի շուրջ ծավալված բանավեճերի մասին Լորիս-Մելիքովը տեղեկանում էր իր վաղեմի բարեկամներ Միլյուտինի, Վալուևի և Աբազայի նամակներից:

Մամուլն անմիջապես արձագանքում էր Լորիս-Մելիքովի ուղարկած հեռագրերին, որոնք տպագրվում էին առաջին էջերում: Քիչ չէին այն մարդիկ, որոնք գեներալ-նահանգապետին ոգևորող հեռագրեր էին ուղարկում, հույս հայտնելով, որ Կարսի հերոսը համաճարակի դեմ կտանի հաղթանակ: Լորիս-Մելիքովն այդ ամենի նկատմամբ անտարբեր մնալով, հետևողական համառությամբ ու բարձր պատասխանատվությամբ առաջ էր տանում իր գործը:

Պետական ունեցվածքի նախարար և ստատս-քարտուղար Պյոտր Ալեքսանդրովիչ Վալուևը, որն իրեն երախտապարտ էր համարում Լորիս-Մելիքովին անցած պատերազմում իր որդու նկատմամբ ցուցաբերած հոգատարության համար, 1879 թ. փետրվարի սկզբին նրան ուղարկած նամակում գրում էր. «Դուք, իհարկե, թույլ չեք տա շտապել վերջնական խոսք ասելու համար: Բայց հենց այդ խոսքն էլ կլինի վճռորոշ, որ դուք կասեք առանց շտապելու: Ձեր կարծիքը և ձեր ձեռնարկած միջոցները վերջ կտան ներկայումս տիրապետող գաղափարական խառնաշփոթությանը և կհանեք մեր վրա դրված եվրոպական կիսարգելքը: Ես համբերորեն, հանգիստ և վստահությամբ սպասում եմ»:

Լորիս-Մելիքովը գիտակցում էր իր ամբողջ պատասխանատվությունը և նաև գիտեր, թե ինչի համար է պայքարում: Եվ նա վստահ էր իր հաջողության մեջ: Իսկապես, աստիճանաբար համաճարակը նահանջեց: Պետերբուրգ ուղարկած նրա հեռագրերը մարդկանց ներարկում էին լավատեսություն: Վերջապես հաղթահարվեց համաճարակն, որն արձանագրեց նաև միջազգային հանձնաժողովը:

1879 թ. ապրիլի 2-ին Լորիս-Մելիքովը վերադարձավ Պետերբուրգ: Նա պետք է ցարին ներկայացներ հաշվետվություն իր գործունեության մասին և ետ վերադառնար Աստրախան:

Համաճարակի շրջան մեկնելուց կառավարությունը Լորիս-Մելիքովին տվել էր կանխիկ չորս միլիոն ռուբլի իր հայեցողությամբ ծախսելու համար: Պետերբուրգ վերադառնալիս, նա ներկայացրեց համաճարակը վերացնելու համար ծախսված 360 հազար ռուբլու հաշվետվություն, իսկ մնացածը կոպեկ առ կոպեկ վերադարձրեց գանձատուն: Լորիս-Մելիքովի արարքը չլսված իրողություն էր Ռուսաստանի պատմության մեջ: Այդ ո՞ր չինովնիկը

կվերադարձներ չծախսված գումարը: Շատերի համար անհասկանալի մնաց Լորիս-Մելիքովի անձնական մաքրությունն ու ազնվությունը...

Հետագայում, արդեն Լորիս-Մելիքովի հրաժարականից հետո, նրան չարախնդողներն ու բամբասողները ձգտում էին նսեմացնել կոմսի ծառայությունը համաճարակի վերացման գործում, պնդելով, թե համաճարակ չի եղել և կատարվածն էլ շատ է ուռչացվել:

Պատասխանելով այդ չարախոսներին, «Ռուսկայա միսլ» ամսագիրը 1889 թ. հունվարին գրել է, որ Լորիս-Մելիքովի եռանդուն ջանքերի շնորհիվ «մեկուսացվել են վարակված տարածքներն. ուժեղացվել են բժշկական միջոցները, բարելավվել են ծնորսավայրերում բանվորների կենցաղի սանիտարական պայմանները և արդյունքում վերացվել է համաճարակը: Նկատենք դրա հետ միասին, որ Լորիս-Մելիքովը կարգադրություններ հեռվից չէր անում, այլև անձամբ գնաց Վետլյանկա այն ժամանակ, երբ այնտեղ ուժեղ էր բոլորի կողմից ճանաչված վարակը»:

1879 թվականի ապրիլի 2-ը

Մինչ Լորիս-Մելիքովն օր ու գիշեր շրջում էր համաճարակով բռնկված վայրերով, անձամբ ստուգում իր հանձնարարությունների կատարումը, Ռուսաստանի արդյունաբերական ու մշակութային կենտրոններում ձեռնարկվում էին ահաբեկչական գործողություններ, որոնք իշխանություններին պահում էին լարված վիճակի մեջ:

1879 թ. փետրվարի 3-ին Խարկովի նահանգապետ իշխան Կրոպոտկինը սպանվեց ատրճանակի կրակոցով: Ժանդարմերիան չկարողացավ գտնել սպանողին: Ահաբեկչության հետ միասին աճում էին նաև գյուղացիական հուզումները...

1879 թ. ապրիլի 2-ի առավոտյան Ալեքսանդր Երկրորդը սովորականի նման դուրս եկավ զբոսանքի: «Հող և ազատություն» նարոդնիկական կազմակերպության անդամ Ա. Սոլովյովը անհաջող մահափորձ կատարեց ցարի դեմ: Նրա արձակած հինգ կրակոցը նպատակին չհասավ: Ձերբակալված Սոլովյովը կախաղան հանվեց 1879 թ. մայիսի 22-ին :

Վախեցած ցարը շտապ վերադարձավ Ձմեռային պալատ և իր մոտ հրավիրեց կարևոր նախարարությունների ղեկավարներին՝ ժանդարմերիայի շեֆ Դրենտելնին, ռազմական նախարար Միլյուտինին, ներքին գործերի նախարար Մակովին, պետական ունեցվածքի նախարար Վալուևին և թագաժառանգ Ալեքսանդր Ալեքսանդրովիչին:

Բոլորին մտահոգում էր Ռուսաստանում սկիզբ առած հեղափոխական շարժումն, որը ժամանակ առ ժամանակ, 1866 թ. Կարակոզովի կրակոցից հետո, իրեն զգացնել էր տալիս ահաբեկչական գործողություններով:

Իրավիճակը պատկերացնելու համար անհրաժեշտ է համառոտակի

ծանոթանալ ահաբեկչության պատմությանը: Ամեն ինչ սկսվեց 1862 թ., երբ ընկերոջը հասցեագրած նամակում խռովարար մտքեր արտահայտելու համար ձերբակալված Մոսկվայի համալսարանի ուսանող Պյոտր Զայչնևսկին բանտում գրեց «Երիտասարդ Ռուսաստան» թռուցիկը: «Մենք, - գրում էր երիտասարդ բանտարկյալը, - ուսումնասիրել ենք Արևմուտքի պատմությունը և այդ ուսումնասիրումը մեզ համար անտեղի չի եղել: Մենք կլինենք հետևողական ոչ միայն 92 թվականի /1792 թ. Վ.Պ./ խղճուկ հեղափոխականներից, մենք չենք վախենա, եթե տեսնենք, որ ներկա կարգի խորտակման համար հարկ կլինի կրկնակի անգամ շատ արյուն թափել, քան թափել են յակոբինյանները 90-ական թվականներին»: Զայչնևսկին ահաբեկչությունը համարում էր «կայսերական կուսակցությունը ճանապարհից վերացնելու միջոց»: «Եթե, - գրում էր նա, - հաջողվի զավթել Ձմեռային պալատը և ոչնչացնել այնտեղ ապրողներին, ապա կարող է պատահել, որ ամբողջ գործն ավարտվի կայսերական ընտանիքի ոչնչացմամբ, այսինքն ինչ որ մի քանի հարյուր մարդկանց ոչնչացմամբ»:

Ռուսական իրականության մեջ փաստորեն ձևավորվում էր մի գաղափար, որով ոգևորվեցին հազարավոր ռուս հեղափոխականներ: Դա սպանության ու ինքնազոհության գաղափարն էր: Ռուսաստանում իշխանության անձնավորումը, ցարի կերպարի սրբացումն առաջացնում էին մեծ գայթակղություն՝ մի հարվածով խորտակել այդ իշխանության հզորությունը, ճանապարհ հարթել այն գաղափարների իրականացման համար, որոնք պետք է հասցնեն համընդհանուր բարեկեցության:

«Երիտասարդ Ռուսաստանի» գաղափարախոսությունը քննադատվեց ռուսական հեղափոխության արմատական թևի լրջմիտ ղեկավարների կողմից: Գերցենը կշտամբեց դրա կրողներին՝ անչափ արյունախում լինելու և հեղափոխական ֆրազների համար: Գերցենը գրում էր. «Հեղափոխական ահաբեկչությունն իր ահեղ իրավիճակով և կախաղաններով պատանիներին դուր է գալիս այնպես, ինչպես ահաբեկչության մասին հեքիաթներն իրենց հրաշքներով ու հրաշագործություններով դուր են գալիս երեխաներին»:

Վերջապես 1866 թ. ապրիլի 4-ին հնչեց Կարակոզովի կրակոցը: Դա Ռուսաստանում ազդարարեց ահաբեկչության էպոխայի սկիզբը: Ցարական իշխանությունը պարտքի տակ չմնաց: Չերնիշևսկին և Սերնո-Սոլովևիչը տաժանակրության աքսորվեցին: Սկսվեցին մահապատիժն ու տեռորը, որոնք հաճախ իրականացվում էին պրովոկատորների մատնությամբ:

Մինչև վերջին տարիները, նկատի ունեմ սովետական ժամանակաշրջանը, պատմագրությունը և հրապարակախոսությունն անհատական ահաբեկչությունը միայն դիտում էին որպես պայքարի ոչ արդյունավետ միջոց, որն անհնար էր հաղթահարել առանց փորձելու: Դրա համար էլ, օրինակ, նորոդովոլցիները գլխավորապես ներկայացվում էին որպես հերոսներ:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, երբ պատմագրությունը կատարեց իր հերթական զիգզագը, շատ պատմաբաններ ու հրապարակախոսներ շտապեցին փոխել շեշտադրումը: Այժմ հեղափոխականները ներկայացվում են որպես արյունախում չարագործներ, իսկ նրանց զոհերն՝ անմեղ-նահատակներ:

Ռուսական իրականության մեջ, օրինակ, այդպես են վարվում Ստոլիպինի, Նիկոլայ Երկրորդ ցարի և այլոց նկատմամբ , մոռացության տալով ստոլիպինյան կախաղանները, ցարի կողմից 1905 թ. հունվարի 9-ի խաղաղ ցույցի գնդակոծման ժամանակ հազարավոր անմեղ սպանվածներին և այլ փաստեր:

Հայկական իրականությունն էլ դրանից անմաս չմնաց: Հեղափոխության աննկուն մարտիկ Կամոն /Սիմոն Տեր-Պետրոսյան/ այժմ ներկայացվում է որպես սովորական քրեական հանցագործ: Եվ այս կեղծիքին հավատալով, Երևան քաղաքի իշխանությունները շտապեցին Կամոյի անվան դպրոցը վերանվանել , քանդել նրա կիսանդրին և դպրոցի առջև կանգնացրել արգենտինյան ինչ որ գեներալի կիսանդրի:

Բայց վերադառնանք մեր պատմությանը: Իրականում ամեն ինչ այնպես պարզ չէ, ինչպես ոմանք կարծում են: Իրավիճակն ավելի բարդ է ու հակասական: Այո, դժբախտաբար, բռնությունն եղել է փոխադարձաբար և երկու կողմերն էլ բաց թողեցին արյունոտ զսպանակը: Դա, անշուշտ, ինքնաոչնչացում էր: Որովհետև այդպիսի իշխանությունը ծնել էր հենց ռուսական հասարակությունը, հետագայում չգտնելով դա սահմանափակելու այլ ձև, քան սպանությունը: Եվ ո՞վ էր առավելապես մեղավոր երկրում բռնությունը բազմապատկելու մեջ՝ Կարակոզո՞վը, թե՞ Ալեքսանդր Երկրորդը, հաստատելով նրան կախաղան բարձրացնելու մասին դատավճիռը:

Հարց է առաջանում, ինչո՞ւ, օրինակ, Սոֆիա Պերովսկայան, Անդրեյ Ժելյաբովը ու նրանց նման շատերը դարձան ռուսական հեղափոխության անվիճելի և ոգևորող դեմքեր: Ինչո՞ւ հենց Ռուսաստանում ահաբեկչությունն ընդունեց լայն մասշտաբներ ու հասավ այնքան կատարյալ կազմակերպական ձևերի: Ինչո՞ւ այդպես եղավ Ռուսաստանում:

Այստեղ տեղին է հիշեցնել Ֆ Դոստոևսկու ցուցմունքը, որ նա տվել էր Պետրաշևսկու խմբակի անդամների հետաքննության ժամանակ: «Ինչի՞ համար եմ ես սովորել, ինչո՞ւ գիտությունն իմ մեջ արթնացրել է հետաքրքրասիրություն, եթե ես իրավունք չունեմ ասելու իմ անձնական կարծիքը կամ էլ ինչո՞ւ չհամաձայնվել այնպիսի կարծիքի, որն ինքնստինքյան հեղինակավոր է»:

Իսկապես, Ռուսաստանում մարդիկ, որոնք սովորել էին, ուզում էին ոչ միայն ազատ խոսել, այլև գործել: Եվ գործել անկախ պետերից, ոչ այնպես, ինչպես նրանք են կամենում:

Իշխանությունը կարծում էր, որ նիհիլիստներին, ինչպես հեղափոխականներին անվանում էին 19-րդ դարի երկրորդ կեսին, կարելի է խելքի բերել խիստ միջոցներով: Բայց արմատականները «խելքի չեկան» և գնացին մինչև վերջ: Ահաբեկչությանն անցնելուն նպաստեցին մի շարք գործոններ, ինչպիսիք էին հիասթափությունը ժողովրդական մասսաների ապստամբությանն անպատրաստ լինելուց, հասարակության, մեծ մասի պասիվությունը, կառավարությունից հալածանքների համար վրեժ լուծելու ցանկությունը:

Վերջապես, մեր առջև ծառանում է հետևյալ հարցը. ինչո՞ւ ռուս հեղափոխականներն այնպես համառորեն վերադարձան պայքարի ահաբեկչության եղանակին, երբ արդեն պարզ էր դրա անարդյունավետ լինելը:

Ռուսական ահաբեկչության պատմության մեջ վճռորոշ եղավ 1878 թվականը Վերա Զասուլիչի կրակոցով: Նրա կատարած մահափորձը վիրավորված արդարության զգացումի արտահայտությունն էր: Եվ տարօրինակ կերպով այդ անօրինական գործողությունը դարձավ օրենքի և անձի պաշտպանության յուրատեսակ միջոց: Սա զգացին երդվյալ ատենակալները և Վ. Զասուլիչին արդարացնելու վճիռ կայացրին:

Ռուսաստանում ահաբեկչությունն ուներ երկու աղբյուր, երկու «հեղինակ»: Մեկն արմատականներն էին, որոնք կերակրվում էին հեղափոխական անհամբերությամբ: Մյուսն իշխանությունն էր, որը կարծում էր, թե անմիտ երեխաներին հարկավոր է ոչ թե լսել, այլ կարգի հրավիրել, եթե նույնիսկ նրանցից ոմանց հարկ կլինի կախաղան բարձրացնել: Փոխադարձ խլությունն, երկխոսության համար անընդունակությունն երկու կողմին հասցրին մեծ չարության, նոր բռնությունների:

«Ռուսաստանում միշտկան են ժամանակավոր միջոցներ...»

Լորիս-Մելիքովը չհասցրեց Ալեքսանդր Երկրորդին զեկուցել և հանձնել իր հաշվետվությունը: 1879 թ. ապրիլի 3-ին Աստրախան վերադառնալուց առաջ, Միխայիլ Տարիելովիչն այցելեց ռազմական նախարար Միլյուտինի տուն, նրան հրաժեշտ տալու նպատակով: Դմիտրի Ալեքսեևիչը հանգամանորեն պատմեց Ալեքսանդր Երկրորդի մոտ հրավիրված խորհրդի մասին: Ցարը մտադրություն էր հայտնել երկու մայրաքաղաքներում և խոշոր քաղաքներում ժամանակավոր գեներալ-նահանգապետներ նշանակելու մասին, նրանց տալով ռազմական դրության ժամանակներին համապատասխան գլխավոր հրամանատարի լիազորություններ:

Այդ խորհրդի ժամանակ թագաժառանգ Ալեքսանդր Ալեքսանդրովիչը հորը համոզում էր ամբողջ երկրում հայտարարել ռազմական դրություն և ամեն մի կասկածյալի հանձնել ռազմական դատարանին:

- Կախաղաններով գործին չես օգնի, - պատասխանել էր ցարը որդուն, -բայց միջոցներ պետք է ձեռնարկել:

Վճռելով մայրաքաղաքներում և խոշոր քաղաքներում ժամանակավոր գեներալ-նահանգապետություններ ստեղծել, ցարը հանձնարարեց Պյոտր Վալուևին հրավիրել խորհրդակցություն և մշակել համապատասխան հրամանագիր:

Միլյուտինն առաջարկել էր այդ խորհրդակցությանը հրավիրել նաև գլխավոր զինվորական դատախազին, որպեսզի թույլ չտրվի օրենքի խախտում: Ցարը չէր համաձայնվել, բայց Միլյուտինը պնդել էր, ասելով.

- Եվ, այնուամենայնիվ, ձերդ բարձրություն, այդպիսի գործերում դատախազական հսկողությունը չի խանգարի:

Ի վերջո, ցարը համաձայնվել էր, որ ստեղծված պայմաններում հարկավոր չէ տագնապի մեջ ընկնել և որ նման գործերում դատախազական հսկողությունն անհրաժեշտ է:

Հենց նույն օրն, երեկոյան ցարի մոտ հավաքված խորհրդում արդարադատության նախարար Նաբոկովին և գլխավոր զինվորական դատախազ Ֆիլոսոֆին հանձնարարվեց նախապատրաստել ցարական հրամանագիր ժամանակավոր ռազմական գեներալ-նահանգապետությունների ստեղծման և ղեկավարման հրահանգի մասին:

Ահա, այս ամենի մասին հայտնելով, Միլյուտինն ի պատասխան Լորիս-Մելիքովի հարցի, թվարկեց այն քաղաքներն, որտեղ ստեղծվելու էին գեներալ-նահանգապետությունները՝ Կիև, Խարկով, Օդեսա:

- Դրանում մեծ իմաստ չեմ տեսնում: Դա ժամանակավոր միջոց է, - ասաց Միխայիլ Տարիելովիչը:

- Ռուսաստանում, թանգակին Միխայիլ Տարիելովիչ, - պատասխանեց Միլյուտինը, -մշտական են ժամանակավոր միջոցները:

Երկու հին ընկերներն երկար զրուցեցին: Միլյուտինն ուշադրությամբ էր լսում Լորիս-Մելիքովի դատողությունները: Ճիշտ է, նրանք երկուսով էլ զինվորական էին, բայց Լորիս-Մելիքովին վիճակվել էր նաև վարել քաղաքացիական պաշտոններ, հիանալի տիրապետում էր վարչական կառավարման արվեստին:

Ի վերջո, 1879 թ. ապրիլի 5-ին Ալեքսանդր Երկրորդն ընդունեց վերջնական որոշում: Միլյուտինի առաջարկությամբ Լորիս-Մելիքովը նշանակվեց վեց նահանգ ընդգրկող Խարկովի ժամանակավոր գեներալ-նահանգապետ: Պետերբուրգում նշանակվեց գեներալ Գուրկոն, Օդեսայում՝ անցած պատերազմի մյուս հերոսներից Տոտլեբենը:

Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ իրենց հերոսությամբ աչքի ընկած այս երեք զինվորականներին նշանակելով պատասխանատու պաշտոններում, Ալեքսանդր Երկրորդը հույս ուներ ձեռք բերել հասարակության համակրանքը և համոզված էր, որ նրանք միանգամայն կարդարացնեն իր վստահությունը

«Ո՞վ ևս դուք...»

Նոր նշանակված գեներալ-նահանգապետները բացի ապրիլի 5-ի հրամանագրից ոչ մի այլ ցուցում չստացան իրենց ապագա գործունեության վերաբերյալ: Ծրագրի բացայայությունն, իհարկե, ուներ առավելություն, բայց և, ինչպես ցույց տվեց փորձը, շուտով բացահայտեց նաև իր թերի կողմերը: Մի կողմից ոչ ոքից ու ոչնչի հետ կապված չլինելով, նոր գեներալ-նահանգապետները կարող էին ընդունել ցանկացած որոշում, ձեռնարկել ցանկացած միջոց՝ իրենց բանականության և փորձի վրա հենվելով: Բայց մյուս կողմից էլ պետական կարգի, հասարակական հանգստության ապահովմանը նպատակաուղղված գործողությունների այդ անսահմանափակ ազատությունը նրանցից յուրաքանչյուրը հասկանում էր յուրովի:

Եվ այս ամենի արդյունքով ստացվեց այնպես, որ բազմաթիվ անմեղ մարդիկ ենթարկվեցին անարդարացի հալածանքների: Ասվածը փաստելու համար բերենք մի քանի օրինակ: Պետերբուրգում գեներալ-նահանգապետ Գուրկոն լրացուցիչ աշխատանքի ընդունեց 12 հազար դռնապահ-գործակալ: Սա ոչ մի օգուտ չտվեց: Դռնապահ-գործակալները զոր ու գիշեր իրենց տանն էին մնում և ոչ մի հանցագործություն չկանխեցին: Գուրկոն ոչ մի օգտակար գործ չարեց, դրական արդյունքի չհասավ և այդ բոլորի փոխարեն դիմեց բռնությունների ու հալածանքների:

Գեներալ Գուրկոն փորձեց նաև բռնություն գործադրել Պետերբուրգի համալսարանի ռեկտոր Ա. Բեկետովի նկատմամբ ուսանողներին չզսպելու համար: Գեներալն իր մոտ հրավիրեց ռեկտորին: Սակայն նշանավոր գիտնական Դ. Ի. Մենդելեևը լավ իմանալով ռեկտորի մեղմ բնավորությունն, ընկերացավ նրան: Երբ երկու նշանավոր գիտնականները ներս մտան, գեներալ Գուրկոն տեղից վեր ցատկեց ու սկսեց գոռգոռալ խեղճացած Բեկետովի վրա; Մենդելեևը չհամբերեց և ինքն էլ սկսեց ավելի բարձր գոռալ: Գուրկոն փորձեց ահաբեկել նաև Մենդելեևին, որն այդպես էլ իր ձայնը չցածրացրեց ու հարկադրեց գեներալին սսկվել:

- Ինչպե՞ս եք համարձակվում ահաբեկել ինձ, - հարցրեց Մենդելեևը, - ո՞վ եք դուք: Ձինվոր և ոչ ավելին: Ձեր տգիտության պատճառով չգիտեք, թե ով եմ ես: Մենդելեևի անունը հավերժ գրված է գիտության պատմության մեջ: Գիտե՞ք, որ նա քիմիայի մեջ մեծ հեղաշրջում է կատարել, գիտե՞ք, որ նա հայտնագործել է էլեմենտների պարբերական համակարգը: Ի՞նչ բան է պարբերական համակարգը: Պատասխանեք:

Ականատեսներից Վ. Պոսեն հետագայում, հիշելով այս մասին, գրել է. «Գեներալը շփոթվեց, նա ոչ մի գաղափար չուներ պարբերական համակարգի մասին: Ստեղծվեց լռություն: Եվ այդ ժամանակ դուռը բացելով Մենդելեևը հանգիստ տոնով ասաց Բեկետովին. «Գնանք: Նա սրանից հետո չի համարձակվի փակել համալսարանը»:

Այս միջադեպն աննկատ չմնաց լայն հասարակության ուշադրությունից...

Օդեսայում էլ գեներալ-նահանգապետ Տոտլեբենը հրապուրվեց մեծաթիվ վարչական աքսորներով, չկատարելով որևէ հետաքննություն:

Իր աշխատանքի առաջին չորս ամիսներին Տոտլեբենը հասցրեց 104 մարդու ուղարկել վարչական աքսորի: 31 մարդ պատժվեց ռազմաօկրուգային դատարանով, 8 մարդ ենթարկվեց մահապատժի: Տոտլեբենի հրամանի համաձայն վարձով ապրող քաղաքացիները կարող էին հյուր ընդունել միայն ոստիկանության գիտությամբ: Հեռանալով Օդեսայից Տոտլեբենը թողեց ծայրահեղ զզվելի հիշատակ, որի առջև խամրեց անցած պատերազմում ձեռք բերած փառքը: Նույն ճակատագրին արժանացավ նաև գեներալ Գուրկոն:

Ինչո՞ւ համաձայնվեց Լորիս-Մելիքովը

Լորիս-Մելիքովն արդարադատ էր, անձնական կյանքում ազնիվ ու անբասիր, անկաշառ էր, չէր տանում քծնանքն ու անազնվությունը: Բայց և միաժամանակ խստապահանջ էր, չէր տանում թափթփվածությունն ու անկարգապահությունը: Լինելով կարգ ու կանոնի կողմնակից, այդպիսին պահանջում էր նաև իր ենթականերից:

Լորիս-Մելիքովը մարդկանց պատժելու սովորություն չուներ: Թույլերը նրա մոտ գտնում էին պաշտպանություն: Բայց ուներ վճռականություն, տիրապետում էր համոզիչ խոսքին: Գիտեր բազմաթիվ լեզուներ, կարդում էր եվրոպական, հատկապես ֆրանսիական ու ռուսական գրողներին: Հրապուրված էր անտիկ գրողներով ու փիլիսոփաներով:

Իր բնավորությամբ, գիտելիքներով, մարդկանց հետ վարվեցողությամբ, նրանց արժանապատվությունը հարգելով Լորիս-Մելիքովը ձեռք էր բերել հսկայական հեղինակություն ու համակրանք:

Բայց միաժամանակ նրա գիտելիքները, հաստատակամությունը, քծնանքը մերժելն, աշխատանքում հաջողություններով աչքի ընկնելը նրա նկատմամբ հարուցել էին նախանձ ու բանսարկու մեծ ու փոքր չինովնիկների չարությունը:

Ամբողջ կյանքը Լորիս-Մելիքովն անց էր կացրել զինվորական ասպարեզում, մասնակցել էր երկու խոշոր պատերազմի և մարդկայնորեն ուղղակի դողացել էր իր ենթակա զինվորների ու սպաների կյանքի համար: Նա մեծ փորձ էր կուտակել Աբխազիայում, Թերեքի մարզում և Դաղստանում վարչական-քաղաքացիական կառավարման գործում: Հատկանշականն այն էր, որ գտնվելով լեռնականների միջավայրում, նրանց նկատմամբ հարգալից վերաբերմունքով Լորիս-Մելիքովը ձեռք էր բերել մեծ համակրանք: Չլսված բան էր, որ ռուսական գեներալն առանց թիկնազորի, կառքով գնում էր հեռավոր աուլներ և անվնաս վերադառնում, դառնալով լեռնականների բարեկամը:

Այն ժամանակ, երբ Դաղստանում Լորիս-Մելիքովը միայնակ գնում էր աուլներ, բնակիչներին զանազան իրեր բաժանում, երեխաներին նվիրում սուլիչ ու խաղալիքներ և հարգալից զրուցում տարեցների հետ, հարևան Չեչնիայում գեներալ Եվդոկիմովը սրով ու կրակով ծգտում էր հպատակեցնել լեռնականներին: Եվ Չեչնիայում որքան գեներալն ուժեղացնում էր պատժիչ գործողությունները, այնքան էլ լեռնականներն էին դառնում անհնազանդ ու կատաղի պայքարում ռուսական իշխանությունների դեմ:

Լորիս-Մելիքովն, այնուամենայնիվ, լավ չգիտեր Ռուսաստանը: Ռուսաստանի մասին պատկերացում ուներ միայն մամուլից: Բայց, ահա, երբ նշանակվեց ռուսական երեք խոշոր նահանգներից մեկի ժամանակավոր գեներալ-նահանգապետ, նրա առջև բացվեց սարսափելի իրողությունը: Նա տեսավ աներևակայելի թշվառություն, աղքատություն, հետամնացություն: Մարդկային արժանապատվությունը միշտ հարգող Լորիս-Մելիքովի համար անընդունելի էր սովորական մարդու այդ ահավոր թշվառությունը: Եվ նրա ամբողջ զգացողությունը, ապրումներն ամփոփված ձևով իրենց արտահայտությունը գտան ներքին գործերի նախարարություն ուղարկած ընդարձակ զեկուցագրում, որտեղ նա միաժամանակ առաջարկություններ էր անում ռուս հասարակ մարդու թշվառությունը մեղմելու վերաբերյալ:

Եվ ահա, այսպիսի բնավորություն ունեցող Լորիս-Մելիքովը նշանակվեց Խարկովի գեներալ-նահանգապետ, որի գլխավոր խնդիրն էր վճռական պատժիչ միջոցներով պայքարել խռովարարների, հեղափոխականների դեմ, ոչնչացնել նրանց և վերականգնել հանգստությունը:

Լորիս-Մելիքովը մշտապես ղեկավարվում էր հետևյալ սկզբունքով՝ «Ուժի նշանը բռնությունը չէ, այլ մեծահոգությունը»: Իսկ հիմա ստանձնել էր բացարձակապես պատժիչ լայն լիազորություններով գեներալ-նահանգապետի պաշտոնը:

Ինչո՞ւ համաձայնվեց Լորիս-Մելիքովը: Չէ՞ որ նա պատրաստվում էր թողնել ծառայությունը: Հիմա դժվար է այս հարցերին պատասխանել: Լորիս-Մելիքովն էլ այդ մասին ժամանակին չի արտահայտվել: Բայց Խարկովի գեներալ-նահանգապետի պոստում նրա գործունեությանը ծանոթանալն որոշ չափով օգնում է գտնել այդ հարցի պատասխանը:

«Դաժանը մարդկանց թշվառությունն է...»

Խարկով մեկնելուց առաջ Լորիս-Մելիքովը հանդիպեց բոլոր նախարարներին, նրանց հետ քննարկեց նահանգում տիրող իրավիճակը, ծա-

նոթացավ բազմաթիվ փաստաթղթերի: Նրան հատկապես գործնական խորհուրդներ տվեցին Միլյուտինն ու Վալուևը:

Երբ խոսք գնաց պատժիչ միջոցների մասին և ցարական երկու նախարարներն էլ կարծիք հայտնեցին, թե առանց դրա անհնար է գործն առաջ տանել, Լորիս-Մելիքովը պատասխանեց.

-Այն ամենն, ինչ տեսել եմ Ստորին Վոլգայի նահանգներում, ինձ բերել է այն համոզմունքին, որ խռովությունների պատճառը մարդկանց թշվառությունն է, չինովնիկների ապօրինի գործողությունների, կաշառակերության մեջ է: Նախ, հարկավոր է դրանք վերացնել:

- Թանգակին Միխայիլ Տարիելովիչ, - ասաց Միլյուտինն, - ինչպես երևում է արդեն մշակել ես քո գործունեության ծրագիրը:

Միլյուտինը նույնպես Ռուսաստանի առաջադեմ գործիչներից էր, ուներ լիբերալ հայացքներ: Գլխավոր շտաբի ակադեմիայի պրոֆեսոր աշխատելու տարիներին մասնակցել էր «Սովրեմենիկի» հեղինակների հավաքներին: Այդ հավաքների ժամանակ նա հատկապես ուշադիր էր Նիկոլայ Չերնիշևսկու նկատմամբ, նստում էր նրա կողքին և հետաքրքրվում ռեֆորմների վերաբերյալ նրա կարծիքով: Չերնիշևսկին շատ կարճատես էր և հաճախ Միլյուտինն ընթրիքի ժամանակ նրան ուտելիք էր մատուցում:

Հիշելով այս ամենը, Միլյուտինն ասում էր, որ ծանոթ է հեղափոխականների գաղափարախոսությանը, բայց գտնում էր, որ դա թուլացնում է պետական իշխանությունն, իսկ Ռուսաստանին հարկավոր է ուժեղ պետականություն: Եվ Միլյուտինը կարծում էր, որ Լորիս-Մելիքովը հանուն այդ պետականության ամրապնդման, Խարկովում պետք է գործադրի պատժիչ միջոցներ:

Լորիս-Մելիքովն էլ էր կողմնակից Ռուսաստանում պետականության ամրապնդման, որին էլ ազնվորեն ծառայում էր, բայց նրա համար անընդունելի էր դրան հասնելու պատժիչ միջոցների կիրառումը:

«Ոստիկանական պաշտպան ներկայացնում է պետությունը...»

Թեև Խարկովը Ռուսաստանի խոշոր արդյունաբերական, մշակութային կենտրոն էր, բայց հայտնի էր ավելի շատ այստեղ կատարվող ապօրինությունների հետևանքով ծավալված քրեական հանցագործություններով: Չինովնիկների կաշառակերությունը սահման չուներ: Բոլորը ձգտում էին կորզել չաղ պատառ և դրանով էին միայն մտահոգված:

Իհարկե, մեծ ու փոքր չինովիկներն արդեն գիտեին, թե ով է նշանակված գեներալ-նահանգապետ, թերթերի հաղորդումներից տեղյակ էին Լորիս-Մելիքովի գործունեությանը: Բայց նրանք տարակուսանքի մեջ էին

ընկել այն հաղորդումից, որ գեներալն իրեն տրված չորս միլիոն ռուբլուց ծախսել է մի փոքր մաս և մնացածը ետ է վերադարձրել...

Խարկով ժամանած Լորիս-Մելիքովին ոչ ոք չդիմավորեց: Նույնիսկ, որպես նահանգի զորքերի հրամանատար, նրան չդիմավորեցին սահմանված կարգով: Պաշտոնական Խարկովը թշնամանքով ընդունեց գեներալ-նահանգապետին: Լորիս-Մելիքովին թշնամանքով ընդունեց նաև հեղափոխական գաղափարներով տարված երիտասարդությունը: Չէ՞ որ նոր գեներալ-նահանգապետը գալիս էր հեղափոխականներին պատժելու համար:

Շատ բան տեսած ու փորձված Լորիս-Մելիքովը կարողացավ թաքցնել իր վրդովմունքն այն իրողության համար, որ գոյություն ունեցող կարգը խախտելով, իրեն կայարանում չէր դիմավորել նույնիսկ օկրուգի նախկին հրամանատար գեներալ Մինկվիցը: Իսկ Լորիս-Մելիքովը, հենց ժամանման օրն, առանց այլևայլուքյան, այցի գնաց նախկին հրամանատարին և նրան քաղաքավարության դաս տվեց:

Ո՞ւմ հետ էր աշխատելու, ո՞ւմ միջոցով պետք է գործեր: Կարևորելով այս հարցերը Լորիս-Մելիքովն իր սովորության համաձայն սկսեց ծանոթանալ մարդկանց հետ: Առաջին հերթին նա եղավ ժանդարմերիայի վարչությունում: Պետը՝ գեներալ Կովալինսկին տեղում չէր: Պարզվեց, որ տանը քնած է: Նա դժկամությամբ ներկայացավ գեներալ-նահանգապետին: Լորիս-Մելիքովը ծանոթանալով կալանավորված մարդկանց ցուցակին, պարզեց, որ նրանցից շատերը պատահաբար են այնտեղ հայտնվել չար մատնության կամ էլ ոստիկանության չինովնիկների հիմարության հետևանքով:

- Ինչո՞ւ եք այսքան մարդկանց կալանավորել, - հարցրեց գեներալ-նահանգապետը:

- Մեզ մոտ պատահական կալանավորներ չկան, բոլորն էլ հանցագործ են, -պատասխանեց ժանդարմերիայի ինքնավստահ պետը:

Բայց այդ ինքնավստահությունն անմիջապես խամրեց, երբ Լորիս-Մելիքովը ստուգումների արդյունքով Կովալինսկուն հեռացրեց պաշտոնից: Կովալինսկու պաշտոնազրկմանը համաձայնվեց ժանդարմերիայի շեֆ Դրենտելնը, որն ուշադրությամբ հետևում էր գեներալ-նահանգապետի գործունեությանը և այդ մասին կանոնավոր զեկուցագրեր ներկայացնում ցարին:

Լորիս-Մելիքովն արագորեն ծանոթացավ ժանդարմերիայի գործունեությանն, իր համար պարզեց այդ ծառայության բարդությունները և Դրենտելնից խնդրեց ուղարկել օգնական ուժեր, այնպիսիք, որոնք արտավորված չէն: Ժանդարմերիայի շեֆը Լորիս-Մելիքովի տրամադրության տակ գործուղեց 25 զինվորական սպաների:

Հասարակական լարվածությունը զգալիորեն մեղմացավ, երբ ստուգումների արդյունքով Լորիս-Մելիքովն ազատեց շատ մարդկանց, որոնց

ձերբակալման համար չկային հիմնավոր փաստարկներ: Գեներալ-նահանգապետը փոխեց երեք հեղափոխականների մահվան դատավճիռը և այլն:

Լորիս-Մելիքովը ծանոթացավ նաև Խարկովի համալսարանի պրոֆեսոր, հայտնի քիմիկոս, հասարակական գործիչ Ե. Ս. Գորդենկոյի գործին: Պրոֆեսորը նահանգում ակտիվ աշխատանք էր ծավալել զեմստվոյական միություն ստեղծելու համար, հետապնդելով լիբերալ-սահմանադրական նպատակներ:

Այս ամենի համար Գորդենկոն իր համախոհների հետ դատապարտվել էր սիբիրյան աքսորի: Բոլորի համար անսպասելի կերպով գեներալ-նահանգապետն անմիջապես կասեցրեց Գորդենկոյին ու նրա համախոհներին Սիբիր աքսորելը և ազատեց պատիժը կրելուց:

Լորիս-Մելիքովի այս և մյուս այլ ձեռնարկած քայլերը դրական մեծ արձագանք ունեցան, ավելի ամրապնդելով նրա հեղինակությունը:

Գեներալ-նահանգապետի հաջորդ քայլը ոստիկանություն այցելելն էր: Այստեղ տիրում էր թափթփվածություն: Ոստիկանները զբաղվում էին հարբեցողությամբ, ապօրինի գործողություններով առաջ էին բերել մարդկանց դժգոհությունը: Լորիս-Մելիքովը ներքին գործերի նախարար Մակովից խնդրեց ոստիկանների թիվն ավելացնել 40 մարդով, բարձրացնել ռոճիկը: Մակովը կատարեց գեներալ-նահանգապետի խնդրանքը և նույնպես ցարին մշտապես զեկուցում էր նրա գործողությունների մասին:

Հավաքելով բոլոր ոստիկաններին, Լորիս-Մելիքովը դիմելով նրանց, ասաց.

-Ամենափոքր ոստիկանական պաշտոնյան բնակչության համար ներկայացնում է պետությունը և ձեր ծառայության փոքրիկ խախտումը կարող է ստվեր գցել պետության վրա:

Լորիս-Մելիքովը հենց առաջին օրից պահանջեց խիստ կարգ ու կանոն և առանց խղճալու պատժում էր կարգազանցներին: Լորիս-Մելիքովն իր համար աննկատ սկսեց վարժվել պաշտոնատար անձանց պատժելու պրակտիկային...

Նախարար Գ. Տոլստոյը դարշավ ռիներիմ քշնամի

1863 թ. հունվարի 16-ին Ալեքսանդր Երկրորդը հաստատել էր համալսարանական կանոնադրությունը, դրան տալով օրենքի ուժ: Դա, ըստ էության, ամենալիբերալ օրենքն էր ամբողջ նախահեղափոխական Ռուսաստանի մեջ: Կանոնադրությունը տարածվեց այն ժամանակ գործող հինգ համալսարանների վրա, որոնք գտնվում էին Մոսկվայում, Պետերբուրգում, Կազանում, Խարկովում և Կիևում: Կանոնադրության համաձայն ու-

սանողներն իրավունք չունեին ստեղծել իրենց միավորումները և ենթակա էին կարգապահական դատարանի, որն ընտրվում էր համալսարանի խորհրդի կողմից: Համալսարան ընդունվելուց ուսանողները ստորագրություն էին տալիս՝ ենթարկվել համալսարանում սահմանված կարգին:

Չնայած ձեռնարկած բոլոր միջոցներին, համալսարանները դարձան հեղափոխական գաղափարների տարածման կենտրոններ: Նրանցում թափանցել էր նաև սոցիալիստական ուսմունքը: Նարոդնիկության շատ գործիչներ դուրս եկան հենց համալսարաններից: Նարոդնիկական «Հող և ազատություն», «Ժողովրդական ազատություն» և այլ կազմակերպությունները համալսարանների ուսանողներից ստեղծել էին իրենց գաղտնի խմբակները:

Լորիս-Մելիքովը դեռ զբաղված էր Խարկովի ժանդարմերիան ու ոստիկանությունը կարգի բերելով, երբ սկսեց ստանալ մի շարք դիմումներ, որոնց հեղինակները էին բազմաթիվ ծնողներ, ուսանողներ, համալսարանի ռեկտորը, պրոֆեսորներ: Նրանք բողոքում էին ուսումնական օկրուգի հոգաբարձու, գաղտնի խորհրդական Ժերվեի ապօրինի գործողություններից: Ստացված դիմումներում նշված փաստերից ելնելով Լորիս-Մելիքովը սկսեց տեղի ուսումնական հաստատություններ այցելել ու ծանոթանալ իրավիճակին:

Գեներալ-նահանգապետն իր մոտ հրավիրեց Ժերվեին: Վերջինս անպատրաստ չեկավ: Նա բերել էր մի զեկուցագիր, որտեղ շարադրել էր ուսումնական օկրուգում խռովարար մտքեր կրողների դեմ պայքարն ուժեղացնելու իր ծրագիրը: Ժերվեն գտնում էր, որ միայն պայքարի խստացմամբ հնարավոր է հասնել հասարակության հանգստացման:

Ժերվեն, ելնելով նրանից, թե գեներալ-նահանգապետն ինչպիսի լիազորություններով է եկել, առաջարկում էր իր ենթակայության տակ գտնվող ուսումնական օկրուգում վերացնել 1863 թ. ցարի հաստատած համալսարանական կանոնադրությունը և դրա փոխարեն ուժեղացնել ուսումնական հաստատությունների վրա պետական հսկողությունը: Նա պահանջում էր համալսարանից վտարել ազնվական ծագում չունեցող անձանց, բոլոր նրանց, ովքեր կասկածվում են անբարեհուսության մեջ:

Ծանոթանալով Ժերվեի ծրագրին, Լորիս-Մելիքովը հասկացավ, թե իր առջև ինչպիսի թռչուն է նստած, ուղիղ նայելով նրա աչքերին, ասաց.

- Ձեր կողմից առաջարկված ճնշամիջոցներն, իմ կարծիքով, միայն կավելացնեն մեզանից դժգոհողների շարքերը:

- Ոչ, ձերդ գերազանցություն, - չհամաձայնվեց Ժերվեն, - իմ առաջարկած ճնշամիջոցները ցույց կտան կառավարության ուժը, նրա անկոտրում կամքը հասարակական կարգը պահպանելու գործում: Չարիքը պետք է խեղդել իր սաղմի մեջ:

Լորիս-Մելիքովը համաձայնվեց Ժերվեի վերջին մտքի հետ, բայց և

նկատեց, որ մոդայիկ սոցիալիստական հովերով տարված ուսանողների վարքագծի համար ոչ թե նրանք պետք է պատասխան տան, այլ պրոֆեսորներն, որոնք գիտության մեջ իրենց անհաջողությունը կոծկում են ուսանողների առջև հաճոյանալով:

- Պրոֆեսորը, - չհամաձայնվելով ասաց Ժերվեն,- այն դեմքն է, որն օժտված է կառավարության հատուկ վստահությամբ: Պրոֆեսորների մեջ կան միայն մի քանիսն, որոնք չեն արդարացնում իրենց կոչումը: Ոչ: Մեր ամբողջ դժբախտությունը հսկողության մեջ է: Այստեղից էլ համալսարանում ռազնոչինցիների առատությունը և որպես դրա արդյունք՝ խռովարարության տարածումը:

Ժերվեն այնպես արագ ու բարձրաձայն էր խոսում, որ մի պահ մոռացավ, թե ում մոտ է գտնվում, սկսեց ահաբեկել, ասելով, թե մինչև թագավոր կայսրի մոտ կհասնի ու կբողոքի գեներալ-նահանգապետի լիբերալ մոտեցումից:

Լորիս-Մելիքովը հանգամանորեն ուսումնասիրելով իրավիճակը, Ժերվեի հետ զրույցից հետո համոզվեց, որ հոգաբարձուի դեմ եղած բողոքները ճիշտ են և հարկավոր է նրան հեռացնել նահանգից:

Ժերվեն օգտվում էր ժողովրդական լուսավորության նախարար, իր հետադիմական հայացքներով հայտնի Դ. Տոլստոյի լայն աջակցությունից: Այդ հանգամանքը թեև հայտնի էր գեներալ-նահանգապետին, բայց դա չխանգարեց, որպեսզի 1879 թ. մայիսի 5-ին նախարարին պաշտոնապես առաջարկեր Ժերվեին ազատել ծառայությունից:

«Ինձ հասած կարծիքները, - գրում էր Լորիս-Մելիքովը լուսավորության նախարարին,- միաձայն վկայում են, որ պ. Ժերվեն ոչ համալսարանի գիտական անձնակազմի միջավայրում, ոչ այնտեղ դաստիարակվող պատանեկության մոտ չի օգտվում բարձր հարգանքից, որը պետք է հատուկ լինի օկրուգի հոգաբարձուին: Պրոֆեսորների մոտ չունենալով ազդեցություն, նա չի կարողացել այդպիսին ձեռք բերել նաև ուսանողների մեջ: Արդյունքում նրանց կողմից ստեղծվել է անվստահություն: Այսպիսով, չօգտվելով հեղինակությունից, նա զրկվել է ինչպես սովորողների, այնպես էլ նրանց սովորեցնողների վրա բարերար ազդեցության հնարավորությունից, իսկ դա իր հերթին նպաստում է պրոֆեսորների և ուսանողների միջև բարոյական կապի բացակայության:

Ընդորում այդպիսի կապն այժմ ավելի անհրաժեշտ է, քան երբևէ: Ձերդ պայծառափայլությանը հայտնի է, թե ինչպիսի նախատինքի է արժանանում այժմ սովորող երիտասարդությունը: Չմերժելով, որ նրա մի հայտնի մասը, հատկապես վերջին տարիներին, իր վարքագծով, անբարեհույս մարդկանց հետ կապերով, վերջապես քաղաքական բնույթի հանցավոր դրսևորումներին անուղղակի և նույնիսկ անմիջական մասնակցությամբ, արժանացել է մեղադրանքի, ես չեմ կարող և չեմ կարծում

ամբողջ պատասխանատվությունը դնել միայն երիտասարդության վրա: Հաստատապես համոզված եմ, որ համալսարանի պրոֆեսորների լավ կազմի և նրանց ոչ միայն գիտական, այլև բարոյական պարտականությունների նկատմամբ ավելի խիստ վերաբերմունքի դեպքում տեղի ունեցած շատ տխուր երևույթներ կարող էին չլինել:

Ինձ հասած տեղեկություններով պրոֆեսորներից ոմանք սովորող երիտասարդության մոտ բացարձակապես իրենց գիտական գիտելիքներով, գիտության շահերին ծառայելով հարգանք ձեռք բերելու հնարավորություն չունենալով, հարգանք են որոնում նրա ոչ հասուն ծգտումները խրախուսելու միջոցով: Այսպիսի գործելակերպն, որը հանդիպում է այստեղի գիտական անձնակազմի մոտ, պետք է ուղղակի անվանվի հանցագործություն, քանի որ նման դասատուներն, որոնց մերկացնելը շատ դժվար է, իրենց խնամքին հանձնված պատանեկության դաստիարակներ ու ղեկավարներ լինելու փոխարեն հանդիսանում են անուղղակի և անպատիժ հրահրիչներ, նրան մղելով շատ տխուր հետևանքների տանող արարքների...

Դրա համար էլ, ձերդ պայծառափայլություն, խոնարհաբար խնդրում եմ գործի շահերից ելնելով, որի բնական պահապանը դուք եք հանդիսանում և նաև իմ վրա թագավոր կայսրի կողմից դրվածը կատարելու գործում իմ հոգսերը թեթևացնելու նպատակով բարի եղեք, պ. Ժերվեին ետ կանչել զբաղեցրած պաշտոնից»:

Ժողովրդական լուսավորության նախարարն օգտվում էր ցարի անսահման վստահությունից: Դա հայտնի էր բոլորին և ձգտում էին շահել Դ. Տոլստոյի համակրանքը, չհակաճառել նրա կամքին: Դա հայտնի էր նաև Լորիս-Մելիքովին: Բայց Միխայիլ Տարիելովիչն իրեն չէր նմանվի, եթե հանդուրժեր Ժերվեին և չընդհարվեր Դ. Տոլստոյի հետ: Նախարարն արեց ամեն ինչ իր դրածոյին պահելու համար:

1879 թ. մայիսի 15-ին, ի պատասխան Լորիս-Մելիքովի վերոհիշյալ նամակի, Դ. Տոլստոյը նրան հայտնում էր, թե «հարկադրված եմ համաձայնվել ձեր պահանջի հետ»: Միաժամանակ նախարարն առաջարկում էր Ժերվեի ազատումը հետաձգել մինչև ուսումնական տարվա վերջ:

Լորիս-Մելիքովը չհամաձայնվեց և նախարարը հարկադրված էր կատարել նրա պահանջը: Սակայն արդյունքում Լորիս-Մելիքովն ի դեմս Դ. Տոլստոյի, ունեցավ ոխերիմ թշնամու...

«Ըստ ուրախ եմ դրա համար...»

Լորիս-Մելիքովը Խարկովի ժամանակավոր գեներալ-նահանգապետի պաշտոնում մնաց ընդամենը 10 ամիս: Այդ ընթացքում Խարկովում ոչ միայն հակապետական գործունեության դրսևորում չեղավ, այլև հասա-

րական կարգի խախտում տեղի չունեցավ: Իշխանության նկատմամբ վստահությունն այնքան մեծացավ, որ Խարկովի գեներալ-նահանգապետությունը իր վեց նահանգներով /Խարկով, Պոլտավա, Չերնիգով, Կուրսկ, Օրյոլ, Վորոնեժ/ համարվում էր կայսրության ամենանահանգիստ և հուսալի մարզերից մեկը: Լորիս-Մելիքովն այդ արդյունքին հասավ ոչ թե պատժամիջոցներով, այլ կարգ ու կանոնի ամրապնդմամբ, օրենքների անշեղ կիրառմամբ: Իհարկե, այս գործում անչափ կարևոր դեր էին խաղում գեներալ-նահանգապետի անձնական արժանիքները՝ ազնվությունը, սկզբունքայնությունը և անկաշառ լինելը:

Լորիս-Մելիքովը հասավ նրան, որ բարձրացնել տվեց ոստիկանների աշխատավարձը, բարելավեց նրանց նյութական միջոցները, միաժամանակ թարմացրեց ոստիկանության կազմը և այդ ամենով հանդերձ անողոք խստությամբ հետապնդում էր օրենքի ամեն մի խախտում, ինչպես ոստիկանության աստիճանավորների կողմից հասարակության նկատմամբ, այնպես էլ մասնավոր անձանց կողմից ոստիկանության օրինական պահանջների նկատմամբ:

Ուղղակիորեն չխառնվելով քաղաքային և զեմստվոյական հիմնարկների գործերին, որպեսզի չխախտի օրինական կարգը, Լորիս-Մելիքովն առավել նշանավոր հասարակական գործիչների հետ հաճախակի հանդիպելով, նրանց մոտ վստահություն էր մտցնում, հասարակական կազմակերպությունների օրինական միջնորդություններն իրականացնելու գործում իշխանությունների պատրաստակամության մասին:

Դատարանների և դատախազական հսկողության նկատմամբ գեներալ-նահանգապետը վստահություն դրսևորելու հետ միասին, ոչ մի թերություն անուշադրության չէր մատնում: Նրա դրսևորած անկոտրում հետևողականության արդյունքը զգում էին բոլորը: Եվ, երբ 1879 թ. հուլիսին Լորիս-Մելիքովն եկավ Պետերբուրգ, Ալեքսանդր Երկրորդի մոտ ընդունելության ժամանակ, զեկուցման ժամանակ հարկ համարեց հիշեցնել նաև դատական աստիճանավորների գովելի գործունեության մասին:

Լսելով Լորիս-Մելիքովի պատմությունը, ցարն ասաց.

- Շատ ուրախ եմ դրա համար, բայց, խոստովանում եմ, այդ մասին առաջին անգամ քեզանից եմ լսում:

Գեներալ-նահանգապետի կարգադրությունը

Լորիս-Մելիքովը հատուկ ուշադրություն էր դարձնում կրթության գործին, երիտասարդության բարոյական դաստիարակությանը: Հաճախ հանդիպելով համալսարանի պրոֆեսորների հետ, Լորիս-Մելիքովը նրանց վրա դրեց ուղղակի պատասխանատվություն ուսման պրոցեսից ուսանողների բացակայության համար: Ուսանողների միակ նպատակն,

ասում էր գեներալ-նահանգապետը, մասնակցելն է գիտական պարապմունքներին և ավելացնում, այլապես անհասկանալի է, թե ինչի համար են ընդունվել համալսարան:

Եվ երբ պրոֆեսորներից մեկը փորձեց առարկել, Լորիս-Մելիքովը չհամաձայնվելով, ասաց.

- Այո, ուսանողներն երեխա չեն այլևս: Բայց, խնդրում եմ չմոռանաք, որ նրանք մեր երեխաներն են և մենք պարտավոր ենք հոգատարությամբ փոխարինել նրանց ծնողներին...

Լորիս-Մելիքովի ուշադրությունից չվրիպեցին նաև Խարկովի սովորող երիտասարդության միջավայրում տարածված անառակության, շվայտության փաստերը: Այսպես, օրինակ, միջնակարգ ուսումնական հաստատություններում սովորող տղաներն ու աղջիկները համատեղ ապրում էին միևնույն բնակարանում, անարգել հաճախում էին սրընթաց պարերի ուղեկցությամբ զվարճանքի վայրեր:

Սովորող երիտասարդության շրջանում տարածված անբարոյական երևույթերի կանխման նպատակով "Харковские губернаторские ведомости"- ում գեներալ-նահանգապետը տպագրեց հետևյալ կարգադրությունը. «Խարկով քաղաքում գոյություն ունեն հասարակած այգիներ՝ «Շատո-դէ ֆլեր», «Տիվոլի» և այլն, որոնցում ամռան ընթացքում տրվում են դրամատիկական և օպերետային ներկայացումներ, կարդացվում են ոտանավորներ ու քառյակներ, երգում են շանսոնետուհիներ, թույլ են տրվում կենդանի պատկերներ և այլ զվարճություններ:

Ինձ հասած տեղեկությունների համաձայն, հիշատակված հասարակած զվարճություններում միշտ չէ, որ պահպանվում են պարկեշտության ու պատշաճության կանոնները, վիրավորելով հասարակական բարոյականությունը: Դրա հետևանքով ես ոստիկանապետությանը հրահանգավորել եմ անշեղորեն կատարել օրենքի պահանջը, որպեսզի խախտման մեջ մեղավորներն ենթարկվեն պատասխանատվության:

Այդ նույն տեղեկություններից ափսոսանքով նկատում եմ, որ նշված այգիներում ու մյուս հասարակած վայրերում, հակառակ ժողովրդական լուսավորության նախարարության արգելքին, անարգել մուտք են գործում միջնակարգ ուսումնական հաստատությունների սաներն առանց հասակի տարբերության:

Ոստիկանությանն իրավունք տալով խստորեն կանխել նշված հիմնարկներում և հասարակած զվարճանքի վայրերում սաների մուտքը, ես, անկախ այդ ամենից, առաջարկել եմ ուսումնական ղեկավարությանն ենթակա պաշտոնական անձանց միջոցով ոստիկանության հետ համատեղ հսկողություն իրականացնել վերևում նշված արգելքի վրա: Իմ հրամանով այդ անձանց իրավունք է տրվում անվճար մուտք գործել բոլոր զվարճանքի այգիներում և համանման այլ տեղերում:

Սակայն գիտակցելով, որ նման ոստիկանական միջոցներով և ուսումնական ղեկավարության կողմից հսկողությամբ չի կարելի հասնել ցանկալի արդյունքների, դիմում եմ ծնողների, դաստիարակների և ընդհանրապես բոլոր այն անձանց աջակցությանն, որոնց վրա օրենքով և այլ հարաբերություններով ընկած է պատանեկության դաստիարակության սուրբ պարտականությունը և հասարակության ու հայրենիքի առջև բարոյական պատասխանատվությունը նրա ապագայի համար: Հաստատ համոզված եմ, որ իմ կարգադրությունն, որը բացառապես ուղղված է աճող սերնդին հեռու պահելու անբարոյական տեսարաններից, որոնք ժամանակից շուտ գրգռելով նրանց միտքն ու երևակայությունը, չեն կարող չվնասել և ուսման հաջողությանը, կհանդիպի բոլոր բարեմիտ մարդկանց մոտ լրիվ աջակցություն ու համակրանք, որոնց համար պատանեկության ֆիզիկական և բարոյական առողջությունը և նրա ապագան չեն կարող թանկ չլինել:

Ինչ վերաբերում է կանացի բաց ուսումնական հաստատությունների սանուհիներին, ապա ես ավելորդ համարեցի հիշեցնել նրանց մասին սույն կարգադրության մեջ, քանի որ նույնիսկ թույլ չեմ տալիս մտածել, որ նրանցից որևէ մեկի թույլ է տրվել այցելել պարկեշտությունը խախտող տեսավայրեր: Կոմս Լորիս-Մելիքով»:

Լորիս-Մելիքովի հաշվետվությունը

Ավարտվեց 1879 ծանր թվականը: Լորիս-Մելիքովը կազմեց ծավալուն հաշվետվություն 60 էջի վրա և գոյություն ունեցող կարգի համաձայն պետք է ցարին ներկայացներ 1880 թ. փետրվարին:

Հաշվետվության մեջ գեներալ-նահանգապետն առաջ էր քաշում հետևյալ խնդիրները.

1. Գեներալ-նահանգապետին միայն պատժիչ լիազորություններ ու իշխանություն տալն անբավարար է նրա վրա դրված բոլոր պարտականությունները կատարելու համար, որոնց մեջ կարևոր պետք է լինի ոչ միայն արդեն բացահայտված չարիքի հետապնդումն, այլ դրա ժամանակին կանխարգելումը:

2. Այդ չարիքի պատճառները թաքնված են հասարակական ու տնտեսական կյանքի տարատեսակ պայմանների մեջ և նահանգի բարձրագույն իշխանությունը պետք է հնարավորություն ունենա ներազդել դրանց վրա ըստ անհրաժեշտության:

3. Այսպիսի խնդիրն իրագործել կարելի է միայն այն դեպքում, երբ գեներալ-նահանգապետները կառնչվեն տեղական շահերին ի դեմս նրանց ներկայացուցիչների և այդ միջոցով տեղեկանալով նրանց կարիքների մասին, ի վիճակի կլինեն դրանց տալ օրինական ընթացք և առհասարակ նրանց հիմնովին՝ աջակցել:

19-րդ դարի 70-ական թվականներին Ռուսաստանում արդեն կար ընդդիմադիր շարժում, որը ներկայացնում էին լիբերալ տրամադրություններ ունեցող գրողները, գիտնականները, բժիշկները, ուսուցիչները, լրագրողները, զեմստվոյական գործիչները: Լիբերալ ընդդիմությունը հանդես էր գալիս վարչական ապօրինությունների դեմ, պահանջում էր «կատարելագործել» պետական կարգը: Բայց լիբերալ ընդդիմությունը վախենում էր սոցիալական ցնցումներից, գտնելով,. որ սոցիալական և քաղաքական կենսական պրոբլեմներն անհրաժեշտ է լուծել վերևից, խաղաղ միջոցներով:

Լիբերալ շարժման մեջ կարևոր տեղ էին զբաղեցնում սլավոնոֆիլները, որոնք ձգտում էին լուծել Ռուսաստանի սոցիալ-տնտեսական զարգացման պրոցեսի դրած խնդիրները: Սլավոնոֆիլների առաջնորդներն էին Ա. Կոշելևը, Յու. Սամարինը, Վ. Չերկասսկին, որոնցից առաջինի հետ բարեկամական հարաբերություններ ուներ Լորիս-Մելիքովը: Սլավոնոֆիլներն առաջարկում էին իրականացնել տեղական ու կենտրոնական կառավարման մարմինների ռեֆորմ, զարգացնել լուսավորությունը, կառուցել երկաթուղիներ և այլն:

19-րդ դարի 70-ական թվականների վերջերին հետագա զարգացում ստացավ սլավոնոֆիլների այն գաղափարն, որը վերաբերում էր ցարին կից զեմստվոյական ժողովի, որպես հասարակական կարծիքի արտահայտչի հրավիրմանը: Սլավոնոֆիլները չէին ժխտում Ռուսաստանում սահմանադրություն մտցնելու հնարավորությունը և դա համարում էին ցանկալի: Բայց միաժամանակ նրանք գտնում էին, որ տվյալ պահին Ռուսաստանը պատրաստ չէ սահմանադրություն ունենալուն:

Ուժեղացել էր նաև զեմստվոյական լիբերալ- ընդդիմադիր շարժումը, որը 1879 թ. ցարին ներկայացրած հանրագրում խնդրում էր Ռուսաստանին շնորհել ինքնակառավարում, անձի իրավունքների անձեռնմխելիություն, անկախ դատարան, մամուլի ազատություն:

Լորիս-Մելիքովը Ռուսաստանի նահանգապետների և գեներալ-նահանգապետների մեջ միակն էր, որ ցարին պաշտոնապես գրում էր վերոհիշյալ հարցերի մասին և դնում էր դրանց իրագործման անհրաժեշտությունը: Նա իր հաշվետվության մեջ գրում էր, թե նշված միջոցառումների իրագործմամբ հնարավոր կլինի «աստիճանաբար թուլացնել խիստ պատժիչ միջոցների անհրաժեշտությունը, որոնց ուժն ու նշանակությունը մեծ են միայն այնքան ժամանակ, քանի հասարակությունը չի հասցրել նրանց ընտելանալ: Այդ միջոցների իրականացման շարունակումը չհասցնելով նրանց հիմքում դրված փրկարար սարսափին, կդադարեն իրենցից սպասվող դրական ազդեցությունն ունենալուց»:

Լորիս-Մելիքովն իր հաշվետվությունը ծանոթացրեց Միլյուտինին ու Վալուևին, որոնք հավանություն տալով, գտան, որ գեներալ-նահանգապետը, ինչպես հետագայում նշել է Վալուևը, ճիշտ է դրել շեշտերը:

Խարկովի նահանգում Լորիս-Մելիքովի մի քանի ամսվա կառավարման ընթացքում որևէ լուրջ հանցագործության նույնիսկ փորձ չեղավ, իսկ գեներալ-նահանգապետն իր մարդասիրությամբ ու մատչելիությամբ ձեռք բերեց մեծ համակրանք: Այս հանգամանքը նշելով, ժամանակի առաջադիմական մամուլը բարձր գնահատեց Լորիս-Մելիքովի ամբողջ գործունեությունը Խարկովի գեներալ-նահանգապետության տարածքում:

Խարկովի գեներալ-նահանգապետի պոստում գտնվելու ժամանակ Լորիս-Մելիքովը կարողացավ բարձրացնել իշխանության նկատմամբ հասարակության հարգանքը: Ինչպես նշում էր «Ռուսկայա միսլ» ամսագիրը, Լորիս-Մելիքովի օրոք գեներալ-նահանգապետության մեջ ոչ մի մահապատիժ չի իրականացվել:

1880 թ. փետրվարի 2-ին Լորիս-Մելիքովն Ալեքսանդր Երկրորդին ներկայացրեց իր հաշվետվությունը:

1880 թ. փետրվարի 19-ը ցարի ծննդյան օրն էր: Լորիս-Մելիքովը մնաց Պետերբուրգում տոնախմբությանը մասնակցելու համար:

ՅՈԹԵՐՈՐԴ ՄԱՍ

Կյանքը պատկանում է պատմությանը

1880 թ. փետրվարի 5-ին կատարվեց նոր մահափորձ Ալեքսանդր Երկրորդի դեմ: Այս անգամ «Ժողովրդական ազատություն» նարոդնիկական կազմակերպության գործադիր կոմիտեի անդամ Ստեպան Խալտուրինն ատաղձագործ Ստեպան Բատիշկովի անվան տակ աշխատանքի էր անցել Ձմեռային պալատի արհեստանոցում: Նա կարողացել էր պալատի պահակազորի պետի վստահություն այնպես շահել, որ այլևս նրան չէին ստուգում, թե ինչ է իր պայուսակով բերում ու տանում:

Փետրվարի 5-ին, երեկոյան ժ. 18-ի սահմաններում լսվեց ուժեղ պայթյուն: Ռումբը տեղադրվել էր պահակազորի սենյակում, որի վերին հարկում գտնվում էր ցարական ընտանիքի ճաշասրահը: Ռումբի պայթյունից սպանվեց 10 մարդ, վիրավորվեց 53-ը: Պայթյունից հետո ատաղձագործն անհայտացավ:

Պայթունի ժամանակ ցարը գտնվում էր հարևան հարկաբաժնում և դրա շնորհիվ կենդանի մնաց:

Անհապաղ ցարի մոտ հրավիրվեցին նախարարները: Այստեղ էին թագաժառանգ Ալեքսանդրը, ռազմական նախարար Միլյուտինը, նախարարների կոմիտեի նախագահ Վալուևը, ներքին գործերի նախարար Մակովը, ժանդարմերիայի շեֆ Դրենտելնը, արդարադատության նախարար Նաբոկովը, ֆինանսների նախարար Գրեյգը:

Ցարն արտաքուստ հանգիստ, ներքին հուզմունքը զսպելով, ասաց, որ այլևս անհնար է համակերպվել ստեղծված վիճակի հետ, որ նույնիսկ արդեն ահաբեկիչները ռումբ են պայթեցնում Ձմեռային պալատում և առաջարկեց քննարկել հետևյալ հարցերը.

1. Արդյո՞ք հարկավոր է Պետերբուրգում պահել ժամանակավոր գեներալ-նահանգապետի պաշտոնը, որը, դժբախտաբար չտվեց սպասված արդյունքը:

2. Պետք չե՞, արդյոք, ստեղծել հատուկ հետաքննիչ հանձնաժողով կամ էլ ձեռնարկել այլ անհետաձգելի արտակարգ միջոցներ վերջին չարագործության կապակցությամբ:

Ներկաները ցարի հրավերով կատարեցին մի շարք առաջարկություններ: Ալեքսանդր Երկրորդը փակելով խորհրդակցությունը, հրամայեց նորից հավավել խնդիրը վերջնականապես լուծելու համար:

Այդ օրն էլ, գոյություն ունեցող կարգի համաձայն Ձմեռային պալատում հերթապահությունը կատարում էր Լորիս-Մելիքովը: Նա շրջեց բո-

լոր պահակակետերն, որից հետո ուղևորվեց ցարի առանձնասենյակ՝ զեկույցի համար: Առանձնասենյակի մուտքի մոտ նա հանդիպեց թագաժառանգ Ալեքսանդր Ալեքսանդրովիչին, որը խորհրդակցությունից հետո մնացել էր հոր մոտ և նոր էր պատրաստվում մեկնել իր նստավայրը՝ Անիչկովի պալատ:

Թագաժառանգը խնդրեց Լորիս-Մելիքովին չմտնել ցարի մոտ և նրանից հետաքրքրվեց, թե ինչ կարծիք ունի կատարված դեպքի մասին:

- Ձեզ, - ասաց նա, - հաջողվել է Խարկովի նահանգում խաղաղեցնել այդ անարխիստներին, վերացնել խռովարարների բույնը: Իսկ մենք այստեղ երկար քննարկեցինք, բայց դեռ ոչ մի արդյունքի չենք հասել: Բոլորն էլ առաջարկում են ուժեղացնել պատժիչ միջոցները: Ինձ, Միխայել Տարիելովիչ, հետաքրքրում է ձեր կարծիքը:

Լորիս-Մելիքովի համար անսպասելի էր թագաժառանգի հարցը, որովհետև դա չէր լինի, եթե այս պատահական հանդիպումը տեղի չունենար:

- Ձերդ մեծություն, - պատասխանեց Լորիս-Մելիքովը, - միայն պատժիչ միջոցներ կիրառելը բավարար չէ: Տեսեք, Կարակոզովը միայնակ էր, բայց նրան պատժելուց հետո քանի դավադիր կազմակերպություններ ստեղծվեցին: Հարկավոր է մշակել այնպիսի միջոցներ, ավելի ճիշտ այնպիսի համակարգ, որ ներգործի ոչ միայն դավադիրների, այլև ամբողջ հասարակության վրա: Կարծում եմ, որ ձեզ հայտնի պետք է լինի, թե ում է համակրում հասարակությունը: Ավելի շատ հեղափոխականներին, քան կառավարությանը:

Լորիս-Մելիքովն իր գիտելիքներով, խնդրի նկատմամբ սթափ գնահատականներով թագաժառանգի առջև բացեց գործողությունների լայն ծրագիր, որի իրագործումը կբերեր ցանկալի արդյունք: Լորիս-Մելիքովը խոսում էր անկեղծությամբ: Նա առանց թաքցնելու թվարկեց նաև կառավարության թույլ տված սխալները, որոնց շարունակումը ավելի կխորացներ հասարակական դժգոհությունը:

- Իսկ ո՞ւմ կերաշխավորեիք ձեր փոխարեն Խարկովի գեներալ-նահանգապետի պաշտոնում, - անսպասելի հարցրեց թագաժառանգը:

Լորիս-Մելիքովը տվեց իր հին բարեկամ՝ գեներալ Դունդուկով-Կորսակովի անունը...

1880 թ. փետրվարի 8-ին Ալեքսանդր Երկրորդը հրավիրեց վերոհիշյալ բոլոր նախարարներին, որոնք անչափ զարմացան, ցարի առանձնասենյակում տեսնելով Լորիս-Մելիքովին:

Ալեքսանդր Երկրորդը խնդրեց հավաքված նախարարներին արտահայտել իրենց կարծիքը: Հնչեցին տարբեր առաջարկություններ: Լորիս-Մելիքովը լուռ էր: Եվ հանկարծ, բոլորի համար անսպասելի ցարը նրան էլ խնդրեց կարծիք հայտնել:

Լորիս-Մելիքովը վստահաբար շարադրեց իր տեսակետը, շեշտը դնելով ուժեղ իշխանության և լիբերալ սկզբունքների ներդաշնակության վրա:

- Բայց ամենից առաջ, - ասաց վերջում Միխայիլ Տարիելովիչը, - մեզ հարկավոր է ապահովել իշխանության միասնությունը: Դրա համար իշխանությունը պետք է կենտրոնացվի ձերդ մեծության ամբողջ վստահությունից օգտվող մի մարդու ձեռքում:

Ցարը ոտքի կանգնեց, ընդհատելով Լորիս-Մելիքովին, հայտնեց իր ընդունած որոշումը. վերացվում է Պետերբուրգի գեներալ-նահանգապետությունը և ստեղծվում է գերագույն կարգադրիչ հանձնաժողով:

Մինչ նախարարները մտածում էին, թե թագավոր կայսրն ո՞ւմ է նշանակելու այդ նոր պաշտոնում, Ալեքսանդր Երկրորդը դիմելով Լորիս-Մելիքովին, ասաց.

- Դու կլինես այդ մարդը: Գերագույն կարգադրիչ հանձնաժողովի պետ եմ նշանակում գեներալ-թիկնապահ կոմս Լորիս-Մելիքովին: Այսուհետև նրան են ենթարկվում 3-րդ բաժանմունքը և ժանդարմերիայի կորպուսը: Միխայիլ Տարիելովիչ, ամեն ինչ վերցրեք ձեր ձեռքը: Իսկ Խարկովի ժամանակավոր գեներալ-նահանգապետ եմ նշանակում գեներալ-թիկնապահ իշխան Դունդուկով-Կորսակովին:

Ցարի կամքը հանկարծակի բերեց ներկաներին:

Դ. Միլյուտինն անդրադառնալով Լորիս-Մելիքովի նշանակմանը, 1880 թ. փետրվարի 10-ին իր օրագրում գրել է. «Իմ մոտ եկավ կոմս Լորիս-Մելիքովը: Նա հայտնեց իր համար անսպասելի թագավորի որոշման մասին: Նրա խոսքերով Վալուևը, Մակովը, Նաբոկովն ու Դրենտելնն, ըստ երևույթին, ցնցվել են, լսելով այդ որոշումը...»

1880 թ. փետրվարի 12-ից սկսած Լորիս-Մելիքովի կյանքը պատկանում էր պատմությանը:

Ցարի հրամանագիրը

Ալեքսանդր Երկրորդ ցարի ստորագրած հրամանագիրը հռչակում էր հետևյալը.

«Ռուսաստանում պետական և հասարակական կարգը խախտող վերջին ժամանակներում հանդուգն չարագործների անընդհատ կրկնվող մահափորձերը կանխելու հաստատուն որոշմամբ մենք հարկ համարեցինք.

1. Սանկ-Պետերբուրգում հիմնել գերագույն կարգադրիչ հանձնաժողով պետական կարգը և հասարակական հանգստությունը պաշտպանելու համար:

2. Գերագույն կարգադրիչ հանձնաժողովը բաղկացած է գլխավոր պետից և նրան օգնելու համար նրա հայացողությամբ նշանակված հանձնաժողովի անդամներից:

3. Գերագույն կարգադրիչ հանձնաժողովի պետ է նշանակվում Խարկովի ժամանակավոր գեներալ-նահանգապետ, մեր գեներալ-թիկնապահ, պետական խորհրդի անդամ, հեծելազորի գեներալ կոմս Լորիս-Մելիքովը, թողնելով նրան պետական խորհրդի անդամ և մեր գեներալ-թիկնապահի աստիճանում:

4. Հանձնաժողովի անդամներ նշանակել իմ հրամանով հանձնաժողովի գլխավոր պետի խնդրանքով, բացի դրանից նրան իրավունք տալ հանձնաժողով հրավիրել բոլոր այն անձանց, որոնց ներկայությունն օգտակար կհամարվի:

5. Պետական կարգի և հասարակական հանգստության պահպանման գործում բոլոր իշխանությունների գործողությունների միավորման համար գերագույն կարգադրիչ հանձնաժողովի գլխավոր պետին ներկայացնել այդ պահպանությանը վերաբերող բոլոր գործերը:

6. Գերագույն կարգադրիչ հանձնաժողովի գլխավոր պետի բոլոր պահանջները պետական կարգի և հասարակական հանգստության մասին բոլոր գործերով ենթակա են անհապաղ կատարման ինչպես տեղական պետերի, գեներալ-նահանգապետների, նահանգապետների և քաղաքապետների, այնպես էլ բոլոր գերատեսչությունների, չբացառելով և զինվորական, կողմից:

7. Բոլոր գերատեսչությունները պարտավոր են գերագույն կարգադրիչ հանձնաժողովի գլխավոր պետին ցույց տալ լիակատար աջակցություն:

8. Գերագույն կարգադրիչ հանձնաժողովի գլխավոր պետին՝ անմիջականորեն մեզ ներկայացնել ու խնդրել, երբ հարկ կհամարվի ստանալ մեր հրամանն ու ցուցումը:

9. Անկախ այս ամենից գերագույն կարգադրիչ հանձնաժողովի գլխավոր պետին իրավունք տալ անել բոլոր կարգադրությունները և ընդունել բոլոր միջոցներն, որոնք նա կհամարի անհրաժեշտ պետական կարգի և հասարակական հանգստության պահպանման համար ինչպես Սանկտ-Պետերբուրգում, այնպես էլ կայսրության մյուս վայրերում, ընդորում նրա հայեցողությունից կախված կլինեն իր կարգադրությունները չկատարելու դեպքում պատժելու, տույժի ենթարկելու միջոցների ընտրությունն, ինչպես նաև տույժի ենթարկելու կարգը:

10. Գերագույն կարգադրիչ հանձնաժողովի գլխավոր պետի կարգադրությունները և նրա ձեռնարկած միջոցները բոլորի կողմից ենթակա են անպայման կատարման և որոնք կարող է վերացնել միայն ինքը կամ բարձրագույնի հատուկ հրամանով:

11. Գերագույն կարգադրիչ հանձնաժողովի ստեղծմամբ Սանկ-Պետերբուրգի ժամանակավոր գեներալ-նահանգապետի պաշտոնը վերացնել»:

Այսպիսով, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ աչքի ընկած տաղանդավոր զորահրամանատար Լորիս-Մելիքովի վրա դրվեցին Ռուսաստանը կառավարելու դիկտատորական լայն լիազորություններ:

Ցարի հրամանի նախագիծը կազմող Վալուևը իր օրագրում /փետրվարի 11-ին/ գրել է.

«Ոչ մի դիկտատորություն, ոչ էլ կիսադիկտատորություն ես նկատի չէի ունեցել և չէի կարող ունենալ: Հանձնաժողովի գործունեության շրջանակը կտրականորեն սահմանվել էր և կոմս Լ.Մելիքովին վերապահվում էր ոչ թե նախագահել, այլ հանձնաժողովի պետ լինել... Կարսի հաղթողից կարելի էր սպասել, որ ամբողջ վարչական իշխանության գործունեությունը եռանդով ուղղեր այսպես կոչված հանցավորության դեմ պայքարին: Բայց, իհարկե, չէր կարելի ի դեմս նրա տեսնել պետական կառավարման բոլոր բնագավառների գիտակի»:

Ինչպես երևում է Վալուևի գրառումներից, նա հենց սկզբից բացասաբար էր վերաբերում Լորիս-Մելիքովի նշանակմանը: Ճիշտ է, նա իր այդ վարվելակերպը չէր դրսևորում և միշտ առիթի դեպքում հիշում էր Միխայիլ Տարիելովիչի օգտակար վերաբերմունքն որդու նկատմամբ, բայց, այնուամենայնիվ, Վալուևի մտքով չէր կարող անցնել, որ Ալեքսանդր Երկրորդի գահակալման 25-ամյակը պետք է սկսվեր Լորիս-Մելիքովի դիկտատորությամբ: «Չեմ կարող, - գրել է նա փետրվարի 17-ին , -մոռանալ երեկվա խորհրդակցությունը, որքան անպատրաստվածություն կամ հայացքների սահմանափակություն է պետք, որպեսզի հույս դնել Խարկովում ունեցած տասնամյա փորձի վրա»:

Հետագայում, արդեն 1881 թ. դեկտեմբերի 30-ին, երբ Լորիս-Մելիքովը հեռացել էր ասպարեզից, Վալուևը իր օրագրի վերոհիշյալ հատվածում կատարել է հետևյալ լրացումը. «Ալեքսանդր Երկրորդը ստեղծելով գերագույն հանձնաժողով, միայն նպատակ է ունեցել արագացնել քաղաքական գործերով հետաքննությունը»: «Հետագայում,- շարունակում է Վալուևը,- կոմս Լ.-Մելիքովը բավականաչափ ճարպիկ կերպով իր դիկտատորական լիազորությունների մասին թագավորի մոտ միտք առաջացրեց, օգտվելով նրանից, որ օտարերկրյա թերթերում իրեն անվանում էին «փոխմիապետ»: Իսկ երբ միտք հղացավ իրեն ներքին գործերի նախարարի պաշտոնում տեսնել, ապա նա նույնպիսի ճարպկությամբ պատճառաբանեց թե հարկավոր է ազատվել իրեն իզուր տեղը շնորհված «փոխմիապետի» տիտուլից»:

Ի՞նչ էր այս ամենը նշանակում: Ի՞նչու էր Վալուևն այսպես վերաբերում: Կասկածո՞ւմ էր Լորիս-Մելիքովի ունակությունների մեջ, թե՞ նախանձում էր: Ամենայն հավանականությամբ Վալուևի մոտ գերակշռում էր երկրորդը:

Լիբերալիզմի հովերով տարված մեկը

Ցարի հրամանագրի ստորագրման հաջորդ օրը, 1880 թ. փետրվարի 13-ին Լորիս-Մելիքովն իր մոտ հրավիրեց բոլոր նահանգապետներին, որոնք Պետերբուրգ էին եկել Ալեքսանդր Երկրորդի գահակալության 25-ամյակի և ծննդյան օրվա կապակցությամբ տոնահանդեսներին մասնակցելու համար:

Լորիս-Մելիքովը ներկայացրեց իր նշանակման վերաբերյալ ցարի հրամանագիրը և ներկաներին ծանոթացրեց Պետերբուրգի բնակիչներին ուղղված դիմումի տեքստը:

Ներկաներից ոչ մեկը հավանություն չտվեց այդ դիմումի տոնին: Ինչպե՞ս կարելի է այդպիսի մեղմ արտահայտություններով դիմել, այն էլ Ձմեռային պալատում կատարված պայթունից հետո:

Ի պատասխան այդ դժգոհության, Լորիս-Մելիքովը նորից ընթերցեց ցարական հրամանագրի 9-րդ և 10-րդ կետերն ու ասաց.

- Պարոնայք, մի մոռացեք, փոխվում են ժամանակները: Մեկ-երկու ակնթարթ և մենք հրաժեշտ կտանք մեր դարին: Առջևում 20-րդ դարն է: Եկեք մտածենք այդ մասին ու չմոռանանք մեր պատասխանատվությունը թագավորի և հայրենիքի առջև:

Այնուհետև Լորիս-Մելիքովը շարադրեց իր նկատառումները ցարի հրամանագրի պահանջների կատարման գործում նահանգապետների խնդիրների մասին և ասաց.

- Մենք պարտավոր ենք ուշադրությամբ հետևել հասարակական կյանքի զարկերակին, ժամանակին ընթացք տանք այնտեղից ելնող խնդիրներին: Հիշեցեք, հասարակական գիտակցությունը յոթ մղոնանոց քայլերով առաջ է ընթանում, մեր աչքի առջև փոխվում են մարդկանց պատկերացումներն իշխանության և դրա կրողների նկատմամբ:

Նահանգապետներն ուշադրությամբ լսում էին գլխավոր պետին, որն իր խոսքն ավարտելով, նրանց խորհուրդ տվեց.

- Հարկավոր է այնպես աշխատել, որ մարդիկ զգան ոչ թե ձեր ներկայությունն, այլ ձեր գործունեության արդյունքը:

Սա արդեն չափից ավելի էր և անսպասելի: Ներկաների մեծ մասը Լորիս-Մելիքովի մոտից հեռացավ՝ նրա մեջ տեսնելով իրենց բարեկեցության դեմ ոտնձգություն կատարող լիբերալիզմի հովերով տարված մեկին...

«Ուրի և մտի դիկտատուրա...»

Կոմս Լորիս-Մելիքովը չէր կարող չգիտակցել այն ամբողջ ծանրությունը, որը անսպասելիորեն նրա վրա դրեց անսահման խնդիրներ: Բայց որ-

պես հավատարիմ հպատակ ու գիտվոր, չէր կարող մտածել նույնիսկ դրանից հրաժարվելու մասին, մանավանդ, որ այդ ծանր բեռը նրա վրա էր դրվում այդքան դժվարին պայմաններում:

Նրա վիճակի անհարմարությունը բարդանում էր նաև նրանով, որ ստանձնելով մայրաքաղաքի գեներալ-նահանգապետի պարտականությունները, պետք է զբաղվեր քաղաքական կարգի հսկայական խնդիրների լուծմամբ և իրականացներ բարձրագույն ոստիկանության ղեկավարումը: Իհարկե, այս երկակիությունը կտրականապես չէր համապատասխանում Լորիս-Մելիքովի համոզմունքներին, բայց ստեղծված իրողությունը հարկադրեց ենթարկվել դրան:

Ցանկանալով թուլացնել ճնշող տպավորությունն առանց այն էլ վախեցած ու շփոթված հասարակության վրա, Լորիս-Մելիքովը վճռեց մինչ այդ Ռուսաստանում չլսված նոր իշխանության ստեղծման նպատակները հանրությանը ներկայացնելու հետ միասին, նշել նաև իր ապագա գործունեության ընդհանուր ուղղությունները:

Ահա, այս նպատակով էլ 1880 թ. փետրվարի 14-ին Լորիս-Մելիքովը դիմում ուղղեց մայրաքաղաքի բնակիչներին: Նկարագրելով գերագույն կարգադրիչ հանճնաժողովի ստեղծման շարժառիթները, թագավոր կայսրի բարձրագույն հրամանագրով իր վրա դրված պարտականությունների շրջանակները, գլխավոր պետը ընդգծում էր. «Գիտակցում եմ իմ առաջիկա գործունեության ամբողջ բարդությունը և չեմ թաքցնում իմ վրա ընկած պատասխանատվությունը: Տեղ չտալով չափազանցված ու փութկոտ սպասումներին, միայն կարող եմ մեկ բան խոստանալ՝ բոլոր ջանքերս ու կարողություններս ներդնել, որպեսզի մի կողմից թույլ չտալ փոքր ինչ թուլություն և ոչ մի խիստ միջոցի առջև չկանգնել մեր հասարակությանը խայտառակող հանցավոր գործողությունները պատժելու համար, մյուս կողմից՝ հանգստացնել և պաշտպանել նրա բարեմիտ մասի օրինական շահերը»:

Լորիս Մելիքովն այնուհետև համոզմունք էր հայտնում, որ կհանդիպի «թագավորին նվիրված և անկեղծորեն իրենց հայրենիքը սիրող բոլոր ազնիվ մարդկանց աջակցությանը, որոնք այժմ ենթարկվում են այնքան անարժան փորձությունների: Հասարակության աջակցությանը նայում եմ որպես գլխավոր ուժի, որը կարող է համագործակցել իշխանության հետ պետական կյանքի օրինավոր ընթացքը վերականգնելու գործում, որի ընդմիջումից առավելապես տուժում են հասարակության շահերը»:

Գլխավոր պետը հույս էր հայտնում, որ մայրաքաղաքի բնակիչները գիտակցում են ստեղծված իրավիճակը և նրանց բնական ու հաստատուն վերաբերմունքի մեջ տեսնում է «նպատակին հասնելու հաջողության գրավականը»:

Լորիս-Մելիքովի դիմումի ոճը նորություն էր Ռուսաստանի համար: Ոչ

մի խոսք չկար «պարտադիր որոշումների», «պարտադիր կատարման» մասին: Կար միայն իրավիճակի անկեղծ նկարագրություն և խնդրանք՝ աջակցելու մասին:

Հասարակության տարբեր շերտեր տարբեր գնահատական տվեցին Լորիս-Մելիքովի ինչպես նշանակման, այնպես էլ Պետերբուրգի բնակչությանն ուղղված դիմումին:

Շատերին թվում էր, որ մինչև այդ Ռուսաստանում չլսված իրավունքներ շնորհելը, որոնց ուժով կոմսը դառնում էր անսահմանափակ ու անվերահսկելի դիկտատոր, կարող էր սարսափեցնող գործողությունների հեղինակ լինել: Սակայն Լորիս-Մելիքովի դիմումի բովանդակությունն ու ոճը բոլորովին հակառակ բանի մասին էին վկայում:

Նարոդնիկական հայտնի հրապարակախոս Նիկոլայ Միխայլովսկին թունոտ նկատեց, որ «Շնորհակալ Ռուսաստանը Լորիս-Մելիքովին կպատկերի առջևից գայլի երախով, ետևից՝ աղվեսի պոչով կիսանդրիով»: «Օտեչեստվեննիե զապիսկի» ամսագրի լրագրողներից մեկն էլ տվեց հետևյալ ձևակերպումը՝ «Սրտի և մտքի դիկտատուրա»: Այսպես էլ Լորիս-Մելիքովի կարճ տիրապետությունը պատմության մեջ մնաց «սրտի դիկտատուրա» անունով:

Անրադառնալով Լորիս-Մելիքովի նշանակմանը, «Ռուսկայա միսլ» ամսագիրը 1880 թ. փետրվարին հույս էր հայտնում, որ կառավարության նկատմամբ կվերականգնվի վստահությունը և դա կապում էր «Կովկասի հերոս, Կարսի նվաճող, հաստատակամ, իմաստուն և սարդու նկատմամբ սիրով լցված պետական գործչի, Պովոլժեում և Խարկովում բոլորի սիրտը գրաված, տաղանդավոր կոմս Լորիս-Մելիքովի հետ»:

«Գոլոս» թերթը մեջբերելով Լորիս-Մելիքովի խոսքերը՝ «Ուժը ուժի մեջ չէ, ուժը սիրո մեջ է», ընդգծում էր, որ «այսպիսին է կոմս Լորիս-Մելիքովի նշանաբանը: 1880 թ. փետրվարի 15-ին «Գոլոսը» Լորիս-Մելիքովի մասին հոդված գրում էր. «Նա սիրում է Ռուսաստանը, նրան է նվիրել իր ամբողջ գործունեությունը, հանուն նրա պատվի ու փառքի բազմիցս իր կյանքը վտանգի է ենթարկել: Նա սիրում է և գիտե Ռուսաստանը, գիտե, որ նրա բարօրության, նրա կյանքի համար ահրաժեշտ է ամբողջապես անմնացորդ արմատախիլ անել այն կործանարար ուսմունքներն ու չարագործ մահափորձերն, որոնք կասեցրել են հայրենիքի վերելքը և նրա կյանքը դարձրել անտանելի ծանր: Սիրելով Ռուսատանը, նա արմատախիլ կանի չարիքը և կարդարացնի թագավորի մեծ վստահությունը»:

Հաջորդ օրը, փետրվարի 16-ին նույն «Գոլոս» թերթն արձագանքելով Լորիս-Մելիքովի « Մայրաքաղաքի բնակիչներին» դիմումին, գրում էր. «Եթե այս խոսքը դիկտատորին է, ապա պետք է ընդունել, որ նրա դիկտատուրան սրտի ու բանականության դիկտատուրա է: Ռուս ժողովրդի ողջամիտ ու բարոյական ամրության վրա հենված այդ դիկտատուրան իր

կողմը կգրավի բոլոր ազնիվ ռուս մարդկանց սրտերը: Նա ոչ թե վախ է ներշնչում, այլ վստահություն, քանի որ հիմնված է ոչ թե նյութական ուժի, այլ եղբայրական սիրո վրա»:

Կոմս Պ. Վալուևն իր օրագրում 1880 թ. փետրվարի 23-ին կատարած գրառման մեջ արտահայտելով թերհավատների կարծիքը, գրել է. «Կարսը հաղթողից կարելի է սպասել եռանդուն գործունեություն վարչական բոլոր իշխանությունների գործողություններն ուղղել այսպես կոչված խռովարարության դեմ պայքարին: Բայց, իհարկե, չէր կարելի նրա մեջ տեսնել պետական կառավարման բոլոր բնագավառների և Ռուսաստանի ժամանակակից կարգի հանրագիտարանային վերափոխիչ գիտակի: Այնուամենայնիվ, օր-օրի այդ գործը դրվեց հենց այդ հենքի վրա: Ինքը, Լորիս-Մելիքովն, իրեն բաժին ընկած պատահական դիպվածով, նրա համար անսովոր սալոնային քծնանքի ազդեցությամբ և իր գլխավոր համախոհներ պ. պ. Աբազայի ու Կախանովի դրդմամբ, երևակայում էր, որ հանրագիտարանային խնդիրը կարող է տանել և, որ դրա լուծման համար հարկավոր էր միայն ձեռք բերել անձնական հեղինակություն թեկուզ և միջոցների մեջ խտրություն չդնելով: Նոր պետը սկսեց Ս. Պետերբուրգի թերթերին քծնելով, այն կառավարությանը վարկաբեկելով, որի կազմին նա պատկանում էր և հսկողության տակ գտնվող խռովարարության մասնակիցների նկատմամբ հոգատարությամբ, որոնց դեմ նա կոչված էր պայքարելու»:

Լորիս-Մելիքովն իր գործունեության հենց սկզբից ձեռք բերեց վստահություն: Նույնիսկ հետադիմական մամուլը չհամարձակվեց ծայն բարձրացնել: Եվ զարմանալի կերպով, սկզբում տասնյակներով, իսկ հետո, հարյուրավոր նամակներ, առաջարկություններ, նախագծեր էին ստացվում Լորիս-Մելիքովի անունով: Նրան գրում էին Ռուսաստանի բոլոր կողմերից: Գրում էին հասարակական տարբեր դիրք ունեցող բոլորովին անհայտ մարդիկ: Գրում էին հասարակական անվանի գործիչներ, գրողներ, մտավորականության տարբեր շերտերի ներկայացուցիչներ:

Այդ նամակների թիվն այնքան շատ էր, որ Լորիս-Մելիքովն այլևս անկարող էր անձամբ ծանոթանալ: Այդ նպատակով նա նշանակեց երեք վստահելի անձանց, որոնք բացառապես զբաղված էին ստացված նյութերի ընթերցմամբ, դրանցում արծարծված խնդիրների դասակարգմամբ և կազմելով ընդհանուր տեղեկանք կոմսին զեկուցելու համար:

Իհարկե, այդ նամակների մեջ քիչ չէին միամիտ, երբեմն ծիծաղելի ու անմիտ առաջարկություններ: Բայց գերակշռողը խելացի ու բանիմաց առաջարկություններ ու խորհուրդներ պարունակող նամակներ էին, որոնց հեղինակները, ինչպես հայելու մեջ, արտացոլում էին Ռուսաստանի կյանքի բոլոր կողմերը և նրանցում Լորիս-Մելիքովն իր ձեռնարկումների համար հենարան էր գտնում...

«...Ձեզ կպատկանի ժամանակակից Ռուսական պատմության լավագույն էջը...»

1880 թ. փետրվարի 19-ին, մայրաքաղաքի բնակչությանն ուղված դիմումից 6 օր անց, նոր նշանակված Լորիս-Մելիքովը ստացավ «Ռուսաստանի մեծ ճակատագրին անխախտ հավատացող» ստորագրությամբ մի նամակ: Այդ նամակի հեղինակն անհայտ էր, բայց բարձրացնում էր այնպիսի հարցեր, որոնք ոչ միայն հուզում էին այն ժամանակվա ռուսական առաջավոր միտքն, այլև մեծամասամբ համահունչ էին Լորիս-Մելիքովի դատողություններին ու նպատակներին:

Կարևորելով այդ նամակի բովանդակությունը, որն այդպես էլ քչերին հայտի եղավ /այն հրապարակվեց միայն 1906 թ, մայիսին «Ռուսկայա միսլ» հանդեսում հեղափոխության ազդեցությամբ և շուտով էլ մոռացվեց/, ստորև այն բերում ենք մասնակի կրճատումներով:

«Ողորմած տեր, կոմս Միխայիլ Տարիելովիչ. դուք օժտված եք հսկայական իշխանությամբ Ռուսաստանում վերջին ժամանակներում տեղի ունեցած ցավալի ու սարսափելի դեպքերը հետաքննելու համար: Պետերբուրգի բնակիչներին ուղղված արժանապատվությամբ լցված դիմումով /մենք վաղուց ենք ետ սովորել մեզ այդպես դիմելուց/ դուք հույս եք հայտնում, որ կաջակցեն բոլոր ազնիվ մարդիկ և Աստրախանի նահանգում ու Խարկովում ոչ վաղուց ձեր գործունեությունը ծառայում է որպես երաշխիք... Թույլ տվեք նաև ինձ, ձեզ բոլորովին անծանոթի և իրեն ազնիվ մարդկանց շարքում համարող, արծագանքել ձեր կոչին և յուրաքանչյուր ռուսի հոգին ցավացնող մի քանի մտքեր արտահայտել:

Ձեր խորաթափանց հայացքից չէր կարող վրիպել, որ մի շարք քաղաքական հանցագործություններ ու դատավարություններ, որոնք ծգվում են մեզանում փոքր ընդմիջումներով վաթսունականների սկզբից, չեն կարող լինել պատանեկության տխուր հրապուրանքի գործ, այլ ունեն ուրիշ, ավելի խոր պատճառներ: Որոշ կարծատես մարդիկ բարեհոգաբար հավատում են, որ մեր հեղափոխականներին ու անարխիստներին բազմացնում են լեհերը, բանվորների միջազգային ասոցիացիան, ռուս վտարանդիները, ջհուդները, անգլիական ոսկին: Մեկ րոպե ենթադրենք, որ կա այդպիսի ազդեցություն, բայց եթե նրանք կարող են գործել այնպես ուժգին, ինչպես շատերն են մտածում, ապա ակնհայտ է, որ նրանք մեզանում գտնում են արտակարգ զգացող, ընկալող, իրենց համար նախապատրաստված հիմք: Չլիներ դա, մեզանում քաղաքական հանցագործությունները կներկայացնեին եզակի փաստեր, ամեն ինչի պատրաստ համարձակ մոլեռանդների թիվը չէր աճի այդպես արագորեն, իսկ գլխավորը՝մեր հասարակությունը նրանց գործողություններին ու քարոզչությանը չէր վերաբերվի այնպես անտարբերորեն, անկարեկցորեն, հաճախ չարախնդորեն կամ էլ որոշ չափով թաքցված համակրանքով: Անկեղծորեն ցավում է միայն հասարակ ժողովուրդը, որն էլ անընդունակ է իրեն հաշիվ տալու այն բանում, թե ինչ է այսօր մեզանում տեղի ունենում: Մեր կրթյալ շերտի հսկայական մեծամասնությունը նման է երեսապատված դիակի՝ ամեն մի չհաջողված մահափորձի ժամանակ մեռած ռուսական հասարակությունը մի րոպե թփրտում է և հետո անմիջապես նորից սուզվում է իր սովորական քնկոտության ու անգործության մեջ: Բոլորը սա նկատում են: Ասում են՝ ինքը, թագավորը ցնցվել է մոսկովյան մահափորձից հետո հասարակության մեռելայնությունից /նկատի ունի 1879 թ. նոյեմբերի 19-ին Մոսկվայում տեղի ունեցած մահափորձը - Վ. Պ./:

Ես չգիտեմ ինչպիսին է անսահմանափակ լիազորությունների իրական իմաստն, որով դուք օժտվել էք: Եթե դուք կոչված եք բացահայտել դավադիրներին և պատժել նրանց, ապա կարելի է նախապես գուշակել մարգարե չլինելով, որ լավագույն դեպքում ձեր ականավոր խելքն ու տաղանդը Ռուսաստանին չեն բերի այն օգուտի չնչին մասը, ինչին նա սպասում է: Ենթադրենք, որ ձեզ հաջողվում է /թեև դա, ներկա պայմաններում բավականաչափ կասկածելի է/ որսալ ու ոչնչացնել խռովություն հարուցող մարդկանց խմբին: Բայց, հավանաբար վաղը, հաջորդ օրը, նրանք նորից դուրս կգան հողի տակից ավելի մեծ թվով և իրենց սարսափելի նպատակներին կհետևեն ավելի մեծ մոլեռանդությամբ: Որպեսզի նրանք չծնվեն նորից ու սարսափելի չափերով չբազմանան, ինչպես այժմ, հարկավոր է նրանց ծնող ու սնող հիմքը վերացնել: Տոլեբենը կախեց շատերին, բայց հարավը չհանդարտվեց /նկատի ունի Օդեսայի գեներալ-նահանգապետին - Վ. Պ./: Այնտեղ խմորումները մահապատիժներից հետո ոչ միայն չպակասեցին, այլև դատելով ըստ եղած լուրերի, ավելի են շատացել և ընդունում են ավելի մեծ չափեր: Ահա, թե ինչու Ռուսաստանի և թագավորող դինաստիայի բարօրության և ձեր անձնական փառքի համար հատկապես ցանկալի է, որպեսզի ձեր լիազորություններն ավելի հեռուն գնան քաղաքական հանցագործությունները քննելու և պատժելու պարտականություններից: Պետերբուրգի բնակիչներին ուղղված դիմումում եղած որոշ ակնարկներ կարծես հույս են ներշնչում,որ դուք կոչված եք նույնպես պարզել մեր ներքին դրությունը և այն հանգամանքները, որոնց մեջ չարիքը ծնվել ու ամրապնդվել է: Ձեզ ընտրելը և ոչ թե մեկ ուրիշին, կարծես թե արդարացնում են այդ հույսերը, թեև վախենում ես դրանց անձնատուր լինել, քանի որ վերջին 15 տարում այնքան քիչ ենք երես առել: Պալատում պայթունից հետո /1880 թ. փետրվարի 5-ին Ձմեռային Պալատում կատարված պայթյունը - Վ.Պ./, մենք, խոստովանում ենք, սպասում էինք սովորական նոր ճնշումների /թեև, թվում է, անկարելի է այլևս կրճատել մեր իրավունքները, ամեն ինչ արդեն խլված

է/, նոր վիրավորանքների և ի վերջո գլխավոր լրտեսի նշանակման, ինչպես Շուվալովին, Վալուևին կամ էլ Տրեպովին: Բայց այս անգամ մեր կանխատեսումները, բարեբախտաբար, չիրականացան և անսահմանափակ իշխանությունը ձեր նման վարվեցողություն, կարողություն, ըմբռնողություն ունեցող անձին հանձնելը կարծես թե ցույց է տալիս, որ վերջապես կառավարությունն իսկապես ուզում է իր համար պարզել իրերի իսկական վիճակը, գտնել վարակի աղբյուրն, որը թունավորում է մեր գոյությունը:

Եթե այդպիսին է ձեր խնդիրը, կոմս, ուշադիր նայեք Ռուսաստանում քիչ թե շատ մտածող, ինչ որ բան հասկացող և ինչ որ չափով ազնիվ մարդու հոգեկան վիճակին: Նա, իսկապես, դրված է անելանելի վիճակի մեջ, չգիտե ինչպիսի Աստծո աղոթի, ինչին ապավինվի, ում հետևի: Հանգիստ մարդիկ վաղուց ամեն ինչի վրա ձեռք են թափահարել և օր-օրի ապրում են, ներքնապես առանձնանալով շրջապատող ամեն ինչից, հոգի ու սիրտ չդնելով իրենց հասարակական գործունեության մեջ: Երջանիկ է նա, ով միջոցներ ունի, նա փախչում է նրանից առաջին հնարավորության դեպքում, այնպես նրան խորապես ատելի է ստով, խաբեությամբ, ձևամոլությամբ ներծծված մեր ամբողջ հասարակական, պետական և ծառայական մթնոլորտը, որը ոչ միայն կարեկցանք չի հարուցում, այլև վստահության նշույլ: Դա բոլորին ճզմելու մթնոլորտ է, ռուս ժողովուրդը՝ նախապարից մինչև վերջին մուժիկը խեղդվում է իրավազրկության, լույսի ու մտքի մշտական ճնշման, գանձագողության, բռնության, ամենատարրական իրավունքների լկտի ու անմիտ ոտնահարման անտանելի լծի տակ... Մասսան բթամտորեն հնազանդվում է այդպիսի անհնարին իրավիճակին, փոքրամասնությանը համակել է միանգամայն հուսահատությունը, իսկ ով երիտասարդ է ու առույգ, նա անմիտ ու անտեղի հույսով մղվում է պետական հեղաշրջում առաջացնելուն և ուժով կարգը կոտրելուն ուղղված հանդուգն գործողության, որի ընթացքում կարող են անպատիժ իրականացնել չլսված գործեր: Ամբողջ մտածող Ռուսաստանում միայն կառավարությունը չի հասկանում կամ էլ ձևացնում է, թե չի հասկանում, թե ինչպիսի որջերից ու խուլ տեղերից են սկիզբ առնում իրենց ապշեցուցիչ հանդգնությամբ հրեշավոր մտադրություններն ու հանցագործությունները: Բոլորի համար, բացի կառավարությունից, այդ ամենը գաղտնիք չէ, մենք, ընդհակառակը, զարմանում ենք, ինչից է այդ ամենը, ինչն այժմ կատարվում է...:

Ինչ որ մանկամիտ և ցավալի միամտությամբ կառավարությունն ամեն մի նշանավոր քաղաքական հանցագործության դեպքում խնդրանքով դիմում է հասարակությանն օգնել արմատախիլ անելու չարիքը: Հասարակության մեծ մասն այդպիսի կոչերն ընդունում է վրդովմունքով:

Ռուսական հասարակությանը ճնշում են, նրան զրկում են բոլոր իրա-

վունքներից, նրան հանձնել են վերին ու ստորին չինովնիկների կամայականությանը, նրան արգելում են մտածել, արտահայտել իր մտքերն ու ցանկությունները, նրա համար ստեղծել են այնպիսի վիճակ, որ անհնար է շնչել և այդ մերժված, ավելի, մոռացված հասարակությանը դիմում են բարոյական աջակցության համար: Ինչպե՞ս մենք կարող ենք աջակցել և որտե՞ղ են դրա համար մեր միջոցները: Իսկ եթե մենք կարողանայինք, ապա ինչի՞ն պետք է աջակցեինք: Այն կարգերի ամրապնդմա՞նը, որի մեջ անհնար է ապրել: Եվ հասարակայնությունը դատում է այսպես՝ կառավարությունը մեզ վանել է իր գործողություններով, լեզվով, որով նա մեզ հետ խոսում է, արտահայտելով մեր նկատմամբ անվստահություն ու ատելություն: Թող ինքն էլ, ինչպես գիտե, հաղթահարի այն չարիքը, որը հակառակ մեր ցանկությունների ու խորհուրդների, ինքն է ստեղծել: Այս մտքերն ու զգացումները տարբեր կերպ ննտած են ինչ որ չափով հասկացող մարդու հոգու վրա: Իսկ կենսախինդ, բորբոքված ու չարացած մարդիկ մտածում են՝ մենք բոլորովին էլ շահագրգռված չենք աջակցել իրերի անհայտ վիճակին, թող կործանվի, մի գուցե նրա ավերակների վրա կստեղծվի այլ տանելի կարգ, բոլոր դեպքերում վատ չի լինի և չի կարող լինել:

Ազնիվ ու հասկացող մարդիկ չեն հավատում մեր բարձրագույն գործադիր իշխանության օրենսդրության ու դատարանի իմաստությանը, բարեխղճությանը և Ռուսաստանի բարօրության, անշահախնդիր նվիրվածությանը: Խոր տգիտության, ապաշնորհության և կեղծիքի կնիքն ընկած է այն ամենի վրա, ինչը դուրս է գալիս իրենց անձնական շահերով ու պալատական բանսարկություններով չափից ավելի զբաղված և ուրիշ ոչ մի բանի մասին չմտածող մեր բարձրագույն կառավարական ոլորտներից:

Կառավարական այս անարժան միջավայրում Ռուսաստանն ընկած է դրա ոտքերի մոտ անպաշտպան ու անարգված, չհամարձակվելով խնդրել գթություն և նույնիսկ չբողոքել իր տառապանքների համար: Մեր շուրթերին դրված է յոթ կնիք և այն գերեզմանի վրա, որտեղ մեզ պառկեցրել են, դրված է ծանր քար: Ռուսաստանը վերածվել է ոչխարների հոտի, որոնց խուզում են և որոնցից պարբերաբար, գաղտնի ու բացահայտ, կաշի են քերթում:

Թե ինչպես կատարվեց անցում փայլուն նախաձեռնություններից ու հույսերից դեպի իրերի ներկա վիճակը, հայտնի է բոլորին: Ամեն անգամ, երբ մշակվում էր որևէ գործնական օգտակար միջոց, դրա իրականացումը հանձնվում էր նրա չարամիտ հակառակորդների ու թշնամիների ձեռքը: Անձինք, որոնք այդ միջոցները մշակելիս դրսևորում էին տաղանդ, գիտելիքներ, կամք, հեռու էին պահվում գործից, իսկ նրանք, ովքեր կառավարության նոր նախաձեռնություններին թշնամաբար էին տրամադրված, բարձր պաշտոններ էին զբաղեցնում պետության բարձրագույն

մարմիններում: Գործել ռեֆորմների ոգով, դրանք պաշտպանել, կնշանակեր իրեն հայտարարել վնասակար ու վտանգավոր մարդ, գերագույն իշխանության հակառակորդ: Իսկ ով բացահայտ ոտնահարում էր նոր օրենքները, ծաղրում էր դրանք, ապա արժանանում էր գովասանքի, պետական ծառայության մեջ նոր աստիճանի հասնում: Աշխարհում ինչպիսի հասարակություն կարող է դիմանալ բազմաթիվ տարիների ընթացքում այսպիսի ծանր փորձության: Մերը չդիմացավ և այլասերվեց մինչև ուղն ու ծուծը, վերածվեց գարշահոտ ճահիճի, որի մեջ բազմացել է ամեն տեսակի սողուն: Նրանք, ովքեր հանդես են գալիս մեր այլանդակ կարգերը ցնցելու և կործանելու կոչերով, իրականում ավելի վատն են նրանցից, որոնք դա ստեղծել են ու պաշտպանում: Ներքևի ռուս հեղափոխականներն ու անարխիստները վերևի հեղափոխականների և անարխիստների հարազատ եղբայրներն են: Նրանք ներկայացնում են նույն մեդալի երկու կողմերը, իրերի նույն վիճակի երկու տարբեր տեսակները, բացատրում ու լրացնում են իրար: Երբ կառավարությունը ռուսական հասարակությանը մատնացույց է անում, թե ինչ են մտադրվել ու կատարում են բացահայտ անարխիստները, հասարակությունն իր մեռելային անտարբերությամբ պատասխանում է՝ միթե՞ լավն են այն կարգերը, որ նրանք ուզում են ոչնչացնել, միթե՞ դրանցում ինչ որ արժեքավոր բան կա պահպանելու համար:

Ահա, կոմս, պարզաբանումն այն բանի, ինչ որ այժմ կատարվում է մեզանում: Որպեսզի կանխվի չարիքը, հարկավոր է վերականգնել հասարակության հավատը կառավարության, նրա իմաստության, բարեխղճության նկատմամբ:

Որպեսզի մեզ վերադարձվի կայտառությունը, թող կառավարությունն առաջին հերթին վերականգնի անամոթ ու անազնիվ մարդկանց խորհրդով վերացրած այն իրավունքները, որոնք մեզ տրվել էին ներկա թագավորության օրոք: Թող վերացնի այն ամենը, որոնցով ռեֆորմներն աղավաղվել են կամ էլ մատնվել անգործության: Դա շատ քիչ կլինի և ոչ մեկին ամբողջովին չի բավարարի, բայց, այնուամենայնիվ, կապացուցի, որ գերագույն իշխանությունն իսկապես մտադիր է պատռել ճակատագրական ցանցն, որով նրան փաթաթել են և վճռել է վերադառնալ նախկին բարի ուղի: Եվ դա այնքան հեշտ է կատարել:

Բացի դրանից, թող կառավարությունը վերականգնի զեմստվոյական ժողովների ճնշված ձայնը և մամուլը պաշտպանի չինովնիկների կամայականությունից: Եթե ոչ մի կերպ չի կարելի կասեցնել մամուլի մասին օրենքների դեմ հանցագործությունները բացառապես սովորական դատարանների միջոցով, ապա թող կառավարությունը ստեղծի ամբաստանյալին սովորական երաշխիքներ տվող կոլեգիալությամբ, մեղադրյալներին արդարանալու իրավունք ընձեռնող վարչական դատարաններ: Սա կա-

ռավարությանը չի զրկի այն հրապարակումները կասեցնելու հնարավորությունից ու իրավունքից, որոնք ինչ որ պատճառով կհամարվեն անհարմար կամ էլ վտանգավոր, բայց նա հեղինակներին ու հրատարակիչներին կպաշտպանի վարչական մարմինների անտանելի կամայականությունից: Ի՞նչ է այժմ կատարվում գրաքննության վարչությունում, անհնար է պատկերացնել: Այս կամ այն մասին գրելու արգելքները թափվում են կարկուտի պես, օրինավոր կառավարության համար անվայելուչ կերպով ... Զգուշացումները գլխի վրա թափվում են ձյան նման, հրատարակությունները կասեցվում են՝ հայտնի չէ, թե ինչի համար, հաճախ այն բանի համար, երբ բացվում են ադմինիստրացիայի մութ գործերի վրա վարագույրի մի փոքրիկ անկյուն կամ էլ օրենքի հետ ամբողջովին համահունչ արտահայտված, բայց պետության և գերագույն իշխանության համար ոչ մի ընդհանրություն չունեցող և իրենց շահերը պաշտպանող որևէ նախարարի դուր չեկած օգտակար մտքերի ու դատողությունների համար:

Զեմստվոն ու նրա գործունեությունը տապալվեց, երբ նահանգային գրաքննությանն ենթարկվեց զեմստվոյական ժողովների ակտերի հրապարակումը: Մեր ռեֆորմների թշնամիների հաշվարկը ճիշտ էր՝ նրանց առավելապես խեղդեց ձայն չունենալը, քան ուրիշ այլ բան. դա իջեցրեց մեր մամուլի մակարդակը, նրանից մեկուսացրեց օրինավոր ու լուրջ մարդկանց մեծ մասին և այն հանձնեց ամեն կարգի սպեկուլյանտների, խարդախների և սրիկաների ձեռքը: Գրաքննության կամայականության ճնշման շնորհիվ վնասակար ուղղությունների դեմ պայքարը դարձավ անհնարին, նրանք էլ անարգել զարգացան մինչև ներկայիս չափերով: Քանի ազատ ու լուրջ քննարկումը մեզանում հնարավոր չի դառնա և օրենքով ու դատարանով չի պաշտպանվի վարչական իշխանությունների ոտնձգություններից, քանի դեռ շարունակվում է մտքերի տարընթացությունը, մտավոր ու բարոյական անարխիան կշարունակվի ու կաճի: Ներկա գրաքննության կարգի պայմաններում մեզանում ազնիվ ու հասկացող մարդկանց անհնար է համաձայնության գալ, համախմբել իրենց շարքերը չարիքի դեմ պայքարելու համար: Զեմստվոյի գործունեությունը նրան շրջապատած գաղտնի շղարշի տակ չի կարող գալ ընդհանուր եզրակացության, որը մատնացույց են անում կյանքն ու պրակտիկան: Իսկ զեմստվոյական գործունեությունը պետական ծառայության հետ միասին պետք է լինի պրակտիկ քաղաքական փորձառության ու իմաստության դպրոց, պետական մարդկանց բնական օջախ: Զեմստվոն ու մամուլը դատապարտելով լռության, բարեփոխումների թշնամիները կարողացան գերագույն իշխանությունն անարգել խճճել ստի ու խաբեության ցանցի մեջ և նրան անջատել ժողովրդից: Իրենց նպատակին նրանք, դժբախտաբար, հասան ամբողջովին և հիմա ինչ արվում է բացախոսության ու հրապարակայնության նկատմամբ վշտալի հաղթանակի ճակատագրա-

կան հետևանքն է: Դրա հետ միաժամանակ պարտվել են նաև թագավորի ու ռուսական հասարակության վերափոխիչ ձգտումները:

Վերջապես, որպեսզի հաղթահարվի չարիքը, հարկավոր է պետական կառավարման մեջ չինովնիկների հետ հավասար մտցնել տեղական և հասարակական շահերի ներկայացուցիչներին, ապահովելով պետական մեխանիզմի կազմում ժողովրդի միջից կենդանի ուժերի ու տաղանդների մշտական և ճշմարիտ հոսք:

Միայն ռուսական հասարակության հարկադիր համրությամբ ապահովագրված բացահայտ չարամտությունն ու տգիտությունը կարող են ապացուցել, որ Ռուսաստանում անիմաստ է ներկայացուցչությունն առանց գերագույն իշխանության ու պետության թուլացման: Միայն մեզանում ներկայացուցչությունը կարող է բարձրագույն և ստորին չինովնիկների կողմից թուլացրած իշխանությունը հաստատել ու ամրապնդել: Ինքնակալությանը խճճում ու սահմանափակում են պալատական բարձրագույն աստիճանավորները, որոնք իրենց ներկայացնում են արիստոկրատիա՝ դրա հետ ոչ մի ընդհանրություն չունենալով...

Ահա, կոմս, ինչ է հարկավոր ռուսական կյանքի ճշմարիտ հոսանքի վերականգնման համար, ազնիվ ու մտածող մարդկանց հանգստացնելու և ոգևորելու համար, վերից վար անարխիստներին ու դավադիրներին արմատախիլ անելու համար: Մնացածն ինքնիրեն կգա իրերի բնական ընթացքով: Երբ կքանդվի ստի ու խաբեության ցանցը, որով մենք այժմ կապկպվել ենք, կգտնվեն և մարդիկ և միջոցներ երկար տարիներ Ռուսաստանին հասցված խոր վերքերը բուժելու համար: Մեզ ամենից առաջ և ավելի շատ հարկավոր է ազատվել վերևից եկող անարխիայից ու դավադրություններից, որոնք առավելապես վտանգավոր են, քանի որ գործում են գերագույն իշխանության անունից և ծածկվում են նրա դրոշով: Վաղուց ժամանակ է վերջ տալ անարժան ու կործանարար խաբեությանն, որը Ռուսաստանի և թագավորող դինաստիայի ճակատագիրը դրել է խաղաքարտի վրա:

Ձեզ, կոմս, սպասում է այս ոչ հեշտ սխրանքը և, եթե դուք դա կատարեք, ձեզ կպատկանի ժամանակակից ռուսական պատմության լավագույն էջը և ապագա սերունդների հավերժ ու շնորհակալ հիշողության մեջ մնացած ռուս մեծագույն գործիչների անունների կողքին կգրվի ձեր անունը:

Խորին հարգանքով պատիվ ունեմ լինել ձերդ
պայծառափայլության ծառան:
Ռուսաստանի մեծ ճակատագրի նկատմամբ հաստատ հավատացող:
Մոսկվա, 19 փետրվարի 1880 թվական»:

Ո՞վ էր այսօրվա պատկերացումներով այս շատ հարցադրումներով պարզունակ թվացող նամակի հեղինակը: Բայց այդ նամակը 1880 թ.



Ներսես Աշտարակեցի



Մ.Տ. Լորիս-Մելիքով



Կարապետ Եզյան



Մկրտիչ Սաֆասարյան



Աբգար Հովհաննիսյան



Սպանդար Սպանդարյան

փետրվարի պայմաններում անչափ համարձակ մտքեր էր առաջ քաշում և իր առաջարկություններով շատ հեռու էր գնում: Նամակը գրավեց Լորիս-Մելիքովի ուշադրությունը: Նրանում արծարծված շատ հարցեր վաղուց մտահոգում էին կոմսին: Հարկավոր էր պարզել, գտնել նամակի հեղինակին և նրա հետ հանգամանորեն քննարկել բարձրացված հարցերը, դրանց լուծման միջոցները:

Հաջողվեց պարզել, որ նամակի հեղինակը նշանավոր հասարակական գործիչ, լիբերալ-առաջադիմական հայացքներ ունեցող Կոնստանտին Դմիտրևիչ Կավելինն էր: Անչափ մեծ եղավ Կավելինի զարմանքը, երբ ստացավ Լորիս-Մելիքովի մոտ ճաշի հրավերը: Լորիս-Մելիքովը հարկ էր համարել անձամբ ծանոթանալ Կավելինի հետ: Առաջին հանդիպմանը հաջորդեցին մյուսները: Լորիս-Մելիքովն ու Կավելինը երկար զրույցներ ունեցան, որոնք, իհարկե, անհետևանք չմնացին: Դրանցում շոշափված հարցերի մեծ մասը տեղ գտավ Լորիս-Մելիքովի այսպես կոչված «սահմանադրության» մեջ: Բայց, դժբախտաբար, դրանց իրագործումն ընդհատվեց 1881 թ. մարտի 1-ի կրակոցով...

Նշանավոր հասարակական գործչի նամակն ուշագրավ էր նրանով, որ Լորիս-Մելիքովի հետ էին կապվում Ռուսաստանում բարեփոխումների իրականացման հույսերը: Նկատենք, որ դիմում էին ոչ թե ցարին ու նրա միջավայրում գտնվող ազդեցիկ գործիչներին, այլ Լորիս-Մելիքովին, որն, ըստ էության, մինչ այդ քիչ էր հայտնի ռուսական հասարակայնության լայն շրջանակներին: Բայց դա չխանգարեց խորաթափանց ու առաջադեմ գործիչներին իսկույն նկատել Լորիս-Մելիքովին և նրան համարել իրենց բարի ցանկությունները վճռականորեն կենսագործողի...

«...Արդյո՞ք Լորիսն իրեն լավ մարդկանցով է շրջապատել...»

Ռուս մեծ գրող Ֆ. Դոստոևսկին ևս հույսեր էր կապում Լորիս-Մելիքովի հետ: Հոգեբան գրողին ամենից առաջ հետաքրքրում էր Լորիս-Մելիքովի անձը և չէր թաքցնում իր համակրանքը նրա նկատմամբ:

Ա. Ս. Սուվարինի վկայությամբ Դոստոևսկին չհիացավ Լորիս-Մելիքովի դեմ կազմակերպված մահափորձով: «Կոմս Լորիս-Մելիքովի դեմ մահափորձը, - հիշում է Սուվարինը, - Դոստոևսկուն շփոթեցրեց: Նա վախենում էր ռեակցիայից: Աստված պահի, ասում էր Դոստոևսկին, եթե շուռ տան դեպի հին ճանապարհը»:

Դոստոևսկին Սուվարինից հետաքրքրվում էր. «..ասացեք ինձ, արդյո՞ք Լորիս-Մելիքովն իրեն լավ մարդկանցով է շրջապատել, լավ մարդկա՞նց է նա ուղարկում պրովինցիաներ: Չէ՞ որ դա անչափ կարևոր է: Արդյո՞ք նա

գիտե այս ամենը, թե ինչու է տեղի ունենում, հաստատապես նա գիտե՞ պատճառները: Չէ՞ որ մեզանում բոլորին ուզում են չարագործներ տեսնել: Ես նրան ցանկանում եմ ամենայն բարիք, ամենայն հաջողություն»:

Բայց, այնուամենայնիվ, որպես ռեալիստ Դոստոևսկին քիչ էր հավատում, որ Ռուսաստանում գոյություն ունեցող պայմաններում Լորիս-Մելիքովի «սրտի դիկտատուրան» հաջողության կհասնի: Իր օրագրում Դոստոևսկին գրում էր, որ «ապագայում ահեղորեն կանգնած են չլուծվող խնդիրները»:

Դոստոևսկին կարևորում էր հասարակ մարդկանց, առաջին հերթին ռուս գյուղացիների կարծիքը լսելուն: «Այո, - գրում էր նա «Գրողի օրագրում», - մեր ժողովրդին հարկավոր է վստահել, քանի որ նա դրան արժանի է: Հրապիրեք գյուղացիներին և նրանց հարցրեք իրենց կարիքների մասին, այն մասին, թե ինչ է նրանց հարկավոր և նրանք կասեն ձեզ ճշմարտությունը և մենք բոլորս առաջին անգամ, կլսենք իսկական ճշմարտությունը»:

Ցարը մերժում է Լորիս-Մելիքովի միջնորդությունը

Լորիս-Մելիքովը ցարի հրամանագրի համաձայն զբաղված էր գերագույն կարգադրիչ հանձնաժողովի անդամների ընտրությամբ և միաժամանակ ղեկավարում էր Ձմեռային պալատում կազմակերպված պայթունի կապակցությամբ սկսված հետաքննությունը:

1880 թ. փետրվարի 20-ին, գլխավոր պետ նշանակվելու 8-րդ օրը, Լորիս-Մելիքովի դեմ մահափորձ կատարվեց: 19-ամյա անհայտ զբաղմունքի տեր Իպոլիտ Մլոդեցկին, օրը ցերեկով, վազքով հասավ իր տան շքամուտք մտնող Լորիս-Մելիքովին ու կրակեց նրա վրա: Բայց մարտական գեներալն, որը մասնակցել էր 180 ճակատամարտի, բազմիցս նայել էր մահվան աչքերին, գիտեր իրեն տիրապետել, նույնիսկ անհնարին թվացող իրավիճակներում, ուժգին թափով մի կողմ նետվեց, հասցնելով բռունցքով հարվածել կրակողի դեմքին: Վրա հասած թիկնապահ կազակները ոլորեցին Մլոդեցկու թևերը և անմիջապես տարան Պետրոպավլովյան ամրոց:

Տուն մտնելով, Լորիս-Մելիքովը հանգստացրեց կնոջն ու աղջիկներին: Տեղեկանալով մահափորձի մասին, Լորիս-Մելիքովին այցելեցին թագաժառանգը, մեծ իշխանները, նախարարները, նույնիսկ կանայք: Բոլորը զարմացել էին Լորիս-Մելիքովին տեսնելով հանգիստ վիճակում, առանց շփոթվածության ու վախի: Անսպասելի հյուրերի հետաքրքրասիրությունը բավարարելուց և նրանց ցավակցությունն ընդունելուց հետո Լորիս-Մելիքովը շտապեց Ձմեռային պալատ, ցարին անձամբ զեկուցելու կատարվածի մասին: Երբ Ալեքսանդր Երկրորդը լսեց կոմսի հաղորդածը, հարցրեց.

- Պարզեցիք, թե ո՞վ է չարագործը:

- Հիվանդ երևակայության մեկը, որին հարկավոր է Սիբիր ուղարկել, - ասաց Լորիս-Մելիքովը:

- Ոչ, ոչ, կտրուկ առարկեց ցարը, - միայն մահապատիժ:

Ալեքսանդր Երկրորդի վճիռը Լորիս-Մելիքովի սրտով չէր և նա անկեղծորեն ցարին ասաց, որ չէր ցանկանա նոր պաշտոնը սկսել մահապատժով: Սակայն ցարը լսել չուզեց: Հրամայեց արագորեն ավարտել հետաքննությունը: Երկու օր անց, 1880 թ. փետրվարի 22-ին հավաքված բազմության առջև Սեմյոնովյան հրապարակում Մլոդեցկին կախաղան հանվեց:

Մլոդեցկու մահապատժին ներկա էր նաև Դոստոևսկին: Դոստոևսկու մտերմիներից մեկը, Ե. Յունգեի աղջիկը նամակներից մեկում պատմում է, որ Մլոդեցկու մահապատժից անմիջապես հետո եղել է Դոստոևսկու մոտ: «Ես,- գրել է նա, - Դոստոևսկուն գտա ինչ որ բանից խանգարված, հիվանդ, սարսափելի գունատված վիճակում: Նրա վրա ուժեղ ազդեցություն էր թողել /որպես հանդիսատես/ փետրվարի 20-ի հանցագործի մահապատիժը»:

Ռուս նշանավոր դրամատուրգ, «Նովոյե վրեմյա» թերթի խմբագիր Ալեքսեյ Սերգևիչ Սուվարինը /1834-1912/ իր օրագրում գրում է, որ Լորիս-Մելիքովի դեմ մահափորձի օրը նա եղել է Դոստոևսկու մոտ: Դեռ չիմանալով մահափորձի մասին, նրանք քննարկել են քաղաքական հանցագործությունների թեման: Դոստոևսկին նկատել է դրանց նկատմամբ հասարակայնության տարօրինակ վերաբերմունքը:

- Պատկերացրեք, - ասել է նա, - որ մենք ձեզ հետ միասին կանգնած ենք Դացիարոյի խանութի պատուհանների մոտ և նկարներն ենք նայում: Մեր կողքին կանգնած է մի մարդ, որը ձևացնում է, թե նույնպես նայում է: Նա ինչ որ բանի սպասում է և անընդհատ շուրջն է նայում: Հանկարծ նրան է մոտենում մեկ ուրիշը և ասում. «Հիմա Ձմեռային պալատը կպայթեցվի: Ես մեքենան լարել եմ»: Մենք դա լսում ենք: Պատկերացրեք ձեզ, որ մենք դա լսում ենք, որ այդ մարդիկ այնպես են գրգռված, որ չեն համապատասխանեցնում իրենց վիճակն ու իրենց ծայրը: Ինչպե՞ս ձեզ հետ միասին կվարվենք: Կգնայի՞նք Ձմեռային պալատ զգուշացնելու պայթեցման մասին կամ կդիմե՞նք ոստիկանություն, որպեսզի ձերբակալեին այդ մարդկանց: Դուք կգնայի՞ք:

- Ոչ, չէի գնա:

- Ես նույնպես չէի գնա: Ինչո՞ւ: Չէ՞ որ դա սարսափելի է: Դա հանցագործություն է: Մենք գուցե և կարողանայինք զգուշացնել: Ես ահա, այդ մասին, մինչև, ձեր գալը, մտածում էի: Ես վերցրի բոլոր պատճառներն, որոնք կստիպեին ինձ անել դա: Պատճառները հիմնավոր են և, հետո կշռադատեցի պատճառները, որոնք ինձ թույլ չէին տա դա անել: Այդ պատճառներն ուղղակի ոչնչություն են: Ուղղակի՝ մատնիչի անուն հանելու վախ:

Ես պատկերացրի ինձ, ինչպես եմ գնալու, ինչպես եմ իմ վրա նայելու, ինչպես են սկսում ինձ հարցնել, կատարել առերեսում, թերևս առաջարկեն պարգև կամ էլ կասկածեն հանցակցության մեջ: Միթե՞ դա իմ գործն է: Դա ոստիկանության գործն է: Նա դրա համար է նշանակված, դրա համար է վարձատրվում: Ինձ լիբերալները չէին ների: Նրանք կտանջեին ինձ, կհասցնեին մինչև հուսահատություն: Միթե՞ դա նորմալ է: Մեզանում ամեն ինչ անորմալ է, դրանից էլ այս ամենը տեղի է ունենում և ոչ ոք չգիտե, ինչպես վարվի ոչ միայն ամենադժվար իրավիճակներում, այլև ամենահասարակ դեպքերում: Ես կգրեի այդ մասին: Ես կկարողանայի ասել շատ լավ բաներ և վատը, թե հասարակության և, թե կառավության համար, իսկ դա չի կարելի: Մեզանում ամենակարևորի մասին չի կարելի գրել:

«Նա, - այնուհետև պատմում է Սուվարինը, - երկար խոսեց այդ թեմայով և խոսում էր ոգևորված: Այստեղ էլ նա ասաց, կգրի վեպ, որտեղ հերոսը կլինի Ալյոշա Կարամազովը: Նա ուզում էր նրան անցկացնել վանքի միջով ու դարձնել հեղափոխական: Նա կկատարեր քաղաքական հանցագործություն: Նրան մահապատժի կենթարկեին: Նա կորոներ ճշմարտությունը և այդ որոնումների մեջ կդառնար հեղափոխական»:

Լորիս-Մելիքովը գիտակցում էր, որ Մլոդեցկու նկատմամբ մահապատիժն անչափ վատ կընդուներ հասարակությունը, բայց նրա բոլոր փորձերը կասեցնել այն, մատնվեցին անհաջողության: Ցարն ուղղակի անտեսեց և չզիջեց: Նա չկարողացավ հասկանալ Լորիս-Մելիքովին, որն ասում էր, թե այդ մահապատիժը կառաջացնի բռնությունների ավելի ուժեղ ալիք:

- Հենց ձեզ էլ, Միխայիլ Տարիելովիչ, նշանակել եմ, որ այդ ալիքը չբարձրանա, - ասել էր Ալեսանդր Երկրորդը և փակել խոսակցությունը...

Մլոդեցկու մահապատժից մի քանի օր անց, Սուվարինը հանդիպեց Լորիս-Մելիքովին և նրան պատմեց Դոստոևսկու հետ իր խոսակցության մասին: Դա մատնություն չէր: Լորիս-Մելիքովը վաղուց էր ճանաչում Սուվարինին, վստահում էր նրան և հաճախ էին մտքեր փոխանակում: Այս անգամ էլ նրանք կատարվածի շուրջ մտքեր փոխանակեցին և Դոստոևսկու վերաբերմունքի մասին խոսելով, Սուվարինը նաև իր կարծիքը հայտնեց.

- Այդպես են մտածում Ռուսաստանի բոլոր օրինավոր մարդիկ...

Իսկ Լորիս-Մելիքովն անձնական փորձից գիտեր, թե մատնությունն ինչպիսի զզվելի ու զազրելի արարք է:

«Խորամանկ աստիճան...»

Նոր պաշտոնում, հենց առաջին օրից, Լորիս-Մելիքովը հիասթափության պահեր էր ապրում: Նախ, շատերն, որոնց նա մտերիմ էր համարում, սկսեցին Լորիս-Մելիքովի նկատմամբ այլ կերպ վարվել: Նախանձը, չա-

րությունը շատերին հանգիստ չէր տալիս և ամեն կերպ ձգտում էին խանգարել գլխավոր պետին:

Լորիս-Մելիքովը համոզված էր, որ սոցիալիստներին բռնարարքներով ու հետապնդումներով անհնար է լռեցնել: Բոլոր հեղափոխականներն էլ ռոմանտիկ, երազող երիտասարդներ են և հանուն իրենց նպատակի կյանքն էլ չեն խնայի: Ուստի, գտնում էր Լորիս-Մելիքովը, սոցիալիստներին պետք էր զրկել հանդես գալու հնարավորությունից: Դրա համար նա տեսնում էր մեկ միջոց՝ բացահայտել պատճառները: Եվ նա բարձրաձայն խոսում էր այն մասին, թե ինչու ռեֆորմի շնորհիվ ազատագրված գյուղացին շարունակաբար աղքատանում էր: Հարկավոր է, ընդգծում էր նա, մտածել լջորեն և որոշել, թե ինչ ուղղությամբ շարունակել ռեֆորմները:

Եվ բնական էր, որ Լորիս-Մելիքովի հարցադրումները պետք է շոշափեին ցարական ընտանիքին մոտ կանգնած վերնախավի, պետական բարձրաստիճան չինովնիկների անձնական շահերը:

Լորիս-Մելիքովն իր քաղաքական համոզմունքներով չափավոր, աստիճանաբար շարժվելու կողմնակից էր: Նա չէր մտածում պետական կարգում ինչ որ արմատական հեղաշրջումներ կատարելու մասին: Դրանք նա կործանարար էր համարում անպատրաստ հասարակությունների համար: Բայց և միաժամանակ նա հաստատապես հավատում էր մարդկության առաջընթացին Ռուսաստանի միանալու անհրաժեշտությանը: Նա հաստատ կանգնած էր այն դիրքերում, որ կառավարությունը պետք է խրախուսի հասարակության աստիճանական զարգացումը և ղեկավարի նրան այդ ուղղությամբ:

Շատերը կարծում էին, թե Լորիս-Մելիքովի գործունեությունը կսահմանափակվի Ձմեռային պալատում պայթյունի հետաքննությամբ: Իսկ Լորիս-Մելիքովը հասավ նրան, որ Դրենտելնին ազատեց ժանդարմերիայի շեֆի պաշտոնից: Լորիս-Մելիքովն ուզում էր այստեղ նշանակել օրինավոր մարդու: Չհաջողվեց: Թագաժառանգի պնդմամբ նշանակվեց գեներալ Չերևինը, որը միայն ծիերից էր բան հասկանում: 3-րդ բաժանմունքի պետ դարձավ գնդապետ Բարանովը, նույնպես թագաժառանգի թելադրանքով: Այս Բարանովը կարողացավ կարճ ժամանակի ընթացքում ձեռք բերել Կ. Պոբեդոնոսցևի մտերմությունն ու վստահությունը:

Բայց Լորիս-Մելիքովին հաջողվեց ստանալ 3-րդ բաժանմունքն իրեն ենթարկելու մասին ցարի հրամանը:

Առաջադեմ և լիբերալ մտավորականությունը չէր ընդունում ժողովրդական լուսավորության նախարար և սրբազան սինոդի օբեր-դատախազ կոմս Դմիտրի Տոլստոյին, որը ձախողեց 60-ական թվականների ռեֆորմների իրականացումը: Տոլստոյը չէր մոռացել իր մտերիմ ժերվեի ազատման պատմությունը և չէր ներում Լորիս-Մելիքովին: Նա բացահայտ հայտնեց իր դժգոհությունը Լորիս-Մելիքովի նոր նշանակումից:

Լորիս-Մելիքովը հասկանում էր, որ Տոլստոյին թողնելով ժողովրդական լուսավորության նախարարի պոստում, չի կարողանա իր կողմը գրավել հասարակական կարծիքը, և դրեց Տոլստոյին ազատելու հարցը: Կար նաև մեկ այլ կարևոր պատճառ: Միխայիլ Տարիելովիչը Ռուսաստանի հասարակական կյանքի զարգացումը, մարդկային քաղաքակրթությանը միանալը սերտորեն կապում էր ժողովրդական կրթության լայն տարածման, գիտության զարգացման հետ: Կոմսն այն կարծիքին էր, որ հացից հետո պետության ու ժողովրդի համար ամենից կարևորը դպրոցն է: Սրանից էլ ելնելով նա գտնում էր, որ Դ. Տոլստոյի նման լուսավորության հետադեմ նախարարը հայրենիքին հասցնում է հսկայական վնաս և նրա այդ պաշտոնում մնալը անհարիր է Ռուսաստանի ժողովրդական կրթության շահերին:

Չեռք բերելով թագաժառանգի համաձայնությունը, Լորիս-Մելիքովը հասավ Տոլստոյի ազատմանը: Լուսավորության նախարարի պաշտոնից Տոլստոյին հեռացնելը ոգևորությամբ ընդունեց Ռուսաստանի առաջադիմական, դեմոկրատական հասարակայնությունը: Արտահայտելով բոլորի վերաբերմունքը, ռուս մեծ գրող Իվան Սերգեևիչ Տուրգենևը 1880 թ. ապրիլի 21-ին, Տոլստոյի հրաժարականի հաջորդ օրը, գրեց.

"Молодец Лорис- Меликов! Правы армяне
Один Тифлис-
Один Лорис,
Один Терек-
Один Мелек!"

(«Ապրի Լորիս-Մելիքովը. ճիշտ են հայերը.
Մեկ Թիֆլիս
Մեկ Լորիս,
Մեկ Թերեք
Մեկ Մելեք»):

Ալեքսանդր Երկրորդը Լորիս-Մելիքովին առաջարկեց ժողովրդական լուսավորության նախարարի համար տալ թեկնածու:

- Ես ոչ մեկի չեմ ճանաչում, - պատասխանեց Միխայիլ Տարիելովիչը:

Լսելով Լորիս-Մելիքովին, Ալեքսանդր Երկրորդը նրան առաջարկեց ժողովրդական լուսավորության նախարարի համար ընտրություն կատարել երկու թեկնածուներից: Նրանցից մեկը հանրային գրադարանի տնօրեն, ժողովրդական լուսավորության նախարարի տեղակալ Իվան Դավիդովիչ Դելյանովն էր, մյուսը՝ Դորպատի ուսումնական օկրուգի հոգաբարձու Անդրեյ Ալեքսանդրովիչ Սաբուրովը:

Լորիս-Մելիքովը Դելյանովին ճանաչում էր վաղուց, դեռևս Լազարյան ճեմարանից: Իսկ այժմ, երբ աշխատում էր Տոլստոյի հետ միասին, հայտ-

նի էր դարձել իր ծայրահեղ աջ դիրքորոշմամբ և, նույնիսկ, ավելի հետադիմական էր, քան Տոլստոյը: Ուստի, համոզված էր Լորիս-Մելիքովը, որ Դելյանովին նախարար նշանակելով ոչինչ չէր փոխվի:

Իհարկե, այս մասին Լորիս-Մելիքովը չէր կարող ասել Ալեքսանդր Երկրորդին և իր տեսակետը հայտնեց հետևյալ կերպ:

- Ձերդ մեծություն, ես հայ եմ, եթե Իվան Դավիդովիչին, որը ծանրակշիռ ծառայություններ ունեցող է, նշանակենք, ապա կասեն, որ կառավարությունը հայկական է և ինձ հետո կմեղադրեն կառավարությունը հայերով լցնելու մեջ:

- Ես, - ասաց ցարը, - գիտեի, որ դու այդ կասես, դե ինչ, Սաբուրո՞վը:

- Ես նրան չեմ ճանաչում, - պատասխանեց Լորիս-Մելիքովը:

Ալեքսանդր Երկրորդը կանգնեց Սաբուրովի թեկնածության վրա:

Պետերբուրգ գալու առաջին օրերից սկսած, Դելյանովը հավատարիմ մնալով Դ. Տոլստոյին, սկսեց բամբասել Լորիս-Մելիքովին, նրա մասին տարածելով սուտ լուրեր: Նա այնպիսի ատելությամբ էր լցված իր հայրենակցի նկատմամբ, որ առանձնակի հաճույքով պատմում էր, թե Լորիս-Մելիքովին ճեմարանից վտարել են վատ վարքի համար: Դելյանովը նույնիսկ չէր խորշում և պաշտոնական միջավայրում հաճախ ոչ միայն անհարգալից էր խոսում Լորիս-Մելիքովի հասցեին, այլև նրան անվանում էր «խորամանկ արմյաշկա»:

Լորիս-Մելիքովի նկատմամբ Ի. Դելյանովի վերաբերմունքի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար արժե այստեղ հիշատակել Պետական խորհրդի քարտուղար Ե. Ա. Պերետցի օրագրից երկու մեջբերում: 1880 թ. հոկտեմբերի 16-ին նա գրել է. «Ի. Դ. Դելյանովն, որին այսօր այցելեցի, ափերից դուրս էր գալիս Լորիս-Մելիքովի անունը լսելիս: Նա նրան անվանում էր միայն համբավ որոնող, ֆոկուսնիկ ու սրիկա: Դելյանովի խոսքերով «Լորիսին նվիրված ու աջակցող մարդիկ հարբեցող ամբոխ է, որոնք, չեն հասկանում, որ նա Ռուսաստանին անդունդ է տանում:

Իվան Դավիդովիչի այսպիսի կարծիքը բացատրվում էր նրա ուլտրապահպանողական համոզմունքներով, նաև Լորիսի նկատմամբ վրդովմունքով Տոլստոյի անկման համար, որին Դելյանովն անկեղծորեն նվիրված է»:

1881 թ. հունվարի 5-ին Ե. Պերետցը նշելով, որ Լորիսի դեմ բարձր շրջանակներում կա մեծ ընդդիմություն, ընդգծում է, «որ առանձնապես կատաղի գոռգոռում են Տիմաշևը, Դելյանովն ու Պոբեդոնոսցևը, որոնք Լորիս-Մելիքովին մեղադրում են, որ նա տարվելով իր համբավը տարածելով, ամբողջապես ձեռքից բաց է թողել մամուլը, որը ոչ միայն ազատ կերպով դատողություններ է անում, այլև անպատկառ ու կտրուկ գրում է ամեն ինչի և բոլորի մասին»:

Իհարկե, այդ ամենի մասին տեղյակ էր Լորիս-Մելիքովը, բայց արտաքուստ չէր արտահայտվում, սակայն մտերիմների մոտ դժգոհելով Դելյանովի վարքագծից, նրա հասցեին ասում էր միայն՝ «սողացող անպատկառություն»:

«Ձեր ինչի՞ն է պետք գրասնիչը...»

Իր մտահղացումներն իրականացնելու նպատակով Լորիս-Մելիքովը ձգտում էր ոչ միայն շահել հասարակական կարծիքն, այլև նրա աջակցությունը: Նա զգում էր, գիտեր այդ կարծիքի ուժը, որի օգնությամբ կարող էր հասնել իր ցանկության կատարմանը: Լորիս-Մելիքովին պարզ էր, թե հասարակական կարծիքն ամենից առաջ ինչից էր դժգոհ: Իհարկե, գրաքննության խստացումից: Այս մասին նրան հաճախ էին բողոքում առաջատար թերթերի խմբագիրները, որոնք էլ մեծապես նպաստում էին հասարակական կարծիքի ձևավորմանը:

Խմբագիրները կոմսին հայտնել էին գրաքննության վերաբերյալ զավեշտական, բայց խայտառակ փաստեր: Այսպես, օրինակ, Աստրախանում գրաքննիչն արգել էր տեղական թերթերին արտատպել լուրեր ու հոդվածներ մայրաքաղաքային թերթերից այն պատճառաբանությամբ, որ դրանց իրավունք ունեին ծանոթանալ միայն նրանք, ովքեր բաժանորդագրված են Պետերբուրգի և Մոսկվայի թերթերին: Սմոլենսկում տեղական գրաքննիչը թույլ էր տալիս տպագրել միայն հոդվածների վերնագրերը, դրանց տեքստի բովանդակությունը թողնելով ընթերցողի երևակայությանը և այլն:

Այս և բազմաթիվ ուրիշ խայտառակ փաստերը շարունակում էին տեղի ունենալ, քանի որ մամուլի գլխավոր վարչությունը խստորեն հետևում էր կարգ ու կանոնին: Ահա, թե ինչու Տոլստոյին ազատելուց հետո Լորիս-Մելիքովը հասավ նրան, որ հեռացրեց բոլորի համար ատելի դարձած մամուլի գլխավոր վարչության պետին: Այս պաշտոնում նա 1880 թ. ապրիլին առաջ քաշեց իր հին զինվորական ընկերոջ՝ Ալեքսանդր Ագեևիչ Աբազայի եղբորը: Մայրաքաղաքի և մյուս վայրերի թերթերը սկսեցին ազատ շունչ քաշել: Գրաքննության մեղմացումն արդեն իրողություն էր:

Ն. Աբազան /1837-1904/ եղել էր Խերսոնի նահանգապետ, աչքի էր ընկնում լիբերալ հայացքներով: Նրա նշանակումը լիբերալ մամուլը գնահատեց դրականորեն:

Զրուցելով Աբազայի հետ նոր նշանակման մասին, Լորիս-Մելիքովը հատկապես ընդգծեց, որ նոր պաշտոնում սենատոր Աբազան պետք է մշտապես հոգ տանի, որպեսզի մամուլը հնարավորություն ունենա առանց քաշվելու արտահայտել իր վերաբերմունքը պետական գործերի նկատմամբ, տպագիր խոսքին տա զարգացման հնարավորություն, հասնել ճշմարտության բացահայտմանը:

Աբազան իր կարճատև գործունեությամբ ոչ միայն արդարացրեց Լորիս-Մելիքովի հույսերն, այլև իրեն պատիվ բերող գործերով վաստակեց բացառիկ հարգանք:

Իբրև ասվածի ապացույց շատ փաստերից հիշենք մեկը, որը կապված է Դոստոևսկու հետ: 1880 թ. ամռանը մեծ գրողը մտադրվել էր վերսկսել «Գրողի օրագրի» հրապարակումը: Սակայն Դոստոևսկուն առավելապես անհանգստացնում էր գրաքննության կամայականությունը: Գործող օրենքի համաձայն «Գրողի օրագիրը» պետք է տպագրվեր գրաքննության հսկողությամբ և մահից մի քանի օր առաջ Դոստոևսկին անձամբ եղավ մամուլի գլխավոր վարչությունում և խնդրեց փոխել գրաքննիչին:

- Ֆեոդոր Միխայլովիչ, ձեր ինչի՞ն է պետք գրաքննիչը, - ասաց նրան Ն. Աբազան:

- Ոչ... գիտեք, այդպես լավ է ու հանգիստ, - պատասխանեց Դոստոևսկին:

- Դե, եթե կուզեք, ես կկարդամ, - առաջարկեց Աբազան:

Դոստոևսկին համաձայնվեց, իսկ Ն. Աբազան հաջորդ օրն անձամբ գրողին հանձնեց «Օրագրի» սրբագրությունը:

1881 թ. հունվարի 27-ին արդեն ծանր հիվանդ Դոստոևսկին հնարավորություն ունեցավ կատարել վերջին շտկումները և հանգիստ խղճով տպագրության հանձնեց «Օրագիրն» առանց գրաքննության միջամտությունների: «Օրագրիրը» լույս տեսավ գրողի մահից հետո:

Լորիս-Մելիքովն իր քաղաքականությամբ հասավ նրան, որ նշանակալիորեն թուլացրեց գրաքննության ճնշումը: Մամուլն, իսկապես սկսեց թեթև շնչել: Ավելին, այդ ժամանակաշրջանում հիմնվեցին բազմաթիվ նոր թերթեր, որոնք ունեին լիբերալ կողմնորոշում և արտահայտում էին սահմանադրական միտումներ: Այդ թերթերն էին "Порядок" (խմբագիր Մ. Մ. Ստասյուլևիչ), "Страна" (խմբագիր Յա. Պ. Պոլոնսկի), "Земство" (խմբագիրներ Վ. Յու. Սկալոն և Ա. Ի. Կոշելև) և սլավոնաֆիլական "Русь"-ը (խմբագիր Ի. Ս. Ակսակով): Այդ ժամանակ էլ սկսեց լույս տեսնել Ս. Ա. Յուրևի խմբագրությամբ "Рукская мисль" ամսագիրը, որը իր հայացքներով մոտ էր կանգնած սլավոնաֆիլներին:

Վերոհիշյալ թերթերն ու ամսագրերը մյուս առաջադիմական-լիբերալ հրատարակությունների հետ միասին կարևոր դեր խաղացին Լորիս-Մելիքովի ծրագիրը պաշտպանելու, նրան աջակցելու գործում:

Իհարկե, մամուլին ազատություն տալը հեշտությամբ չէր կատարվում: Անչափ մեծ էր դիմադրությունը: Լորիս-Մելիքովի դեմ էին միավորվել բոլոր հետադիմական ուժերը Կ. Պոբեդոնոսցևի գլխավորությամբ: Այդ մասին է վկայում 1880 թ. հոկտեմբերի 31-ին թագաժառանգ Ալեքսանդրին Կ. Պոբեդոնոսցևի ուղարկած նամակը: «Անցած չորեքշաբթի, - գրել է նա, - առաջին անգամ հավաքվեց մամուլի մասին օրենքը վերանայելու համար ստեղծված հանձնաժողովը: Ես շարունակում եմ իմ սովորական դարձած վեճը կոմս Լորիս-Մելիքովի հետ այդ առարկայի շուրջ: Իմիջայլոց շատ քչերն են բաժանում իմ մտքերը, ծայրահեղ դեպքում ոչ ոք չի արտահայտում իր համաձայնությունը: Բայց ես իմ տեսակետը ոչ մեկի չեմ զիջի այդպիսի կարևոր հարցում: Ես մտածում եմ, կառավարությունն իր ձեռքից չպետք է բաց թողնի մամուլի վրա հսկողությունը, չպետք է իրենից հանի այդ պատասխանատվության բեռը: Դա դնել դատարանի վրա, նշանակում է մամուլի վրայից հանել բոլոր սանձերը: Ու դա կլինի մեծ չարիք և պետության և ժողովրդի համար: Կարծում եմ, որ կառավարությունն, որը գիտե, թե ինքն ինչ արժե և ինչ է նա ուզում, չի կարող մամուլը դիտել որպես իրենից անկախ գործող ուժի: Ընդորում բոլորը ինձ համարում են հնադավան: Հաջորդ նիստին ուզում են հրավիրել նաև որոշ թերթերի ու ամսագրերի խմբագիրներին: Իմ կարծիքով, հարկավոր չէր դա անել, բայց այդպես որոշեցին»:

Պ. Վալուևին հայտնի էր դարձել, որ ներքին գործերի նախարար Մակովը պերլյուստրացիայի էր ենթարկում Լորիս-Մելիքովի գրագրությունը և մասնավորապես տեղյակ էր դարձել մամուլի վերաբերյալ լիբերալ բարեփոխումների ուղղությամբ նրա մտադրության մասին:

Իմանալով այդ մասին Պ. Վալուևը Մակովին միտք է տալիս՝ թագավորին առաջարկել մամուլի գործերով ստեղծել հանձնաժողով Վալուևի գլխավորությամբ, որով էլ նրանք նախաձեռնությունը կվերցնեին իրենց ձեռքը: Ցարը համաձայնվեց այդ առաջարկությանը և, ինչպես գրում է Վալուևը, «Լորիս-Մելիքովը կանգնեց կատարված փաստի առջև: Դա նրան պատճառեց բացահայտ տհաճություն»:

Չնայած ստեղծված դժվարություններին, ցարին մոտ կանգնած անձանց բանսարկություններին, Լորիս-Մելիքովին հաջողվում էր ստեղծված հանձնաժողովում տանել իր գիծը: Պոբեդոնոսցևի վերոհիշյալ նամակում նշված փաստն ասվածի վկայություններից մեկն է:

Պոբեդոնոսցևին, Վալուևին և Լորիս-Մելիքովի մյուս հակառակորդներին հունից հանել էր հանձնաժողովի նիստերում Միխայիլ Տարիելովիչի հետևյալ գնահատականը. «Մամուլը հարկավոր է ինչպես օդ»:

Մամուլի գործերով հանձնաժողովի նախագահ Պ. Վալուևը 1880 թ. հոկտեմբերի 30-ին հարկադրված էր փաստել, որ ներքին գործերի նախարարությունը մամուլի մասին օրենքը չի կիրառում և դրանով այն փաստացի (դե ֆակտո) դադարել է գոյություն ունենալուց:

Վալուևը 1880 թ. նոյեմբերի 6-ին հարկադրված էր փաստել նաև, որ «ստեղծված պայմաններում մամուլի լիակատար ազատությունը կանխորոշված էր» և հույս էր հայտնում «միջոցներ գտնել որքան հնարավոր է դա քիչ վնասակար դարձնել»:

«Քիչլիական օշի խնաստություն...»

Լորիս-Մելիքովը հաճախ ընդունում էր ռուս մտավորականության նշանավոր դեմքերին, նրանց հետ քննարկում հասարակական կյանքը կանոնավոր հունի մեջ դնելու վերաբերյալ իր մտահղացումները: Այսպիսի մոտեցումը ձևական չէր և երբեք Միխայիլ Տարիելովիչը չէր նմանվում այն գործիչներին, որոնք համբավ ձեռք բերելու նպատակով պտույտ էին գալիս իրենց բազմակողմանի գիտելիքներով հեղինակություն ձեռք բերած և մամուլի միջոցով թելադրիչ ծայն ունեցող մշակույթի գործիչների միջավայրում:

Միխայիլ Տարիելովիչն ուղղակի կարիք ուներ այդպիսի գործիչների հետ շփվելու միջոցով ճշտել ու հղկել այն ամենն, ինչ մտադիր էր իրականացնել: Այսպիսի մոտեցումը պետության մեջ երկրորդ դեմք հանդիսացող անձի կողմից, նորություն էր: Եվ հասարակական ու մշակութային գործիչները գոհ էին, որ կառավարությունը զգում է իրենց կարիքը:

Լորիս-Մելիքովը կարդում էր իր ժամանակի նշանավոր ռուս գրողներին: Նրանցից շատերի հետ ուներ անձնական ծանոթություն, վարում նամակագրություն:

Միխայիլ Տարիելովիչի հետ շփումներից նրանք հաճելի զարմանում էին, տեսնելով ռուս գրական աշխարհը լավ իմացող պետական գործչի:

Դեռևս երիտասարդ տարիներին Նեկրասովի հետ ունեցած ընկերությունն իզուր չէր անցել: Լազարյան ճեմարանում էլ սովորելու տարիներին Լորիս-Մելիքովն առանձնակի սեր ու հետաքրքրություն էր դրևորել ռուս գրականության նկատմամբ: Ռուս գրականությամբ հրապուրվելուն նպաստել էր նաև այն հանգամանքը, որ Մ. Լերմոնտովն էլ էր ավարտել այն յունկերական դպրոցը, որն հետագայում ավարտեց նաև Լորիս-Մելիքովը: Լազարյան ճեմարանը Լորիս-Մելիքովի մոտ մեծ սեր էր առաջացրել հայոց պատմության և հայ գրականության նկատմամբ: Հիանալի գիտեր գրաբարը, կարդացել էր հայ պատմիչներին: Ծանոթ էր իր ժամանակի հայ գրողներին, հատկապես բարձր էր գնահատում Րաֆֆու, Պ. Պռոշյանի, Գ. Սունդուկյանի, Ռ. Պատկանյանի, Հ. Պարոնյանի, Ծերենցի և մյուսների ստեղծագործությունները, որոնք լույս էին տեսնում առանձին գրքերով և տպագրվում մամուլի էջերում:

Իսկ ահա, այժմ, երբ Լորիս-Մելիքովը հասել էր արտասահմանյան լրագրողների գնահատմամբ «փոխթագավորի» դիրքին, ցարից հետո Ռուսաստանում համարվում էր երկրորդ դեմքը, չմոռացավ գրական աշխարհը: Մամուլում հրապարակված հոդվածները, ոստիկանական չոր զեկուցագրերը նրան շատ քիչ նյութ էին տալիս ռուսական իրական կյանքի զարկերակը զգալու, մինչև խորքային շերտերը տեսնելու համար: Եվ այդ պակասը լրացնելու գլխավոր միջոցը դարձավ գրականությունը:

Ծանոթ լինելով իր ժամանակի գրողների ստեղծագործություններին, հետևելով նրանց գրական կյանքին, Լորիս-Մելիքովը հատկապես առանձնացրեց Սալտիկով-Շչեդրինին:

Միխայիլ Տարիելովիչը չէր սխալվում, երբ գտնում էր, որ ռուս գրողների մեջ ոչ ոք այնպես խորությամբ ու բազմակողմանի ծանոթ չէ անծայրածիր Ռուսաստանի ծայրամասային ու ժողովրդական կյանքին, ինչպես հայտնի երգիծաբանը: Սալտիկով-Շչեդրինը իր ժամանակի երկու նշանավոր ամսագրերի՝ «Սովրեմեննիկ» և «Օտեչեստվեննիե զապիսկի» խմբագիրն էր, կրքոտությամբ պաշտպանում էր որդեգրած դեմոկրատական ուղղությունը:

Լորիս-Մելիքովը գիտեր նաև, որ «ռուսական կյանքի հանրագիտարան» Սալտիկով-Շչեդրինին Նիկոլայ Առաջինն աքսորել էր որպես «վտանգավոր ուղղության» գրող և անխնա հալածվում էր գրաքննության կողմից: Ցարական վերնախավն ատելությամբ էր լցված մեծ երգիծաբանի նկատմամբ, որն անխնա ծաղրում էր տգետ ու կաշառակեր բյուրոկրատիային: Մեծ երգիծաբանը ցարական բարձրագույն պետական մարմիններին տվել էր դիպուկ անվանումներ: Այսպես, օրինակ, ներքին գործերի նախարարությունն անվանել էր «խոչընդոտի և անբավարարվածության դեպարտամենտ», ֆինանսների նախարարությունն՝ «աղբյուրների որոնման և անդունդը լցնելու դեպարտամենտ», արդարադատության նախարարությունը՝ «թյուրիմացության և զրպարտության դեպարտամենտ», պետական ունեցվածքի նախարարությունը՝ «թալանի ու յուրացման դեպարտամենտ», ժողովրդական լուսավորության նախարարությունը՝ «պետական խելացնորության դեպարտամենտ» և այլն:

Եվ ահա, պետության մեջ երկրորդ դեմքը հանդիպում է այդպիսի բացասական համբավ ունեցող երգիծաբանի հետ: Ավելին, Լորիս-Մելիքովը Սալտիկով-Շչեդրինին հրավիրում է ճաշի: Մարտական գեներալն երգիծաբան գրողին պատմեց իր մասնակցած պատերազմների մասին, առանձնակի շեշտելով դրանցում հասարակ ռուս զինվորի արիությունը:

Սա ինչ որ նորություն էր: Կարծես Սուվորովից ու Կուտուզովից հետո ռուսական ոչ մի զորահրամանատար այդպես սիրով ու հարգանքով չէր խոսել ռուս հասարակ զինվորի մասին: Իր նամակներից մեկում գրելով այդ մասին, Սալտիկով-Շչեդրինն եզրակացրել էր. «Եթե գիտե հասարակ զինվորին, նշանակում է՝ գիտե նաև ժողովրդին»:

Դրամատուրգ Ա. Օստրովսկուն ուղղված մեկ այլ նամակում Սալտիկով-Շչեդրինը գրել է. «Գրաքննության գծով այժմ գործը թեթևացել է, ընդհանրապես շատ է թեթևացել: Լորիս-Մելիքովը ցույց տվեց բիբլիական օձի իսկական իմաստություն, պատկերացրեք, նրա մասին ոչ մի լուր չկա և մենք սկսում ենք նույնիսկ մեզ երևակայել անվտանգության մեջ: Այն դեպքում, երբ անցյալ տարի չէր կարելի առանց սարսափի մտածել վրա հասնող գիշերվա մասին»:

Պետական, ռազմական գործիչն ու դեմոկրատ գրող-երգիծաբանն երկար զրուցեցին Ռուսաստանի ներկայի ու ապագայի մասին:

- Մշտապես այս երկիրն, - ասաց Սալտիկով-Շչեդրինը, - իր կուրծքն է դեմ տվել, որին հանդիպելով ցաք ու ցրիվ են եղել պատմության հարվածները: Նա տարել է և մասնատվության դանակակռիվը, և թաթարներին, և պետականության մոսկովյան գաղափարները, և պետերբուրգյան լուսավորչական խելառությունն ու ճորտությունը: Բոլորը տառապանքով տարել է և այդ բոլորից հետո մնացել է առեղծվածային, չստեղծելով համակեցության ինքնուրույն ձևեր:

Համաձայնելով Սալտիկով-Շչեդրինի մտքի հետ, Լորիս-Մելիքովը նշեց նաև Ռուսաստանի հետամնացության այն պատճառները, որոնց վերացումը հնարավոր կլինի ռեֆորմների շարունակմամբ:

- Ձեր արտահայտած մտքերն, - ասաց Միխայիլ Տարիելովիչը, - ինձ հիշեցրին Պուշկինի այն իմաստուն խոսքերը, որ Ռուսաստանը զոհողությունների գնով եվրոպական լուսավորությունը փրկել է թաթար-մոնղոլական կործանիչ հարվածներից, ինքն դրանից անչափ տուժելով:

- Այո, տուժեց, - պատասխանեց երգիծաբանը, - բայց Եվրոպան անշնորհակալ եղավ: Դուք զինվորական եք և հավանաբար գիտեք, որ թաթարներից փրկող Ռուսաստանի դեմ Եվրոպան սկսեց խաչակրած արշավանք: Դրանից հետո քանի՞ անգամ պատերազմ պարտադրեցին Ռուսաստանին: Մինչև այսօր ամեն ինչ արվել է Ռուսաստանի առաջընթացը կանխելու համար:

- Եվ որպեսզի այլևս հնարավոր չլինի կանխել Ռուսաստանի առաջընթացը, - համաձայնվեց Լորիս-Մելիքովը, - մեզ անհրաժեշտ է վերակառուցել մեր երկրի ներքին կյանքը վերից-վար, բայց առանց շտապելու, ժողովրդին հարմարվելու ժամանակ ու հնարավորություն տալով:

Ռուսաստանի ապագա ճակատագրի նկատմամբ արմատական հեղափոխականների և հետադեմ պահպանողականների վերաբերյալ իր տեսակետը փաստարկելու համար Լորիս-Մելիքովը հիշեցրեց ֆրանսիայի արմատականների օրինակն, որոնք սկսած Գամբետայից, հենց հասան կառավարման ղեկին, անխուսափելիորեն հարկադրված իրենց վառ արմատականությունը փոխեցին ավելի դժգույն գույներով և սկսեցին տարբեր զիջումներ կատարել:

- Այնպես որ, - եզրափակեց կոմսը, - սկզբունքներն այլ են, իսկ իշխանությունը մեկ ուրիշ բան: Դրանք իրար կապելով հեռու չես գնա: Դա հավասար է նրան, որ միասին լծես բեռնակիր ձին վարգուն նժույգի հետ:

Համաձայնվելով Միխայիլ Տարիելովիչի մտքերին, Սալտիկով-Շչեդրինը նկատեց.

- Այո, հարկավոր է հայրենիքին ծառայել և ոչ թե խժռել նրան:

Սալտիկով-Շչեդրինն ի դեմս Լորիս-Մելիքովի, տեսավ մի նոր որակի

գործչի, որն անկեղծորեն հավատում է Ռուսաստանի վերելքին և պատրաստ է դրա համար ամեն ինչ անել: Մի մարդ, որը պատերազմների մեջ է դրսևորել իր վճռականությունը Ռուսաստանի հզորության համար, այդպիսին կլինի նաև քաղաքական կյանքում:

- Բայց պետական քարացած բյուրոկրատիայի դեմ պայքարն անսպասելի անհայտություններով լեցուն ուղի է, - ասաց գրողը, հույս հայտնելով, որ կհաջողվի դրանք հաղթահարել:

Լորիս-Մելիքովի հետ առաջին հանդիպումը խոր տպավորություն էր թողել գրող-երգիծաբանի վրա: Տեղի ունեցած վերոհիշյալ հանդիպման մասին 1880 թ. մայիսի 15-ին Սալտիկով-Շչեդրինը գրել է «Մոտ օրերս եղա կոմս Լորիս-Մելիքովի մոտ (ինքն էր ցանկացել ծանոթանալ), ընդունեց գերազանց բարեհաճությամբ, հետաքրքրվեց Վյատկայում իմ անցկացրած աքսորի մասին... Նա լավ ու խելացի մարդ է»:

Միխայիլ Տարիելովիչն ու Սալտիկով-Շչեդրինը հաճախ էին հանդիպում, երկարատև զրույցներ ունենում Ռուսաստանի ճակատագրի շուրջ: Այդ հանդիպումներն աստիճանաբար վերածվեցին բարեկամության, որն ավելի սերտացավ հատկապես Լորիս-Մելիքովի հրաժարականից հետո, երբ նա հարկադրաբար ապրում էր արտասահմանում:

Այդ ժամանակ մեծ հեղինակություն էր վայելում նշանավոր հասարակական գործիչ, պետական իրավունքի հայտնի պրոֆեսոր և տեղական կառավարման հարցերի մասնագետ, առաջադեմ հայացքներ ունեցող Ալեքսանդր Դմիտրիևիչ Գրադովսկին, որի հետ Լորիս-Մելիքովը հաճախ էր հանդիպում և խորհրդակցում իրեն հետաքրքրող տարբեր հարցերի շուրջ: Ա. Գրադովսկին ակտիվ մասնակցել էր 1878 թ. Բուլղարական սահմանադրության նախագծի կազմմանը, որը 1879 թ. ընդունվեց Բուլղարիայի հիմնադիր ժողովում : Իսկ անվանի գործիչը ի դեմս Լորիս-Մելիքովի տեսավ մի մարդու, որը մեծ ցանկություն ուներ պրակտիկայում Ռուսաստանում կիրառել իր մշակած սկզբունքներն ու գաղափարները: Նա այս ամենի համար էլ Լորիս-Մելիքովին վերաբերում էր մեծ հավատով ու համակրանքով: Եվ երբ կատարվեց մարտի 1-ի ողբերգությունը, կարճ ժամանակ անց հրաժարական տվեց Լորիս-Մելիքովը, Բուլղարիայի սահմանադրության հեղինակը հասկացավ, որ նորից ընդհատվեց առաջադիմության ուղին և Ռուսաստանն ետ է մնում պատմության ընթացքից:

Լորիս-Մելիքովը մտերիմ էր նաև այդ ժամանակ Ռուսաստանում հայտնի իրավագետ, առաջադեմ հայացքներ ունեցող Միխայիլ Եվգրաֆովիչ Կովալևսկու հետ, բանկ գնահատում նրա խորհուրդները: Այս մասին պետական խորհրդի քարտուղար Ե. Պերետցը իր օրագրում (1880 թ. դեկտեմբերի 15-ին) գրել է հետևյալը. «Երբ Լորիսը լսեց, որ ենթադրվում է Կովալևսկուն նշանակել պետական խորհրդի անդամ, նա իր բազկաթոռից վեր ցատկեց ու գրկեց ինձ: «Դե, շնորհակալ եմ ձեզնից, - ասաց նա,

ինչքան ուրախ եմ Միխայիլ Եվգրաֆովիչի համար: Այ, կլինի պետական խորհրդի իսկական անդամ: Հրաշք է և ոչ թե մարդ: Դուք դեռ նրան լավ չեք ճանաչում: Ես նրան ուսումնասիրել եմ Գերագույն կարգադրիչ հանձնաժողովում, երբ բոլորը համաձայնվում էին կամ լսում, նա հանգիստ ձեռքը դնում էր գրպանում և ասում. «Իսկ ես ձեզ հետ համաձայն չեմ, հարկավոր է բոլորովին այլ բան անել, քան դուք առաջարկում եք»: Լսելով այս ոգևորված խոսքերն, ես ուրախանում էի Լորիսի համար: Կովալևսկու հետ նա ոչ մի կապ չուներ: Հետևաբար նրան գնահատում և սիրում էր որպես բացառիկ խելացի, ազնիվ և ուղղամիտ գործչի»:

Երբ Լորիս-Մելիքովն ավարտում է իր խոսքը, Պերետցը դիմում է նրան.

- Կոմս, ես բոլորովին ձեզ չեմ հասկանում: Ահա դուք այդպես արտահայտվում եք Կովալևսկու մասին նրա համար, որ նա ճշմարտախոս ու ինքնուրույն մարդ է և միաժամանակ դուք իմ վրա զայրանում եք միայն նրա համար, որ ձեզ ճշմարիտն եմ ասել ու կատարել եմ իմ պարտականությունը, պաշտպանելով պետական խորհրդի իրավունքները:

- Դե, բավական է, - ասաց Լորիս-Մելիքովն, ով անցածը հիշում է, նրա աչքը դուրս է գալիս: Հիմա մենք քեզ հետ միասին նորից բարեկամներ ենք և այլևս չենք գժտվի:

Ե. Պերետցի այս վկայությունը փաստում է, թե Լորիս-Մելիքովը ինչպես էր գնահատում մարդկանց, հաշվի առնում նրանց խելացի ու օգտակար խորհուրդները և ամենակարևորն այն էր, որ Միխայիլ Տարիելովիչը հիշաչար չէր, վրեժխնդիր չէր:

Հասնելով այդ բարձր դիրքին, նա երբեք չմեծամտացավ և առանց քաշվելու, բարեկամաբար հարցերի քննարկման ժամանակ, խելացի առաջարկություն անող պետական խորհրդի անդամին կամ նախարարին ասում էր. «Ձեր դիտողություններն ես ճիշտ եմ գտնում և սիրով դրանց հետ համաձայնվում եմ»:

«Դուք պաշտպանում եք սիհիլիսների տասակը»...

Ժողովրդական լուսավորության նոր նախարար Սաբուրովի հետ Լորիս-Մելիքովն երկար քննարկեց Ռուսաստանում բարձրագույն կրթության զարգացման խնդիրները, հատկապես շեշտելով եվրոպական երկրների ձեռքբերումների խելացի օգտագործման անհարժեշտությունը:

- Պետք է զգուշանալ կրթության համակարգի միջոցով ռուսականացման քաղաքականությունից: Լավ հիշեք, Անդրեյ Ալեքսանդրովիչ, դա բերելու է հակազդեցություն, այն էլ անչափ բացասական կողմերով: Անկախ մեր կամքից, կայսրության բազմազգ բնույթը տանելու է ռուսաց լեզվի գերիշխանության: Դա կլինի բնական ընթացքով: Տարբեր ազգության

պատկանող մարդիկ հասկանում են, որ իրար հետ հաղորդակցվելու միջոցը ռուսաց լեզուն է, ուստի կամավոր կերպով ձգտելու են տիրապետել այդ լեզվին:

Այնուհետև Լորիս-Մելիքովն ասաց, որ եթե ընդունում ենք սա ճշմարտություն, ապա այստեղից էլ պարզ է, որ ավելորդ է դառնում ամեն մի ճնշում ու պարտադրանք:

Սաբուրովն, որն եղել էր Դորպատի ուսումնական օկրուգի հոգաբարձուն, սեփական փորձով գիտեր, թե որքան ճիշտ էր Լորիս-Մելիքովը: Նորանշանակ նախարարը կոմսին տեղեկացրեց այն դժվարությունների մասին, որոնց նա հանդիպել էր մերձբալթյան ժողովուրդների մոտ ռուսաց լեզվի կիրառման հարցում:

- Իսկապես, - համաձայնվեց Սաբուրովը , - այդ գործում պարտադրանքը ցանկալի արդյունք չի տալիս:

- Ես Անդրեյ Ալեքսանդրովիչ, ինչպես գիտեք հայ եմ, տիրապետում եմ բազմաթիվ լեզուների, բայց առավել գերադասում եմ իմ մայրենի լեզուն: Սակայն, ինչի կհասնեի, եթե չտիրապետեի ռուսաց լեզվին,- ասաց Լորիս-Մելիքովը և ժպտալով շարունակեց, - և հիմա ձեզ հետ ի՞նչ լեզվով պետք է խոսեի...

Այնուհետև Լորիս-Մելիքովը Սաբուրովին պատմեց Կովկասում բնակվող բազմալեզու ժողովուրդների մասին, հիշեցնելով, որ մինչև Ռուսաստանի կազմի մեջ մտնելն, անչափ դժվար է եղել միմյանց հետ շփվելը: Եվ ահա, երկրամաս եկավ Ռուսաստանը, իր հետ բերելով նաև ռուսաց լեզուն: Այդ լեզվի միջոցով տարբեր ազգեր սկսեցին միմյանց հետ շփվել: Ներկա տնտեսական-առևտրական հարաբերություններն ավելի են մեծացրել ռուսաց լեզվի դերը: Կովկասում ռուսաց լեզուն տարածվում է բնականոն սկզբունքով և ամեն մի միջամտություն լայն տեղ կբացի այլասերման համար:

- Ռուսաց լեզվի արմատավորման գործում շտապողականությունը նույնպես կբերի անցանկալի հետևանքներ: Ռուսաց լեզվի բռնի արմատավորումը շատ ազգերի կհեռացնի Ռուսաստանից, - ասաց Լորիս-Մելիքովը:

Միխայիլ Տարիելովիչը իր բերած փաստարկները հիմնավորում էր հայ իրականությունից բերված օրինակներով: Նա հիշեցրեց այն պայմաններն, որոնցով հայ Լազարյանները Մոսկվայում հիմնեցին ճեմարան: Երիտասարդներին կրթության տալը միշտ եղել է հայ մարդու երազանքը: Այդպիսի հնարավորություն հայերն երկար ժամանակ չեն ունեցել իրենց հայրենիքում, ուստի դպրոց են ստեղծել այլ վայրերում: Ռուսաստանում բարձրագույն իշխանության կամքով Մոսկվայում ստեղծվեց Լազարյան ճեմարանը: Հետո, երբ Վրաստանն անցավ Ռուսաստանի կազմի մեջ, Ներսես Աշտարակեցին անմիջապես օգտվեց պահից և Թիֆլիսում ստեղ-

ծեց մի հոյակապ դպրոց: Բայց այդ և մի քանի այլ հայկական դպրոցներ ստեղծվել են Հայաստանից դուրս: Իսկ այժմ, երբ Հայաստանը վաղուց Ռուսաստանի կազմումն է, իսկապես անհասկանալի է, որ մինչև այժմ այնտեղ հայկական բարձրագույն դպրոց չի ստեղծվել: Այդպես է նաև Վրաստանում, Մոլդովիայում և մյուս ծայրամասերում:

- Ի՞նչ կխանգարի, եթե այդ ժողովուրդներն ունենան իրենց սեփական բարձրագույն դպրոցը, - հարցրեց Լորիս-Մելիքովը և շարունակեց, - իմ կարծիքով ոչ թե կխանգարի, այլ ավելի կբարձրացնի մեր տերության հեղինակությունն ու ազդեցությունն ազգային ծայրամասերում:

Այնուհետև Լորիս-Մելիքովն ընդգծեց, որ այդ դպրոցները չեն զբաղվի միայն ազգային կադրերի ստեղծմամբ: Նրանք կնպաստեն ազգային մշակույթների զարգացմանը և այս միջոցով հնարավորություն կստեղծվի ավելի սերտորեն կապվել ռուսական մշակույթի հետ:

- Դուք, Միխայիլ Տարիելովիչ, - ասաց զարմացած Սաբուրովը, - ի՞նչ է, պաշպանում եք նիհիլիստների տեսակետը:

- Հոգյակս, Անդրեյ Ալեքսանդրովիչ, միթե՞ կարծում եք, որ նիհիլիստներն, այդ հեղափոխականները միայն սխալ ու մերժելի գաղափարներ են քարոզում: Մենք ձեզ հետ միասին պարտավոր ենք հաշվի առնել հասարակական կարծիքը և գործն այնպես տանել, որ ամեն լավի, առաջադիմականի ու օգտակարի նախաձեռնողը կառավարությունը լինի: Այլապես կառավարությունը ստիպված կլինի վազել հասարակական կարծիքի ետևից և ծիծաղելի դրության մեջ հայտնվելով, մի կերպ ուշացած հասնել նրան:

Լորիս-Մելիքովը զրույցի ժամանակ հիշեց ոչ հեռու անցյալում ժողովրդական լուսավորության նախարար Կովալևսկուն: Մինչև նախարար նշանակվելը նա Մոսկվայի ուսումնական օկրուգի հոգաբարձուն էր: Նախարար դառնալուց հետո, նախարարության դեպարտամենտի տնօրենը հաստատման է ներկայացնում ստացված զեկուցագրերը: Դրանից երեքը գրել էր Կովալևսկին հոգաբարձու եղած ժամանակ: Բոլորի վրա էլ Կովալևսկին մակագրեց՝ «Մերժել»: Այդ ժամանակ զարմացած տնօրենը համարձակվում է նկատել, որ դրանք Կովալևսկու սեփական միջնորդություններն են: Կովալևսկին պատասխանում է. «Գիտեմ, բայց ես այդ միջնորդությունը գրել եմ, երբ նախարար չէի: Երբ կանգնած ես ներքևում, ապա, սովորաբար, շատ բան չես տեսնում, իսկ հենց բարձրանում ես վերև, ահա հորիզոնն ընդարձակվում է և այդտեղից ավելի լավ ես սկսում տարբերել քո ոտքի տակ եղած առարկաների տարբերությունը»:

Սաբուրովը խելացի ու շրջահայաց մարդ էր: Նա հասկացավ կոմսի բարեկամական ակնարկը և հավանություն տվեց Լորիս-Մելիքովի դիտողություններին: Նախարարը հետաքրքրվեց, թե արդյո՞ք կոմսը չի մտածում կրթության գործում նոր ռեֆորմ իրականացնել:

- Իհարկե, ոչ, - պատասխանեց Լորիս-Մելիքովը, բայց հարկավոր է

մաքրել ասպարեզն, որն այնպես աղտոտել է Տոլստոյը Պոբեդոնոսցևի հետ միասին : Մաքրել ասպարեզը և շարունակել կրթության գործում թագավոր կայսրի սկսած ռեֆորմների իրականացումը:

Սաբուրովը համաձայնվեց Լորիս-Մելիքովի փաստարկների հետ և պատրաստակամություն հայտնեց շոշափված հարցերի վերաբերյալ հիմնավորված առաջարկություններ ներկայացնել Ալեքսանդր երկրորդի ուշադրությանը:

- Մի անհանգստացեք, Անդրեյ Ալեքսանդրովիչ, ինձ համարեք ձեր պաշտպանը, մենք կհասնենք մեր նպատակին, - ասաց Լորիս-Մելիքովը և նախարարին ցանկացավ հաջողություն:

Առաջադեմ լիբերալ հասարակությունը գոհունակությամբ ընդունեց Ա. Ա.Սաբուրովի նշանակումը: Բայց հենց առաջին օրից Սաբուրովի նկատմամբ ատելությամբ լցվեցին պահպանողական-հետադիմական ուժերը: Նրանց մամուլն անխնա հարձակվում էր ժողովրդական լուսավորության նախարարի դեմ: Գործը հասավ նրան, որ 1881 թ. փետրվարի 8-ին Պետերբուրգի համալսարանում տեղի ունեցած հավաքի ժամանակ, առաջացած իրարանցումից օգտվելով, ուսանողներից մեկը մոտեցավ առաջին շարքում նստած Սաբուրովին ու հարվածեց նրան:

Այդ դեպքը ցնցեց շատերին: Եվ իբրև բողոք Դ. Մենդելեևը հեռացավ համալսարանից: «Համալսարանի դահլիճում, - գրել է Դ. Մենդելեևը, - ուսանողներից մեկը հարվածեց նախարար Սաբուրովին և, ես, չնայած համոզմունքներիս, հրաժարական տվեցի ու հրաժեշտ տվեցի համալսարանին»:

Ի. Ս. Տուրգենևը և Լորիս-Մելիքովը

Ռուս մեծ գրող Իվան Տուրգենևն ու Լորիս-Մելիքովը թեև անձնապես ծանոթ չէին, բայց Միխայիլ Տարիելովիչը կարդում էր նրա երկերը և բարձր էր գնահատում ու հարգանքով էր վերաբերվում: Մեծ գրողին, անշուշտ, հայտնի էր այդ ամենը և դա նրան հնարարավորություն էր տալիս հաճախ դիմել Ռուսաստանի երկրորդ դեմքին, միջնորդելով բազմաթիվ ռուս երիտասարդ վտարանդիներին օգնելու հարցով:

1880 թ. հոկտեմբերի 6-ին Ի. Ս. Տուրգենևը Փարիզից մի ընդարձակ նամակ ուղարկեց Լորիս-Մելիքովին, գրելով հետևյալը. «Ամբողջ Ռուսաստանը գիտե և բարձր է գնահատում նրա ճակատագրի վրա ձեր գործունեության բարերար ազդեցությունն այն ժամանակից, երբ թագավորի վստահությունը ձեզ կանչել է ձեր զբաղեցրած բարձր պաստին: Հասարակությունը հատուկ համակրանքով է դիմավորել գթասրտության միջոցներն այն երիտասարդների նկատմամբ, որոնց հնարավորություն է տրվել նորից վերադառնալ իրենց ընդհատված պարապմունքներին և հրաժարվելով անմիտ հրապուրանքից, ամբողջովին կնվիրվեն գիտության շահերին»:

Այնուհետև Ի. Տուրգենևը հայտնում է, որ այդպիսի բազմաթիվ երիտասարդներ գտնվում են արտասահմանում, որոնք կամ փախչել են վարչական աքսորից և կամ էլ դրա վախից: Հայտնելով, որ շատերը լսել են Լորիս-Մելիքովի կառավարության «իմաստուն կարգադրության մասին», ամբողջ հոգով ցանկանում են հայրենիք վերադառնալ և դառնալ նրա համար օգտակար ծառաներ, Ի. Տուրգենևը խնդրում է այդ երիտասարդներից երկուսին՝ Ն. Իվանովին. Ն. Մազչենկոյին ներել և թույլ տալ վերադառնալ Ռուսաստան: Նիկոլայ Մազչենկոն Կիևի համալսարանի ուսանող էր, նարոդնիկ: Խուսափելով ձերբակալումից, 1878 թ. փախել էր արտասահման: Նիկոլայ Իվանովն ուսանողական հավաքում հակակառավարական ելույթի համար ենթարկվել էր հալածանքի և այդ պատճառով հեռացել արտասահման:

Տուրգենևն իր նամակի հետ միասին Լորիս-Մելիքովին է ուղարկում Իվանովի և Մազչենկոյի խնդրագրերը:

1880 թ. նոյեմբերի 11-ին պատասխանելով Տուրգենևին, Լորիս-Մելիքովը հայտնել է նրան հետևյալը. «...Եթե պ.պ. Իվանովը և Մազչենկոն Ռուսաստանում գտնվելու ժամանակ և արտասահման մեկնելուց հետո ոչ մի հանցանք չեն կատարել, ապա նրանց հայրենիք վերադառնալուց և ենթակա ղեկավարությանը ներկայանալուց նրանք պետք է միայն տույժի ենթարկվեն կայսրության սահմաններն ինքնակամ թողնելու համար, որն արտահայտվելու է դրամական տուգանքով և ուրիշ այլ պատժի չեն ենթարկվի»:

Վերոհիշյալ նամակում Լորիս-Մելիքովը հարկ է համարել նշել. «...Ներողամտությամբ վերաբերելով պատանեկության հրապուրանքներին և նույնիսկ սխալներին, ես միշտ պատրաստ եմ իմ ուժերի ներածի չափով օգնել այն երիտասարդներին, որոնք անկեղծ զղջալով ու իրենց մոլորությունը գիտակցելով, արժանի են կարեկցանքի»:

Ի. Տուրգենևը Լորիս-Մելիքովի առջև երաշխավորել է նաև Մ. Վելլերին թույլ տալ Ռուսաստան վերադառնալու համար: Մոիսեյ Վելլերը Կիևի համալսարանի ուսանող էր: Մինսկ քաղաքում գործող հակակառավարական խմբի անդամ էր: 1878 թ. խուսափելով ձերբակալումից, հեռացել էր արտասահման: 1880 թ. հոկտեմբերի 6-ին Տուրգենևը Վելլերին խորհուրդ է տալիս «նամակ գրել կոմս Լորիս-Մելիքովին /Միխայիլ Տարիելովիչին/ և լրիվ անկեղծությամբ շարադրեք ձեր խնդրանքը, հայտնելով Ռուսաստան վերադառնալու ձեր ցանկությունն՝ ուղեկցելով այսուհետև քաղաքականությամբ չզբաղվելու խոստումով և ամբողջովին նվիրվելու եք գիտությանը»: Տուրգենևը Վելլերին հանձնարարում է իրեն ուղարկել այդ նամակը, որը կից գրությամբ կուղարկեր կոմսին: «Իհարկե, գրում է Տուրգենևը, ոչնչով չեմ կարող երաշխավորել /ես կոմս Լորիս-Մելիքովին անձամբ չեմ ճանաչում/, բայց կարող է և գործը հաջողվի: Բոլոր դեպքերում

փորձելը չի խանգարի: Ուղարկեք այդ նամակը ժամանակ չկորցնելով, այժմ հարմար պահ է»:

Կատարելով իր խոստումը, Տուրգենևը 1880 թ. նոյեմբերի 2-ին Լորիս-Մելիքովին գրում է. «Եթե դուք պ. Վելլերի կից խնդրանքն, ինչպես նաև ինձ ուղղված նամակը բարեհաճեք կարդալ, ապա համարձակվում եմ մտածել, դուք կգտնեք, որ եթե երբևիցե հնարավորություն կընձեռնվի մեղմել օրենքի խստությունն, ապա կիրառեք հենց այդ դժբախտ պատանու նկատմամբ, որի մասին ես լավագույն տեղեկություններ ունեմ: Նրա մեղանչումն անկեղծ է և նրա խոստումներին կարելի է հավատալ»:

Տուրգենևի այս միջնորդությունն էլ Լորիս-Մելիքովն ընդառաջեց, այդ մասին 1880 թ. դեկտեմբերի 1-ին գրելով. «Ձեր նոյեմբերի 2-ի նամակի առթիվ պարտքս եմ համարում ձեզ տեղեկացնել, որ հնարավոր եմ գտնում պ. Վելլերին թույլ տալ վերադառնալ Ռուսաստան»: 1880 թ. դեկտեմբերի 8-ին Տուրգենևը Վելլերին հայտնելով Լորիս-Մելիքովից ստացված նամակի մասին, գրում է. «Ուրախանում եմ, որ այժմ դուք հնարավորություն ունեք հայրենիք վերադառնալ և դուրս գալ այն ծանր վիճակից, որում դուք գտնվում եք»: Երախտապարտ Մ. Վելլերը խնդրում է «հզոր նախարարի նամակի պատճենը» ուղարկել իրեն, որը և կատարում է մեծ գրողը 1880 թ. դեկտեմբերի 24-ին, սեփական ձեռքով արտագրելով այն:

Ռուս նշանավոր հրապարակախոս և հասարակական գործիչ Մ .Մ. Կովալևսկին Ի. Տուրգենևի մասին 1908 թ. հրապարակված հուշերում վկայում է. «Ես սեփական աչքերով տեսել եմ Լորիս-Մելիքովին նրա ուղարկած նամակները, որոնցով նա խնդրում էր թույլ տալ Ռուսաստան վերադառնալ տասներկու երիտասարդ մարդկանց, որոնք ինչ որ չափով խառնվել էին սոցիալիստական պրոպագանդային: Լորիս-Մելիքովն այդ միջնորդություններին արձագանքում էր շատ զուսպ և հարգանքով, ասելով, որ ինքն էլ է ցանկանում մոլորված երիտասարդ մարդկանց առջև հնարավորություն բացել քավելու իրենց անցյալի համար, ինչքան հիշում եմ, նրանց բոլորին տրվեց անձնագիր և վերադառնալու հնարավորություն ընձեռվեց»:

Ի. Տուրգենևն այն գործիչների թվումն էր, որոնք հավատում էին Լորիս-Մելիքովին և նրա գործունեության հետ հույսեր էին կապում: Ահա, թե Տուրգենևն ինչ է գրում 1880 թ. հոկտեմբերի 21-ին նարոդնիկական հայտնի գործիչ, «Չայկովցիներ» խմբակի ղեկավար Նիկոլայ Չայկովսկուն /1850-1926/, նկատի ունենալով Լորիս-Մելիքովին. «Ես երբեք հատուկ պատրանքներով չեմ ապրել ձեր հիշատակած անձի նկատմամբ: Ես համարել եմ և մինչև այժմ համարում եմ, որ հարկավոր է օգտվել ձնհալից, քանի դեռ նորից չի սկսվել սառնամանիքը»:

ՈՒԹԵՐՈՐԴ ՄԱՍ

Երրորդ բաժանմունքի ձակատագիրը

Պետերբուրգը բանսարկուների քաղաք էր: Մայրաքաղաքի բյուրոկրատիան ուներ մի հատկություն, որը գերազանց էր կատարում: Ձախոդել այն ամենին, ինչը չէր համապատասխանում իրենց շահերին: Նրանց մոտ երկրի, պետության շահերն ընկած էին ինչ որ հեռավոր մի անկյուն, որին վերաբերում էին, ինչպես օգտագործված լաթ:

Իսկ Լորիս-Մելիքովն, որն ամբողջ կյանքը անց էր կացրել Պետերբուրգից հեռու, բոլորովին անծանոթ էր մայրաքաղաքին հատուկ խարդավանքներին: Բայց դա նաև մեծ առավելություն էր, քանի որ Միխայիլ Տարիելովիչը կապված չէր այդ ամենին և նրա ձեռքերն ազատ էին: Նա կարող էր ազատ գործել, հասնել իր նպատակին: Բայց այդ ճանապարհին կար անհաղթահարելի խոչընդոտ: Դա Ալեքսանդր Երկրորդն էր և հատկապես թագաժառանգ Ալեքսանդր Ալեքսանդրովիչը, որոնց միշտ չէ, որ հաջողվում էր համոզել: Թագավորն ու թագաժառանգն ավելի շատ մտահոգված էին Ռոմանովների տիրակալությունը հավերժացնելու հոգսով և Լորիս-Մելիքովի ձեռնարկումներին վերաբերում էին այդ տեսանկյունից:

Միխայիլ Տարիելովիչի վաղեմի ընկեր, ռազմական նախարար Միլյուտինն իր օրագրում կատարել է հետևյալ գրառումը. «Կոմս Լորիս-Մելիքովն իր նոր դերը հասկացել էր ոչ թե որպես հետաքննիչ հանձնաժողովի նախագահ, այլև որպես դիկտատոր, որին պետք է ենթարկվեն ամբողջ իշխանությունը, բոլոր նախարարները... Որպես խելացի ու ճկուն մարդ, Լորիս-Մելիքովը գիտե, թե ում հետ ինչպես խոսել, զայրույթով էր արտահայտվում այն տարբեր, խիստ դրակոնյան միջոցների մասին, որոնք արդեն նրան էին պարտադրում տարբեր կողմերից: Կարծում եմ, որ նա, ըստ էության, չի գնա այդպիսի միջոցների, որոնք մերկացնում են միայն վախեցածներին ու գլուխը կորցրածներին»:

Այդ «վախեցածների ու գլուխը կորցրածների» առաջնորդը թագաժառանգ Ալեքսանդրի ուսուցիչ Կ. Պոբեդոնոսցևն էր, որը պահանջում էր կիրառել դրակոնյան մեթոդներ: Թագաժառանգի կամքով գերագույն կարգադրիչ հանձնաժողովի մեջ մտած Պոբեդոնոսցևը մի խնդիր ուներ՝ ուժեղացնել բռնությունները:

Մինչդեռ Լորիս-Մելիքովն այլ կերպ էր մտածում: Նա այլ կերպ էր տեսնում պետական կարգի ամրապնդումն ու հասարակական հանգստության հասնելու միջոցները: Եվ պատահական չէր, որ Լորիս-Մելիքովը հանձնաժողովում դրեց քաղաքական հանցագործությունների վերաբե-

րյալ բոլոր գործերի վերանայման անհրաժեշտությունը: Իսկ այդ գործերը հասել էին հսկայական չափերի 1878-1879 թթ.. ընդունված արտակարգ օրենքների արդյունքով: Հարկավոր էր վերանայել նաև մայրաքաղաքից և մյուս խոշոր քաղաքներից արտաքսվածների ցուցակը: Լորիս-Մելիքովին հաջողվեց այդ մտադրությունն իրականացնել, որի արդյունքով հարյուրավոր մարդիկ ազատվեցին բանտերից, վերադարձվեցին աքսորավայրերից:

Այդ ստուգումների արդյունքով Լորիս-Մելիքովի առջև բացվեց կայսրության ամենախայտառակ ու ամենասարսափելի օջախի իսկական էությունն ու գործելակերպը: Այդ օջախը թագավորական մեծության գրասենյակի 3-րդ բաժանմունքն էր, որն ոչ միայն լիբերալների ատելին էր, այլև Ռուսաստանի սարսափը: Մարդիկ, այն էլ մեծ թվով, պատժվել ու աքսորվել էին միայն հարբեցող դռնապահների տված վկայությամբ ու մատնությամբ: Այդ ժամանակ Պետերբուրգում տարածված էր հետևյալ անեկտոդը՝ «Դռնապահը հայտնում է, որ իր կենվորը խմող չէ, ուրեմն կասկածելի անձ է»: Եվ սա իրողություն էր. այդպիսի տեղեկության հետևանքով «չխմող մարդն» աքսորվում էր:

Լորիս-Մելիքովի հանձնարարությամբ սենատոր Շամշինը 1880 թ. հուլիսին ավարտեց 3-րդ բաժանմունքի ստուգումը: Արդյունքը սարսափելի էր:

Իվան Իվանովիչ Շամշինի ստուգումներով պարզվեց, որ մոտ 1500 մարդ անհիմն կերպով աքսորվել է անբարեհույս լինելու մեղադրանքով: Նրանց ճնշող մասն անմեղ էին և ազատվեցին անհիմն պատժից: Պարզվեց նաև, որ 3-րդ բաժանմունքում գործերը վարվել են անփույթ կերպով, առանց որևէ հիմնավորման, թույլ են տրվել օրինականության կոպիտ խախտումներ և այլն: 3-րդ բաժանմունքի ճակատագիրը հայտնվեց Լորիս-Մելիքովի ձեռքում:

Աստիճանաբար Լորիս-Մելիքովն ամրապնդում էր իր դիրքերը: Դրան մեծապես նպաստեց բազմաթիվ քրեական գործերի վերանայումը, որի շնորհիվ շատ մարդիկ վերադարձան իրենց ընտանիքներ: Հասարակական կարծիքը գործում էր կոմսի օգտին և չէր սխալվում:

3-րդ բաժանմունքի ստուգումները բացահայտեցին նաև մի կարևոր իրողություն: Պարզվեց, որ այս բաժանմունքը լրտեսել է նաև նախարարներին, նահանգապետներին, բարձրաստիճան չինովնիկներին ու գինվորականներին: Ահա, այս առումով էլ վերոհիշյալ անձանց մեծ մասը սկսեց ձեռնպահ մնալ Լորիս-Մելիքովին քննադատելուց: Բայց դա ժամանակավոր երևույթ էր, որովհետև Լորիս-Մելիքովը հետևողականորեն առաջ էր տանում իր գործը՝ վտանգելով նրանց անձնական շահերը...

Լորիս-Մելիքովը հասավ նրան, որ 3-րդ բաժանմունքն ու ժանդարմերիան դրվեցին իր ենթակայության տակ: «Ռուսկայա միսլ» ամսագիրը 1880 թ. ապրիլին գրեց, որ յուրաքանչյուր ռուս մարդ ողջունում է 3-րդ

բաժանմունքը գերագույն կարգադրիչ հանճնաժողովի գլխավոր պետին ենթարկելը: Լիբերալ-առաջադիմական մամուլն իր գոհունակությունն արտահայտելով այդ կապակցությամբ, դրան վերաբերում էր «շատ լավատեսորեն»,՝այն համարելով ապօրինությունները վերացնելու սկիզբ...

Ադրիան Միխայլովի գործը

«Հող և ազատություն» նարոդնիկական կազմակերպության անդամ Ադրիան Միխայլովը դատապարտվել էր մահապատժի: Նա 1880 թ. մայիսի 14-ին խնդրագրով դիմեց Լորիս-Մելիքովին: Հայտնելով, որ դատարանը հաշվի չի առել իր տված ցուցմունքները, դատապարտյալը գրում էր. «Ձերդ պայծառափայլություն: Եթե դուք էլ չեք հավատա իմ հայտարարության անկեղծությանը, որ ես ոչ միայն փաստացի, այլ նույնիսկ բարոյապես չեմ մասնակցել վերջին տարիներին կատարված ծանրագույն հանցագործություններին, որոնց հեղինակներին մինչև կյանքիս վերջին րոպեն կհամարեմ ռուս ժողովրդի չարամիտ թշնամիներ, ապա թող և ինձ հասնի արդարադատության պատիժը»: Միխայլովը խնդրում էր թույլ տալ վերջին անգամ, մահապատժից առաջ տեսակցել քրոջ հետ:

Նույն օրը Լորիս-Մելիքովին խնդրանքով դիմեց Միխայլովի քույրը, աղաչելով խնայել իր քսանվեցամյա եղբոր կյանքը: Այս խնդրագրում Լորիս-Մելիքովի ուշադրությունը գրավեց հետևյալ բառերը. «Իմ ավագ եղբայրը, մեր ընտանիքի հենարանը զոհվել է այն նույն փոքրասիական պատերազմի թատերաբեմում, որը դարձել է ձերդ պայծառափայլության սխրանքների վկան»:

Լորիս-Մելիքովը թույլ տվեց Միխայլովին տեսակցել քրոջ հետ:

Լորիս-Մելիքովն,իհարկե, հիշում էր իր հրամանատարությամբ կռվող Ղրիմյան 73-րդ հետևակ գնդի շտաբս-կապիտան Իվան Միխայլովին, որը զոհվեց Կարսի գրոհի ժամանակ իր աչքի առջև: Լորիս-Մելիքովը ծիու վրա նստած մոտեցել էր առաջապահ դիրքերին, երբ բոլորովին մոտ տարածության վրա պայթեց ռումբը: Լորիս-Մելիքովի ձին սպանվել էր տեղն ու տեղը: Զոհվել էին երկուսը, որոնցից մեկն էլ Իվան Միխայլովն էր:

Մարտական գեներալն իր պարտքը համարեց անձամբ լինել բանտում և հանդիպել մահվան դատապարտվածին:

Այս այցելության մասին բանտապետ Շմիտի զեկուցագրում ասվում է. «Գերագույն կարգադրիչ հանճնաժողովի գլխավոր պետ կոմս Լորիս-Մելիքովը մայիսի 15-ին այցելելով ամրոցում գտնվող մահապատժի դատապարտված Ադրիան Միխայլովին և նրա մոտ նկատելով զղջման նշաններ, դատապարտյալին հայտնեց թագավոր-կայսրի անսահման գթասրտությունն այն մարդկանց նկատմամբ, որոնք անկեղծ զղջում են: Դա առաջ բերեց Միխայլովի մոտ հույսի այնպիսի պոռթկում, որ դրանից նա սկսեց վատ զգալ»:

1880 թ. մայիսի 16-ին Լորիս-Մելիքովը ցարին ներկայացրեց զեկուցագիր, որտեղ հայտնելով Միխայլովին կախաղանի միջոցով մահվան դատապարտելու դատարանի վճռի մասին, միջնորդում է նրան ազատել մահապատժից: Այդ զեկուցագրի վրա Ալեքսանդր Երկրորդը մակագրում է. «Ադրիան Միխայլովին պարգևել կյանք և 20 տարով ուղարկել տաժանակիր աշխատանքի»:

1880 թ. մայիսի 17-ին Լորիս-Մելիքովն երկրորդ անգամ եղավ բանտում և անձամբ Միխայլովին հայտնեց, որ ցարի կամքով նրա կյանքը փրկված է:

Հաջորդ օրն, ուշքի եկած Միխայլովը Լորիս-Մելիքովին բանտից ուղարկած նամակում հայտնելով երախտագիտություն, գրում էր. «Կոմս, իմ ճակատագիրը վճռված է: Բանտի 20 տարին ոչ ոք չի տանի և հետևապես, ով էլ որ ես լինեմ, ես արդեն անվնաս մարդ եմ: Ձեր խոսքի շնորհիվ ինձ տրված պատիժն ես համարում եմ ծայրահեղ մեղմ... ինձ համար ծանր է մտածել, որ իմ կյանքը փրկող մարդը կշարունակի ինձ համարել համերաշխ նրանց հետ, ումից հրապարակավ հրաժարվել եմ»:

Բայց կարևոր են դատապարտյալի հետևյալ խոսքերը. «Վերջում, կոմս, թույլ տվեք ձեզ ողջունել որպես մի մարդու, որը ռուսական ամբողջ պատմության մեջ առաջինը գտավ իրական միջոցներ ռուսական հասարակական կյանքի ամենահիվանդագին երևույթները բուժելու համար: Եթե ձեզ այս խոսքերը կթվան քծնանք, ապա ցույց տվեք ռուսական պատմության մեջ մի պետական մարդու, որը նման պայմաններում գործել է ձեզ նման»:

Իշխանուհի Յուրևսկայա

Ալեքսանդր Երկրորդն 14 տարի կապված էր իշխանուհի Եկատերինա Միխայլովնա Դոլգորուկայի հետ: Թագուհին՝ Մարիա Ալեքսանդրովնան աշքարժ հիվանդ էր վերջին տարիներին և դա նպաստեց, որպեսզի թագավորն այլևս հաշվի չառներ հասարակական կարծիքը: Նա իր սիրային կապը բացահայտեց՝ խախտելով պատշաճության բոլոր սահմանները: Ցարը Եկատերինա Միխայլովնային բերեց Ձմեռային պալատ: Բոլորը դրանից անչափ վիրավորվեցին: Մահամեծ թագուհին արդեն անզոր էր:

Ալեքսանդր Երկրորդը որդիների, հատկապես թագաժառանգի ու մեծ իշխանների դիտողությունները պարզապես հաշվի չէր առնում: Նա սիրուհուց ուներ երեխաներ և նրանց հետ զբաղվում էր թոռնիկների մասնակցությամբ:

1880 թ. մայիսի 22-ին թագուհին վախճանվեց: Երկրում ըստ կարգի սուգ հայտարարվեց: Իսկ հուլիսի 6-ին Եկատերինյան ամրոցի եկեղեցում

տեղի ունեցավ ցարի գաղտնի ամուսնությունը Եկատերինայի հետ: Ծիսակատարությանը ներկա էր մի քանի մարդ:

Հուլիսի 16-ին, երբ Լորիս-Մելիքովին զեկուցման համար կանչեցին Ցարսկոե սելո, Ալեքսանդր Երկրորդը խորհելով իր դրության ողբերգական վիճակի մասին, անհանգստանալով իր կնոջ ու երեխաների ճակատագրի համար, Լորիս-Մելիքովին ասաց.

- Մյուսներից դու ավելի լավ գիտես, որ իմ կյանքը մշտապես վտանգի է ենթարկվում: Ես կարող է վաղը սպանվեմ: Երբ ես չեմ լինի, անտեր չթողնես ինձ համար այնքան թանկ էակներին: Ես, Միխայիլ Տարիելովիչ, քո վրա հույս ունեմ:

Այնուհետև Լորիս-Մելիքովին հրավիրելով Սաթե սենյակ, նրան ներկայացրեց իշխանուհի Եկատերինային ու ասաց.

- Ես գիտեմ, որ դու ինձ նվիրված ես, ահա և իմ կինը: Այսուհետև դու պետք է նվիրվես նաև իմ կնոջն ու իմ երեխաներին: Այժմվանից նրանց վստահում եմ ձեր հատուկ խնամքին: Երդվեք, որ նրանց, կպահպանեք իմ մահից հետո:

Ցարի ամուսնությունը վեր էր Լորիս-Մելիքովի պատկերացումներից: Նա կարծում էր, որ վերջի վերջո ցարն ուշքի կգա և չի գնա այդ քայլին: Իսկ հիմա ամուսնացել էր, նույնիսկ չսպասելով հայտարարված սուգի ավարտին: Լորիս-Մելիքովին մնում էր տալ հավատարմության երդում:

Շատ շուտով իշխանուհի Յուրևսկայան սկսեց միջամտել պետական գործերին, ձգտելով օգտակար լինել իր մտերիմներին: Սա լրացուցիչ հոգս էր Լորիս-Մելիքովի համար, մանավանդ, որ Ալեքսանդր Երկրորդն իշխանուհուն առարկելու սովորություն չուներ...

Շուտով առիթը ներկայացավ և իշխանուհին դրսևորեց ոչ միայն իր կամքն, այլև նվիրվածությունն Ալեքսանդր Երկրորդին: Ցարն իր հետ Լիվադիա էր հրավիրել նաև Լորիս-Մելիքովին: Ուղևորվելու էին օգոստոսի 17-ին, սենատորների հետ հանդիպելուց հետո: Այդ ժամանակ շատերին դեռ հայտնի չէր ցարի գաղտնի ամուսնությունը և զգուշության համար Լորիս-Մելիքովն առաջարկեց ուղևորվել տարբեր գնացքներով: Նաև նկատի էր առնվում անվտանգության ապահովումը: Բայց հենց որ այդ մասին տեղեկացավ իշխանուհին, առիթը բաց չթողեց դրսևորելու իր նվիրվածությունն, ասելով, որ չի կարող թեկուզ մեկ օրով մենակ թողնել սիրած մարդուն, երբ նրան վտանգ է սպառնում: Ճարպիկ Յուրևսկայան առանց այլևայլության մտավ օրինական ամուսնու դերի մեջ և զբաղեցրեց ցարական վագոնում թագուհու համար նախատեսված խցիկը:

Ալեքսանդր Երկրորդը շատ էր սիրում Եկատերինային, որի հետ նա կապվել էր այն ժամանակ, երբ վերջինս 17 տարեկան էր: Եկատերինա Միխայլովնա Դոլգորուկովան արական գծով ծագում էր 1147 թ. Մոսկվան հիմնադրած Յուրի Դոլգորուկովի տոհմից: Այս պատմական փաստից ել-

նելով Ալեքսանդր Երկրորդը Եկատերինայից ծնված ապօրինի զավակներին գաղտնի հրամանագրով 1874 թ. տվեց Յուրևսկի ազգանունը, իսկ Եկատերինան ստացավ իշխանուհի Յուրևսկայա ազգանունը:

Ալեքսանդր Երկրորդը ջերմ սիրով էր շրջապատել Եկատերինայից ծնված իր զավակներին, հատկապես տղային՝ Գեորգիին, որի մասին հաճախ ասում էր. «Նա իսկական ռուս է: Նրա երակներում միայն ռուսական արյուն է հոսում»:

Լորիս-Մելիքովը մարդկայնորեն հասկանում էր ցարի հայրական զգացմունքներին, նրա ապրումները: Եվ մի անգամ էլ, երբ Միխայիլ Տարիելովիչը Լիվադայում զրույցում էր ցարի հետ, նրան ասաց.

-Ռուսաստանի համար մեծ երջանկություն կլիներ, ինչպես հին ժամանակներում, ունենալ ռուս թագուհի:

Նա ցարին հիշեցրեց, որ առաջին Ռոմանովը՝ Միխայիլ Ֆեոդորովն էլ ամուսնացած է եղել իշխանուհի Դոլգորուկովայի հետ:

Մի անգամ էլ Լորիս-Մելիքովն ասաց ցարին.

- Երբ ռուս ժողովուրդը ծանոթանա ձեր մեծության որդու հետ, նա ամբողջությամբ, ինչպես մեկ մարդ, կասի՝ահա, նա մերն է:

Լորիս-Մելիքովի խոսքերն ուժեղ տպավորություն գործեցին ցարի վրա: Նա կարծես արտահայտեց ցարի փայփայած երազանքը:

Անդրադառնալով Ալեքսանդր Երկրորդի և իշխանուհի Յուրևսկայայի ամուսնությանը, Ե. Պերետցը իր օրագրում (1881 թ. փետրվարի 20-ին) գրում է, թե Լորիս-Մելիքովը ցարին ակնարկել է, որ հարկավոր է իշխանուհուն պաշտոնապես ճանաչել թագուհի և թագադրել նրան: Ցարը ոչինչ չի պատասխանել և չի էլ առարկել այդ առաջարկությանը: «Կարող է պատահել, - գրում է Ե. Պերետցը,- որ նրա մտքի մեջ նետված այս սերմը որոշ ժամանակ անց ծլող կտա: Դա առավելապես հնարավոր է, քանի որ ցարը դժգոհ է իշխանուհու նկատմամբ թագաժառանգի և թագավորական ընտանիքի մյուս անդամների ոչ սրտալի և անուշադիր վերաբերմունքից»:

Ահա այս երազանքի ազդեցությամբ էլ Ալեքսանդր Երկրորդն որոշեց նյութապես ապահովել իր կնոջն ու երեխաներին, որոնք անձնական ունեցվածք չունեին: 1880 թ. սեպտեմբերի 11-ին ցարը կազմեց մի կտակ, որով իր անունով արքունի նախարարի կողմից 1880 թ. սեպտեմբերի 5-ին պետական բանկ մուծված 3 միլիոն 302 հազար 970 ռուբլին համարվում է «իմ կնոջ՝ պայծառափայլ իշխանուհի ծնունդով Դոլգորուկովա Եկատերինա Միխայլովնա Յուրևսկայայի և մեր երեխաների սեփականությունը»:

«Ես, - ասվում էր կտակի վերջում, - միայն նրան եմ իրավունք տալիս տնօրինելու այդ կապիտալը իմ կենդանության ժամանակ և իմ մահից հետո»:

Նոյեմբերի 9-ին, երբ թագաժառանգ Ալեքսանդրը եկավ Լիվադա, ցարը նրան հանձնարարեց իր մահվան դեպքում խնամել կնոջն ու երեխաներին: Թագաժառանգն երդվեց, որ նրանց միշտ կպաշտպանի: Այս եր-

դումից հետո Ալեքսանդր Երկրորդն իր վերոհիշյալ կտակին կցեց թագաժառանգի անունով գրված նամակը, որտեղ ասվում էր, «Իմ մահվան դեպքում քեզ եմ հանձնում կնոջս ու երեխաներիս... Քանի դեռ մեր ամուսնությունը հայտարարված չէ, պետական բանկում իմ դրած կապիտալը պատկանում է իմ կնոջը... Սա իմ վերջին կամքն է և ես համոզված եմ, որ դու բարեխղճորեն դա կկատարես...»:

Լորիս-Մելիքովից աննկատ չէր մնում իշխանուհու օր օրի վրա աճող ազդեցությունը ցարի վրա: Դա նշանակում էր, որ նա պարտադրված էր նաև հաշվի առնել իշխանուհու շահերն, ամեն կերպ խնամել նրան և, նաև նրա օգնությամբ իրականացնել իր քաղաքականությունը: Սա Լորիս-Մելիքովից պահանջում էր արտակարգ զգուշություն ու վարվեցողություն, քանի որ թագաժառանգն էլ տանել չէր կարողանում իշխանուհուն, որն առանց քաշվելու, այնպես խծկվել էր իրենց ընտանիքի մեջ: Հենց իշխանուհու միջոցով էլ Լորիս-Մելիքովին հաջողվեց ադմիրալ Գրեյգին ազատել տալ ֆինանսների նախարարի պաշտոնից, որն այդ բնագավառից ոչինչ չէր հասկանում: Իսկ այդպիսի նախարարի միջոցով պարզապես անհնար էր լուծել երկրի ֆինանսական դրությունն առողջացնելու խնդիրները: Իհարկե, Լորիս-Մելիքովը չէր մոռացել, թե Գրեյգն ինչպիսի աղմուկ էր բարձրացրել, երբ ժանտախտով բռնկված նահանգներից ուղարկած զեկուցագրում դրել էր աղի հարկը վերացնելու անհրաժեշտությունը: Իսկ հիմա Լորիս-Մելիքովն առաջարկում էր վերացնել նաև գլխահարկը: Եվ նրա համար պարզ էր, որ Գրեյգի գոյության պայմաններում անհնար է իրագործել այդ ամենը: Ահա, այստեղ էլ նրան օգնեց իշխանուհի Յուրևսկայան: Լորիս-Մելիքովի ներկայացմամբ Ալեքսանդր Երկրորդը ֆինանսների նախարար նշանակեց Ալեքսանդր Աբազային:

Կանաչ ճանապարհ Սերգեյ Վիտտեի համար

Լորիս-Մելիքովը մեծ նշանակություն էր տալիս երկաթուղային շինարարությանն, այն դիտելով երկրի տնտեսական զարգացման կարևոր խթաններից մեկը: Այս կապակցությամբ էլ նա մի քանի անգամ հանդիպեց հաղորդակցության ճանապարհների նախարար ադմիրալ Կ. Պոսետի հետ: Պարզվեց, որ ադմիրալը համարյա թե գաղափար չուներ իր ղեկավարած բնագավառից:

Շուտով հարավ-արևմտյան երկաթուղու վարչությունից ստացվեց երիտասարդ ինժեներ Սերգեյ Վիտտեի կազմած կանոնադրության նախագիծը: Ծանոթանալով այդ փաստաթղթին, Լորիս-Մելիքովը նրա հեղինակի մեջ տեսավ այն գործիչին, որն ընդունակ կլինի առաջ տանել Ռուսաստանում երկաթուղու զարգացումը:

Վիտտեն հրավիրվեց մայրաքաղաք: Լորիս-Մելիքովը գոհ մնաց նրա հետ զրույցից: Ճիշտ է, գլխավոր պետին չհաջողվեց նախարարի պաշտոնից հանել Պոսետին, բայց կարողացավ ընդունել տալ Վիտտեի կազմած կանոնադրությունը և դրանով կանաչ ճանապարհ բացեց Ռուսաստանի ապագա խոշոր պետական գործիչներից մեկի առջև:

Լորիս-Մելիքովի հետ իր հանդիպման մասին Ս. Վիտտեն հետագայում պատմել է հանգամանորեն:

Լորիս-Մելիքովից հանկարծ ստացված հեռագրի համաձայն նա անհապաղ մեկնում է Պետերբուրգ: Հանդիպման ժամանակ Լորիս-Մելիքովը հարցնում է.

- Ասա, խնդրեմ, հոգյակս, դո՞ւ ես կազմել կանոնադրությունը:

- Այո:

- Իսկ ասա ինձ ազնվաբար, ինչպես ես դու մտածում, այս կանոնադրությամբ պե՞տք է, որ այդ խորհրդի ստեղծելը անցնի, թե՞ հարկավոր չէ: Ահա, հաղորդակցության նախարար Պոսետն էլ դեմ է այդ խորհրդին: Ասա, ինձ ազնվորեն, ինչպե՞ս ես մտածում, պե՞տք է անցկացնել խորհուրդը:

Վիտտեն Լորիս-Մելիքովի հարցին հանգամանորեն պատասխանելով, ասում է. Եթե նախարարը գիտե այդ գործը, ապա խորհուրդը կարող է արգելակել նրա գործողությունները: Բայց ամբողջ ցավն էլ նրանում է, որ երկաթուղու գոյության ընթացքում դեռևս չի եղել գործն հասկացող ու հեղինակավոր նախարար:

- Այսպիսի պայմաններում, - ավարտելով իր բացատրությունն, ասաց Վիտտեն, - իհարկե, լավ է կառավարել կոլեգիալ կարգով, այսինքն երկաթուղային գործերով խորհրդի միջոցով, քան հաղորդակցության ճանապարհների նախարարի միջոցով:

Լորիս-Մելիքովին դուր եկան Վիտտեի փաստարկները և նրա ջանքերով ի վերջո պետական խորհուրդը հաստատեց կանոնադրությունը, որը դարձավ երկաթուղու գործունեությունը կանոնավորող օրենք:

Այդ ժամանակից էլ Ս. Վիտտեի առջև Լորիս-Մելիքովի բացած ճանապարհը նրա հետագա կյանքում բախտորոշ դեր խաղաց:

Լորիս-Մելիքովն այն պետական գործիչներից էր, որ հասկանում էր երկաթուղու նշանակությունը Ռուսաստանի տնտեսության զարգացման համար: Ավելին, նա երկաթուղու շինարարությանը վերաբերում էր ավելի լայն իմաստով, դրա մեջ տեսնելով նաև ռազմա-ստրատեգիական խնդիրների լուծման հնարավորությունը:

Հենց այս էլ նկատի ունենալով 1880 թ. օգոստոսի 31-ին նախարարների կոմիտե մտցրեց դեպի Տյումեն տանող երկաթուղի կառուցելու առաջարկությունը, նախապես համաձայնեցնելով Ալեքսանդր Երկրորդի հետ ու այդ մասին տեղեկացնելով մամուլի միջոցներին:

Առաջադիմական մամուլը եռանդով ողջունեց Տյումենի երկաթուղու կառուցան սկիզբն, այդ գործում նշելով Լորիս-Մելիքովի դերը:

Նախաձեռնելով երկաթուղու շինարարությունը, Լորիս-Մելիքովը միաժամանակ նախարարների կոմիտեում պնդում էր, որ երկաթուղու կառուցման համար հարկավոր էր անպայման ճանապարհի ուղղության մասին ունենալ զեմստվոների տեսակետը:

Նախարարների կոմիտեում այդ առաջարկության դեմ հանդես եկավ Պ. Վալուևը, գտնելով, թե դրանով կվնասվի կառավարության հեղինակությունը: Սակայն նրան պաշտպանող չեղավ, քանի որ, «ըստ երևույթին, - ինչպես գրում է Վալուևը,- կիսադիկտատորը շահել էր նրանց վստահությունը»:

Իհարկե, Վալուևին չհաջողվեց ձախողել Լորիս-Մելիքովի ծրագիրը:

Երկաթուղու շինարարությունը պահանջում էր ունենալ համապատասխան մասնագետներ: Այս հարցում էլ Լորիս-Մելիքովը դրսևորեց վճռականություն: Նա հրամայեց շինարարական ուսումնարաններում նախատեսվածից ավելի շատ մարդ ընդունել, ասելով. «Եթե միջոցներ չկան, ես կտամ, եթե գծագրանոցում նեղվածք է, ես կտեղաշարժեմ պատերը»:

Հիշելով Լորիս-Մելիքովի այս վերաբերմունքը, Վալուևը թունոտ նկատում է, թե «ինչ կարող են ասել մյուս նախարարները, որոնց ուսումնական հաստատություններ են ենթակա» և Լորիս-Մելիքովին անվանելով «մեծ վեզիր», կասկածանք հայտնում նրա ծեռնարկումների օրինականության վերաբերյալ:

«Նամակներ Ռուսաստանի ժամանակակից վիճակի մասին...»

Ճիշտ է, Լորիս-Մելիքովի մշակած ծրագիրը նրա կարճատև կառավարման պատճառով հնարավոր չեղավ ամբողջապես իրականացնել, բայց դրա ոգին, ուղղությունն, այնուամենայնիվ, լիակատար կերպով սահմանվեց: Այդ ծրագրի ընդհանուր գաղափարը որոշ չափով բացահայտել է Կովկասում Լորիս-Մելիքովի հետ ծառայած, նրա մերձավոր օգնական գեներալ Ֆադեևը «Նամակներ Ռուսաստանի ժամանակակից վիճակի մասին» գրքում: Ֆադեևը պարզաբանում էր այն վերափոխիչ ուղին, որով պետք է անցներ Ռուսաստանը: Այս առումով էլ, պատմական իմաստով նրա համար անչափ կարևոր էր պարզել այդ ժամանակվա ամենազոր պետական գործչի համակրական վերաբերմունքն իր՝ Ֆադեևի կողմից ձևակերպած հայացքների նկատմամբ:

Ծանոթանալով Ֆադեևի գրքի բովանդակությանը, Լորիս-Մելիքովը ցարից իրավունք խնդրեց գիրքն արտասահմանում տպագրելու և Ռուսաստան բերելու մասին: Այդ կապակցությամբ ցարին ներկայացրած զեկուցագրում նա շարադրել է գրքում արտահայտված հայացքների էությունը:

«Մեր գլխավոր չարիքը, - գրել է Լորիս-Մելիքովն իր զեկուցագրում, - հանգում է նրան, որ վերջին երկու տասնամյակում Ռուսաստանում ձևավորվել է կառավարության ու հպատակների միջև ինչ որ միջնակա տարածություն, որը տեղ է թողնում ամեն տեսակի հակահասարակական երևույթների համար»: Այս հանգամանքը նշելով, Լորիս-Մելիքովը նկատի ուներ հետևյալը. ճորտերին ազատագրելու մեծ միջոցի հետևանքով այդպիսի միջնակա տարածություն հանդիսացավ իր նախկին նշանակությունից, այն է պետության հենարան ուժից ազնվականության զրկելը, որն որևէ այլ ուժով չփոխարինվեց: «Բյուրոկրատիան, - այնուհետև ընդգծում էր Լորիս-Մելիքովը, - որպես բացառապես մեխանիկական գործիք կարող է հեշտորեն իրականացնել բարձրագույն իշխանության նպատակները հասարակական ուժերի մեծամասնության գերակշիռ բարոյական աջակցությամբ: Այժմ նա իրականացնում է միայն ձևով և ոչ թե միջոցառումների ոգով, ինչի հետևանքով սովորական ընթացիկ գործերից բխող հասարակական երևույթների դեմ կառավարությունը մնում է անբավարար զինված... Միայն զեմստվոն կարող է իշխանության համար դառնալ այնպիսի ուժեղ հենարան, ինչպիսին ոչ վաղուց անցյալում ազնվականությունն էր, իսկ քանի որ ռուս մարդկանց հսկայական մեծամասնությունն անկեղծորեն հավատում է ցարական իշխանությանն, ապա զեմստվոն անմիջականորեն ընկղմված լինելով այդ մեծամասնության մեջ, իրենից ներկայացնում է ամենահուսալի ուժը»:

Ուշադրությամբ ծանոթանալով Լորիս-Մելիքովի զեկուցագրին, Ալեքսանդր երկրորդը հենց կոմսին հանձնարարեց ռազմական նախարար Մելյուտինի և արտաքին գործերի նախարար Գորչակովի հետ քննարկել գեներալ Ֆադեևի գրքի տպագրության հնարավորության խնդիրը: Լորիս-Մելիքովն այդ քննարկմանը մասնակից դարձրեց նաև ներքին գործերի նախարար Մակովին:

Ֆադեևի գրքի տպագրության հարցը քննարկելիս, նախարարներն, ինչպես նշում էր ցարին ուղղված իր երկրորդ զեկուցագրում գերագույն կարգադրիչ հանձնաժողովի գլխավոր պետ Լորիս-Մելիքովը, եկան հետևյալ եզրակացության. «Թեև մտքի ու խոսքի ազատության որոշ ընդարձակումը, հավանաբար, առաջ է քաշվում ժամանակակից պահանջմունքներով, բայց հարկավոր է նկատի ունենալ, որ Ֆադեևի արտահայտած տեսակետների հրապարակային քննարկումը կարող է հասարակության մեջ առաջ բերել կառավարության կողմից ինչ որ նոր միջոցառումների սպասում և դրա համար էլ կդառնա ժամանակին միայն այն դեպքում, եթե հեղինակի հայացքները կընդունվեն որպես համահունչ կառավարության գործողությունների հետ: Մենք /այսինքն գերագույն հանձնաժողովի նախագահն ու նախարարները/ մեզ իրավունք չենք վերապահում կշռադատել այդ հարցը և այն հանձնում ենք ձերդ թագավորական

մեծության հայեցողությանը: Շարադրանքի հիմնական միտքը կարելի է խտացնել երեք դրույթների մեջ.

1. Թագավորական տան ավանդույթներին նվիրվածությունն ու զարգացումը որպես վերջնական նպատակ:

2. Համաժողովրդական տնտեսության անհետաձգելի խնդիրների քննարկում, դրանք զեմստվոների և տեղական կառավարման միջոցառումների հետ համապատասխանեցնելու նպատակով:

3. Պահապան հասարակական ուժերի համախմբում մի ամբողջության մեջ, որպես կառավարության նախկին հենարանին փոխարինող նոր ուժ»:

Ահա, այսպիսին էին այն ուղղությունների իմաստն, որոնց հրապարակումը Լորիս-Մելիքովն ու նախարարները հնարավոր էին համարում միայն այն դեպքում, եթե այդ հայացքները կհամապատասխանեին կառավարության գործողություններին:

Ցարը համաձայնվեց առաջարկությանը և Ֆադեևի գիրքը տպագրվեց Եվրոպայում ու բերվեց Ռուսաստան:

Անրադառնալով գեներալ Ֆադեևի գրքի հրատարակման խնդրին, ռուսական լիբերալ-առաջադիմական մամուլն ընդգծում էր, որ հասարակության վերափոխման գաղափարն, որի արտահայտիչն եղավ Լորիս-Մելիքովը, կառավարության վերացմանն ուղղված նրա կամայական հնարանքը չէր, այլ դա այն գաղափարն էր, որից սկիզբ էին առել գյուղացիների ազատագրումը, բյուրոկրատիայից ազատ զեմստվոյական հիմնարկությունները և դատական իշխանության ինքնուրույնությունը: Եվ այդ գաղափարն, ինչպես 1860-ական թվականներին, այնպես էլ 1880 թվականին հասարակության մեջ բերեց աշխուժություն, նրա առջև դրեց վառ նպատակ և դրան հասնելու համերաշխ աշխատելու կոչ արեց:

Լորիս-Մելիքովը զարմացնում է շատերին

1880թ. հուլիսի 26-ին Լորիս-Մելիքովն Ալեքսանդր Երկրորդին առաջարկություն ներկայացրեց գերագույն կարգադրիչ հանձնաժողովը վերացնելու մասին: Նա գտնում էր, որ արդեն ժամանակն է անցնել օրինական կարգին, քանի որ արտակարգ միջոցներն արդեն սպառել են իրենց: Միաժամանակ Լորիս-Մելիքովն առաջարկեց վերացնել բոլորի համար ատելի 3-րդ բաժանմունքը, նպատակահարմար գտնելով բոլոր պատժիչ օղակները կենտրոնացնել մի տեղում՝ ոստիկանության դեպարտամենտում, որը ստեղծվելու էր ներքին գործերի նախարարության համակարգում:

Ինչպե՞ս ընդունվեց Լորիս-Մելիքովի առաջարկությունը: Այս հարցի պատասխանը ստանալուն օգնում են Պ. Վալուևի օրագրային գրառումները, որոնց հեղինակը, գնալով ավելի խոր ատելությամբ էր լցվում Միխայիլ Տարիելովիչի նկատմամբ:

Հուլիսի 22-ին Վալուևը գրում էր, թե Լորիս-Մելիքովն այժմ ճշտապես չգիտի, թե ինչ է ուզում և միայն խորհում է իր անձնական դրությունն ամրապնդելու եղանակի մասին և վերջ տալ գերագույն հանձնաժողովին: «Նա, - շարունակում է Վալուևը, - գիտակցում է, որ բոլոր ուղղություններով լինել մեկ անգամից Ռուսաստանի նոր վերափոխիչ, չի կարելի, թեև շատ բնորոշ արտահայտվել էր, թե ինքն ունի այդպիսի «մակագրություններ» իր զեկուցագրերի ու գրությունների վրա, որ եթե ինքը դրանցից ուզեներ օգտվել, ապա պետական խորհուրդն ու նախարարների կոմիտեն սատանայի գիրկը կուղարկվեին»:

Վալուևն առանձնապես դժգոհում էր, որ Լորիս-Մելիքովի վրա հատկապես մեծ գերագույն հանձնաժողովի անդամ Կովալևսկու ազդեցությունը, որի խորհուրդներն Ա. Կոնիի վկայությամբ կոմսը բարձր է գնահատում:

Հուլիսի 23-ին Վալուևը գրում էր. «Կոմս Լորիս-Մելիքովի շուրջ ավելի ու ավելի է կենտրոնանում դավադրության նման ինչ որ բան ընդդեմ կանոնավոր օրենսդրական ու վարչակարգի դեմ»:

Վալուևն, որը Լորիս-Մելիքովին թունոտ կերպով անվանում էր «Միշել-ի», հուլիսի 24-ին գրում էր թե «Միշել- ի»-ն, այսինքն կոմս Լորիս-Մելիքովը ցանկանում է 3-րդ բաժանմունքը միացնել ներքին գործերի նախարարությանը, Մակովին նետելով փոստն ու հեռագիրը...»:

Թագավորին ներկայացրած զեկուցագրի մասին Լորիս-Մելիքովը հարկ համարեց հուլիսի 31-ին տեղյակ պահել թագաժառանգին: Այս կապակցությամբ 1880 թ. օգոստոսի 3-ին թագաժառանգ Ալեքսանդրը Լորիս-Մելիքովին գրած նամակում հայտնելով, որ ծանոթացել է կոմսի զեկուցագրին, գրում է. «Ես ամբողջովին բաժանում եմ ձեր հայացքը գերագույն հանձնաժողովի հետագա գոյությունը շարունակելն անհնար լինելու վերաբերյալ այն տեսքով, ինչպիսին, որ նա եղել է մինչև հիմա: Ինչն ինձ հատկապես ուրախացրել է, դա այն է, որ նամակի վերջում դուք գրում եք, թե թագավորը հրամայել է Վալուևին նախապատրաստել հրամանագրի նախագիծ ձեր հուլիսի 26-ի զեկուցագրի բովանդակության համապատասխան»:

1880 թ. օգոստոսի 6-ին ցարը ստորագրեց Լորիս-Մելիքովի ներկայացրած զեկուցագրի հիման վրա կազմված հրամանագիրը: Հրամանագրի սկզբում հիշատակվում էին գերագույն կարգադրիչ հանձնաժողովի ստեղծման շարժառիթներն, որով գլխավոր պետ «պետական խորհրդի անդամ, մեր գեներալ-թիկնապահ, հեծելազորի գեներալ կոմս Լորիս-Մելիքովին տրվել էին արտակարգ իրավունքներ»:

Այնուհետև ցարի հրամանագրում ասվում էր հետևյալը. «Գերագույն կարգադրիչ հանձնաժողովի ստեղծման օրից հետևելով նրա գլխավոր պետի միջոցառումներին, մենք համոզվեցինք, որ հանձնաժողովի մոտակա նպատակը՝ հանցավորության դեմ պայքարելու համար բոլոր իշխա-

նությունների գործողությունների միավորումը մեր կարգադրության համաձայն ամբողջապես իրականացվել է գեներալ-թիկնապահ կոմս Լորիս-Մելիքովի կողմից»: Ուստի այդ ամենը նկատի ունենալով ցարի հրամանով հայտարարվում էր.

1. Փակել գերագույն կարգադրիչ հանձնաժողովը և նրա գործերը հանձնել ներքին գործերի նախարարությանը:

2. Մեր գրասենյակի 3-րդ բաժանմունքը վերացնել, նրա գործերը հանձնելով ներքին գործերի նախարարի տնօրինությանը, կազմելով ներքին գործերի համակարգում պետական ոստիկանության դեպարտամենտ:

3. Ժանդարմերիայի կորպուսի կառավարումը դնել ներքին գործերի նախարարի վրա՝ ժանդարմերիայի շեֆի իրավունքով:

4. Ներքին գործերի նախարարին՝ ավարտել գերագույն կարգադրիչ հանձնաժողովի սկսած գործերը:

5. Գեներալ-ադյուտանտներին և մյուս հիմնարկություններին ու պաշտոնյաներին՝ այն դեպքերում, երբ նրանք փետրվարի 12-ի հրամանի համաձայն դիմում էին գերագույն կարգադրիչ հանձնաժողովի գլխավոր պետին, այսուհետև վերաբերում են ներքին գործերի նախարարին:

Գերագույն կարգադրիչ հանձնաժողովի վերացման կապակցությամբ ազդեցիկ «Գոլոս» թերթը 1880 թ. օգոստոսի 218րդ համարում ընդգծելով երկրի ներքին կյանքում կատարված փոփոխությունների մեջ գերագույն կարգադրիչ հանձնաժողովի նախկին պետի ունեցած գլխավոր ծառայությունը, գրում էր. «Երբեք չեն մոռանա իրենց ընտանիքներ ու դպրոցներ վերադարձած իրենց հրապուրանքի համար դաժանորեն հատուցած հազարավոր պատանիներ նրան, ում պարտական են աքսորից իրենց վերադարձի, խիստ պատիժը մեղմելու, կրթությունն ավարտելու հնարավորության, բարի քաղաքացիներ դառնալու համար: Երբեք չեն մոռանա երեխաներին կորցրած և նորից նրանց տեսած հայրերն ու մայրերը, չի մոռանա և ամբողջ ռուսական հասարակությունը՝ թե այդ տխուր ժամանակ վարչական միջոցառումների գործում ով է եղել մարդասիրության ոգին ու իրականացնողը, ով է բոլոր ջանքերը գործադրել, որպեսզի ջոկվեն արդարը մեղավորից, րոպեական հրապուրանքի զոհը հանցագործից»:

Լորիս-Մելիքովն, ինչպես տեսանք, հասավ նաև 3-րդ բաժանմունքի վերացմանը: «Ռուսկայա միսլ» ամսագիրը 1880 թ. օգոստոսին գրում էր, որ «3-րդ բաժանմունքի վերացումը ցույց է տալիս, որ այժմվանից դատապարտված է իր էությամբ վարչական կամայականությունը և ամեն մի ազնիվ քաղաքացու անձնական անվտանգությունը դառնում է անձեռնմխելի»:

Ժամանակի մամուլի մեծ մասը նշում էր,որ 3-րդ բաժանմունքն է ստեղծել քաղաքական հանցագործներին, որոնցից էլ աճել են հեղափոխականները: Բնական զարգացման կասեցումը, օրինականության ան-

տեսումն, ազատամիտ քաղաքացիներին վիրավորելն ու հետապնդելը պետք է, որ ծնեին չարություն: «Նիհիլիզմն,- ընդգծում էր մամուլը, - երրորդ բաժանմունքի և նրա հետ կապված համակարգի զավակն է, նրա արտացոլումը»: 3-րդ բաժանմունքի վերացման կապակցությամբ մամուլը նորից հիշեցնում էր դրա պետ Բենկենդորֆի և բանաստեղծ Պուշկինի հարաբերությունները...

Առաջադիմական մամուլը հույս էր հայտնում, որ «Լորիս-Մելիքովին կհաջողվի իր սկսած գործը շարունակել և այն չի մնա թղթի վրա, ինչպես թուրքական սահմանադրությունը»:

Լորիս-Մելիքովը կատարեց քաղաքացիական ու բարոյական արիություն՝ կամավոր կերպով հրաժարվելով դիկտատորի լիազորություններից, որին եվրոպական լրագրողներն անվանում էին փոխ-միապետ: Իր այս քայլով Միխայիլ Տարիելովիչը զարմացրեց շատերին: Որևէ մեկը, եթե նրա փոխարեն լիներ, չէր հրաժարվի իրեն պատկանող բացառիկ լիազորություններով իշխանությունից և դառնար սովորական նախարարներից մեկը: Շատերն այս առիթով հիշում էին ամենազոր Արակչեևին, որի մասին նշանավոր պատմաբան Վ. Օ. Կլյուչևսկին տվել է հետևյալ գնահատականն. «Արակչեևը ծգտում էր Ռուսաստանը դարձնել զորանոց և դառնն էլ կանգնեցնել ֆելդֆեբելի»:

Լորիս-Մելիքովին համեմատում էին Արակչեևի հետ և ընդգծում կոմսի մարդկային ու քաղաքացիական արժանիքները, նրա պետական մտածողությունը:

Պ. Վալուևը դժգոհելով, որ հասարակությունն ուրախացել է 3-րդ բաժանմունքի վերացմամբ, որ թերթերը գովասանքի հիմն են երգում Լորիս-Մելիքովին այն բանի համար, որն ինքը՝ «դիկտատորն է վերացրել դիկտատուրան», 1880 թ. օգոստոսի 14-ին գրում էր. «Ինձ թվում է, նայելով այն բանին, ինչ կատարվում է իմ աչքերի առջև, ես տեսնում եմ պատմական դրամայի ներկայացում, այսինքն կիսաճշմարիտ, կիսահնարած, բայց ոչ իսկական իրադարձություն: Կլինի միայն դեկորացիայի փոփոխություն»:

Ալեքսանդր երկրորդը Լորիս-Մելիքովին նշանակեց ներքին գործերի նախարար և միաժամանակ ժանդարմերիայի շեֆ: Մակովին չնեղացնելու համար ցարը նրան նշանակեց փոստի և հեռագրի դեպարտամենտի նախարար, պահելով նրա բոլոր արտոնությունները: Բայց Մակովն այն անձնացից չէր, որ համակերպվեր իրողության հետ: Նա Լորիս-Մելիքովի նկատմամբ լցվեց անասելի ատելությամբ ու իր նշանակած մարդկանց միջոցով սկսեց գաղտնի պերլուստրացիայի ենթարկել ներքին գործերի նախարարի գաղտնի գրություններն ու մասնավոր նամակները:

Մակովին հաջողվեց շահել իշխանուհի Յուրևսկայայի վստահությունն, որի միջոցով էլ նա ցարի մոտ վերականգնեց իր նկատմամբ երբևիցե եղած բարեհաճ վերաբերմունքը:

1880 թվականի սենատորական ստուգումներ

Դառնալով ներքին գործերի նախարար, Լորիս-Մելիքովն անմիջապես անցավ գործի: Միխայիլ Տարիելովիչը գիտակցում էր իր վրա դրված բարձր պատասխանատվությունը: Այն ժամանակվա պայմաններում ներքին գործերի նախարարն ուներ նաև կառավարության ղեկավարի ֆունկցիա: Բոլոր կարևոր գործերում առաջնահերթ նշանակություն ուներ Լորիս-Մելիքովի խոսքն ու կարծիքը:

Ներքին գործերի նոր նախարարի առաջին գործն եղավ նահանգներում ստուգումներ կազմակերպելը: Նա շատ լավ գիտեր տեղերում տիրող իրավիճակը, գիտեր, որ նահանգապետներից շատերը թունդ կաշառակերներ էին և իրենց շահի համար ոտնահարում էին ամեն կարգի օրենք: Իհարկե, նախկինում էլ էին եղել ստուգումներ: Եվ բոլորն արդեն ընտելացել էին՝ կաղմկեն ստուգումների շուրջ և ամեն ինչ կմոռացվի, ամեն ինչ կմնա առաջվա նման:

1880 թ. օգոստոսի 11-ին Լորիս-Մելիքովը ցարին հանձնած զեկուցագրում ներկայացնելով սենատորական ստուգումների անհրաժեշտությունը, գրում էր. «Պետական կարգը և հասարակական հանգստությունն ամրապնդելու միջոցները հետազոտելով ես եկա այն համոզման, որ կայսրության տարբեր գոտիներում գտնվող որոշ նահանգներում սենատորական ստուգումների նշանակումը կլիներ շատ օգտակար միջոցառում: Բացի այն օգուտներից, որոնք միշտ ներկայացնում են տեղական հիմնարկությունների ստուգումներն, այդ ստուգումները կատարող անձանց հաջող ընտրությամբ կծառայեն տարատեսակ հարցերի պարզաբանմանը...Այդ հարցերի թվին են պատկանում. դեռևս վաթսունական թվականների սկզբին ծերդ մեծության կողմից հանձնարարված ժամանակի պահանջներին համապատասխան նահանգային վարչական հիմնարկների վերակառուցումը, ոստիկանական իշխանությունն ամուր միավորելու միջոցները, սոցիալ-հեղափոխական պրոպագանդայի տարածման չափ պարզելը, վարչական աքսորի ազդեցության ուսումնասիրումը և այլն»:

Այնուհետև Լորիս-Մելիքովը խնդրում էր իրեն, որպես ներքին գործերի նախարարի, իրավունք տալ.

«1. Ստուգել կայսրության տարբեր գոտիներում գտնվող այն նահանգները, որոնցում այդ ստուգումներն առավելապես օգտակար կլինեն:

2. Արդարադատության նախարարության հետ միասին նշանակել ստուգում կատարող սենատորների:

3. Արդարադատության նախարարության հետ միասին կազմել ստուգումների հրահանգ»:

Նույն օրն էլ, օգոստոսի 11-ին Ալեքսանդր երկրորդը համաձայնվեց Լորիս-Մելիքովի բոլոր առաջարկություններին:

Այսպիսով, ստուգումների մեջ վճռականորեն տրամադրված Լորիս-Մելիքովն ամենից առաջ տեղերում իրավիճակի ուսումնասիրմամբ նպատակ ուներ կյանքի կոչել պետության կառավարմանն ու ժողովրդական կյանքին վերաբերող իր մշակած արմատական ծրագրերը:

Թե ներքին գործերի նախարարն որքան լուրջ էր վերաբերում ստուգումներին, ցույց է տալիս դրանց կատարման համար ընտրված սենատորների կազմը, որոնք աչքի էին ընկնում գործին տիրապետելով, պետական մտածողությամբ և գիտակցում էին, թե նախարարն իրենցից ինչ սպասելիքներ ունի: Իսկ նախարարի պահանջը մեկն էր՝ անաչառ ստուգմամբ բացահայտել թերությունները և, եթե հնարավոր է տեղում վերացնել դրանք ու ներկայացնել օբյեկտիվ իրավիճակն առանց նայելու նահանգապետի ծառայությանն ու նրա անձին:

Սենատորական ստուգումների հրահանգը

Ցարի համաձայնությամբ Լորիս-Մելիքովն որոշեց անցկացնել Կազանի, Կոստրոմայի, Վորոնեժի, Տամբովի, Կիևի, Չերնիգովի, Սարատովի և Սամարայի նահանգներում:

Հրահանգի համաձայն ստուգումների ընթացքում ուշադրություն էին դարձվելու բազմաթիվ հարցերի վրա: Նշենք դրանցից մի քանիսը:

-Ինչպես կառավարական միջավայրում, այնպես էլ հասարակության մեջ Ռուսաստանում սոցիալ-հեղափոխական կեղծ ուսմունքների տարածման, ինչպես նաև հասարակական ու ժողովրդական կյանքի վրա դրանց գոյություն ունեցող ազդեցությունը:

Հատուկ ուշադրություն դարձնել տեղական կյանքի այն երևույթներին, որոնք կապ ունեն ինչպես կեղծ ուսմունքների տարածման, այնպես էլ դրանց պատճառների հետ: Միաժամանակ ցույց տալ, ըստ հնարավորության, թե ինչպիսի միջոցներ կարող են նպաստել սոցիալիստական կեղծ ուսմունքների ազդեցության թուլացմանը:

- Մտքերի վրա ինչպիսի ազդեցություն է ունեցել և ունի վարչական աքսորի համակարգն ընդհանրապես ու հատկապես քաղաքական առումով անբարեհույս անձանց վրա և այդ համակարգը որևէ փոփոխության կարիք ունի՞, ընդորում ուշադրություն դարձնել հսկողության տակ գտնվողների ներկա վիճակի վրա:

- Ուսումնասիրել գյուղական բնակչության տրամադրությունը, վերջին շրջանում եղած հուզումներն ի՞նչի հետևանքով են առաջացել և ի՞նչ միջոցներով են դադարեցվել: Ուշադրություն դարձնել, թե արդյո՞ք գյուղացիների մոտ չեն երևացել սպասումներ ու խոսակցություններ հողի նոր

բաժանման, այսպես կոչված «սև վերաբաժանման» մասին, ընդորում, պարզել, թե ինչը կարող է նպաստել այդ կեղծ դատողությունների դադարեցմանը և գյուղացիների մտքերի հանդարտացմանը:

- Ըստ հնարավորության, տեղեկություններ հավաքել տեղական բնակչության տնտեսական վիճակի մասին, ցույց տալ որոշ տեղերում նկատվող ժողովրդական բարեկեցության անկման պատճառները, նշել դրանց հետևանքների վերացման միջոցների հնարավորությունը: Դրա հետ միասին ուշադրություն դարձնել նախկին կալվածատիրական և պետական գյուղացիների տնտեսական վիճակի մեջ գոյություն ունեցող տարբերությունը:

- Ուշադրություն դարձնել զեմստվոյական հիմնարկների գործունեության արդյունքներին, խորանալ դրանց թերությունների մեջ և գտնել այնպիսի միջոցներ, որոնք կկարողանային աշխուժացնել դրանց գործունեությունը և բերել համապատասխան վիճակի: Այս հարցի ուսումնասիրումը պահանջում է ամենայն ուշադրությամբ բացահայտել զեմստվոյական հիմնարկների ինչպես բավարար կազմի ավել կամ պակաս լինելու պատճառները, այնպես էլ զեմստվոյական գործունեության հաջողություններն ու անհաջողությունները նրա բոլոր բնագավառներում: Դրանք վերաբերում են ժողովրդական բարեկեցության համար կարևոր ժողովրդական սննդամթերքին, ժողովրդական առողջապահությանը, ժողովրդական կրթությանը, գյուղերի բարեկարգմանը և դրանցից յուրաքանչյուրում ցանկալի է հետևել, թե ինչ է արվել: Եթե բավարար չէ, սխալ է, ապա ինչո՞ւ և ինչպե՞ս օգնել:

- Պարզել, արդյո՞ք աղի վրա դրված ակցիզային հարկն է պատճառը, որ խոչընդոտում է անասունների կերակրմանը և հնարավոր է սպասել աղի նշանակալի էժանացում, ակցիզից այն ազատելու դեպքում:

-Ուշադրություն դարձնել արհեստավորների, ֆաբրիկային և գործարանային բնակչության դրությանը, պարզել, թե բանվորների տարիքը, ցերեկային և գիշերային աշխատաժամի տևողությունն որոշելու օրենքները որքանո՞վ են անհրաժեշտ:

- Պարզել, թե ստուգվող նահանգներում մասնագիտական ուսումնական հաստատությունների անբավարարության պատճառով չի՞ զգացվում տեխնիկների պահանջ և արդյո՞ք չի նկատվում, որ մյուս կողմից էլ տեխնիկական հաստատությունների դասընթացն ավարտած անձինք որևէ պատճառով չեն գտել իրենց համար համապատասխան զբաղմունք:

- Ցույց տալ, թե որքանով է անձնագրային համակարգն արգելակում աշխատանքի կարիք ունեցող բնակչության տեղաշարժին և անձնագիր հանձնելու դեպքում որքան մեծ են չարաշահումներն ու շորթումները:

Հրահանգում ասվում էր նաև հետևյալը. «Ներկա ժամանակաշրջանում զեմստվոյական գործունեության գոյություն ունեցող անհաջողություննե-

րի պատճառները գլխավորապես վերաբերում են՝ որակական առումով զեմստվոյական հիմնարկների ամբավարար կազմին, զեմստվոյի նկատմամբ կառավարական անձանց և հիմնարկությունների ոչ համակրական վերաբերմունքին, զեմստվոյական հիմնարկների գործունեության սահմանափակ շրջանակին, զեմստվոների ամբավարար միջոցներին...

Ստուգումները կարող են բացահայտել հետևյալը. արդյո՞ք գոյություն ունի տեղական վարչական իշխանությունների կողմից զեմստվոյական հիմնարկների գործունեությունը ջլատելու ձգտում: Հնարավո՞ր է զեմստվոյական հիմնարկների տեղական գործունեության շրջանակներն ընդլայնել տեղական տնտեսական պահանջմունքների վերաբերյալ հարցերի լուծման գործում»:

Հրահանգում կարևորվել էին նաև ժողովրդական կրթության, դատական համակարգի, հաղորդակցության ճանապարհների և մյուս գերատեսչությունների ստուգումները:

1880 թ. սեպտեմբերի 3-ին Լորիս-Մելիքովը թագաժառանգին նամակով խնդրեց նախապես, մինչև հրահանգի նախագիծը թագավորին ներկայացնելը, ծանոթանալ և հայտնել իր կարծիքը: Թագաժառանգը համաձայնվեց, պայմանով, որ նախագծին կծանոթանա Վալուևի, Նաբոկովի և կոմսի ներկայությամբ: Նա նաև ցանկություն հայտնեց հանդիպել սենատորներին ստուգման մեկնելուց առաջ:

Թագաժառանգի մոտ հրահանգի նախագիծը քննարկելուց հետո, Լորիս-Մելիքովը ձեռք բերեց ցարի համաձայնությունը և նրան ներկայացրեց ստուգում կատարող սենատորներին:

Սենատորներին հանձնելով ստուգում կատարելու վերաբերյալ արդեն ցարի կողմից հաստատված հրահանգը, Լորիս-Մելիքովը հասկացնել տվեց, որ նպատակ է հետապնդում բարեփոխումների ուղղությամբ վերսկսել կառավարության գործունեությունը: Ամենից առաջ դա վերաբերում էր գյուղացիների վերջնական ազատագրմանը, հետգնման պարտքերի մարմանը, գլխահարկը եկամտահարկով փոխարինելուն, դեպի Արևմտյան Սիբիր ու Հեռավոր Արևելք գյուղացիների տարերային վերաբնակեցմանը պետական ուղղություն տալուն:

Այսպիսով, Լորիս-Մելիքովն ազդարարում էր, որ շարունակվում են 60-ական թվականներին սկսած, բայց ընդհատված ռեֆորմները:

Ստանձնելով ժանդարմերիայի շեֆի պաշտոնը, Լորիս-Մելիքովը մտադրություն ուներ այստեղ ևս բարեփոխումներ կատարել: Նա ստուգող սենատորներին առաջարկեց ուսումնասիրել ժանդարմերիայի կորպուսը վերացնելու հնարավորությունը, քանի որ դրա պահպանման համար պահանջվում են հսկայական ծախսեր: Այդ ծախսերի ծավալի մասին պատկերացում կազմելու համար Լորիս-Մելիքովը սենատորներին ներկայացրեց հետևյալ հաշվարկը: Ժանդարմերիայի մեկ սպային բաժին է

ընկնում 30 զինվոր, իսկ բանակային մեկ սպային 100 զինվոր: Ժանդարմերիան, այդ քաղաքական ոստիկանությունը, թեև ցարի սիրելի զբաղմունքներից էր, Լորիս-Մելիքովը ձգտում էր նույնպես վերացնել:

Ստուգող սենատորների մոտ Լորիս-Մելիքովը բավական զգուշությամբ արտահայտեց նաև հետևյալ միտքը.

- Ես, իհարկե, ինձ չեմ համարում ընդհանուր զեմստվոյական դումայի կողմնակից, սահմանադրությունն էլ Ռուսաստանի համար մեր երեխաների ու թոռների գործն է, իսկ մեզ հարկավոր է նրանց համար հիմք ստեղծել: Եվ ձեր ստուգումների արդյունքով մայրաքաղաք կհրավիրենք զեմստվոների ու քաղաքների ներկայացուցիչներին, որպեսզի քննարկենք տեղական կառավարման վերաբերյալ օրենսդրական առաջարկությունները:

Իր ծրագրի մասին սա Լորիս-Մելիքովի առաջին անգամ հրապարակավ արված հայտարարությունն էր:

Ծրագրի իրագործման համար հարկավոր է 5-7 տարի

1880 թ. սեպտեմբերի 6-ին Լորիս-Մելիքովը Լիվադայում գտնվող ցարի հետ հանդիպելուց հետո վերադարձավ Պետերբուրգ: Ստուգումների վերաբերյալ հրահանգն արդեն հաստատվել էր և կարելի էր անկաշկանդ գործել: Առաջին հերթին կոմսն անհրաժեշտ համարեց հանդիպել խոշոր թերթերի ու ամսագրերի խմբագիրների հետ: Դա անսովոր քայլ էր իշխանության բարձրագույն դեմքի կողմից: Առաջին անգամ էր, որ բարձրագույն իշխանությունն ի դեմս նրա ամենազդեցիկ ներկայացուցչի, մամուլին բացատրում էր իր մտադրությունների մասին:

- Պարոնայք, - դիմելով խմբագիրներին, ասաց Լորիս-Մելիքովը, ձեզ հրավիրել եմ բացատրելու, որպեսզի հասարակական միտքն անտեղի չհուզեք առաջ մղելով եվրոպական ներկայացուցչական ժողովների նման օրենսդրական և կառավարման գործերին հասարակությանը մասնակից դարձնելու անհրաժեշտության հարցը:

Այնուհետև ներքին գործերի նախարարն ասաց, որ այդպիսի բան նկատի չի առնվում: Իրեն՝ նախարարին հաճելի չէ, որ մամուլն այդ մասին հայտնած հույսերը կապում է իր անվան հետ, թեև ինքը՝ նախարարն այդպիսի լիազորություններ չի ստացել և անձամբ հաստատ համոզված է, որ ներկա ժամանակում անհրաժեշտ է, որ նա իր ամբողջ ուշադրությունն ու աշխատանքը կենտրոնացնի նոր և արդեն գոյություն ունեցող հիմնարկությունների վրա, ինչպես նաև կանոնավորի ու ներդաշնակեցնի դրանց հետ հին կարգը, ձևափոխել դրանք այնքան, որքան որ կպահանջվի այդ նպատակի համար:



Ա.Մ. Գորչակով



Ա.Ա. Սաբուրով



Ա.Ի. Կոշելև



Ս.Յ. Վիտտե



Ս.Տ. Բոտկին



Մ.Պ. Պոգոդին

Այս ներածական խոսքից հետո Լորիս-Մելիքովը շարադրեց իր ծրագիրն, ընդգծելով, որ դրա իրականացման համար կպահանջվի 5-7 տարի: Այդ ծրագրով նախատեսվում էր հետևյալը.

1. Զեմստվոյին, մյուս հասարակական ու դասային հիմնարկություններին հնարավորություն տալ լիակատար օգտվել այն իրավունքներից, որոնք շնորհվել են օրենքով, ձգտելով դրա հետ միասին թեթևացնել նրանց գործունեությունն այն դեպքերում, երբ օրենքով տրված անհրաժեշտ լիազորություններն անբավարար կլինեն գործերը ճիշտ վարելու և տվյալ բնակավայրը տնտեսապես լավացնելու համար:

2. Ոստիկանությունը բերել միասնական համակարգի և ներդաշնակել նոր հիմնարկությունների հետ, որպեսզի նրանում այլևս հնարավոր չլինի օրենքից տարբեր շեղումների դրսևորում, ինչը գոյություն է ունեցել մինչև հիմա:

3. Ծայրամասային հիմնարկություններին տալ մեծ ինքնուրույնություն իրենց ենթակա գործերի լուծման մեջ, որպեսզի նրանք կարիք չունենան երբեմն բոլորովին աննշան հարցերով դիմել Պետերբուրգ և թույլտվություն սպասեն այնտեղից:

4. Իմանալ տարբեր նահանգների բնակչության ցանկությունները, կարիքները, վիճակը, որպեսզի ներքին գործերի նախարարի միջնորդությամբ բարձրագույն նշանակմամբ մի քանի նահանգների սենատորական ստուգումների ժամանակ բացահայտված փաստերի հիման վրա, ըստ հնարավորության, բավարարել բնակչության ցանկություններն ու կարիքները, ընդորում ուշադրություն դարձնելով նաև նրա տնտեսական վիճակին:

5. Մամուլին հնարավորություն տալ քննարկելու կառավարության տարբեր միջոցառումները, որոշումները, կարգադրությունները պայմանով, որ այն անտեղի չհուզի և շփոթեցնի հասարակական միտքն իր երազային պատրանքներով:

Լորիս-Մելիքովի վերոհիշյալ ծրագրի մասին «Օտեչեստվեննիե զապիսկի» ամսագիրը 1880 թ. սեպտեմբերին գրել է. «Ամեն ոք այս ծրագրի մասին կարող է դատել յուրովի. առաջինները կգտնեն շատ անբավարար, մյուսները՝ շատ լայն, բայց ոչ ոք չի կասկածի նրանում, որ նրա մոտ երևում է անկեղծ ցանկություն Ռուսաստանի համար կատարել ինչ որ օգտակար գործ այն սկզբունքների ոգով, որոնք դրված են նոր ռեֆորմների հիմքում: Եթե նոր ռեֆորմների նկատմամբ այսպիսի վերաբերմունքը լիներ դրանց երևալու հենց սկզբից, ապա Ռուսաստանի համար այնքան բանկ ժամանակը չէր ծախսվի նոր գաղափարների դեմ անօգուտ պայքար մղելու, պայքար, որ մղվում էր իրենց սպառած կարգերի և անձնական շահերի համար: Ներքին գործերի նոր նախարարը լավ է անում և այն, որ այդ պաշտոնին անցնելով անհապաղ հայտարարում է իր ծրագիրը:

Ամեն ոք տեսնում է, թե ինչ է նա ուզում, ինչի է ձգտում, հետևաբար ոչ ոք չի խաբվի իր սպասումների մեջ և հետո արդյունքում ոչ ոք նախարարին չի կասկածի խորամանկության ու խուսանավման համար, ինչն, որ հաճախ լինում է:

Մենք, մամուլի ներկայացուցիչներս, ամենից առաջ, իհարկե, կցանկանայինք մամուլի լրիվ ազատություն վարչարարությունից ու հալածանքից և հարցը լուծել միայն հաստատուն օրենքի վրա հիմնված դատարանում: Բայց քանի որ դա, ըստ երևույթին, չի նախատեսվում, ծայրագույն դեպքում պ. նախարարը ոչ մի խոսք չարտահայտեց, որպեսզի նման բանով հնարավոր լինի հուսադրվել, ապա մենք կբավարարվենք այն թեթևացմամբ, որը մամուլին խոստանում է կոմս Լորիս-Մելիքովը, եթե վստահ լինենք, որ նա ներքին գործերի նախարարի պաշտոնն երբեք չի թողնի և, եթե մեզանում գոյություն չունենար ադմինիստրացիայի քմահաճույքին թողնված, միանգամայն անվերահսկելի մամուլի մասին շատ ծանր կանոնադրությունը:

Կոմս Լորիս-Մելիքովն այս կամ ուրիշ անձնական շարժառիթներով կարող է հայտնի ժամանակի ավարտից հետո ցանկանալ թողնել իր պաշտոնը, իսկ մամուլի մասին կանոնադրությունը կմնա: Շատ հնարավոր է, որ հաջորդ նախարարը մամուլի նկատմամբ կունենա այլ հայացք և մամուլին կոմս Լորիս-Մելիքովի տված բոլոր արտոնությունները կանհայտանան իր հեռանալուց հետո: Դրա համար, եթե ներքին գործերի ներկա պ. նախարարը մտադիր չէ մամուլի համար ինչ որ հաստատուն բան անել, նրա համար մշակել նոր կանոնադրություն, ապա ցանկալի կլիներ, ծայրահեղ դեպքում վերանայել հին կանոնադրությունը և դրանից հանվեին այն պարագրաֆներն, որոնք հաճախ ամբողջ ընթացիկ մամուլը վերածում են համատարած ստի գործիքի, ինչպես նաև այն պարագրաֆներն, որոնք մամուլի նկատմամբ պարունակում են խիստ պատժի վտանգ, արգելակելով ընթացիկ մամուլի ճշմարիտ զարգացումն ու գործունեությունը, համարյա անհնարին դարձնում հասարակական, քաղաքական, սոցիալական և այլ հարցերի արծարծումը»:

Լորիս-Մելիքովն իր ծրագրի իրագործման մեջ աննչափ կարևորում էր մտավորականության մասնակցությունը: Նա հաշվի էր առնում, որ կրթությունն ու ինքնագիտակցությունը վաղուց այնքան են մտել հասարակության մեջ, որ այլևս դարձել են անհաղթահարելի: Եվ կառավարության անունից հայտարարում էր, որ ոչ մեկի ձեռնտու չէ իշխանության և ժողովրդական ցանկության, ժողովրդական ինքնագիտակցության արտահայտիչ մտավորականության միջև ստեղծված գժտությունը:

- Ծիծաղելի է, - ասաց Լորիս-Մելիքովը, - երբ հիստերիկ վայնասուն բարձրացնելով, իշխանությանը կոչ են անում պայքարել մտավորականության դեմ: Ռուսաստանը Թուրքիա չէ, որտեղ խելագար դերվիշը կարող է ազդել բարձրագույն իշխանության վրա:

Խմբագիրները կռահեցին, որ կոմսի ակնարկը վերաբերվում է «Մոսկովսկիե վեդեմոստի» թերթին, որը ծգտում էր իր կամքը պարտադրել կառավարությանը:

Խմբագիրների հետ հանդիպումից մեկ ամիս անց, Լորիս-Մելիքովը հրավիրեց խորհրդակցություն, որտեղ առաջարկեց դադարեցնել լիբերալ մամուլի նկատմամբ վարչական հալածանքները: Նրա առաջարկության դեմ հանդես եկավ նախարարների կոմիտեյի նախագահ Վալուևը: Կար վախ քաղաքական «ձնհալի» սկսումից...

Լորիս-Մելիքովը կասարում է իր խոսսումը

Հանդիպման ժամանակ ներքին գործերի նախարարի առջև խմբագիրները դրեցին բազմաթիվ հարցեր, որոնք վերաբերում էին Ռուսաստանի հասարակական կյանքին,նրա զարգացման հեռանկարներին: Ներկաները հատկապես ուշադրությունը սրեցին ապշեցուցիչ չարաշահումների վրա, բերելով բազմաթիվ փաստեր, որոնց համար նրանք իրավացիորեն դնում էին բարձրագույն իշխանության պատասխանատվությունը:

-Կարո՞ղ է կառավարությունը վերջ տալ այդ աղաղակող խայտառակությանը, թալանի երևույթներն առանց լայն ինքնակառավարումը զարգացնելու, առանց մամուլի լիակատար ազատության, - հարցնում էին խմբագրիրները:

Լորիս-Մելիքովն իր բնավորության համաձայն բոլոր հարցերին տալով շիտակ պատասխան, նկատեց.

- Ձեր բերած բոլոր և ուրիշ այլ փաստերի կապակցությամբ պատասխանը մեկն է. երկիրն անկարելի է արդարացի կառավարել բյուրոկրատական, գրասենյակային միջոցներով: Մենք վաղուց զգում ենք մեր կյանքի բոլոր, նույնիսկ աննշան պայմանների վերանայման անհրաժեշտությունը: Հարկավոր է ժողովրդի խղճին տալ ազատություն, այլապես այդ խիղճը կխլացվեն վայրենի նախապաշարումներով ու եսասիրական շահերով:

Ներկաները չէին հավատում իրենց լսածին: Միթե՞ այդ խոսքերի հեղինակը կայսրության երկրորդ դեմքն է, ներքին գործերի նախարարը:

Շրջահայաց Լորիս-Մելիքովի ուշադրությունից չվրիպեցին կասկածանքի այդ նշանները, բայց շարունակեց իր միտքը զարգացնել: Էքսկուրս կատարելով դեպի ոչ շատ հեռու անցյալը, Լորիս-Մելիքովը հիշեցրեց, որ 19-րդ դարի 60-ական թվականների ռեֆորմները նպաստեցին հրապարակախոսության վերելքին: Անսովոր չափով ավելացավ հրապարակախոսությամբ հրապուրվողների թիվը: Նրանցից ոմանց համար մամուլը միակ միջոցն էր կառավարությանն ու հասարակությանը դժգոհություն առաջացնող փաստերը հասցնելու համար: Մյուսները գրական աշ-

խատանքի մեջ որոնում են գոյության միջոցներ, երրորդները՝ հայտնի դառնալու համար:

Գրողի կյանքը, շարունակեց նախարարը, Ռուսաստանում քաղցր չէ: Հրապարակախոսության համար նույնպես քաղցր չէ: Նա հարկադրված է պայքարել տարբեր տեսակի ձախորդությունների դեմ:

Ներկաներից մեկը ողջունելով նախարարի արտահայտած մտքերը, բերեց «Սիբիր» թերթի օրինակը: Այդ թերթի աշխատակիցները հենց հրատարակման առաջին տարվանից, 1875 թ. սկսաց ենթարկվում են հալածանքի, կասկածվում քաղաքական հանցանքի մեջ, ենթարկվել խուզարկության: Տեղական ադմինիստրացիան քանիցս փորձել է փակել թերթը վտանգավոր ուղղություն ունենալու պատռվակով: Նույնիսկ 1879 թ. ձերբակալել են թերթի մի շարք աշխատակիցների, ինչպես նաև երիտասարդ թղթակից գյուղական ուսուցչին:

Ներքին գործերի նախարարը խոստացավ զբաղվել այդ թերթի գործով: Իսկապես, կարճ ժամանակ անց, ծանոթանալով իրավիճակին, Լորիս-Մելիքովը կարգադրեց թերթի ձերբակալված աշխատակիցներին ազատ արձակել...

Իսկ ինչպի՞սին էր ներքին գործերի նախարարի վերաբերմունքը խոսքի ազատության նկատմամբ: Միթե՞ կառավարությունը շարունակելու էր ազատ խոսքը պատժելու քաղաքականությունը: Ե՞րբ վերջապես Ռուսաստանում ազատ խոսքը չի համարվելու վտանգավոր ու չի պատժվելու:

Խմբագիրներին հուզող այս և համանման մյուս հարցերին Լորիս-Մելիքովը տվեց անսպասելի պատասխան: Անսպասելի՝ իր գնահատականով, իր պատկերացումներով և դրանք կյանքի կոչելու իր մտադրությամբ:

«Այդ վտանգն - ասաց նա,- նաև դրա համար պատժելու վտանգի գոյությունը հնարավոր չէ ուղղել վարչական խրատներով, ճիշտ այնպես, ինչպես ճշմարտության ու պատվի կոչերով չես լավացնի հասարակական բարոյականությունը: Մենք չենք ժխտում խոսքի ուժը, քարոզի կամ խրատի նշանակությունը: Մեզ միայն թվում է, որ դրանց տալով լիակատար ազատություն և այդ կերպ նպաստելով նրանց հաջողությանը, կառավարությունը պետք է գործի այլ միջոցներով, նրա ուղղակի դերին համապատասխան: Կառավարությունը կստեղծի այնպիսի հիմնարկություններ, որոնք կնպաստեն մարդկային բնավորության լավ կողմերի զարգացմանը, սնունդ չտան վատ բնազդներին, բարձրացնեն ժողովրդի մտավոր ու բարոյական մակարդակը: Կառավարությունը կվերացնի այդ ճանապարհին եղած արգելքները և կծգտի նրան, որպեսզի յուրաքանչյուրն առանց բացառության գիտակցի ու զգա իր քաղաքացիներին շատ բան տվող և նրանցից շատ պահանջող պետության հետ կենդանի կապը»:

Արդյո՞ք ներքին գործերի նախարարը կկարողանա իրականացնել իր ծրագիրը: Այս հարցն, որը հուզում էր առաջադեմ խմբագիրներին, այդպես էլ մնաց կես ճանապարհին...

Ցարի ձեռից ընկնում է շղթան

1880 թ. օգոստոսի 30-ին Ալեքսանդր Երկրորդն արտակարգ ոգևորությամբ ստորագրեց հրամանագիր, որով Լորիս-Մելիքովը պարգևատրվեց ռուսական կայսրության բարձրագույն շքանշանով: Հանձնելով Լորիս-Մելիքովին «Անդրեյ Նախակարապետի» /«Պերվոզվանննիյ»/ շքանշանը, ցարը հրապարակեց նաև հատուկ շնորհագիր: Կոմսի մատուցած ծառայությունները թվարկելով Ալեքսանդր Երկրորդն ընդգծեց, որ Լորիս-Մելիքովն իր գործունեությամբ նշանակալի կերպով թուլացրել է ժամանակավորապես ընդունված արտակարգ միջոցների գործադրումը և այժմ Ռուսաստանը կարող է նորից մտնել զարգացման խաղաղ ուղի:

Երբ Ալեքսանդր Երկրորդն իրեն մոտեցած Լորիս-Մելիքովի կրծքին կախում էր շքանշանի ոսկե շղթան, դրա օղակներից մեկը հանկարծակի պոկվեց և շղթան ցարի ձեռքից ընկավ հատակին:

Սրահով մեկ անցավ շշուկ, հետո տիրեց քար լռություն...

Այս դեպքին մարտական գեներալն ուշադրություն չդարձրեց, այն համարելով մարդու կյանքում կատարված ծիծաղելի, աննեթեթ դեպքերից մեկը:

Բայց այդ դեպքը չարակամների համար դարձավ բամբասանքի ու բանսարկությունների նոր նյութ:

Լորիս-Մելիքովը գործում էր արագ ու նպատակասլաց: Ձգտում էր, որքան հնարավոր է արագ ավարտել նահանգների ստուգումը և անցնել հաջորդ քայլին:

Իսկ սենատոր-ստուգողները տեղերում հանդիպեցին թե խուլ և, թե բացահայտ դիմադրության: Լորիս-Մելիքովի համառությանը հանդիպելով նահանգապետերից ոմանք գերադասեցին անաղմուկ հեռանալ պաշտոնից:

Լորիս-Մելիքովի դեմ ուղղակի պատերազմ հայտարարեց իր հետադիմական հայացքներով հայտնի Կատկովը, որն օգտվելով Պոբեդոնոսցևի հովանավորությունից, իր թերթի՝ «Մոսկովսկիե վեդեմոստի» էջերը լցրել էր Լորիս-Մելիքովի ձեռնարկումները պախարակող նյութերով:

Լորիս-Մելիքովն Աբազայի հետ միասին կարողացավ վերացնել աղի հարկը, որն անհիշելի ժամանակներից ծանրացած էր գյուղացիության վրա: Փաստն այս, ինքնստինքյան, ողջունելի երևույթ էր: Բայց հետադեմ Կատկովն առանց քաշվելու հարձակվեց ֆինանսների նախարարության վրա, մեղադրելով, թե այդ միջոցով պետական գանձարանին վնաս է հասցվել 13 միլիոն ռուբլի: Հետադեմներն ու չարախնդացողները Լորիս-Մելիքովին ու Աբազային մեղադրում էին, թե նրանք աղի հարկը վերացրել են էժան հեղինակություն ձեռք բերելու համար:

Իսկ Վալուևը պղի հարկի վերացումը համարեց իդեա-ֆիքս: «Բոլորը

գոռում են ֆինանսների լավացման մասին, բայց իրականում կեղծիք է դա», գրում էր Վալուևը

Աղի հարկը վերացնելուց հետո, իսկապես, պակասելու էին պետության եկամուտները: Բայց այստեղ էլ Լորիս-Մելիքովն ու Աբազան գտան ելքը: Նրանք պարզապես աղի հարկը վերացնելու հետ միասին բարձրացրին մաքսային տուրքը, որով փակվեց վնասը: Դա, անշուշտ, միայն ֆինանսական կողմն էր: Մաքսատուրքի բարձրացումը մեծապես օգնեց Ռուսաստանի արդյունաբերողներին իրենց տնտեսական վիճակն ամրապնդելու համար:

«Ինչ մի բացատրեք գների սահմանման կարգը...»

1879-1880 թթ. Ռուսաստանում անբերրիություն էր: Բազմաթիվ նահանգներում սկսվել էր սով: Այդ ժամանակ սկսված համաշխարհային տնտեսական ճգնաժամն իր ոլորտն առավ նաև Ռուսաստանը: Գյուղում սպառնալի չափերի էին հասնում հուզումները:

Օգտվելով ստեղծված վիճակից հացի առևտրականները զգալիորեն բարձրացրին վաճառքի գինը:

Դրության ծայր աստիճանի սրվելը հարկադրեց ներքին գործերի նախարար Լորիս-Մելիքովին կտրուկ միջոցներ ձեռնարկել: Նա 1880թ. նոյեմբերի սկզբին իր մոտ հրավիրեց Ռուսաստանի հացի խոշոր առևտրականներին: Հակիրճ ներկայացնելով ստեղծված իրավիճակը, նախարարն այն մեղմելու նպատակով, որպես առաջին քայլ, խնդրեց առևտրականներին իջեցնել հացի գինը:

Առևտրականներն, ըստ երևույթին, յուրովի հասկացան ներքին գործերի նախարարի խնդրանքը և միաձայն մերժեցին, պնդելով, թե գներն օրենքով չեն սահմանվում ու չեն կարգավորվում: Իրենց մերժումը նրանք պատճառաբանեցին, թե ալյուրը գնում են բարձր գներով, հետևապես մեծ վնաս կկրեն գների իջեցումից:

Առևտրականների պատճառաբանությունները լսելուց հետո, Լորիս-Մելիքովն ասաց

- Պարոններ, ինձ մի բացատրեք գների սահմանման կարգը: Դա ինձ նույնպես հայտնի է: Ուրիշ մեկ այլ ժամանակ ես կողջունեի գների ազատ լինելը: Տեսեք, թե մայրաքաղաքում և ծայրամասերում ինչ է կատարվում: Աճում է դժգոհությունը, սկսվել են գործադուլներ, այնպես որ խնդրում եմ մտածել և օգնել կառավարությանը:

Ներքին գործերի նախարարի խաղաղ տոնով խնդրանքն որևէ նշանակություն չունեցավ: Հացի առևտրականները պնդեցին իրենց տեսակետը:

- Պարոններ, - նորից դիմեց առևտրականներին Լորիս-Մելիքովը, - մինչև հիմա ձեզ հետ խոսում էի որպես ներքին գործերի նախարար, որի

պարտականությունն է հոգալ ժողովրդին սննդամթերքով ապահովելը: Եվ քանի որ դուք չհամաձայնվեցիք ինձ հետ և պնդում եք ձեր կամքն, ապա ես ձեզ հետ այժմ խոսում եմ որպես ժանդարմերիայի շեֆ: Պարտավոր եմ նաև ձեզ հիշեցնել ժանդարմերիայի շեֆի պարտականությունները: Առաջին, բոլոր միջոցներով կանխել ժողովրդական հուզումները: Իսկ այդ հուզումներն անխուսափելի են ձեր կողմից հացի գների բարձրացման պայմաններում:

Լորիս-Մելիքովը մի փոքր դադար տվեց, ըստ երևույթին, նպատակ ունենալով առևտրականներին պահի լրջությունը զգալու հնարավորություն տալ և հետո շարունակեց.

- Եվ երկրորդ, որպես ժանդարմերիայի շեֆ զգուշացնում եմ ձեզ. եթե 24 ժամվա ընթացքում հացի գները չիջեցվեն, ապա դուք, բոլորդ վարչական կարգով կարտաքսվեք մայրաքաղաքից:

Ներքին գործերի նախարարը չէր կատակում: Հացի առևտրականները մոգական գավազանի ուժով մոռացան, որ գները չեն սահմանվում ու կարգավորվում օրենքով և կատարեցին ահեղ նախարարի կամքը...

Այս կապակցությամբ Վալուևը 1880 թ. նոյեմբերի 10-ին կատարել է հետևյալ գրառումը. «Պարենի մասով կոմս Լորիս-Մելիքովի կարգադրությունը պորուչիկի, եթե ոչ կորնետի մակարդակի է: Նա այստեղի գլխավոր հացի առևտրականների հետ խոսել է փաշայի տոնով, ահաբեկել է աքսորով»:

«16-ի» դատավարությունը

«16-ի» դատավարությունը տեղի ունեցավ 1880 թ. հոկտեմբերի 25-31-ին: Լորիս-Մելիքովն, որն ուշադրությամբ հետևում էր դատավարությանը, վճռի արձակումից անմիջապես հետո, հոկտեմբերի 31-ին Լիվադայում գտնվող Ալեքսանդր Երկրորդին իր տեղակալ Չերևինի անունով ուղարկած հեռագրով հայտնեց. «Ռազմա-օկրուգային դատարանը ս. թ. հոկտեմբերի 31-ին վճռել է Կվյատկովսկուն, Շիրևին, Տիխոնովին, Օկլադսկուն և Պրեսնյակովին ենթարկել մահապատժի կախաղանի միջոցով, մյուս 11 դատապարտյալներին ուղարկել տաժանակիր աշխատանքի երկարատև ժամկետով»: Այնուհետև, Լորիս-Մելիքովը նկատի ունենալով, որ դատապարտյալների նկատմամբ միաժամանակ մահապատժի կատարումը կարող է ծանր տպավորություն թողնել «նպաստավոր քաղաքական տրամադրություն ունեցող հասարակության հսկայական մեծամասնության վրա», առաջարկում է մեղմել դատավճիռն, այն իրականացնել միայն երկուսի նկատմամբ, որոնք անմիջականորեն մասնակցել էին Ձմեռային պալատում պայթունի կազմակերպմանը:

Ներկայացնելով դատավճիռը մեղմացնելու մասին իր միջնորդությունը, Լորիս-Մելիքովը հարկ համարեց նշել հետևյալը. «Ինչպես մարդ և ինչպես պետական գործիչ ես պատրաստ եմ միանալ դատապարտվածների վճիռը մեղմացնելուն հիմնավորապես սպասող մեծամասնության կարծիքին, առավելապես, որ դա կհամապատասխաներ իր նշանները ցույց տվող հասարակական հանգստությանը նաև քաղաքական առնչությամբ, բայց մյուս կողմից չեմ կորող չընդունել անխուսափելի նախատինքը դատավճռի մեղմացման համար, թեև դա կարող է ելնել աննշան փոքրամասնությունից: Իմ դժվարությունները խորանում են այն նկատառումով, որ որևէ նոր հանցավոր դրսևորման դեպքում, կիրականացվի այժմ մահապատիժը կամ ոչ, դրա համար հանդիմանություններն անխուսափելիորեն կընկնեն իմ վրա, թեև դրա վճռական կանխման կամ վերացման հնարավորությունն ինձանից կախված չէ: Այսպիսի վիճակում, միայն ինքնակալի իմաստուն փորձառությունը կարող է ցույց տալ ներկա իրավիճակին համապատասխան որոշում»:

Ռուսաստանի կենտրոնական արխիվում Լորիս-Մելիքովի պահպանված փաստաթղթերի մեջ կա վերոհիշյալ հեռագրի կապակցությամբ հետևյալ գրառումը. «Կառավարությունն երբեմն դրվում է մահապատիժին դիմելու անհրաժեշտության առջև: Բայց տվյալ դեպքում կառավարությունը սխալ թույլ տվեց: Կվյատկովսկու և Պրեսնյակովի մահապատիժը բոլորովին չբավարարելով մասսաների ցանկությունը, միայն ոգևորեց ու չարացրեց ահաբեկիչներին: Ժելյաբովն իր ցուցմունքներում չի թաքցրել այդ զգացումը»:

Այնուամենայնիվ, ցարն ընդունեց Լորիս-Մելիքովի միջնորդությունը և ներում շնորհեց երեքին, մահապատիժը փոխարինելով տաժանակիր աշխատանքի, իսկ Կվյատկովսկին ու Պրեսնյակովը մահապատժի ենթարկվեցին...

Լորիս-Մելիքովի ընտանիքի ամենաերջանիկ օրերից մեկը

Կոմս Լորիս-Մելիքովն անմոռաց կերպով կատարում էր պատմության ու ժամանակի կամքով իր վրա դրված պատասխանատվությունը: Նա ուշադրությամբ չէր վերաբերում արդեն սովորական դարձած բանսարկություններին և իր սկզբունքներն էր առաջ տանում:

Բայց Լորիս-Մելիքովների ընտանիքում կար մի մեծ վիշտ, որը կոմսն աշխատում էր ցույց չտալ և դա կնոջ՝ Նինա Իվանովնայի հետ լռությամբ էին տանում:

Ամեն օր, աշխատանքից հոգնած, տուն գալով Լորիս-Մելիքովն, ահա երեք ամիս շարունակաբար նույն հարցն էր տալիս կնոջը.

- Նունե, հոգյակս, գո՞ւցե այսօր ինձ ուրախացնես:

Նունեն չէր պատասխանում և նրա տխրությամբ լցված աչքերը ասում էին ամեն ինչ:

Ահա, երեք ամիս էր, ինչ նրանց կրտսեր աղջիկը՝ Սոֆիան գրկվել էր քայլելու ունակությունից և գամվել էր անկողնուն: Հրավիրվել էին մի քանի նշանավոր բժիշկներ, բայց 18-ամյա աղջիկն ինքնուրույն քայլելու հույս չէր տալիս:

1880 թ. նոյեմբերի 8-ը Լորիս-Մելիքովի համար սովորական օր չէր: Այդ օրը, ցերեկվա ժամը 3-ին նրա բնակարանում էին հավաքվել մերձավոր ընկերներն ու բարեկամները: Եկել էին նաև շատ նախարարներ ու պետական խորհրդի անդամներ: Այստեղ էին նաև Պետերբուրգի նշանավոր հասարակական գործիչներ, թերթերի խմբագիրներ, Պետերբուրգում ապրող երևելի հայրենակիցներ:

Բոլորը եկել էին Միխայիլ Տարիելովիչին շնորհավորելու Կարսի գրավման տարեդարձի կապակցությամբ:

Հյուրերի մեծ մասին հայտնի էր, որ հարևան սենյակում պառկած է կոմսի դուստրը և աշխատում էին որքան հնարավոր է քիչ աղմկել: Նինա Իվանովնան մոտենում էր հյուրերին, հետևում, որ նրանք իրենց լավ զգան, ու հետո հեռանում էր դստեր սենյակ:

Եվ երբ հանդիպման վերջում Լորիս-Մելիքովը շամպայնի բաժակը ձեռքին ուզեց իր շնորհակալությունն հայտնել շնորհավորանքի ջերմ խոսքերի համար, կատարվեց անսպասելին: Ներս մտավ Նինա Իվանովնան, արագ քայլերով մոտեցավ ամուսնուն և հուզված ասաց.

- Սոֆիան քայլում է:

Լորիս-Մելիքովի սրտից կարծես թե ընկավ մի շատ ծանր քար: Նա կնոջ թևը բռնած, շնորհակալական խոսքը կիսատ թողած, շտապեց դստեր ննջարան:

Քիչ անց նա նորից վերադարձավ և շարունակեց իր կիսատ մնացած խոսքը.

- Շնորհակալ եմ, որ այսօր միասին հիշեցինք Կարսի գրավման տարեդածը: Հիմա, այս պահին մեր ընտանիքի համար Աստված պարգևեց նոր հաղթանակ՝աղջիկս քայլում է: Դա ինձ համար երկրորդ Կարսը դարձավ...

Հյուրերը, որ պատրաստվում էին հրաժեշտ տալ, բայց ընդառաջելով Միխայիլ Տարիելովիչի ու Նինա Իվանովնայի խնդրանքին, մնացին՝ կիսելու նրանց մեծ ուրախությունը:

«Հաստատում եմ՝ Ալեքսանդր»

Լորիս-Մելիքովն անխոնջ կերպով աշխատում էր իր մտահղացումները վերջնական տեսքի բերելու վրա: Դրանց շուրջ նա երկար էր մտածել

և, ինչպես ասում են, փորձաքննության էր ենթարկել, առանձին խնդիրներ քննարկելով հասարակական գործիչների, ազդեցիկ թերթերի խմբագիրների, իր համախոհ պետական գործիչների և հատկապես զեմսվոների ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ:

Վերջապես նա ավարտեց իր մտահղացումների մշակումը, որը վերաբերում էր տեղական ինքնակառավարմանը: Լորիս-Մելիքովը հասկանում էր, որ շատերը ոչ միայն կդիմադրեն իր առաջարկած բարեփոխումներին, այլ ամեն ինչ կանեն, առհասարակ, իր քաղաքականությունը վերջնականապես տապալելու համար: Ուստի կոմսին մնում էր շտապել, հասցնել ավարտել, քանի դեռ հակառակորդները չէին համախմբվել: Ահա, այս նպատակով էլ նա սկսեց ստուգող սենատորներին շտապեցնել գործն ավարտելու և մայրաքաղաք վերադառնալու համար: Կոմսը համոզված էր, որ այդ ստուգումները տեղերում ոչ միայն կբացահայտեին տեղական կառավարման մեջ գոյություն ունեցող համակարգի անպետքությունն, այլև դրանք ամուր ու հաստատուն փաստարկ կլինեին իր առաջարկած բարեփոխումների անհրաժեշտության համար:

Այս գործում Լորիս-Մելիքովին հարկ եղավ ձեռք բերել իրեն արդեն կայսրուհի համարող իշխանուհի Յուրևսկայայի աջակցությունը: Բայց իշխանուհու աջակցությունը բավարար չէր: Հարկավոր էր շահել հատկապես Ալեքսանդր Ալեքսանդրովիչի համաձայնությունը: 1881 թ. հունվարի կեսերին Լորիս-Մելիքովը թագաժառանգին ներկայացրեց ցարի անունով կազմված զեկուցագիրը իր առաջարկած բարեփոխումների նախագծի մասին:

1881 թ. հունվարի 21-ին թագաժառանգը հետևյալ երկտողն ուղարկեց Լորիս-Մելիքովին. «Սիրելի կոմս Միխայիլ Տարիելովիչ, կարո՞ղ եք, արդյոք, այսօր, երեկոյան ժամը 9-ին անցնել ինձ մոտ, որպեսզի զրուցենք այն գրության մասին, որն ես կարդացի մեծ հետաքրքրությամբ, բայց անհրաժեշտ է շատ բանի մասին քննարկել: Ձեր Ա...»:

Հանդիպումը տեղի ունեցավ: Թագաժառանգը հիմնականում համաձայնվեց Լորիս-Մելիքովի առաջարկած նախագծի հետ և խնդրեց ցույց տալ նաև Պոբեդոնոսցևին: Բայց դա չէր մտնում Լորիս-Մելիքովի ծրագրած գործողությունների մեջ, քանի որ լիակատար համոզված էր, որ հենց թագաժառանգի ուսուցիչն ու դաստիարակն է իր շուրջը համախմբել առաջարկվող բարեփոխումների բոլոր կատաղի հակառակորդներին: Լորիս-Մելիքովը չկատարեց թագաժառանգի խնդրանքը և իր զեկուցագիրն Ալեքսանդր Երկրորդին հանձնեց 1881 թ. հունվարի 28-ին:

Այդ զեկուցագրի մեջ Լորիս-Մելիքովն առաջարկում էր զգալիորեն իջեցնել գյուղացիների փրկագնի չափը, հրավիրել ներկայացուցչական ժողով, զեմսվոյի ներկայացուցիչներին ընդգրկել պետական խորհրդի կազմի մեջ: Եվ որպեսզի Ալեքսանդր Երկրորդին չխրտնեցներ, Լորիս-Մե-

լիքովը դեմ էր արտահայտվում արևմտաեվրոպական երկրների օրինակով Ռուսաստանում ժողովրդական ներկայացուցիչների ինստիտուտի ստեղծմանը:

Միաժամանակ Լորիս-Մելիքովը ցարին էր ներկայացրել գեներալների կողմից ընտրված ներկայացուցիչների մասնակցությամբ օրենսդիր հանձնաժողով ստեղծելու մասին պաշտոնական հաղորդագրության նախագիծը:

Լորիս-Մելիքովը նպատակ ուներ ընդլայնել և ինքնուրույնություն տալ ինքնակառավարման մարմիններին, որպես խորհրդակցական անդամներ, հասարակությունից ընտրվածներին ընդգրկել օրենսդրական հարցերի քննարկմանը:

Թեև Լորիս-Մելիքովի այս պահանջները բավականաչափ համեստ էին և սահմանափակ, հետադիմական մամուլը չէր դադարում քննադատել ու մեղադրել կոմսին, ամեն կերպ ահաբեկելով ցարական իշխանություններին ապագա հեղափոխության ուրվականով: Ահա, օրինակ «Նովոյե վրեմյա» թերթը 1881 թ. փետրվարի 8-ին գրում էր. «Ֆրանսիական թագավոր Լյուդովիկոս 16-րդի կառավարությունը սկզբում հավաքեց նոտաբլներին. դա նրա առաջին կարևորագույն սխալն էր: Նոտաբլներից սկիզբ առան գլխավոր շտատները, որտեղ միջին դասի ներկայացուցիչները կրկնապատկվեցին: Սա առաջինից բխող երկրորդ սխալն էր: Իսկ հեղափոխությունը դարձավ երրորդ սխալը: Դա արդեն կառավարությունը չէր, այլ ազգային ժողովը: Ժողովրդին չհարցրին և նրա հետ չքննարկեցին: Ով նրանցից ընկավ ազգային ժողով, ոչինչ էր, առանց ձայնի, առանց նշանակության: Ամեն ինչ վերցրեց երրորդ դասը, իսկ ժողովուրդը մինչև այսօր դոփում է տեղում: Հեղափոխությունը նրան շրջանցեց, ինչպես որ նրան շրջանցեց կառավարությունը: Մեր ժամանակում հարկավոր չէ այդպիսի սխալներ կրկնել»:

Ռուսական հետադիմական ուժերին ձայնակցում ու աջակցում էր գերմանական մամուլը, որը կատարելով Բիսմարկի կամքն, ամեն միջոցով վարկաբեկում էր Լորիս-Մելիքովին, նպատակ հետապնդելով ցույց տալ, թե եվրոպական հասարակական կարծիքը չի ընդունում Ռուսաստանում սկսած բարեփոխումների քաղաքականությունը:

1880 թ. նոյեմբերի 13-ին Բեռլինում լույս տեսնող «Նացիոնալ ցայտունգ» թերթը «Ռուսական տրամադրություն» հոդվածում նշելով, թե ճգնաժամային իրավիճակում հայտնված ռուսական հասարակությունը կարող է դրանից դուրս գալ միայն Արևմտյան Եվրոպայի փորձը յուրացնելու ճանապարհով, պնդում էր. «Ռուսական պատմության մեջ մինչև մեր օրերը, մեծագույն իրադարձությունն եղել է Եվրոպայի կյանքի հետ Ռուսաստանին հաղորդակից դարձնելու Պյոտր Մեծի որոշումը: Ռուսաստանի բոլոր մեծ տիրակալները, սկսած 16-րդ դարից, գործել են այդ ոգով:

Բայց ամեն մի նոր գահակալության սկզբում այդ ձգտման դեմ առաջացել է ռուս-սլավոնական ռեակցիա»:

Այնուհետև, գերմանական թերթը համոզում էր, որ ներկա պահին ստեղծված անկարգությունից դուրս գալու համար անհրաժեշտ է դիմել գերմանացիներին:

Ռուսական լիբերալ-առաջադիմական մամուլն անմիջապես արձագանքեց գերմանացիների խորհրդին: «Սանկտ-Պետերբուրգսկիյե վեդոմոստի» թերթը 1880 թ. նոյեմբերի 17-ին գրեց «Գերմանիայում ամենից շատ վախենում են Ռուսաստանի՝ նրա ժողովրդական ուժերի, նրա ժողովրդական պահանջմունքների վրա հիմնված ինքնագիտակցության զարգացումից»:

Չնայած այս ամենին, Ալեքսանդր երկրորդը համաձայնվեց ու առաջարկեց հանձնաժողովը կազմել 1859 թ. խմբագրական հանձնաժողովների օրինակով:

Պ. Վալուևը նախապես ծանոթանալով Լորիս-Մելիքովի ներկայացրած նախագծին, իր օրագրում 1881 թ. փետրվարի 3-ին կատարել է հետևյալ գրառումը. «Մերձավոր բոյար Միշել Ի-ի ներկայացրած նախագիծը մտավոր ու բարոյականության միջակության մոնումենտ է: Պարզամիտ-ցինիկ ինքնագովության,թագավորին անտաշորեն գովելու և տարատեսակ ստերի կոպիտ շարադրանքի հետ միասին արտահայտվում են ընտրյալ փորձագետներից կազմված ինչ որ խմբագրական հանձնաժողովների մասին նախկինում եղած մտքերը»:

1881 թ. փետրվարի 17-ին Լորիս-Մելիքովի նախագիծը քննարկվեց այդ նպատակով ցարի հրավիրած հատուկ խորհրդակցությունում, որին մասնակցող թագաժառանգը, Վալուևը, Պոբեդոնոսցևը, մեծ իշխան Կոնստանտին Նիկոլայևիչը, Աբազան և մյուսները ոչ մի առարկություն չարեցին:

Միայն Վալուևը համարձակվեց հիշեցնել, որ ներկայացված առաջարկությունները նման են իր կողմից 1863 և 1879 թվականներին արված առաջարկություններին:

Ցարի ներկայությամբ չհամարձակվելով առարկել Լորիս-Մելիքովի նախագծին, Վալուևը Միխայիլ Տարիելովիչին իր օրագրում մեղադրում է գրագողության մեջ, շարունակում նրա մասին գրել խոր ատելությամբ ու առհամարանքով:

Այժմ, միայն կարելի է զարմանալ, թե Պ. Վալուևը արտաքուստ ինչպես էր կարողանում թաքցնել այդպիսի վերաբերմունքը Լորիս-Մելիքովի նկատմամբ և նրա հասցեին մաղձը թափում օրագրի էջերում...

Ցարը համաձայնվեց հանձնաժողով կազմելու մասին հաղորդագրությունը հրապարակել և Լորիս-Մելիքովի ներկայացրած նախագծի վրա մակագրեց. «Հաստատում եմ՝ Ալեքսանդր»: Ցարը հրամայեց 1881 թ. մարտի 4-ին նախագիծը քննարկել նախարարների խորհրդում:

Այսպիսով, ամեն ինչ ընթանում էր Լորիս-Մելիքովի ցանկությամբ: Ալեքսանդր Երկրորդը համաձայնվել էր իր նախագծին: Ուրիշ ոչ մի խանգարող խոչընդոտ չկար և 1881 թ. մարտի 4-ին, ամենայն հավանականությամբ, Ռուսաստանն իր պատմության մեջ ստանալու էր առաջին սահմանադրությունը, որը, ճիշտ է, թեև լիարժեք չէր, բայց մեծ նվաճում կլիներ առաջընթացի ճանապարհին: Այսպես էր մտածում Լորիս-Մելիքովը: Այսպես էին մտածում նրա լիբերալ համախոհները:

Սցիլլայի ու Քարիբդիսի միջև

1881 թ. փետրվարի 19-ին, ինչպես միշտ, մեծ շուքով նշվեց Ալեքսանդր Երկրորդի ծննդյան օրը: Ձմեռային պալատում կազմակերպված հանդեսին հրավիրվել էր ամբողջ պաշտոնական Ռուսաստանը: Ներկա էին իրենց լիբերալ հայացքներով հայտնի հասարակական գործիչները, որոնք չթաքցնելով իրենց ուրախությունը, մոտենում էին Լորիս-Մելիքովին և շնորհավորում կոմսին՝ ցարի կողմից հաստատված նախագծի համար:

Բայց կոմսի հակառակորդներն էլ քնած չէին: Նրանք Պոբեդոնոսցևի գլխավորությամբ մտածում էին, որ մինչև մարտի 4-ը քիչ ժամանակ է մնացել ու հարկավոր է շտապել և միջոցներ գտնել Լորիս-Մելիքովի ծրագիրը ձախողելու համար: Այս գործում կարևորվում էր Պոբեդոնոսցևի դերն առհասարակ և մասնավորապես, նրա ազդեցությունը թագաժառանգի վրա, որին հարկավոր էր գրավել իրենց կողմը:

Լորիս-Մելիքովի ծրագրի իրականացման դեմ էին նաև նարոդնիկները և նրանց գաղափարախոսության ազդեցության տակ գտնվող հեղափոխական երիտասարդությունը:

Լորիս-Մելիքովն իր գլխավոր խնդիրը համարում էր ահաբեկչության դեմ պայքարը և ձգտում էր հետապնդումներն ուժեղացնել միայն հեղափոխականների դեմ և միաժամանակ առաջ տանել իր ծրագիրը, որտեղ կարևորվում էին նաև մի շարք դեմոկրատական բարեփոխումներ:

Տարօրինակ է, բայց փաստ: Նարոդնիկ-հեղափոխականները չէին հանդուրժում, որ այն ամենին, ինչին նրանք ձգտում էին հասնել ահաբեկչության միջոցով, Ռուսաստանում իշխանության գլուխն անցած դիկտատորն ուզում էր դեմոկրատական բարեփոխումներ իրականացնել վերևից: Դրանից էլ ելնելով նարոդնիկության արմատական թևը որոշեց իր համար ընդունելի միջոցով խանգարել Լորիս-Մելիքովի ծրագրի իրականացումը: Այդ միջոցն ահաբեկչությունն էր: 1881 թ. հունվարից վերսկսվեց ցարին հետապնդելու գործողությունը: Իհարկե, նարոդնիկները հասկանում էին, որ ցարին սպանելով չեն հասնի ընդհանուր ապստամբության: Բայց մեծ հույս ունեին, որ դրանով կուժեղանա լարվածությունը, կառավարող շրջանակներում կսկսվի տագնապ, կառաջանա խառնաշփոթություն: Այսինքն՝ որքան վատ, այնքան լավ: Քայլ առ քայլ կառավարությունը կկորցնի հավասարակշռությունը, կդիմի ոչ պոպուլյար միջոցների և դրանով կհեղինակազրկվի, կկորցնի իշխանությունը և վերջ կտրվի վերևից բարեփոխումներ իրականացնելու հույսերին:

Ներքին գործերի նախարար Լորիս-Մելիքովը ստանում էր գործակալական հավաստի տեղեկություններ հեղափոխական կազմակերպությունների ծրագրերի ու դիտավորությունների մասին: Եվ նրա համար պարզ էր, որ իր բարեփոխումների ծրագրի դեմ փաստորեն հանդես էին գալիս երկու տարբեր, իրար նկատմամբ անհաշտ թշնամությամբ լցված ուժեր՝ ծայրահեղ աջ պահպանողական-հետադիմական ուժերը Պոբեդոնոսցևի գլխավորությամբ և նարոդնիկական հեղափոխական կազմակերպությունները:

Եթե ծայրահեղ աջ հետադեմները վախենում էին զրկվել իրենց դիրքից ու արտոնություններից, ապա հեղափոխականների համար հետագա պայքարն էր դառնում անհիմաստ: Լորիս-Մելիքովը գիտեր հեղափոխական ահաբեկիչների դեմ պայքարելու մեթոդները: Բայց նրա համար անհաղթահարելի էր մնում աջ պահպանողական-հետադիմական թևը, որի դեմ լիբերալները շատ թույլ էին վճռականորեն հանդես գալու համար:

Այսպիսով բարեփոխիչ Լորիս-Մելիքովը հայտնվել էր Սցիլլայի ու Քարիբդիսի միջև և իր միակ հույսը կապում էր Ալեքսանդր Երկրորդի ողջախոհության հետ...

1881 թվականի մարտի մեկը

Ստացված գործակալական տեղեկությունների համաձայն հեղափոխական-ահաբեկչական կազմակերպությունները պատրաստվում էին վճռական գործողությունների:

Դրանց մասին Լորիս-Մելիքովը կանոնավոր կերպով զեկուցում էր Ալեքսանդր Երկրորդին ու թագաժառանգին, նրանց խնդրելով ձեռնպահ մնալ քաղաքից դուրս կատարվող ուղևորություններից: Իսկ երբ 1881 թ. հունվարին գործակալական տվյալներով հայտնի էր դարձել Ալեքսանդր Երկրորդի դեմ նոր մահափորձ կազմակերպելու մասին, Լորիս-Մելիքովն ավելի եռանդով էր խնդրում զգուշանալու մասին:

1881 թ. փետրվարի 27-ին ձերբակալվեց մահափորձի գլխավոր կազմակերպիչ Անդրեյ Ժելյաբովը /1851-1881/: Լինելով ահաբեկչության ակտիվ կողմնակից, Ժելյաբովը 1879 թ. հունիսին «Հող և ազատություն» նարոդնիկական կազմակերպության Վորոնեժ քաղաքում տեղի ունեցած համագումարում գժտվել էր Գ. Վ. Պլեխանովի հետ, որը կարևորում էր գյուղում պրոպագանդիստական աշխատանքը: Համագումարի մեծամասնությունն անցավ Ժելյաբովի կողմ և Պլեխանովը հարկադրված հեռացավ:

«Հող և ազատություն» կազմակերպությունը պառակտվեց: Չնավորվեց«Ժողովրդական ազատություն» կազմակերպությունը Ալեքսանդր Միխայլովի, Անդրեյ Ժելյաբովի, Նիկոլայ Մորոզովի, Սոֆիա Պերովսկայայի, Վերա Ֆիգների, Միխայիլ Ֆրոլենկոյի գլխավորությամբ: Այս կազմակերպությունն որոշեց անցնել ինքնակալության դեմ անմիջական հարձակման: Կազմակերպության անդամները կարծում էին, թե բավական է վերացնել ինքնակալությունը, սոցիալական հեղաշրջումը կդառնա անխուսափելի: «Այժմ կամ երբեք», ասում էին կազմակերպության անդամները և հույս ունեին բարձրացնել ժողովրդական հեղափոխություն:

1879թ. օգոստոսի 25-ին «Ժողովրդական ազատություն» կազմակերպության գործադիր կոմիտեն ընդունեց որոշում՝ մահափորձ կատարել Ալեքսանդր Երկրորդի դեմ: Սկսեցին հետապնդել ցարին: 1866 թ. Կարակոզովի կրակոցից հետո ցարի դեմ կատարվել էր ութ անհաջող մահափորձ:

1880 թ. փետրվարի 5-ին Ձմեռային պալատում կազմակերպված պայթունից հետո ձերբակալվեցին «Ժողովրդական ազատության» ակտիվ անդամներ Ա. Միխայլովը, Ն. Մորոզովը, Տ. Կվյատկովսկին, Ա.Բարաննիկովը, որոնք զբաղված էին ցարի դեմ մահափորձ կազմակերպելով:

1880 թ. փետրվարից մինչև 1881 թ, մարտը «Ժողովրդական ազատությունը» չկատարեց ոչ մի ահաբեկչական գործողություն: Բայց 1881 թ. հունվարից, երբ Լորիս-Մելիքովի բարեփոխումների ծրագիրը հաստատվեց ցարի կողմից, կազմակերպության անդամները ակտիվացան: Նրանց չէսանգարեց նույնիսկ Ժելյաբովի ձերբակալումը: Դրանից հետո մահափորձի նախապատրաստումն իր վրա վերցրեց Սոֆիա Պերովսկայան:

1881 թ. մարտի 1-ին, առավոտյան Ալեքսանդր Երկրորդն ընդունեց Լորիս-Մելիքովին: Ցարը նորից անդրադարձավ մարտի 4-ին նշանակված նախարարների խորհրդում կոմսի նախագծի քննարկմանը և ընդգծեց իր գոհունակությունը: Լորիս-Մելիքովը ցարին զեկուցեց նաև փետրվարի 27-ին Ժելյաբովի ձերբակալման մասին և խնդրեց Ալեքսանդր Երկրորդին չգնալ ներկա լինելու այդ օրը նշանակված պատվո պահակության հերթափոխին: Իսկ Ալեքսանդր Երկրորդը սիրում էր ներկա լինել այդ հերթափոխի արարողությանը:

- Ես չէի ցանկանա, որ իմ ժողովուրդն ինձ վախկոտ համարի, - առարկեց ցարը Լորիս-Մելիքովին:

Միխայիլ Տարիելովիչն, այնուամենայնիվ, զգուշության համար հարկ համարեց անմիջապես դիմել իշխանուհի Յուրևսկայային և նրա միջոցով կարողացավ ցարին համոզել ներկա չլինել հերթափոխին:

Սակայն այդ պահին պալատ եկավ մեծ իշխանուհի Ալեքսանդրա Իոսիֆովնան իր կրտսեր որդու հետ, որն այդ օրը նոր մունդիրով պետք է առաջին անգամ ներկա լիներ հերթափոխի արարողությանը: Մեծ իշխանուհին չէր ուզում իր որդուն զրկել այդպիսի երջանկությունից և խնդրեց Ալեքսանդր Երկրորդին որդուն իր հետ տանել: Ընդառաջելով այդ խնդրանքին, Ալեքսանդր Երկրորդը որոշեց առանց ներքին գործերի նախարարին զգուշացնելու, մեկնել հերթափոխի վայր:

Մարտի մեկին, ցերեկվա ժամը 3-ին հերթափոխի արարողությունից հետո ցարը կառքով վերադարձավ պալատ՝ շրջապատված թիկնապահ հեծյալ կազակներով: Հենց որ ցարի կառքը մոտեցավ Եկատերինյան ջրանցքին, անկյունից դուրս եկած Նիկոլայ Ռիսակովը նետեց ռումբը: Լսվեց ուժեղ պայթյուն, ցարի կառքը կորավ ծխի մեջ: Ալեքսանդր Երկրորդը հրամայեց կանգնել և դուրս եկավ կառքից: Նա տեսավ երկու վիրավորված կազակի և ցավից ուժեղ գոռացող մի երեխայի, որն այդ պահին պատահաբար անցնում էր փողոցով:

Հավաքվեց բազմություն: Ոստիկանները բռնեցին ռումբ նետողին: Նրա վրա թափվեցին հավաքված մարդիկ:

- Ինձ ձեռք չտաս, ինձ մի խփիր, դժբախտ ու մոլորյալ ժողովուրդ, - ասելով, Ռիսակովը փորձում էր պաշտպանվել հարվածներից:

Թագավորը նկատելով քաշքշոցը, մոտեցավ Ռիսակովին և ասաց.

- Ի՞նչ արեցիր, խելագար:

Այդ պահին վազելով ցարին մոտեցավ ոստիկանապետը և տագնապով հարցրեց.

- Ձերդ մեծություն, հո վիրավորված չե՞ք:

- Փառք Աստծո, ոչ, - պատասխանեց Ալեքսանդր Երկրորդը:

Լսելով ցարի խոսքերը, ոստիկաններով շրջապատված Ռիսակովը դիմեց նրան.

- Ի՞նչ: Փառք Աստծո՞: Նայեք, չե՞ք սխալվել:

Ոչ ոք չհասկացավ ահաբեկիչի ակնարկը: Իսկ թագավորը կռացավ ծանր վերքերից արդեն մեռած երեխայի վրա, խաչակնքեց նրան ու քայլերն ուղղեց դեպի կառք: Եվ միանգամից, անսպասելի լսվեց պայթյունի որոտ: Երբ ծուխը ցրվեց, կենդանի մնացածները տեսան ծանր վիրավորված 20 մարդու: Իսկ ռումբ նետող Գրինևիցկին տեղն ու տեղը սպանվել էր: Մարդիկ տեսան ցարին, որը կռացել էր ջրանցքի ցանկապատին՝ առանց ոտքերի ու պատառոտված վերարկուով: Երբ մոտեցան ռումբի հարվածից ցանկապատի վրա ընկած ցարին, նա հազիվ կարողացավ ասել.

- Դեպի պալատ... Այնտեղ մեռնել...

Ալեքսանդր Երկրորդին մի կերպ հասցրին Ձմեռային պալատ: Մեկ ժամ անց, ցարը մահացավ իր աշխատասենյակում:

Ալեքսանդր Երկրորդի սպանությունը միանգամայն անսպասելի էր Լորիս-Մելիքովի համար: Չէ՞ որ ցարն իրեն ու իշխանուհուն խոստացել էր ոչ մի տեղ չգնալ և հրամայել էր պատվո պահակախմբի հերթափոխը հետաձգել: Իսկ հիմա նրան զեկուցում են՝ թագավոր կայսրը սպանվել է:

Պ. Վալուևը օրագրում պատմում է, որ մարտի1-ին ժամը 3-ին, երբ նա գտնվում էր Լորիս-Մելիքովի տանը, նրան հայտնում են կատարված ողբերգության մասին: «Անհնարին է», - ասել է Լորիս-Մելիքովն ու շտապել Ձմեռային պալատ: «Չեմ կարող մոռանալ, գրել է 1881 թ. մարտի 2-ին Պ. Վալուևը, - կոմսուհի Լորիս-Մելիքովայի դեմքը, երբ նրա ամուսինը մեկնեց պալատ: Նա կանգնել էր աստիճանների վրա ինչպես արձան, ինչպես Լոտովի կինը, առանց ներկի, անշարժ, անխոս, նույնիսկ շրթունքների ու հայացքի մեջ քարացած արտահայտությամբ: Նա զգում էր ու գիտակցում կատարվածն ավելի աղոտ կերպով, քան ամուսինը»:

Ցարի սպանության մեջ ներքին գործերի նախարար Լորիս-Մելիքովն ոչ մի մեղք չուներ: Ալեքսանդր Երկրորդը դուրս էր եկել Ձմեռային պալատից առանց նախարարի գիտության: Ցարը պարզապես հաշվի չէր առել Լորիս-Մելիքովի զգուշացումը:

Սակայն իր բնավորությամբ ազնիվ ու ճշտապահ Լորիս-Մելիքովը մարդկայնորեն իրեն մեղավոր էր զգում և որոշեց հրաժարական տալ:

Ալեքսանդր Երկրորդը սպանվեց: Սակայն նարոդովոլցիների հույսերը չարդարացան՝ գյուղացիները կացինի չդիմեցին: Ավելին, ցարի սպանությունը գյուղացիներն ընդունեցին այլ կերպ: Նրանք ասում էին, թե ցարին սպանել են ազնվականները, որովհետև նա գյուղացուն ազատություն էր տրվել:

Մարտի 1-ից հետո նարոդովոլցիներն անլեգալ մամուլում հանդես եկան Ալեքսանդր Երրորդին ուղղված կոչով՝ իրականացնել անհրաժեշտ ռեֆորմներ, խոստանալով վերջ տալ ահաբեկչական գործունեությանը: Նոր ցարն անտեսեց այդ կոչը:

Կարճ ժամանակ անց, հաջողվեց ձերբակալել նարոդովոլցիների գործադիր կոմիտեի անդամների մեծ մասին...

Թագաժառանգն ու Լորիս-Մելիքովը

1881 թ. մարտի մեկը Ռուսաստանի գահին բերեց նոր տիրակալի՝ Ալեքսանդր Երրորդին: Դա սովորական գահաժառանգություն չէր: Թագավոր դարձավ մեկը, որն արդեն որոշել էր իր անելիքը՝ վերջ տալ իր հոր ընտրած կուրսին, դրանից բխող բոլոր հետևանքներով:

Այդ գործում մեծ էր Ալեքսանդր Երրորդի ուսուցիչ ու դաստիարակ Պոբեդոնոսցևի դերն, որը գտնում էր, թե կառավարման ամբողջ համակարգը պիտանի չէ և կառավարության որդեգրած ուղին հակասում է Ռուսաստանի պետականության արմատական շահերին, խարխլում է գերագույն իշխանության հիմքերը և քայքայում նրա նկատմամբ եղած վստահությունը: Պոբեդոնոսցևը գտնում էր, որ միայն ուժեղ իշխանությունը կարող է երկիրը դուրս բերել քաղաքական ծանր իրավիճակից և փրկել ռուսական պետականությունը: Միայն ուժեղ իշխանությունն, ասում էր նա, կարող է օգտվել ռուս ժողովրդի վստահությունից:

Մարտի մեկից հետո Պոբեդոնոսցևը լայն հնարավորություն ստացավ մաքրել իր հաշիվները քաղաքական հակառակորդների հետ ի դեմս Լորիս-Մելիքովի և իրականացնել իր հետադիմական քաղաքական ծրագիրը: Պոբեդոնոսցևը վաղուց թագաժառանգ Ալեքսանդրին տրամադրում էր Լորիս-Մելիքովի դեմ: Դա անում էր չափազանց զգույշ, խորամանկությամբ և քայլ առ քայլ մոտենում էր իր նպատակին: Պոբեդոնոսցևը հասավ նրան, որ թագաժառանգն աստիճանաբար սառեցրեց իր փոխհարաբերությունները Լորիս-Մելիքովի հետ:

Ռուսաստանի պետական կենտրոնական արխիվում պահվող թագաժառանգ Ալեքսանդրի և Լորիս-Մելիքովի միջև եղած նամակագրությունը /1880 թ. փետրվարից մինչև 1881 թ. մարտի մեկը/ հնարավորություն է տալիս հետևելու այդ փոխհարաբերությունների ընթացքին: Նշված ժամանակաշրջանում նրանք միմյանց գրել են 54 նամակ: Հասկանալի է, որ թագաժառանգին ուղղված Լորիս-Մելիքովի նամակները պետք է համեմված լինեին ժամանակի ոգուն համապատասխան էպիտետներով: Բայց ուրիշ էր թագաժառանգի ոճը: Թագաժառանգը միշտ սկսել է «Սիրելի կոմս» բառերով և հետո խնդրում նրան այցելել իրեն, եթե կոմսը զբաղված չէ: Թագաժառանգը հաճախ «Սիրելի կոմսին» հայտնում էր, որ ծանոթացել է նրա զեկուցագրին ու «իրեն լրիվ բավարարված է զգում»:

1880 թ. մարտի 14-ին էլ էր «Սիրելի կոմսին» գրում, թե «ինձ արդեն չի հաջողվում ներկա լինել թագավորին տրված ձեր զեկույցներին և ես ոչինչ չգիտեմ» և խնդրում էր նրան գնալ Անիչկով պալատ:

1880թ. ապրիլի 12-ին թագաժառանգը Լորիս-Մելիքովին գրում էր. «Փառք Աստծո: Չեմ կարող արտահայտել, թե ինչքան եմ ուրախ, որ թագավորն այդպես բարեհաճությամբ ու այդպիսի վստահությամբ է ընդունել ձեր զեկուցագիրը, սիրելի Միխայիլ Տարիելովիչ:

Հսկայական բավականությամբ և ուրախությամբ կարդացի թագավորի բոլոր նշումները: Այժմ համարձակ կարելի է առաջ գնալ, հանգիստ և հաստատակամ տանել ձեր ծրագիրը հանուն թանկագին հայրենիքի երջանկության և ի դժբախտություն պարոնայք նախարարների, որոնց, ըստ երևույթին, ուժգնորեն տհաճ կլինի այդ ծրագիրը և թագավորի որոշումը: Աստված նրանց հետ:

Սրտանց շնորհավորում եմ և Աստված լավ սկիզբ տա մշտապես ավելի ու ավելի առաջ գնալու և որպեսզի այսուհետև էլ թագավորը ձեզ վստահություն ցույց տա:

Ես ձեզանից շատ շնորհակալ եմ այս հաճելի հաղորդման համար, ինձ թագավորն ոչինչ չի ասել զեկուցագրի մասին, այնպես որ ես ոչինչ չգիտեի նրա ճակատագրի մասին: Սրտանց՝ ձեր Ալեքսանդր»:

Թագաժառանգն ամբողջությամբ վստահում էր Լորիս-Մելիքովին և նրա հետ մտքեր էր փոխանակում նույնիսկ ընտանիքի անդամների ան-

խոհեմ քայլերի վերաբերյալ: Այս առումով հետաքրքրական է Լորիս-Մելիքովին ուղղված 1880 թ. հուլիսի 18-ի նամակը, որտեղ ասվում է «De la Nuvelle Revue» թերթի հրապարակած մի հաղորդման մասին, որը թագաժառանգի վրա թողել էր տհաճ տպավորություն: «Պարզ երևում է, - գրում էր թագաժառանգը, - բազմաթիվ փաստերից, որ բոլոր սկզբնաղբյուրները գալիս են մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչից /1821-1891, գեներալ-ֆելդմարշալ, Նիկոլայ Առաջինի որդիներից մեկը - Վ. Պ./ և վճռականորեն ոչ ոք, բացի նրանից ու Նեպոկոյչիցկուց /գեներալ-թիկնապահ, պետական խորհրդի անդամ-Վ. Պ./ չէին կարող շատ իմանալ, ինչ այժմ տպագրվել է...

Եթե Նիկոլայ Նիկոլաևիչն ուղղակի հիմար չլիներ, ապա ես նրան պարզապես կանվանեի սրիկա, որովհետև այդ բոլոր հոդվածները բացահայտ սուտ են և մեծ սրիկայություն:

Մի բան չեմ հասկանում, ով է այդ ստորը, որը կարողացել է Նիկոլայ Նիկոլաևիչին առաջարկել նման հոդված, կամ էլ դա նրա անձնական նախաձեռնությունն է այդ գործում:

Խնդրում եմ հայտնել ինձ այս գործի բոլոր մանրամասներն, որոնք դուք կկարողանաք հավաքել, ինձ անչափ հետաքրքիր է իմանալ ով է այդ անձն, որն առաջարկել է իր ստոր ծառայությունը...

Ամուր սեղմում եմ ձեր ձեռքը, ձեր Ալեքսանդր»:

Անչափ լարված էին թագաժառանգի և իշխանուհի Յուրևսկայայի փոխհարաբերությունները: Ալեքսանդրը պարզապես չէր ընդունում խորթ մորը: Այս հարցում էլ էր թագաժառանգը վստահում Լորիս-Մելիքովին: Ահա նրա նամակներից մեկը, գրված 1880 թ. դեկտեմբերի 22-ին. «Սիրելի կոմս, երեկ երեկոյան, ճաշից հետո իշխանուհի Յուրևսկայան ինձ հաղորդեց, որ նա ձեզ հետ խոսակցություն է ունեցել, որի բովանդակությունը նա ցանկացավ, որպեսզի դուք ինձ հաղորդեք: Եթե դա շտապ գործ է, ապա կարո՞ղ եք դուք անցնել ինձ մոտ, այսօր երեկոյան ժամը 6-ին, քանի որ դրանից հետո ես որսի եմ գնալու: Իսկ եթե հատկապես շտապելու բան չկա, ապա ես կարող եմ հանդիպումը նշանակել մյուս օրը:

Պատասխանեք, խնդրեմ, ինչպես ձեզ հարմար կլինի: Ձեր՝ Ալեքսանդր»:

Նույն օրը Լորիս-Մելիքովը թագաժառանգին պատասխանում է. «Թեև ինձ հաղորդած խոսակցության մեջ որևէ շտապ բան չկա, բայց օգտվելով թույլտվությունից, պատիվ կունենամ ձերդ կայսերական բարձրությանը ներկայանալ այսօր ժ. 5-ին»:

Կարելի է էլի շատ նամակներ ու փաստեր բերել, որոնք վկայում են Լորիս-Մելիքովի հետ թագաժառանգի ջերմ փոխհարաբերությունների մասին: Բայց, դժբախտաբար, դա չշարունակվեց ու հետո, գնալով դրանք խզվեցին և ի վերջո Լորիս-Մելիքովը դարձավ անընդունելի արդեն գահ բարձրացած Ալեքսանդր Երրորդի համար:

«Ոչ մի հրաժարական, դու ինձ պետք ես...»

1881 թ. մարտի մեկին միայն Ալեքսանդր Երկրորդ ցարը չսպանվեց: Այդ օրը ոչ միայն ավարտվեց «ցար-ազատարար» անվանումն ստացած թագավոր կայսրի կյանքն, այլև դրանով վերջացավ Ռուսաստանում հասարակական շարժման մի ամբողջ ժամանակաշրջան, որն իր սկիզբն է առնում 1861 թ. ռեֆորմներից:

Մարտի մեկը ճակատագրական եղավ նաև Լորիս-Մելիքովի քաղաքականության համար: Այդ օրը նա հասկացավ, որ ավարտվում է նաև Ռուսաստանի պետական-հասարակական կյանքի լիբերալացմանն ուղղված իր գործունեությունն, որը ճանապարհ էր հարթում դեպի դեմոկրատական ինստիտուտների հաստատում:

Մարտի մեկին, արդեն երեկոյան, Լորիս-Մելիքովն, որպես ներքին գործերի նախարար, ամբողջ պատասխանատվությունը զգալով ցարի ու նրա ընտանիքի անդամների անվտանգության համար, դիմեց վճռական քայլի: Նա նոր թագավոր Ալեքսանդր Երրորդին ներկայացրեց զեկուցագիր խնդրելով հրաժարական:

Լորիս-Մելիքովի որոշումը շտապողականության հետևանք չէր: Դա նաև զգացմունքի թելադրանքի արդյունք չէր, այլ միանգամայն օրինավոր մարդու որոշում, որը նա ընդունել էր սառնասրտորեն, կշռադատելով բոլոր հանգամանքները:

Սակայն Ալեքսանդր Երրորդը վճռականորեն մերժեց ու չընդունեց Լորիս-Մելիքովի հրաժարականը, գտնելով, որ ներքին գործերի նախարարը կատարվածի համար մեղք չունի, մանավանդ որ նա ցարին ու թագաժառանգին թախանձագին զգուշացրել էր վտանգի մասին, խնդրել էր այդ չարաբաստիկ օրը ձեռնպահ մնալ սովորական դարձած արարողությունից:

- Ոչ մի հրաժարական: Դու ինձ պետք ես, - ասաց Ալեքսանդր Երրորդը և հանձնարարեց զբաղվել չարագործների բացահայտմամբ:

Լորիս-Մելիքովը համաձայնվեց ու անմիջապես սկսեց միջոցառումներ մշակել նոր ցարի անվտանգությունն ապահովելու համար: Մարտի 2-ին նա Ալեքսանդր Երրորդին խնդրեց համաձայնվել, որպեսզի Անիչկով պալատից մինչև Ձմեռային պալատ նրան ուղեկցի կազակային պահակազորը «Իմ կողմից,- ավելացնում էր Լորիս-Մելիքովը, - թույլ եմ տալիս խոնարհաբար զեկուցել, որ փողոցներում հավաքված ժողովրդի բազմությունը նկատի ունենալով, այդ զգուշավորությունն ինձ թվում է առաջին օրերին ծայրահեղ անհրաժեշտ»:

Միաժամանակ ակտիվ միջոցներ ձեռնարկվեցին մարտի մեկի սպանության կազմակերպիչներին հայտնաբերելու և մեկուսացնելու համար:

Ա. Ֆ. Կոնիի կոչը

Մարտի 1-ի կրակոցը ցնցեց Ռուսաստանի լիբերալ-դեմոկրատական ուժերին, որոնք անմիջապես դրա մեջ տեսան մեծ ու ահավոր վտանգ սկսված բարեփոխումների ծրագրի իրականացումն ընդհատելու և հետադիմության հաղթանակի համար:

Այդ ուժերի տագնապը ցայտուն կերպով արտահայտեց Ա. Ֆ. Կոնին մարտի 2-ին "Порядок" թերթում գրելով հետևյալը. «Սգո դրոշն է ծածանվում պալատի վրա, որտեղ հանգչում է վերջին տարիներին Ռուսաստանի ճակատագրի գերագույն ղեկավարը:

Վշտալի մտքերն անընդհատ հաջորդում են իրար և կատարվածի ճնշումը ուժեղացնում է հույսի ու վախի իրար հաջորդող տագնապը: Բոլորի մոտ ակամա հարց է առաջանում, ո՞ւր է այն միջոցը ջղածիգ ցնցումների դեմ, որոնցով մի խումբ մարդիկ անհույս ինքնավստահությամբ ուզում են արագացնել կամ փոխել երկրի զարգացման օրգանական ընթացքը»:

Այնուհետև հարցնելով, թե ինչու մատնացույց չեն արվում պետության կյանքը ցնցող հիվանդության պատճառները, Ա. Ֆ. Կոնին ընդգծում է. «Ոչ վերջին տարիների խիստ ռեպրեսիան, ոչ անցած տարվա հաշտվողական ուղղությունը չոչնչացրեցին այդ հիվանդությունը» և հետո շարունակում. «Առաջինը (այսինքը խիստ ռեպրեսիան - Վ. Պ.) միայն ստորացրեց ու անդեմ դարձրեց հասարակությանը, երկրորդը, ստանալով այսօր լավագույնը, ոչինչ չխոստացավ ու չերաշխավորեց վաղվա համար: Կսկսեն խոսել. որ այդ ուղղության դեմ էլ անխուսափելի է ռեակցիան: Դրա համար, անկասկած, կգտնվեն կողմնակիցներ ու խորհրդականներ: Բայց նրանց խորհուրդը թելադրված կլինի կամ խնդիրները և իր երկրի պատմությունը չհասկանալով կամ էլ չար զգացումով...

Պատմական կարևոր րոպեին, հանդիսավոր րոպեին, երբ ամբողջ ժողովուրդն իր թագավորին հավատարմության երդում է տալիս, անհրաժեշտ է լիակատար և անարգել անկեղծություն: Տա աստված, որպեսզի գահի մոտ այժմ լինեն մարդիկ, որոնք ասեին. «Թագավոր, դուք ձեր գահակալությունը սկսում եք դժվար րոպեին, երբ ձեր գահի ծանրությունը բարդանում է որդիական բզկտված սրտի վշտով: Բայց համարձակ գնացեք ձեր գահի աստիճաններով դեպի ձեր մեծ ծառայություն և կանգնեք կարգ ու կանոնի, օրինական ազատության պաշտպանության համար: Թող ձեր սիրտը չշփոթվի: Ձեր կողմն է ձեր բազմամիլիոն ժողովրդի վստահությունը, ձեր ձեռքին է նրա սերը, որի միջոցով կարող եք ամեն ինչ անել: Եղեք բարեկամն ու պահապանն այն սկզբունքների, որոնք դրվել են ձեր ծնողի մեծ ռեֆորմների մեջ: Թող ինչպես ծուխը, ցրվի կասկածանքն այն բանում, թե այդ սկզբունքներին վիճակված չէ դեպի առաջ ու լայն զարգանալ:

Ճնշման խստագույն միջոցներն ապացուցեցին իրենց անօգտակարությունն ու միակողմանիությունը: Ձեր երկիրը, թագավոր, դարերով իր մեջ պահպանել է և բանականությունը և պետական կարգ ու կանոնի, և կաթուցածնի համար ուժ: Նա իր սիրով աջակցել է ձեր նախնիներին»:

Վերջում Ա. Կոնին, նկատի ունենալով սկսված ռեֆորմները, հույս է հայտնում, որ նոր թագավորը կգնահատի իր առջև արդեն բացված պետական կառավարման գիրքը և նրան կոչ էր անում «բացել նաև ժողովրդի հոգին և թողեք դուրս գա նրա մեջ վաղուց ապրող ցանկությունը»:

Լիբերալ-դեմոկրատական ուժերի ցանկությունն այսպես զգույշ կերպով արտահայտող Ա. Կոնին ու նրա համախոհները հույս ունեին, որ Ալեքսանդր Երրորդն ուշադրություն կդարձնի իենց կոչին և կշարունակի սկսված բարեփոխումները:

Բայց նրանք շատ սխալվեցին: Նոր ցարը նրանց հույսերն ու սպասելիքները չարդարացրեց: Նա պարզապես նպատակ չուներ «ժողովրդի մեջ ապրող ցանկությանն» ազատություն տալ: Նոր թագավորն այդ ազատությունը խեղդելու մեջ էր տեսնում ցարական գահի անվտանգությունը և ամեն ինչ ենթարկեց դրան:

«Ամբողջովին կիսում եմ ձեր կարծիքը...»

1881 թ. մարտի 2-ին Լորիս-Մելիքովն Ալեքսանդր Երրորդին ներկայացրեց ընդարձակ զեկուցագիր, որտեղ ասվում էր հետևյալը. «Այժմ դատական պալատի դատախազն ինձ զեկուցեց, որ նախնական կալանատնից բերված հանցագործ Ժելյաբովը սկսել է տալ, քան նախկինում, ավելի որոշակի ցուցմունք և արդեն հայտարարել է, որ երեկ պայթուցիկ ռումբ նետած Ռիսակովը գործել է իր համոզելով և վերջին երեք շաբաթների ընթացքում Ժելյաբովի կողմից նախապատրաստվել է հանցագործությունը կատարելուն: Ժելյաբովի հանձն առնելն ապացուցվում է Ռիսակովի բացատրություններով»:

Այնուհետև նշելով, որ ձեռք բերված տվյալները լիակատար կերպով հնարավորություն են տալիս Ռիսակովի հետ միասին դատի տալու նաև հանցագործության գլխավոր մեղավոր Ժելյաբովին, ներքին գործերի նախարարը գրում էր. «Պարտքս եմ համարում խոնարհաբար հայտնել ձերդ թագավորական մեծությանն, արդյոք, հարմար կգտնի՞ թույլ տալ դատը հետաձգել մինչև չորեքշաբթի, ընդորում դատավճիռը կարող է իրականացվել չորեքշաբթիի փոխարեն հինգշաբթի օրը: Իմ կողմից համարձակվում եմ գտնել, որ երկու հանցագործների դատավարությունն ավելի հիմնավոր կդարձնի գործի քննությունը և այն պարզելու հնարավորությունը»:

Ներքին գործերի նախարարի զեկուցագրի վրա Ալեքսանդր Երրորդը կատարեց հետևյալ մակագրությունը. «Ամբողջովին կիսում եմ ձեր կարծիքը»:

«Սրբազան դրուժինա»

1881 թ. մարտի մեկից անմիջապես հետո պալատական արիստոկրատիան ստեղծեց «սրբազան դրուժինա»: Դա գաղտնի կազմակերպություն էր, որն իր առջև նպատակ էր դրել պահպանել ցարի կյանքը և պայքարել հեղափոխական խռովարարների դեմ: Բայց իրականում այս կազմակերպության ղեկավարները՝ գեներալ-թիկնապահ Ի. Վորոնցով-Դաշկովը, Ֆլիգել-թիկնապահ Պ. Շուվալովը, գվարդիական շտաբի պետ Ա. Բոբրինսկին և Մոսկվայի գեներալ-ցահանգապետ Վ. Դոլգորուկին իրենց գլխավոր խնդիրն էին համարում ասպարեզից հեռացնել Լորիս-Մելիքովին և վերջ տալ նրա բարեփոխումներին: «Սրբազան դրուժինայի» անդամները գտնում էին, որ «լիբերալ շարժումը Ռուսաստանում տալիս է այլ արդյունքներ, քան այն, որ հանդիպում են մյուս երկրներում: Լիբերալ հուզումները մտավորական ոլորտից թափանցել են հասարակության ստորին շերտերը»:

Առաջ անցնելով նշենք, որ «Սրբազան դրուժինա» գաղտնի հսկողություն սահմանեց հրաժարականից հետո արտասահմանում բնակվող Լորիս-Մելիքովի վրա, հետևում նրա կապերին, նրան այցելողներին: Ինչպես վկայում է Սալտիկով-Շչեդրինը, Լորիս-Մելիքովին հետևում էին վեց լրտեսներ:

Թե ինչպիսի վերաբերմունք ուներ Լորիս-Մելիքովը «Սրբազան դրուժինայի» մասին, վկայում է Սալտիկով-Շչեդրինը 1881 թ. հուլիսի 29-ին Վիսբադենից Ն. Բելոգոլովին գրած նամակում: «Այսօր. գրում է նա, - Լորիս-Մելիքովն ինձ հայտնեց հետևյալը. Պետերբուրգում մեծ իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչի հովանավորությամբ հիմնվել է Փրկության դրուժինա, որի նպատակն է նիհիլիզմի հետապնդումն ու ոչնչացումը, չկանգնելով նույնիսկ այնպիսի անձանց վերացման առջև, ինչպիսին են Գարտմանը, Կրոպոտկինը, և այլք: Դրուժինան կազմվել է թագավորի դրամական օգնությամբ գաղտնի ընկերության տեսքով, հնգյակներով, այնպես, որ մի հնգյակը մյուսին չգիտե, բայց բոլորը են՞թարկվում են միևնույն կոչին: Այդ հնգյակները ցրվել են նաև արտասահմանում, այնպես որ Լորիս-Մելիքովին համոզում են զգույշ լինել: Հայտնելով ինձ այդ մասին հայն ասածին ավելացրեց՝ «Երևի արդեն զեկուցել են իմ մասին, որ ես տեսնվել եմ ձեզ ու Կոշելևի հետ»: Դուք կարո՞ղ եք պատկերացնել, ինչքան հաճելի էր ինձ այդ լսել: Նա ինքը գլուխն ազատում է նրանով, որ իրենից խռով կպահեն, իսկ ինձ, հավանաբար, ինչ որ բան կհասնի»:

Ճիշտ է, Սալտիկով-Շչեդրինը հեղափոխական չէր, բայց նա չէր բավարարվում, որ իր ստեղծագործություններով օգուտ է տալիս ռուսական հեղա-

փոխությանը, ուստի Լորիս-Մելիքովից ստանալով վերոհիշյալ տեղեկությունը հեղափոխականներին սպառնացող վտանգի մասին, շտապում է գործել:

Բելոգոլովը ստանալով Սալտիկով-Շչեդրինի վերոհիշյալ նամակն, անհապաղ այդ մասին հայտնում է Պյոտր Լավրովին. «Ես, - գրել է այդ նամակում Բելոգոլովը, -«դրուժինային» վերաբերում եմ լրջորեն, քանի որ Սալտիկովը մոտ է կանգնած դրա մասին լուրերի անմիջական սկզբնաղբյուրին: Նա մեզ հաճախ է գրում և յուրաքանչյուր նամակում ասում է «դրուժինայի» մասին և, ըստ երևույթին, ցանկանալով, որ դրա մասին տեղեկություններ լինեն արևմտյան մամուլում...»:

Ստանալով այս տեղեկությունը, Պ. Լավրովը իր հերթին զգուշացնում է այն անձանց, որոնց անմիջական վտանգ էր սպառնում:

Շուտով հայտնի դարձավ, որ «Սրբազան դրուժինան» վարձել է փորձված մենամարտողի, որը պետք է առիթ փնթրեր վիրավորելու Կրոպոտկինին և նրան մենամարտի հրավիրելով սպաներ: Հայտնելով այս մասին Ն. Բելոգոլովին, Սալտիկով-Շչեդրինը 1881 թ. օգոստոսի 12-ին գրում է. «Ինչ կերպ այս ամենը բացահայտել և հատկապես զգուշացնել Ռոշֆորին (Ռոշֆորը Ֆրանսիական ձախ ուղղության լրագրի խմբագիր էր և օգնում էր ռուս վտարանդի հեղափոխականներին-Վ. Պ.): Ես հայտնվել եմ փակուղու մեջ և վախենում եմ, որ այժմ իմ վրա կմտածեն, հատկապես իմանալով, որ ես լավ եմ Լորիս-Մելիքովի հետ, ինչի մասին, հավանաբար, այստեղից զեկուցված է»:

1912 թ. հոկտեմբերի 31-ին Պ. Կրոպոտկինը «Ռուսկիե վեդեմոստի» թերթում հրապարակած նամակում անդրադառնալով «Սրբազան դրուժինաև» մերկացնելու գործում Սալտիկով-Շչեդրինի ունեցած դերին, հայտնում է, որ Փարիզում Պյոտր Լավրովից է իմացել «Սրբազան դրուժինայի» մասին տեղեկություններ, որոնք ստացվել են ուղղակի Լորիս-Մելիքովից..., Կրոպոտկինը հիշատակում է նաև Լավրովի հետևյալ խոսքերը. «Լորիս-Մելիքովը զայրացել է այդ գաղտնի ընկերությամբ, քանի որ, պետությունը,- ասել է նա, - հեղափոխականների դեմ պայքարելու համար ունի այլ միջոցներ և չպետք է դիմի գաղտնի սպանության: Ես նաև հասկացա, որ Լորիս-Մելիքովը ցանկացել է, որպեսզի «դրուժինայի» մտադրությունները հայտնի լինի մեզ: Կրկնելով, որ ինքը բոլորովին էլ մեզ չի համակրում, բայց թույլ չէր տա, որ պետությունը դիմեր պայքարի այդ եղանակին»:

Ահա այսպես, ի վերջո ձախողվեց արտասահմանում գտնվող ռուս վտարանդի հեղափոխականներին ոչնչացնելու «Սրբազան դրուժինայի» մտադրությունը:

Միաժամանակ «Սրբազան դրուժինայի» անդամները կազմակերպում էին պրովոկացիաներ, ձգտելով հունից հանել հեղափոխականներին: Նրանք նույնիսկ հեղափոխական կազմակերպություններին վարկաբեկելու նպատակով նրանց անունից սկսեցին քարոզել հեղափոխական ահաբեկ-

չություն ոչ միայն Ռուսաստանում, այլև ամբողջ աշխարհում: «Սրբազան դրուժինայի» գործունեությունն այնպիսի սկանդալ առաջացրեց, որ 1883 թ. Ալեքսանդր Երրորդը հրամայեց վերջ տալ դրան:

«Ես այսպես եմ ուզում...»

Մինչ Լորիս-Մելիքովը միջոցներ էր ձեռնարկում երկրում խաթարված պետական կարգը վերականգնելու, մարտի մեկի սպանությունն իրագործած անձանց բացահայտելու համար և կատարվածի մասին տեղեկացնում էր Ալեքսանդր Երրորդին, նրա հակառակորդները Պոբեդոնոսցևի գլխավորությամբ ամեն ինչի դիմում էին Լորիս-Մելիքովի դեմ վաղուց սկսած խարդավանքները մինչև վերջ հասցնելու համար, ճարպկորեն ցարի սպանությունը ծառայեցնելով իրենց նպատակին:

Մարտի մեկից հետո Պոբեդոնոսցևն ավելի համառորեն էր խորհուրդներ տալիս նոր թագավորին, նրան մղելով վճռական գործողությունների: 1881 թ. մարտի 3-ին Ալեքսանդր Երրորդին ուղարկած նամակում Պոբեդոնոսցևը հայտնելով, որ չի կարողանում հանգստանալ «ահավոր ցնցումից», գրում էր. «Ժողովուրդը հավատում է Աստծո կամքին և իր հույսը դնում է ձեր և Աստծո կողմից ձեզ տրված ամուր իշխանության վրա: Թող Աստված օրհնի: Թող ձեզ քաջալերի ժողովրդական աղոթքը, իսկ ժողովրդի հավատը թող ձեզ ուժ ու բանականություն տա՝ կառավարել ամուր ձեռքով և հաստատուն կամքով»:

Այնուհետև խոսելով իր վշտի մասին, Պոբեդոնոսցևը թագավորին համոզում էր. «...առիթը բաց մի թողեք հայտարարելու ձեզնից ուղղակի բխող վճռական կամքը, որպեսզի բոլորը լսեն ու իմանան՝ «ես այսպես եմ ուզում կամ ես չեմ ուզում և թույլ չեմ տա»:

Նույն օրը, մարտի 3-ին Կ. Պոբեդոնոսցևն իր մտերմուհի Ե Տյուտչևային գրում էր. «Աստված իմ, ինչպես եմ խղճում նոր թագավորին: Ափսոսում եմ ինչպես խեղճ, հիվանդ, ցնցված երեխայի: Վախենում եմ, որ նա կամք չունենա: Ո՞վ կառաջնորդի նրան: Առայժմ այդ նույն ֆոկուսնիկ Լ.-Մելիքովը: Այժմ բոլոր նշաններից երևում է, որ նա թագավորին կապել է, քանի որ նրա ձեռքին են բանալիները և նա է անվտանգության պահապանը»:

Պոբեդոնոսցևը տենդորեն նախապատրաստվում էր վճռական գործողությունների: Իսկ 1881 թ. մարտի 3-ին Լորիս-Մելիքովն Ալեքսանդր Երրորդին զեկուցեց. «Այն բնակարանը, որտեղից մարտի 1-ին երկու չարագործներին տվել էին նրանց կողմից օգտագործված ռումբերն, այսօր լուսաբացից առաջ բացահայտված է: Բնակարանի տերն ինքնասպան է եղել, նրա հետ ապրող երիտասարդ կինը ձերբակալվել է /ինքնասպանը Ն. Սաբլինն է եղել, իսկ ձերբակալվածը՝ Հեսյա Գելֆմանը - Վ. Պ./: Հայտնաբերվել են երկու ռումբ և վերջին հանցագործության կապակցությամբ թռուցիկներ»:

Զեկուցագրի հետ միասին Լորիս-Մելիքովն ուղարկում է Ալեքսանդր Երկրորդի սպանության մասին մարտի 2-ին տպագրված «Գործադիր կոմիտեի կողմից» թռուցիկը:

1881 թ. մարտի 4-ին ներքին գործերի նախարարը ցարին հայտնեց նաև, որ Սադովոյա փողոցի վրա գտնվող պահիրի կրպակից փորված ստորգետնյա անցք է հայտնաբերվել: Պահիրի կրպակը պատկանելիս է եղել նարոդնովոլեց Կոբոզեևին: Միաժամանակ, Լորիս-Մելիքովը խնդրում էր ցարին Ձմեռային պալատ հոգեհանգստի գնալու նշանակված ժամանակը մեկ ժամով շուտ կատարել: «Խնդրում եմ, - գրում էր Լորիս-Մելիքովը իր զեկուցագրի վերջում, - մեծահոգաբար ներեք սույն խնդրանքիս համար: Ձեր սիրտը կհասկանա ինձ ղեկավարող զգացմունքները»:

«Կարող եմ հանդիսել»

1881 թ. մարտի 5-ին Լորիս-Մելիքովն Ալեքսանդր Երրորդին զեկուցելով, որ մի քանի օրից կավարտվի «սրբապիղծ հանցագործության» հետաքննությունը և գործը կուղարկվի դատարան, գրում էր. «Իմ համոզմամբ կատարված չարագործության անօրինակ հանդգնությունն առաջ է բերել հանցագործներին վճռականորեն և անվերապահ պատժելու անհրաժեշտություն: Իմ կողմից առաջարկվել է մեղադրյալներին հանձնել ռազմական դատարան՝դաշտային օրենքներով: Այնուամենայնիվ, չարագործներին դատի տալու բազմակողմանի քննարկման ժամանակ ինձ ասվել են շատ էական կարծիքներ, որոնք ստիպել են ինձ դադարեցնել իմ նախնական ենթադրության իրագործումը»:

Այնուհետև Լորիս-Մելիքովը շարադրում է իր նկատառումները. «Առաջին. չի կարելի նկատի չառնել, որ հանցագործների մահապատիժը կարող է դեռևս ազատության մեջ գտնվող հաջողությունից ոգևորված նրանց համախոհների մոտ առաջ բերել մահափորձի ծգտում այն թանկարժեք կյանքի դեմ, որն այսօր կազմում է ճշմարիտ գրավականն այն բանի, որ Ռուսաստանը կանցկացնի առանց խոր օրգանական ցնցման իր պատմական գոյության ներկա ծանր պահը: Իմիջիայլոց, հանգուցյալ թագավորի առաջիկա հուղարկավորությունը չի կարող չներկայացնել հատուկ դժվարություններ Ռուսաստանի տիրակալ առաջնորդին չարագործ մահափորձից պաշտպանելու գործում:

Երկրորդ. դեռ չթաղված թագավորի նկատմամբ մարդկանց սուրբ ակնածանքով զգացմունքները կարող են վիրավորվել մահապատժի տեսարանով:

Երրորդ. եթե մինչև հանգուցյալ թագավորի հուղարկավորությունը հետաձգվի հանցագործների նկատմամբ մահապատժի կիրառումն, ապա

պատճառ չկա ռազմական դատարանին դիմելու, որի գլխավոր նշանակությունը կայանում է նրա արագ ավարտի մեջ»:

Վերոհիշյալ նկատառումներից ելնելով Լորիս-Մելիքովն առաջարկում էր գործի քննությունը հանձնել կառավարական սենատի հատուկ դատարանին դասային ներկայացուցիչների մասնակցությամբ:

Զեկուցագրի վերջում Լորիս-Մելիքովը գրում էր. «Խոնարհաբար զեկուցելով վերոհիշյալը ձերդ թագավորական մեծությանը, պարտքս եմ համարում հարցնել, արդյոք, ձերդ մեծությանը հարմար չի՞ լինի հրամայել իմ բարձրացրած հարցը քննարկել հատուկ խորհրդակցությունում թագավորական ընտանիքի այն անդամների, որոնց դուք կնշանակեք, ինչպես նաև գեներալ-թիկնապահ կոմս Միլյուտինի, կոմս Ադլերբերգի, ստատս-քարտուղար կոմս Վալուևի, իշխան Ուռուսովի, Նաբոկովի և իմ մասնակցությամբ»:

Լորիս-Մելիքովի զեկուցագրի վրա Ալեքսանդր Երրորդը մակագրել է. «Կարող ենք հանդիպել ինձ մոտ այդ հարցի քննարկման համար վաղը, ամսի 6-ին, առավոտյան ժ. 11-ին: Բացի դրանից, ես եղբորս՝ Վլադիմիրին կհրամայեմ լինել այստեղ»:

«Զեկուցումը կազմված է շատ լավ»

1881 թ. մարտի 6-ին Ալեքսանդր Երրորդը դեռ չէր ստացել Պոբեդոնոսցևի նամակը, երբ ընդունեց Լորիս-Մելիքովին: Զեկուցելով ընթացող հետաքննության արդյունքների մասին, Լորիս-Մելիքովը ցարին հիշեցրեց հանգուցյալ թագավորի ընդունած որոշումը օրենսդրական նախապատրաստական հանձնաժողով կազմելու և այդ կապակցությամբ «Կառավարական տեղեկագրում» հրամանագրի տպագրման մասին: Ալեքսանդր Երկրորդն այն ժամանակ կարգադրել էր որոշման նախագիծը քննարկել նախարարների կոմիտեում 1881 թ. մարտի 4-ին:

Լորիս-Մելիքովն Ալեքսանդր Երրորդին հանձնեց իր զեկուցագիրը ,որում հանգամանորեն շարադրված էին օրենսդրական հանձնաժողով հիմնելու անհրաժեշտությունը: Ուշադրությամբ լսելով ներքին գործերի նախարարին, Ալեքսանդր Երրորդը հարցրեց.

- Միխայիլ Տարիելովիչ, ասացեք խնդրեմ, այդ հանձնաժողովի հրավիրումը չի՞ նսեմացնի արդյոք ցարական իշխանությանը:

Լորիս-Մելիքովը հանգստացրեց թագավորին, բացատրելով, որ հանձնաժողովում ընտրված զեմստվոների ու խոշոր քաղաքների ներկայացուցիչները միայն խորհրդակցական ձայն կունենան տեղական, իրենց զեմստվոներին վերաբերող հարցերի որոշման գործում:

Ալեքսանդր Երրորդը Լորիս-Մելիքովի զեկուցագրի վրա մակագրեց. «Զեկուցագիրը կազմված է շատ լավ» ու հրամայեց նոր քննարկման համար մարտի 8-ին հրավիրել նախարարների կոմիտե:

ԻՆՆԵՐՈՐԴ ՄԱՍ

«Մի պահեմ կոմս Լորիս-Մելիքովին»

Պոբեդոնոսցևը տեսնում էր, որ Լորիս-Մելիքովը վճռականությամբ առաջ է տանում մարտի մեկի հետաքննությունը: Իսկ երբ նրան հայտնի դարձավ, որ Ալեքսանդր Երրորդն ընդունել է Լորիս-Մելիքովին և համաձայնվել է նրա առաջարկությամբ մարտի 8-ին հրավիրել նախարարների կոմիտե, արագացրեց իր գործողությունները, անցնելով բացահայտ պայքարի:

1881 թ. մարտի 6-ի երեկոյան Պոբեդոնոսցևը Ալեքսանդր Երրորդին նամակ ուղարկեց, որտեղ գրում էր. «Ինձ տանջում է տագնապը: Ինքս չեմ համարձակվում ներկայանալ ձեզ, որպեսզի չանհանգստացնեմ, քանի որ դուք կանգնել եք մեծ բարձունքին: Ոչինչ չգիտեմ, ո՞ւմ եք տեսնում, ո՞ւմ հետ եք դուք խոսում, ո՞ւմ եք լսում և ձեր մտքում ինչպի՞սի վճիռներ կան: Օ՜, ինչպես կհանգստանայի, եթե իմանայի, որ ձեր որոշումն ընդունված է և ձեր մեծության կամքը ձևավորվել է: Եվ ես համարձակվում եմ նորից գրել, որովհետև ժամն ահավոր է և ժամանակը չի սպասում: Կամ այժմ փրկել Ռուսաստանն ու քեզ կամ՝ երբեք:

Եթե ձեզ կերգեն առաջվա ծովահարսների երգերն այն մասին, թե հարկավոր է հանգստանալ, պետք է շարունակել լիբերալ ուղղությամբ, զիջել այսպես կոչված հասարակական կարծիքին, օ՜, ի սեր Աստծո, մի հավատացեք, ձերդ մեծություն, մի լսեք: Դա կլինի կործանում, Ռուսաստանի և ձեր կործանումը, դա ինձ համար պարզ է, ինչպես օրը: Ձեր անվտանգությունը դրանով չի պահպանվի, այլ ավելի կպակասի: Ձեր հորը կործանող խելագար չարագործներն ոչ մի զիջումով չեն բավարարվի և միայն կկատաղեն: Նրանց կարելի է լռեցնել, չարիքի սերմերը կարելի է արմատախիլ անել միայն նրանց հետ մահու-կենաց պայքարով, երկաթով ու արյունով: Թեկուզ զոհվել պայքարում, միայն թե հաղթել: Հաղթելը դժվար չէ, մինչև այսօր բոլորն ուզել են խուսափել պայքարից ու խաբել են հանգուցյալ թագավորին, ձեզ, ինքն իրենց, բոլորին և աշխարհում բոլորին, որովհետև նրանք բանականության, ուժի և սրտի մարդիկ չեն եղել, այլ թառամած ներքինի ու աճպարարներ:

Ոչ, ձերդ մեծություն, միայն կա մի ճշմարիտ և ուղիղ ճանապարհ՝ ոտքի կանգնել ու ոչ մի րոպե չթուլացնելով սկսել պայքար, ամենասրբազանն, ինչպիսին որ միայն եղել է Ռուսաստանում: Ամբողջ ժողովուրդը սպասում է դրա համար ձեր իշխանական որոշմանը և հենց որ զգա տիրական կամքն, ամեն ինչ կբարձրանա, կկենդանանա և օդը կթարմանա:

Ժողովուրդը գրգռված է, չարացած և եթե երկարացվի անհայտությունը,

կարելի է սպասել խռովությունների ու արյունալի հաշվեհարդարի: Ստորգետնյա փորվածքի հետ կապված վերջին պատմությունն ավելի է կատաղեցնում ժողովրդի զգացումը: Չէին կանխատեսել, չէին բացահայտել, գնացել են զննելու և ոչինչ չեն գտել: Ժողովուրդն այստեղ միայն մի բան է տեսնում՝ դավաճանություն, ուրիշ խոսք չկա: Եվ ոչինչ չեն հասկանա, եթե այժմ հնարավոր լինի նախկին մարդկանց թողնել իրենց տեղերում:

Եվ չի կարելի նրանց թողնել, ձերդ մեծություն: Ներեցեք ինձ իմ ճշմարտության համար: Մի պահեք կոմս Լորիս-Մելիքովին: Ես նրան չեմ հավատում: Նա աճպարար է և կարող է էլի կրկնակի խաղ խաղալ: Եթե դուք ձեզ դնեք նրա ձեռքը, նա ձեզ ու Ռուսաստանին կհասցնի կործանման: Նա կարող է միայն անցկացնել լիբերալ նախագծեր և տանում է ներքին բանսարկությունների խաղ: Բայց պետականության իմաստով նա ինքը չգիտե ինչ է ուզում, ինչը նրան բազմիցս արտահայտել եմ: Եվ նա ռուս հայրենասեր չէ: Զգուշացեք, ի սեր Աստծո, ձերդ մեծություն, որպեսզի նա չտիրապետի ձեր կամքին և ժամանակ մի կորցրեք»:

Այնուհետև Պոբեդոնոսցևը նոր ցարին երաշխավորում էր իր յուրայիններին տեղ տալ, առանձնակի եռանդով հիշեցնելով կոմս Նիկոլայ Պավլովիչ Իգնատովին, որը «դեռ ունի առողջ բնազդներ ու ռուսական ոգի և նրա անունը ռուս բնակչության-հասարակ մարդկանց առողջ մասի մոտ օգտվում է բարի համբավով: Առաջին հերթին վերցրեք նրան, որպես հավատարիմ, վերցրեք անմիջապես»:

Հարկավոր էր, պնդում էր Պոբեդոնոսցևը, հենց առաջին օրից Պետերբուրգում հայտարարել ռազմական դրություն, հիշեցնելով որ Բեռլինում մահափորձից հետո անմիջապես այդպես էին արել և կարողացել էին անմիջապես դրության տերը լինել:

Պետերբուրգը համարելով անհիծված տեղ, Պոբեդոնոսցևը ցարին խորհուրդ էր տալիս. «Ձերդ մեծությանն անհրաժեշտ է հուղարկավորությունից հետո անմիջապես գնալ այստեղից մաքուր վայր, թեկուզ և Մոսկվա, իսկ այս տեղը թողնել, քանի դեռ այն վճռականորեն չեն մաքրի: Թող այստեղ մնա ձեր նոր կառավարությունն, որը նույնպես պետք է մաքրել վերևից ներքև: Այստեղ Պետերբուրգում կգտնվեն մարդիկ: Վաղն այստեղ կգա Բարանովը: Նորից համարձակվում եմ ասել, որ այս մարդը կարող է ձերդ մեծությանը մատուցել մեծ ծառայություն և ես նրա վրա ունեմ բարոյական իշխանություն:

Նոր քաղաքականությունը հարկավոր է անմիջապես ու վճռականորեն հայտարարել: Հարկավոր է մեկ ընդմիշտ, հենց այժմ վերջ տալ մամուլի ազատության, հավաքների ազատության, ներկայացուցչական ժողովի մասին բոլոր խոսակցությունները: Այս ամենը դատարկ և թառամած մարդկանց սուտն է և հարկավոր է մի կողմ շպրտել հանուն ժողովրդի ճշմարտության ու ժողովրդի բարօրության:

Սաբուրովն այլևս անտանելի է իր տեղում, նա բոլորովին բութ մարդ է և նրա բթամտությունը շատ չարիք է արել և ամեն օր ավելի շատ է անում: Իսկ նրան փոխարինող որոնելն այնքան էլ դժվար չէ: Բոլոր թեկնածուներից առավել լուրջը բարոն Նիկոլայինն է: Բայց ուժեղ նշանակման համար հնարավորություն կա անմիջապես կառավարումը հանձնել Դելյանովին, որին ամբողջ գերատեսչությունը գիտե շատ մոտիկից և առողջ հոգու տեր մարդ է:

Ձերդ մեծություն: Ներեցեք ինձ անկեղծ խոսքի համար: Բայց ես չեմ կարող լռել, իմ պարտքն է ասել ձեզ, եթե չեմ սխալվում: Ձեզ երբեք անհարմար չի եղել ինձ լսելը: Դուք, իհարկե, զգացել եք, իմ բոլոր թերություններով հանդերձ, որ ես ձեր մոտ ոչինչ չեմ փնթրել ինձ համար և իմ ամեն մի խոսքն եղել է անկեղծ: Աստվածն ինձ այսպես է դրել, որ ես կարող եմ ձեզ մոտիկից ասել...

Վախն ինձ պատում է, երբ մտածում եմ, որ դուք միայնակ եք և ոչ ոքի վրա դուք չեք հենվում: Ի սեր Աստծո, եթե դուք կամենաք մոտիկից խոսել այն մասին, որ ես գրում եմ, հրամայեք ինձ ներկայանալ, ես ամեն ժամ, ամեն րոպե պատրաստ եմ ձեզ ծառայելու: Ինքս այժմ իրավունք չունեմ ներկայանալ ձեզ: Կանչեք ձեզ մոտ ծերունի կոմս Ստրոգանովին, նա ճշմարտացի մարդ է, ձեր նախնիների հին ծառան, պատմական մեծ դեպքերի վկան ու գործիչը: Նա դագաղին մոտ է, բայց նրա գլուխը թարմ է, իսկ նրա սիրտը՝ ռուսական: Ռուսաստանում չկա մեկ այլ մարդ, որի հետ դուք հաճելի խորհուրդ անեք այս ահավոր րոպեին: Այսօր նա եկավ ինձ մոտ, հուզված, վրդովված, լի ձեր և Ռուսաստանի մասին տագնապալի հոգսերով:

Աստված, Աստված: Փրկիր մեզ:

Բայց մենք Աստծո մարդիկ ենք և պետք է գործենք: Երկրի վրա Ռուսաստանի ճակատագիրը ձեր ձեռքին է, ձերդ մեծություն: Օրհնիր Աստված, ձեզ ասել ճշմարտության ու կամքի խոսքեր և ձեր շուրջ հավաքվեն առողջ, իսկական ռուս մարդկանց գնդեր՝ տարեք նրանց կենաց-մահու պայքարի, հանուն Ռուսաստանի ապագայի»:

Պոբեդոնոսցևի նամակը խոր տպավորություն թողեց Ալեքսանդր Երրորդի վրա և նա անմիջապես ուղարկեց հետևյալ պատասխանը. «Ամբողջ հոգով շնորհակալ եմ սրտալի նամակի համար, որն ես ամբողջապես կիսում եմ: Անցեք ինձ մոտ վաղը, ժամը 3-ին, ես սիրով կզրուցեմ ձեզ հետ: Աստծո վրա է իմ ամբողջ հույսը: Ա.»:

«Փրկեք նրանց ու փրկեք Ռուսաստանը...»

1881 թ. մարտի 7-ին Ալեքսանդր Երրորդը հանդիպեց Պոբեդոնոսցևին: Այս հանդիպման ժամանակ խոսակցության հիմնական նյութը

նախարարների խորհրդում հաջորդ օրը քննարկվող հարցն էր: Պոբեդոնոսցևը ցարին եռանդագին երաշխավորեց այն անձանց թեկնածությունները, որոնք, ըստ նրա, ամուր կանգնած են թագավորական գահին հավատարմորեն ծառայելու դիրքերում և որ ամենակարևորն է՝ նվիրված են Ալեքսանդր Երրորդին:

Իհարկե, Պոբեդոնոսցևն անկեղծ չէր: Իր առաջարկած թեկնածուները միայն լինելու էին Պոբեդոնոսցևի կամակատարները: Այդ անձանց մեջ էր Թուրքիայում նախկին դեսպան կոմս Նիկոլայ Իգնատովը, որն աչքի էր ընկնում սանձարձակությամբ ու ստախոսությամբ: Պոբեդոնոսցևի համար դրանք երկրորդական հատկություններ էին, կարևորն այն էր, որ Իգնատովը ատելությամբ էր լցված Լորիս-Մելիքովի նկատմամբ և նրան փոխարինելով հողմացրիվ կաներ «խորամանկ հայի» սկսած գործը:

Ժողովրդական լուսավորության նախարարի պաշտոնից Պոբեդոնոսցևն առաջարկեց անհապաղ ազատել Սաբուրովին և նրա փոխարեն նշանակել բարոն Նիկոլաին, որն աչքի էր ընկնում հետադեմ հայացքներով: Բայց և այնպես, կարևորն այն էր, որ դեռևս Կովկասի փոխարքայի մոտ ծառայելիս, բարոնը Լորիս-Մելիքովի դեմ բանսարկություններ կազմակերպողների մեջ էր և կոմսի նկատմամբ թշնամաբար էր տրամադրված:

Պոբեդոնոսցևը Ռուսաստանի հզորության հիմքն էր համարում հոգևոր-ծխական դպրոցը, որն որպես նախնական կրթության օջախ, պետք է դառնար ժողովրդական լուսավորության նախարարության հոգացության առարկան: Իսկ բարոն Նիկոլաին այն անձն է, որը հասկանում է այս ամենը և իր գործողությամբ կնպաստեր դրան:

- Ձերդ մեծություն, - ասաց Պոբեդոնոսցևը, - շտապեք, առիթը բաց չթողնեք: Վաղվա խորհրդում պետք է դուրս նետել Լորիս-Մելիքովին ու նրա սահմանադրության նախագիծը: Ռուսաստանի փրկությունը դա է պահանջում և այդ առաքելությունն Աստծո կամքով ձեր վրա է դրված: Լորիս-Մելիքովն աճպարար է ու խորամանկ: Նա դավաճանում է ձեզ ու Ռուսաստանին: Իշխանության մեջ մի պահեք նրան ու նրա մարդկանց: Հեռացրեք նրանց ու փրկեք Ռուսաստանը:

Ո՞ւմ նկատի ուներ Պոբեդոնոսցևը «Լորիս-Մելիքովի մարդ» ասելով: Ամենից առաջ կոմս Միլյուտինին, որը քսան տարի ղեկավարում էր ռազմական նախարարությունը և նրա ջանքերով իրականացած ռեֆորմի արդյունքով վերակառուցվեց ռուսական բանակը, դարձավ ուժեղ ու մարտունակ և ռուս-թուրքական պատերազմում տարավ փայլուն հաղթանակ: Միլյուտինը ցարական գահի հավատարիմ հպատակն էր, բայց և պաշտպանում էր Լորիս-Մելիքովի բարեփոխումների քաղաքականությունը, խորապես համոզված լինելով, որ արդյունքում Ռուսաստանը խոշոր քայլ կանի դեպի առաջադիմություն:

Լորիս-Մելիքովի քաղաքականությունը պաշտպանում էր ֆինանսների նախարար Աբազան, համոզված, որ կոմսի առաջարկած բարեփոխումները կբարելավեն Ռուսաստանի ֆինանսական վիճակը և կնպաստեն տնտեսության զարգացմանը:

Սաբուրովը նույնպես նվիրված էր ցարական գահին, բայց նաև համոզված էր, որ Ռուսաստանն Եվրոպայում ու աշխարհում իր տեղն ունենալու համար պետք է զարգացնի կրթությունը, գիտությունը, որին էլ ուղղված էին Լորիս-Մելիքովի բարեփոխումները:

«Հանգուցյալ հայրս էլ էր ուզում»

Պոբեդոնոսցևը հասավ իր նպատակին: Ալեքսանդր Երրորդն ամբողջապես ընդունեց իր ուսուցչի երաշխավորություններն ու հավատաց նրան, որ մերժելով Լորիս-Մելիքովի ծրագիրը, փրկում է Ռուսաստանը:

1881 թ. մարտի 8-ին ցարի հրամանով հավաքվեց պետական խորհուրդը: Երկու կողմն էլ՝ Լորիս-Մելիքովի կողմնակիցներն ու Պոբեդոնոսցևի համախոհները պետական խորհուրդ էին եկել նախապատրաստված: Նրանք ունեին հավասար ձայներ և ամբողջ խնդիրը նրանում էր, թե որ թևին կպաշտպաներ Ալեքսանդր Երրորդը, որից էլ ի վերջո, կախված էր Լորիս-Մելիքովի ծրագրի ճակատագիրը:

Լորիս-Մելիքովը վստահ էր հաջողության մեջ, նկատի ունենալով, որ մարտի 6-ին ցարը հավանություն էր տվել իր զեկուցագրին: Բայց Լորիս-Մելիքովին ու նրա կողմնակիցներին հայտնի չէր մարտի 6-ին ու 7-ին Պոբեդոնոսցևի ու ցարի միջև ձեռք բերված համաձայնությունը:

1881 թ. մարտի 8-ին բացելով պետական խորհուրդը, ցարն ասաց.

- Պարոնայք, չնայած մեր ծայրահեղ տանջալից ապրումներով ժամանակին , ես այսօր հավաքել եմ ձեզ մեծ աստիճանի կարևոր մի հարցի քննարկման համար:

Այնուհետև նա հայտնեց, որ իր հանգուցյալ հորը Լորիս-Մելիքովը ժամանակին ներկայացրել էր առաջարկություններ, որոնք վերաբերել են զեմստվոների ու քաղաքների ներկայացուցիչներին հրավիրելու անհրաժեշտությանը: Այս միտքն ընդհանուր գծերով արժանացել էր հանգուցյալ թագավորի հավանությանը և նրա հրամանով դրանք քննարկվեցին հատուկ խորհրդակցությունում: Քննարկման արդյունքով կազմված նախագիծը ներկայացվել էր Ալեքսանդր Երկրորդին, որն էլ կատարել էր մի քանի դիտողություն:

- Այժմ, - եզրափակեց Ալեքսանդր Երրորդը, - մենք պետք է քննարկենք այդ դիտողությունները: Բայց խնդրում եմ ձեզ լինել անկեղծ և առանց քաշվելու ինձ ասել ձեր կարծիքն ամբողջ գործի վերաբերյալ: Հայտնում եմ ձեզ նաև, որ հարկավոր չէ հարցը համարել կանխորոշված, քանի որ

հանգուցյալ հայրս էլ ուզում էր մինչև նախագծի վերջնական հաստատումը, դրա քննարկման համար հրավիրել նախարարների խորհուրդ:

Լորիս-Մելիքովի ու նրա կողմնակիցների համար անսպասելի էր ցարի արտասանած վերջին խոսքերը:

«Ըստ երևույթին, դուք մոլորված եք»

Ալեքսանդր Երրորդն ավարտելով իր ներածական խոսքը, հանձնարարեց Լորիս-Մելիքովին ընթերցել նկատառումների և նախագծի վերաբերյալ զեկուցագիրը: Այդ զեկուցագիրն, որը կազմվել էր մինչև մարտի մեկի դեպքերը և արժանացել էր հանգուցյալ թագավորի հավանությանը, Լորիս-Մելիքովը հասկանալի պատճառներով թողել էր անփոփոխ: Զեկուցագիրը սկսվում էր հասարակության մեջ վերջին շրջանում ծեռք բերված հաջողությունների հիշատակմամբ: Եվ երբ Լորիս-Մելիքովը կարդում էր այդ հատվածը, ցարը նրան ընդհատելով, ասաց.

- Ըստ երևույթին, դուք մոլորված եք:

Լորիս-Մելիքովը մի պահ լռեց: Անհասկանալի էր ցարի դիտողությունը: Չէ՞ որ նա մարտի 6-ին նորից էր կարդացել այդ զեկուցագիրը և ցարը դիտողություն չէր արել: Այնուամենայնիվ, նա շարունակեց ընթերցել զեկուցագիրը, որտեղ ընդգծվում էր հետևյալը. տեղական կառավարման մեջ գոյություն չունի կարգ ու կանոն և անհրաժեշտություն կա այն հիմնովին վերակառուցել: Դրա համար անհրաժեշտ է հանգամանորեն ուսումնասիրել իրավիճակը, բացահայտել եղած թերությունների պատճառները և, որ ամենակարևորն է, պարզել, թե դրանք ինչի արդյունք են. միայն չարաշահումների՞, թե՞ օրենքի անկատարելիության:

- Այս խնդիրը պարզելու համար, - շեշտեց Լորիս-Մելիքովը, - հանգուցյալ թագավորը հարկ էր համարել նշանակել սենատորների ստուգում, որն արդեն ավարտվելու վրա է և տալիս է հարուստ նյութ:

Այնուհետև Լորիս-Մելիքովը փաստեց, որ հարկավոր է կազմել կարևոր օրենսդրական նախագծեր: Եվ որպեսզի այդ նախագծերը համապատասխանեն առաջացած պահանջներին, անհրաժեշտ է, որ դրանք կազմվեն ու քննարկվեն նահանգային և գավառային պայմաններին գիտակ պրակտիկ մարդկանց մասնակցությամբ: Հենց այս նպատակով էլ հանգուցյալ թագավորը համաձայնվել էր ստեղծել հատուկ խմբագրական հանձնաժողով, որի մեջ բացի կառավարական գերատեսչությունների պաշտոնատար անձանցից, մասնակցեին նաև զեմստվոների /յուրաքանչյուր նահանգից երկու/, քաղաքների /նահանգային յուրաքանչյուր քաղաքից մեկ, իսկ մայրաքաղաքներից երկու/ ներկայացուցիչներ:

Լորիս-Մելիքովն առաջարկեց հանձնաժողովը բաժանել խմբերի՝ առանձին նախագծերը քննարկելու համար: Դրանից հետո նրանք պետք է

միավորվեին ընդհանուր ժողովում թագավոր կայսրի կողմից նշանակված անձի նախագահությամբ:

- Այսպիսով, - ընդգծեց Լորիս-Մելիքովն, - այս եղանակով մշակված նախագծերը պետք է մտցվեն պետական խորհրդի քննարկմանը, որի իրավունքները մնում են անփոփոխ:

Վերջում Լորիս-Մելիքովը նկատեց, որ զեկուցագրում նշված առաջարկություններն արժանացել են հանգուցյալ թագավորի հավանությանը և հաստատվել թագավորող կայսրի կողմից:

«Ես նույնպես վախենում եմ...»

Պոբեդոնոսցևի եռանդուն երաշխավորությամբ Ալեքսանդր Երրորդը պետական խորհրդի նիստին հրավիրել էր նաև կոմս Ս. Ստրոգանովին, որն ոչ միայն հայտնի էր իր ծայրահեղ հետադիմությամբ, այլև Լորիս-Մելիքովի վճռական հակառակորդներից էր: Ընդգծելով Ստրոգանովի դերը, ցարը կոմսին տեղ էր հատկացրել իր կողքին և հենց առաջինն էլ նրան խոսք տվեց:

Ստրոգանովը ներկայացրած նախագիծը գնահատեց որպես վնասակար, քանի որ դրա ընդունմամբ «իշխանությունը թագավոր ինքնակալի ծեռքից կանցնի ոչ թե ընդհանուր օգուտի, այլ իրենց անձնական շահի մասին մտածող տարբեր դատարկապորտ մարդկանց ծեռքը»:

- Գործը հասել է նրան, - հատուկ շեշտելով ասաց զառամյալ կոմսը, - որ, ինչպես լսել եմ, ներքին գործերի նախարարն իր մոտ է հրավիրել լրագրողներին, որպեսզի նրանցից պահանջի ինչ որ չափավորություն: Միթե՞ այդպես չէ:

Ի պատասխան դրա, Լորիս-Մելիքովը ցարին հայտնեց, որ կոմս Սերգեյ Գրիգորևիչն այնքան էլ իրավացի չէ, քանի որ ինքն անցյալ աշնանից խմբագիրներին չի հանդիպել:

- Վերջին շրջանում, - շարունակեց Միխայիլ Տարիելովիչը, - ծեր թույլտվությամբ ես մամուլի գործերով գլխավոր վարչության պետի միջոցով խմբագիրներին հայտնել եմ, որ եթե որևէ պարբերական հրատարակությունում կտպագրվի սահմանադրության անհրաժեշտության մասին հոդված, ապա իմ կողմից դա անմիջապես կփակվի:

- Եվ փառք Աստծո, - նորից խոսեց Ստրոգանովը, Լորիս-Մելիքովին ընդհատելով, - բայց թագավոր, այդպիսի միջոցն արդեն հնարավոր չի լինի, երբ դուք մտնեք ծեզ առաջարկած ուղին: Իսկ այդ ճանապարհն ուղիղ տանում է դեպի սահմանադրություն, որն ես չեմ ցանկանում ոչ ծեզ համար և ոչ էլ Ռուսաստանի համար:

- Ես, - պատասխանեց ցարը, - նույնպես վախենում եմ, որ դա դեպի սահմանադրություն տանող առաջին քայլն է:

«Դուք արել եք այն, ինչ կարողացել եք»

Ցարի հրավերով Ստրոգանովից հետո խոսք վերցրեց հանձնաժողովի նախագահ կոմս Վալուևը: Դիմելով Ալեքսանդր Երրորդին, նա ասաց.

- Իմ կողմից չեմ կարող բաժանել խորապես հարգված կոմս Ստրոգանովի արտահայտած տագնապը:

Նշելով, որ Լորիս-Մելիքովի առաջարկած միջոցները հեռու են սահմանադրությունից, Վալուևն ընդգծեց, որ դրանք նպատակ ունեն տեղեկանալ այն մարդկանց կարծիքների ու հայացքների մասին, որոնք երկրի ու նրա բնակչության պահանջումունքներն ավելին գիտեն, քան Պետերբուրգում ապրողները:

- Ես գտնում եմ, - ասաց վերջում Վալուևը, - որ ներկա իրավիճակում մեզ առաջարկվող միջոցները հատկապես անհրաժեշտ են:

Վալուևին հաջորդեց ռազմական նախարար կոմս Դ. Միլյուտինը:

- Իմ կարծիքով, - ասաց նա, - ձերդ մեծությանն առաջարկված միջոցը միանգամայն անհրաժեշտ է և անհրաժեշտ է հատկապես հենց հիմա:

Այնուհետև Միլյուտինը նշեց, որ նոր թագավորն արդեն հատուկ արտահայտել է Ռուսաստանի արտաքին հարաբերություններին վերաբերող խնդիրները, սակայն դեռ պարզ չէ, թե Ալեքսանդր Երրորդն ինչպիսի ներքին քաղաքականություն է վարելու: Այս հարցը, բնականաբար, անհանգստացնում է ամբողջ Ռուսաստանին: Ռազմական նախարարը հարկ համարեց ասել նաև, որ մի շարք վերափոխումներ իրականացվել են դանդաղ, նրանց օգուտի մասին թյուր պատկերացում է կազմվել և որպես այդ ամենի հետևանք Ռուսաստանում առաջացել է խոր անբավականություն:

- Վերջին շրջանում, - շարունակեց Միլյուտինը, - հասարակությունն աշխուժացել է, բոլորը սկսել են հանգիստ շունչ առնել, կառավարության գործողությունները հիշեցնում են նախորդ թագավորության առաջին, լավագույն տարիները:

Միլյուտինը վերջում հիշեցրեց, որ առաջարկվող միջոցների մասին լուրերը հասել են հասարակությանը և սթափ մտածող մարդիկ ամբողջ սրտով ողջունում են դրանք: Հենց որ Միլյուտինը սկսեց խոսել այն մասին, թե առաջարկվող միջոցառումների մասին խոսում են նաև արտասահմանում, Ալեքսանդր Երրորդը նրան ընդհատեց ու նկատեց.

- Բիսմարկը լսելով այդ մասին, խնդրել էր հանգուցյալ թագավորին Ռուսաստանում չմտցնել սահմանադրություն:

- Ձերդ մեծություն, - պատասխանեց Միլյուտինը, - մեզ մոտ խոսակցությունը սահմանադրությանը չի վերաբերում: Միայն առաջարկվում է ուղիղ հիմքերի վրա դնել այն, ինչ եղել է նախկինում: Երբ քննարկվում էր գյուղացիների դրության և այլ կարևոր օրենքների վերաբերյալ խնդիրնե-

րը, հանգուցյալ թագավորի թույլտվությամբ այդ նախագծերի քննարկման համար հրավիրվեցին պրակտիկ մարդիկ, որոնք գիտեին իրական կյանքն՝ ապրելով գավառներում և գյուղերում, որտեղ շատ հարցեր երևում են այլ լույսի տակ, քան մայրաքաղաքում: Հիմա էլ սենատորների ստուգումների ավարտից հետո հարկավոր կլինի կատարել կարևոր օրենսդրական աշխատանք: Եվ բնական է, որ գործի հաջողության համար հարկավոր է դրանք բազմակողմանի քննարկել:

Վերջում դիմելով ցարին, Միլյուտինն ասաց.

- Ձերդ մեծություն, ես ինձ թույլ եմ տալիս եռանդով պաշտպանել կոմս Լորիս-Մելիքովի առաջարկությունը:

Վալուևին ու Միլյուտինին հարկավոր էր հակահարված տալ: Եվ ցարի հրավերով խոսք վերցրեց փոստի ու հեռագրի նախարար Լ. Մակովը: Հայտնելով, որ Լորիս-Մելիքովի առաջարկած նախագծի մասին նոր է տեղեկանում, Մակովն ասաց.

- Որքանով կարողացա հասկանալ զեկուցագրից, ներքին գործերի նախարարի հիմնական մտադրությունն ինքնակալության սահմանափակումն է: Պետք է անկեղծորեն զեկուցեմ, որ ես իմ կողմից, իմ հոգու ու բանականության ամբողջ ուժով վճռականորեն մերժում եմ այդ միտքը: Դրա իրականացումը Ռուսաստանին կհասցնի կործանման:

- Այսօր, - եզրափակեց Լորիս-Մելիքովի ոխերիմ թշնամի Մակովը, - երբ դժբախտություն ենք ապրում, այս խառնակ ժամանակում ոչ թե պետք է զբաղվենք իշխանությունը թուլացնելու և կառավարելու ձևերը փոխելու նախագծով, այլ հարկավոր է մտածել իշխանությունն ամրապնդելու և հանցագործությունն արմատախիլ անելու մասին:

Ֆինանսների նախարար Ա. Աբազան հարկ համարեց պատասխանել Մակովին, ասելով.

- Փոստի նախարարի առարկությանը չի կարելի համաձայնվել, քանի որ Լորիս-Մելիքովի առաջարկությունների մեջ նույնիսկ նրա արտահայտած վախի ստվերը չկա:

Ֆինանսների նախարարը պաշտպանեց Լորիս-Մելիքովի առաջարկությունները, ընդգծելով դրանց անհրաժեշտությունը Ռուսաստանի համար:

Մակովին վճռականորեն առարկեց Լորիս-Մելիքովը և իր շիտակ բնավորության համապատասխան, դիմելով Ալեքսանդր Երրորդին, ասաց.

- Հնչած կարծիքների մեջ ինձ անուղղակի մատնացույց են անում այն բանի համար, որ ես չեմ կարողացել պաշտպանել անմոռանալի հանգուցյալ թագավորին: Ես չեմ արդարանում: Ես իսկապես մեղավոր եմ, որի մասին էլ, թագավոր, ձեզ զեկուցել եմ մարտի մեկի սարսափելի դեպքից անմիջապես հետո: Բայց եթե ես չեմ կարողացել պաշտպանել հանգուցյալ թագավորին, ապա ոչ թե եռանդի պակասի պատճառով: Ես նրան ծառայել եմ բոլոր ուժերով, ամբողջ հոգով, բայց, այդուհանդերձ, չեմ կա-

րողացել կանխարգելել աղետը: Չնայած իմ թախանձագին խնդրանքին, ծերդ մեծությանը հարմար չեղավ ազատ արձակել ինձ...

Ցարն ընդհատեց Լորիս-Մելիքովին ու ասաց.

- Ոչ, ես գիտեի, որ դուք, իսկապես, արել եք այն, ինչ կարողացել եք:

Արագայի վճռականությունը

Օգտվելով ցարի վերոհիշյալ ռեպլիկից, Լորիս-Մելիքովը հարկ համարեց նրան զեկուցել, թե չարագործների նկատմամբ ինչ միջոցներ է հարկավոր կիրառել և, ասաց.

- Դրա հետ միասին համոզված եմ, որ կայսրության մնացած բնակչության վերաբերյալ կառավարությունը չպետք է կանգ առնի ծեռնարկվող ռեֆորմների ճանապարհին: Սենատորական ստուգումների ավարտից հետո մեզ սպասում է շատ կարևոր օրենսդրական միջոցառումների հրատարակում: Անհրաժեշտ է, որ այդ միջոցառումները կշռադատված լինեն որքան կարելի է հանգամանորեն, որպեսզի դրանք պրակտիկ կիրառման մեջ լինեն օգտակար:

Միխայիլ Տարիելովիչի կողմնակիցները հավանության նշաններ էին ցույց տալիս նրա հաստատակամությունը նկատի ունենալով: Իսկ կոմսը շարունակելով իր խոսքը, հարկ համարեց ընդգծել, որ անչափ կարևոր է, որպեսզի կառավարությանը պաշտպանեն բարեմիտ մարդիկ:

- Այժմ առաջարկվող միջոցը, - ասաց վերջում Լորիս-Մելիքովը, - կարող է դրան մեծապես նպաստել: Ներկա պահին դա ամբողջապես կբավարարի ու կհանգստացնի հասարակությանը: Բայց, եթե մենք դանդաղենք, ապա բաց կթողնենք ժամանակը և երեք ամիս հետո այսօրվա մեր համեստ մտահղացումներն ամենայն հավանականությամբ արդեն ուշացած կլինեն:

Նախարարների խորհրդի նիստն ամբողջությամբ գրի առած պետական քարտուղար Ե. Պերետցը վկայում է, որ Լորիս-Մելիքովի ելույթի ժամանակ սրբազան սինոդի օբեր դատախազ Կ. Պոբեդոնոսցևը գունատվել էր քաթանի նման:

Լորիս-Մելիքովից հետո խոսք վերցրած Պոբեդոնոսցևը հարձակվեց նրա ներկայացրած զեկուցագրի ու բարեփոխումների նախագծի վրա: Դիմելով ցարին, նա ասաց.

- Այս նախագծում լսվում է կեղծիք, կասեմ ավելին, դա շնչում է կեղծիքով: Մեզ ասում են, թե օրենսդրական նախագծերը լավ մշակելու համար հարկավոր է հրավիրել ժողովրդի կյանքն իմացող մարդկանց, որ հարկավոր է լսել փորձագետների: Դրա դեմ ոչինչ չունեմ: Նախկինում էլ էին հրավիրում փորձագետներ, բայց ոչ այնպես, ինչպես այժմ առաջարկվում է: Ոչ, Ռուսաստանում ուզում են սահմանադրություն մտցնել և եթե ոչ մի անգամից, ապա ծայրահեղ դեպքում կատարել առաջին քայլը:

- Իսկ ի՞նչ է այդ սահմանադրությունը, - պաթոսով հարցրեց Պոբեդոնոսցևը և շարունակեց, - դրա պատասխանը մեզ տալիս է Արևմտյան Եվրոպան, որտեղ գոյություն ունեցող սահմանադրություններն ամեն կարգի բանսարկությունների գործիք են:

Այնուհետև բերելով Ֆրանսիայի օրինակը, Պոբեդոնոսցևը շարունակեց.

- Մեզ ասում են, թե հարկավոր է երկրի կարծիքն իմանալ նրա ներկայացուցիչների միջոցով: Բայց միթե՞ այն մարդիկ, որոնք այստեղ պետք է գան օրենսդրական նախագծերի շուրջ խորհելու, իսկապես կլինեն ժողովրդի կարծիքի արտահայտիչներ: Ես վստահեցնում եմ, որ ոչ: Նրանք կարտահայտեն միայն իրենց անձնական կարծիքն ու հայացքները:

Ալեքսանդր Երրորդը հարկ համարեց միջամտել օբեր դատախազին և ասաց.

- Ես մտածում եմ նույնը: Դանիայում ինձ բազմիցս ասել են, որ պալատում նիստեր անող պատգամավորները չեն կարող համարվել ժողովրդական պահանջմունքների իսկական արտահայտիչներ:

Ցարի ռեպլիկն ավելի ոգևորեց Պոբեդոնոսցևին, որն իր մտքերը զարգացնելով, վճռականորեն դեմ արտահայտվեց Լորիս-Մելիքովի նախագծին, ասելով, թե այսպես կոչված զեմստվոների ներկայացուցիչները միայն ցարին հեռացնելու են ժողովրդից:

- Այսպիսի սարսափելի օրերին, - եզրափակեց Պոբեդոնոսցևը, - հարկավոր է մտածել ոչ թե նոր խոսարանի հիմնադրման մասին, որտեղ կարտասանվեն ապականող ելույթներ, այլ գործի մասին: Հարկավոր է գործել:

Փաստորեն Ալեքսանդր Երրորդն իր ռեպլիկով հավանություն տվեց Պոբեդոնոսցևի առաջարկություններին: Բայց դա չխանգարեց, որպեսզի Լորիս-Մելիքովի համախոհ Աբազան խոսք վերցներ ու վճռականորեն առարկեր Պոբեդոնոսցևին, ընդգծելով, թե «մեր դրությանը Կոնստանտին Պետրովիչի նման մռայլորեն կարող է նայել նա, ով կասկածում է Ռուսաստանի ապագայի մեջ, ով վստահ չէ նրա կենարար ուժերի մեջ»:

- Ես, - շարունակեց Աբազան, - իմ կողմից վճռականորեն հանդես եմ գալիս այդպիսի հայացքների դեմ և կարծում եմ, որ մեր հայրենիքին սպասում է մեծ ապագա:

Այնուհետև Աբազան հիշեցրեց, որ Լորիս-Մելիքովի հետ միասին անցյալ տարի նոյեմբերին վերացրել են աղի հարկը, որով բնակչությունն ազատվել է տարեկան 15 միլիոն ռուբլու չափով հարկի վճարումից և ասաց հետևյալը.

- Երկու շաբաթ առաջ ձեր ներկայությամբ զեկուցել եմ հանգուցյալ թագավորին ֆինանսների և ներքին գործերի նախարարների առաջարկությունը գյուղացիական փրկագնի վճարումը տարեկան 9 միլիոն ռուբլով իջեցնելու մասին:

Աբազան թագավորին հիշեցրեց, որ այդ մասին նրան նորից զեկուցել

է և թագավորը համաձայնվել է փրկագինն իջեցնելու խնդիրը ներկայացնել պետական խորհրդի քննարկմանը:

- Համարձակվում եմ մտածել,- ասաց վերջում Աբազան, - որ այդ կարգի առաջարկությունը կծառայի որպես ժողովրդի մասին մեր հոգատարության ապացույց: Բայց ժողովրդի մասին մտածելով, հարկավոր չէ մոռանալ, որ բացի հասարակ ժողովրդից, պետության բնակչության մեջ կան նաև հասարակության կրթված դասեր: Գործի օգտակարության համար անհրաժեշտ է, ըստ հնարավորության, նրանց ընդգրկել կառավարման գործին, լսել նրանց կարծիքը և չանտեսել նրանց խորհուրդները, որոնք հաճախ շատ խելացի են լինում:

Պետական խորհրդում որոշում չընդունվեց

Պետական վերահսկիչ Դ. Սոլսկին նույնպես հանդես եկավ Լորիս-Մելիքովի նախագծի պաշտպանությամբ:

- Կոնստանտին Պետրովիչ, - ասաց Սոլսկին, - բոլորիս տրամադրությունը փչացրեց, ամենամռայլ գույներով ներկայացնելով մեր ներկա իրավիճակը: Բայց դրանից առաջ նա չգնաց: Քննադատեց ամեն ինչ, բայց ոչինչ չառաջարկեց:

Այնուհետև Սոլսկին ասաց, որ Պոբեդոնոսցևը արդարացիորեն նկատեց, թե այժմ հարկավոր է գործել, բայց իր հերթին, բացի քննադատելուց, ոչինչ չի առաջարկում, մինչդեռ հարկավոր է նկատի ունենալ, որ Լորիս-Մելիքովի կողմից առաջարկվել է գործողությունների ծրագիր:

- Եթե, - ավարտեց իր խոսքը Սոլսկին, - այդ ծրագիրը լավը չէ, ապա հարկավոր է փոխել մեկ ուրիշով, չսահմանափակվել միայն քննադատելով ու մնալ անշարժ: Դա անհնարին է:

Պոբեդոնոսցևի համախոհ հաղորդակցության ճանապարհների նախարար Կ. Պոսետը հայտարարեց, թե առաջարկվող միջոցները ժամանակավրեպ են և դրանք կարող են ընդունվել որպես զիջում սոցիալիստների պահանջներին ու սպառնալիքներին:


Պոսետին վճռականորեն առարկեցին Լորիս-Մելիքովն, Աբազան և Սոլսկին, ասելով, որ սոցիալիստների պահանջն ու առաջարկվող միջոցները ոչ մի ընդհանրություն չունեն:

Օրենքների դեպարտամենտի նախագահ իշխան Ս. Ուրուսովը պաշտպանելով Լորիս-Մելիքովի նախագիծն, ասաց, դիմելով ցարին.


- Ձերդ թագավորական մեծություն, եթե ներքին գործերի նախարարի առաջարկությունն ընդունվի, ապա իմ կարծիքով այդ չպետք է քննարկել որպես քաղաքական միջոց, այլ պրակտիկորեն օգտակար միջոց: Եվ քանի որ կառավարությունը հասարակության ներկայացուցիչների մեջ պետք փնթրի օգնություն, ապա անհրաժեշտ է, որպեսզի նրանք լինեն երկրի լավագույն ներկայացուցիչները:



Ն.Ա. Նեկրասով



Մ. Ե. Սալտիկով-Շչեդրին



Լ.Ն. Տոլստոյ



Ֆ.Մ. Դոստոևսկի

Լորիս-Մելիքովի նախագծի պաշտպանությամբ հանդես եկավ նաև ժողովրդական լուսավորության նախարար Սաբուրովը: Նշելով, որ այժմ կառավարությունն իր գործողություններում հենվում է միայն պետերբուրգյան օդը շնչող, երկրի մասին միայն թերթերից կարծիք կազմող չինովնիկների վրա, Սաբուրովն ասաց.

- Ներկա ծանր պայմաններում առավել անհրաժեշտ է հենվել երկրի առողջ ուժերի վրա: Հարկավոր է լսել նաև այլ միջավայրի մարդկանց կարծիքը:

Արքայաորդի Պ. Օլդենբուրգսկին նույնպես պաշտպանեց Լորիս-Մելիքովի նախագիծն, ընդգծելով, որ ընդունված շատ օրենքներ չեն համապատասխանում կառավարության բարի մտադրություններին, որովհետև դրանք կազմվել են առանց պրակտիկ մարդկանց կարծիքը հաշվի առնելու:

Երբ ներկա գտնվողներն արտահայտվեցին, Ալեքսանդր Երրորդը խնդրեց թագավորական ընտանիքի անդամներին հայտնել իրենց կարծիքը:

Առաջինը խոսք վերցրեց մեծ իշխան Կոնստանտին Նիկոլաևիչը:

- Եթե, ասաց նա, - ներքին գործերի նախարարն այժմ չներկայացներ իր նախագիծը, որը շատ կողմերով համապատասխանում է իմ նախկինում կատարած առաջարկություններին, ապա ես պարտքս կհամարեի հայտարարել իմ նախկին մտքերի մասին:

Այնուհետև, անրադառնալով Լորիս-Մելիքովի նախագծին, Կոնստանտին Նիկոլաևիչն արտահայտվեց դրա հետագա քննարկման օգտին:

Մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչը հարմար չգտավ կարծիք հայտնել, մինչև որ լրիվ չծանոթանա առաջարկություններին: Մեծ իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչը /թագավորի եղբայրը/ ասաց հետևյալը.

- Մեր ներկա վիճակն անտանելի է: Դրանից հարկավոր է դուրս գալ: Հարկավոր է քայլ կատարել կամ առաջ, կամ էլ ետ: Ես համոզված եմ, որ ետ գնալ չի կարելի, ուստի հարկավոր է առաջ քայլել: Դրա համար պետք է որոշում ընդունել: Եթե կոմս Լորիս-Մելիքովի առաջարկությունների դեմ առարկություններ եղան, ապա դրանք, ըստ էության, առաջացել են մանրամասների և ոչ թե գլխավոր գաղափարի վերաբերյալ:

Այնուհետև դիմելով թագավորին, Վլադիմիր Ալեքսանդրովիչը հարցրեց.

- Ասվածը նկատի ունենալով, թույլ չեք տա՞ ծերդ մեծություն, օգտակար համարել հրամայելու, որ նախագիծը վերանայվի: Բայց նախագիծը մերժել, իմ կարծիքով հարկավոր չէ:

Վլադիմիր Ալեքսանդրովիչի առաջարկությունը պաշտպանեցին կոմս Ստրոգանովը և իշխան Ուրուսովը:

Ալեքսանդր Երրորդը չառարկեց և համաձայնվեց նախագծի վերանայման համար ստեղծել հանձնաժողով Ստրոգանովի գլխավորությամբ: Վերջինս նկատի ունենալով իր առաջացած տարիքը, հրաժարվեց, բայց համաձայնվեց լինել հանձնաժողովի անդամ:

Սրանով էլ ցարն ավարտեց նիստը և խնդրեց Լորիս-Մելիքովին մնալ առանձին խոսակցության համար:

Պետական խորհրդում գերակշռում էին Լորիս-Մելիքովի կողմնակիցները: Նրանք համոզված էին, որ ի վերջո ցարը կհամաձայնվի ընդունել Լորիս-Մելիքովի նախագիծը: Բայց նրանց հույսերը չարդարացան...

Մեծ իշխան Կոնստանտին Նիկոլաևիչը մարտի 8-ի պետական խորհրդի նիստից հետո իր օրագրում նշել է հետևյալը. «Թագավորը սկսեց այդ միջոցների նկատմամբ տարակուսանքի և ոչ ժամանակին լինելու խոսքերով ու խնդրեց բոլոր ներկաներին անկեղծորեն արտահայտվել: Դրա համար դիտավորյալ հրավիրված Ստրոգանովը ուժեղ դեմ խոսեց, Մակովը /լակեյի ելույթ/, Պոսետը նույնպես, իսկ գլխավորը՝ Պոբեդոնոսցևն ապացուցում էր, որ դա կլինի միայն նոր խոսարան: Իսկ Սոլսկին, Նաբոկովը, Վալուևը, Միլյուտինը, Աբազան և Սաբուրովը ուժեղ և գերազանց խոսեցին նախագծի օգտին: Ես ապացուցեցի, որ իսկական տարաձայնություններ չկան և անհրաժեշտ է այդ գործը նորից վերանայել»:

Մարտի 8-ի նիստից հետո Պետերբուրգում լուրեր տարածվեցին Լորիս-Մելիքովի ու Աբազայի հրաժարականի մասին: Միխայիլ Տարիելովիչի դեմ նրա թշնամիները սկսեցին բացահայտ հանդես գալ, նրան մեղադրելով, որ նա այսպես կոչված իր բերած «նոր հովերով» պատճառ դարձավ ցարի մահվան ու բոլոր դժբախտությունների համար:

Ներքին գործերի նախկին նախարար Տիմաշևն, որի պաշտոնավարության ժամանակ 1866 թ. Կարակոզովը կրակել էր Ալեքսանդր Երկրորդի վրա, մոռանալով այդ իրողությունը, Լորիս-Մելիքովին պատասխանատու էր համարում Ռուսաստանում «սոցիալիզմի զարգացման» համար:

Լորիս-Մելիքովը հանգիստ էր վերաբերում իր հասցեին տարածվող լուրերին ու մեղադրանքներին: Բայց նրա համար, այնուամենայնիվ, անհասկանալի էր մնում Ի. Դելյանովի վարքագիծը: Ի. Դելյանովը, ինչպես գրել է Ե. Պերետցը իր օրագրում 1881 թ. ապրիլի 13-ին, «շարունակում է բարձրաձայն ամենուրեք խոսել, որ Լորիսը բանսարկու է, ֆոկուսնիկ /աճպարար/ և մտածում է միայն լիբերալականություն անելու մասին և որ դրանից ոչ թե օգուտ, այլ հսկայական վնաս կա»: Միխայիլ Տարիելովիչը, շարունակում էր Պերետցը, չնայած բարձր խավին պատկանող շատ անձանց թշնամանքին, իրեն դեռևս ամուր էր զգում:

Լորիս-Մելիքովի նկատմամբ Դելյանովի վերաբերմունքի մասին մի անգամ Կ. Եգյանը խոսակցություն բացեց: Նա փորձում էր Միխայիլ Տարիելովիչին համոզել՝ բացատրվելու Դելյանովի հետ:

- Բացատրվե՞մ, բայց ինչի համար, - առարկեց Լորիս-Մելիքովը:

- Որպես հայրենակցի, - պնդեց Կ. Եգյանը:

- Հոգյակս, որպես հայրենակցի, իմաստ չունի, որովհետև Դելյանովը վաղուց է մոռացել իր ազգությունը, իր արմատները: Իսկ որպես բարձ-

րաստիճան չինովնիկի՞, առավել ևս իմաստ չունի, որովհետև Պոբեդոնոսցևի գլխավորությամբ ավելի բարձր դիրքում գտնվողներն են իմ դեմ հանդես գալիս:

- Բայց, այնուամենայնիվ, - փորձեց հակաճառել Կ. Եզյանը:

- Հոգյակս, -ընդհատեց նրան Միխայիլ Տարիելովիչը, - մի՞թե քեզ ոչինչ չի ասում, երբ ես հաշվի առնելով քո նկատած հանգամանքը, որևէ կերպ չեմ արձագանքում Դելյանովի գործողություններին:

Կարապետ Եզյանը զգաց, թե Միխայիլ Տարիելովիչի խոսքերի մեջ ինչքան դառնություն կա և այլևս Դելյանովի մասին նրա հետ խոսակցություն չբացեց...

«Ստոգեմ կախույքի տակ»

Մարտի 8-ից հետո Լորիս-Մելիքովն ավելի ուժգին զգաց թագավորի սառը վերաբերմունքն իր նկատմամբ: Ալեքսանդր Երրորդն ամբաղջապես հայտնվեց Պոբեդոնոսցևի ազդեցության տակ: Նրա երաշխավորությամբ էլ ցարը Պետերբուրգի քաղաքապետ նշանակեց գեներալ-մայոր Նիկոլայ Բարանովին, առանց հարցնելու Լորիս-Մելիքովի կարծիքը: Բարանովն աչքի էր ընկնում ոչ միայն տգիտությամբ, այլև ստախոսությամբ: Նա ամեն օր մի քանի անգամ մեկնում էր Գատչինա, որտեղ ցարը փակվել էր մարտի 8-ի նիստից հետո և նրան զեկուցում էր, թե նրա դեմ նոր դավադրություններ են սարքվում, որոնց հեղինակներին շուտով կբացահայտի: Բարանովը հայտնում էր նաև, թե Ձմեռային պալատի մատույցներում հայտնաբերվել են պայթուցիկ ռումբեր, ձերբակալվել է ատրճանակով զինված անհայտ մեկը և այսպես շարունակ:

Պոբեդոնոսցևի խորհրդով ղեկավարվող Բարանովը ցարին կեղծ լուրեր զեկուցելու միջոցով նրան համոզում էր, որ ինքն է միայն անհանգստանում թագավորի անվտանգության համար, որին էլ խանգարում է ներքին գործերի նախարար Լորիս-Մելիքովը: Իր հերթին Պոբեդոնոսցևն էլ շարունակում էր ուժեղացնել հոգեբանական ճնշումը ցարի վրա: Ահա, օրինակ, 1881 թ. մարտի 11-ին ցարին ուղարկած նամակում Պոբեդոնոսցևը գրում էր. «Ամեն օր ավելի եմ համոզվում այն բանում, ինչ գրել եմ ձեզ մարտի 6-ին և նորից ջերմորեն խնդրում եմ խորհել այն ժամանակվա իմ խոսքերի շուրջ:

Հենց այս օրերին ավելորդ չէ զգուշավորությունը ձեզ համար: Ի սեր Աստծո, ուշադրություն դարձրեք հետևյալին.

1. Երբ պատրաստվում եք քնելու, բարի եղեք դուռը փակել ոչ միայն ննջարանում, այլև մնացած բոլոր սենյակներում: Վստահելի մարդը պետք է ուշադրությամբ հետևի կողպեքներին և ստուգի, որպեսզի սողնակները փակված լինեն:

2. Անպայման, յուրաքանչյուր երեկո, քնելուց առաջ, ստուգել արդյոք սարքին են զանգերի լարերը: Դրանք կարող են հեշտությամբ կտրել:

3. Յուրաքանչյուր երեկո ստուգեք կահույքի տակ, ամեն ինչ է կարգին:

4. Ձեր թիկնապահներից մեկը պետք է գիշերի ծեզնից ոչ հեռու, այդ նույն սենյակում:

5. Ձերդ մեծության մոտ ծառայող բոլո՞ր մարդիկ են հուսալի: Եթե որևէ մեկը փոքր ինչ կասկածելի է, կարելի է առիթ գտնել և հեռացնել նրան»:

Այնուհետև, Պոբեդոնոսցևը ավելացնում էր. «Տասը-տասնհինգ օրից շատ բան կարող է պարզվել, բայց մինչ այդ, ի սեր Աստծո, ամեն րոպե եղեք զգույշ: Թող Աստված պահի ձեզ ձեր ամբողջ տան հետ: Շատ հասարակ հոգիներ աղոթում են ձեզ համար»:

Ցարին այսպիսի բովանդակությամբ նամակներ ուղարկելով, Պոբեդոնոսցևին հաջողվեց նրան համոզել, որ ներքին գործերի նախարար Լորիս-Մելիքովը թերանում է իր գլխավոր գործում՝ թագավորի անվտանգության պահպանման մեջ:

Լորիս-Մելիքովը փորձում է աջակցել Սաբուրովին

Մինչ Պոբեդոնոսցևն ու Բարանովը սարսափ էին լցնում Ալեքսանդր Երրորդի գլխին, Լորիս-Մելիքովը զբաղված էր իր պարտականությունների կատարմամբ: 1881 թ. մարտի 12-ին նա թագավորին ուղարկած զեկուցագրում տեղեկացնում էր, որ հարցաքննության ժամանակ պետական հանցագործ Ռիսակովը ցանկություն է հայտնել բացահայտել մարտի մեկի հանցագործությանը նախորդող դավադրության մասին: Այդ միջոցով էլ հայտնաբերվել է դավադիրների ընդհատակյա բնակարանը, որտեղ եղել է նաև գաղտնի տպարան:

Իսկ Պոբեդոնոսցևն այդ ընթացքում եռանդով զբաղված էր Սաբուրովին ժողովրդական լուսավորության նախարարի պաշտոնից հեռացնելու հոգսով: Այդ պաշտոնի համար նա երաշխավորում էր բարոն Նիկոլաին, որը բավական երկար ժամանակ կառավարել էր Կովկասի ուսումնական մասը և մեկ տարի եղել էր լուսավորության նախարարի տեղակալ: «Այն բանի համար, - գրում էր Պոբեդոնոսցևը ցարին 1881 թ. մարտի 20-21-ի նամակում , - որպեսզի նախարար լինել, պահանջվում է լուրջ և հանգիստ պահվածք, որը Նիկոլաի մոտ կա և որը չես գտնի մյուս թեկնածուների մոտ»: Բայց Նիկոլաի առավելությունների մեջ ամենակարևորը, ինչպես նշում էր Պոբեդոնոսցևը, նրա նվիրվածությունն էր Ալեքսանդր Երրորդին:

Պոբեդոնոսցևը հասավ իր նպատակին: Ցարը համաձայնվեց Սաբուրովի փոխարեն ժողովրդական լուսավորության նախարար նշանակել

բարոն Նիկոլաին: Պոբեդոնոսցևի խորհուրդով ցարը Լորիս-Մելիքովին հրամայեց իր որոշման մասին անձամբ հայտնել Սաբուրովին:

Սաբուրովին ազատելը ծանր հարված էր Լորիս-Մելիքովի համար: Նա զրկվում էր հավատարիմ զինակցից: Այնուամենայնիվ, կատարելով ցարի հրամանը, Լորիս-Մելիքովը 1881 թ. մարտի 23-ին նրան ուղարկեց հետևյալ զեկուցագիրը. «Ձեր թագավորական մեծության կամքը կատարելու նպատակով ես այսօր եղել եմ ստատս-քարտուղար Սաբուրովի մոտ և նրան հայտնել ձերդ մեծության բարձրագույն կամքը: Ստատս-քարտուղար Տաճեևին նույնպես հանձնել եմ ձերդ մեծության կողմից ստորագրման համար ներկայացվող երկու հրամանագիր՝ ժողովրդական լուսավորության նախարար բարոն Նիկոլաի նշանակման և Սաբուրովի ազատման մասին:

Սույնով համարձակվում եմ խոնարհաբար միջնորդել ցանկալի համարելու, որպեսզի ստաս-քարտուղար Սաբուրովը վաղը ներկայանա ձերդ մեծությանը: Այս միջնորդությունը կատարում եմ այն նկատառումով, որ նրա պաշտոնից ազատելու հարցը, որպես վերջնականորեն լուծված, ոչ մի բացատրություն հետագայում չի պահանջում, բայց ստաս-քարտուղար Սաբուրովը դառնալով իր նշանակմանն անհամապատասխան, սակայն պատկանում է բարոյապես լիակատար մաքուր մարդկանց շարքին: Ձերդ մեծության կողմից արտահայտած մի քանի սիրալիր խոսք նրա վրա բարերար ազդեցություն կունենա»:

1881 թ. մարտր 24-ին Կ. Տյուտչևային գրած նամակում հայտնելով ցարի հետ հանդիպման մասին, Կ. Պոբեդոնոսեցը գրում է. «Սաբուրովը հանված է և փառք Աստծո: Բ. Նիկոլաին հաստատուն կանոնների և հին դպրոցի, հիմնավոր կուլտուրայի մարդ է: Մնացած բոլորը շատ թեթև են և անհուսալի իրենց հայացքներով ու գործերով»:

Վարչյալ իշխանուհի Յուևսկայան

Հոր մահից հետո Ալեքսանդր Երրորդն, որն իշխանուհի Յուևսկայային տանել չէր կարողանում, որոշեց վերջնականապես զրկել նրան ու երեխաներին Ձմեռային պալատում ապրելու հնարավորությունից և մի շարք այլ արտոնություններից:

Ցարն իր ցանկության կատարումը դրեց Լորիս-Մելիքովի վրա: Միխայիլ Տարիելովիչը հանդիպեց իշխանուհուն, նրան հայտնեց թագավորի կամքը: Ի պատասխան դրա, իշխանուհին 1881 թ. ապրիլի 10-ին Լորիս-Մելիքովին հանձնեց իր նամակը, որի մասին կոմսն անհապաղ հայտնեց թագավորին:

«Համարձակվում եմ խոնարհաբար զեկուցել, - հայտնում էր Լորիս-Մելիքովը, - որ իշխանուհուց պահանջել ինչ որ նոր պարտավորությունների ի լրումն նրա գրության, իմ կարծիքով հազիվ թե հարմար լիներ ներկա պահին, նկատի ունենալով նրա հիվանդագին-գրգռված վիճակը և տարած ցնցումները»:

Այստեղ էլ Լորիս-Մելիքովը դրսևորեց իր մարդկային ազնիվ հատկությունը, թագավորին հասկացնելով, որ չի կարելի վշտից մոլորված իշխանուհու համար ստեղծել լրացուցիչ դժվարություններ: Բայց ցարն անողոք էր իր խորթ մոր նկատմամբ:

Ցարի անողոքությունը մեղմելու նպատակով Լորիս-Մելիքովը նրան գրում էր. «Ինձ թվում է, որ խնդրելով գնել առանձին տուն իր և երեխաների համար, իշխանուհին դրանով հրաժարվում է ինչպես Ձմեռային պալատում, այնպես էլ քաղաքից դուրս գտնվող պալատներից մեկում ապրելու հավակնությունից»:

Այնուհետև Միխայիլ Տարիելովիչը ցարին խոստանում էր, որ կգործադրի բոլոր ջանքերը, որպեսզի իշխանուհին պետական բանկ մուծի 3 միլիոն 400 հազար ռուբլի իր զավակների անունով: «Բայց, - գրում էր Լորիս-Մելիքովը, - ստանձնել դրա դրական լուծումը, որպես մարդ չեմ կարող»:

Տվյալ դեպքում Լորիս-Մելիքովը ղեկավարվում էր մարդասիրությամբ, քանի որ չէր մոռացել հանգուցյալ ցարին տված երդումը՝ պաշտպանել իշխանուհուն ու երեխաներին: Թագաժառանգն էլ էր այդպիսի երդում տվել հորը: Բայց հիմա, Ալեքսանդր Երկրորդի մահից հետո, նա մոռացավ դա: Իշխանուհի Յուրևսկայայի համար նա ստեղծեց անտանելի պայմաններ և հարկադրեց նրան հեռանալ Պետերբուրգից...

Այդպես էլ պարզ չեղավ

Վերջապես Ալեքսանդր Երրորդը տեղիք տվեց Լորիս-Մելիքովի հիշեցումներին և հրամայեց 1881 թ. ապրիլի 21-ին հրավիրել հանձնաժողովի նիստ, որի մասին խոստացել էր դեռևս մարտի 8-ին:

Հանձնաժողովի նիստից առաջ, Պոբեդոնոսցևը հասցրել էր Ալեքսանդր Երրորդին հայտնել. «Լորիսը, Միլյուտինը, և Աբազան շարունակում են նույն քաղաքականությունը և ձգտում են մեզ հասցնել մինչև ներկայացուցչական կառավարություն... Տարօրինակ է լսել խելացի մարդկանց, որոնք կարող են լրջորեն խոսել Ռուսաստանում ներկայացուցչական սկզբունքի մասին... Ավելի ու ավելի եմ համոզվում, որ այդ նախարարներից բարիք չեմ կարող սպասել... Նրանց խոսքերն անկեղծ չեն, ճշմարտությամբ չեն շնչում» Այս նամակը ցարի վրա վճռական ազդեցություն ունեցավ և նա ընդունեց վերջնական որոշում:

Հանձնաժողովի նիստին ներկա էին մեծ իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչը, Լորիս-Մելիքովը, Միլյուտինը, Ա. Աբազան, Իգնատևը, բարոն Նիկոլաին, Դ. Նաբոկովը և Պոբեդոնոսցևը:

Բացելով նիստը, ցարը հավաքվածներին հայտարարեց, որ ցանկություն ունի նրանց հետ խորհրդակցել ստեղծված ներկա դժվարին վիճակից հաջողությամբ դուրս գալու միջոցառումների մասին:

Առաջինը խոսք վերցրեց Պոբեդոնոսցևը: Նա մատնացույց արեց, որ «մեր ժամանակի բոլոր դժբախտությունները տեղի են ունենում հեշտ շահ ստանալու կրքերից, չինովնիկների անբարեխղճության, հասարակության վերին շերտերում բարոյականության ու հավատի անբավարարության, երիտասարդության սանձարձակության ու հասարակ ժողովրդի մեջ հարբեցողության հետևանքով, որոնք կործանում են ամբողջ սերունդներ և, վերջապես, իշխանությունների նկատմամբ ընդհանուր անհարգալից վերաբերմունքի արդյունքով»:

Պոբեդոնոսցևը բերած փաստարկներից, ինչպես միշտ, ոչ մի դրական հետևություն չարեց, բացի կառավարության կողմից խստությունն ուժեղացնելու պահանջից:

Պոբեդոնոսցևից հետո խոսեց Լորիս-Մելիքովը:

- Ռուսաստանն, - ասաց նա, - ուրիշ ճանապարհ չունի, բացի նախորդ թագավորության ժամանակ սկսված ռեֆորմները շարունակելուց: Մենք քանի դոփում ենք տեղում, միայն տանուլ ենք տալիս, այն էլ այն ժամանակ, երբ հասարակությունը մեզանից վճռական միջոցներ է սպասում ինչպես պետական կառավարման, այնպես էլ ֆինանսների, դատարանի, ժողովրդական կրթության ասպարեզում: Էլ չեմ խոսում գյուղացիական ռեֆորմի անկատարելիության մասին: Չի կարելի կանգնած մնալ տեղում: Երկու հազար տարի քրիստոնեությունը գոյություն ունի, բայց մշտապես կատարելագործվում է: Պետական իշխանության մարմինները պետք է ենթարկվեն մշտական կատարելագործման:

Իր խոսքի վերջում Լորիս-Մելիքովը հայտարարեց, որ անհրաժեշտ է ստեղծել կառավարման համակարգի միասնություն:

Դեռ Լորիս-Մելիքովը չէր ավարտել իր խոսքը, երբ Պոբեդոնոսցևը չսպասելով հրավերի, վճռականորեն պնդեց իր հայտնած տեսակետը և առարկեց Լորիս-Մելիքովին քրիստոնեության կատարելագործման մասին հայտնած մտքին, ընդգծելով, թե քրիստոնեությունն այնպես է ստեղծվել, որ կատարելագործման կարիք չունի:

Որքան էլ տարօրինակ էր, բարոն Նիկոլաին, որը լավ հարաբերություններ ուներ Պոբեդոնոսցևի հետ, պաշտպանեց Լորիս-Մելիքովին:

Հանդես եկավ Աբազան: Նա սկսեց նրանից, որ Պոբեդոնոսցևի նշած շատ ցավագին փաստեր իսկապես հասարակական կենցաղում գոյություն ունեն:

- Բայց, - շարունակեց նա, - Կոնստանտին Պետրովիչի ելույթն ավելի շատ բարոյագետի ստեղծագործություն է, քան պետական գործչի ծրագիր: Նա միանգամայն ճիշտ է մատնացույց անում մեր վերքերը, բայց

դրա հետ մեկտեղ ոչ մի լուրջ միջոց չի առաջարկում դրանց բուժման համար: Իհարկե, բարոյականությունն ու եկեղեցին պետք է իրենց գործն անեն, բայց նրանք միայնակ չեն կարող հաղթել չարիքին: Կոնստանտին Պետրովիչի առաջարկության համաձայն ոչ մի որոշում, որքան էլ հագեցած լինի նորին կայսերական մեծության բարձրագույն մանիֆեստի առավել հանդիսավոր ձևով, մեր դժվարին իրադրության մեջ չի կարող ցույց տալ գործնական օգնություն:

Այնուհետև Ա. Աբազան հանգամանորեն խոսեց Պոբեդոնոսցևի մյուս փաստարկների մասին և մատնանշեց, որ «մեր հոգևորականությունն ոչ միայն խոսքով, այլև գործով պետք է քարոզի ավետարանական ուսմունքը: Ահա, գործունեության այն դաշտը սինոդի օբեր-դատախազի համար, որն, իմիջիայլոց, մշտապես նախատում է մյուս նախարարներին նրանց վստահված նախարարություններում տիրող անկարգապահության համար:

Իր ելույթի վերջում անդրադառնալով Լորիս-Մելիքովի ծրագրին, Աբազան ասաց.

- Արդարացի է նկատում կոմս Լորիս-Մելիքովը, որ մենք տառապում ենք կառավարման մեջ իմաստության բացակայությունից: Յուրաքանչյուր նախարարություն մեզ մոտ քիչ է մնում դիտվի որպես առանձին պետություն: Հազվադեպ է, որ մի նախարար գիտե, թե ինչ է մյուսը ձեռնարկում: Միշտ չէ, որ կարելի է հույս ունենալ իր ընկերակիցների աջակցության վրա, բայց նրանցից ոմանց կողմից հանդիպում ես հակագործողությունների: Դրա հետևանքով ստացվում է լրիվ անհամաձայնություն և կառավարությունը հետապնդած նպատակին չի հասնում: Կառավարության այսպիսի դրությունն այլևս անհնարին է շարունակել: Հասարակությունը նրա նկատմամբ չունի համապատասխան վստահություն: Կարելի է ավելին ասել՝ հասարակությունը չի վստահում կառավարությանը:

Նկատելով, որ Պոբեդոնոսցևը ուզում է իրեն առարկել, Աբազան ավելի վճռական տոնով շարունակեց.

- Այսպիսի անվստահության գլխավոր պատճառը ներկայումս հանգում է նրան, որ հասարակության մեջ լուրեր են թափանցում բարձրագույն կառավարական անձանց կազմում արմատական տարաձայնությունների մասին, այն մասին, որ մարտի 8-ի նիստում մասնակիցներից մեկի որոտալից ելույթում դատողություններ են հնչել իր էությամբ լիբերալ իմաստով անմեղ առաջարկությունների դեմ, այն մասին, որ թագավոր կայսրին մշտապես հետադիմական ուղղությամբ գրություններ են ներկայացվում, վերջապես այն մասին, որ նախարարներից մեկը «Մոսկովսկիե վեդեմոստի», «Ռուս» թերթերին այդ ոգով հաղորդումներ է տալիս:

Ա. Աբազայի ակնարկն, որը շատ թափանցիկ էր, վերաբերում էր Պոբեդոնոսցևին, քանի որ նա էր կապված վերոհիշյալ թերթերի խմբագիրների, հետադիմական հայացքներ ունեցող Կատկովի ու Ակսակովի հետ:

Պաշտպանելով Լորիս-Մելիքովի առաջարկություններն, Աբազան դրանք համարեց օգտակար ինչպես գործի, այնպես էլ հասարակության հանգստության համար: Աբազայի ելույթից հետո Պոբեդոնոսցևը լռեց: Իսկ Ալեքսանդր Երրորդը համաձայնվեց, որ անհրաժեշտ է բարձրագույն կառավարման միասնությունն, որը սակայն, ներկա պայմաններում հնարավոր չէ իրականացնել: Ուստի նա հանձնարարեց նախարարներին ներկայացնել քննարկվող հարցի վերաբերյալ առաջարկություններ:

Փակելով խորհրդակցությունը, ցարը միաժամանակ հույս հայտնեց, որ նախարարները նորից անհրաժեշտության դեպքում կհավաքվեն նախնական խորհրդակցության: Այսպես էլ պարզ չեղավ թագավորի վերաբերմունքը: Վերջապես ո՞ւմ էր նա պաշտպանում, հայտնի չեղավ...

«Դուք պաշտում եք կուռքերին...»

Լորիս-Մելիքովն ու իր կողմնակիցներն, այնուամենայնիվ, կարծում էին, որ խորհրդակցության ժամանակ Պոբեդոնոսցևը լրիվ ջախջախվեց, քանի որ ըստ ցարի հրամանի, նա այսուհետև իր գրությունները պետք է ոչ թե ուղղակի ցարին ներկայացներ, այլ խորհրդակցությանը, որն էլ նրա առաջարկությունները չէր ընդունելու:

Գատչինայից վերադառնալու ճանապարհին, վագոնի մեջ Պոբեդոնոսցևը մոտեցավ Լորիս-Մելիքովին ու Աբազային, նրանց ձեռք մեկնեց և ափսոսանք հայտնեց իրենց միջև առաջացած թյուրիմացության համար: Օբեր-դատախազն ասաց նաև, որ մարտի 8-ի նիստի ժամանակ նա միայն իր համոզմունքն է հայտնել, բոլորովին չուզենալով նրանց վնասել:

Աբազան ամբողջապես համոզված էր, որ Լորիս-Մելիքովի հաղթանակն ապահովված է: Բայց Պոբեդոնոսցևն արտաքուստ էր հաշտության ձեռք մեկնել:

1881թ. ապրիլի 25-ին Ալեքսանդր Երրորդին ուղարկած նամակում Պոբեդոնոսցևը հայտնում էր, որ ապրիլի 21-ին Գատչինայից վերադառնալիս Լորիս-Մելիքովն ու Աբազան ունեին բարձր տրամադրություն, որի համար ինքը հիմքեր չի տեսնում:

«Լսում եմ, - գրում էր Պոբեդոնոսցևը, - թե ինչպիսի իմաստ է տրվում խորհրդակցության արդյունքներին, իբր թե կառավարությունը պետք է կենտրոնանա նախարարների խորհրդում, որը հարցերը լուծելու է մեծամասնությամբ և մեծամասնության գերակշռությամբ էլ զեկուցելու են ձերդ մեծությանը»:

Այնուհետև ընդգծելով, որ երբեք չի զիջելու նրանց (Լորիս-Մելիքովին ու նրա կողմնակիցներին - Վ.Պ.), Պոբեդոնոսցևը հայտնում էր, թե «քանի անգամ, դեռևս հանգուցյալ թագավորի կենդանության ժամանակ Լորիս-Մելիքովի հետ երկար վեճերի ընթացքում, երբ նա ինձ նախատում էր հա-

մառության մեջ, ես նրան ասել եմ. ես հավատում եմ միակ Աստծոն, իսկ դուք, իմ համոզմամբ, պաշտում եք կուռքերին, կեղծ աստվածներին: Եվ ինչպե՞ս եք ուզում, որ ես ձեզ հետ համաձայնվեմ»:

Ցարին ուղարկած նամակում օբեր-դատախազը գրում էր, որ «Ամբողջ Ռուսաստանը սպասում է, բոլոր ազնիվ մարդիկ շփոթմունքի մեջ են: Մյուս կողմից, բոլոր խելագարները, որոնք սպասում են սահմանադրության, լրագրողները, պրոֆեսորները, լիբերալ-չինովնիկները անիծում են ինձ բոլոր խաչմերուկներում, քանի որ լուր է տարածվել, թե ես խանգարել եմ սահմանադրությանը»: Միաժամանակ նա ցարին հայտնում էր, որ «խորհում է մանիֆեստի տեքստի շուրջ, կխորհրդակցի կոմս Ս.Գ.Ստրոգանովի հետ և կներկայացնի թագավոր կայսրի հայեցողությանը»:

«Հայրենիքի խղճուկ որդիներ...»

Դեռևս փետրվարի վերջին ձերբակալված Ժելյաբովը տեղեկանալով Ալեքսանդր Երկրորդի սպանության և Ռիսակովի ձերբակալության մասին, անհնազանդացավ, որ ռումբ նետողի դատավարությունը կարող է հասարակության աչքին շատ անգույն երևալ, դիմեց վճռական միջոցի: Նա դատախազին ուղարկեց հետևյալ հայտարարությունը. «Եթե նոր թագավորը գայիսոնը ստանալով հեղափոխության ձեռքից, մտադիր է թագավորասպանի նկատմամբ վարվել հին համակարգով, եթե Ռիսակովին մտադիր են մահապատժի ենթարկել, աղաղակող անարդարություն կլինի պահպանել բազմիցս Ալեքսանդր Երկրորդի դեմ մահափորձ կատարած իմ կյանքը, որը միայն հիմար պատահականությամբ սպանությանը ֆիզիկապես չի մասնակցել: Ես պահանջում եմ ինձ միացնել մարտի 1-ի գործին և եթե պետք է, ապա կանեմ ինձ մերկացնող բացահայտում... Միայն կառավարության վախով կարելի է բացատրել մի կախաղանը և ոչ թե երկուսը»:

1881թ. մարտի կեսերին սկսվեց «Ժողովրդական ազատություն» կազմակերպության անդամներ Անդրեյ Ժելյաբովի, Սոֆիա Պերովսկայայի, Նիկոլայ Կիբալչիչի, Տիմոֆեյ Միխայլովի, Նիկոլայ Ռիսակովի դատավարությունը, որն իր վրա էր բևեռել հասարակայնության չթուլացող ուշադրությունը:

Դատավարության ընթացքին հատուկ ուշադրությամբ հետևում էր Պոբեդոնոսցևը և ամեն օր կանոնավոր գրավոր տեղեկացնում Ալեքսանդր Երրորդին:

Պետական մեղադրանքը պաշտպանում էր Մոսկվայի դատական պալատի դատախազ Ն.Մուրավևը, որը Սոֆիա Պերովսկայայի մանկության ընկերն էր եղել: Սովորաբար մարդկային օրինավորությունը պահանջում էր, որպեսզի Մուրավևը հրաժարվեր մեղադրանքը պաշտպանելուց, սա-

կայն նա սառնասրտորեն իր մանկության ընկերուհու համար պահանջեց մահապատիժ: Հենց այդ էլ նկատի ունենալով, նշանավոր իրավաբան Ա.Կոնին Մուրավևին անվանեց «սրիկա և քրիստոսավաճառ»:

Դատավարության ժամանակ ծրագրային ճառով հանդես եկավ Ժելյաբովը, որը հրաժարվել էր դատապաշտպան ունենալուց: «Իմ անձնական խնդիրը, իմ կյանքի նպատակը, - ասաց իր խոսքի վերջում Ժելյաբովը, - եղել է ընդհանուրի բարեկեցությանը ծառայելը: Երկար ժամանակ ես այդ նպատակի համար ծառայել եմ խաղաղ ճանապարհով և միայն հետո հարկադրված եղա անցնել բռնության: Իմ համոզմունքներով ես կթողնեի բռնի պայքարի այդ ձևը, եթե հնարավոր լիներ խաղաղ պայքարն, այսինքն իմ գաղափարների խաղաղ պրոպագանդան, իմ կողմնակիցների խաղաղ կազմակերպության ստեղծումը: Իմ վերջին խոսքում թյուրիմացությունից խուսափելու համար ես կուզեի ասել նաև հետևյալը. խաղաղ ճանապարհը հնարավոր է, ես, օրինակ, կհրաժարվեի ահաբեկչական գործունեությունից, եթե փոխվեին արտաքին պայմանները»:

Իր վերջին խոսքում Կիբալչիչը չժխտելով Ալեքսանդր Երկրորդի դեմ ահաբեկչության մասնակցելը, հարկ համարեց հայտնել հետևյալը. «Ես կազմել եմ օդագնաց ապարատի նախագիծ: Ես կարծում եմ, որ այդ ապարատը միանգամայն իրականանալի է: Ես ներկայացրել եմ այդ ապարատի մանրամասն շարադրանքը գծագրերով ու հաշվարկներով: Այնքանով, որ հավանաբար, ես հնարավորություն չունեմ լսել փորձագետների տեսակետներն այդ նախագծի վերաբերյալ և ընդհանրապես հնարավորություն չեմ ունենա հետևել նրա ճակատագրին և հնարավոր է նախատեսել, որ որևէ մեկը կօգտվի այդ իմ նախագծից, ապա ես այժմ հրապարակավ հայտարարում եմ, որ իմ կազմած նախագիծը և դրա էսքիզը գտնվում է պարոն Գերարդի մոտ»:

Սոֆիա Պերովսկայան վերջին խոսքում ասաց, որ դատախազն իրենց վրա շատ մեղադրանքներ է թափել և ընդգծում է, որ «այդ բոլոր մեղադրանքներին ես ինձ թույլ եմ տալիս առարկել ու ասել. ով գիտե մեր կյանքն ու պայմանները, որոնցում մենք գործում ենք, մեր վրա չեն դնում ոչ անբարոյականության մեղադրանք և ոչ էլ դաժանության մեղադրանք»:

Դատարանը վճռեց Անդրեյ Ժելյաբովին (30 տարեկան), Սոֆիա Պերովսկայային (27 տարեկան), Նիկոլայ Կիբալչիչին (27 տարեկան), Նիկոլայ Ռիսակովին (19 տարեկան), Հեսյա Հելֆմանին (26 տարեկան), Տիմոֆեյ Միխայլովին (21 տարեկան) զրկել բոլոր իրավունքներից և մահապատժի ենթարկել կախաղանի միջոցով:

Ապրիլի 2-ին Կիբալչիչն ընդարձակ նամակով դիմեց Ալեքսանդր Երրորդին, հանգամանորեն բացատրելով, թե ինչու և ինչ պայմանների թելադրանքով է Ռուսաստանում ծագում հեղափոխական պայքար: Կարևորելով քաղաքական ազատության նշանակությունը, Կիբալչիչը գրում էր.

«Ես խորապես համոզված եմ, որ եթե սոցիալիստական շարժման հենց սկզբից, այսինքն 1873 թվականից սկսած, պրոպագանդիստներին տրվեր խոսքի լրիվ ազատություն, ապա դրանից կշահեին մեր երկրի հասարակական բոլոր տարրերը, և՛ սոցիալ-հեղափոխական կուսակցությունը, և՛ ժողովուրդը, և. հասարակությունը, և՛ նույնիսկ կառավարությունը»:

Այնուհետև բացատրելով, թե ինչու նրանք բոլորը կշահեին, Կիբալչիչը հույս էր հայտնում, որ ցարը հենվելով ժողովրդական շահերի վրա, կարող է Ռուսաստանին բարիք բերել: Կիբալչիչի նամակի վրա Ալեքսանդր Երրորդը մակագրել է. «Ոչ մի նորություն չկա՝ հիվանդ երևակայության ֆանտազիա և կեղծ տեսակետ, որի վրա կանգնած են այդ սոցիալիստները, հայրենիքի խղճուկ որդիները»:

1881թ. ապրիլի 3-ին առավոտյան ժամը 9-ին Պետերբուրգի Սեմյոնովյան հրապարակում Ա.Ժելյաբովը, Ս.Պերովսկայան, Ն.Կիբալչիչը, Ն.Ռիսակովը և Տ.Միխայլովը կախաղան հանվեցին:

«Չարիքի փոխարեն բնտրեք բարիք..»

«Ժողովրդական ազատություն» նարոդնիկական կազմակերպության անդամների դատավարությունն իր վրա էր բևեռել հանրության բուռն ուշադրությունը: Դատավարության ընթացքում Լ.Ն. Տոլստոյը մեծ նամակով դիմեց Ալեքսանդր Երրորդին: «Ձեր հորը, - գրում էր մեծ գրողը, - մարդկանց համար շատ բարի գործեր կատարած ռուսական ցարին անմարդկային կերպով ջարդեցին ու սպանեցին ոչ թե նրա անձնական թշնամիները, այլ գոյություն ունեցող կարգի թշնամիները, սպանեցին հանուն ամբողջ մարդկության ինչ որ բարձրագույն բարօրության: Դուք կանգնել եք նրա տեղը և ձեր առջև նույն թշնամիներն են, որոնք կործանեցին ձեր հոր կյանքը»:

Անդրադառնալով Ալեքսանդր Երրորդի պարտականություններին, Լ.Տոլստոյը բազմաթիվ մեջբերումներ է կատարում Սուրբ գրքից և առանց Լորիս-Մելիքովի անունը հիշելու, գրում է, որ 20 տարի առաջ հանդես են եկել գոյություն ունեցող կարգի ու կառավարության նկատմամբ ատելությամբ լցված երիտասարդ մարդիկ: Այդ մարդկանց դեմ տարվող պայքարում կիրառվել է երկու միջոց. մեկը՝ հիվանդին, փթածին ուղղակի անդամահատել և խստագույն պատժել, մյուսը՝ կարգավորել հիվանդությունը: Սա լիբերալ միջոցն էր, որը պետք է բավարարեր անհանգիստ ուժերին և թուլացներ թշնամական ուժերի ճնշումը:

Լ.Տոլստոյը գրում էր, թե որտեղ էլ որ մարդիկ հավաքվում են, խոսում այն մասին, թե ինչպես վերջ տան չարությանը, բաժանվում են երկու մասի: Դրանցից մեկը կողմնակից է խստությանը, մահապատժին, աքսորին, ոստիկանությանը, գրաքննության ուժեղացմանը, իսկ մյուսը գտնում է,

որ չարիքը հնարավոր է մեղմել ազատությամբ, մեղմ պատժամիջոցներով, «նույնիսկ ներկայացուցչությամբ, սահմանադրությամբ»: Ոմանք, նշում էր մեծ գրողը, «հիվանդությունը ձգտում են բուժել վճռական միջոցներով, իսկ մյուսները կբուժեն ոչ թե հիվանդությունն, այլ կձգտեն օրգանիզմը դնել շատ նպաստավոր, հիգիենիկ պայմանների մեջ, հույս ունենալով, որ հիվանդությունն ինքն իրեն կանցնի»:

Այնուհետև անդրադառնալով դատավարությանը, L.Տոլստոյը գրել է. «Թագավոր, ինչ որ սարսափելի ճակատագրական թյուրիմացությամբ հեղափոխականների հոգու մեջ բռնկվել է ահավոր ատելություն ձեր հորն ընկատմամբ, ատելություն, որը նրանց տարավ դեպի սարսափելի սպանության: Այդ ատելությունը կարող է թաղվել նրանց հետ: Հեղափոխականները կարող էին, թեև անարդարացի, նրան դատապարտել իրենցից տասնյակների մահվան համար: Բայց դուք մաքուր եք ամբողջ Ռուսաստանի և մեր առջև: Ձեր ձեռքերին արյուն չկա: Դուք ձեր դրության անմեղ զոհն եք: Դուք մաքուր ու անմեղ եք ձեր առջև ու Աստծո առջև: Բայց դուք կանգնած եք ճանապարհների խաչմերուկում: Մի քանի օր, և եթե հաղթեն նրանք, ովքեր խոսում ու մտածում են, թե քրիստոնեական ճշմարտությունները միայն խոսակցությունների համար են, իսկ պետական կյանքում պետք է արյուն թափվի ու թագավորի մահը, դուք հավերժ դուրս կգաք այն աստվածային մաքուր վիճակից... և կմտնեք ամեն ինչ և նույնիսկ մարդու համար Աստծո օրենքի խախտումն արդարացնող պետական անհրաժեշտությունների խավար ուղին»:

«Մի ներեք,- շարունակում էր L.Տոլստոյը,- մահապատժի ենթարկեք հանցագործներին, դուք կանեք այն, որ հարյուրավորների շարքից կպոկեք 3-ի, 4-ի և շարունակությունը կծնի չարիք ու 3-ի, 4-ի փոխարեն կաճեն 30-ը, 40-ը և դուք հավետ կկորցնեք այն րոպեն, որն ավելի քանկ է, քան դարը, րոպեն, որի ընթացքում դուք կկարողանայիք կատարել Աստծո կամքը, իսկ չկատարելով դուք ընդմիշտ դուրս կգաք այն ճամփաբաժնից, որով դուք կկարողանայիք չարիքի փոխարեն ընտրել բարին...»:

«Մեր Քրիստոսը ձեր Քրիստոսը չէ»

Մեծ գրողի նամակը թագավորի մոտ խոր տպավորություն թողեց: Նա հասկանում էր, որ L.Տոլստոյն արտահայտում է նաև ռուս մտավորականության անհանգստությունը: Ինչպե՞ս վարվել: Արդյո՞ք հնարավոր է հանցագործներին ազատել մահապատժից: Բայց ցարին տատանվելու վիճակից հանեց Պոբեդոնոսցևը, որը L. Տոլստոյի ցանկությամբ նախապես ծանոթացել էր ցարին ուղղված նրա նամակին:

1881թ. մարտի 30-ին Պոբեդոնոսցևը շտապեց Ալեքսանդր երրորդին ուղարկել հետևյալ նամակը. «Այսօր տարածվել է մի միտք, որն ինձ սար-

սափեցնում է: Մարդիկ իրենց մտքերով այնպես են այլասերվել, որ ոմանք հնարավոր են համարում դատապարտված հանցագործներին ազատել մահապատժից: Արդեն ռուս մարդկանց մեջ սարսափ է տարածվում, որ կարող են ձերդ մեծությանը համոզել ներում շնորհել հանցագործներին: Լուրն այս հասել է ծերունի կոմս Ստրոգանովին, որն այսօր շատ հուզված եկավ ինձ մոտ: Կարո՞ղ է դա պատահել: Ոչ, ոչ և հազար անգամ ոչ - դա չի կարող լինել, որպեսզի դուք ամբողջ ռուս ժողովրդի առջև ներեք ձեր հոր, ռուս թագավորին սպանողներին, որի արյան համար (բացի մի քանի թուլամիտներից) ամբողջ երկիրը պահանջում է հատուցում և բարձրաձայն դժգոհում է, որ դա ուշացվում է: Եթե այդ պատահի, հավատացեք ինձ, թագավոր, դա կընդունվի որպես մեծ մեղք և կտատանի ձեր բոլոր հպատակների սիրտը: Ես ռուս մարդ եմ, ապրում եմ ռուսների մեջ և գիտեմ, թե ինչ է զգում ժողովուրդը և ինչ է պահանջում: Այս րոպեին բոլորը ծարավ են հատուցման: Այդ չարագործներից ով խուսափի մահից, անմիջապես նոր դավադրություններ կկազմակերպվի...»:

Պոբեդոնոսցևի նամակը ցարին հանեց տատանողական վիճակից: Եվ Ալեքսանդր երրորդը օբեր-դատախազի նամակի վրա կատարեց հետևյալ մակագրությունը. «Հանգիստ մնացեք, այդպիսի առաջարկություններով ոչ ոք չի համարձակվի ինձ մոտ գալ և բոլոր վեցն էլ կկախվեն, ինչի համար երաշխավորում եմ»:

Անդրեյ Ժելյաբովի, Սոֆիա Պերովսկայայի ու մյուսների մահապատժից հետո, 1881թ. հունիսի 15-ին Պոբեդոնոսցևը հարկ համարեց, թեև ուշացած, պատասխանել L.Տոլստոյին: «Կարդալով ձեր նամակը, - գրել է նա, - ես տեսա, որ ձեր հավատը մեկն է, իսկ իմը և եկեղեցականն այլ և որ մեր Քրիստոսը ձեր Քրիստոսը չէ: Իմին ես գիտեմ թուլացածներին ապաքինող տղամարդու ուժով ու ճշմարտությամբ, իսկ ձերի մեջ ինձ երևացին թուլացածի հատկություններ, որոնք ապաքինվելու կարիք ունեն: Ահա թե ինչու ես իմ հավատքով չէի կարող կատարել ձեր հանձնարարությունը»:

«Ռուս ժողովուրդը չի ընդունում երկու ճշմարտություն»

Անդրեյ Ժելյաբովի, Սոֆիա Պերովսկայայի և մյուսների դատավարության օրերին, 1881թ. մարտի 28-ին ռուս խոշոր փիլիսոփա - իդեալիստ, Պետերբուրգի համալսարանի դոցենտ Վլադիմիր Սերգեևիչ Սոլովևը (1853-1900), որը նշանավոր պատմաբան Ս.Մ.Սոլովևի (1820-1879) որդին էր, վարկային ընկերության սրահում հանդես եկավ «ժամանակակից լուսավորության քննադատությունը և համաշխարհային պրոցեսի ճգնա-

ժամը» թեմայով հրապարակային դասախոսությամբ, որին ներկա էր 800 մարդ: Չնայած գեներալ Բարանովի զգուշացմանը, Սոլովևը իր դասախոսությունը նվիրեց մարտի 1-ի իրադարձություններին և ընթացող դատավարությանը:

«Այսօր, -ասաց Սոլովևը, - դատվում են և հավանաբար մահապատժի կենթարկվեն ցարին սպանողները: Ցարը կարող է նրանց ներել, եթե իսկապես նա զգում է իր կապը ժողովրդի հետ, նա պետք է ների: Ռուս ժողովուրդը չի ընդունում երկու ճշմարտություն: Եթե նա Աստծո ճշմարտությունն ընդունում է որպես ճշմարտություն, իսկ Աստծո ճշմարտությունն ասում է «Մի սպանիր»: Եթե կարելի է թույլ տալ մահը որպես շեղում անհասանելի իդեալից, սպանությունն որպես ինքնապաշտպանություն, ապա սառը սպանությունն անզենի նկատմամբ ժողովրդի հոգում նողկանք է առաջացնում: Ահա ինքնադատապարտման և ինքնարդարացման մեծ րոպեն: Թող Ռուսաստանի ցարն ու ինքնակալը գործով հայտարարի, որ նա ամենից առաջ քրիստոնյա է և որպես քրիստոնյա ժողովրդի առաջնորդ, նա պետք է, պարտավոր է լինել քրիստոնյա»:

Երբ Վլադիմիր Սոլովևն իր դասախոսության վերջում ասաց, որ եթե ռուս ցարը, քրիստոնյա ժողովրդի առաջնորդը նրանց մահապատիժ տա, եթե նա մտնի արյունոտ շրջան, ապա քրիստոնյա ռուս ժողովուրդը չի կարող նրա հետ ընթանալ: Ռուս ժողովուրդը նրանից երես կթեքի և կգնա իր առանձին ուղիով:

Այս խոսքերի վրա դահլիճում լսվեց մեկի բիրտ ձայնը՝ «Քեզ, դավաճան, առաջինը պետք է կախել»:

Հավաքվածները սկսեցին աղմկել: Շատերը ողջունում էին Սոլովևին, նրան կոչ անելով. «Դու մեր առաջնորդն ես, դու մեզ տար»: Տասնյակ ձեռքեր վեր բարձրացան: Լսվում էին բացականչություններ՝ «Ներում, ներում»:

Երբ Սոլովևը մի կերպ դուրս եկավ իրեն ողջունող մարդկանց օղակից, նրան մոտեցավ դասախոսությանը ներկա ժողովրդական լուսավորության նախարարը և խորհուրդ տվեց անմիջապես ներկայանալ Լորիս-Մելիքովին և խոսել կոմսի հետ: Սոլովևը հրաժարվեց, ասելով, որ ինքը ծանոթ չէ Լորիս-Մելիքովի հետ:

-Դա, - նկատեց նախարարը, - մասնավոր գործ չէ, այլ հասարակական: Տեսեք, հակառակ դեպքում հարկադրված կլինեք գնալ Կոլիմսկ:

-Ինչ կա որ, - պատասխանեց Սոլովևը, - փիլիսոփայությամբ կարելի է զբաղվել նաև Կոլիմսկում:

Հաջորդ օրը հայտնի դարձավ կատարվածը և շատերը կարծում էին, որ Սոլովևը կենթարկվի վարչական պատժի: Իսկապես, գործը կարող էր ավարտվել Սոլովևին Սիբիր աքսորելով: Բայց այստեղ էլ օգնության հասավ Լորիս-Մելիքովը:

Պոբեդոնոսցևի կողմնակիցները պահանջում էին պատժել հանդուգն փիլիսոփային: Գեներալ Բարանովը կատարվածի մասին զեկուցելով Լորիս-Մելիքովին, հայտնում էր, որ Սոլովևից վերցրել է գրավոր բացատրություն և այն ներկայացնում է կոմսի քննարկման: Իմիջիայլոց, այդ բացատրության մեջ էլ Սոլովևը պնդել էր իր տեսակետը, ընդգծելով, որ քրիստոնյա պետության մեջ պետք է մահապատիժը վերացվի:

Լորիս-Մելիքովը ծանոթ էր եղել պատմաբան Սոլովևին և չէր կարող անտարբեր մնալ նրա որդու ճակատագրի նկատմամբ, որին կրթված Ռուսաստանը հարգում ու մեծարում էր: Ուստի նա հարկ համարեց զեկուցագրով դիմել Ալեքսանդր Երրորդին: Նկատի ունենալով, որ պրոֆեսոր Սոլովևը հրապարակային դասախոսության ժամանակ ներկա իրավիճակի պայմաններում թույլ է տվել անտեղի դատողություններ և որոնց համար ենթակա է պրոֆեսորի կոչումից զրկվելուն, հրապարակային դասախոսությամբ հանդես գալու արգելքին և Պետերբուրգից հեռացվելու խիստ պատժին, միաժամանակ Լորիս Մելիքովը գրում էր. «Սակայն նկատի ունենալով, որ Սոլովևը վերջերս մեռած նշանավոր գիտնականի որդին է և գիտակ մարդկանց վկայությամբ, աչքի է ընկնում խիստ ասկետիկ կյանք վարելով, ինձ հնարավոր է թվում, առաջին անգամվա համար սահմանափակվել նրան խստորեն զգուշացնելով, որոշ ժամանակ արգելելով հանդես գալ հրապարակային դասախոսությամբ»:

Ալեքսանդր Երրորդը դժվարությամբ համաձայնվեց Լորիս-Մելիքովի առաջարկությանը: Նա Լորիս-Մելիքովի զեկուցագրի վրա մակագրությամբ Սոլովևին անվանեց «մաքուր փսիխապատ»:

«Ո՞վ է գրել մանիֆեստը»

1881թ. ապրիլի 26-ին Պոբեդոնոսցևը իր կազմած մանիֆեստի նախագիծն ուղարկեց Ալեքսանդր Երրորդին: «Շտապում եմ, - գրում էր նա, - ձերդ մեծությանը ներկայացնել իմ մշակած մանիֆեստը, որտեղ յուրաքանչյուր բառ կշռադատված է: Իմ համոզմամբ մանիֆեստի խմբագրումը լիակատար կերպով համապատասխանում է ներկա ժամանակի պահանջներին»: Միաժամանակ Պոբեդոնոսցևը ցարին հայտնում էր, որ բացի Ստրոգանովից ուրիշ ոչ ոք տեղյակ չէ մանիֆեստի նախագծից:

Պոբեդոնոսցևը ցարին վստահեցնում էր, որ մանիֆեստի հրապարակումից հետո բոլորը կզգան ինքնակալության ամուր իշխանության ուժը և մեկընդմիշտ կլռեն սահմանադրության մասին խոսակցությունները: «Եվ Ռուսաստանում, և արտասահմանում, - գրում էր օբեր-դատախազը, - այս մանիֆեստն առաջ կբերի բարեմիտ ազդեցություն: Ես գիտեմ, որ այստեղ անհամբեր սպասում են ձեր խոսքին»:

«Եթե, - շարունակում էր Պոբեդոնոսցևը , - ձերդ մեծությունն ունի, ին-

չի մեջ չեմ կասկածում, հաստատուն կամք, թույլ չտալու անմիտ, Ռուսաստանի համար կործանարար հիմնարկությունների ստեղծում, ապա աղաչում եմ ձեզ չկանգնել, հայտարարեք ձեր կամքը»:

Իսկ դրա համար կար հարմար առիթ: Ցարը հոր թաղումից հետո առաջին անգամ գալիս էր Պետերբուրգ զորահանդեսն ընդունելու համար: Եվ առաջին անգամ, խորհուրդ էր տալիս նրան Պոբեդոնոսցևը, գալով Պետերբուրգ, «դուք խոսքով կդիմեք ժողովրդին, արատահայտելով ձեր թագավորելու ընդհանուր ծրագիրը»:

Մանիֆեստի հրապարակման օր նշանակվեց 1881թ. ապրիլի 29-ին:

Լորիս-Մելիքովը տեղյակ չլինելով Ալեքսանդր Երրորդի և Պոբեդոնոսցևի միջև գաղտնի պայմանավորվածության մասին, նախօրյակին ցարի հետ հանդիպման ժամանակ ստացած հանձնարարականի համաձայն, 1881թ. ապրիլի 28-ի երեկոյան իր մոտ մեծ իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչի մասնակցությամբ խորհրդակցության հրավիրեց նախարարներին: Նորից սկսվեց բուռն բանավեճ զեմստվոների ներկայացուցիչների ընտրության հարցի շուրջ:

Ինչպես վկայում է Դ.Միլյուտինը, Պոբեդոնոսցևը նորից սկսեց ապացուցել, որ ընդհանրապես վտանգավոր է ընտրությունների սկզբունքը, տեղական ուժերին ընդգրկելը և հարմար էր գտնում փորձագետներին հրավիրել միայն կառավարության նշանակմամբ: Պոբեդոնոսցևի կարծիքը միանգամայն տարբերվում էր խորհրդակցության մյուս մասնակիցների տեսակետից:

Մեծ իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչը իբրև կոմպրոմիս առաջարկեց սկզբում սահմանափակվել հրավիրելով նահանգներից կառավարությանը հայտնի ոչ մեծ թվով գիտակ և հուսալի մարդկանց միայն զեմստվոների ներկայացուցիչներին հարվիրելու կարգի վերաբերյալ հարցը քննարկելու համար:

«Միտք չկար, - գրում է իր օրագրում Դ.Միլյուտինը, -այլևս շարունակել վեճը այն բանից հետո, ինչը մեզ պատմեց մեծ իշխանը. մարտի 1-ի չարաբաստիկ օրվա առավոտյան, հանգուցյալ միապետը իր ստորագրությամբ հաստատելով գաղտնի հանձնաժողովի զեկուցագիրը, սպասել է մինչև առանձնասենյակից Լորիս-Մելիքովի հեռանալը և ներկա գտնվող մեծ իշխաններին դիմել հետևյալ խոսքերով. «Ես իմ համաձայնությունը տվեցի այդ ներկայացուցչությանը, թեև ինձնից չեմ թաքցնում, որ մենք գնում ենք դեպի սահմանադրություն տանող ճանապարհով»:

Խորհրդակցությունն ավարտվեց գիշերվա ժամը 1-ին և Վլադիմիր Ալեքսանդրովիչի հեռանալուց հետո արդարադատության նախարար Նաբոկովը Լորիս-Մելիքովին հանձնեց, «Կառավարական տեղեկագրում» տպագրելու համար ցարի ստորագրած մանիֆեստի տեքստը: Երբ այդ մանիֆեստն ընթերցվեց, բոլորը, բացի Պոբեդոնոսցևից, հանկարծակի եկան:

-Ո՞վ է գրել մանիֆեստը, - հարցնում էին բոլորը:

Պոբեդոնոսցևը հայտնեց, որ ցարի հրամանով ինքն է գրել մանիֆեստը:

«Ես, - հայտնում էր Պոբեդոնոսցևը Տյուտչևային 1881թ. ապրիլի 29-ին ուղարկած նամակում, - պատասխանեցի, ասելով, որ գրել եմ թագավորի հրամանով: Դրությունը ծանր էր: Ես զգում էի, որ ինձ անիծում են Լորիսը, Աբազան, չէին կարող զսպել վրդովմունքը»:

Մանիֆեստի ընթերցումից հետո Լորիս Մելիքովն ասաց.

-Ստեղծված պայմաններում նախարարի պաշտոնում իմ մնալն այլևս անհնար է:

Նույնպիսի հայտարարություն արեց նաև ֆինանսների նախարար Ա.Աբազան:

Ապրիլի 29-ի առավոտյան Պոբեդոնոսցևը ցարին գրեց նախորդ օրը տեղի ունեցած խորհրդակցությունում կատարվածի մասին: «Երեկ երեկոյան, - գրել է նա, - նախարարների խորհրդակցությանը, Նաբոկովը ներկայացրեց մանիֆեստը: Շփոթվածությունն ընդհանուր էր: Բացի շփոթմունքից ոմանք էլ արտահայտեցին իրենց ափսոսանքը: Լորիս-Մելիքովն, Աբազան իրենց ուղղակի վիրավորված համարեցին: Նրանք Միլյուտինի հետ միասին զարմանք հայտնեցին, ասելով, «միթե՞ կարելի էր մարտի 21-ի նիստից հետո, որտեղ թագավորը «իրենց նկատմամբ վստահություն էր հայտնել» և իրենց հետ «համաձայնության» մեջ մտավ, կարելի էր այդպիսի մանիֆեստ հրապարակել առանց իրենց հետ խորհրդակցելու: Լորիսն ու Աբազան հայտարարեցին հրաժարական խնդրելու մտադրության մասին»:

Լորիս-Մելիքովի վճռականությունը

1881թ. ապրիլի 29-ի ցերեկը Պոբեդոնոսցևը երկրորդ նամակն ուղարկեց ցարին: «Երեկվա խորհրդակցությունից հետո, - գրում էր նա, - չգիտեմ ինչի մասին պետք է Լորիս-Մելիքովը խորհրդակցի Աբազայի հետ: Երեկ նրանք որոշեցին հեռանալ, այսօր գուցե կգան այլ որոշման: Բայց ես համոզված եմ, որ նրանք իրենց քաղաքականությունը չեն փոխի և ձերդ մեծության նկատմամբ անկեղծ չեն դառնա: Իսկ այժմ մեզ համար, իմ համոզմամբ, ամենից կարևոր և ամենից թանկ է, որպեսզի իշխանության մոտ լինեն այն մարդիկ, որոնց դուք հավատում եք»:

Այնուհետև նշելով, որ Լորիս-Մելիքովն ու նրա համախոհները զգում են, որ ցարն իրենց չի վստահում և բորբոքված են, Պոբեդոնոսցևը խորհուրդ էր տալիս. «Եթե նրանք ցանկություն կհայտնեն գործից հեռանալու մասին, ի սեր Աստծո, ձերդ մեծություն, մի պահեք նրանց: Պահելով նրանց, դուք նրանց գիջում կանեք և դրանով կթուլացնեք ձեր բարոյական վիճակը... Իսկ Լորիսն իրեն զգում է խորը վիրավորված և ուժեղ բոր-

բոքված է՝ դա երևում է ամեն ինչով: Ժամանակն, որի մեջ ապրում ենք, խառնակ ժամանակ է: Վտանգավոր է կառավարման ղեկի մոտ թողնել գլուխները կորցրած մարդկանց...»:

Ապրիլի 29ին տեղի ունեցած զորահանդեսի ժամանակ, որին ներկա էր նաև Գատչինայից Պետերբուրգ եկած Ալեքսանդր Երրորդը, Լորիս-Մելիքովն ու Դ. Միլյուտինն առանձնացած քննարկում էին ստեղծված իրավիճակը:

-Ես, - ավարտելով իր խոսքը, ասաց Լորիս-Մելիքովը, - վերջնականապես որոշել եմ այսօր ևեթ գրավոր դիմում ուղարկել ցարին հրաժարականի խնդրանքով և մտադրություն չունեմ վաղը մեկնել Գատչինա:

Լորիս-Մելիքովն, իսկապես զայրացած էր հոգու ամբողջ խորությամբ: Նա զայրացած էր ոչ թե նրա համար, որ կորցնում էր այդքան մեծ լիազորություններով պաշտոնը: Նա խորը ցավ էր զգում, որ իր անկեղծությանն ու հավատարմությանը ցարը պատասխանել էր վախկոտ խաբեբայի նման, գործել էր գաղտնի, վարել երկերեսանի դեր: Լորիս-Մելիքովն, որն ամբողջ կյանքում ատել էր ստորությունն ու անազնվությունը, մերժել էր երկերեսանի, խարդախ ու ստոր մարդկանց բարեկամությունը և ոչ մեկի չէր ներել մարդկային արժանապատվությունն ոտնահարելու համար, չէր պատրաստվում Ալեքսանդր Երրորդին բացառություն անել:

Միխայիլ Տարիելովիչը նույնիսկ չուզեց հանդիպել ցարին և անձամբ հանձնել իր հրաժարականը: 1881թ. ապրիլի 29-ի երեկոյան Լորիս-Մելիքովը ցարին ուղարկեց իր հրաժարականի մասին նամակը, որտեղ գրում էր. «Ձերդ թագավորական մեծություն: Վաղուց քայքայված իմ առողջությունը վերջին ժամանակ, անչափելի աշխատանքի հետևանքով սկսել է ավելի ու ավելի վատանալ:

1876թ. գտնվելով արտասահմանում բուժման, քաղաքական հարաբերությունների բարդացման և սպասվող հնարավոր ռազմական գործողությունների կապակցությամբ ես հանգուցյալ թագավոր կայսրի անձնական ընտրությամբ կանչվեցի կովկասյան սահմանի վրա կորպուսը կենտրոնացնելու նպատակով, որն հետագայում գործեց Ասիական Թուրքիայում: Եվ այդ ժամանակից մինչև այժմ չեմ ընդհատել գործունեությունս հետևյալ աստիճաններում՝ սկզբում նշված կորպուսի հրամանատար, հետո հետևողականորեն՝ Ստորին Վոլգայում համաճարակի դեմ միջոցառումներ ձեռնարկելու համար Աստրախանի ժամանակավոր գեներալ-նահանգապետ, Խարկովի գեներալ-նահանգապետ, գերագույն կարգադրիչ հանձնաժողովի գլխավոր պետ և, վերջապես, ներքին գործերի նախարար:

Այդ բոլոր պարտականությունների կատարումը, որը պահանջում էր ուժերի արտակարգ լարում, այժմ իմ առողջությունը հասցրել է այնպիսի վիճակի, որի պայմաններում անհնար է դարձել աշխատանքի շարունակումը:

Այս հանգամանքը հարկադրում է ինձ ձերդ թագավորական մեծությանը խոնարհաբար խնդրել ազատել ինձ զբաղեցրած պաշտոնից:

Սույն խնդրանքը ցանկանում էի անձամբ ներկայացնել ձերդ մեծությանը, բայց վատառողջության հետևանքով զրկված եմ Գատչինա ներկայանալուց»:

Կարդալով Լորիս-Մելիքովի խնդրագիրը, ցարն ասաց. «Աստված իր հետ, դժվարին ժամանակ հիվանդին հարմար չէ լինել նախարար»: Միաժամանակ, Ալեքսանդր Երրորդը հետևելով իր ուսուցիչ Պոբեդոնոսցևի խորհրդին, առանց ուշացնելու 1881թ. ապրիլի 30-ին Լորիս-Մելիքովին ուղարկեց հետևյալ պատասխանը. «Սիրելի կոմս Միխայիլ Տարիելովիչ, այսօր վաղ առավոտյան ստացա ձեր նամակը: Խոստովանում եմ, ես սպասում էի դրան և դա ինձ չզարմացրեց: Ցավոք, վերջին ժամանակ մենք ձեզ հետ միանգամայն բաժանվեցինք կարծիքների մեջ և, իհարկե, դա երկար շարունակվել չէր կարող: Ինձ մի բան շատ է զարմացնում և ապշեցնում, որ ձեր խնդրանքը համընկնում է Ռուսաստանում իմ մանիֆեստի հրապարակման օրվա հետ և այդ հանգամանքը ինձ մղում է շատ տխուր ու տարօրինակ մտքերի:

Այնքանով, որ ձեր առողջությունը վերջին ժամանակներում իսկապես անչափ քայքայվել է, ապա լրիվ հասկանում եմ, որ ձեր մնալը դժվար է այդ ծանր պաշտոնում: Եվ այսպես, սիրելի կոմս Միխայիլ Տարիելովիչ, ինձ մնում է մի բան՝ սրտանց շնորհակալություն հայտնել ձեզ այն կարճ ժամանակի համար, որ մենք միասին անցկացրինք և ձեր աշխատանքի ու հոգացողության համար: Անկեղծորեն ձեզ շնորհակալ՝ Ալեքսանդր»:

Նույն օրը հրաժարական տվեց նաև ֆինանսների նախարար Աբազան, որի խնդրագրի վրա ցարը մակագրեց. «Անչափ ափսոսում եմ ձեր որոշման համար: Իսկապես նախարարների միջև առանց միասնության ոչ մի գործ առաջ չի գնա: Ցավալի է, որ ձեր խնդրանքի առիթ է ծառայել իմ մանիֆեստը, որով ես Ռուսաստանին հայտարարում եմ ինքնակալական իշխանության անձեռնմխելիությունը պահպանելու իմ հաստատ որոշման մասին: Ափսոսում եմ, որ ոչ դուք, ոչ կոմս Լորիս-Մելիքովը չգտաք ավելի պատշաճ առիթ»:

Մինչ Ալեքսանդր Երրորդը կստորագրեր Լորիս-Մելիքովի ազատման հրամանագիրը, Պոբեդոնոսցևը ապրիլի 29-ի երեկոյան Տյուտչևային գրեց. «Կատաղած ասիացի Լորիսը կարող է շատ չար մտադրություն ունենալ, բայց ես զգում եմ, որ ճշմարտությունն իմ կողմն է...»:

Հրաժարական տվեց նաև մամուլի գլխավոր վարչության պետ Ն.Աբազան: Այս կապակցությամբ ափսոսանք հայտնեց «Նեդելյա» շաբաթաթերթը, իսկ «Ստրանա» թերթը գրեց. «Գրաքննության պետերից Ն.Ս.Աբազան առաջինը պաշտպանեց մամուլն որքան կարողացավ և դա նրան մեծ պատիվ է բերում: Թեև նրա ջանքերը հաջողությամբ չպսակվեցին, բայց դրանք չեն մոռացվի և այդ ծառայությունը ժամանակի ընթացքում հարգարժան սենատորին կբերի պետական գործիչների առաջավոր շարքեր:

Նրան պատիվ է բերում և այն, որ նա կամավոր է հեռանում, երբ տեսավ, որ իրադրությունը նպաստավոր չէ առաջիկայում իր մտահղացումների իրականացման համար»:

Մայիսի 1-ին հանդիպեցին երեք գինակիցները՝ Մ.Լորիս-Մելիքովը, Դ.Միլյուտինը և Ա.Աբազան: Արդեն հայտնի էր, որ Միխայիլ Տարիելովիչի փոխարեն նշանակվելու էր Իգնատևը: Դ.Միլյուտինը հայտնեց իր վճռի մասին. նույնպես ներկայացնելու է հրաժարական, բայց մի քիչ ավելի ուշ, որպեսզի առիթ չտա ցարին մտածելու, որ դա կապված է մանիֆեստի հետ:

Լորիս-Մելիքովը հրաժարականից անմիջապես հետո շտապեց հանձնել նաև պետական բնակարանը: Արտասահման մեկնելուց առաջ, նա հանդիպեց իր մտերիմներին: Մայիսի 6-ին նա հանդիպեց նաև Դ.Միլյուտինին: Ինչպես հիշում է Միլյուտինը, Լորիս-Մելիքովը փորձում էր երևալ ուրախ և գոհ իր ազատությունից:

Մայիսի 7-ին Լորիս-Մելիքովը հրաժեշտի համար, ըստ կարգի, այցելեց Ալեքսանդր Երրորդին: Կարճատև զրույցում ցարը Լորիս-Մելիքովին Միլյուտինի ու Աբազայի հետ միասին անվանեց իրենց երևակայող լիբերալ կուսակցության անդամներ, որոնք չեն համակրում ինքնակալության սկզբունքներին:

-Այժմ, - եզրափակեց ցարը, - երբ ամբողջ խնդիրը վերաբերում է ինքնակալական իշխանության ամրապնդմանը, դուք երեքով դրան այլևս պետք չեք: Իսկ երբ կգա ժամանակը նորից ձեռնարկելու պետական ռեֆորմներ, այդ ժամանակ էլ դուք կհրավիրվեք...

Մայիսի 9-ին Լորիս-Մելիքովը, Միլյուտինը և Աբազան այցելեցին մեծ իշխան Միխայիլ Նիկոլայևիչին: Իսկ մայիսի 12-ին ցարն ընդունեց Դ.Միլյուտինի հրաժարականը: «Ինձ, - կարդում ենք Միլյուտինի օրագրում, - լուրեր են հասնում, որ Գատչինայում ինձանից գոհ են մնացել, որ հեռանում եմ առանց «սկանդալի», խաղաղությամբ և ոչ թե Աբազայի ու կոմս Լորիս-Մելիքովի նման կտրուկությամբ»:

«Փայլուն հետ»

Լորիս-Մելիքովի հրաժարականը միատեսակ չընդունվեց: Առավել հետադիմական ուժերը ցնցության մեջ էին: Նրանց խոսափող «Մոսկովսկիե վեդեմոստի» թերթը հռչակում էր, թե «այժմվանից մեզ մոտ սկսվում է ազգային քաղաքականություն»: «Ազգային քաղաքականություն» ասելով, այդ թերթը հասկանում էր «մամուլի ազատության, դատարանների անկախության սահմանափակում» և այդ ամենը պետք է «սկսվի գործից կոմս Մ.Տ.Լորիս-Մելիքովի հեռանալով»:

Ռուսաստանի առաջադիմական-լիբերալ ուժերը հասկանում էին, թե ինչ էր նշանակում Լորիս-Մելիքովի հրաժարականը և բացահայտորեն ի-

րենց դժգոհությունն ու անհանգստությունն արտահայտելու հետ միասին, նշում էին կոմսի մատուցած ծառայությունները և նրա դերը ռուսական կյանքի բարեփոխման գործում:

Այսպես, օրինակ, «Ռուսկայա միսլ» ամսագիրը 1881թ. մայիսին հայտնելով որ «Ռուսաստանում առավել աչքի ընկնող, առավել հեղինակություն ունեցող պետական գործիչ կոմս Մ.Տ.Լորիս-Մելիքովը թողել է իր դժվարին պաշտոնը», հարցնում էր, թե ի՞նչ է նշանակում կոմսի հրաժարականը: Դա անձե՞րի, թե՞ ուղղության փոփոխություն է: Պատասխանելով այս հարցերին ամսագիրն ընդգծում էր. «Ներքին գործերի նախարարն որպես մարդասեր, դրա հետ միասին եռանդուն պետական գործիչ, իր նկատմամբ առաջ բերեց և՛ զեմստվոների, և՛ իշխանության, և՛ ժողովրդի խորը վստահությունը: Ժողովուրդը համակրանքով էր վերաբերում Լորիս-Մելիքովի իբր թե ոչ ազգային քաղաքականությանը: Ռուսաստանում չի կարող լինել ազգայնապես ամուր իշխանություն, եթե նա միահյուսված չէ մեծահոգությանը, արագ ու արդար գործողություններին, ներողամտությանն ու զիջողությանը: Եվ հենց այս աչքի ընկնող հատկություններով է առանձնանում ներքին գործերի նախկին նախարարը իր ռազմական քաջագործություններով ու քաղաքացիական կառավարման նշանակալի ծառայությամբ»:

«Ռուս» թերթը մերժելով չարամիտների բամբասանքը, կոմսի հրաժարականից անմիջապես հետո գրեց հետևյալը. «Կոմս Լորիս-Մելիքովն իրենից հետո թողնում է փայլուն հետք: Ռուսաստանը չի կարող շնորհակալությամբ չհիշել, թե ինչպես նրա նշանակմամբ հանգստացան իր նյարդերը, ինչպես բարձրացավ ու բարեփոխվեց հասարակական ոգու վիճակը: Ռուսաստանի նախարարներից կարծես թե ոչ մեկը, իսկ ներքին գործերի նախարարներից բացարձակապես ոչ ոք մինչև նրա նշանակվելը, չի օգտվել այդպիսի հեղինակությամբ ու ընդհանուր վստահությամբ: Զգացվում էր, որ եկել է խելքը, կյանքը, լայն ու գործունյա նախաձեռնությունը (ինչը որ միշտ եղել է շատ սակավ) և պակասեց բյուրոկրատական ռուտինան, շնչառությունը դարձավ ազատ ու թեթև: Շատ իսկական օգտակար գործ նա հասցրեց անել իր աշխատանքի կարճ ժամանակաընթացքում»:

Լորիս-Մելիքովը հետևողական լիբերալ էր, առաջընթացի համոզված կողմնակից ու պաշտպան: Նա միատեսակ զգացումով էր վերաբերում այն բոլոր երևույթներին, որոնք արգելակում էին ժողովուրդների կանոնավոր աճին ու ճշմարիտ զարգացմանը, անկախ նրանից, թե դրանք որ կողմից էին երևում: Անհամբեր արմատական տեսաբանների կողմի՞ց, որոնք շտապում էին պետական կյանքում իրագործել առանձնասեռնյակներում նստած առաջադեմ մտածողների մշակած սկզբունքները: Հետադիմության ներկայացուցիչների կողմի՞ց, որոնք ոչ մի միջոցի առջև չէին կանգնում, որպեսզի արհեստականորեն կասեցնեին ժողովրդական մասսաների արթնացող ինքնագիտակցությունը:

Լորիս-Մելիքովը միատեսակ եռանդով հանդես էր գալիս Ֆրանսիայի գործերում արմատականների անառողջ գերակայության դեմ և այն քաղաքականության դեմ, որն երկաթե ու ոզնու ձեռնոցներով այնպես հաջողությամբ իրականացնում էր Բիսմարկը գերմանական ազդեցության ոլորտում գտնվող եվրոպական երկրներում...

«Ըստ հույսեր ջուրը թափեցին»

Լորիս-Մելիքովի հրաժարականից անմիջապես հետո նրան այցելեցին Պետերբուրգի քաղաքային դումայի ներկայացուցիչները: Նրանք իրենց երախտագիտությունը հայտնեցին մայրաքաղաքի ինքնակառավարման նկատմամբ ցուցաբերած բարի վերաբերմունքի, քաղաքին օգուտ տալու համար:

Բուռն բանավեճ ծավալվեց Լորիս-Մելիքովին Պետերբուրգի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու շուրջ: Նույնիսկ թերթերին արգելվեց գրել դումայի նիստում կատարվածի մասին: Ի վերջո, 1881թ. մայիսի 18-ին դուման 140 ձայնով և 33 դեմով Լորիս Մելիքովին շնորհել Պետերբուրգի պատվավոր քաղաքացու կոչում, որը պետք է ներկայացվեր ցարի հաստատման:

Պետերբուրգի դումայի որոշումը հունից հանեց Պոբեդոնոսցևին, որը 1881թ. մայիսի 21-ին Ալեքսանդր Երրորդին ուղարկած նամակում գրում էր. «Ինձ թույլ եմ տալիս ձերդ մեծության ուշադրությանը ներկայացնել Պետերբուրգի դումայում Լորիս-Մելիքովին ողջույն ուղարկելու խելագարության մասին «Մոսկովսկիե վեդեմոստի» թերթում տպագրված հոդվածը, որը շատ ուժեղ է ու ճշմարիտ»:

Թիֆլիսի քաղաքային դուման նույնպես իր վերաբերմունքը հայտնեց, նշելով Լորիս-Մելիքովի բարի գործերը:

1881թ. մայիսի 15-ին ռուսական արդյունաբերությանն ու առևտրին աջակցող ընկերությունը բուռն ծափահարությամբ նախկին նախարարին ընդունեց պատվավոր անդամ և մեծ շնորհակալություն հայտնեց Ռուսաստանում կարգ ու կանոնի և առաջընթացի գործում ունեցած հսկայական ծառայության համար: Ընկերությունը նույն օրը Լորիս Մելիքովին հանձնեց հետևյալ շնորհագիրը. «Ձերդ պայծառափայլություն, կոմս Միխայիլ Տարիելովիչ, շատ դժվարին պետական գործերի պայմաններում ձեր բարձր ուշադրությունը դարձնելով մեր հյուսիսի դրության վրա, դուք պաշտպանեցիք ռուսների արդյունաբերական շահերը և նպաստեցիք կարևոր տնտեսական հարցերի լուծմանը, ինչը որ կունենա նպաստավոր ազդեցություն հայրենի առևտրական ծովագնացության զարգացման և ամբողջ երկրամասի բարեկեցության վրա: Ընկերության Սանկտ-Պետերբուրգի բաժանմունքը ռուսական առևտրական ծովագնացությանն ա-

ջակցելու համար, ինչպես նաև գիտակցելով ընկերության նպատակներին ձեր ցուցաբերած ծառայության նշանակությունը, իր պարտքն է համարում ձեզ հայտնել անկեղծ երախտագիտություն ու խորագույն հարգանք: Դրա հետ միասին ընկերությունը չի կարող չվշտանալ, որ հիվանդությունը հարկադրել է ձեզ թողնել ներքին գործերի նախարարի ծանր պարտականությունները: Ձերդ պայծառափայլության պետական գործունեությունն ապացուցել է ձեր անշահախնդիր նվիրվածությունը գահին, անսահման սերը հայրենիքի նկատմամբ և ամբողջ անձնուրացությունը հանուն ընդհանուր բարօրության այն ծանր ժամանակում, որը մենք ապրեցինք: Ձեր գործունեությունը, որպես պետական մարդ, չի մոռանա պատմությունը: Մարտադաշտում ձեր քաջագործությունները մեր հայրենիքի փառքն են կազմում»:

Լորիս-Մելիքովի գործունեությունը, ինչպես ընդգծում էր «Ռուսկայա միսլ» ամսագիրը, պատկանում է պատմությանը և հույս էր հայտնում, որ «նրա գործունեության վերականգնումը մեծագույն հրճվանքով կընդունի ռուսական հասարակությունը...»:

«Վեստնիկ Եվրոպի» ամսագիրը 1881թ. հունիսին անդրադառնալով Լորիս-Մելիքովի գործունեությանը, հիշելով մի շարք նշանավոր պետական գործիչների, նշում էր, որ նրանցից ոչ մեկի հետ չի կարելի կապել կառավարության ներքին քաղաքականության մեջ կատարվող ընդհանուր, վճռական շրջադարձը: «Առաջին անունը, - գրում էր «Վեստնիկ Եվրոպի» պարբերականը, - որը Սպերանսկու ժամանակներից այդպիսի տպավորություն է հարուցում մեր պատմության մեջ, մնում է կոմս Լորիս-Մելիքովի անունը և դրանումն է անցած ամսվա սկզբին ներքին գործերի նախարարի պաշտոնից ազատվելու լուրից ստացված տպավորության գլխավոր պատճառը: Կոմս Լորիս-Մելիքովի իշխանությանն ուղղված կոչը նոր ժամանակաշրջանի սկիզբն եղավ: Ահա, թե ինչու կառավարումից նրա հեռանալը մտածում էին տեսնել իբրև այդ ժամանակաշրջանի ավարտ»:

1880թ. փետրվարից մինչև 1881թ. մայիսը կատարվեց ու ավարտվեց համեմատաբար քիչ բան, բայց դա, ինչպես նշում էր «Վեստնիկ Եվրոպին» այլ կերպ չէր կարող լինել այն պայմաններում, որոնցում սկսվեց ու շարունակվեց նոր ժամանակաշրջանը:

Իսկ ինչո՞ւ այդպես եղավ: Պատասխանելով այս հարցին «Վեստնիկ Եվրոպին» բացատրում էր, թե նախորդ ժամանակը Լորիս-Մելիքովին չէր կտակել իրականացմանը մոտիկ ոչ մի նախապատրաստական աշխատանք, ոչ մի ռեֆորմ: Նրա միակ ժառանգությունը մասսայական դժվարություններն էին, որոնք անհրաժեշտ էին վերացնել նախքան շնորհակալ աշխատանք սկսելը:

«Շատ թե քիչ ուժով տիրապետող ռեակցիան, - գրում էր ամսագիրը, - ամբողջ 14 տարի հասցրեց երկու գլխավոր արդյունքի: Դա վատացրեց

ժողովրդի տնտեսական վիճակը և այլասերեց հասարակության մտավոր կյանքը, կաթվածահար անելով դա և հիվանդագին սրելով մյուսները»: Եվ այս վիճակը փոխելու համար հարկավոր էր միաժամանակ գործել իրար հետ սերտորեն կապված երկու ուղղությամբ: Այս հանգամանքը նկատի ունենալով «Վեստնիկ Եվրոպին» գրում էր. «Միջոցներ ձեռնարկել ժողովրդի բարեկեցությունը բարձրացնելու ուղղությամբ, միաժամանակ հասարակությունը թողնելով անձայն, միտքը՝ կախված կամայականությունից, զեմստվոն՝ անուժ ու մոռացված, նշանակում էր այդ միջոցները կորստյան դատապարտել, լավագույն դեպքում հասնել պակասավոր հաջողության, դրանց կիրառման դեպքում բազմաթիվ սխալներ գործելով»:

Ավելացնել մտքի ու խոսքի ազատությունը, ոչինչ չփոխելով ժողովրդի նյութական կենցաղի մեջ, նշանակում է կառուցել ավազի վրա, մոռանալ առանց այն էլ երկար ժամանակ անբավարարված մնացած կենսական պահանջմունքների մասին: Ռուսաստանում, շարունակում է ամսագիրը, երկրորդ արդյունքի միակողմանիությունն ավելի քիչ վտանգավոր է և քիչ հավանական, որովհետև ազատագրված խոսքն ամենից առաջ մատնացույց կաներ ժողովրդի մասին հոգ տանելու անհրաժեշտությունը: Նաև քիչ հավանական է, որովհետև մեր անցյալում տվյալներ չկան կրթված փոքրամասնության բացառիկ խնամքի մասին, այլ ընդհակառակը, շատ տվյալներ կան նրա ծգտումները մշտապես անտեսելու մասին:

«Ինչ էլ ուզում է լինել, ընդգծում էր ամսագիրը, անցյալ տարվա փետրվարին հաղթանակած քաղաքականությունը միակողմանի չէր ոչ այս և ոչ էլ այն մտքով: Իր խնդիրը համարելով բնակչության վրա ծանրացած տնտեսական ճնշման թեթևացումը, այդ քաղաքականությունն արտահայտեց վճռականություն՝ փոխել դեպի լավագույնը և այն պայմանները, որոնցից ԳԻՏԱԿՑԱԲԱՐ տուժում է փոքրամասնությունը, անգիտակցաբար՝ ռուս ժողովրդի մեծ մասը»:

Թվարկելով Լորիս-Մելիքովի իրագործած միջոցառումները՝ աղի հարկի վերացումը, գիլդիական գանձումների և շաքարի ճակնդեղի ակցիզի բարձրացումը, ոսկու վրա հարկ դնելը, գյուղացիներից հետգնման վճարումների իջեցումը և այլն, «Վեստնիկ Եվրոպին» գրում էր. «Այս բոլոր ռեֆորմները՝ մասամբ կատարված, մասամբ նախատեսված իրականացման համար, ունեին միևնույն նպատակը՝ ավելի արդարացի բաշխել հարկային բեռը: Հանճնաժողովներում վաղուց թաղված հարցերը լույս աշխարհ հանվեցին և լուծման համար արագորեն առաջ մղվեցին»:

Անդրադառնալով Լորիս-Մելիքովի կազմակերպած սենատորական ստուգումներին, ամսագիրը փաստում էր, որ դրանք «իմիջիայլոց պետք է պարզեին ժողովրդական կյանքի բարելավման այլ միջոցներ, նպաստեին չարիքի վերացմանը, որից տառապում է մեր գյուղացիությունը՝ սակավահողությունից, կուլակությունից, վարչական անկարգությունից»:

Այս միջոցներին զուգահեռ ընթանում էին մյուսները, որոնք ամսագիրը կոչում էր ընդհանուր անվամբ՝ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ: «Զեմստվոների, հասարակության և մամուլի գործողությունների շրջանակի փաստացի ընդլայնմամբ արդեն երևում էին նրանց նոր, համեմատաբար լայն իրավունքների օրինական ապահովության հնարավորությունները»: Ասվածն ընդգծելով, ամսագիրը հիշեցնում էր, որ «երրորդ բաժանմունքի վերացումը և վարչական հաշվեհարդարի սահմանափակումը կանխագուշակում էին կամայականության նկատմամբ օրինականության հաղթանակը»:

«Մամուլի մասին օրենքի վերանայումը, - գրում էր «Վեստնիկ Եվրոպին», - թույլ էր տալիս սպասել հասարակական մտածողության զարգացմանը խանգարող գլխավոր խոչընդոտների վերացմանը: Ինքնակառավարման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով ստուգող սենատորների վրա դրվել էր զեմստվոյական ու քաղաքային հիմնարկների հանգամանալի ուսումնասիրումը: Սենատորական ստուգումներով, զեմստովայական ժողովների որոշումներով և մամուլի կարծիքներով նախապատրաստվող վերափոխումների հետագա ընթացքի համար ընտրվեց այն ուղին, որն արդեն ինքնստինքյան իրենից ներկայացնում էր հաջողության գրավական: Այսպիսին էին մոտակա ապագայում շատ բան խոստացող համակարգի գլխավոր գծերը, մտածված, հետևողական համակարգ, որը բարձրագույն կառավարման ոլորտում նոր կողմնակիցներ վաստակեց և նրանում մտցրեց այնքան երկար ժամանակ սպասվող միասնությունը»:

Իհարկե, այդ համակարգի կառավարման գործում կային տատանումներ, բայց դրանք ամսագրի գնահատմամբ «կախված էին ժամանակավոր հանգամանքներից, նրանց խորթ տարրերի ճնշումից, ոչ միայն ավանդությունների, այլև նախորդ կարգի կենդանի մնացորդների հետ անխուսափելի ընդհարումից»: Եվ ինչքան էլ ցավալի լինեին այդպիսի տատանումները, նրանք անկարող էին ոչնչացնել համակարգի վերջնական հաղթանակը, քանի դեռ «ղեկավարող դերը գտնվում էր նրա ձեռքին, ում պատկանում էր համակարգը ստեղծելու պատիվը»:

Բայց Լորիս-Մելիքովի հրաժարականից մի քանի օր անց, արդեն պարզ դարձավ, որ ոչ միայն չի շարունակվելու նրա սկսած գործը, այլև ամեն ինչ արվելու է դա մոռացության մատնելու համար:

Կանխազգալով այդ ամենը, ռուս մեծ գրող Ի.Ս.Տուրգենևը 1881թ. մայիսի 19-ին գրեց. «Կոմս-Լորիս Մելիքովի հեռացումով շատ հույսեր ջուրը թափվեցին»:

Լորիս Մելիքովի հրաժարականից հետո, դեռ կային մարդիկ, որոնք հույս ունեին, թե Ալեքսանդր Երրորդը կփոխի իր վերաբերմունքը և կոմսին ետ կկանչի: Նույնիսկ լուրեր տարածվեցին, թե ցարը կատարվածի համար ափսոսանք է հայտնել: Ահա, թե այդ կապակցությամբ Սալտիկով-

Շչեդրինը 1881թ. հուլիսի 11-ին ինչ է գրել Ն.Բելոգոլովին: Նա փոխանցում է ակադեմիայի պրեզիդենտ Կոզլովի պատմածը. «Ցարը շատ է ափսոսում, որ այդքան հեշտորեն ստորագրեց մանիֆեստը ու բաժանվեց Լորիսից ու հատկապես Միլուտինից և, որ իբր թե հարցը ժամանակի մեջ է, որ Լորիս-Մելիքովը նորից գործի կկանչվի»: Մեկ այլ առիթով Սալտիկով-Շչեդրինը հայտնում էր, որ եվրոպական թերթերից մեկը նույնպես գրել է, թե Լորիս Մելիքովին ետ են կանչում Պետերբուրգ և նորից նա զբաղեցնելու է ներքին գործերի նախարարի պաշտոնը:

Լորիս-Մելիքովի վերադարձի հույսը փայփայողների մեջ էր նաև իշխանուհի Յուրևսկայան, որը 1882թ. ֆրանսերեն լեզվով տպագրեց «Ալեքսանդ Երկրորդ» գիրքը, որտեղ գրում էր. «Լավ կլիներ վերադարձվեր Լորիս-Մելիքովը»:

Սկսվեց իշխարամտության ժամանակաշրջանը

Լորիս-Մելիքովի ու Աբազայի հրաժարականները Պոբեդոնոսցևին պատճառեցին անասելի ուրախություն, որի մասին 1881թ. մայիսի 4-ին նա շտապեց նամակով հայտնել ցարին: «Ձերդ մեծություն, - գրում էր նա, - թույլ չտաք խաբվել: Ապրիլի 29-ից սկսած այդ մարդիկ մեր թշնամիներն են: Նրանք ուզում են ամեն գնով ապացուցել, որ իրենք են ճիշտ եղել և ոչ թե դուք...»:

Անդրադառնալով Միլյուտինին, Պոբեդոնոսցևը գրում էր, որ «նա, իհարկե, դեմքին ցույց չի տա գրգռվածության նշաններ: Բայց նա ծայրահեղ գրգռված է ու չարացած, ես այդպես էլ մտածում էի և այն ամենն, ինչ լսում եմ կոմս Իգնատևից, հաստատում է իմ ենթադրությունը: Հավատացեք, ձերդ մեծություն, այդ մարդիկ կարող են միայն վտանգավոր լինել ձեզ համար ներկա պահին»:

«Ծանր ժամանակ է, եզրափակում էր օբեր-դատախազը, - ես չեմ հանգստանա, քանի դեռ այստեղ մնում են և՛ կոմս Լորիս-Մելիքովը, և՛ Աբազան, և՛ մեծ իշխան Կոնստանտին Նիկոլայևիչը: Տա Աստված, որ նրանք բոլորը հեռանան, որքան հնարավոր է արագորեն: Այսօր քաղաքում լուրեր են տարածվել, որ Լ.-Մելիքովն ու Աբազան մնում են իրենց տեղում: Հարկավոր է շտապել, որպեսզի վերջ տրվի այդ խառնակությանը»:

1881թ. մայիսի 5-ին, ի նշան, համերաշխության իր գաղափարակիցների, հրաժարական տվեց նաև ռազմական նախարար Միլյուտինը:

1881թ. ապրիլի 29-ին ցարական մանիֆեստի հրապարակումը հաղթանակ բերեց Պոբեդոնոսցևի գլխավորած քաղաքական հետադեմ ուժերին: Բոլոր նրանց համար, ովքեր պաշտպանում էին Լորիս-Մելիքովի քաղաքական կուրսը, անհնարին դարձավ մնալ իշխանության մեջ: Պոբեդոնոսցևի քաղաքական հակառակորդները պարտվեցին: Պոբեդոնոսցևի

ճանապարհին այլևս խոչընդոտ չմնաց: Ռուսաստանում սկսվեց պոբեդոնոսցևչինայի խավարամտության ժամանակաշրջանը, որը տևականորեն արգելակեց Ռուսաստանի զարգացումը...

Լորիս-Մելիքովի փոխարեն ներքին գործերի նախարար նշանակվեց կոմս Իգնատևը, որը նախկինում եղել էր Ռուսաստանի դեսպանը Թուրքիայում: Նա էր, որ ստորագրել էր Սան-Ստեֆանոյի պայմանագիրը: Իգնատևը իր հայացքներով հետադեմ էր և ամբողջովին ենթարկված էր Պոբեդոնոսցևին, որի երաշխավորությամբ էլ հայտնվեց ներքին գործերի նախարարի պաշտոնում: Ռուսաստանի հետադիմական ուժերը միմյանց շնորհավորում էին, որ ի դեմս նոր նախարարի, կազատվեն Լորիս-Մելիքովի «ոչ ազգային» քաղաքականությունից:

Ներքին գործերի նախարարությունը ղեկավարելու Իգնատևի առաջին քայլերը կարող էին ծառայել որպես պարզ ապացույց այն բանի, թե ինչ կարելի էր սպասել ապագայում: Բայց այդ ապագայի լավագույն ապացույցը կտրուկ, անճանաչելիորեն իրենց տոնը փոխած թերթերն էին, որոնք կապակցված, պարզ խոսքի փոխարեն արդեն հազվադեպ էին փորձում իրերն իրենց անուններով կոչել: Միանգամից լսվեց անհասկանալի մանկական թոթովանք, երբեմն լիզելով «ամբողջ մամուլը ճնշող ժանդարմական ծանր կրունկը»:

Քաղաքական հորիզոնն անմիջապես ծածկեցին ռեակցիայի մոխրագույն կապարե ամպերը և «ազատության արշալույսի րոպեական փայլատակումը խավարեց երկար ժամանակով»:

Սակայն կարճ ժամանակ անց, Պոբեդոնոսցևը հիասթափվեց Իգնատևից և քայլեր ձեռնարկեց Դ.Տոլստոյին ներքին գործերի նախարար նշանակելու համար: 1882թ. մայիսի 28-ին սինոդի օբեր-դատախազը ցարին հայտնում էր, որ անձամբ մեծ հույսեր է կապում Տոլստոյի նշանակման հետ: Անդրադառնալով ներքին գործերի նախարարությունում տիրող իրավիճակին, Պոբեդոնոսցևը գրում էր. «Ներքին գործերի նախարարությունը գրավում է կենտրոնական դիրք, նրանում կենտրոնացված են ներքին քաղաքականության գլխավոր առարկաները և դրա համար էլ արտակարգ կարևոր է, որպեսզի այստեղ կառավարումը հաստատվի ամուր սկզբունքներով, բխի որոշակի, պարզ մտքից ու կամքից: Վերջին ժամանակ նման ոչ մի բան չի եղել այստեղ և այս թերության մեջ հարկավոր է որոնել կառավարման և հասարակության մեջ ծայրահեղ սահմանին հասած ուժեղացած տատանվողականության գլխավոր պատճառը»:

Այս ամենի համար մեղադրելով Լորիս-Մելիքովին, Պոբեդոնոսցևը գրում էր. «Կոմս Լորիս-Մելիքովն այս գործին ձեռնամուխ եղավ առանց նախապատրաստվելու, առանց կրթության, առանց փորձի, ինտրիգների արվեստով և դրա համար էլ շուտով կառավարման բոլոր գլխավոր հարցերում շեղվեց հունից ու գնաց դատարկ ֆանտազյորների ետևից: Կոմս Իգնատևը ցավալիորեն նրանից լավը չեղավ շատ կողմերով...»:

Այնուհետև երաշխավորելով Դ.Տոլստոյին, Պոբեդոնոսցևը գրում էր, որ «կոմս Տոլստոյը հիմնավոր կրթությամբ մարդ է և ծանոթ է շատ կապիտալ հարցերի, որոնց մասին նախկին երկու կոմսերը միայն թեթևակի պատկերացում ունեին»:

Պոբեդոնոսցևի երաշխավորությամբ ցարը Դ.Տոլստոյին նշանակեց ներքին գործերի նախարար: Նա միաժամանակ նշանակվեց ժանդարմերիայի շեֆ: Դ. Տոլստոյն անզուսպ հետադիմության ամենակատաղի ներկայացուցիչն էր: Նա սկսեց պատժիչ գրաքննություն: Փակվեցին դեմոկրատական մամուլի շատ օրգաններ, այդ թվում «Օտեչեստվենիե զապիսկի», «Դելո», «Գոլոս», «Զեմստվո», «Ստրանա», «Մոսկովսկիե տելեգրաֆ» պարբերականները:

Խայտառակ կարգադրության հեղինակը

Իր նպատակին հասած Պոբեդոնոսցևը հարձակվեց ժողովրդական կրթության վրա: 1882թ. հունվարի 16-ին ցարին ուղարկած նամակում նշելով, որ Սաբուրովի օրոք ժողովրդական լուսավորության ասպարեզում ցանված են թունավոր սերմեր, Պոբեդոնոսցևը դրանց համար մեղադրում էր Լորիս-Մելիքովին: «Կոմս Լորիս-Մելիքովը, - գրել է նա, - խելացի մարդ է, բայց թեթևամիտ և Ռուսաստանը չիմացող: Ենթարկվելով զազրախոսների և լրագրողների ազդեցությանը, կոմսի խելքին փչեց ամեն տեղից հավաքել խայտաբղետ ամբոխին, այսպես կոչված զեմստվոյական մարդկանց, որպեսզի նրանց ընդգրկի պետական կարևորագույն հարցերի լուծման մեջ, որոնք նա շատ աղոտ է հասկացել»:

Հեռանալով, ընդգծել է Պոբեդոնոսցևը, Լորիս-Մելիքովը թողել է այս դեղատոմսը որպես ժառանգություն և դժբախտաբար, դեռ շարունակում են դիմել դրան ու հավատալ: «Դժբախտաբար, - այնուհետև ասում էր Պոբեդոնոսցևը ցարին, - կառավարությունը զեմստվոյին հնարավորություն է տվել խառնվել ժողովրդական դպրոցի գործերին: Թեթևամիտ Սաբուրովը շատ բանով նպաստել է դրան: Նա նախածեռնել է, այսպես կոչված, զեմստվոյական մարդկանց քննարկմանը հանձնել միջնակարգ դպրոցների, այսինքն գիմնազիական կրթության կազմակերպման հարցը, մի գործ, որն աշխարհում ոչ մի կառավարություն իր ձեռքից բաց չի թողել, քանի որ դպրոցը պետության համար կենսական նշանակություն ունի»:

Հիշատակելով, որ ժողովրդական լուսավորության նախարարի պաշտոնից հեռացված Դ.Տոլստոյին մամուլը սևացնում ու վիրավորում է, Պոբեդոնոսցևը դրա համար մեղադրում է զեմստվոյական մարդկանց գիմնազիաներում խռովություններ ստեղծելու մեջ:

«Գործը նրանումն է, - զեկուցում էր ցարին Պոբեդոնոսցևը, - որ նախորդ թագավորության վերջին ամիսներին Սաբուրովը Լորիս-Մելիքովի

համաձայնությամբ հասցրեց ստանալ թագավորի հրամանը, որը մինչև օրս անհայտ է մնացել և միայն հիմա է հայտնաբերվել՝ դրա կիրառման պահին: Այն է՝ հիմք է դրվել ռեալական ուսումնարանների ու գիմնազիաների կանոնադրության վերանայմանը մի հանձնաժողովի կողմից, որը կազմված է տարբեր նախարարությունների պաշտոնյաներից, զեմստվոների և քաղաքային վարչությունների ներկայացուցիչներից, այսինքն, ուսումնական գործին ներգրավվել են թափառական ու թափթփված տարրեր: Այդ գործերը համաձայնեցվել են միայն օրերս, երբ պատրաստ էր հանձնաժողովի գումարումը»:

Պոբեդոնոսցևը Ալեքսանդր երրորդին եռանդով երաշխավորում էր կասեցնել այդ հանձնաժողովի հրավիրումը, զգուշացնելով, որ «հենց զեմստվոներից ու քաղաքներից հավաքվեն մարդիկ, կլսվեն ամենից անկարգ ելույթներ և թերթերի էջերում կերևան տգետների ու զազրախոսների դատողություններն այնպիսի առարկայի մասին, որը հարկավոր է քննարկել հանգստությամբ, փորձով գործը իմացող մարդկանցով: Եվ այդ խառնակությունն անմիջապես կտեղափոխվի ուսումնական հաստատություններ ու կարելի է վախենալ ամենատխուր հետևանքներից»:

Պոբեդոնոսցևը ցարին հայտնում էր, որ բարոն Նիկոլաին անընդունակ է և չունի վճռականություն ուսումնական գործում Լորիս-Մելիքովի սարքած ավերվածությունների հետևանքները վերացնելու համար և այդ էլ նկատի ունենալով, գրում էր, թե ինքը չի համարձակվել բարոնի հետ խոսել նախարարի պաշտոնից հրաժարական տալու մասին: Դա համարելով թագավոր կայսրի իրավունքը, Պոբեդոնոսցևը առաջարկում էր ժողովրդական լուսավորության նախարարի պաշտոնում Ի.Դելյանովի թեկնածությունը:

Դ.Միլյուտինը 1882թ. մարտի 22-ին իր օրագրում նշեց, թե Դելյանովի նշանակումը նույնն է, եթե նրա փոխարեն լիներ Կատկովը: Դելյանովի նշանակումը Միլյուտինը համարեց «ամբողջ Ռուսաստանի համար ատելի դարձած կոմս Տոլստոյի նախարարության վերականգնում: Նախկին և ապագա ռեժիմների միջև տարբերությունը աստառի մեջ է: Տոլստոյի մոտ աստառը մաղձն էր, Դելյանովի մոտ՝ կլինի ապուշությունը: Խեղճ Ռուսաստան»:

Ալեքսանդր երրորդը համաձայնվեց:

Ժողովրդական լուսավորության նախարար դարձած Դելյանովը ամեն ինչ արեց կրթության գործում Լորիս-Մելիքովի նախատեսած բարեփոխումների հետքերը վերացնելու համար: Դելյանովն ուժեղացրեց միջնակարգ դպրոցներում պատժողական պրակտիկան: Նա դարձավ հեղինակն այն խայտառակ կարգադրության, որով արգելվում էր գիմնազիաներում կառապանների, լաքեյների, լվացարարուհիների, մանր խանութպանների և նրանց նմանների երեխաների ընդունումը...

Դելյանովի հրաժարականը

Լորիս-Մելիքովի հրաժարականն անսպասելի հրճվանքով ընդունեց հատկապես Իվան Դավիդովիչ Դելյանովը: Ահա, թե ինչ է պատմում այդ մասին Ա.Ֆ.Կոնին: «Նա (Դելյանովը) վաղուց համարում էր, որ իրավունք ուներ դառնալու ժողովրդական լուսավորության նախարար և, իմիջիայլոց, չէր սիրում Լորիս-Մելիքովին այն բանի համար, որ նա Անդրեյ Ալեքսանդրովիչ Սաբուրովին նախարար նշանակելուն չէր առարկել: Լորիս-Մելիքովի անկումից հետո ինձ գործով վիճակվեց լինել Դելյանովի մոտ: Նա սկսեց խոսել գործերի մասին և երգեցիկ կանացի ձայնով վշտանալ Ռուսաստանի ճակատագրի համար: «Փառք Աստծո, փառք Աստծո, - ասաց նա, - որ տերը թագավորին իմաստուն դարձրեց և նրան ներշնչեց քշել Լորիս-Մելիքովին»:

-Բայց միթե՞ Լորիս-Մելիքովը քշվել է, - ասացի ես, - չէ որ նա ինքն է հեռացել իր մտածած վերափոխումների կործանման հետևանքով:

-Ոչ, - հանդիսավոր ձայնով բացականչեց Դելյանովը, - քշեցին, քշեցին: Դուք գիտե՞ք, թե ինչպիսի մարդ է նա: Չէ՞ որ նա ուզում էր Ռուսաստանը կործանել:

-Ինչպե՞ս եք այդպես խոսում Իվան Դավիդովիչ, չէ որ նա Ռուսաստանի հետ նույնպես կկործանվեր: Նա որպես խելացի մարդ, չէր կարող այդ չհասկանալ: Ես նրան չգիտեմ և երբեք չեմ տեսել, բայց ինձ թվում է, որ նրա խելքին անհնար է կասկածել:

-Նա ի՞նչ խելացի մարդ է, - համարյա գոռաց Դելյանովը, - ի՞նչ խելացի մարդ: Նա ուղղակի խորամանկ արմյաշկա է»:

Իր նշանավոր հայրենակցի նկատմամբ չարությամբ ու նախանձով լցված Դելյանովի վարքագծից զարմացած Ա.Ֆ.Կոնին գրում է, որ հետագայում, երբ հանդիպել է հրաժարական տված ու արտասահմանում բնակություն հաստատած «խորամանկ» Լորիս-Մելիքովին, նրան շատ է հանդիմանել չափից ավելի ու անհարկի անկեղծության համար, որ նա դրսևորել է տարբեր կասկածելի անձանց նկատմամբ, որոնք նրա մոտ էին գալիս տեղեկություններ կորզելու համար:

Լորիս-Մելիքովն ոչ թե խորամանկ էր, այլև, ինչպես գրում է Ա.Ֆ.Կոնին, ուղղակի շատ լավ ու բարի կամեցող մարդ էր, որին խորթ էին նեղ անձնասիրությունը և շահասիրական էգոիզմը: Նա օժտված էր առողջ բանականությամբ...

Պ.Ա. Շուվալովի վկայությունը

Լորիս-Մելիքովին ասպարեզից հեռացնելու գործում մեծապես շահագրգռված էին արևմտաեվրոպական երկրների ղեկավարները և, առա-

ջին հերթին, Գերմանիան, Անգլիան ու Ֆրանսիան: Լորիս Մելիքովի դեմ բացահայտ հանդես էր գալիս Գերմանիայի կանցլեր Բիսմարկը, որը հայտնելով իր դժգոհությունը նրա կառավարությունից, իրեն կեղծավորաբար ներկայացնում էր որպես ռուս ժողովրդի բարեկամ:

Բիսմարկն Ալեքսանդր Երրորդին համոզում էր վերջ տալ Լորիս-Մելիքովի ոչ ազգային, այսինքն ոչ ռուսական քաղաքականությանը: Գրելով այս մասին, 1881թ. մայիսին, «Ռուսկայա միսլ» ամսագիրը հիշեցնում էր, որ Բեռլինի կոնգրեսում Բիսմարկը միացել էր Բիկոնսֆիլդին ու Անդրաշին ընդդեմ Ռուսաստանի:

Լորիս-Մելիքովի հրաժարականից հետո կոմս Պ.Ա.Շուվալովը Բեռլինում հանդիպել է Բիսմարկին, որն անչափ դժգոհ լինելով « Լորիսի գործողությունից», խնդրել է Ալեքսանդր Երրորդին հայտնել, որ վերջին ժամանակում հասարակական կարծիքի հետ խաղալու քաղաքականությունը կկործանի Ռուսաստանին և խորհուրդ է տվել ցարին հագնել երկաթե ձեռնոցներ ու փակել սահմանադրություն երազող գոռգոռացողների բերանը:

Շուվալովը հրաժարվում է Բիսմարկի ցանկությունը հայտնել Ալեքսանդր Երրորդին: Բայց, ինչպես վկայում է Կ.Պերետցը, Բիսմարկն իր վերաբերմունքը ցարին հասցրել է գերմանական կայսրի միջոցով:

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՄԱՍ

Ազգային պահպանող գործիչները

19-րդ դարի երկրորդ կեսին և հատկապես 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում ու դրանից հետո ընկած ժամանակաշրջանում հայ իրականության մեջ մեծ ազդեցություն ձեռք բերեցին այն ուժերը, որոնց սովորաբար մեր պատմագրության մեջ անվանում էին ազգային-պահպանողական գաղափարախոսության կրողներ ու զարգացնողներ:

Այդ գործիչների հետապնդած նպատակների ուսումնասիրությունը ինձ բերել է այն համոզման, որ հարկավոր է նրանց ոչ թե կոչել ազգային պահպանողական, այլ ազգայինը պահպանելու համար մարտնչող գործիչներ: Հարկ չեմ համարում այստեղ քննարկել այդ երկու մոտեցումների տարբերությունները, քանի որ դա դուրս է սույն գրքի շրջանակներից: Ուստի հարկ եմ համարում միայն անդրադառնալ այն գործիչներին, որոնք ղեկավարվում էին ազգայինը պահպանելու գաղափարախոսությամբ ու այդ առումով էլ համագործակցում էին Լորիս-Մելիքովի հետ:

Ազգայինը պահպանողների հիմնադրած պարբերականների դերը նույնպես մեծ է:Դառնալով հայ իրականության ճշմարիտ արտահայտիչներ, «Կռունկ հայոց աշխարհի» (1860-1863թթ.) «Մեղու Հայաստանի» (1863-1886թթ.), «Փորձ» (1876-1881թթ.), «Արձագանք» (1882-1898թթ.), «Նոր դար» (1884-1906թթ.) պարբերականները հսկայական աշխատանք էին կատարում հայ ժողովրդի մտավոր զարգացման, նրան հասարակական-քաղաքական կյանքում ներգրավելու գործում:

Ազգայինը պահպանող գործիչները իրենց գլխավոր նպատակը համարում էին ազգի միասնության ամրապնդումը, որն անպայման կապում էին օսմանյան լծից արևմտահայության ազատագրության հետ: Այս խնդիրների վրա հատկապես սրվեց նրանց ուշադրությունը, երբ ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի տարած հաղթանակի հետ կապվեց Արևմտյան Հայաստանի ազատագրման հույսը:

Ազգայինը պահպանող գործիչները ճիշտ դիրքերից էին գնահատում հայոց ճակատագրում Ռուսաստանի բարերար դերը և հայ ժողովրդի շահերը կապում էին Ռուսաստանի հովանավորության տակ գտնվելու գաղափարի հետ:

Ազգայինը պահպանող գործիչների մասին գաղափար կազմելու նպատակով ծանոթանանք նրանցից մի քանիսի գործունեությանը: Նրանց շարքում առաջինը Կարապետ Եզյանն է (1885-1905թթ.), որն աչքի էր ընկնում ոչ միայն Ռուսաստանի ժողովրդական լուսավորության նախա-

րարությունում զբաղեցրած պաշտոնով, պատմագիտական աշխատություններով, հայ իրականության վրա ունեցած ազդեցությամբ, այլև Միքայել Տարիելի Լորիս-Մելիքովի հետ ունեցած կապով, ինչը հիմնված էր ընդհանուր գաղափարների ու նպատակների վրա:

Լինելով Լորիս-Մելիքովի գաղափարակիցը, Կարապետ Եզյանն իրեն դրսևորեց որպես նրա հավատարիմ զինակից և պատասխանատվությամբ էր իրականացնում իր միջոցով Լորիս-Մելիքովի հետ մյուս գործիչների շփումները, որոնք այն ժամանակի պայմաններից ելնելով, հասկանալի պատճառով հնարավոր չէր բացահայտ կատարել: Ինքը, Կարապետ Եզյանն էլ բավականաչափ նրբանկատ էր և այդ հարցում ոչ միայն չէր ընդարձակվում, այլև խուսափում էր իր նամակներում հիշատակել Լորիս-Մելիքովին:

Միայն մեկ անգամ նա բացառություն արեց, 1880թ. փետրվարի 15-ին Թիֆլիս, Կ.Կոստանյանին ուղարկած նամակում գրելով. «Այսօր բարձրագույն հրամանով հաստատվեցավ «գերագույն վարչական հանձնաժողով» լիազոր և անսահման իրավունքով: Այդ հանձնաժողովի նախագահը նշանակվեցավ մեր Լորիս-Մելիքով: Անօրինակ բարձր և ընդհանրապես վտանգալից պաշտոն: Կարծիքովս հարմար կլիներ և ոչ անօգուտ, որ վեհափառը նորան օրհնության և բարեմաղթության կոնդակ ուղարկե: Եթե կոնդակը լավ գրած լիներ, կարելի է նրա թարգմանությունը լրագիրների մեջ տպել և գուցե և կայսրին էլ կհայտնի, ամեն օր նրան տեսնում է»:

Թիֆլիսում գործում էր Գևորգ Եվանգուլյանը (1843-1901թթ.), որը Կ.Եզյանի անմիջական հանձնակատարն էր: Կ.Եզյանը նրա միջոցով էր հանձնարարականներ տալիս Թիֆլիսի իրենց համախոհներին: Գ. Եվանգուլյանը մասնագիտությամբ իրավաբան էր, 1867թ. ավարտել էր Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և 1975 թվականից Կովկասի փոխարքայության դատական բաժնի աշխատակիցն էր: Գործով եղել էր ռազմաճակատում և անձնական ծանոթություն ուներ Լորիս-Մելիքովի հետ:

Աբգար Հովհաննիսյանը (1849-1904թթ.) 1976թ. նախաձեռնեց «Փորձ» եռամսյա հանդեսի հրատարակությունը: Պատանի հասակում սովորել է Պետերբուրգում Կ.Եզյանի հիմնած պանսիոնում և 1866թ. վերադառնում է Թիֆլիս:

Բժիշկ Ավետիք Բաբայանը (1843-1913թթ.) սերտ կապ ուներ Կ.Եզյանի հետ, նրան տեղեկացնում էր Կովկասում կատարվող դեպքերի մասին:

Պետրոս Սիմեոնյանը (1830-1911թթ.) «Մեղու Հայաստանի» թերթի խմբագիրն էր: Սերտորեն կապված էր Կ.Եզյանի հետ:

Սպանդար Սպանդարյանը (1849-1922թթ.) լինելով «Մեղու Հայաստանի» աշխատակից, հակադրվում էր Գ.Արծրունուն, կապված էր Կ.Եզյանի հետ:

Փիլիպոս Վարդանյանը (1842-1917թթ.) սովորել է Պետերբուրգի համալսարանի իրավագիտական ֆակուլտետում և արտասահմանում: Դա-

սավանդել է մի շարք հայկական դպրոցներում, այդ թվում նաև Գևորգյան ճեմարանում որպես պատմության, ռուս գրականության և գերմաներենի դասատու: Կապված էր Կ.Եզյանի հետ:

Մարկոս Աղաբեկյանը (1830-1908թթ.) եղել է Մատթեոս կաթողիկոսի քարտուղարը և նրա հետ Կ.Պոլիսից եկել էր Էջմիածին: Ուղևորության ժամանակ շփվել էր Լորիս-Մելիքովի հետ, համաձայնվել էր գեներալի արտահայտած տեսակետներին և հրաժարվելով քարտուղարի պաշտոնից, մնացել էր Թիֆլիսում: Խմբագրել է «Կռունկ հայոց աշխարհին» ամսագիրը: Մ.Աղաբեկյանի միջոցով Կ.Եզյանը կապ էր պահպանում պատրիարք Ներսես Վարժապետյանի հետ:

Համբարձում Իփեկչյանը (1837-1883թթ.) Կ.Եզյանի խորհրդով Անդրկովկասից մեկնել է Կ.Պոլիս և այնտեղից թղթակցում էր ռուսական մամուլին: Հ.Իփեկչյանը Կ.Եզյանի հավատարիմ հետևորդներից էր:

Ալեքսանդր Երիցյանը (1842-1902թթ.) իր ժամանակի զարգացած դեմքերից էր: Պատմագիտական, բանասիրական մի շարք աշխատությունների հեղինակ է: Մասնակցել է 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմին, որի ավարտից հետո, որպես առանձին հանձնարարությունների պաշտոնյա, ուսումնասիրել է Էրզրումի նահանգի իրավիճակը: Ռուսական զորքերի հեռանալուց հետո, մեկ տարի աշխատել է Էրզրումի ռուսական հյուպատոսարանում:

Հայ պատմաբանների ուշադրության արժանի խնդիր

Ինչո՞ւ էր զինվորական գործիչ, ռուսական պետության մեջ բարձր դիրքի հասած Լորիս-Մելիքովը կապվել հայ իրականության ասպարեզում գործող ազգայինը պահպանողների հետ: Ի՞նչ ընդհանուր հետաքրքրություն ու հայացքներ ունեին նրանք:

Այս և համանման հարցերը դուրս են մնացել հայ պատմագրության ուշադրությունից և այսօր էլ սպասում են իրենց անաչառ ուսումնասիրողի գնահատականին: Իհարկե, պատմագրության մեջ լուսաբանված է, այսպես կոչված ազգային-պահպանողական հոսանքի գաղափարախոսությունը, բացահայտված է նրա գործիչներից շատերի դերը, բայց որպես ընդհանուր երևույթ, շրջանցվել է Լորիս-Մելիքովի հետ նրանց առնչություններին վերաբերող հարցերը:

Ինչո՞ւ: Ի՞նչ պատճառով: Մեր համոզմամբ եղել են մի շարք պատճառներ, որոնց մեջ, մեր կարծիքով, առավել կարևոր են երկուսը:

Առաջին. Լորիս-Մելիքովը հատկապես անձնական մտերմություն ուներ Կարապետ Եզյանի հետ, իր հայացքներն ու մտահղացումները

հայտնում էր նրան ու նրա միջոցով էլ իր մյուս համախոհներին: Եվ դա հասկանալի էր, որովհետև ցարական բարձրաստիճան պաշտոնյան, վերջապես ռուսական կառավարության փաստացի ղեկավարը չէր կարող ազատ ու բացահայտ շփվել այն գործիչների հետ, որոնք, առհասարակ, իշխանությունների աչքին երևում էին որպես ազգային գործիչներ, այստեղից բխող բոլոր հետևանքներով: Ի միջիայլոց, այս ավանդույթ դարձած գաղտնապահությունը շարունակվեց մինչև Լորիս-Մելիքովի կյանքի վերջը: Իսկ Կ.Եզյանը բացառություն էր ռուսական կառավարության մեջ ունեցած բարձր դիրքի շնորհիվ:

Երկրորդ. Ինչպես նախասովետական, այնպես էլ սովետական շրջանի պատմագրությունը Լորիս-Մելիքովի քաղաքական-պետական գործունեությանը վերաբերել է կանխակալ, ոչնչով չարդարացված բացասական գնահատականներով, բացառապես նրան ներկայացնելով ինքնակալական ռեժիմը պահպանելու համար հեղափոխական ուժերի դեմ պայքարի կազմակերպիչ: Այստեղից էլ այն հետևությունը, որ ինքնակալության պահպանման համար պայքարողը չէր կարող հետադիմական չլինել: Ուստի հայ պատմագրությունը տևականորեն խուսափել է այդպիսի համբավ ունեցող ցարական բարձրաստիճան գեներալին, ներքին գործերի նախարարին ու ժանդարմերիայի պետին կապել հայ ազգայինը պահպանող գործիչների հետ, որոնք հայտնի էին որպես ազնիվ նվիրյալներ հայ ժողովրդի դարավոր իղձերի իրականացման գործում: Նրանց կապել Լորիս-Մելիքովի հետ, նշանակում էր անվանարկել, ավելին կասկածել որպես ներքին գործերի նախարարի գործակալներ:

Ահա, մեր համոզմամբ, այն գլխավոր պատճառները, որոնց հետևանքով մեր պատմագրության մեջ մոռացության էր տրվել Լորիս-Մելիքով ազգային գործիչը և նրա մասին իբրև դրական երևույթ, հիշատակվում է ռուս-թուրքական պատերազմներին ունեցած մասնակցությունը:

Գործնական քայլեր

Թեև Լորիս-Մելիքովը գտնվում էր հայկական միջավայրից շատ հեռու, բայց դա չէր խանգարում նրան, որպեսզի ուշադրությամբ հետևեր Հայաստանի երկու մասերում կատարվող իրադարձություններին: Նա երկու անգամ, 1853-1856թթ. Ղրիմի և 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, եղել էր Արևմտյան Հայաստանում, անձամբ տեսել էր արևմտահայության ծանր վիճակը և հնարավորություն ուներ համեմատել արևելահայության հետ: Ճիշտ է, Ռուսաստանի կազմում Արևելյան Հայաստանի բնակչությունն էլ մի փառավոր վիճակի մեջ չէր, բայց Լորիս-Մելիքովը գտնում էր, որ Ռուսաստանի շնորհիվ ապահովված է նրա ֆիզիկական գոյությունը:

- Պատմությունը, - ասում էր Լորիս-Մելիքովը, - մեզ հետ դառը խաղ է խաղացել: Թուրքահայաստանում է ապրում հայ ժողովրդի մեծ մասը և տառապում է օսմանյան տիրապետության ծեռքին: Պետք է մտածել նրա փրկության մասին:

Լորիս-Մելիքովը համոզված էր, որ Արևմտյան Հայաստանի վիճակն այդպես շարունակվել չի կարող և մի օր անսպասելի կիասնի հանգուցալուծումը: Եվ դրան հարկավոր է լրջորեն նախապատրաստվել:

- Արևմտահայությունը, - ասում էր Լորիս-Մելիքովը, - պետք է միշտ պատրաստ լինի և հարմար պահին հարցը լուծի ռազմական ու քաղաքական միջոցներով: Մենք պետք է պատրաստ լինենք, քանի որ ռուս-թուրքական վերջին պատերազմից հետո Բեռլինի տրակտատն ավելի է խորացրել տերությունների հակասությունները, որոնք վաղ թե ուշ, վերածվելու են մեծ պատերազմի, քանի որ նրանցից ոչ մեկը չի բավարարվել ստացված արդյունքից:

Ահա, այս հարցերն էր նա քննարկում Կ.Եզյանի հետ և աշխատում վերջինիս կապերի միջոցով իրականացնել իր ծրագիրը: Շփվելով Ռուսաստանի բարձրաստիճան չինովնիկների հետ, հաճախակի հանդիպելով Ալեքսանդր Երկրորդ ցարի հետ, Լորիս-Մելիքովը հիանալի գիտեր երկրի արտաքին քաղաքականության խոհանոցը: 1880թ. փետրվարից նա ակտիվ մասնակցում էր Ռուսաստանի արտաքին քաղաքականության ուղղությունների մշակմանը և հաստատ տեղյակ էր, որ, առհասարակ, Ալեքսանդր Երկրորդը դժգոհ էր Բեռլինի կոնգրեսի արդյունքներից և հարկավոր էր թույլ տրված սխալները ուղղել:

Լորիս-Մելիքովը, ինչպես և մյուս լրջմիտ գործիչները դեմ էին պատերազմին, հասկանում էին, որ նոր պատերազմի դեպքում բոլորը կմիավորվեն Ռուսաստանի դեմ: Ուստի նրանք շեշտը դնում էին Ռուսաստանի արտաքին քաղաքական քայլերը ակտիվացնելու վրա, դիվանագիտությունը ուժեղացնելու և արդյունավետ դարձնելու վրա:

Դրանից էլ ելնելով, Լորիս-Մելիքովը հաճախ Կ.Եզյանի հետ քննարկում էր Արևմտյան Հայաստանում իրականացվելիք գործողությունների ծրագիրը, նկատի ունենալով Բեռլինի կոնգրեսից հետո Թուրքիայի շուրջ ծավալված դիվանագիտական աշխուժությունը:

- Ռուսաստանի համար, - ասում էր նա արտաքին գործերի նախարարին, - ի դեմս Արևմտյան Հայաստանի, ավելի ձեռնտու է մի անկախ երկիր, որի ժողովուրդն երախտագետ կլինի Ռուսաստանին, որն էլ պետք է նպաստի դրան: Այլապես այնտեղ կհաստատվի Ռուսաստանի նկատմամբ միշտ թշնամաբար տրամադրված Անգլիան:

1880-1881 թթ., երբ Լորիս-Մելիքովը ռուսական կառավարության փաստացի ղեկավարն էր, Կ.Եզյանն ավելի ակտիվ ու անմիջական կապեր ստեղծեց Անդրկովկասում ու Կ.Պոլսում իր գաղափարակիցների

հետ: Հարկավոր էին գործուն միջոցներ արևմտահայության քաղաքական զարթոնքի համար:

«Փորձ», «Մեղու», «Մշակ» թերթերը Արևմտյան Հայաստանից թարմ լուրեր տպագրելու հետ միասին, սկսեցին ծավալուն հոդվածներ հրապարակել Թուրքիայում տիրող իրավիճակի և այդ կապակցությամբ արևմտահայության նկատմամբ օր-օրի սաստկացող ճնշումների մասին: Այդ ելույթների համար թուրքական կառավարությունն արգելեց վերոհիշյալ պարբերականների մուտքը Կ.Պոլիս և հայկական նահանգներ:

1880թ. ամռանը Լորիս-Մելիքովի գիտությամբ Կ.Եզյանը հանձնարարեց Կ.Պոլիս մեկնել Աբգար Հովհաննիսյանին, առաջադրանք ունենալով տեղի առաջադիմական գործիչներին ներգրավել ընդհանուր գործի մեջ: Ի միջիայլոց, դրա շնորհիվ էր, որ մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանը համաձայնվեց աշխատակցել «Փորձին», նրա էջերում անարգել տպագրելով իր հայտնի «Հոսհոսի ծեռատետրը»: Հակոբ Պարոնյանը կանգնեց Կ.Պոլսի այն առաջադիմական գործիչների շարքում, որոնք արևմտահայությանը կոչ էին անում դիմել ինքնապաշտպանության:

Հակոբ Պարոնյանը Լորիս-Մելիքովի մասին

Հակոբ Պարոնյանը մեծ համակրանքով էր վերաբերում Լորի-Մելիքովին, նրա մեջ տեսնելով արևմտահայության ազատագրության գործին հավատարիմ նվիրյալի: Մեծ գրողը բարձր էր գնահատում Լորիս-Մելիքովին, որպես իսկական մարդու, իսկական հայ գործչի:

Հակոբ Պարոնյանը բոլոր մարդկանց բաժանում էր երկու տեսակի: Նա առաջին տեսակի մեջ տեղավորում էր այն մարդկանց, որոնք լինելով կատարյալ, նպաստում են աշխարհի զարգացմանը: Մեկ-երկու գործիչների հետ մարդկանց այս տեսակի մեջ էր նա տեսնում նաև Լորիս-Մելիքովին, բարձր գնահատելով նրա մարդկային արժեքները:

Բուռն էր արևմտահայության ոգևորությունը, երբ հայտնի դարձավ, որ նշանավոր զորահրամանատար Լորիս-Մելիքովը նշանակվել է Կովկասյան բանակի գործող կորպուսի հրամանատար: Եվ այդ ոգևորությունը հասկանալի էր:

Կատարելով թուրքական իշխանության քարոզչական մեքենայի թելադրանքը, Կ.Պոլսում լույս տեսնող «Մասիս» թերթը սկսեց հերյուրանքներ տարածել հայ զորավարի հասցեին, կասկածանքի տակ դնելով նրա հայ լինելը: Հակոբ Պարոնյանը վճռակամորեն հանդես եկավ «Մասիս» «պատվարժան լրագրի» դեմ, որը 1877-1878թթ. պատերազմի սկզբում հարկ էր համարում մշտապես հիշեցնել, թե «Միքայել Լորու Մելիքոֆ, որ անունով միայն հայ է», այդ կերպ փորձելով նսեմացնել հայ զորավարի արժանիքը, նրան հեռացնել հայկական միջավայրից, հասկացնելով, որ

եթե այդ զորավարը միայն «անունով է հայ», ապա նրա հետ հույսեր չի կարելի կապել ու նրանով ոգևորվել:

«Կսմիթների» մեջ ծաղրելով «Մասիսի» այսպիսի կեցվածքը, Հ.Պարոնյանը գրել է. «Մասիս պատվական լրագիրը Միքայել Մելիքոֆ զորավարին ռուս բանակի մը սպարապետ կարգվելուն առթիվ կըսէ թե՝ Միքայել Լորու Մելիքոֆ, որ անունով միայն հայ է, Կյումրիի բանակին սպարապետ կարգվեր է և այլն: Հայ զորավարի մը անվան հրապարակի վրա պտըտիլը ազգին պզտիկությո՞ւն սեպեցիր, որ շուտ մը ելար ըսիր թե ատիկա հայ չէ և ազգը չկրնար ընդունիլ այդ անպատվությունը:

Ինչե՞ն գիտես սրտով ինչ ըլլալը, մարդը զորավար ըլլալով հանցավո՞ր գտնված եղավ, որ այսպես զինքը կը թշնամանես»:

Այնուհետև դիմելով «Մասիսին», Հակոբ Պարոնյանը հարցնում է. «Իսկ եթե միայն անունով հայ եղողները թշնամանել է միտքդ, ինչո՞ւ չես գար, մեծապատիվ, ինձմե չես ուզեր այդ մարդոց ցուցակը»:

«Ի՞նչ կնշանակե, - զայրացած հարցնում էր մեծ երգիծաբանը, - ամեն օր կրկնելով ըսել. «Մելիքոֆը, որ անվամբ հայ է, սպարապետ կարգվեր է. Մելիքոֆը, որ անվամբ հայ է, զորահանդես մը ըրեր է» և այլն ու վերջում բացականչում. «Աստված, թշնամիս ՄԱՍԻՍԻՆ ձեռքը չձգե...»:


Բայց «Մասիսի» նպատակների մեջ չէր մտնում Հ.Պարոնյանից ուզել «անունով հայ եղողների ցուցակը» , որովհետև «Մասիսը» հենց այդ կարգի անձանց կամակատարն էր: Իսկ Հ.Պարոնյանն իր վրա էր վերցրել այդ «անունով հայերին» ծաղկելու պարտականությունը, որոնք մոռացած ազգ ու ազգային շահ, մտել էին «ազգային հովանոցի» տակ ու իրենց անձնական շահասիրությունն էին առաջ տանում...

«Կոմս Կապոդիստրիան ուներ հիմիեր...»


Ազգայինը պահպանող հայ գործիչները հույսեր էին կապում իրենց հերթին Լորիս-Մելիքովի հետ, ի դեմս նրա՝ տեսնելով մի ազգանվեր պետական գործչի, որը հնարավորություն կունենա անձամբ զբաղվելու հայկական հարցի լուծմամբ և կղեկավարի արևմտահայության ազատագրական շարժումը: Այդ հույսերն ավելի մեծացան, երբ 1880թ. փետրվարին Լորիս-Մելիքովը ստանձնած պաշտոնով դարձավ Ռուսաստանում երկրորդ դեմքը Ալեքսանդր Երկրորդ ցարից հետո:

1880թ. մարտի 14-ին Գևորգ Եվանգուլյանը Կ.Եզյանին գրում էր. «Մեր լուսավորյալների օպտիմիստ մասը հույս է հայտնում, որ գուցե կոմս Լորիս Մելիքյանը Տաճկական Հայաստանի համար խաղա կոմս Կապոդիստրիայի դերը, որ սա խաղաց Ալեքսանդր Ա.-ի ժամանակ Հունաստանի համար»:

Գ.Եվանգուլյանը Կապոդիստրիային հիշատակելով նկատի ուներ հետևյալը: Ազգությամբ հույն կոմս Ի.Կապոդիստրիան 1809 թվականից



Ի.Ս. Տուրգենև



Ա.Ֆ. Կոմմի



Կ.Դ. Կավելին



Ա.Դ. Գրադովսկի

գտնվում էր ռուսական դիվանագիտական ծառայության մեջ և արտաքին գործերի նախարարությունում վարում էր Արևելքի երկրների հետ Ռուսաստանի հարաբերությունները: Ունենալով լիբերալ հայացքներ Կապոդիստրիան Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմնական խնդիրը տեսնում էր Ֆրանսիայի հետ հարաբերությունները լավացնելով ուժեղացնել բալկանյան երկրների քրիստոնյա ժողովուրդներին ցույց տրվող օգնությունը:

Չհամաձայնվելով «Սրբազան դաշինքի» հետադիմական քաղաքականությանը, Կապոդիստրիան 1822թ. հրաժարական տվեց ու հեռացավ Ռուսաստանից: 1827թ. Կապոդիստրիան ընտրվեց անկախության համար պայքարող Հունաստանի առաջին պրեզիդենտը և այդ պոստում մնաց մինչև 1831 թվականը:

Լորիս-Մելիքովը գտնում էր, որ հարկավոր է Արևմտյան Հայաստանում ձևավորել հայկական շարժումները, դրանց տալ հստակ ուղղություն ու բովանդակություն:

-Կոմս Կապոդիստրիան ուներ իր գործն առաջ տանելու հիմքեր, որոնց վրա նա կարող էր հենվել, - ասաց Լորիս-Մելիքովը, երբ Կ.Եզյանը նրան հայտնեց Գ.Եվանգուլյանի արտահայտած ցանկության մասին:

Իսկ հայ իրականության մեջ դեռևս չէին հասունացել այն պայմանները, որ ժամանակին ստեղծվել էին Հունաստանում: Այնպես որ, հարկավոր էր գործնականորեն զբաղվել շարժումները կազմակերպելու համար և ոչ թե տարվել դրա մասին բացահայտ խոսակցությամբ:

Հենց այդ էլ նկատի ունենալով Կ.Եզյանը Լորիս-Մելիքովի խորհրդով Գ.Եվանգուլյանին հորդորում էր գործել և քիչ խոսել շարժման մասին: Միջազգային դիվանագիտական ճանապարհներից հեռու գտնվող Թիֆլիսից Գ.Եվանգուլյանը տարակուսանք էր հայտնում, 1880թ. սեպտեմբերի 26-ին գրելով, որ եթե Լորիս-Մելիքովը և կոմս Իգնատևը կողմ են հայկական շարժմանը, ապա «Կովկասում ինչո՞ւ են արգելում խոսել շարժման մասին»:

Աստիճանաբար Գ.Եվանգուլյանն էլ հասկացավ, որ հարկավոր է գործել զգույշ, չոգևորվել, բայց հաստատակամորեն գործն առաջ տանել ու անհրաժեշտ կապեր հաստատել Արևմտյան Հայաստանում:

Ուժեղ նավատորմ ունենալու անհրաժեշտությունը

Ռուսաստանի ներքին գործերի նախարար Լորիս-Մելիքովը դառնալով ռուսական կառավարության փաստացի ղեկավար, իր ուշադրությունը նաև ուղղեց արտաքին քաղաքականության խնդիրներին, որը ցարի բացարձակ մենաշնորհն էր: Արտաքին քաղաքականության ղեկավարն էր իշխան Ալեքսանդր Միխայլովիչ Գորչակովը (1798-1883թթ.), որը նախարար էր 1856թ. ապրիլից: Գորչակովը մեծ բանաստեղծ Պուշկինի լիցեական դասընկերն էր եղել: 1867թ. արժանացել էր պետական կանցլերի աստիճանի: Ա.Մ.Գորչակովը հայտնի էր որպես տաղանդավոր դիվանագետ ու քաղաքական գործիչ: Այդ նա էր, որ իր ստորագրությունն էր դրել Բեռլինի պայմանագրի տակ ու խոստովանել, գրելով. «Բեռլինի կոնգրեսն իմ ծառայության կարիերայի ամենասև էջն է կազմում»:

Ա.Գորչակովի առաջացած տարիքի և հիվանդության պատճառով Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը 1879թ. սկսած փաստացի ղեկավարում էր Ն.Գիրսը, որը, սակայն, չուներ Գորչակովի հեղինակությունը և կողմնակից էր Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի հետ Ռուսաստանի մերձեցմանը:

Իսկ Գերմանիան երկդիմի քաղաքականություն էր վարում: Բիսմարկը ձգտում էր ամեն կերպ աջակցել Ավստրո-Հունգարիային Բալկաններում դիրքերն ամրապնդելու գործում և դրանով իր ճանապարհն էր հարթում դեպի Մերձավոր Արևելք: Այս քաղաքականությունն, որն իրականացնում էր Բիսմարկը, հատկապես Բեռլինի կոնգրեսից հետո, ամենից առաջ ուղղված էր Ռուսաստանի դեմ:

1879թ. հոկտեմբերի 7-ին Գերմանիան ու Ավստրո-Հունգարիան ստորագրեցին պայմանագիր, որն ոչ միայն ուղղված էր Ռուսաստանի դեմ, այլև հիմք դրեց ռազմական խմբավորումներին ու ավելի մոտեցրեց համաշխարհային կոնֆլիկտի վտանգը:

Դեռ չէին ավարտվել Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի բանակցությունները, երբ Ալեքսանդր Երկրորդին հայտնի դարձավ դրանց մասին: Երեք միապետների դաշինքի պայմաններում Ռուսաստանի թիկունքում այդ բանակցությունները լուրջ նախազգուշացում էին Ալեքսանդր Երկրորդի համար:

1879թ. սեպտեմբերին Լիվադայում Ալեքսանդր Երկրորդը հրավիրեց խորհրդակցություն, որի մասնակիցները ընդգծեցին երկու հարց: Նախ, թույլ չտալ Բալկաններում Ավստրո-Հունգարիայի ծավալումը և երկրորդ, Անգլիային զրկել Սևծովյան նեղուցները մշտապես օկուպացնելու հնարավորությունից:

Դրանից էլ ելնելով, խորհրդակցությունում խնդիր դրվեց. «Տիրանալ Սևծովյան նեղուցներին այն դեպքում, երբ իրադարձությունները կհասցնեն Եվրոպայում թուրքական տիրակալության ոչնչացմանը»:

Չնայած այս ամենին, ռուսական կառավարությունում չկար հստակ մոտեցում: Ոմանք պաշտպանում էին Գիրսի քաղաքականությունը, մյուսները հակված էին Ֆրանսիայի հետ հարաբերությունները սերտացնելու օգտին: Երրորդ խմբին կաշկանդում էր Ռուսաստանի շարունակվող կախյալ վիճակը Ֆրանսիայից ու Անգլիայից:

Դառնալով պետության երկրորդ դեմքը, Լորիս-Մելիքովը հաճախ էր Ալեքսանդր Երկրորդի հետ քննարկում արտաքին քաղաքականության

կարևոր հարցեր: Կոմսը, որը մասնակցել էր Թուրքիայի դեմ մղված երկու պատերազմներին, շատ լավ գիտեր, որ եվրոպական տերություններից ոչ մեկն ապագա կոնֆլիկտում դարձյալ Ռուսաստանին չի պաշտպանի, ուստի ցարի առջև դնում էր կշռադատված արտաքին քաղաքականություն վարելու անհրաժեշտությունը:

Լորիս-Մելիքովը գտնում էր, որ Ռուսաստանն ի վիճակի է այնպիսի քաղաքականություն վարել, որի արդյունքում եվրոպական տերությունները կզգան ոչ միայն Ռուսաստանի ներկայությունն, այլև նրա ուժը: Դրան հասնելու համար Լորիս-Մելիքովը չէր թաքցնում իր բացասական վերաբերմունքը երեք միապետների դաշինքի նկատմամբ, այն բացահայտորեն համարելով Բիսմարկի ձեռքին գործիք՝ ուղղված Ռուսաստանի դեմ:

Վերոհիշյալ հարցերը Լորիս-Մելիքովը քննարկում էր նաև Ա.Գորչակովի և Դ.Միլյուտինի հետ, որոնք հիմնականում համաձայնվում էին, բայց պնդում Ֆրանսիայի հետ մերձենալու քաղաքականության վրա: Լորիս-Մելիքովն ավելի շատ հակված էր միջազգային հարաբերություններում հավասարակշռված քաղաքականության կողմն, ընդգծելով Ռուսաստանի հզորությունը վերականգնելու գործում ուժեղ նավատորմ ունենալու անհրաժեշտությունը: Այս հարցում էլ Լորիս-Մելիքովի հետ լիակատար համաձայն էր մեծ իշխան Կոնստանտին Նիկոլայևիչը, որը ղեկավարում էր Ռուսաստանի ծովային նավատորմը:

Արտաքին քաղաքականության հատուկ կուրս վարելու համար Լորիս-Մելիքովը գտնում էր, որ հարկավոր է հասնել երկրի ներքին կայունության, ինչին էլ ուղղված էր նրա ամբողջ գործունեությունը:

Հայրենակիցների ճակատագրով մտահոգված

Զբաղված լինելով Ռուսաստանի ներքին ու արտաքին կյանքին վերաբերող բարդ և լայնամասշտաբ խնդիրներով, Լորիս-Մելիքովը չէր մոռանում իր հայրենակիցներին, որոնք շարունակում էին մնալ օսմանյան կայսրության տիրապետության տակ:

Ամենից առաջ, Լորիս-Մելիքովին զբաղեցնում էր Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի իրականացման խնդիրը: Կոմսին տարբեր խողովակներով լուրեր էին հասնում արևմտահայության նկատմամբ թուրքական իշխանությունների ավելի խստացող բռնությունների մասին:

Կ.Պոլսում գտնվող ռուսական դեսպանատնից, Կովկասյան բանակի գլխավոր շտաբից ստացված, ինչպես նաև մամուլի հաղորդած տեղեկությունները վկայում էին, որ թուրքական իշխանությունները մտադրություն չունեն Բեռլինի պայմանագրով ստանձնած պարտավորություններն ընդհանրապես կատարել: Ավելին, լուրերը հաղորդում էին, որ Թուրքիայում արգելվել է նույնիսկ «Հայաստան» բառի օգտագործումը: Իսկապես գնալով իրավիճակը տագնապալի էր դառնում...

Գոյություն ունեցող կարգի համաձայն բոլոր նախարարները Ալեքսանդր Երկրորդին զեկուցումները ներկայացնում էին Լորիս-Մելիքովի ներկայությամբ: Հիվանդ Գորչակովին փոխարինող Գիրսը հերթական զեկուցման ժամանակ դրեց երեք միապետների դաշինքը վերականգնելու անհրաժեշտությունը:

Բեռլինի կոնգրեսում և դրանից հետո պարզվեց, որ այդ դաշինքը չի ծառայում Ռուսաստանի շահերին, որ Գերմանիան ու Ավստրո-Հունգարիան հաճախ են շրջանցում Ռուսաստանին: Գիրսը գտնում էր, որ ստեղծված վիճակը հաղթահարելու համար հարկավոր է ակտիվացնել Գերմանիայի հետ հարաբերությունները, կայսր Վիլհելմին ու Բիսմարկին համարելով Ռուսաստանի անկեղծ բարեկամներ:

Ալեքսանդր Երկրորդը թերհավատ էր և համոզվում էր, Բեռլինում նրանց դրսևորած վարքագիծը պատահական չէր և նրբորեն ուղղված էր Ռուսաստանի դեմ: Ցարը հասկացրեց, որ դեռևս 1873թ. ձևավորված երեք միապետների դաշինքին նոր իմպուլս տալու մտադրություն չունի:

- Դուք ի՞նչ կարծիքի եք Միխայիլ Տարիելովիչ, - հարցրեց ցարը Լորիս- Մելիքովին:

- Ձերդ մեծություն, ես լիակատար կերպով համաձայն եմ ձեր կարծիքին: Որովհետև ոչ Գերմանիան և ոչ էլ Ավստրո-Հունգարիան պատերազմի պայմաններում Ռուսաստանի օգտին որևէ էական քայլ չձեռնարկեցին: Միթե՞ այլևս կասկածելի է, որ 1879թ. հոկտեմբերին Բիսմարկի ու Անդրաշի ստորագրած պայմանագիրը հենց մեր դեմ է ուղղված:

Գիրսը փորձեց առարկել, բայց Ալեքսանդր Երկրորդն արգելեց ու կտրուկ ասաց.

- Մտադրություն չունեմ վերականգնել երեք միապետների միությունը: Հարկավոր է մշակել արտաքին քաղաքականության ուղղությունների վերաբերյալ նոր հայեցակարգ և դրանք դիտել միասնության մեջ:

Լորիս-Մելիքովը հարկ համարեց նկատել, որ Ռուսաստանը կատարում է Բեռլինի պայմանագրով ստանձնած պարտավորությունները, բայց մյուս ստորագրած տերություններն այդպես չեն վարվում: Եվ իբրև փաստարկ կոմսը հիշեցրեց.

- Մենք, ձերդ մեծություն, ստանձնել էինք պայմանագրի ստորագրումից վեց ամիս անց, դուրս բերել մեր զորքերը գրաված տարածքներից, իսկ այդ ընթացքում տերությունների հսկողությամբ Բարձր Դուռը պետք է բարեփոխումներ իրականացներ հայկական նահանգներում: Մենք զորքերը դուրս ենք բերել, իսկ բարեփոխումներ չեն իրականացվում:

Ալեքսանդր Երկրորդն ուշադրությամբ լսելով Լորիս-Մելիքովին, ասաց, որ իր համար հասկանալի է կոմսի անհանգստությունը, որ նա դրսևորում է իր ազգակիցների ճակատագրի նկատմամբ, բայց և նկատեց.

-Այդ 61-րդ հոդվածը շոշափում է նաև Ռուսաստանի հեղինակությունը,

ուստի անհրաժեշտ է համապատասխան քայլեր ձեռնարկել դրա իրականացման վրա տերությունների ուշադրությունը կենտրոնացնելու համար:

Ալեքսանդր Երկրորդը Գիրսին հանձնարարեց իր ցանկության մասին տեղյակ պահել իշխան Գորչակովին և դեսպանների միջոցով բանակցություններ վարել Բեռլինի պայմանագիրը ստորագրած տերությունների հետ:

Ցարը նաև Լորիս-Մելիքովին հանձնարարեց խոսել իշխան Գորչակովի հետ և հետևել իր ցանկության կատարման ընթացքին:

Տերությունների կոլեկտիվ նոտան

Լորիս-Մելիքովը հասավ նրան, որ Անգլիան, Ֆրանսիան, Ավստրո-Հունգարիան, Իտալիան ու Գերմանիան ընդունեցին Ռուսաստանի առաջարկը և Բարձր Դռանը 1880թ. ամռանը ներկայացրին պահանջ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի համաձայն հայերով բնակեցված գավառներում վարչական ռեֆորմներ անցկացնելու վերաբերյալ: Վերոհիշյալ տերությունների Կ.Պոլսում գտնվող դեսպաններն իրենց կառավարություններից ստացան հատուկ հանձնարարություն՝ անմիջականորեն զբաղվել նշված հարցով:

Այդ ժամանակ Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպանը Եվգենի Նովիկովն էր, որի հետ Լորիս-Մելիքովը վաղուց ուներ ջերմ հարաբերություններ: Հետագայում Նովիկովի որդին՝ Սերգեյը ամուսնացավ Լորիս-Մելիքովի դուստր Մարիամի հետ: Այս կապը կարևոր դեր էր խաղում Նովիկովի հայանպաստ գործողություններում:

1880թ. սեպտեմբերին 7-ին վերոհիշյալ երկրների դեսպանները համաձայնվեցին Նովիկովի կազմած նոտայի բովանդակությանը և իրենց կառավարությունների գիտությամբ ստորագրելով, հանձնեցին Թուրքիայի արտաքին գործերի նախարար Աբեդդին փաշային:

Փաստելով, որ իրենց տերությունները ստացել են 61-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ Բարձր Դռան 1880թ. հունիսի 5-ի և հուլիսի 11-ի պատասխանները, դեսպաններն իրենց տերությունների անունից կոլեկտիվ նոտայով հայտնեցին հետևյալը. «Այդ փաստաթղթի ուշադիր ուսումնասիրումը ցույց է տալիս, որ օսմանյան կառավարության ձևակերպած առաջարկությունները ոչ իրենց ոգով և ոչ էլ ըստ էության, չեն համապատասխանում այդ հոդվածին: Տերությունները գիտեն, որ օսմանյան կառավարությունը երկու հանձնաժողով է ուղարկել հայերով բնակեցված գավառներ, բայց նրանք հիմքեր ունեն մտածելու, որ այդ միջոցը ոչ մի արդյունք չի տվել և Դուռը 61-րդ հոդվածով իր վրա վերցրած պարտավորություններին հակառակ, նույնիսկ նրանց չի տեղեկացրել այդ միջոցառման մասին»:

Այնուհետև ընդգծելով, որ արդարադատության ասպարեզում որևէ

բարելավում չի նկատվում, որ քաղաքացիական ու քրեական դատարանների ներկա վիճակն առաջվանից ավելի է վատացել, որ Դուռը պարզ պատկերացում չունի Բեռլինի պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների և վիճակի մասին, նոտայում փաստվում էր հետևյալը. «Այն արտահայտությունները, որոնցով Բարձր Դուռն իրեն իրավունք է վերապահում խոսել հայերով բնակեցված գավառներում կատարված հանցագործությունների մասին, ապացուցում են, որ նա չի ընդունում անարխիայի այն աստիճանն, որը տիրում է այդ գավառներում և իրերի լուրջ վիճակը, որոնց շարունակումն ամենայն հավանականությամբ կարող է հասցնել այդ ընդարձակ տարածքներում ամբողջ քրիստոնյա բնակչության ոչնչացմանը»:

Այնուհետև նշվում էր, որ հայերով բնակեցված գավառներում տեղական պահանջմունքներից բխող ռեֆորմների անհապաղ իրականացումը պարտավոր է կատարել Բարձր Դուռը 61-րդ հոդվածի համաձայն, ուստի դրանից ելնելով դեսպանները նոտայում ընդգծում էին, որ չեն կարող թույլ տալ, որպեսզի Դուռը իրեն համարեր ազատված այդ հոդվածով ընդունված պարտավորություններից, որոնք բացառապես վերաբերում են հայկական նահանգներին և չեն համաձայնվի թուրքական կողմի առաջարկին, որով նախատեսվում է ռեֆորմը տարածել ամբողջ Թուրքիայի վրա:

«Դուռն, - ասվում էր նոտայում, - ձգտում է նսեմացնել հոդվածի նշանակությունը, վկայակոչելով ինչպես հայերի, այնպես էլ քրիստոնյա բնակչության թվերի համեմատությունն ամբողջ ժողովրդի թվերի հետ: Թուրքական կառավարության նոտայում բերված աղյուսակն այն աստիճան է տարբերվում մյուսներից, որ տերությունները չեն կարող դա ընդունել որպես իրական»: Այս հանգամանքից ելնելով, տերությունների կոլեկտիվ նոտայում դրվում էր տարբեր վիլայեթների աշխարհագրական սահմանների վերանայման անհրաժեշտությունը:

Նոտայի վերջում ասվում էր. «Ծայրահեղորեն անհրաժեշտ է, ժամանակ չկորցնելով իրականացնել հայերի կյանքն ու սեփականությունն ապահովող ռեֆորմներն, անհապաղ միջոցներ ձեռնարկել քրդերի հարձակումների դեմ, անմիջապես կիրառել ֆինանսական նոր համակարգ, տալ թեկուզ ժամանակավորապես ժանդարմերիայի լավ կազմակերպություն և հատկապես գեներալ նահանգապետին ընձեռնել ավելի լայն ու ավելի երկարաժամկետ իշխանություն:

Վերջում ներքոստորագրողները մեկ անգամ ևս խնդրում են Բարձր Դռանը ուշադրություն դարձնել այն էական փաստին, որ միջազգային ակտով իր ընդունած պարտավորությունների համաձայն հայերով բնակեցված գավառներում ռեֆորմները պետք է համապատասխանեն տեղական պահանջմունքներին և իրականացվեն տերությունների հսկողության տակ»:

Թուրքական կառավարությանը ներկայացրած կոլեկտիվ նոտան ստորագրել էին Հանֆելդը (Գերմանիա), Նովիկովը (Ռուսաստան), Հոշեն (Անգլիա), Կորտին (Իտալիա), Տիսսոն (Ավստրո-Հունգարիա), Կալիչեն (Ֆրանսիա):

Պետյան Նովիկովի հաղորդումը

1880թ. նոյեմբերի սկզբին Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Նովիկովը Լորիս-Մելիքովին ուղարկեց գնդապետ Ֆիլիպովի 1880թ. հոկտեմբերի 18-ին ներկայացրած զեկուցագիրը: Այդ զեկուցագրում ասվում էր. «Ձերդ գերազանցության բանավոր հանձնարարության համաձայն ս.թ. հոկտեմբերի 18-ին հանդիպել եմ հայոց պատրիարք Ներսեսի հետ պարզելու հետևյալ հարցերը. 1) Հայաստանում տիրող իրական վիճակի մասին: 2) Հայտնի՞ է արդյոք նրան, որ Անդրկովկասից շատ հայ երիտասարդներ գաղտնի անցնում են Թուրքիա և 3) այդ էմիգրացիայի նպատակների մասին:

Պատրիարքի տված բացատրությունները հանգեցին հետևյալին.

Պատերազմի սկզբից Թուրքական Հայաստանը պատրիարքի խոսքերով, ենթարկվել է թուրքական իշխանությունների կողմից այնպիսի ճնշումների, որ որոշ տեղերում բնակիչները որոշել են դիմադրել բացահայտ ուժով, չնայած հաջողության անհուսալիությանը, բայց նա՝ պատրիարքը կարողացել է մարդկանց հանգստացնել համոզելով ու խոստումներ տալով: Սակայն պատերազմից հետո կառավարության մշտական հետապնդումներին ավելացել է Հայաստանում ամենուրեք կատարվող թալանը:

Պատրիարքը ժողովրդին զսպել է Հայաստանում շուտով կատարվող բարեփոխումների խոստումով: Այդ խոստումները հիմնվել են Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով և կարճ ժամանակում Հայաստանն անարխիայից ազատագրելու մասին Կ.Պոլսում եվրոպական ներկայացուցիչների խոստումների վրա:

Ժողովուրդն, իսկապես, ոգևորվել է հույսով, երբ իմացել է, որ եվրոպական ներկայացուցիչներն արդեն սկսել են բանակցել Հայաստանում բարեփոխումներ կատարելու շուրջ:

Երկու ամսից ավելի ժողովուրդը սպասել է հայկական հարցում ինչ որ տեղաշարժի, բայց տեսել է, որ եվրոպական տերությունների և հատկապես Դռան գրաված դիրքը զրկում է Հայաստանի անտանելի վիճակը փոփոխելու հույսից: Ի միջիայլոց թուրքական կառավարությունն օգտվելով այդ ժամանակից և սկսել է իրականացնել ծերդ գերազանցությանը հայտնի Աբեդդին փաշայի նախագիծը, որը եվրոպական ներկայացուցիչները միաձայն գտել են անբավարար: Դուռը սկսել է երկրամասի վարչա-

կան բաժանումը փոխելով: Թուրքական կառավարության գործողությունների հիմքում ընկած է այն մտադրությունը, որ Հայաստանն այնպես բաժանել գավառների (կայմակամլիկ) և տեղամասերի (նահիր), որպեսզի հայկական բնակչությունն որքան հնարավոր է զրկվի մեծամասնությունից, այսինքն ամբողջապես հայկական բնակչություն ունեցող բնակավայրերը, որոնք կազմում են մեկ վարչական ամբողջություն, բաժանվում են առանձին մասերի, որոնք միացվում են հարևանությամբ գտնվող թուրքերով կամ քրդերով առավելապես բնակեցված բնակավայրերին: Մյուս կողմից Դուռը ձեռնարկել է բռնի միջոցներ ոչնչացնելու վաղուց սուլթանների շնորհած չնչին ինքնուրույնությունը, որից ժողովուրդը օգտվում էր համայնքի ներքին և հոգևոր գործերում: Թուրքիայում հայերի վիճակն այնքան անհուսալի է, որ պատրիարքի կարծիքով չի բացառվում զինված դիմադրությունը»:

Գնդապետ Ֆիլիպովը հայտնում էր նաև, որ պատրիարքը վճռականորեն մերժել է այդ նպատակով իր մոտ Թուրքական Հայաստանից և Անդրկովկասից եկած հայ երիտասարդներին և հանձնարարել է եպիսկոպոսներին ամեն կերպ հակագործել ապստամբության փորձերին:

Պատրիարքը, ինչպես հաղորդում էր Ֆիլիպովը, ասել էր նաև, որ ինքն օգտվում է միայն հոգևոր հեղինակությունից, չունի գործադիր ոստիկանական իշխանություն: Այդ պատճառով նա կարող է բնակչության ձգտումներին հակագործել միայն որոշակի չափով, բայց հետո նրա բարոյական ազդեցությունը ուժ չի ունենա, երբ «ներկա դժբախտություններից ու տառապանքից կսպառվի ժողովրդի համբերությունը»:

Լորիս-Մելիքովը լրացուցիչ ու հավաստի տեղեկություններ էր ստանում հայկական շրջանակներից Կ.Եզյանի միջոցով: Այս գործում կարևոր դեր խաղաց «Արարատյան ընկերության» նախկին նախագահ Գաբրիել Նորատունկյանի այցելությունը Թիֆլիս...

Հերթական հանդիպման ժամանակ, 1880թ. դեկտեմբերի կեսերին, երբ Գիրսն Ալեքսանդր Երկրորդին զեկուցում էր նախարարության գործողությունների մասին, ներկա գտնվող Լորիս-Մելիքովը ցարին տեղեկացրեց թուրքական կառավարության կողմից Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի պահանջների կատարումը ձգձգելու մասին:

Ցարը հրամայեց Գիրսին զեկուցել, թե ինչ է կատարվել այդ ուղղությամբ: Ալեքսանդր Երկրորդը դժգոհ մնաց Գիրսի զեկուցումից, ընդգծելով նրա դանդաղաշարժությունը: Առիթն օգտագործելով Լորիս-Մելիքովը ցարին հանձնեց Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Նովիկովի ուղարկած նամակը գնդապետ Ֆիլիպովի զեկույցի հետ միասին:

Ալեքսանդր Երկրորդը հանձնարարեց չդադարեցնել բանակցությունները տերությունների հետ և շարունակել ակտիվորեն ներգործել թուրքական կառավարության վրա իր ստանձնած պարտավորությունները

կատարելու համար: Ցարը հրամայեց նաև այդ հարցի մասին խորհրդակցություն հրավիրել 1881թ. վերջին, ցանկություն հայտնելով դրան մասնակից դարձնել նաև ռազմական ու ֆինանսների նախարարներին:

«Ժողովուրդն ու պարտեզը նույնն են...»

Մշակված ծրագրի համաձայն Անդրկովկասի կարևոր կենտրոններում՝ Թիֆլիսում, Բաքվում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Ախալցխայում, Ախալքալակում և այլուր ստեղծվեցին Արևմտյան Հայաստանին օգնող խմբեր: Երևանի խմբի ակտիվ անդամ բժիշկ Լևոն Տիգրանյանը 1880թ. դեկտեմբերի 26-ին Կ.Եգյանին ուղարկած նամակում հայտնում էր. «Իմ նամակներից ձեզ հայտնի է, որ մեր քաղաքի բոլոր ժողովուրդը սկզբում պատրաստվում էին և աշխատում էին զենքով պաշտպանել տաճկահայոց իրավունքները, այդ ձգտումը և շարժումը շարունակվեց, մինչև որ ճիշտ լուրեր ստացանք Հայրիկից և Պոլսից: Հայրիկը մեզ գրում է. «Հանգիստ մնանք առժամանակ, մինչև որ դեպք լինի, բայց պետք է անդադար և ամենայն զորությամբ աշխատենք, ամենայն րոպե պատրաստ լինել»: Այդ միտքը մենք բացատրում ենք հետևյալ կերպիվ՝ որ մեզ հարկավոր է գինակցություն: Այս գործն առաջ տանելու համար պետք է աշխատենք զենք տարածել ժողովրդի մեջ: Եթե այդ զենքը հարկավոր լինի գարունքը, գյուղացիքը փայտերով չեն պատերազմի տաճիկի դեմ, իսկ եթե խաղաղություն տիրե Փոքր Ասիայում, այդ զենքը կգործադրվի ինքնապաշտպանության համար քուրդերի դեմ և այդ կերպով՝ մենք առժամանակ հանգամանքներին համաձայն, հասած կլինենք մեր նպատակին, նրանով, որ ժողովրդին զինակրության կսովորեցնենք, դուք ինքներդ գիտեք, որ զինակիր ժողովուրդը շլինքը չի ծռի, և հարմար դեպքում անպատրաստ չի լինի. ո՞վ գիտե ե՞րբ, ի՞նչ կպատահի, բայց ամենայն դեպքում հրացանը ձեռքին պատրաստ ունենալը օգտակար բան է»: Այնուհետև բժիշկը հայտնում էր, որ «կամաց-կամաց զենքը կանցկացնեն Տաճկաստան»:

Ոգևորությունն այնքան ընդհանուր էր, որ նույնիսկ հայ աղջիկներն էին պատրաստ զենքի դիմել: Այդ օրերին «Մշակ» թերթը տպագրել էր էրզրումից մի հայ օրիորդի հետևյալ խոսքերը. «Մենք մինակ արտասուքով կապրինք, այո, արտասուքով կապրինք, քանի մեր ձեռքերը կապուած են, քանի մեր լեզուն փակ է, քանի մենք գերի ենք: Քակեցէք մեր գերութիւնը, բացէք մեր ձեռքերը, տէր ըրէք մեր երկրին... տեսնենք այն ժամանակ ո՞ր աղջիկ ձի չի հեծնիր, սուր չի առներ և իր եղբոր հետ չերթար պաշտպանելու իր հայրենիքը... այն ո՞ր աղջիկը իր քաղաքի պայծառութեան համար քար ու կիր չի կրեր, մեր ուսերը սովոր են արդեն: Եթե մեր ձեռքերը հերիք չեն լինիր, մեր գլխի ոսկին կը ծախենք, մշակներ կը վարձենք և մեր երկիրը նորէն կը շենացնենք»:

Երբ խանդավառված Կ.Եգյանը Լորիս-Մելիքովին ներկայացրեց, թե Կովկասում և Արևմտյան Հայաստանում ինչպես է ընթանում իրենց ծրագրի իրագործումը, Միխայիլ Տարիելովիչը նկատեց.

-Ժողովուրդն ու պարտեզը նույնն են: Խնամեցիր պարտեզը, կդառնա վարդաստան, թողեցիր անխնամ՝ կաճեն փուշ ու տատասկ...

Սակայն տեղի ունեցավ 1881թ. մարտի մեկը: Կարճ ժամանակ անց, Լորիս-Մելիքովը հեռացավ ասպարեզից: Սկսվեց հետադիմության ժամանակաշրջանը: Կովկասի փոխարքան, որն այնքան էլ նպաստավոր վերաբերմունք չուներ հայկական շարժման նկատմամբ, ուժեղացրեց հալածանքը.

Լորիս-Մելիքովի մշակած ծրագիրը մնաց անկատար...

Կարապետ Եգյանը կաթողիկոսի թեկնածու

Լորիս-Մելիքովն երբեք չէր մոռանում Ներսես Աշտարակեցուն և հաճախ էր նրա հետ համեմատում իրեն լավ ծանոթ երկու կաթողիկոսներին՝ Մատթեոսին և Գևորգ Չորրորդին: Նա այդ երկուսին չէր ընդունել ոչ միայն սահմանափակ մտածողության համար...

1882թ. դեկտեմբերին մահացավ Գևորգ Չորրորդ կաթողիկոսը: Հայկական մամուլը սկսեց լայնորեն քննարկել կաթողիկոսի ընտրության հարցը: Ներսես Աշտարակեցուց հետո, արդեն երկու անգամ կաթողիկոս էին ընտրվել Կոստանդնուպոլսի պատրիարքները, որոնք իրենց գործունեությամբ այդպես էլ համապատասխան չեղան իրենց կոչմանը՝ համազգային խնդիրների լուծման ասպարեզում:

Լորիս-Մելիքովն, որը գտնվում էր արտասահմանում, ուշադրությամբ հետևում էր մամուլում հրապարակվող նյութերի միջոցով կաթողիկոսի ընտրության ընթացքին: Նա դրեց առաջին հայացքից անհավանական թվացող մի հարց: Միխայիլ Տարիելովիչը գտնում էր, որ հարկավոր է մի կողմ դնել և Պոլոժենիան, և Ազգային ժողովը ու կաթողիկոս ընտրել աշխարհիկ մարդու: Նրա թեկնածուն Կարապետ Եգյանն էր:

Ազգայինը պահպանող գործիչները համաձայնվեցին Լորիս-Մելիքովի առաջարկին և չափազանց գաղտնի պայմաններում սկսեցին այդ ուղղությամբ գործել: Որքա՞ն էր արդարացված Կ.Եգյանի թեկնածության առաջ քաշումը: Ազգայինը պահպանող գործիչները Լորիս-Մելիքովի հետ միասին նախ նկատի ունեին ստեղծված միջազգային բարդ իրավիճակը, որը չէր ընթանում հայկական հարցի լուծման հունով և հարկավոր էին համարում ուժեղացնել էջմիածնի դերը, որը կարող էր կատարել Կարապետ Եգյանը՝ Ռուսաստանի պաշտոնական շրջանակների հետ ունեցած կապի, նրանց մոտ ձեռք բերած հեղինակության շնորհիվ: Բացի դրանից,

Կ. Եզյանը հայկական իրականության մեջ ևս ուներ հսկայական հեղինակություն: Հաշվի էին առնվում նաև Կ.Եզյանի գիտելիքները, փորձը, եվրոպական մի շարք լեզուներին տիրապետելը:

Ազգայինը պահպանող ուժերը եկել էին այն համոզման, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հոգևոր առաջնորդ լինելը ստեղծված պայմաններում այլևս իրեն չի արդարացնում: Նրանք գտնում էին, որ կաթողիկոսը նախ և առաջ պետք է լինի քաղաքական գործիչ, ելնելով հայկական հարցը միջազգային դիվանագիտության մեջ արծարծելու անհրաժեշտությունից:

Լորսի-Մելիքովն իր համախոհների հետ չէր սխալվում, դնելով Կ. Եզյանի թեկնածությունը, համոզված լինելով, որ այդպիսի ընտրությունը տվյալ ժամանակի համար արդարացված է ու անհրաժեշտ...

Սակայն անհայտ պատճառներով Կ.Եզյանի թեկնածությունը բացահայտորեն չդրվեց և նորից կաթողիկոս ընտրվեց հին եղանակով...

«Ծնողների ներկայությամբ զարդարված տարիների համար»

Ալեքսանդր Երրորդի կամքով Լորիս-Մելիքովին հասկացնել տվեցին, որ նրա մնալը Պետերբուրգում հաճելի չէ: Լորիս-Մելիքովը հարկադրված մեկնեց արտասահման և հաստատվեց Նիցա քաղաքում՝ ելնելով իր առողջական վիճակից:

1881թ. աշնանը Լորիս-Մելիքովը ցանկություն հայտնեց վերադառնալ Ռուսաստան: Նրան բարեկամները տեղեկացրել էին, որ Թիֆլիսում ապրող մայրը՝ Եկատերինա (Կատերինա) Հախվերդյանն արդեն կորցնում է տեսողությունը: Միխայիլ Տարիելովիչը մոր տեսնելու նպատակով էր հայտնել Ռուսաստան վերադառնալու մասին իր մտադրությունը:

Սակայն ներքին գործերի նախարար Իգնատևը, որն այդ պոստում առաջինն էր հաջորդել Լորիս-Մելիքովին, Ալեքսանդր Երրորդի կամքով նրան պատասխանել էր, որ վերադարձը Ռուսաստան նպատակահարմար չէ, դա կառաջացնի անցանկալի երևույթներ, քանի որ, ինչպես գրում էր նախարարը, «ձեր գալու հետ հույսեր են կապում սահմանադրական հույսեր փայփայող անձինք»: Նամակի վերջում Իգնատևը հետաքրքրվելով Լորիս-Մելիքովի առողջությամբ, խորհուրդ էր տալիս ձմռանը մնալ Նիցայում և զբաղվել բուժմամբ:

Վերջապես 1883թ. հունիսի սկզբին մամուլում երևացին հաղորդումներ Լորիս-Մելիքովի վերադարձի մասին: 1883թ. հունիսի 11-ին Լորիս-Մելիքովը հասավ Պետերբուրգ: Հաջորդ օրը, որպես գեներալ-թիկնապահ Լորիս-Մելիքովն ընդունված պարտադիր կարգի համաձայն ներկայացավ Ալեքսանդր Երրորդին: Ցարը փառաբանված գեներալին ընդու-

նեց սիրալիր ժպիտով, մի քանի հարց տվեց առողջության մասին և հասկացրեց, որ ավարտված է ընդունելությունը: Ալեքսանդր Երրորդը նույնիսկ հարկ չհամարեց ոչ միայն խոսել Լորիս-Մելիքովի հետագա ծառայության մասին, այլև ակնարկ չարեց արտասահմանից վերջնականապես վերադառնալու իրավունքի շուրջ:

Միխայիլ Տարիելովիչը փորձեց հանդիպել իր հին ընկերներին, որոնք համախոհ էին եղել ռեֆորմների իրականացման գործում: Բայց նրանք բոլորն էլ նրբորեն իրենց վաղեմի ընկերոջը հասկացրին, որ հազիվ հարմարվել են ստեղծված պայմաններին և դրանք փոխելու մտադրություն չունեն: Միլյուտինը, Աբազան և մյուսները ցուցադրաբար Լորիս-Մելիքովից իրենց հեռու էին պահում... և նրանց կեցվածքը պաշտոնաթող նախարարի վրա ավելի մռայլ տպավորություն թողեց, քան ցարի սիրալիր կեղծավորությունը:

Լորիս-Մելիքովն ամբողջ հոգով զգաց խորթություն և շտապեց հեռանալ Պետերբուրգից:

1883թ. հուլիսի կեսերին Լորիս-Մելիքովն եկավ Թիֆլիս, որտեղ մնաց մինչև օգոստոսի 12-ը: Թիֆլիսում Կարսի փառաբանված հերոսին դիմավորեցին ջերմորեն: Աննկարագրելի հուզիչ էր հանդիպումը մոր հետ: Ծերացած և համարյա կուրացած մայրը գրկել էր 58-ամյա որդուն ու արտասվելով շշնջում էր՝ «Միկո ջան, Միկո ջան»:

Լորիս-Մելիքովին այցելեցին Թիֆլիսում ապրող հարազատները, հին ընկերները: Բոլորը հետաքրքրվում էին իրենց նշանավոր ազգականի կյանքով, առողջությամբ: Ի պատասխան ողջույնի խոսքերի, Լորիս-Մելիքովն ոտքի կանգնեց, ձեռքը պահելով մոր վտիտ ուսին, շատ կարճ կենաց առաջարկեց.

-Բաժակ բարձրացնենք ծնողների ներկայությամբ զարդարված տարիների համար...

Լորիս-Մելիքովը բնակվում էր Կոջորի ամառանոցում: Խուսափում էր շատ մարդկանց հետ հանդիպելուց: Անչափ շնորհակալ եղավ, երբ Թիֆլիսի քաղաքային դումայի ներկայացուցիչները քաղաքագլխի պաշտոնակատարի գլխավորությամբ 1883թ. հուլիսի 17-ին եկան նրա մոտ ու կոմսին շնորհավորեցին Թիֆլիսի պատվավոր քաղաքացու կոչում տալու համար:

Թիֆլիսում գտնվելու օրերին Լորիս-Մելիքովը մի տհաճ հանդիպում ունեցավ: Նրան այցելեց իր վաղեմի ընկեր իշխան Դունդուկով-Կորսակովը, որը դարձել էր Կովկասի կառավարչապետ: Պատմելով իր գործերի մասին, իշխանը նկատեց, որ հայկական բնակավայրերում, մասնավորապես Թիֆլիսում ուժեղացել են անջատողական տրամադրություններն, որոնց ոգևորողը Կարապետ Եզյանն է:

-Ձեզ, իշխան, - ասաց Լորիս-Մելիքովը, - թյուրիմացության մեջ են գցել: Ես տեղյակ եմ այդ շարժումից: Կովկասահայերն ուզում են ...

նյան տիրապետության տակ գտնվող իրենց արյունակից եղբայրներին օգնել ու դա անջատողական տրամադրություն չէ:

Լորիս-Մելիքովը իշխանին խորհուրդ տվեց ծանոթանալ, թե ինչ են գրում Թիֆլիսի հայկական թերթերը և կհամոզվի, որ հայերն աչքի են ընկնում իրենց ռուսասիրությամբ, մի իրողություն, որ հարկավոր է գնահատել...

Իշխան Դունդուկով-Կորսակովն իր վաղեմի ընկերոջը խոստացավ հետևել նրա խորհրդին: Իշխանի մեկնելուց հետո Լորիս-Մելիքովն իր մոտ հրավիրեց Գևորգ Եվանգուլյանին, որն արդեն մասնավոր փաստաբանությամբ էր զբաղվում: Պատմելով իշխանի հետ ունեցած տհաճ զրույցի մասին, Լորիս-Մելիքովը Գ.Եվանգուլյանին խորհուրդ տվեց զգույշ լինել ու հանձնարարեց.

-Նամակով հայտնիր Գերասիմ Արտեմովիչին (Կարապետ Եզյանին այդպես էին դիմում նրա մտերիմները - Վ.Պ.), որ զգույշ լինի, լավ պահի փաստաթղթերը: Հատկապես զգուշանա Կովկասի ուսումնական օկրուգի պետ Յանկովսկուց, նա մեր ամենամեծ թշնամին է...

... Լորիս-Մելիքովը շատ ծանր էր տանում Ռուսաստանից իր «կամավոր» հեռացումը և հույս էր փայփայում, որ ի վերջո կհաջողվի հասնել իր նպատակին՝ վերադառնալ հայրենիք: Նա այս հավատով էլ Թիֆլիսից մեկնեց Պետերբուրգ: Մոսկվայում ունեցավ մի քանի կարևոր հանդիպում, եղավ Լազարյան ճեմարանում, այցելեց Մոսկվայի համալսարան: Մոսկվայի համալսարանում սովորելը Լորիս-Մելիքովի երազանքն էր եղել, որն այդպես էլ չհաջողվեց իրականացնել: Եվ որպես մխիթարություն, նա համալսարանին նվիրեց 14 հազար ռուբլի, այն ժամանակվա համար պատկառելի մի գումար, պայմանով, որ այդ գումարից ստացված տոկոսները հատկացվեն կովկասցի հայ և վրացի երկու ուսանողի: Երկար տարիներ, իսկապես Մոսկվայի համալսարանում Լորիս-Մելիքովի նվիրած գումարը ծառայում էր իր նպատակին:

1883թ. դեկտեմբերի կեսերին Լորիս-Մելիքովը վերջապես հասավ Պետերբուրգ: Այստեղ նա ծանր հիվանդացավ: Դեկտեմբերից մինչև 1884թ. ապրիլի 20-ը նա մնաց անկողնային վիճակում՝ ձախ թոքի վերին մասի սուր բորբոքման պատճառով: Այդ օրն էլ իր վաղեմի բարեկամ, պրոֆեսոր Բոտկինի խորհրդով Լորիս-Մելիքովին անկողնուց տեղափոխեցին Վարշավայի երկաթուղու վագոն: Կոմսը մեկնեց Վիսբադեն՝ բուժվելու: Այստեղից էլ նա 1884թ. ձմռանը վերադարձավ Նիցա...

Լորիս-Մելիքովը թեև շատ էր ցանկանում վերադառնալ Ռուսաստան, բայց դրա իրականացման համար կար երկու արգելք: Նախ՝ քայքայված առողջությունը և երկրորդ՝ բարձրագույն իշխանության շարունակվող համառությունը: Եվ միանգամայն անհիմն է այն կարծիքը, թե կոմսն արտասահմանում մնում էր իր կամքով...

Ահա, այսպես՝ Լորիս-Մելիքովը 1884թ. գարնանը վերջնականապես

հեռացավ Ռուսաստանից: Դա եղավ նրա վերջին այցելությունը հայրենիք: Նաև վերջին հանդիպումը կուրացող մոր հետ...

«Ժամանակը մեծ ուսուցիչ է»

Լորիս-Մելիքովին պաշտոնական Ռուսաստանը ձգտում էր մոռանալ: Պոբեդոնոսցևի կամքով խստացված գրաքննությունն արգելեց նրա մասին որևէ հաղորդում տալ:

Միխայիլ Տարիելովիչի նախկին քարտուղար Ա.Ա.Սկալկովսկին սկսեց «Նովոե վրեմյա» հանդեսում տպագրել իր գրառումները կոմսի անձի ու գործունեության մասին: Բայց դրանց հրապարակումը հանկարծակի ընդհատվեց և ձեռագրի բնօրինակն էլ անհետ կորավ:

1882թ. ապրիլին նշվեց նշանավոր բժիշկ Ս. Պ. Բոտկինի գիտական ու հասարակական գործունեության 25-ամյակը: Հանդիսավոր ճաշկերույթի ժամանակ ընթերցվեց նաև Լորիս-Մելիքովի շնորհավորական հեռագիրը: Եվ չնայած Լորիս-Մելիքովին մոռացության տալու իշխանությունների ջանքերին, հանդիսության ներկա գտնվող ռուսական առաջավոր մտավորականության ներկայացուցիչները կոմսի ուղարկած հեռագիրն ընդունեցին խոր ակնածանքով: Լորիս-Մելիքովի հեռագիրը ներկաների վրա թողեց մոգական ազդեցություն:

Չնայած արգելքին, Ռուսաստանի առաջավոր մտածողները հիշում էին կոմսին, հաճախ դիմում նրա օգնությանը: Ահա, բազմաթիվ փաստերից մեկը: Լև Նիկոլայևիչ Տոլստոյը 1885թ. նոյեմբերի 20-ին Սոֆիա Անդրեևնա Տոլստոյին գրած նամակում խորհուրդ էր տալիս իր մտերիմներից մեկին՝ Զալյուբովսկուն գնդակահարությունից փրկելու նպատակով դիմել Լորիս-Մելիքովին:

Փառաբանված զորահրամանատարը հույս ուներ, որ Ռուս-թուրքական պատերազմի 10- ամյակին նվիրված հանդիսությունների ժամանակ իրեն կհիշեն և թույլ կտան վերջապես վերադառնալ Ռուսաստան:

Բայց, երբ 1886թ. Պետերբուրգում այդ հաղթանակի պատվին կառուցված հուշարձանի բացման ժամանակ մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչն իր ելույթում նույնիսկ չհիշատակեց Կարսի հերոսի անունը, Լորիս-Մելիքովը վերջնականապես կորցրեց Ռուսաստան վերադառնալու հույսը:

Միխայիլ Տարիելովիչը Ռուսաստանի հետ իր կապը պահում էր թերթերի միջոցով, ինչպես նաև զավակների, ընկերների ու բարեկամների հետ ունեցած նամակագրությամբ: Նա ակտիվ նամակագրություն ուներ իր հավատարիմ զինակից Կարապետ Եզյանի հետ, որը տեղեկություններ էր հաղորդում հատկապես Հայաստանի ու ժողովրդի մասին:

Լորիս-Մելիքովը նույնիսկ մտադրություն ուներ հուշեր գրել: Այդ մա-

սին «Նովոե վրեմյա» թերթը 1883թ. հայտնեց, որ «կոմս Լորիս-Մելիքովը գրում է հուշեր այն ժամանակվա մասին, երբ նա կառավարում էր ներքին գործերի նախարարությունը և գերագույն կարգադրիչ հանձնաժողովի գլխավոր պետն էր»: Թերթն ընդգծում էր, որ կոմսի հիշողությունները շատ հետաքրքիր կլինեն: Բայց ափսոս, որ Լորիս-Մելիքովը շատ քիչ բան հասցրեց գրել...

Ռուսական հետադիմական մամուլն երբեմն երբեմն հիշում էր Լորիս-Մելիքովին և նրան մեղադրում իր լիբերալ միջոցառումներով երկրին մեծ վնաս հասցնելու համար: Այդ մեղադրանքներն առիթ էին ծառայում, որպեսզի արդեն շատ հիվանդ կոմսը դրանց պատասխան տար:

«Ի՞նչ է արել Լորիս-Մելիքովը» հարցնում էր ամեն անգամ, երբ կարդում էր իր հասցեին տպագրված հերթական զրպարտությունը:

Եվ մի անգամ էլ անչափ զայրացած Լորիս-Մելիքովն որոշեց պատասխանել իր անարդարացի քննադատներին, առաջին անգամ հարկադրված լինելով խոսել իր անձի ու իր կատարած գործի մասին: Ընդգծում եմ՝ առաջին անգամ, որովհետև բնականից լինելով ազնիվ ու համեստ մարդ, երբեք թույլ չէր տվել հիշեցնել իր կատարած ծառայությունները: Բայց տվյալ դեպքում հարկավոր է ընդգծել, որ կոմսը ճիշտ է վարվել, գոնե այն առումով, որ իր ձեռքով ապագա սերունդներին է թողել սեփական գործունեության անաչառ գնահատականը:

Եվ այսպես, «Ի՞նչ է արել Լորիս-Մելիքովը»: Այս հարցին պատասխանելով, կոմսը գրել է.

«1. Ամենից առաջ և գլխավորապես մատնացույց եմ անում այն, որ 1880թ. փետրվարից, գլխավոր պետի պաշտոնը ստանձնելու ժամանակից սկսվեց, եթե այդպես կարելի է արտահայտվել, զեմստվոյական ու քաղաքային ինքնակառավարման նոր ժամանակաշրջան: Այդ հիմնարկություններն, ինչպես նաև մյուսներն ազատ շունչ քաշեցին և վերջ ունեցան այն հալածանքներն ու արհամարհանքը, որոնց ենթարկվում էին բազմաթիվ տարիների ընթացքում: Այդ սկիզբն անբաժան կերպով պատկանում է ինձ և ոչ ոք չի կարող ինձանից խլել:

1880թ. վերջին ես թագավոր կայսրին ներկայացրել եմ ձեզ հայտնի զեկուցագիրը տեղական կարիքների և տնտեսության վերաբերյալ օրենսդրական նախագծերի մշակմանն իրենց ընտրյալների միջոցով հասարակության ընդգրկման օգտակարության և անխուսափելիության մասին: Զեկուցագիրն արժանացավ հավանության (բացառությամբ պետական խորհրդում 1015 ընտրվող անձանցից հանձնաժողովի աշխատանքի վերջում ընդգրկվելուց) և հանձնվեց հատուկ խորհրդակցության քննարկմանը, որը նույնպես արտահայտեց իր լիակատար համաձայնությունը: Վերջապես մարտի մեկին այդ խորհրդակցության մատյանի վրա դրված է թագավոր կայսրի մակագրությունը՝ «Կատարել»:

Այսպիսի՞ն են եղել իմ նախորդների զեկուցագրերը: Նրանք չէ՞ին, որ ձգտում էին համոզել թագավորին, որ ամեն մի դատական պաշտոնյա, պրոֆեսոր, ուսուցիչ կամ հասարակական հիմնարկներում ծառայող անկասկած նիհիլիստ է կամ նրան խրախուսող: Միթե՞ այդպես չի եղել: Ցնծացող իմ բարեկամները շատախոսում են, թե ես ոչ մի ծրագիր չեմ ունեցել: Ծրագիրն այստեղ ամբողջությամբ առկա է և ոչ մի քայլ դրանից չեմ նահանջել, չնայած բոլոր դժվարություններին ու դավադրություններին, որոնք զգացել եմ ամեն քայլափոխին:

2. Երկամսյա աշխատանքից ու ջանքերից հետո, վերջապես հաջողվեց հասնել կոմս Տոլստոյի փոխմանը, ռուսական հողի այդ չար հանճարին: Պետության մեջ ուրախությունը համընդհանուր էր: Այդ անձն, ամբողջ 15 տարի կանգնած լինելով պետական կառավարման կարևորագույն բնագավառներից մեկի գլխին, Ռուսաստանին պատճառել է ավելի շատ չարիք, քան մնացած բոլոր գործիչները, նույնիսկ միասին վերցրած:

Եթե մեզ մոտ պատահաբար եկած նիհիլիզմն ընդունել է այդքան զզվելի ձևեր, ապա դրանում ծառայության դափնեպսակն անվիճելիորեն պատկանում է կոմս Տոլստոյին: Դաժան, անբարտավան ու ծայրահեղ ապաշնորհ ձևերով նա կարողացել էր իր դեմ հանել և՛ սովորեցնողներին, և՛ սովորողներին, և՛ ընտանիքներին: Այդ կերպ, հազվադեպ բացառությամբ հասարակությունն երես թեքեց թագավորական նախարարից և այդ դժգոհության զգացումը նախարարից տեղափոխվեց կառավարության վրա:

3.1880թ. սկզբին վերջ գտավ ադմինիստրացիայի և դատական մարմինների միջև եղած անտագոնիզմը...

4. Վերացվեց աղի վրա դրված հարկը, լուծվեց Բասկունչակի աղահանքի և Կրիվոյ Ռոգի երկաթուղու շինարարությունը, ընդ որում կառավարության միջոցներով ու իմ ջանքերով:

5. 1880թ. վերջին ամենուրեք, բացառությամբ դժբախտ Կովկասից, վերջ տրվեց պետական հողերի հախուռն բաժանման: Պետք է մտածել, որ դա պատահական երևույթ չէր:

6. Չորս սենատորների կողմից մի քանի նահանգների ստուգումը և նրանց տրված հատուկ հրահանգը ծառայեց այն բանի պարզ արտահայտությանը, որ կառավարությունն այսուհետև մտադիր է փաստացի հսկել ու համաձայնեցնել տեղական հիմնարկների ու անձանց գործողությունները: Հրահանգը սենատորներից պահանջում էր առատ նյութեր այդպիսիք սենատորների հետ միասին ընդհանուր հանձնաժողովներում նախապատրաստելու և քննարկելու համար:

7. Անցյալ տարվանից մեր մամուլին տրված որոշ ազատությունն առիթ ծառայեց մեր արիստոկրատիայի, տարբեր ֆրեյլիների, Պոբեդոնոսցևի և կոմպանիայի հետ միասին իմ վրա կատաղի հարձակման համար: Հաճախ մինչև թագավորին հասնող բամբասանքներին ու զրպարտություններին վերջ չկար...

8. Չեմ մտնի ավելի քան կես դար օրենքից դուրս և օրենքից վեր գտնվող երրորդ բաժանմունքի վերացմանը հաջորդող մանրամասների մեջ... Այն իր գոյության ընթացքում շատ չարիք է պատճառել ու հազարավոր վիրավորված մարդկանց տարել է դժգոհողների ճամբար:

Դուք, ի միջիայլոց ծանոթ եք այդ հիմնարկության թեև ստեղծված վատ նպատակին և կազմակերպության արարքների հետ:

Մարտի մեկի աղետը, սակայն, ոգևորեց այն սակավաթիվ անձանց, որոնք ինձ մեղադրում են երրորդ բաժանմունքը ցրելու համար, դրա գոյության մեջ տեսնելով հայրենիքի փրկությունը:

Ժամանակը մեծ ուսուցիչ է և, ով է ճիշտ, ցույց կտա ապագան: Եվ ինչ էլ որ լինի մարտի մեկին կատարված դժբախտությունն ու մինչև ապրիլի 28-ը հաջորդած դեպքերը դրեցին հայրենիքին իմ հետագա ծառայության վերջնական սահմանագիծը:

Աստծոն, ըստ երևույթին, հաճելի չէր ինձ օգնելը»:

«Ռուսաստանին պետք է վերադարձնել հարգանքով»

Ռուսաստան վերադառնալու Լորիս-Մելիքովի բոլոր ջանքերն ապարդյուն անցան: Մի կողմից խորացող հիվանդությունը, մյուս կողմից Ալեքսանդր Երրորդի գոյությունը վերջնականապես համոզեցին, որ փակվել է հայրենիք վերադառնալու ճանապարհը: Բայց, այդպես էլ մինչև վերջ Միխայիլ Տարիելովիչը հույսը չկորցրեց: Նա հաստատ գիտեր մի բան, որ ի վերջո մտերիմներն իրեն կտանեն Ռուսաստան...

Իսկ առայժմ նրա սփոփանքը Մոսկվայից, Պետերբուրգից, Թիֆլիսից ստացվող թերթերն էին, որոնք նրա համար ամեն տարի դուրս էր գրում Կարապետ Եզյանը: Լորիս-Մելիքովը չթուլացող ուշադրությամբ հետևում էր Ռուսաստանում զարգացող իրադարձություններին, անչափ վշտանում, երբ մամուլից տեղեկանում էր Պոբեդոնոսցևի մատուցմամբ Ալեքսանդր Երրորդի գործադրած միջոցառումների մասին, որոնք ուղղված էին Ալեքսանդր Երկրորդի և իր բարեփոխումների դեմ:

1884թ. հունիսին Վիսբադենում Լորիս-Մելիքովը պատահաբար հանդիպեց բուժման նպատակով այնտեղ եկած պրոֆեսոր Ն.Բելոգոլովին: Եվ իրերի բերումով պրոֆեսորի ու կոմսի միջև հաստատվեց ջերմ մտերմություն, որը շարունակվեց մինչև Լորիս-Մելիքովի մահը:

Հետագայում պրոֆեսոր Բելոգոլովը հրապարակել է իր հուշերը, որոնցում մեծ տեղ է հատկացրել Լորիս-Մելիքովի կյանքի վերջին տարիների մասին: «Ես, - գրել է պրոֆեսորը, - բացի նրա բազմակողմանի ու հաճելի խելքից, բարձր էի գնահատում նաև նրա մարդկայնությունը, առաջընթացի նկատմամբ ունեցած հավատը, հարաբերությունների մեջ

նրա պարզությունն ու ազնվությունը: Չնայած նրա տիպիկ հայկական արտաքինին... Նա գերազանց խոսում էր ռուսաց լեզվով՝ գրական մշակված կնիքով: Ռուս գրականությանը հետևում էր մեծ սիրով, մինչև վերջին ժամանակ հիշում էր Պուշկինի, Լերմոնտովի, Նեկրասովի և մյուսների շատ բանաստեղծություններ, հաճախ դրանք մեջբերում զրույցների ժամանակ, սիրում էր նաև օգտագործել Սալտիկովի սրամիտ խոսքերը, որի մեծ երկրպագուն էր նա»:

Լորիս-Մելիքովը ջերմորեն սիրում էր իր կովկասյան հայրենիքը, բայց դրա հետ միասին, ինչպես հիշում է պրոֆեսորը, նրա «սրտում առաջին տեղը զբաղեցնում էր Ռուսաստանը որպես ամբողջություն և կոմսին կարելի է կոչել ռուս հայրենասեր այս խոսքի լավագույն իմաստով»:

Թվարկելով Լորիս-Մելիքովի բնավորության գծերը, պրոֆեսորն ընդգծում էր, որ կոմսը ոչնչով չտարբերվելով կրթված ռուս մարդուց, զերծ էր այդ մարդու խոշոր ազգային թերություններից: «Նա չուներ այն մանր ինքնասիրությունը, որը մեզնում հասցնում էր նրան, որ բոլորվին համախոհ մարդկանց հեշտորեն հասցնում է գժտության, նրանց դարձնում նույնիսկ ընդմիշտ ու անհաշտ թշնամի: Կոմսն ընդհակառակն, աչքի էր ընկնում ուրիշի կարծիքի նկատմամբ համբերատարությամբ, մանրախնդիր ու նեղացկոտ չէր և իրեն չհամարելով անմեղ, միշտ հանգիստ և ուշադիր լսում էր առարկություններին: Սա հավանաբար առիթ է տվել նրան մեղադրել արտակարգ ճկունության, ասիական խորմանկության մեջ, որն իմ կարծիքով, միանգամայն արդարացի չէ»:

«Ուրիշի կարծիքը հաճույքով լսելով, - շարունակում է պրոֆեսորը, - նա մնում էր հաստատուն իր հիմնական համոզմունքների մեջ և նրան անհնար էր դրանցից շեղել: Հաճախ, նույնիսկ նրա հայացքներին թշնամի վերաբերմունքին հանդուրժելը վկայում է այն խելքի լայնությունը, որը նրան դարձրեց իսկական պետական մարդ...»:

Չնայած հիվանդությանը, Լորիս-Մելիքովն, ինչպես Վիսբադենում, Նիցայում և այլ քաղաքներում բուժվելիս, չէր հրաժարվում հանդիպել Ռուսաստանից եկածներին, կատարում էր փոխայցելություններ:

Մեծ էր Լորիս-Մելիքովի համբավը, նրա ունեցած հեղինակությունը: Եվ այդ էր պատճառը, որ շատերը հատուկ գալիս էին Վիսբադեն կոմսին հանդիպելու համար: Եվրոպայի տարբեր երկրների համաբավավոր թերթերն ու հանդեսները («Lillustration», «Journal des Debats», «Journal des Geneve», «La Var Republionin», «Qil Blas», «Eclaireur», «Figaro» և այլն) իրենց համար մեծ պատիվ էին համարում հարցազրույց տպագրել Լորիս-Մելիքովի հետ: Լրագրողները նրան դիմում էին տարբեր, հաճախ նաև չարախինդ հարցերով, որոնց կոմսը պատասխանում էր արժանապատվորեն, իր խոսքը համեմում եվրոպական ու ռուսական նշանավոր գրողներից ու ռազմա-քաղաքական գործիչներից մեջբերումներ կատարելով:

Վիսբադենում Լորիս-Մելիքովին այցելեցին Հունաստանի և Դանիայի թագավորները: Դանիայի թագավորին հետաքրքրում էր Ռուսաստանի հետ հետագա հարաբերությունների զարգացման հեռանկարը: Իսկ Հունաստանի թագավորն էլ իր պարտքն էր համարել անձամբ ողջունել Կարսի հերոսին և այն պետական գործչին, որն որոշակի ավանդ ուներ Հունաստանի անկախության ամրապնդման գործում...

Լորիս-Մելիքովին այցելել էր նաև Ուելսի թագաժառանգը, հետագայում Անգլիայի թագավոր Էդուարդ 7-րդը: Այս բոլոր տիրակալներին էլ հետաքրքրում էր միևնույն հարցը. արդյո՞ք Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ կլինե՞ն փոփոխություններ և, առհասարակ, այդ քաղաքականությունն ինչպիսի զարգացում կունենա հատկապես եվրոպական ու արևելյան գործերում:

Միխայիլ Տարիելովիչն առանձնակի ջերմությամբ էր ընդունում ֆրանսիական սենատոր Ռենոյին, պրուսական հայտնի մագնատ կոմս Հենկել Ֆոն-Դոններմարկին և ուրիշների, որոնց հետ զրույցներից նա իր համար շատ օգտակար նորություններ էր ստանում:

Այդ հանդիպումների ժամանակ Լորիս-Մելիքովը հուսախաբ էր թողնում իր բարձրաստիճան հյուրերին նախ նրա համար, որ նրանք կոմսից սպասում էին դժգոհության արտահայտություններ լսել ռուսական պետության հասցեին և հետո ստանալ կարևոր տեղեկություններ, որոնք կարող էր կոմսը հայտնել հասնելով զայրացած վիճակին:

Բայց այդ ամենի փոխարեն Լորիս-Մելիքովն իրեն դրսևորում էր որպես Ռուսաստանի իսկական հայրենասեր: Իր բարձրաստիճան հյուրերին պատասխանելով, ընդգծում էր Ռուսաստանի կարևոր դերը Մերձավոր Արևելքի ու Բալկանյան ժողովուրդների ճակատագրում:

Այն թշնամական վերաբերմունքը, ասում էր Միխայիլ Տարիելովիչը Ուելսի թագաժառանգին, որ դրսևորում են Ռուսաստանի նկատմամբ Բիսմարկն ու Բիկոնսֆիլդը, հասցրեց նրան, որ հսկայական զոհերի գնով Ռուսաստանի ձեռք բերած հաղթանակները տվեցին ոչ հավասարաչափ ու փոքր արդյունքներ: Կոմսը չէր թաքցնում իր դժգոհությունն այն բանի համար, որ հաղթական պատերազմը, որին ակտիվ մասնակցություն ունենալու բախտին ինքն էլ էր արժանացել, թեև ավարտվեց դարավոր թշնամու ջախջախմամբ, բայց Բեռլինի կոնգրեսով ավելի վիրավորեցին ռուս մարդու ինքնասիրությունը...

Լորիս-Մելիքովը Բեռլինի կոնգրեսից հետո Բիսմարկին չէր վստահում: Եվ հրաժարականից հետո, երբ գտնվում էր արտասահմանում, նրան հաճախ էին հարցնում Բիսմարկի մասին:

Լորիս-Մելիքովը Բիսմարկին անվանում էր Գերմանիայի համար նոր Աթիլա, նորագույն Ներոն, որը Գերմանիային կկանգնեցնի անհաղթահարելի կրախի առջև:

Միխայիլ Տարիելովիչը զգուշացնում էր, որ եթե Գերմանիան շարունակի ընթանալ Բիսմարկի ուղիով, ապա եվրոպական ժողովուրդների մոտ վտանգավոր չափերով կխորացվի երկպառակությունը:

- Գերմանացիները,- ասում էր Լորիս-Մելիքովն իր բարձրաստիճան հյուրերին, - պետք է հաճախ կարդան հռոմեացիների պատմությունը, եթե իհարկե, չեն կորցրել պատմության օրինակով սովորելու ունակությունը:

Լորիս-Մելիքովն իր բարձրաստիճան հյուրերին հասկացնում էր, որ եվրոպական տերությունները թող չուրախանան Բեռլինի կոնգրեսում Ռուսաստանին նսեմացնելով, նրանից հաղթանակի պտուղները խլելով: Եվրոպան, ընդգծում էր նա, եթե ուզում է հանգիստ ու խաղաղ ապրել, ապա պետք է սովորի Ռուսաստանին վերաբերել հարգանքով:

Եվրոպացի նշանավոր զրուցակիցներին Լորիս-Մելիքովը զգուշացնում էր, որ եվրոպան այդպես էլ չի ազատվել իր եսասիրական մղումներից և մոռանում է Ռուսաստանին իր երախտագիտությունը հայտնել: Զարմացած եվրոպացիների հարցին Լորիս-Մելիքովը միշտ պատասխանում էր, նրանց հիշեցնելով Ա.Պուշկինի հետևյալ խոսքերը. «Ռուսաստանի լայնարձակ հարթությունները կլանեցին մոնղոլների ուժը և կասեցրին նրանց արշավանքը դեպի Եվրոպայի խորքը: Բարբարոսները չհամարձակվեցին իրենց թիկունքում թողնել նվաճված Ռուսիան ու վերադարձան Արևելք: Ձևավորվող լուսավորությունը փրկվեց բզկտված ու շնչասպառ Ռուսաստանի շնորհիվ»:

Կայսր Վիլհելմ Առաջինի երկերեսանիությունը

Երբ Լորիս-Մելիքովի առաջարկած ծրագրի իրականացման մասին Ալեքսանդր Երկրորդի մտադրության մասին լուրերը հասել էին Գերմանիա, կայսր Վիլհելմ Առաջինը (1797-1888թթ.) անչափ դժգոհել էր և մի երկարաշունչ նամակ էր ուղարկել ցարին:

Գերմանական կայսրը նկատի ունենալով իրեն հասած լուրերը, հայտնելով ազգականի նկատմամբ ունեցած սերը, իր պարտքն էր համարել զգուշացնել ու համոզել՝ Ռուսաստանին չտալ սահմանադրություն, բայց եթե նա շատ հեռու էր գնացել իր ռեֆորմներով, որը ստիպված է տալ, ապա թող տա բացառումներով, որոնք պետք է շարադրվեն հատուկ թղթով և գլխավորապես արգելվեն պալատներում բյուջեի ու միջազգային հարցերի քննարկումները, ինչպես նաև նախարարների ընտրությանը մասնակցելը:

Կայսր Վիլհելմն իր նամակի վերջում գրել էր. «Հաշվի առնելով առարկայի փափկանկատությունը, որևէ մեկին հնարավորություն չպետք է տրվի ծանոթանալ այդ առարկայի նկատմամբ իմ վրա վերցրած դերին»:

Ալեքսանդր Երկրորդը պատասխանելով կայսր Վիլհելմ Առաջինին, գրել էր. «Իմ կյանքում դա երբել չի լինի»: Բայց, չնայած Վիլհելմի զգուշացմանը, ցարը Լորիս-Մելիքովին ծանոթացրել էր գերմանական կայսրի նամակին ու իր պատասխանին:

Անցավ որոշ ժամանակ: Լորիս-Մելիքովը հրաժարական տալուց հետո մեկնեց արտասահման: 1881թ. ամռանը, երբ Լորիս-Մելիքովը գտնվում էր Էմս առողջարանային քաղաքում, այստեղ ժամանած կայսր Վիլհելմ Առաջինը ցանկություն էր հայտնել կոմսին ճաշի հրավիրել, խնդրելով նշանակված ժամից կես ժամ շուտ գալ:

Դիմավորելով Լորիս-Մելիքովին, կայսրը լացակումած ձայնով խոսեց Ալեքսանդր Երկրորդի սոսկալի մահվան մասին ու բացականչեց.

-Խեղճ, խեղճ Սաշա, ես նրան սիրում էի, ինչպես հարազատ որդու:

Այնուհետև կայսրը հետաքրքրվել էր Լորիս-Մելիքովի հրաժարականի պատճառներով ու նկատել, թե ափսոսում է, որ իր ազգականը ցանկացել է կանգնած մնալ տեղում և իր ռեֆորմներով առաջ չի շարժվել ու չի ստեղծել ժողովրդական ներկայացուցչություն:

Լորիս-Մելիքովի համար անսպասելի էր գերմանական կայսրի այս երկերեսանիությունն ու զայրացած նրան հիշեցրել է Ալեքսանդր Երկրորդին ուղարկած իր նամակի բովանդակությունը:

Կայսրը, անսպասելի այդ լուրից, տեղից վեր ցատկեց ու երկար ժամանակ լռելուց հետո, բացականչեց.

- Ինչպե՞ս, նա ձեզ տվել է այդ նամակը...

Վիլհելմ Առաջին կայսրը մինչև ճաշի ավարտն այդպես էլ չկարողացավ իրեն տիրապետել և այլևս «խեղճ Սաշայի» մասին ոչ մի խոսք չասաց:

Նորից Սալտիկով-Շչեդրինի հետ

Արտասահման հեռացած Լորիս-Մելիքովի հետ նրա նախկին ծանոթներից շատ քչերն էին կապ պահպանում, հանդիպում նրան: Այդ քչերի մեջ էր նաև գրող-երգիծաբան Սալտիկով-Շչեդրինը, որը, նույնիսկ, իմանալով, որ կոմսին լրտեսում են, չդադարեց նրան այցելելուց: Նրանց հանդիպումներն ուղեցվում էին երկարատև գրույցներով, որոնցից ստացած տպավորության մասին Սալտիկով-Շչեդրինը հայտնում էր իր ընկերներին: Կոմսն երգիծաբանին միշտ դիմավորում էր գրկաբաց ու սիրով:

1881թ. հուլիսին Վիսբադենում գտնվող Լորիս-Մելիքովին այցելած Կոշելևը Սալտիկով-Շչեդրինի ներկայությամբ ընթերցում է իր նոր գրքույկը՝ «Որտե՞ղ ենք մենք: Ո՞ւր և ինչպե՞ս գնանք» խորագրով: Հենց այդ ընթերցման ժամանակ ներս է մտնում տեղի ռուս քահանա Տաչալովը, որը, ըստ Շչեդրինի, «այդ մասին կհայտներ ում հարկն էր»:

Լորիս-Մելիքովը շատ էր կարդում, հետաքրքրվում էր գրականությամբ և հաճախ դժգոհում, որ ռուսերեն լեզվով քիչ գրքեր է ստանում: Դա էլ նկատի ունենալով, Սալտիկով-Շչեդրինը հանձնարարում է Նիցայում գտնվող «Օտեչեստվեննոյե զապիսկի» հանդեսի աշխատակից Գ.Ելիսեևին ռուսերեն լեզվով գրքեր հասցնել կոմսին, «որն առանց դրանց շատ է տխրում»:

Սալտիկով-Շչեդրինի հետ ունեցած զրույցներից մեկի ժամանակ Լո-

րիս-Մելիքովն ազնիվ խոսքով հավատացնում է, որ իր իշխանության ժամանակ գրողի վրա հսկողություն չի սահմանվել: Այս մասին 1881թ. օգոստոսի 21-ին Վիսբադենից Ն.Բելոգոլովին ուղարկած նամակում Սալտիկով -Շչեդրինը Լորիս-Մելիքովին համարելով «շատ բարի մարդ», հայտնում էր. «Հայն արտահայտվում էր կամաց-կամաց, բայց բավականաչափ ազատ: Երբեմն ինձ թվում է, որ նա ինձանից խոսք է քաշում...»:

Իհարկե, գրողը սխալվում էր կասկածանքի համար և շուտով նա զգաց այդ: Վերոհիշյալ զրույցից օրեր անց, Լորիս-Մելիքովը Սալտիկով-Շչեդրինին ծանոթացնում է ներքին գործերի նախարար Իգնատևի նամակի հետ, որտեղ կար նաև հետևյալ միտքը. «Շատ ափսոս, որ քեզ այստեղ համարում են (Պետերբուրգում - Վ.Պ.) ինչ որ լիբերալ գաղափարների ներկայացուցիչ և դա թագավորին զրկում է քո ցուցումներից օգտվելու հնարավորությունից»:

Գաղտնի հսկողության տակ գտնվող Լորիս-Մելիքովի Ռուսաստան ուղարկած նամակների մեծ մասը հասցեատերերին չի հասել և այդ պատճառով էլ դրանց մասին քիչ է հայտնի: Նույնն էր կատարվում նաև Ռուսաստանից կոմսի հասցեով ուղարկված նամակների հետ: Այս է պատճառը, որ Լորիս-Մելիքովի հարուստ նամակագրությունից քիչ բան է պահպանվել: Պահպանված նամակներից է, օրինակ, Սալտիկով-Շչեդրինի ուղարկած երկու նամակ: Դրանցից մեկում (1881թ. օգոստոսի 21-ին) Փարիզում գտնվող գրողը շնորհակալություն հայտնելով իր նկատմամբ բարի ուշադրության համար, գրում էր. «Ասեմ Ձեզ բոլորովին անկեղծորեն. ես իմ ամբողջ կյանքում խուսափել եմ շփվել բարձր կանգնած անձանց հետ և միայն մենակ Դուք իմ մեջ հաղթեցիք այդ զսպվածությունը ներշնչող զգացումը: Բոլոր դեպքերում, կրկնում եմ Ձեզ, իմ ամբողջ երախտագիտությունը Ձեր բարեհաճության համար և խնդրում եմ Ձեզ դա շարունակել նաև ապագայում, որքան որ հնարավոր է»:

Իսկ 1881թ. դեկտեմբերի 25-ին Նիցայում գտնվող Լորիս-Մելիքովին շնորհավորելով նոր տարվա առթիվ, Սալտիկով - Շչեդրինը Պետերբուրգից գրում էր, թե իրեն լուր է հասել այն մասին, որ կոմսը ցանկություն ունի գարնանը վերադառնալ Ռուսաստան և բնակություն հաստատել Կիևի նահանգում: Այս նամակում Շչեդրինը կոմսին հայտնում էր շատ կարևոր տեղեկություն: «Երբեք, - գրում էր նա, - Պետերբուրգն այսքան տխուր տեսք չի ունեցել, ինչպես ներկա ձմռանը, երբեք հասարակությունն այսպես չի ծանձրացել, չնայած «գիտակ մարդկանց» պարապմունքին ու Սառա Բեռնարի ներկայացումներին: Բացահայտ փոխադարձ թշնամանքի վիճակը, որի մեջ հարկ է ապրել, դառնում է ոչ թե ծանր, այլ ուղղակի ճնշող»:

«Գիտակ մարդիկ» ասելով, Սալտիկով-Շչեդրինը նկատի ուներ 1881թ. դեկտեմբերին ներքին գործերի նախարար Իգնատևի կողմից գումարված անհաջող նիստը, որի մտահղացումը պատկանում էր Լորիս-Մելիքովին...

ՏԱՆՄԵԿԵՐՈՐԴ ՄԱՍ

Չիրականացած մտահղացումներ

Չնայած հիվանդությանը, Լորիս-Մելիքովն անդադար մտածում էր Վլադիկավկազում իր հիմնած արհեստագործական ուսումնարանի հետագա գոյության մասին: Ուսումնարանը գործում էր կոմսի անձնական միջոցներով, իսկ տարեկան ծախսն արդեն հասել էր 18 հազար ռուբլու: Նա անհանգստանում էր, որ իր մահից հետո ուսումնարանը կզրկվի աջակցությունից և կդադարի գործել: Ուստի Միխայիլ Տարիելովիչը ձգտում էր հարուստ ծանոթներից որևէ մեկին շահագրգռել և կտակով նրա վրա դնել ուսումնարանի հետագա խնամքը:

Լորիս-Մելիքովը փորձեց նաև Կուբանում գտնվող իր կալվածքում ստեղծել ապակու գործարան, նկատի ունենալով, որ Կովկասում կա ապակյա ամանեղենի մեծ պահանջարկ: Այդ նպատակով նա ծանոթացավ Շվեյցարիայում գտնվող ապակու գործարանատերերի հետ և ակտիվ գրագրություն սկսեց իր կալվածքի կառավարիչի հետ: Մի քանի շաբաթ տևեց այդ ծրագրով հրապուրվելը և, ի վերջո, համոզվելով, որ հեռակա կարգով անհնար է ստեղծել կարգին ձեռնարկություն, իր խնայողություններն էլ չեն բավականացնում գործը կանոնավոր հունի մեջ դնելու համար, հրաժարվեց իր մտադրությունից:

Մի առ ժամանակ անց, Միխայիլ Տարիելովիչը մտադրվեց իր կալվածքում աճեցնել պտղատու ծառեր, այդ նպատակով նամակագրություն հաստատեց Բորդոյի այգեգործների հետ, խնդրելով գտնել Կովկասի պայմաններին համապատասխան ծառատեսակներ: Նա ձեռք բերած տեղեկություններն ուղարկեց իր կալվածքի կառավարիչին: Բայց նա ի վերջո, այս գործից էլ հրաժարվեց, համոզվելով, որ հեռակա կարգով ոչ մի լուրջ գործ հնարավոր չէ ձեռնարկել: Կոմսին մնում էր ծիծաղել իր վրա և ցավով ասել. «Արդեն բազեյի թևերը կտրված են, արդեն նրա ճանապարհը փակ է»:

Կոմսին շատ վշտացրեց ոմն Օսման բեյ, որը թուրքական բանակի նախկին սպա էր, փախել էր Ռուսաստան և դարձել Կովկասյան բանակի շտաբի թարգմանիչ: Այս ավանտյուրիստ թուրքն Իտալիայում ֆրանսերեն լեզվով հրատարակել էր մի գիրք, որտեղ մեծամտորեն իրեն էր վերագրել Կարսի գրավումը և նսեմացրել Լորիս-Մելիքովի դերը: Այս ավանտյուրիստն այնքան լկտի էր, որ գրքի տպագրությունից հետո եկել էր Վեվեյ քաղաք, որտեղ այդ ժամանակ բուժվում էր կոմսը և ձգտում էր, որ կոմսը իրեն ընդունի կամ էլ դրամ տա: Չհասնելով իր նպատակին, Օսման բեյը ձեռնունայն հեռացավ ու կոմսին ուղարկեց հայհոյանքներով

լեցուն նամակ: Պրոֆեսոր Ն.Բելոգոլովին պատմելով այս մասին, Լորիս-Մելիքովը տխուր կատակով ասել է.

-Դե, աշխարհում կա՞ ինձանից ավելի դժբախտ մարդ և որին ավելի շատ հետապնդի մարդկային անարդարությունը: Լինելով կարիերայի ու պատիվների բարձունքին, պետությունից ոչ մի բանով չեմ օգտվել և առաջվա նման մնացել եմ, ինչպես գիտեք, շատ սահմանափակ միջոցներով: Ռուսական թերթերն էլ վերջերս տեղեկություն տարածեցին, թե ես արտասահմանում ընդարձակ կալվածքներ եմ գնում: Ես ունեմ լավ գրավարի համբավ, քանի որ տարել եմ մի քանի հաղթանակ, վարել եմ մի ամբողջ ռազմական կամպանիա և գրավել եմ Կարսը, որին անառիկ էին համարում: Իսկ ահա, Օսման բեյը վիճարկում է իմ զինվորական ծառայությունները և հավատացնում է թե Կարսը գրավել եմ ոչ թե ես, այլ նա՝ Օսման բեյը: Վերջապես ես դժգոհում եմ, որ հիվանդ եմ ու տառապում եմ, իսկ դուք, իմ Բրուտ, դրանում չեք ուզում ինձ հավատալ և ինձ անվանում եք մելամաղձոտ:

Հայրենիքից հեռու, հայրենիքի հետ

Լորիս-Մելիքովը չթուլացող ուշադրությամբ հետաքրքրվում էր Ռուսաստանում տիրող իրավիճակով, իրեն այցելած ռուս գործիչներին հարց ու փորձ անում մամուլում տպագրված հաղորդումների վերաբերյալ:

Լորիս-Մելիքովին հաճախակի այցելում էր Ա.Պուշկինի դուստրը՝ Նատալիան իր ամուսին կոմս Մերենբերգի հետ միասին: Պուշկինի դուստրն անչափ հուզվում էր, երբ Միխայիլ Տարիելովիչն իր խոսքը համեմում էր Պուշկինից մեջբերումներ կատարելով և իր հիացմունքը չթաքցնելով ասում էր, որ կոմսն իրեն հանդիպած եզակի զինվորական ու պետական գործիչն է, որն այդքան լավ գիտե Պուշկինի ստեղծագործությունները:

Իր հերթին Միխայիլ Տարիելովիչն ասում էր, որ իրեն մեծ պատիվ է վիճակվել 1880թ. լինել Մոսկվայում Պուշկինի արձանի տեղադրման ու հանդիսավոր բացման արարողության կազմակերպիչներից մեկը...

1887թ. հունիս-հուլիսին Լորիս Մելիքովին այցելեց Նուբար փաշան: Պատմելով այս մասին, Ն.Բելոգոլովն իր հուշերում գրել է. «Այդ ժամանակ կոմսին բավական հաճախ էր այցելում հայտնի Նուբար փաշան՝ եգիպտոսի ամենազոր էքս-նախարարը: Նա նոր էր հանվել պաշտոնից, որը զբաղեցրել էր շատ երկար ու մեկնել էր Եվրոպա ճամփորդության, ապրել էր կնոջ և պետական մեկ այլ նախարար Տիգրան փաշայի հետ ամուսնացած աղջկա ու փոքրիկ թոռնիկի հետ Վեվեյում երկու կամ երեք շաբաթ:

Նուբարը մեծ հարգանք էր դրսևորում կոմսի նկատմամբ և հաճույքով նրան պատմում էր եգիպտոսի պետական գործերի գաղտնիքների ու

բանսարկությունների մասին, որոնք խաղում էին անգլիացիները երկիրն ամբողջովին իրենց ձեռքը գցելու համար: Կոմսն էլ Նուբարին գնահատում էր, որպես խելացի ու հետաքրքիր զրուցակից»:

Դժբախտաբար, ինձ դեռևս չի հաջողվել պարզել հայ ժողովրդի այդ երկու մեծ զավակների զրույցների թեման, բովանդակությունը: Միայն կարելի է կռահել, որ նրանց զրույցներում անպայման կարևոր տեղ են զբաղեցրել հայկական հարցը, արևմտահայության ճակատագիրը:

Լորիս-Մելիքովին տարվա ընթացքում մի քանի անգամ այցելում էր նրա մտերիմ ընկերը՝ Կարապետ Եզյանը: Մնացած ժամանակում նրանք իրենց կապը պահպանում էին նամակագրությամբ: Հասկանալի պատճառներով Լորիս- Մելիքովն իր նամակները թելադրում էր աղջկան՝ Ելիզավետային:

Կարապետ Եզյանը Լորիս-Մելիքովի մոտ նախավերջին անգամ եղավ 1887թ. աշնանը: Ինչպես միշտ, կոմսն իր բարեկամին ցույց տվեց Թիֆլիսից, Մոսկվայից ու Պետերբուրգից ստացված հայերեն ու ռուսերեն թերթերի ու ամսագրերի վրա կատարած նշումները և խնդրեց նրանց շուրջ իրեն հետաքրքրող հարցերը պարզաբանել:

- Միթե՞ հնարավոր չեղավ հանդարտեցնել Դելյանովին: Ինչո՞ւ է նա այդքան անողոք իր հայրենիքի ու հայրենակիցների նկատմամբ:

Տալով այդ հարցը, Լորիս-Մելիքովը նկատի ուներ ժողովրդական լուսավորության նախարար Դելյանովի գործողություններն ուղղված հայկական դպրոցների դեմ: Կարապետ Եզյանը կոմսին պատմեց, որ առիթ է ունեցել այդ մասին մի քանի անգամ խոսել Դելյանովի հետ, բայց վերջինս մնացել է անդրդվելի...

Լորիս-Մելիքովն անհանգստություն արտահայտեց, որ Դելյանովի չմտածված գործողությունները կարող են հայոց մոտ խորացնել անցանկալի երևույթները, որոնք վերջին հաշվով կուղղվեն Ռուսաստանի պետության դեմ:

- Դելյանովն իր անմիտ գործողություններով կարող է հայոց շատ վնաս պատճառել, նրանց մղել Ռուսաստանի դեմ: Հարկավոր է այդ կանխելու խելացի միջոցներ գտնել:

- Իհարկե, Միխայիլ Տարիելովիչ, ձեր ներկայությունը Պետերբուրգում շատ բան կփոխեր, բայց առանց ձեզ, մեր համար շատ դժվար է:

- Մեկ անգամ էլ հանդիպեք Դելյանովին և նաև իմ անունից խստորեն զգուշացրեք, որ այդպես շարունակել չի կարելի, որ իր մտադրությունները չի հաջողվի կոծկել ռուսական պետության շահերով: Ասացեք նրան իմ անունից, որ կանցնենք կգնանք բոլորս այս աշխարհից: Ապագայում նույն Դելյանովին կհիշեն արհամարանքով, իսկ հայերն էլ՝ անեծքով:

Այնուհետև Լորիս-Մելիքովը ցավով հիշեց, որ այդպես էլ իրեն չհաջողվեց հայերի համար բարձրագույն դպրոց հիմնել:

- Մեր դպրոցների սարսափելի վիճակը հենց նրանից է, որ մենք չունենք բարձրագույն դպրոցներ: Եթե ժամանակին մեզ հաջողվեր Հայաստանում մի բարձրագույն դպրոց ստեղծել, ապա լուծված կլիներ ուսուցչության խնդիրը...

Լորիս-Մելիքովը հիշեց, որ այդ խնդիրը ժողովրդական լուսավորության նախկին նախարար Սաբուրովի հետ հանգամանորեն քննարկել էր, բայց ափսոս, որ գործը ձախողվել էր հենց սկզբից:

-Անդրեյ Ալեքսանդրովիչը խելացի և շրջահայաց մարդ է, եթե նա մնար իր պաշտոնում, համոզված եմ, որ Դելյանովը հնարավորություն չէր ունենա այդքան հիմարություններ անել:

Միխայիլ Տարիելովիչը հետաքրքրվեց նաև Սանասարյան դպրոցի վիճակով: Կ.Եզյանը հանգամանորեն տեղեկացրեց դպրոցի գործերի մասին, նշեց, որ արդեն դպրոցը ձեռք է բերել հեղինակություն:

Գոհունակություն հայտնելով այդ տեղեկության համար, Միխայիլ Տարիելովիչն ասաց.

- Չպետք է երբեք մոռանալ Սանասարյան վարժարանի դերը: Այստեղ հայ երիտասարդներն ուսում առնելով, անպայման կմնան իրենց երկրում ոչ միայն ծնողներին մխիթարելու, այլև երկրին տեր դառնալու համար:

Այնուհետև կոմսը հիշեցրեց, որ Ռուսաստանի հայկական դպրոցներն ավարտած տաճկահայ պատանիները սովորաբար ավարտելուց հետո, դժվարությամբ են վերադառնում հայրենիք: Այդպես էին վարվել, օրինակ, Լազարյան ճեմարանն ավարտած տաճկահպատակ աշակերտները: Այս իրողությունն էլ հաշվի առնելով նա Կ.Եզյանին խորհուրդ տվեց աչքաթող չանել և միշտ պահել ուշադրության կենտրոնում Սանասարյան վարժարանի գործերը:

Վերջին օրերին, երբ Կ.Եզյանը պատրաստվում էր մեկնել Պետերբուրգ, զրույցների ժամանակ Լորիս-Մելիքովը հաճախ էր անդրադառնում Ռուսաստանի նկատմամբ հայերի վերաբերմունքին: Նա գտնում էր, որ Դելյանովի անմիտ գործողությունները կարող են հայերին դուրս բերել հակառուսական տրամադրությունների հուն և դա Պոբեդոնոսցևի, Դելյանովի և նրանց բազմաթիվ կողմնակիցների համար հարմար առիթ կլինի հարձակվելու հայոց վրա, նրանց վերագրել Ռուսաստանից անջատվելու մեղքը:

-Դա չի կարելի թույլ տալ, - ընդգծում էր Լորիս-Մելիքովը, - հարկավոր է ռուսական հասարակական կարծիքի մոտ վերականգնել հայոց վարկը:

Այս զրույցի ժամանակ էլ Միխայիլ Տարիելովիչը պատմեց, որ 1881թ. հունվարին իր հանձնարարությամբ ցարական արխիվից իրեն են ներկայացրել Պյոտր Մեծի ժամանակներին վերաբերող շատ փաստաթղթեր: Նրան հետաքրքրել է Պյոտրի ձեռնարկած ռեֆորմների հետ կապված հարցերը: Դրանց հետ նաև կոմսի ուշադրությունն էր գրավել հայերին առնչվող շատ կարևոր փաստաթղթեր:

-Դու, սիրելի Գերասիմ Արտեմովիչ, Կարո ջան, հետաքրքրվում ես պատմությամբ: Բացի քեզանից ուրիշ ոչ ոք չի կարող թագավորական արխիվում ծանոթանալ Պյոտր Մեծի փաստաթղթերին և այնտեղ եղած նյութերով բացահայտել հայերի հետ Պյոտրի ունեցած առնչությունները: Դա կլինի շատ օգտակար գործ հայերի ու Հայաստանի համար: Դա կլինի նաև պատասխան Դելյանովի գործած հիմարությունների հետևանքով առաջացած դժգոհությունների նկատմամբ հայերի վերաբերյալ ստեղծված թյուր պատկերացումներին:

Կ.Եզյանը հայտնեց, որ ինքը տեղյակ է այդ փաստաթղթերի մասին և պատրաստակամություն հայտնեց զբաղվել դրանով:

-Պետք է գիրք գրել, լավ գիրք և ճշմարտացիորեն բացահայտել ամբողջ եղելությունը: Հասցրու, որ կարդամ այդ գիրքը, քանի կենդանի եմ:

Կարապետ Եզյանը խոստացավ Պետերբուրգ վերադառնալուց հետո, անմիջապես սկսել ուսումնասիրել Պյոտր Մեծի արխիվը և կազմել այնտեղ եղած նյութերի ժողովածու:

Կ.Եզյանն իր խոստումը կատարեց, բայց ուշացած: Նրա համար անսպասելի կերպով պարզվեց, որ եղած փաստաթղթերն այնքան շատ են, որ դրա համար ահագին ժամանակ է հարկավոր: Միայն 1899թ. Կ.Եզյանին հաջողվեց տպագրել «Պյոտր Մեծի առնչությունները հայ ժողովրդի հետ» գիրքը:

Լորիս-Մելիքովը և Ա.Ֆ.Կոնին

Ալեքսանդր Ֆեոդորովիչ Կոնին Ռուսաստանում հայտնի դարձավ 1878թ. Վերա Զասուլիչին արդարացնելու վճիռ կայացնելով: Հետագայում Ռուսաստանի արդարադատության ասպարեզում զբաղեցրել է զանազան պաշտոններ ու շարունակել է ակտիվ հասարակական ու գրական գործունեություն: Նա մտերիմ է եղել շատ նշանավոր գրողների, արվեստագետների, իրավաբանների, պետական ու զինվորական գործիչների հետ, նրանցից շատերի հետ ունեցել է նամակագրություն, նրանց մասին գրել հուշեր:

Այդ գործիչների թվումն էր նաև Լորիս-Մելիքովը: Չնայած նրանք ծանոթացել էին Միխայիլ Տարիելովիչի հրաժարականից հետո և հիմնականում իրար հանդիպել էին արտասահմանում, բայց նրանց միջև հաստատվել էր ջերմ բարեկամություն ու մտերմություն:

Ա.Ֆ.Կոնին Լորիս-Մելիքովի մասին իր հուշերը տպագրել է 1914թ. հունվարին: Նա ընդգծել է, որ 19-րդ դարի 70-ական թվականների վերջին և 80-ական թվականների սկզբին այդ նշանավոր մարդու եռանդուն գործունեությանը ծանոթ անձինք հնարավոր չեն համարել ռուսական հասարակությանը պատմել նրա մասին և այդ պատճառով «իննսունական թվա-

կանների սկզբից հասարակական կյանք մտած սերնդի մարդկանց Լորիս-Մելիքովի անունը ոչինչ, համարյա ոչինչ չի ասում և նրան հիշելն երբեմն հարուցում է անտարբեր հայացք: Իսկ, ի միջիայլոց, վերջին տասնամյակներում ռուսական կյանքում խոշոր ու ազդեցիկ դեր խաղացած մարդկանց մեջ պայծառ ու միաժամանակ ողբերգական տեղ է զբաղեցնում կոմս Միխայիլ Տարիելովիչ Լորիս-Մելիքովը: Հմուտ զորահրամանատարը և Կովկասում ու Թերեքի մարզում նրբանկատ տեղական ադմինիստրատորը ճակատագրի անսպասելի բերումով առաջ է քաշվել Ռուսաստանում ամենից աչքի ընկնող պաշտոնում և օժտված արտակարգ իշխանությամբ, իր վրա է բևեռել ամբողջ աշխարհի ուշադրությունը և սլանալով, ինչպես ասում, մահացավ բազմաթիվ թշնամիների չարամիտ ֆշշոցների և մի բուռ բարեկամների սրտալի վշտի ուղեկցությամբ»:

Այժմ էլ, շարունակում է Ա.Ֆ.Կոնին, Լորիս-Մելիքովի մահից 30 տարուց ավելի անց, «մեր վերջին հանդիպումից հետո, ես վառ կերպով հիշում եմ նրա խելացի ու բարի, կենդանի աչքերի պայծառ հայացքը, թավ բեղերի տակ մեղմ, կարծես ամոթխած ժպիտը, ասացվածքներով հագեցած աշխույժ ժեստով ու ջերմ խոսքը պայծառացած բարեհոգի հումորի առկայծումներով»:

Ա.Ֆ.Կոնին Լորիս-Մելիքովի հետ ծանոթացել է 1882թ., իսկ հետո նրան հանդիպել Վիսբադենում 1884թ.: Ալեքսանդր Ֆեոդորովիչին գրած նամակներում կոմսը դժգոհում էր ծանծրույթից, պարապ մնալուց, թեև նրան սկսել էին շատերն այցելել: Ի դեմս Ա.Կոնիի, Միխայիլ Տարիելովիչը գտել էր զգայուն ու ուշադիր ունկնդրի ու զրուցակցի: Նրա առջև կարող էր բացել իր ցավացող հոգին ու խոցված սիրտը, վստահ լինելով Ալեքսանդր Ֆեոդորովիչի կարեկցանքի ու իրեն հասկանալու ունակության մեջ: Իսկ Ա.Ֆ.Կոնին այն քիչ մարդկանց թվումն էր, որոնց Լորիս-Մելիքովը հավատում էր ու վստահությամբ էր վերաբերում:

«Ամեն երեկո, - հիշում է Ա.Ֆ.Կոնին, - նա անհամբեր ինձ էր սպասում և մենք 2-3 ժամ աշխույժ զրուցում էինք... Դաստիարակությամբ ու իր շքեղ արտաքինով Լորիսը շատ նրբանկատ էր հարաբերությունների մեջ, կարողանում էր ցույց տալ շատ սիրալիր, բայց չձանձրացնող հյուրընկալում: ... Եթե ես անընդմեջ երկու երեկո չէի լինում նրա մոտ, ապա երրորդ օրը ստացվում էր Լորիսի տագնապալի նամակը, որով նա հետաքրքրվում էր իմ առողջությամբ: Լորիս-Մելիքովը հաճախ էր գալիս իմ մոտ, մեծ սենսացիա առաջացնելով գերմանացիների մեջ, որոնց մեծամասնության պատկերացմամբ Լորիս-Մելիքովն եղել էր «առաջին նախարարը»...»:

Լորիս-Մելիքովի հետ տևական զրույցների արդյունքով Ա.Ֆ.Կոնին դատելով նրա խոստովանություններով, նշում էր, որ Միխայիլ Տարիելովիչը Ռուսաստանը գիտեր ռուս գինվորի միջոցով, որի հետ այնքան շատ գործ էր ունեցել: Գյուղացիության և միջին խավի մասին նա գաղափար էր կազ-

մել կովկասցի բնիկների օրինակով կամ էլ տեսականորեն: Վերջապես, Լորիս-Մելիքովի անձնական գնահատմամբ իր մյուս թերությունն եղել է մարդկանց ճանաչելու կարողությունը: Լորիս-Մելիքովն իր հրաժարականից հետո ափսոսանքով էր հիշում, որ առանձին գործիչների լավ չի ճանաչել ու վստահել է նրանց: Նա, օրինակ, քաղաքային դումայի իրավասուներից մեկին համարել էր օրինավոր մարդ և աջակցել նրան: Բայց կոմսի համար անսպասելի էր եղել, երբ այդ պարոնը, որը միշտ կոմսին հավատացրել էր իր նվիրվածությունը, գիտակցաբար խուսափել էր մասնակցել դումայի այն նիստին, որտեղ Լորիս-Մելիքովը հրաժարականից հետո պետք է ընտրվեր Պետերբուրգի պատվավոր քաղաքացի:

Բարձր գնահատելով Լորիս-Մելիքովի մարդկային հատկությունները Ա.Կոնին գրել է. «Նրանից բխում էր զգայուն ու նուրբ սրտի ջերմությունը, նա ուներ հուզիչ ու պարզ հոգի, իսկ նրա վառ ու յուրօրինակ խելքն արտահայտվում էր դիպուկ բնորոշումներով և հաճելի ու նուրբ հումորով: Նույնիսկ նրա սովորական խոսքը գրավիչ էր՝ տոգորված ներքին կրակով, համեմված հետևյալ արտահայտություններով՝ «աղավնյակս», «հոգյակս», «հարազատս», «ահա, թե ինչ պիտոլետ է նա», «վերջ բազարին» և այլն: Ես ոչ մի անգամ չեմ տեսել, որ Լորիս Մելիքովն ինչ որ բանի մասին անտարբեր կամ ուղղակի հենց այնպես ասելու նպատակով խոսքեր արտասաներ: Վերջին դեպքում նա գերադասում էր լռել, թեթև ժպտալ, միաժամանակ նրա խելացի ու «վառ» աչքերը նայում էին հազիվ տեսանելի ծաղրանքով: Նա կարողանում էր հիանալի լսել՝ ուշադրությամբ ու չընդհատելով... Այս առումով նա ամբողջապես եվրոպական ոգով դաստիարակություն ունեցող մարդ էր»:

Ա.Ֆ.Կոնին հայտնում է նաև, որ իրեն հաջողվել է գրի առնել Լորիս-Մելիքովի պատմածները: Ծանոթացնելով իր անցած ճանապարհին, Լորիս-Մելիքովը պատմել է. «Կարսից հետո կանչում են «ժանտախտը հանդարտեցնելու»: Ես Պովոլժեն ընդհանրապես չգիտեի: Ոչ: Մեկնիր: Հետո հանկարծ՝ Խարկովում սատրապ: Արա ինչ ուզում ես՝ դատավորին գնդակահարի, նահանգապետին հեռացրու, գիմնազիայի տնօրենին կախիր: Հազիվ հասցրել էի շուրջս նայել, խորհել, սովորել, հանկարծ՝ գնա ու կառավարիր ամբողջ պետությունը: Ես լիազորություն ունեի անձնական հայեցողությամբ բարձրագույն հրամաններ տալ: Ոչ մի ժամանակավոր կառավարիչ, ո՛չ Մենշիկովը, ո՛չ Բիրոնը, ո՛չ Արակչեևը երբեք չեն ունեցել այդքան ընդգրկուն իշխանություն: Եվ հետո այդ խենթ Մլոդեցկին դիմահար կրակեց վրաս: Դա ավելի ամրապնդեց իմ դրությունը: Իսկ Պետերբուրգում մարդկանց չգիտեի: Չէ՞ որ ես ծայրամասից եկած էի: Սկսեցի դիտել, լսել: Ամենից առաջ տեսա խոր անբավականություն և դրա պատճառը՝ բոլորի կողմից ճանաչված Տոլստոյին: Նրանից էլ հարկ եղավ սկսել»:

Այնուհետև Լորիս-Մելիքովը պատմում է, որ հինգ շաբաթ շարունակա-

բար փորձել է լուծել Տոլստոյի հարցը, բայց չի հաջողվել: Վերջապես որոշում է, եթե ցարը չհամաձայնվի իր առաջարկությանն, ապա ինքը կտա հրաժարական: Ցարը համոզվելով Լորիս-Մելիքովի փաստարկների մեջ և, ինչպես կոմսն է պատմում, հարցնում է.

- Ո՞վ է քո թեկնածուն:

- Ոչ ոքի չգիտեմ, - պատասխանում է Լորիս-Մելիքովը:

- Ես քեզ երաշխավորում եմ երկուսին՝ Դելյանովին ու Սաբուրովին:

- Առաջինին, - պատասխանեց Լորիս-Մելիքովը, - չի կարելի: Ես հայ եմ, եթե նա նշանակվի, կսկսեն խոսել, թե մեզանում հայկական կառավարություն է, որ ես հավաքում եմ յուրայիններին:

-Ես, - ասաց ցարը, - գիտեի, որ դու այդ կասես ինձ: Ուրեմն՝ Սաբուրո՞վը:

-Ես նրան չեմ ճանաչում, - պատասխանեց Լորիս-Մելիքովը:

«Մյուս օրը, - ինչպես պատմում է Լորիս-Մելիքովը, - Տոլստոյը Սաբուրովին ճանաչելով որպես Դերպտի հոգաբարձու, նույնպես նրան մատնացույց արեց: Այդպես էլ նա նշանակվեց: Բայց նրան երկար ժամանակով չհաջողվեց մնալ նախարարի պաշտոնում, որպեսզի ուղղեր Տոլստոյի արածները, չնայած իր բարի ցանկություններին: Այստեղ էլ վրա հասավ համալսարանում նրա նկատմամբ կոշտ ցուցադրումը: Իր հրաժարականի մասին լուրը նա ուրախությամբ ընդունեց...»:

«Երբ, - այնուհետև պատմում է Միխայիլ Տարիելովիչը, - դարձա դիկտատոր, քաղաքագլուխ Զուրովը (Պետերբուրգի - Վ.Պ.) ինձ ներկայացրեց արտաքսման համար նախատեսված 3000 մարդկանցից 250-ի ցուցակը: Այդ ցուցակն արդեն հաստատել էր Գուրկոն: Ներեցեք, ասում եմ՝ տվեք նայեն, ստուգեն: Չէ՞ որ նրանք ընտանիք ունեն, չի կարելի այդպես միանգամից ստեղծել դժգոհողների զանգված: Զուրովը ցուցակում կատարել էր այսպիսի նշումներ՝ «Վտանգավոր մարդ է» և ուրիշ ոչինչ, իսկ 3-րդ բաժանմունքի պետ Շմիտդը դրա կողքին գրել էր. «Լիովին բարեխիղճ հպատակ է» և ընդհակառակը»:

Ստեղծված հանձնաժողովի միջոցով Լորիս-Մելիքովը հասնում է նրան, որ հարյուրավոր մարդիկ փրկվեցին արտաքսումից:

Ա.Ֆ.Կոնիի հետ զրույցների ժամանակ Լորիս-Մելիքովն անդրադարձել էր նաև իր թերություններին: Դրանք համարելով «հազարավոր», Միխայիլ Տարիելովիչը նշել է նաև իր արժանիքները: «Ես, - ընդգծել է նա, - բացահայտ ասում եմ, երբ չգիտեմ կամ չեմ հասկանում և խնդրում եմ ինձ սովորեցնել... ես մեկ այլ արժանիք էլ ունեի՝ ես ոչնչով կապված չէի պետերբուրգյան բյուրոկրատիային, իմ ձեռքերն ազատ էին և ոչ մի բան ինձ անցյալում չէր կապում»:

Լորիս-Մելիքովը հիշում է նաև «Մոսկովսկիյե վեդեմոստի» թերթի խմբագիր Կատկովին և պատմում, թե ինչպես էր նա Մոսկվայի կայարանում ամեն անգամ իրեն դիմավորում, դրսևորելով համակ ուշադրություն ու

հարգանք: «Իսկ իմ անկումից չորս օր անց, - շարունակում է Միխայիլ Տարիելովիչը, - նա ինձ անվանեց ռուսական Միտհադ փաշա: Ահա, նա այսպիսի պիստոլետ է: Խորհելով իմ ճակատագրի մասին, ես չեմ կարող չընդունել, որ, այնուամենայնիվ, իմ վերջնական գործունեությամբ ես անհաջողակ եմ, որովհետև իմ ձեռքից խլվեց այն, ինչ , իմ կարծիքով, կարող էր Ռուսաստանի համար բարիք լինել»:

Միխայիլ Տարիելովիչին Ռուսաստանից շարունակաբար հասնող լուրերը հուսադրող չէին: Տիրապետող հասարակական շրջանակներում Ա.Կոնիի վկայությամբ գերիշխում էր Կատկովի և նրա հետևորդների կողմից արմատավորված այն տեսակետը, ըստ որի, Ալեքսանդր Երկրորդի բարեփոխումների շարունակությանն ուղղված Լորիս-Մելիքովի գործունեությունը գնահատվում էր որպես Ռուսաստանի դեմ հանցագործություն: Այդ լուրերն անչափ ծանր էին ազդում Միխայիլ Տարիելովիչի, առանց այն էլ, քայքայված առողջության վրա:

«Ես չեր դեղագործն եմ»

Լորիս-Մելիքովը տանել չէր կարող համոզմունք չունեցող մարդկանց: Այս առումով բնորոշ է նրա պատմությունը գեներալ Սկոբելևի մասին: 1881թ. ամռանը, երբ Միխայիլ Տարիելովիչը գտնվում էր էմս առողջարանում, նրա հետ հանդիպելու ցանկություն է հայտնում գեներալ Սկոբելևը:

-Միշա, - հարցնում է Լորիս-Մելիքովը, - քեզ հետ ի՞նչ է պատահել:

Սկոբոլևը պատմում է, որ իրեն հանել են կորպուսի հրամանատարությունից և հիշեցնում, երբ լեհերն Ալեքսանդր Երկրորդին խնդրում են գեներալներից մեկին գործուղել իրենց մոտ, ցարը պատասխանում է. «Պարոններ, ես դեղագործ եմ և բաց եմ թողնում միայն այն դեղամիջոցը, որը դուրս կգրի բժիշկը: Ցարը խորհուրդ է տալիս դիմել «բժիշկ» նահանգապետին:

-Նույնը, - շարունակեց Սկոբելևը, - հիմա ձեզ եմ ասում Միխայիլ Տարիելովիչ, այլևս չեմ կարող այդպես շարունակել և ես ձեր դեղագործն եմ: Ինչ հրամայեք, կկատարեմ անվերապահորեն և կգնամ ամեն ինչի: Ես կորպուսը չեմ հանձնի: Ես ձեր դեղագործն եմ, հրամայեք, պատրաստ եմ:

«Ես, - պատմում է Լորիս-Մելիքովը, - Սկոբելևին պատասխանեցի, որ հիմարություն է անում, այդ ամենն անտեղի է, որ նա ծառայում է Ռուսաստանին և ոչ թե որևէ անձի, որ ինքը պետք է ազնվաբար և ուղղամիտ աշխատի և որ նրա ունակություններն ու ազդեցությունը դեռ հարկավոր կլինեն կանոնավոր ծառայության համար: Նրան համոզեցի, որ իզուր է ինձ հետ հույս կապում, իսկ նա բորբոքվեց, լաց եղավ»:

- Դե, ես, - ավարտելով իր պատմությունն, ասաց Լորիս-Մելիքովը, - վստահ չեմ, որ ինչ որ այլ տպավորության ազդեցությամբ մեկ-երկու ամիս անց, իրեն դեղագործ առաջարկեր իմ դեմ: Դա ճակատագրական

կլիներ Ռուսաստանի համար, երբ խելացի, խորամանկ ու մինչև անմտության հասնող համարձակ մարդը բոլորովին զուրկ է համոզմունքներից:

Արտասահմանից վերադառնալուց հետո, Սկոբելևին առաջարկեցին մտնել «Սրբազան դրուժինայի» մեջ: Մարտական գեներալը մերժեց, պատասխանելով. «Երդում է տվել չմտնել ոչ մի գաղտնի ընկերության մեջ և մտադիր չէ երդումը խախտել»:

«...Չնայած մեր ժամանակավոր անհաջողություններին»

Լորիս-Մելիքովն առանձնակի վերաբերմունք ուներ Ռուսաստանի միասնության նկատմամբ և դրա ապահովումը համարում էր պետական իշխանության առաջնահերթ խնդիրը:Հենց դա էլ նկատի ունենալով, նա Ալեքսանդր Երրորդին զգուշացրել էր. «Մոսկվայի դրոշի տակ դուք չեք հավաքի ամբողջ Ռուսաստանը, միշտ կլինեն նեղացածներ: Ծածանեք կայսրության դրոշը և բոլորի համար կգտնվի հավասար տեղ»:

Միխայիլ Տարիելովիչը ցավով էր ընդունում հրեաների, գնչուների ջարդերի մասին մամուլի հաղորդումները: Այդ ջարդերը նա համարում էր ապագա անկարգությունների ու վայրենի խռովությունների նախանշան: «Սակայն, - ասում էր Լորիս-Մելիքովը, - առավել վտանգավոր է Ռուսաստանի քայքայումն առանձին մասերի: Նախկին միապետները դա հասկանում էին և խնայում էին ծայրամասերին:Այժմյան մոսկովյան ուղղությունն ամեն ինչ ճնշում է ու համահարթեցնում և դրանով միայն վնասում: Ես անձամբ սիրում եմ Ռուսաստանն ամբողջությամբ, նրա ամբողջ մեծությամբ, այնպիսին, ինչպիսին ստեղծել է Պյոտրը: Բայց նա չէր ծաղրում առանձին ազգությունների, նրանց չէր պարտադրում ուղղափառություն: Ռուսաստանում նրա մասերի կապը դեռ շատ թույլ է... Հատկապես ինձ համար ափսոս է Կովկասը, եթե նա առանձնանա»:

-Արևելքում, - ամփոփելով իր խոսքը, ասել է Լորիս Մելիքովը, - Ռուսաստանի հմայքը շատ մեծ է: Ես ինքս արևելյան մարդ եմ և գիտեմ, որ ուժի, մեծահոգության, առատաձեռնության հասկացությունները միաձուլվում են Ռուսաստանի մասին պատկերացումներին, չնայած մեր ժամանակավոր անհաջողություններին:

«Խղճում եմ հինգ երեխաներիս ու կնոջս...»

Որքան խորանում էր Լորիս-Մելիքովի հիվանդությունը, այնքան նա տագնապով էր լցվում իր ընտանիքի ապագա նյութական ապահովության համար: Ահա, թե ինչ է այդ մասին գրել Միխայիլ Տարիելովիչը. «Զգում եմ,

որ իմ հոգնած ոսկորներն արդեն հրաժարական են խնդրում: Հասկանալի է, որ մեկնումս և անվերադարձ արձակուրդը չի կարող ինձ համար լինել սարսափելի կյանքում շատ բան տեսնելուց ու անցնելուց հետո: Բայց ցավալի է թողնել ընտանիքը: Հիշո՞ւմ եք բանաստեղծությունը.

«Ուժ չկա, հոգնել եմ վշտի հետ կռվելով,
Իսկ աշխարհին նայելով, ցավալի է նրան հրաժեշտ տալ»:

Խղճում եմ հինգ երեխաներիս ու կնոջս, որոնց ունեցվածքային դրությունն առ այժմ գտնվում է ոչ ծաղկուն վիճակում և ծայրահեղ դեպքում հարկավոր է հինգ տարի ժամանակ, որպեսզի այդ գործը, ինչպես հարկն է կարգավորվի: Իսկ, ի միջիայլոց, երեխաներս ծնվել ու ապրել են առանց նեղություն կրելու: Ճիշտ է, շքեղություն չգիտեն, բայց կարիքին էլ ծանոթ չեն եղել: Ահա, այն պատճառները, որոնցով ինձ ցավալի է հրաժեշտ տալ աշխարհին և ուզում եմ իմ թառամած գոյությունը ծգել էլի մի քանի տարի: Ի՞նչ իմանաս, կուզենան ինձանից հետո հիշել ինչ որ մի ժամանակ կատարած ծառայությունները, թեկուզ և վերջին պատերազմում և, գնահատելով դրանք, կապահովե՞ն իմ ընտանիքին համապատասխան թոշակով: Արդյոք կհիշե՞ն, որ Փոքր Ասիայում զորքերի կարիքների համար ծախսված 72 միլիոնից ես, սեփական նախաձեռնությամբ, թույլ չտվեցի շրջանառության մեջ դնել ոչ մի պոլուիմպերիալ (7ռ.50 կոպ. արժողությամբ ոսկեդրամ - Վ.Պ.) և ամբողջ պատերազմը ծգեցի մեր թղթադրամներով: Ինտենդանտական իմաստակներն ու առանձին զորամասերի որոշ պետեր ինձ այն ժամանակ կանխատեսում էին, որ բնակիչները վերջի վերջո մեզ ոչինչ չեն վաճառի, մատնացույց էին անում Բալկանյան բանակին, որտեղ ծախսերի համարյա կեսը կատարվել էր ոսկով: Լսում էի ես այս ամենը, լսում էի ու ամրապնդվում էի: Մռայլ կանխատեսումները, սակայն, չիրականացան. սկսված գործը հասցվեց ավարտին փայլուն կերպով և պետական գանձատունն ազատվեց ծայրահեղ չափով 10 միլիոն մետաղական ռուբլու ծախսից...»:

Բայց Լորիս-Մելիքովի այս հույսերը չարդարացան: Նրա մահից հետո կառավարությունը չնչին թոշակ նշանակեց նրա այրուն...

«Թշնամիների վրեժխնդրությունն ու բարեկամների զրպարտությունը»

Լորիս-Մելիքովն ու Ա.Ֆ.Կոնին այնքան էին մտերմացել, որ կոմսը միշտ անհամբեր սպասում էր նրա հետ հանդիպմանը: 1884թ. հուլիսի 30-ի նամակում Միխայիլ Տարիելովիչը գրում էր. «Ձեր մեկնելուց հետո Վիսբադենն ավելի տխուր է երևում»: Իսկ 1884թ. օգոստոսի 31-ին գրում էր. «Որտեղ էլ որ եղել եմ, հավատացեք, պահպանում եմ ձեր նկատմամբ սրտալի մտերմության զգացումը»: 1885թ. փետրվարի 14-ին կոմսն Ա.Ֆ.Կո-

նիին հայտնում էր. «Հաճախ եմ հիշում այն ուրախալի օրերը, երբ ձեզ հետ անցկացրի Վիսբադենում: Այդ շաբաթները, չնայած իմ ծանր հիվանդությանը, ինձ համար անցան բոլորովին աննկատելի ձեր ներկայության ու այն բարեկամական ու մտերմիկ զրույցների շնորհիվ»:

1885թ. ամռանն Ա.Ֆ.Կոնին նորից մեկնեց արտասահման և Վիսբադենում հանդիպեց Լորիս-Մելիքովին:

-Ահա, ձեզ սպասում էի ամբողջ մի տարի, մտածում էի այն մասին, թե ինչքան շատ բան ունեմ ձեզ պատմելու համար, - ասաց Միխայիլ Տարիելովիչն ուրախությամբ դիմավորելով Ալեքսանդր Ֆեոդորովիչին:

Երկու բարեկամները ջերմորեն երկար զրուցեցին: «Այս անգամ, - հիշում է Ա.Կոնին, - նրա մոտ նկատեցի դառնություն ու ոգու անկում ավելի, քան նախորդ տարի: Նա հաճախակի սկսեց խոսել իր ծերության ու լուրջ աշխատելու անընդունակության մասին: Ակնհայտ էր դառնում, որ իր ողբերգական բախտի հետ հաշտվելը նրա մոտ կատարվում է շատ հիվանդագին և, ինչպես ժանգը երկաթին, հոշոտում է նրա հոգևոր ուժերը: Լքված ու մոռացված իր շատ համակիրներից ու համախոհներից, նա իր վրա զգում էր Լերմոնտովի պատկերավոր արտահայտությամբ ասած, «Թշնամիների վրեժխնդրությունն ու բարեկամների զրպարտությունը»:

Այս այցելության ժամանակ Լորիս-Մելիքովի մոտ Ա.Կոնին նկատում է, որ «թշնամական մթնոլորտը, որով շարունակում էր շրջապատված մնալ նրա անունը Ռուսաստանում, նրա վրա թողնում էր գրգռիչ ազդեցություն, նա ծայրահեղ տագնապալի զգուշությամբ էր վերաբերում գրագրությանը, որը հակառակ էր զրույցներում ու կարծիքներում դրսևորված անզգուշությանն ու անկեղծությանը»:

Միխայիլ Տարիելովիչն իր ծանոթներին երաշխավորում էր սովորական փոստով ուղարկվող նամակներում լինեն հատկապես զուսպ ու շրջահայաց: Սակայն, ինքը՝ Լորիս-Մելիքովը, նամակներ գրելիս այդպես չէր վարվում ու այդ պատճառով, ինչպես վկայում է Ա.Կոնին, կոմսի նամակների մեծ մասը չէր հասնում հասցեատերերին:

Հարկադրաբար գտնվելով արտասահմանում, Լորիս-Մելիքովը չէր կորցնում հույսը, որ ի վերջո կկարողանա վերադառնալ Ռուսաստան: 1885թ. սեպտեմբերին նա Ա.Կոնիին հայտնում էր, որ մեծ ցանկություն ունի վերադառնալ Ռուսաստան և բժիշկների խորհրդով բնակություն հաստատել Ղրիմում, Օդեսայում կամ Կիևում: «Մենք, - գրում էր Միխայիլ Տարիելովիչը, - անցյալ շաբաթ ընտանեկան խորհրդում որոշեցինք վերադառնալ Պետերբուրգ վաղ գարնանը, մայիսի առաջին օրերին: Հայտնելով ձեզ այդ մասին, ես պետք է, սակայն, վերապահում անեմ, որ ձգտում եմ հայրենիք վերադառնալ ոչ թե նրա համար, որպեսզի ինձ նվիրեմ, ինչպես դուք եք մատնացույց անում, պետական խորհրդի անդամի կոչման աշխատանքին: Այդ աշխատանքին հազիվ այժմ պիտանի լինեմ.

իմ նվաղուն ծերությունն արդեն ինձ վերցրել է իր գիրկը, իսկ այդպիսի դեպքում անիմաստ է լուրջ աշխատանքը: Ահա, թե ինչու ցանկանում եմ հայրենիք վերադառնալ հանուն ինձ և եսասիրական մղումներից, ուզում եմ ապրել այնպիսի, ոչ շատ մարդկանց մոտ, որոնց հետ շփումն իմ վրա ներգործում է առավել բարերար, քան ամեն տեսակի հեղուկներ, դեղափոշի և լոգանքներ, որոնք այնքան առատորեն ինձ նշանակել են բժիշկները բոլոր առողջարաններում»:

Վերջապես 1886թ. ամռանը Լորիս-Մելիքովին հաջողվեց վերադառնալ Պետերբուրգ: Նրան այցելած Ա.Կոնիին հետագայում գրել է. «Ես նրան գտա շատ նյարդացած, ավելի նիհարած, քան նախկինում և փոքր ինչ հուզվելու դեպքում շնչահեղձության նկատելի նշաններով: Նրա աչքերը տենդորեն այրվում էին, ձեռքերը չոր էին ու տաք»:

Դիմելով Ա.Կոնիին, Լորիս-Մելիքովը դառնությամբ ասում է.

-Դուք երևի լսել եք, որ Պետերբուրգում ֆշշացնում են իմ մասին, թե ես եկել եմ, որպեսզի նորից հայտնվեմ իշխանության մեջ: Ինչպի՞սի բարբաջանք: Ինձ նորից հարկավոր է երկարատև արձակուրդ: Ես համոզվեցի, որ չեմ կարող ապրել այս կլիմայում նույնիսկ ամռանը, ուժ չունեմ նաև Կովկաս մեկնել:

Այնուհետև Լորիս-Մելիքովը պատմում է, որպես գեներալ-թիկնապահ և պետական խորհրդի անդամ, ցարի հետ իր հանդիպման մասին:

-Ինչ ապրումներ ունեցա, սպասելով ընդունելության: Դու դա կարող ես պատկերացնել: Չէ՞ որ ինձ կարող էին ստիպել սպասել ընդհանուր ընդունարանում ի հեճուկս բոլորի և ինձ ասել մեկ-երկու խոսք կամ էլ, առհասարակ, լռել: Իսկ ես Ռուսաստանին տվել եմ բոլորը, ինչ ունեցել եմ՝ առողջություն, հոգեկան հանգստություն: Ինչպիսի ցնծություն կլիներ, եթե ինձ այդպես վերաբերեին... Բայց, փառք Աստծո, ես խուսափեցի նոր անտեղի վիրավորանքից...

Ալեքսանդր Երրորդը Լորիս-Մելիքովին ընդունեց առանձին և նկատելով կոմսի արագ շնչառությունը, որն ոլորապտույտ աստիճաններով բարձրանալու հետևանքն էր, հետաքրքրվեց նրա առողջությամբ: Լսելով Լորիս-Մելիքովի պատասխանը, ցարը համաձայնվեց նրան տալ անժամկետ արձակուրդ:

Ա.Ֆ.Կոնիին պատմելով Ալեքսանդր Երրորդի մոտ ընդունելության մասին, Միխայիլ Տարիելովիչը հայտնում է, որ ցարը խոսել է Կովկասում և արտաքին հարաբերություններում տիրող բավարար վիճակի մասին, խուսափելով անդրադառնալ ներքին գործերին:

Լորիս-Մելիքովն անչափ դժգոհ էր մնացել ցարի մոտ ընդունելությունից և Ա.Ֆ.Կոնիին դառնությամբ ասել էր.

-Այժմ արագ, արագ հեռանալ է պետք Պետերբուրգից: Ինձ համար այստեղ շատերը զզվելի են մինչև անտանելիություն: Հոգյակս, երբ ես

դիկտատոր էի, նրանք այնպես էին խռնվում իմ ընդունարանում, որ անցնել հնարավոր չէր լինում և ինձ վիճակվում էր տեսնել նրանց շուռ տված հոգին: Ինչպի՞սի ստորություն:

Եվ դառնացած Լորիս-Մելիքովը հեռացավ արտասահման, որտեղից նրան այլևս չվիճակվեց վերադառնալ հայրենիք...

Պետերբուրգում նրան պարզորոշ հասկացրին, որ իր վարչական փորձը, անվիճելի ծառայությունը Թերեքի մարզի երկարատև կառավարման գործում, պայծառ ու ճկուն միտքը նույնիսկ նրան չնչին իրավունք չտվեցին թագավորի շրթունքներից լսել ինչ որ բան երկրի դրության մասին, որի ճակատագիրը ոչ վաղ անցյալում կոմսին վստահվել էր համարյա անվերահսկելի կերպով: Հարկավոր չեղավ, ինչպես նշում է Ա.Կոնին, նաև կոմսի առաջնորդի տաղանդը:

Արտասահման վերադառնալուց հետո, Լորիս-Մելիքովի կյանքը հիմնականում ընթանում էր միապաղաղ: Երբեմն- երբեմն նրան այցելած հետաքրքիր անձինք ինչ որ կերպ լրացնում էին նրա պարապությունը: «Ինձ այցելող անձանց կազմը, - գրում էր Միխայիլ Տարիելովիչը Ա.Ֆ.Կոնիին, - բավականաչափ տարաբնույթ է և ընդարձակ, նույնիսկ ավելին, քան կարելի էր ցանկանալ, բայց բոլոր դեպքերում ես խուսափում եմ որևէ մեկի հետ մոտենալ և օգտվում եմ շատ գրքերից ու ամսագրերից, երբեմն կարդում եմ գիշերները, մինչև հոգնություն»:

Ա.Ֆ.Կոնին հիշում էր, որ կոմսի տաղտկալի կյանքն անչափ աշխուժացնում էին «նրա ամբողջ ընտանիքին նվիրված բարեկամ էզովն, որին արտաքինի համար Լորիս-Մելիքովը կատակով անվանում էր եզոպոս և բժիշկ Բելոգոլովը, որին կոմսը վերաբերում էր մեծագույն վստահությամբ ու հարգանքով»:

1887թ. մարտի 19-ին Նիցայից Լորիս-Մելիքովն Ա.Ֆ.Կոնիին հայտնում էր իր նյութական վիճակի վատացման մասին:

Վերջին անգամ Ա.Ֆ.Կոնին Միխայիլ Տարիելովիչին հանդիպեց 1888թ. օգոստոսի կեսերին Վյով առողջարանային քաղաքում: «Ես, - հիշում է Ալեքսանդր Ֆեոդորովիչը, - Միխայիլ Տարիելովիչին գտա անկողնում, որտեղից նա տանջող տենդի պատճառով հազվադեպ էր դուրս գալիս: Նրան շրջապատողներն անչափ մտահոգված էին նրա վիճակով»:

Ա.Կոնին երեք օր մնաց Լորիս-Մելիքովի մոտ: Միխայիլ Տարիելովիչը զրույցների ժամանակ հաճախ էր խոսում մարդու հոգևոր ու կենդանական բնության կապի և հոգեկանի վրա վերջինիս ճակատագրական նշանակության մասին, ընդգծելով իր կասկածանքը հոգու ինքնուրույն գոյության և անդրշիրիմյան կյանքի մասին...

Վերջապես վրա հասավ Ա.Կոնիի մեկնելու պահը: «Ես, - հիշում է Ա.Կոնին, - զգում էի, որ մենք այլևս չենք տեսնվելու և զսպելով ինձ, վերջին անգամ նայեցի այս սիրելի, նիհարած դեմքին, որի վրա արդեն ընկած էր

մահվան կնիքը, խնայելով միայն առաջվա նման բանականության կրակով վառվող աչքերը...»:

«Ես Տեր-Ղուկասովի ու Շելկովնիկովի կողին տեղ ունեմ»

Կոմս Լորիս-Մելիքովը հետևելով բժիշկների խորհրդին, տարվա եղանակին համապատասխան բուժումն անց էր կացնում Վիսբադենում, Մենտոնում (հատկապես ձմռանը), բայց հիմնականում բնակվում էր Նիցայում:

Նա սրտաբաց էր, աղ ու հացով, սիրով հյուրասիրում էր իր այցելուներին, մատուցելով Կախեթի գինին, որը նրան միշտ ուղարկում էին Թիֆլիսից:

Սկզբում նրա առողջական վիճակը տանելի էր, թեև շարունակում էր դժգոհել ուժեղ հազից: Կոմսն աշխատում էր իր հյուրերին դիմավորել ուրախությամբ: Բայց դա շատ ցուցադրական էր: Նա տխրում էր անգործությունից: Կոմսին այցելության եկած մտերիմներից մեկը նրա գտնվելը Նիցայում համեմատել է Պրոմեթևսի վիճակի հետ, միայն այն տարբերությամբ, որ ժայռին գամված Պրոմեթևսին ծվատում էին արծիվները, իսկ Լորիս-Մելիքովին՝ ագռավներն ու կաչաղակները:

Չնայած այս վիճակին, կոմսն իր օրվա մեծ մասը նվիրում էր ընթերցանությանը: Շատ էր կարդում հայերեն, ռուսերեն, ինչպես նաև ֆրանսերեն թերթեր: Նա հետևում էր ընթացիկ քաղաքականությանը: Քաղաքականության, տնտեսագիտության վերաբերյալ ոչ մի լուրջ աշխատություն չէր վրիպում նրա ուշադրությունից: Սիրում էր իր այցելուների հետ քննարկել այդ գրքերը, դրանցում արտահայտված մտքերին վերաբերում էր քննադատաբար...

Միխայիլ Տարիելովիչի հիվանդությունը գնալով սրվում էր: 1885թ. նրան անկողին գցեց աճոթների սուր ռևմատիզմը: Կոմսը հազվադեպ էր իր սենյակից դուրս գալիս, վախենում էր մրսել նույնիսկ թարմ օդից: Դրա հետ միասին անդադար ծխում էր՝ մի գլանակը վառելով մյուսից:

1886թ. ապրիլին կոմսն ինչ որ չափով սկսեց կազդուրվել և դա նրան հնարավորություն տվեց կատարել ավագ աղջկա՝ Մարիամի (1858-1918թթ.) ամուսնությունը իր վաղեմի ընկերոջ՝ դեսպան Եվգենի Նովիկովի որդի Սերգեյի հետ, որը հետո դարձավ Նեապոլում ռուսական հյուպատոս:

Լորիս-Մելիքովը 1886թ. հուլիսի սկզբին եկավ Պետերբուրգ՝ Թիֆլիս մեկնելու նպատակով: Սակայն այստեղ սրվեց նրա հիվանդությունը և չորս շաբաթ Պետերբուրգում մնալուց հետո հարկադրված էր նորից հեռանալ Եվրոպա: Նա այս անգամ էլ չկարողացավ իրականացնել իր երազանքը՝ հասնել Թիֆլիս և հանդիպել իր սիրելի մոր հետ, որն արդեն ամբողջապես կորցրել էր տեսողությունը: Ըստ երևույթին, Միխայիլ Տարիելովիչը զգում էր, որ այլևս իրեն չի վիճակվելու մեկնել Թիֆլիս այդ անհնարին հիվանդության պատճառով և մտերիմների մոտ դառնացած դժգոհում էր «անարդար ճակատագրից»:

1886թ. աշնանից Լորիս-Մելիքովի առողջությունը նորից վատացավ: Բայց նրա հզոր օրգանիզմը շարունակում էր դիմադրել անողոք հիվանդությանը: Չնայած կոմսը, ինչպես ասվեց վերևում, շատ էր վախենում նույնիսկ թարմ օդից, նրանից չէին հեռանում նրա կամային բարձր հատկությունները: 1887թ. փետրվարին տեղի ունեցավ երկրաշարժ, որից Նիցա քաղաքը շատ տուժեց: Ավերվեց տների մեծ մասը: Ստորերկրյա ցնցումները գլխավոր հարվածից հետո շարունակվում էին և բնակչությունը մնում էր տագնապի մեջ: Քաղաքը դատարկվում էր: Բնակիչները գերադասում էին հեռանալ ապահով վայրեր: Իսկ այդ ամբողջ ընթացքում Լորիս-Մելիքովը նույնիսկ չմտածեց հեռանալ Նիցայից: Նա ոչ միայն դուրս չեկավ երկրաշարժից տուժած տնից և չտեղափոխվեց քաղաքից դուրս, այլև մնաց իր ննջարանում, որի պատերից մեկը ճեղք էր տվել:

Երկրաշարժից մի քանի շաբաթ անց, կոմսի մոտ նորից բացվեց արյունահոսություն: Արդեն արյուն էր թքում: Դա տևեց երկու ամիս: Կոմսի բոլոր ծանոթները զարմացել էին, որ այդ համարձակ մարդը, չվախենալով երկրաշարժից, հանգիստ քնել էր տատանվող պատի տակ, իր ամբողջ կյանքում մասնակցել էր հարյուրից ավելի արյունալի ճակատամարտերի, այժմ թքի մեջ տեսնելով արյան հետքեր, իրեն կորցրել էր փոքր երեխայի նման, զրկվել ինքնատիրապետումից:

Լորիս-Մելիքովին այս վիճակի մեջ տեսած պրոֆեսոր Ն.Բելոգոլովը գրել է. «Մարդկային բնավորության այսպիսի թվացյալ անահատականություն հանդիպում է, սակայն, ոչ հազվադեպ և քիչ չեն խրոնիկական հիվանդություններից տանջվող այնպիսի մարդիկ, որոնք ոչ միայն չեն վախենում մահից, այլև անհամբեր սպասում են դրան, նույնիսկ երբեմն գնում ինքնասպանության: Բայց կյանքի նկատմամբ այսպիսի անտարբերություն չի խանգարում նրանց հուսահատության մեջ ընկնել յուրաքանչյուր հիվանդագին նոպայից և գերագնահատել նրա վտանգի նշանակությունը: Այսպիսի հակասությունը, թվում է, կարելի է բացատրել նրանով, որ այդ խրոնիկ հիվանդները վախենում են, որ ամեն մի հիվանդագին երևույթ իր հետևից չբերի ոչ այնքան նոր տառապանք, որքան ֆիզիկական ցավերի դեմ պայքարում բարոյական ուժերի ավելի հյուծում»:

Իսկապես, ինչքան ամուր է մարդու միտքը և եռանդուն է կամքն, այնքանով էլ նրան դժվար է հաշտվել հիվանդ մարմնի քմահաճույքներից և իր աճող հոգեկան թուլությունից կախվածության հետ:

Լորիս-Մելիքովի պատանեկության տարիների մտերիմ ընկեր բանաստեղծ Նեկրասովն այսպիսի վիճակը շատ խտացված կերպով արտահայտել է հետևյալ կերպ. «Մեռնելը լավ է, մահանալը ծանր»:

Այսպես էր նաև Լորիս-Մելիքովի դեպքում: Թեև արյուն թքելն աննշան

էր և բժիշկները դրանում վտանգ չէին տեսնում, բայց նա ընկավ հուսալքության մեջ և իրեն նայում էր, ինչպես մեռնողի: Այս վիճակի մեջ էլ Միխայիլ Տարիելովիչը Պետերբուրգից շտապ կանչել տվեց ավագ որդուն՝ Տարիելին:

Երբ Տարիելը հասավ Նիցա, Միխայիլ Տարիելովիչը թեթևացած սրտով իր շուրջը հավաքեց ընտանիքի բոլոր անդամներին ու թելադրեց իր կամքը.

- Չվախենաք: Միշտ եղեք միասին: Մորս լավ կնայեք: Ինձ կտանեք Թիֆլիս: Ես Տեր-Ղուկասովի ու Շելկովնիկովի կողքին տեղ ունեմ...

Սակայն կոմսի հզոր մարմինը դիմացավ նոր հարվածին: Լորիս-Մելիքովը որոշ չափով կազդուրվեց, արյունն անհետացավ: Կոմսը սկսեց աշխուժանալ:

Վերջին օրերը

Լորիս-Մելիքովի առողջությունն այնքան լավացավ, որ նա տեղափոխվեց Վեվե առողջարանային քաղաք: Այստեղ էլ նա վարում էր նույն կյանքը: Քիչ էր շարժվում: Սովորության համաձայն, առավոտյան ժամը 11-ին անկողնուց տեղափոխվում էր թախտի վրա: Ժամը 12-ին նախաճաշում էր և հետո երկու ժամ նվիրում ստացված նամակներին (որոնք շատ ու շատ էին) պատասխանելուն:

Աստիճանաբար կյանքն ավելի ու ավելի էր դառնում միապաղաղ, բայց նրա ծանոթներն անչափ զարմանում էին, թե ինչպես վեց տարի շարունակ հարկադրված անգործությանը համակերպվող եռանդուն ու գործուն բնավորություն ունեցող կոմսը կարողանում էր թաքցնել իր իսկական զգացումները, տխրությունը և միշտ երևալ առույգ, բարեհամբույր, քաղաքականության և տարբեր իրադարձությունների մասին զրույցներում անսպառ գիտելիքներ դրսևորելով:

Բայց, այնուամենայնիվ, աստիճանաբար Լորիս Մելիքովն իր հիվանդության նկատմամբ դառնում էր անտարբեր: Անտարբեր էր նաև իր շուրջը կատարվածին: Միտքը մոտալուտ մահվան մասին ավելի ու ավելի շատ տեղ էր զբաղեցնում նրա ուշադրությունը: Նա գնալով ավելի էր մտահոգվում, թե իրենից հետո ինչպես կապրի ընտանիքը:


1888թ. հուլիսի 28-ին Նուբար փաշան նորից այցելեց Վեվե քաղաքում գտնվող Լորիս-Մելիքովին: Նրանց զրույցը տեղի ունեցավ բաց պատշգամբում, միջանցիկ քամու պայմաններում: Հենց դրան էլ կոմսը վերագրեց սկսված ընդհանուր թուլությունն ու անքնությունը: Ուժեղացել էր նաև ծախ ծեռքի ռևմատիկ ցավը: Միխայիլ Տարիելովիչն արագորեն նիհարում էր: Տնքում էր ահավոր ցավերից ու ամբողջովին հուսահատվեց: Հաճախ կոմսը կորցնում էր ինքնատիրապետումը, դառնում դյուրագրգիռ:




Կ.Պ. Պոբեդոնոսցև



Օտտո Բիսմարկ



Դ.Ա. Տոլստոյ



Պ.Ա. Վալուև



Ի.Դ. Դելյանով



Մ.Ն. Կատկով

Միխայիլ Տարիելովիչին ավելի ու ավելի էր թվում, թե մոտեցել է մահը և խնդրում էր թույլ չտալ, չթողնել, որ մեռնի հյուրանոցում և իրեն տեղափոխել մասնավոր բնակարան:

1888թ. օգոստոսի 17-ին հիվանդ Լորիս-Մելիքովին այցելեց պրոֆեսոր Ն.Բելոգոլովը: «Երբ, - գրել է պրոֆեսորը, - պայմանավորված ժամին եկա հյուրանոց, հանդիպեցի ինձ սպասող, արցունքներից խեղդվող կոմսուհուն, որն ասաց. «Նա շատ վատ է զգում, շուտով մտեք նրա մոտ»: Նա (Լորիս-Մելիքովը - Վ.Պ.) ինձ ողջունեց անսովոր մռայլ հայացքով և ձեռքի թույլ սեղմումով ու սկսեց խոսել ցածր, հանդիսավոր ձայնով. «Դե, մնաք բարով, իմ բանկագին, ես զգում եմ, որ վերջս գալիս է և ես ձեզ տեսնում եմ վերջին անգամ: Թույլ տվեք ձեզ շնորհակալություն հայտնել ձեր բարեկամության և իմ նկատմամբ ձեր ամբողջ հոգատարության համար»: Խոստովանում եմ, սիրտս ուժգին կծկվեց այդ խոսքերից և դրանք արտահայտելու տոնից: Բայց շուտով համոզվելով, որ այդ խոսքերն ոչնչով արդարացված չեն, ես տիրապետեցի ինձ և ծիծաղելով պատասխանեցի, որ մահից առաջ շնորհակալության մասին հայտարարությունը նա համարձակորեն կարող է հետաձգել ավելի հարմար ժամանակ և սկսեցի նրան համոզել, որ հիվանդության ամբողջ ընթացքը ցույց չի տալիս մահացու վտանգ, այլ, ընդհակառակն, ազդարարում է մոտակա առողջացման մասին: Այս բացատրությունը նրան հանգստացրեց: Շուտով նա սկսեց խոսել...»:

Սակայն Լորիս-Մելիքովի մոտ նոպաները մշտապես կրկնվում էին: Եվ երբ դրանք մի անգամ ինչ որ չափով թուլացան, նա դիմելով պրոֆեսորին, ասաց.

- Ինչ որ մեկի հայտնի ասույթը կա, որի ճշմարտությունը ես հիմա զգում եմ իմ վրա. կկորցնես հարստությունդ՝ ցավ չէ, կկորցնես առողջությունդ՝ նույնպես ցավ չէ, իսկ ահա, կկորցնես ապրելուդ էներգիան՝ այդ ժամանակ վերջ ամեն ինչին:

1888թ. օգոստոսի 2-ին Լորիս-Մելիքովի կրտսեր դուստր Ելիզավետան Կարապետ Եզյանին ուղարկած նամակում գրում էր. «Նա (Լորիս-Մելիքովը - Վ.Պ.) ամբողջովին ընկճված է և ամեն օր հարցնում է, երբ դուք ու Զախարը կգաք: Մաման մեծ հույս է կապում ձեր ներկայության հետ, որպեսզի նրան գոտեպնդեք: Դրա համար էլ նա ձեզ խնդրում է, որքան հնարավոր է, շուտ դուրս գաք Պետերբուրգից»:

Այս նամակը ստանալով, Կ.Եզյանը Զախարի հետ անմիջապես ուղևորվեց Վեվե: Անչափ ջերմ էր երկու մտերիմ ընկերների հանդիպումը: Հիշելով այդ հանդիպման մասին, Ն.Բելոգոլովը գրել է. «Օգոստոսի վերջին, երբ կոմսի վիճակը սկսել էր լավանալ, Պետերբուրգից եկավ կոմսի մտերիմ բարեկամներից մեկը, ինչպես նաև նրա կրտսեր որդին»:

Կ.Եզյանը Լորիս-Մելիքովի մոտ մնաց մեկ ամիս: Նրա ներկայությունը բարերար ազդեցություն ունեցավ, բայց առաջվա նման կոմսը մնում էր

պառկած թախտի վրա և հիվանդության մասին մոռանում էր Կ.Եզյանի հետ զրույցների ժամանակ:

Լորիս-Մելիքովը խնդրեց Կ.Եզյանին հետևել Մոսկվայի համալսարանին տված իր նվիրատվությամբ կովկասցի ուսանողներին պահելու, իր միջոցներով Վլադիկավկազում ստեղծված ուսումնարանի գործունեության հարցերին: Նա շատ ուրախացավ, երբ Կ.Եզյանը պատմեց Սանասարյան վարժարանի հաջողության մասին:

Միխայիլ Տարիելովիչն ամենայն ուշադրությամբ հետևում էր Բուլղարիայի հարցում Ռուսաստանի քաղաքականությանը, ցավով էր վերաբերում բուլղարացիների հակառուսական դրսևորումներին և թուրքերի հետ նրանց խաղին, որ սկսել էին 1885թվականից սկսած և ավարտվել էր 1886թ. փետրվարին թուրք-բուլղարական պայմանագրով, որով Բուլղարիան ոչ միայն դուրս էր եկել Ռուսաստանի ազդեցությունից, այլև դարձել Թուրքիայի դաշնակիցը: Բուլղարացիների այդպիսի դիրքորոշումը Լորիս-Մելիքովը գնահատում էր որպես երախտամոռություն Ռուսաստանի նկատմամբ, որը մեծ դեր էր խաղացել բուլղարների ճակատագրում:

Այնուհետև անդրադառնալով Արևմտյան Հայաստանի ճակատագրին, Լորիս- Մելիքովն իր հավատարիմ զինակցին հիշեցրեց էրզրումում ստեղծված «Պաշտպան հայրենյաց» ընկերության մասին և ընդգծեց, որ հարկավոր է չշտապել, զբաղվել ուժեր կուտակելով, ժողովրդին համախմբելով, միասնաբար հանդես գալ: Առանց նախապատրաստվելու, ժողովրդի բոլոր ուժերը համախմբելու փոխարեն, ամեն մի շտապողական գործողություն ավելի կծանրացնի արևմտահայության վիճակը: Լորիս-Մելիքովը կարծես գուշակում էր ապագան: Այդ նրա խորհրդով էր, որ Կ.Եզյանը հանդիպեց բանտից նոր ազատված Խաչատուր Կարեքեցյանի (1846-1891թթ) հետ ու միասին քննարկեցին հետագա գործողությունների մասին: Խ.Կարեքեցյանն ելնելով անցյալի սխալներից, որոշեց հիմնավորապես նախապատրաստվել ժողովրդական ապստամբության համար և չհամաձայնվեց նոր կազմակերպված դաշնակցության առաջարկին անմիջապես ելույթ սկսելու մասին: Խ.Կարեքեցյանը հրաժարվեց, բայց թանկ վճարեց դաշնակցության կամքը չկատարելու համար: 1891թ. դաշնակցության անդամները սպանեցին իրենց չենթարկվող Խ.Կարեքեցյանին...

1888թ. սեպտեմբերի 17-ին Կ.Եզյանը Լորիս-Մելիքովին ընտանիքի հետ միասին ճանապարհեց Նիցա, ինքն էլ տխուր տրամադրությամբ վերադարձավ Պետերբուրգ:

Նիցայում Միխայիլ Տարիելովիչը շարունակում էր դժգոհել ձախ թևի ուժեղացող ցավերից: 1888թ. դեկտեմբերի 11-ին, երեկոյան ժամը 5-ին ցանկություն հայտնեց պառկել մահճակալի վրա: Ուժեղացավ հազոցը, սկսեց դողացնել: Ուժերն արագորեն սպառվում էին: Այդ ժամանակ Նիցայում գտնվող Վիրտեմբուրգի թագավորի ներկայությամբ գերմանա-

կան բժիշկը դեկտեմբերի 13-ին, ժամը 4-ին սկսեց զննել կոմսին: Բայց արդեն ուշ էր: Բժիշկը փորձեց զննել կոմսի կուրծքը, բայց Լորիս-Մելիքովը, որն, առհասարակ, տանել չէր կարողանում բժշկական զննումը, ցածրաձայն ասաց բժշկին.

-Ոչ այսօր, սիրելի բժիշկ, այլ վաղը, եթե միայն ապրեմ, իսկ եթե ոչ ... և դադարեց խոսել:

Իսկ 1888թ. դեկտեմբերի 13-ին, երեկոյան ժամը 8.40-ին Լորիս -Մելիքովը մահացավ, չկորցնելով գիտակցությունը:

1888թ. դեկտեմբերի 14-ին Ելիզավետան հեռագրեց Պետերբուրգ, Կարապետ Եզյանին. «Սիրելի Գերասիմ Արտեմովիչ, երեկ կորցրինք պապային...»:

Այսպես ավարտվեց Միխայիլ Տարիելովիչ Լորիս-Մելիքովի կյանքը: Ի դեմս նրա, Ռուսաստանը զրկվեց իր տաղանդավոր ու անշահախնդիր նվիրված գործչից: Հայ ժողովուրդը կորցրեց իր հավատարիմ որդիներից մեկին, որը երազում էր տեսնել նրա փառքի վերականգնումն ու ապահով կյանքի հաստատումը...

«Ռուսաստանում նա օրինակելի անշահասիրության տիպար էր...»

Լորիս-Մելիքովի մահվան լուրն արագորեն հասավ Ռուսաստան: Մամուլը նորից անդրադարձավ նրա անցած ճանապարհին, ուշադրություն դարձնելով կոմսի գործունեության տարբեր կողմերին: Հայկական ու ռուսական թերթերը հիմնականում դրական էին արտահայտվում Լորիս-Մելիքովի մասին:

Ռուսաստանի պահպանողական, հետադիմական մամուլը, հետևելով Պոբեդոնոսցևի ու Կատկովի ցուցումներին, Լորիս-Մելիքովի մահը օգտագործեցին նրան անվանարկելու համար, չխորշելով նույնիսկ աղավաղել նրա կենսագրությունը: 1888թ. դեկտեմբերի 17-ին հետադիմական Սուվորինի «Նովոյե վրեմյա» թերթը բացասաբար վերաբերելով Լորիս-Մելիքովի գործունեությանը, կեղծելով իրականությունը, անձնական պլանում կոմսին մեղադրելով անազնվության մեջ, գրում էր. «Կոմս Լորիս-Մելիքովը թեև դավանում էր հայոց կրոնը և հանաքով էլ երբեմն իրեն անվանում էր «խորամանկ արմյաշկա», բայց ծագմամբ, լեզվով ու կրթությամբ նա վրացի էր: Նա մինչև անգամ հայերին չէր սիրում և, ընդհակառակը, մի որևէ կովկասցի հին ընկերակցի հետ վրացերեն լեզվով խոսակցելը նրա համար մեծ ուրախություն էր, երբ Կախեթի գինու բաժակն առաջը դրած, ուտելով բրնձով հավը և կովկասյան սովորությամբ տերողորմյան գցելով, մեծ զվարճությամբ պատմում էր իր կյանքից անթիվ դիպվածներ»:

Ի պատասխան կոմս Դելյանովի մատուցմամբ տպագրված այս բիրտ հերյուրանքին, Պետերբուրգում լույս տեսնող «Նովոստի» թերթն այդ օրերին գրեց, որ «հանգուցյալ կոմսը ծագում է հին հայկական տոհմից Լոռու Մելիքների ցեղից»:

«Վեստնիկ Եվրոպի» ամսագիրը 1889թ. առաջին համարում հանգամանորեն անդրադառնալով Լորիս-Մելիքովի գործունեությանը, խստորեն քննադատում է բոլոր նրանց, ովքեր «անվայել կերպով են վերաբերել հանգուցյալ կոմսի հիշատակի նկատմամբ»:

Թիֆլիսում լույս տեսնող «Արձագանք» շաբաթաթերթը 1889թ. փետրվարի 12-ին անդրադառնալով Լորիս-Մելիքովի մահվան կապակցությամբ եվրոպական մամուլի արձագանքին, հայտնում է, որ «եվրոպական մամուլը միաձայն խոստովանում է նորա մեծ ռազմագիտական ընդունակությունները, հռչակում է նորան իբրև ականավոր զորավար, կոչում է նորան խորիմաստ և յուր սկզբունքներով վերին աստիճանի համակրելի պետական անձը, շեշտում է այն հանգամանքը, որ Ռուսաստանում նա օրինակելի անշահասիրության տիպար էր, գովաբանում է նորա նուրբ խելքի հատկությունները»:

«Արձագանքը» հայտնում է նաև, որ 1888թ. դեկտեմբերի 13 (25)-ից մինչև 1889թ. հունվարի 18 (30)-ը ֆրանսիական 126 թերթեր անդրադարձել են Լորիս-Մելիքովի գործունեությանը: Դրանցից ամենից ազդեցիկ «Ֆիգարո» թերթը գրել էր, որ «Լորիս-Մելիքյանը հայոց թագավորական ցեղի վերջին շառավիղն էր»:

«Իստորիչեսկի վեստնիկ» ամսագիրը 1889թ. հունվարին գնահատելով Ռուսաստանին Լորիս Մելիքովի մատուցած ծառայությունը, գրել է նաև հետևյալը. «Լորիս-Մելիքովը ծառայության մեջ ոչ միայն երբեք ե-կամտի աղբյուր չի որոնել, այլև իր սեփական ունեցվածքն է ծախսել. միշտ հյուրասեր, միշտ սիրալիր այն բոլոր պաշտոններում, որ նա վարել է: Նա երբեք չէր խնայում այն ծախսերը, որոնք պայմանավորված էին իր դիրքով և հազիվ հազ ծայրը ծայրին էր հասցնում: Վերջին պատերազմից հետո, երբ նա Պետերբուրգ եկավ, հանգուցյալ կայսրը մեծ սիրով ընդունեց նրան: Տեղեկանալով նրա նյութական նեղ վիճակի մասին, կայսրը կամեցավ օգնել նրան, նվիրելով մի նշանակալի գումար, բայց Լորիս-Մելիքովը ցարին խնդրեց չանել այդ, ասելով. «Ձերդ մեծություն, ինչ իմ զինվորիս բանն է մեծամեծ գումարներ ստանալ, ես դրանց չեմ կարող տիրություն անել, մանավանդ, որ իմ ծառայության ցուցակի մեջ երբեք փողի մասին խոսք չի եղել: Թող այսուհետև էլ չլինի»:

Ընթերցողներին հիշեցնելով Լորիս-Մելիքովի վերոհիշյալ խոսքերն, ամսագիրն ավելացնում էր. «Չպետք է մոռանալ, այն ժամանակ շատ քիչ մարդ կգտնվեր, որ այդպես վարվեր»:

«Նա հայ էր ոչ միայն կրոնով...»

Ռուս նշանավոր ռազմական պատմաբան Վասիլի Պոտոն, որն անձամբ ճանաչել էր Լորիս-Մելիքովին, կոմսի մահվան կապակցությամբ 1889թ. հանդես եկավ ծավալուն հոդվածով: Նշելով, որ Հայաստանը Ռուսաստանին տվել է ռազմական ու պետական փայլուն գործիչներ, ինչպիսիք են Բեհբությանը, Արղության-Երկայնաբազուկը, Լազարյանը, Տեր-Ղուկասովը, Շելկովնիկովը և ուրիշներ, Պոտոն ընդգծում է հետևյալը. «Բայց բոլորից պայծառը և բոլորից հռչակվածը կոմս Միխայիլ Լորիս-Մելիքովի անունն է: Հայաստանի զավակ Լորիս-Մելիքովն իր ծագումով հայկական ընտիր ընտանիքներին էր պատկանում:

Մայրաքաղաքի լրագիրների սխալ տեղեկությունների փոխարեն, որոնք ծանոթ չեն Լորիս-Մելիքովի ոչ հոգու և ոչ սրտի հետ, մենք պիտի ասենք, որ նա հայ էր ոչ միայն կրոնով, այլև այն ջերմ զգացմունքներով դեպի հայրենիքը և իր ցեղակիցների հետ ունեցած այն հարաբերություններով, որոնք ամենից լավ հայտնի են հայերին»:

Ընթերցողներին շարունակելով ծանոթացնել Լորիս-Մելիքովի կենսագրությանը, Վ.Պոտոն գրում էր. «Հանգուցյալ կոմսը սիրում էր թշվառ Հայաստանը: Հողագործ դասի աշխատասիրության և բարձր բարոյականության մեջ նա փառավոր ապագայի գրավականն էր տեսնում հայի համար: Հայաստանի մասին մամուլի մեջ լույս տեսնող բոլոր տեղեկություններով հետաքրքրվում էր, ինչպես և այն բոլոր բաներով, որոնք նպաստում էին Ռուսաստանում հայ ազգի մասին ճշմարիտ կարծիք կազմելուն, այն ազգի, որի վերաբերյալ հաճախ մի քանի պարապ գրողների շնորհիվ տարածվում էր սխալ, երբեմն էլ գիտակցաբար աղավաղված հասկացություն»:

Վերոհիշյալը հաշվի առնելով, Վ.Պոտոն հիշեցնում էր. «Այն ժամանակ, երբ նա պետական ծառայության բարձրագույն աստիճանին էր հասել, երբ կառավարության ղեկավարն էր, երբեք նրա առանձնասենյակի դռները չէին փակվում իր հայրենակիցների առջև: Սակայն որքան և նա հայ էր, նույնքան և իր համոզմունքներով ու տեսակետներով անկեղծ ռուս մարդ էր և Ռուսաստանին ու ռուս ժողովրդին անձնվեր նվիրված՝ մինչև ուղն ու ծուծը»:

«Փառավոր բազավորության արհասիրս աջակցին...»

Լորիս-Մելիքովի ցանկության համաձայն նրա թաղումը պետք է կատարվեր Թիֆլիսում: Այդ նպատակով Նինա Իվանովնայի խնդրանքով շտապ կերպով Նիցա մեկնեց Լորիս-Մելիքովի անզուգական և ազնիվ ընկեր ու զինակից Կարապետ Եզյանը:

Կ.Եզյանն իր ձեռքը վերցրեց Մարսելից կոմսի աճյունը Թիֆլիս տեղափոխելու հոգսը: 1889թ. հունվարի 10-ին Մարսելի հայ գաղութը սգո հանդեսով, քաղաքի իշխանության ներկայացուցիչների մասնակցությամբ Լորիս-Մելիքովի աճյունն ուղեկցեցին մինչև նավահանգստում կանգնած «Սինգրելիա» շոգենավը, որն ուղևորվեց Բաթումի:

Մարսելի նավահանգստում հավաքված հայ բազմության առջև տեղի քահանան մխիթարական խոսքով դիմեց կոմսի որդի Զաքարին, կոչ անելով հպարտանալ այդպիսի մեծ հայի զավակ լինելու համար:

Իր պատասխան խոսքում Զաքարը շնորհակալություն հայտնելով ասաց.

- Օտար երկրի մեջ իմ հայրենակիցների մխիթարական ցույցերն այնպես են ինձ հուզել, որ անկարող եմ հայտնել իմ զգացումները:

1889թ. հունվարի 23-ին «Սինգրելիա» շոգենավը հասավ Բաթումի, որտեղ կոմսի աճյունը պահվեց հինգ օր, մինչև որ Օդեսայի վրայով Նիցայից մեկնած նրա ընտանիքի անդամները Կարապետ Եզյանի ուղեկցությամբ հասնեն Թիֆլիս:

Ամբողջ Թիֆլիսն ոտքի վրա, սպասում էր սգո գնացքի ժամանմանը: Այստեղ էին եկել բազմաթիվ վայրերի ներկայացուցիչներ: Թիֆլիսում հայերեն ու ռուսերեն տպագրվեց «Կոմս Միքայել Տարիելովիչ Լորիս-Մելիքով» գրքույկը: Այդ օրերին «Մուրճ» ամսագիրը գրում էր. «Ամբողջ Կովկասը, առանց խտրության ազգերի ու կրոնների, մոտ երկու ամիս է, որ պատրաստություններ է տեսնում արժանավոր կերպով ընդունելու նշանավոր հանգուցյալի մարմինը: Այդ ցույցերի մեջ չկա ոչ մի որոշ տենդենց, մեծ անունին ուզում են մեծապես դիմավորել, նշանավոր հանդիսացած և յուր կյանքը լրիվ սնուցած մարդու մարմինը հանձնվում է այն երկրի հողին, որ նրան ծնունդ էր տվել և ամփոփվում է Պանթեոնում այն ազգի, որի զավակն էր նա»:

1889թ. փետրվարի 7-ի վաղ առավոտյան Բաթումիից ժամանեց սգո գնացքը: Թիֆլիսի կայարանումն էին Լորիս-Մելիքովի մայրը՝ կուրացած Կատերինա Հախվերդյանը, կինը՝ Նինա Իվանովնան, զավակները, հարազատներն ու բարեկամները: Այստեղ էր Թիֆլիսի ամբողջ բնակչությունը:

Լորիս-Մելիքովի դագաղը ձեռքերի վրա դուրս բերվեց կայարանից և այդպես էլ տարվեց մինչև Վանքի մայր եկեղեցին: Վանքի գավիթում տեղի ունեցավ սգո արարողություն: Լորիս-Մելիքովի մասին հուզիչ խոսք ասած վրացահայ թեմի առաջնորդ Արիստակես եպիսկոպոսը: Այնուհետև Դերբենդի բնակչության հանձնարարությամբ նրանց անունից ցավակցություն հայտնեց Գաբրիել Սունդուկյանը:

Չինովորների հրացանային համազարկերի ուղեկցությամբ Լորիս-Մելիքովի դագաղն իջեցվեց Տեր-Ղուկասովի և Շելկովնիկովի գերեզմանների կողքին: Զորավարի գերեզմանը ծածկվեց բազմաթիվ պսակներով: Պսակ էին ուղարկել նաև Միլյուտինն ու Աբազան հետևյալ մակագրու-

թյամբ. «Փառավոր թագավորության արիասիրտ աջակից կոմս Միխայիլ Լորիս-Մելիքովին»:

Լորիս-Մելիքովի ընտանիքի անունով ստացվեցին բազմաթիվ հեռագրեր, այդ թվում՝ Ալեքսանդր Երրորդից, մեծ իշխաններից, հասարակական ու ռազմական գործիչներից:

Անդրադառնալով Լորիս-Մելիքովի հուղարկավորությանը, «Մշակ» թերթը 1889թ. փետրվարի 25-ին տպագրեց «Հայկական պանթեոնը» վերնագրով հոդված, որտեղ մասնավորապես ասվում էր. «Կուր գետի ափին կանգնած Վանքի եկեղեցու՝ Թիֆլիսի հայերի այդ հինավուրց աղոթատան բակում, փետրվարի 7-ին թնդանոթների որոտով և բազմաթիվ պսակների հովանու տակ հողին հանձնվեց Ալաջայի հերոսի՝ Միքայել Լորիս-Մելիքովի մարմինը:

Պատերազմի դաշտի հերոսներ հայ ժողովրդի միջից շարունակում են դուրս գալ և մինչև այժմ, և ահա մի ղարաբաղցի, թիֆլիսեցի կամ լոռեցի հերոսի առաջնորդությամբ ռուսաց տիրապետության համար ճանապարհ է բացվում թե՛ դեպի Դաղստանի բարձրաբերձ լեռները, թե՛ դեպի Փոքր Ասիայի բարձրավանդակները և թե՛ դեպի Միջին Ասիայի ավազուտ անապատները, որոնց նոր պատմության էջերում պիտի փայլեն Տեր-Ղուկասովի, Լազարևի, Շելկովնիկովի և Լորիս-Մելիքովի անունները... Ահա պատերազմի դաշտի այդ հերոսներն են, որոնք այսօր լիություն են տալիս հայ ժողովրդի ինքնասիրությանը և ամեն մի հայ մտնելով Վանքի բակը և ներքին բերկրությամբ նայելով այնտեղ թաղված հերոսների շիրիմներին՝ բավականությամբ բացականչում է՝ «Սրանք հայեր են...»:

Միքայել և Նունե Լորիս-Մելիքովներն երջանիկ ամուսիններ էին, ունեին հինգ զավակ՝ Մարիամ, Տարիել, Զաքար, Սոֆիա և եղիսաբեթ (Ելիզավետա): Մեծ որդին՝ Տարիելը (1863-1941թթ.) Պրեոբրաժենյան լեյբ-գվարդիայի գնդի գնդապետ էր, ամուսնացել էր Վառվառա Նիկոլայի Արղության-Երկայանաբազուկի հետ: Մահացել է Փարիզում: Նրա որդին՝ Միխայիլը ապրել է 1900-1980թթ.: Այս Միխայիլը՝ Միխայիլ Տարիելովիչի թոռը ամուսնացել է Օլգա Գեորգևնա ֆոն Մերենբերգի (1898-1983թթ.) հետ: Նրանք ունեցել են մեկ որդի՝ Ալեքսանդր Միխայիլովիչ Լորիս-Մելիքով (ծնվել է 1926թ.): Նրա զավակներն են՝ Նատալյան (ծնված 1962թ.), Միխայիլը (ծնված 1964թ.), Դոմինիկան (ծնված՝ 1961թ.), Աննան (ծնված՝ 1959թ.):

Լորիս-Մելիքովների մյուս որդին՝ Զաքարը ապրել է 1866-1896թթ.: Չի ամուսնացել: Աղջիկներից ավագը՝ Մարիամը (Մարիա) (1858-1916թթ.) ամուսնացել էր Սերգեյ Նովիկովի հետ: Երկրորդ աղջիկը՝ Սոֆիան՝ ծնվել է 1862թ.: Այլ տեղեկություններ չկան: Կրտսեր աղջիկը՝ Ելիզավետան (1872-1968թթ.) ապրել է Վիսբադենում: Նրա ամուսինն էր բարոն Կոնստանտին Ստանիսլավովիչ ֆոն Նոլկեն (1878-1949թթ):

Լորիս-Մելիքովի մահից հետո նրա այրուն նշանակվեց թոշակ՝ տարեկան 5 հազար ռուբլի, որը հազիվ էր բավարարում մեծ ընտանիքի հոգսերը: Գտնվելով Թիֆլիսում Նինա Իվանովնան Կ.Եզյանի օգնությամբ փորձեց Ալեքսանդր Երրորդից ընդունելություն խնդրել, բայց չհաջողվեց...

* * *

Ահա և սիրելի ընթերցող ավարտում եմ փաստա-վավերագրական պատմությունն այն մարդու կյանքի ու գործի մասին, որը մշտապես իր վրա է բևեռել շատ սերունդների ուշադրությունը:

Իհարկե, հնարավոր եմ համարում, որ ընթերցողներից ոմանց մոտ տարակուսանք կառաջանա այն բանի համար, որ ես Լորիս-Մելիքովին ներկայացրել եմ միայն դրական կողմերով, ուշադրությունից դուրս եմ թողել բացասական փաստերը և դրսևորել սուբյեկտիվ մոտեցում:

Միթե՞ Միխայիլ Տարիելովիչ Լորիս-Մելիքովը թերություններ չի ունեցել, վերջապես կարող են հարցնել ընթերցողները: Իհարկե, ունեցել է: Լորիս-Մելիքովն էլ մարդ էր, ուներ ջղեր, միս ու արյուն և նրան մարդկային ոչ մի թուլություն խորթ չէր: Նա էլ սիրել ու ատել գիտեր, նա էլ կարողանում էր հրճվել ու տխրել:

Բայց բոլոր դեպքերում Լորիս-Մելիքովը գրավիչ է իր անկեղծությամբ ու անկաշառությամբ: Նա մեծ մարդ էր: Ռուսաստանի քաղաքական ու ռազմական պատմության պայծառ աստղերից մեկը: Փորձեցին նրան անվանարկել: Հետաղեմները նրան համարում էին հեղափոխական: Հեղափոխականներն էլ կոմսին կոչում էին կեղծ լիբերալ: Նույնիսկ ոմանք փորձում էին Լորիս-Մելիքովին ներկայացնել որպես հայրենիքի թշնամի:

Այս բոլոր բանսարկություններին ու զրպարտություններին Միխայիլ Տարիելովիչը վերաբերում էր բարեհոգությամբ, չէր չարանում: Եվ իբր պատասխան իր բոլոր հակառակորդներին, նա ասել է. «Նրանց տրվել է այդ սրտի դիկտատուրան: Եվ միթե՞ Կատկովը լրջորեն կարծում է, թե ինձ խայթում է այդպիսի շոյող մականունով, որով իրականում ես կարող եմ միայն հպարտանալ և հատկապես այսպիսի դաժան և չար ժամանակ, ինչպիսին մերն է: Ես ինձ համար ամենաբարձրագույն պատիվը, պարգևը կհամարեի, եթե իմ գերեզմանաքարի վրա ամեն տեսակ տապանագրերի փոխարեն գրվեր միայն այդ մականունը»:

Բայց քարն ու մետաղը ժամանակի ընթացքում քայքայվում են, հաճախ էլ կորչում: Միայն բարի գործերն ու դրանց կերտողներն են ընթանում հավերժության հետ կողք-կողքի:

Այդպիսին են նաև հայ ժողովրդի արժանավոր զավակ, Ռուսաստանի նշանավոր պետական գործիչ ու տաղանդավոր զորահրամանատար Միքայել Տարիելի Լորիս-Մելիքյանի անունն ու գործը:

* * *

Հայ ժողովրդի ազգային հերոսների շարքում իր արժանի տեղն ունի նաև Միքայել Տարիելի Լորիս-Մելիքյանը: Եվ դրա լավագույն ապացույցներից մեկն էլ այն է, որ 1942թ. Հայրենական մեծ պատերազմի ամենադաժան տարում, երբ գերմանական զավթիչները հասել էին Հյուսիսային Կովկաս ու սպառնում էին ներխուժել Անդրկովկաս ու Հայաստան, Խորհրդային Միության Գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղը 4000 տպաքանակով հրատարակեց «Գեներալ -ադյուտանտ Մ.Տ.Լորիս-Մելիքով» գրքույկը (հեղինակ՝ Հ.Էլչիբեկյան) և ուղարկեց ռազմաճակատում մարտնչող հայ զինվորներին:

06.09.2003թ.
Գ.Հարթավան-Երևան

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Ա

Աբազա Ալեքսանդր Ագեևիչ (1821-1895), Պետական խորհրդի անդամ, ֆինանսների նախարար (1880-1881)

Աբազա Նիկոլայ Սավիչ (1837-1904), Մամուլի գլխավոր վարչության պետ (1880-1881)

Աբամելիքով իշխան, Մ.Տ.Լորիս Մելիքովի դասընկերներից

Աբդի փաշա, թուրքական հրամանատար

Աբդուլ Մեջիդ (1823-1861), թուրքական սուլթան (1839-1861)

Աբդուլ Համիդ Երկրորդ (1842-1917), թուրքական սուլթան (1876-1909)

Աբեդդին փաշա, Թուրքիայի մեծ վեզիր

Աթիլա (մահ. 453թ.), հոների առաջնորդ

Ալամդարյան Հարություն (1796-1834), մանկավարժ, ազատագրական շարժման գործիչ

Ալավերդի Հովհաննես, թուրքական պառլամենտի փոխնախագահ

Ալդերբերգ, կոմս

Ալեքսանդր Երրորդ, Ալեքսանդր Ալեքսանդրովիչ, (1845-1894),

Ալեքսանդր Երկրորդ (1818-1881),

Ալեքսանդրա Իոսիֆովնա, մեծ իշխանուհի

Ալի փաշա, Արդահանի ամրոցի պարետ

Ալի փաշա, Թուրքիայի մեծ վեզիր

Ալխազյան Հակոբ Խոսրոֆի (1823-1896), գեներալ

Ախվերդյան Գևորգ Ախվերդիի (1818-1861), հայ բանասեր, բժիշկ, հասարակական գործիչ

Ակսակով Իվան Սերգեևիչ (1823-1886), հասարակական գործիչ, «Ռուս»-ի խմբագիր

Աղաբեկյան Մարկոս (1830-1908), Մատթեոս կաթողիկոսի նախկին քարտուղար

Արծրունի Գրիգոր (1845-1892), «Մշակ» թերթի հիմնադիր, խմբագիր

Արծրունի Երեմիա (1804-1877), Գրիգոր Արծրունու հայրը, գեներալ, հասարակական-քաղաքական գործիչ

Այվազ, Մ.Տ. Լորիս-Մելիքովի ազգական

Այվազովսկի Գաբրիել (1812-1880), եպիսկոպոս, «Բազմավեպի» առաջին **խմբագիրը,** Հովհաննես Այվազովսկու եղբայրը

Անդրաշի Յուլիուս (1823-1890), Ավստրո-հունգարական քաղաքական գործիչ, դիվանագետ

Անդրոնիկով, իշխան

Աննա, Կիևի մեծ իշխանուհի, մեծ իշխան Վլադիմիրի կինը, Բյուզանդական կայսր Կոստանտին Արշակունու դուստրը

Աննա, Կիևի մեծ իշխան Վլադիմիրի ու Աննայի թոռնուհին

Արզանյան Դավիթ, Ներսիսյան դպրոցի տեսուչ, Թիֆլիսում պանսիոնի հիմնադիր

Աշոտ, Մ.Տ. Լորիս-Մելիքովի ազգական

Արակչեև Ալեքսեյ Անդրեևիչ (1769-1834), կոմս, գեներալ, Պավել Առաջինի և Ալեքսանդր Առաջինի ժամանակ ամենից ազդեցիկ գործիչը

Արիստակես եպիսկոպոս Սեդրակյան (1844-1906), Վրաստանի հայոց թեմի առաջնորդ (1883-1889)

Արղության - Երկայնաբազուկ Հովսեփ (1743-1801), ազատագրական շարժման գործիչ, Ամենայն հայոց կաթողիկոս (1800-1801)

Արղության - Երկայնաբազուկ Մովսես Զաքարի (1798-1855), նշանավոր զինվորական գործիչ, մասնակցել է 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմին

Արղության-Երկայնաբազուկ Հովհաննես, Ներսիսյան դպրոցի ուսուցիչ

Արղության-Երկայնաբազուկ Նունե Հովհաննեսի, Նինա Իվանովնա, Մ.Տ.Լորիս-Մելիքովի կինը

Արղության-Երկայնաբազուկ Վարվառա Նիկոլայի, Մ.Տ.Լորիս-Մելիքովի որդի Տարիելի կինը

Ապարթալյան Հակոբ, թուրքական պառլամենտի երեսփոխան

Արշակունի Կոնստանտին, Բյուզանդիայի կայսր

Ասլան, Շամիլի զինակից

Բ

Բաբայան Ավետիք (1843-1913), բժիշկ, հասարակական գործիչ

Բագրատիոն - Էմներեթինսկի Դմիտրի, իշխան, գեներալ-մայոր

Բարյատինսկի Ալեքսանդր Իվանովիչ, (1815-1879), Կովկասի փոխարքա

Բարյատինսկի, Կազանի զինվորական նահանգապետ

Բաստամյանց Վահան, Պետերբուրգի հայոց եկեղեցու վանահայր

Բատիշկով Ստեպան, Ստեպան Խալտուրինի կեղծանունը

Բարաննիկով Ա., նարոդնիկ

Բարանով, գնդապետ, 3-րդ բաժանմունքի պետ

Բարանով Նիկոլայ Միխայլովիչ (1837-1901), գեներալ, Պետերբուրգի քաղաքագլուխ (1881-1882)

Բեբութով (Բարսեղ) Վասիլի Օսիպովիչ (1791-1858), գեներալ-լեյտենանտ, մասնակցել է 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմին, Երևանի մարզի կառավարիչ (1829-1838)

Բելոգոլովի Նիկոլայ Անդրեևիչ (1834-1895), հայտնի բժիշկ, Մ.Տ.Լորիս-Մելիքովի մտերիմներից

Բեկետով Ա., Պետերբուրգի համալսարանի ռեկտոր

Բենիցկի, Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր

Բենկենդորֆ Ալեքսանդր Խրիստաֆորովիչ (1783-1844), կոմս, ժանդարմերիայի և 3-րդ բաժանմունքի պետ (1826-1844)

Բիսմարկ Օտտո (1815-1898), գերմանական կանցլեր (1871-1890)

Բիրոն Էրնստ Իոհան (1690-1772), կոմս, կայսրուհի Աննա Իվանովնայի սիրեկանը

Բիքոնսֆիլդ Բենջամին Դիզրաելի (1804-1881), Անգլիայի վարչապետ (1868-1869 և 1874-1880)

Բլագովեշչենսկի, «Ռուսկոյե սլովո» թերթի նախկին խմբագիր

Բոբրինսկի Ա., գվարդիական շտաբի պետ

Բորիս, մեծ իշխան Վլադիմիրի և Աննայի որդին

Բորոզդին Մ., Մ.Տ.Լորիս-Մելիքովի մտերիմ դասընկեր, Սինգրելիայի օկրուգի պետ

Բրիմեր Է., գեներալ

Բուլվեր Հենրի, Անգլիայի դեսպանը Թուրքիայում

Բոտկին Սերգեյ Պետրովիչ, (1832-1889), բժիշկ, ռազմա-վիրաբուժական ակադեմիայի պրոֆեսոր

Գ

Գազազյան Հակոբ, թուրքական պառլամենտի երեսփոխան, օսմանյան կայսրության ֆինանսների նախարար

Գազամճյան Հակոբ, թուրքական պառլամենտի երեսփոխան

Գալկին-Վրասկի Մ.Ն., Աստրախանի նահանգապետ

Գալֆայան Խորեն (Նար Պեյ) (1831-1892), եպիսկոպոս, հասարակական-քաղաքական գործիչ

Գամբետա, Ֆրանսիայի պետական գործիչ

Գեյման, գեներալ

Գերցեն Ալեքսանդր Իվանովիչ (1812-1870),

Գևորգ Չորրորդ Քերեստեճյան (1812-1882), Ամենայն հայոց կաթողիկոս (1866-1882), հիմնադրել է Գևորգյան ճեմարանը (1874)

Գելֆման Հեսյա (1855-1881), մասնակցել է Ալեքսանդր Երկրորդի սպանության կազմակերպմանը

Գիրս Նիկոլայ Կարլովիչ (1820-1895), արտաքին գործերի նախարար (1882-1885)

Գլեբ, մեծ իշխան Վլադիմիրի և Աննայի որդին

Գորչակով Ալեքսանդր Միխայլովիչ (1798-1883), արտաքին գործերի նախարար

Գորդեենկո Ե.Մ., Խարկովի համալսարանի պրոֆեսոր

Գրաբբե, գեներալ

Գրադովսկի Ալեքսանդր Դմիտրովիչ (1841-1889), հայտնի լիբերալ-հասարակական գործիչ, ռուսական իրավունքի պատմաբան

Գրադովսկի Գրիգորի Կոնստանտինովիչ (1842-1915), հայտնի լրագրող

Գրինևիցկի Իգնատի (1855-1881), 1881թ. մարտի մեկին նրա նետած ռումբի

պայթյունից սպանվեց Ալեքսանդր Երկրորդը: Գրինևիցկին մահացավ ծանր վերքեր ստանալու պատճառով

Գրեյգ, ծովակալ, ֆինանսների նախարար

Գուրկո Իոսիֆ Վլադիմիրովիչ (1828-1901), Պետերբուրգի գեներալ-նահանգապետ (1879-1881)

Դ

Դանիել բեկ, Շամիլի զինակից

Դելյանով Իվան Դավիդովիչ (1818-1897), ժողովրդական լուսավորության նախարարի տեղակալ, հետո նախարար (1882-1897)

Դե Կուտուլի, «Թայմսի» թղթակից

Դեն, գեներալ

Դենիբեկով, հրամանատար

Դեվել, գեներալ

Դե Կուրսի, ֆրանսիական զինվորական կցորդ

Դոլգորուկովա Եկատերինա Միխայլովնա (իշխանուհի Յուրևսկայա), Ալեքսանդր Երկրորդի անօրինական կինը

Դոլգորուկով Վլադիմիր Անդրեևիչ (1810-1891), Մոսկվայի գեներալ- նահանգապետ (1856 թվականից)

Դոստոևսկի Ֆեոդոր Միխայլովիչ (1821-1881)

Դրենտելն Ա.Ռ., ժանդարմերիայի շեֆ

Դուխովսկի, գեներալ

Դունդուկով-Կորսակով, իշխան

Ե

Եգյան Կարապետ, (1835-1905)

Ելիսեև Գրիգորի Զախարովիչ (1821-1891), «Օտեչեստվեննիե զապիսկի»-ի հրապարակախոսության բաժնի ղեկավար

Եկատերինա Երկրորդ (1729-1796)

Ելիզավետա (1872-1968), Մ.Տ.Լորիս-Մելիքովի դուստրը

Եղիազարյան Վարդան, ազգային գործիչ (Երևան)

Եվանգուլյան Գևորգ (1843-1901), իրավաբան, ազգային գործիչ

Եվդոկիմով, գեներալ-թիկնապահ, Թերեքի մարզի պետ

Երիցյան Ալեքսանդր (1841-1902), նշանավոր պատմաբան

Երմոլով Ալեքսեյ Պետրովիչ (1772-1861), գեներալ, 1812թ. հայրենական պատերազմի հերոս, Կովկասում ռուսական զորքերի հրամանատար (1816-1827), պետական խորհրդի անդամ, Ղրիմի պատերազմի ժամանակ ղեկավարել է աշխարհազորային շարժումը

Զ

Զայյուբովսկի, Լ.Ն.Տոլստոյի մտերիմներից

Զայչնևսկի Պյոտր Գրիգորևիչ (1842-1896), Մոսկվայի համալսարանի ուսանող, «Երիտասարդ Ռուսաստան» թռուցիկի հեղինակը, որի համար ենթարկվել է երկարատև բանտարկության

Զասուլիչ Վերա Իվանովնա (1851-1919), նարոդնիկ, տնային ուսուցչուհի, 1878թ. հունվարի 24-ին կրակեց Պետերբուրգի քաղաքագլուխ Տրեպովի վրա: Ցարական դատարանը նրան արդարացրեց:

Զարիֆյան Խաչատուր, քահանա

Զաքար (1866-1896), Մ.Տ.Լորիս-Մելիքովի կրտսեր որդին

Զուրով Ալեքսանդր Ելպիդիֆորովիչ, Պետերբուրգի քաղաքագլուխ (1879-1880)

Է

Էզոպոս (6-5-րդ դդ. մ.թ.ա.), հույն առակախոս

Է., գեներալ, Մ.Տ.Լորիս-Մելիքովի դեմ բանսարկություններ կազմակերպող

Էյխիբեկյան Հ., պատմաբան

Էդվարդ Երկրորդ, Անգլիայի թագավոր

Էդուարդ 7-րդ (1841-1910), Անգլիայի թագավոր

Էմրիկյան, Կ.Պոլսի մեծահարուստ

Էհրամճյան Գևորգ, Կարսի հոգաբարձու

Թ

Թորգոմյան, Կ.Պոլսի ազգային ժողովի երեսփոխան

Ժ

Ժելյաբով Անդրեյ Իվանովիչ (1851-1881), նարոդնիկ, մահապատժի ենթարկվեց Ալեքսանդր Երկրորդի սպանությունը կազմակերպելու համար

Ժերվե, Խարկովի նահանգային ուսումնական օկրուգի պետ

Ի

Իգնատև Նիկոլայ Պավլովիչ (1832-1906), դեսպան Թուրքիայում (1864-1878), ներքին գործերի նախարար (1881-1882), ռուսական ազնվականության ծայրահեղ հետադիմական թևի առաջնորդ, սպանվել է 1906թ.
Իզաբելա, Անգլիայի թագուհի, էդվարդ երկրորդի կինը
Իզմիրլյան Մատթեոս (1845-1911), Ամենայն հայոց կաթողիկոս (1907-1910)
Իսմայիլ, էրզրումի փաշա
Իվանով Նիկոլայ, ուսանող, քաղաքական վտարանդի
Իփեկչյան Համբարձում (1837-1883), հասարակական գործիչ, մանկավարժ

Լ

Լազարև Հովհաննես (Իվան) Դավիդովիչ, (1820-1879), գեներալ
Լազարյան Ղազար, ազգային գործիչ
Լանկլուա Վիկտոր, ֆրանսիացի հայագետ
Լավրով Պյոտր Լավրովիչ (1823-1900), նարոդնիկության գաղափարախոս
Լեարդ Հենրի, 1870-ական թթ. Անգլիայի դեսպանը Թուրքիայում
Լերմոնտով Միխայիլ Յուրևիչ (1814-1841)
Լյուդովիկոս 16-րդ (1754-1793), Ֆրանսիայի թագավոր, մահապատժի է ենթարկվել հեղափոխական տրիբունալի վճռով
Լոբանով-Ռոստովսկի (1824-1896), Ռուսաստանի դեսպան Թուրքիայում (1878-1879)
Լոմոնոսով Միխայիլ Վասիլևիչ (1711-1765)
Լորիս-Մելիքով Ալեքսանդր Միխայլովիչ (ծնվ. 1926)
Լորիս-Մելիքով Աննա Ալեքսանդրի (ծնվ. 1959)
Լորիս-Մելիքով Դոմինիկա Ալեքսանդրի (ծնվ. 1961)
Լորիս-Մելիքով Հովհաննես (մահաց. 1878), գեներալ, Մ.Տ.Լորիս-Մելիքովի ազգականը
Լորիս-Մելիքով Միքայել Ալեքսանդրի (ծնվ. 1964)
Լորիս-Մելիքով Նատալյա Ալեքսանդրի (ծնվ. 1962)
Լորիս-Մելիքով Սոֆիա (ծնվ. 1862), Մ.Տ.Լորիս-Մելիքովի դուստրը
Լորիս-Մելիքով Վասիլ, Մ.Տ.Լորիս-Մելիքովի կրտսեր եղբայրը
Լորիս-Մելիքով Տարիել Զաքարի, Մ.Տ.Լորիս-Մելիքովի հայրը
Լորիս-Մելիքով Տարիել (1861-1941), Մ.Տ.Լորիս-Մելիքովի ավագ որդին
Լուի Նապոլեոն, Նապոլեոն Բոնապարտի կրտսեր եղբայրը
Լուի Ֆիլիպ Օռլեանցի, Ֆրանսիայի թագավոր

Խ

Խարաճյան Մանուկ, թուրքական պառլամենտի երեսփոխան
Խրիմյան Մկրտիչ (1820-1907), ազգային հոգևորական գործիչ, հռչակված **Հայրիկ անունով,** Ամենայն հայոց կաթողիկոս (1898-1907)

Ծ

Ծերենց, Հովսեփ Շիշմանյան (1822-1888)

Կ

Կալիչե, Ֆրանսիայի դեսպանը Թուրքիայում
Կապոդիստրիա Իոհան (Իվան), կոմս, 1809թ. սկսել է ծառայել դիվանագիտության մեջ: 1816թ. սկսած Կ.Նեսելրոդեի հետ ղեկավարել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը: Դեմ լինելով «Սրբազան դաշինքի» ռեակցիոն քաղաքականությանը, հրաժարական է տվել 1822թ. և հեռացել Ռուսաստանից: 1822թ. ընտրվել է անկախության համար պայքարող Հունաստանի առաջին նախագահ: Սպանվել է 1831թ.
Կավելին Կոնստանտին Դմիտրևիչ (1818-1885), պատմաբան, լիբերալ ուղղության հասարակական գործիչ
Կաննինգ Ստրեֆորդ, Անգլիայի դեսպան Թուրքիայում
Կատկով Միխայիլ Նիկիֆորովիչ (1818-

1887), հետադեմ գործիչ, «Մոսկովսկիյե վեդեմոստի» թերթի խմբագիր
Կարեքցյան Խաչատուր (1846-1891), Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ղեկավար, սպանվել է դաշնակցության ձեռքով
Կարակոզով Դմիտրի Վլադիմիրովիչ (1840-1866), նարոդնիկ, 1866թ. ապրիլի 4-ին անհաջող մահափորձ է կատարել Ալեքսանդր Երկրորդի վրա: Ենթարկվել է մահապատժի:
Կարլ 10-րդ Բուրբոն, Ֆրանսիայի թագավոր
Կեմպֆորդ, գեներալ, Թերեքի մարզի պետի օգնական
Կիբալչիչ Նիկոլայ Իվանովիչ (1854-1881), նարոդնիկ, մասնակցել է Ալեքսանդր Երկրորդի սպանությանը 1881թ. մարտի մեկին
Կիրով Մ., ռուսական հյուպատոս
Կլեյմենով Վասիլի Վասիլևիչ, երկրաբան
Կոբոզեև, նարոդնիկ
Կլյուչևսկի Վասիլի Օսիպովիչ (1841-1911), պատմաբան, Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր
Կյուրեղյան Հովհաննես, թուրքական պառլամենտի երեսփոխան
Կոմարով, գեներալ
Կոմիտաս (1869-1935)
Կոնստանտին Նիկոլաևիչ (1827-1892), մեծ իշխան, գեներա-ադմիրալ
Կոնի Անատոլի Ֆեոդորովիչ (1844-1927), նշանավոր իրավաբան
Կոշելև Ալեքսանդր Իվանովիչ (1806-1883), սլավոնոֆիլ
Կոստանյան Կարապետ (1849-1920), ազգային գործիչ, Ներսիսյան դպրոցի տեսուչ
Կովալինսկի Ի.Մ., Խարկովի ժանդարմերիայի պետ
Կովալևսկի Եվգրաֆ Պետրովիչ (1779-1867), ժողովրդական լուսավորության նախարար (1858-1861)
Կովալևսկի, գեներալ
Կովալևսկի Մաքսիմ Մաքսիմովիչ (1851-1916), պատմաբան, պետական խորհրդի անդամ
Կովալևսկի Միխայիլ Եվգրաֆովիչ (1830-1884), սենատոր
Կորտի, Իտալիայի դեսպանը Թուրքիայում
Կրոպոտկին, իշխան, Խարկովի նահանգապետ
Կրոպոտկին Պյոտր Ալեքսեևիչ (1842-1921), իշխան, գեներալի որդի, մի քանի անգամ ձերբակալվել է: Անարխիզմի հայտնի գաղափարախոս
Կունդուխով Մուսա, գեներալ, Վլադիկավկազի օկրուգի պետ
Կուտուզով Միխայիլ Իլարիոնովիչ (1745-1813)
Կվյատկովսկի Ա.Ա., Ալեքսանդր Երկրորդի դեմ մահափորձ կազմակերպողներից
Կրուզենշտերն Ա., Կովկասի փոխարքայի օգնական

Հ

Հախվերդյան Կատերինա (Եկատերինա), Մ.Տ.Լորիս-Մելիքովի մայրը
Հանֆելդ, Գերմանիայի դեսպանը Թուրքիայում
Հաջի-Մուրատ, Շամիլի նշանավոր զինակիցը
Հասունյան Անտոն (1809-1884), հայ կաթոլիկների պատրիարք Կ.Պոլիսում
Հարությունյան Դանիել, Մ.Տ.Լորիս-Մելիքովի հետախույզներից
Հենրիխ Առաջին, Ֆրանսիայի թագավոր
Հոշեն, Անգլիայի դեսպանը Թուրքիայում
Հովհան Օձնեցի (մահ. 728թ.), հայոց կաթողիկոս (717-728)
Հովհաննիսյան Աբգար (1849-1904), «Փորձի» և «Արձագանքի» խմբագիր
Հուսեին Համի փաշա, Կարսի պարետ

Չ

Չիքողյան, Մ. Լորիս-Մելիքովի բանագնացը

Ճ

Ճավճավաձե Իվան Զախարովիչ, գեներալ

Մ

Մադաթյան (Մադաթով) Վալերիան Գրիգորևիչ (1782-1829), գեներալ-լեյտենանտ
Մազչենկո Նիկոլայ, ուսանող, քաղաքական վտարանդի

Մակֆերլեյն Չարլզ, անգլիացի ճանապարհորդ
Մահմուդ Երկրորդ (1784-1839), թուրքական սուլթան (1809-1839)
Մակով Լև Սավիչ (1830-1883), ներքին գործերի նախարար (1878-1880)
Մանկունի Վահրամ (1846-1920), եպիսկոպոս, Գևորգ Չորրորդի հետ եկել էր Կ.Պոլսից, կաթողիկոսի գործակիցը
Մատթեոս Չուխաճյան (1802-1865), Ամենայն հայոց կաթողիկոս (1859-1865)
Մարիա Ալեքսանդրովնա (1824-1880), թագուհի, 1855 թվականից Ալեքսանդր Երկրորդի կինը
Մաքսուդյան Սեպուհ, թուրքական պառլամենտի երեսփոխան
Մենդելեև Դմիտրի Իվանովիչ (1834-1907)
Մելիխով, գեներալ
Մելիքով, փոխգնդապետ
Մելքոն խան, Իրանի պետական գործիչ
Մելնիկով Ի., Յարիցինի քաղաքագլուխ
Մենշիկով Ալեքսանդր Դանիլովիչ (1673-1729), Պյոտր Մեծի ժամանակաշրջանի ազդեցիկ պետական գործիչ
Մենշիկով Ալեքսանդր Սերգեևիչ (1787-1869), Ռուսաստանի դեսպան Թուրքիայում
Մահմեդ Ռյուշտի փաշա (1811-1882), օսմանյան պետական գործիչ
Մերենբերգ, կոմս, Ա.Ս.Պուշկինի աղջկա ամուսինը
Միլլեր Վ., Լազարյան ճեմարանի տնօրեն
Միլյուտին Դմիտրի Ալեքսեևիչ (1816-1912), կոմս, ռազմական նախարար (1861-1881)
Միխայիլ Նիկոլաևիչ (1832-1909), մեծ իշխան, Կովկասի փոխարքա(1863-1881)
Միխայիլ Պավլովիչ (1798-1849), մեծ իշխան, Նիկոլայ Առաջինի եղբայրը, ռազմական ուսումնական հաստատությունների պետ
Միխայլով Ադրիան, նարողնիկ
Միխայլով Ալեքսանդր, նարողնիկ
Միխայլով Իվան, շտաբս - կապիտան
Միխայլովսկի Նիկոլայ Կոնստանտինովիչ (1842-1904), նարողնիկական ուղղության հրապարակախոս
Միկկե, «Նյու-Յորք հերալդ» թերթի թղթակից
Միկոյան Անաստաս Իվանովիչ (1895-1978)
Մինկվից, Խարկովի օկրուգի զորքերի հրամանատար
Միշել, կոմս Պ.Վալուևը այս անունով է հաճախ հիշատակում Մ.Տ.Լորիս -Մելիքովին իր օրագրում
Միտհադ փաշա (1822-1883), թուրքական պետական գործիչ
Մլոդեցկի Իպոլիտ, Մ.Տ.Լորիս -Մելիքովի դեմ 1880թ. փետրվարի 20-ին կատարեց մահափորձ, որի համար փետրվարի 22-ին կախաղանի միջոցով մահվան դատապարտվեց
Մորոզով Նիկոլայ Ալեքսանդրովիչ (1854-1946), նարողնիկ, հետագայում ԽՍՀՄ պատվավոր ակադեմիկոս
Մուխթար փաշա, թուրքական զորքերի գլխավոր հրամանատարը Կովկասյան ռազմաճակատում, Աբդուլ Ազիզ սուլթանի որդին
Մուհամեդ Ղազի (1795-1832), Դաղստանի իմամ
Մուստաֆա Զարիֆ փաշա, թուրքական զորքերի հրամանատար Կովկասյան ռազմաճակատում
Մուրադ Հինգերորդ (1840-1904), թուրքական սուլթան (1876)
Մուրավյով-Կարսկի Նիկոլայ Նիկոլաևիչ (1794-1866), մասնակցել է 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմին, գեներալ, Կովկասի փոխարքա (1854-1855)
Մուրավյով Նիկոլայ Կոնստանտինովիչ (1850-1908), Մոսկվայի դատական պալատի դատախազ, հետագայում դեսպան Իտալիայում

Յ

Յանկովսկի, Կովկասի ուսումնական օկրուգի պետ, ժանդարմերիայի գեներալ
Յավրույան, թուրքական պառլամենտի երեսփոխան
Յուսուֆյան Տիգրան (1835-1900), Կ.Պոլսի ազգային գործիչ
Յուրև Սերգեյ Անդրեևիչ (1821-1888), «Ռուսկայա միսլի» խմբագիր
Յուրևսկայա իշխանուհի, տես՝ Դոլգորուկովա Ե.Մ.

Ն

Նաբոկով Դմիտրի Նիկոլաևիչ (1827-1904), արդարադատության նախարար (1878-1885)
Նալբանդյան Միքայել (1829-1866)
Նապոլեոն Բոնապարտ (1769-1821)
Նատալյա, Ա.Ս. Պուշկինի դուստրը
Նարիշկին Ալեքսանդր, Մ.Տ.Լորիս -Մելիքովի յունկերական դպրոցի դասընկեր
Նեկրասով Նիկոլայ Ալեքսեևիչ (1821-1877),
Նեջիպ փաշա, թուրքական պետական գործիչ
Նեպոկոյչիցկի, պետական խորհրդի անդամ
Ներոն, (37-68), Հռոմի կայսր
Ներսես Աշտարակեցի (1770-1857), եղել է Վրաստանի, Նոր Նախիջևանի, Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդ, Ամենայն հայոց կաթողիկոս (1847-1857)
Ներսիսյան Խաչատուր, թուրքական պառլամենտի երեսփոխան
Նիկոլայ Առաջին (1796-1855)
Նիկոլայ Երկրորդ (1868-1918)
Նիկոլայ Նիկոլաևիչ (1843-1911), մեծ իշխան
Նիկոլաի Ալեքսանդր Պավլովիչ (1831-1899), բարոն, պետական խորհրդի անդամ, ժողովրդական լուսավորության նախարար (1881-1882)
Նիկոլաևե Ն.Յա., «Թիֆլիսկիե վեդեմոստի» թերթի թղթակից
Նիկողոսյան Գրիգոր, «Մշակ» թերթի թղթակից
Նովիկով Եվգենի, Ռուսաստանի դեսպանը Թուրքիայում
Նովիկով Սերգեյ Եվգենովիչ (ծնվ. 1859թ.), Մ.Տ.Լորիս -Մելիքովի դուստր Մարիամի ամուսինը
Նուպար փաշա, Նուպարյան (1825-1899), ազգային գործիչ, եգիպտոսի պետական գործիչ, նախարարապետ

Շ

Շահումյան, տնատեր
Շամիլ (1799-1871), Դաղստանի և Չեչնիայի իմամ
Շամշին Իվան Իվանովիչ (1835-1912), սենատոր
Շատիլով, գեներալ
Շելկովնիկով Բեբութ Մարտիրոսի (1837-1878)
Շեխյանց Մելիք, Կարսի հոգաբարձու
Շերվաշիձե Միխայիլ, Աբխազիայի իշխան
Շիրև, նարողնիկ
Շլիպպենբախ, բարոն, յունկերական դպրոցի պետ
Շմիտդ, 3-րդ բաժանմունքի պետ
Շմիտդ, բանտապետ
Շտոկովիչ, կապիտան, Բայազետի ամրոցի պաշտպանության պետ
Շուվալով Պյոտր Անդրեևիչ (1827-1889), Ռուսաստանի դեսպանը Անգլիայում (1874-1879)

Չ

Չայկովսկի Նիկոլայ (1850-1926), նարողնիկական խմբի ղեկավար
Չերազ Միհաս (1852-1929), հասարակական գործիչ, խմբագիր, Բեռլինի կոնգրես մեկնած հայոց պատվիրակության թարգմանիչ
Չերկասսկի Վլադիմիր Ալեքսանդրովիչ (1821-1878), սլավոնոֆիլ 1877-1878 թթ. պատերազմի ժամանակ Կարմիր խաչի լիազոր
Չերնիշև Ալեքսանդր Իվանովիչ (1786-1857), ռազմական նախարար (1827-1852)
Չերնիշևսկի Նիկոլայ Գավրիլովիչ (1828-1889)
Չերևին, գեներալ, ժանդարմերիայի շեֆ
Չոպանյան Արշակ Հովհաննեսի (1872-1954), գրող, հասարակական գործիչ

Պ

Պալլարյան, թուրքական պառլամենտի երեսփոխան
Պառնասյան Պողոս, Կ.Պոլսի Ազգային ժողովի երեսփոխան
Պավլով Պլատոն, Կովկասյան բանակի շտաբի պետ
Պատկանյան Ռաֆայել (1830-1892)
Պարոնյան Հակոբ (1843-1891)
Պացևիչ, Բայազետի ամրոցի պարետ
Պեկյան Թադևոս (1842-1908), հասարակական գործիչ, Կ.Պոլսի Ազգային ժողովի երեսփոխան

Պերետց Եգոր Աբրամովիչ (1833-1899), բարոն, պետական խորհրդի քարտուղար (1878-1883)
Պետրոսյանց Սամսոն (Վարդան Տեր-Պողոսյան), Բայազետի պաշտպանության հերոս
Պետրով, Այս ազգանունով է մի անգամ հանդես եկել Մ.S.Լորիս Մելիքովը
Պերովսկայա Սոֆիա Լվովնա (1854-1881), նարոդնիկ, Ալեքսանդր Երկրորդի սպանության կազմակերպիչ, մահապատժի է ենթարկվել կախաղանի միջոցով
Պզտիկյան, թուրքական պառլամենտի երեսփոխան
Պիկուլ Վ., Ռուս գրող
Պիրոգով Նիկոլայ Իվանովիչ (1810-1881), նշանավոր բժիշկ
Պլեհանով Գեորգի Վալենտինովիչ (1856-1918),
Պյոտր Մեծ (1672-1725)
Պոգոդին Միխայիլ Պետրովիչ (1800-1875), ռուս նշանավոր պատմաբան, Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր
Պոբեդոնոսցև Կոնստանտին Պետրովիչ (1827-1907), Սինոդի օբեր-դատախազ (1880-1905)
Պոգուսկի, բժիշկ
Պոլոնսկի Յակով Պետրովիչ (1820-1898), պոետ, «Ստրանա»-ի խմբագիր
Պոսե Վ., հուշագիր
Պոսետ Կոնստանտին Նիկոլաևիչ (1819-1899), ադմիրալ, հաղորդակցության ճանապարհների նախարար (1874-1888)
Պոտեխին Ն.Ա., «Պետերբուրգսկիե վեդոմոստի» թղթակից
Պոպկո, գեներալ, Կարսի նահանգապետ
Պոտյոմկին Պավել Սերգեևիչ, գեներալ
Պոտտո Վասիլի, ռազմական պատմագիր
Պռոշյան Պերճ (1830-1907)
Պրեսնյակով, նարոդնիկ
Պուշկին Ալեքսանդր Սերգեևիչ (1799-1837)

Ռ

Ռեադ, Կովկասի փոխարքայի ժամանակավոր պաշտոնակատար
Ռենոյ, ֆրանսիական սենատոր
Ռեշիդ փաշա, Թուրքիայի մեծ վեզիր
Ռիսակով Նիկոլայ Իվանովիչ (1862-1881), Ալեքսանդր Երկրորդի սպանության մասնակից, ենթարկվել է մահապատժի կախաղանի միջոցով
Ռոոպ, գեներալ
Ռոշֆոր, ֆրանսիական սենատոր
Ռուբեն, թուրքական պառլամենտի երեսփոխան
Ռուսճուգլյան Գևորգ, Ադրիանապոլսի հայկական եկեղեցու վարդապետ

Ս

Սաբլին Ն., նարոդնիկ
Սաբուրով Անդրեյ Ալեքսանդրովիչ (1836-1918), ժողովրդական լուսավորության նախարար (1880-1881)
Սաղաթելյանց Ղուկաս, Կարսի հոգաբարձու
Սալտիկով-Շչեդրին Միխայիլ Եվգրաֆովիչ (1826-1889)
Սամարին Յուրի Ֆեոդորովիչ (1819-1876), սլավոնոֆիլ
Սանասարյանց Մկրտիչ Սարգսի, հայ մեծ բարեգործ
Սարգսյան Ալեքսան, թուրքական պառլամենտի երեսփոխան
Սաֆետ փաշա, Թուրքիայի մեծ վեզիր
Սեմյուր, Անգլիայի դեսպանը Ռուսաստանում
Սերնո-Սոլովևիչ, Գերցենի զինակից
Սերվիչե, Սերովբե Վիչենյան (1815-1887), Կ.Պոլսի ազգային քաղաքական գործիչ
Սիմբորսկի Ն.Վ., «Նովոյե վրեմյա»-ի թղթակից
Սիմեոնյան Պետրոս (1830-1811), «Մեղու Հայաստանի» խմբագիր
Սկալոն Վ.Յու., «Զեմստվո»-ի խմբագիր
Սկալկովսկի Ալեքսանդր Ապոլոնովիչ, Մ.S.Լորիս-Մելիքովի նախկին քարտուղար
Սկոբելև Միխայիլ Դմիտրևիչ (1843-1882), գեներալ, Բալկաններում և Միջին Ասիայում ռազմական գործողությունների ակտիվ մասնակից
Սոլովյով Ա., նարոդնիկ 1879թ. ապրիլի 2-ին Ալեքսանդր Երկրորդի դեմ մահափորձ կատարելու համար ենթարկվեց մահապատժի կախաղանի միջոցով

Սոլովյով Վլադիմիր Սերգեևիչ (1853-1900), փիլիսոփա, Ս.Մ.Սոլովյովի որդին
Սոլովյով Սերգեյ Միխայլովիչ (1820-1879), նշանավոր պատմաբան
Սոլսկի Դմիտրի Մարտինովիչ (1833-1910), պետական վերահսկիչ
Սպանդարյան Սպանդար (1849-1922), «Մեղու Հայաստանի» աշխատակից, «Նոր դարի» խմբագիր
Սվյատոպոլկ-Միրսկի Դմիտրի Իվանովիչ (1825-1899), իշխան, Կովկասի փոխարքայի օգնական (1876-1882) պետական խորհրդի անդամ
Ստարոսելսկի Դ.Ս., Կովկասի փոխարքայի տեղակալ
Սուլթանշահ Անանիա, Մ.Նալբանդյանի մտերիմ ընկերը
Սուխոզանետ Նիկոլայ Օնուֆրիևիչ (1797-1871), ռազմական նախարար (1856-1862)
Ստասուլևիչ Միխայիլ Մատվեևիչ (1826-1911), «Վեստնիկ Եվրոպի» խմբագիր
Ստուլիպին Պյոտր Արկադևիչ (1862-1911), նախարարների խորհրդի նախագահ (1906-1911)
Ստրոգանով Սերգեյ Գրիգորևիչ (1794-1882), կոմս, պետական խորհրդի անդամ
Սուվորով Ալեքսանդր Վասիլևիչ (1730-1800)
Սունդուկյան Գաբրիել (1825-1912),
Սուվորին Ալեքսեյ Սերգեևիչ (1834-1912), «Նովոյե վրեմյա» թերթի խմբագիր
Սուսլով, գեներալ
Սուտգոֆ Ալեքսանդր, գնդապետ, յունկերական դպրոցի պետ
Սուրենով Դավիթ, թարգմանիչ
Սցիլա, առասպելական էակ

Վ

Վազիֆ Մուհամեդ փաշա, թուրքական զորքերի գլխավոր հրամանատար
Վալուև Պյոտր Ալեքսանդրովիչ (1814-1890), կոմս, ներքին գործերի նախարար (1861-1868), նախարարների կոմիտեի նախագահ (1879-1890), գրող
Վարդանյան Փիլիպոս (1842-1917), իրավաբան
Վարժապետյան Ներսես (1837-1884), Կ.Պոլսի պատրիարք (1874-1884)
Վելլեր Մոիսեյ, ուսանող, քաղաքական վտարանդի
Վենյուկով, «Ռուսկիյ վեստնիկ»-ի հեղինակներից
Վիլհելմ Առաջին (1797-1888), գերմանական կայսր
Վիլյամս, անգլիական գեներալ
Վենսպիր, իտալացի գնդապետ
Վիտգենշտեյն Ֆերդինանդ, ավստրիական գեներալ
Վիտտե Ալեքսանդր, Դրագոմյան գնդի հրամանատար
Վիտտե Սերգեյ Յուլևիչ (1849-1915), կոմս, պետական գործիչ
Վլադիմիր Ալեքսանդրովիչ (1847-1909), մեծ իշխան, Ալեքսանդր Երրորդի եղբայրը
Վլադիմիր Սվյատոսլավովիչ (մահ. 1015), Կիևի մեծ իշխան (980-1015)
Վոյնով, փոխգնդապետ
Վորոնցով-Դաշկով Իլարիոն Իվանովիչ (1837-1916), գեներալ-թիկնապահ, արքունիքի նախարար, «սրբազան դրուժինայի» ղեկավար (1881-1882), Կովկասի փոխարքա (1905-1916)
Վորոնցով Միխայիլ Սեմյոնովիչ (1782-1856), իշխան, գեներալ-ֆելդմարշալ, Կովկասի փոխարքա (1844-1853)

Տ

Տատյան Պողոս (1800-1868), Կ.Պոլսում ազգային գործիչ
Տեր-Ղուկասով Արշակ Հարությունի (1819-1881)
Տեր-Ղուկասով Սոլոմոն Արտեմովիչ,
Տեր-Պետրոսյան Սիմոն (Կամո) Արշակի (1882-1922)
Տիգրան փաշա, եգիպտոսի պետական գործիչ
Տիգրանյան Լևոն, բժիշկ
Տիխոնով, նարոդնիկ
Տիմաշև Ալեքսանդր Եգորովիչ (1818-1893), ժանդարմերիայի կորպուսի պետ (1856-1867), ներքին գործերի նախարար (1868-1877)
Տիսո, Ավստրո-Հունգարիայի դեսպանը Թուրքիայում

Տյուտչեվա Կ., Սինոդի օբեր-դատախազ Կ.Պոբեդոնոսցևի մտերիմներից
Տոլստոյ Դմիտրի Անդրեևիչ (1829-1889), ժողովրդական լուսավորության նախարար (1866-1880), ներքին գործերի նախարար (1882-1889)
Տոլստոյ Լև Նիկոլայևիչ (1828-1911),
Տոլստոյա Սոֆիա Անդրեևնա (1844-1919), Լ.Ն.Տոլստոյի կինը
Տոտլեբեն Էդուարդ Իվանովիչ (1818-1884), գեներալ, Օդեսայի գեներալ-նահանգապետ, (1879)
Տրեպով Ֆեոդոր Ֆեոդորովիչ (1812-1889), Պետերբուրգի քաղաքապետ (1866-1878)
Տուրգենև Իվան Սերգեիչ (1818-1883),

Ր

Րաֆֆի, Հակոբ-Մելիք Հակոբյան (1835-1888)

Ու

Ուիլլեր, «Նյուրք-Յորք հերալդ» թերթի թղթակից
Ուռուսով Ալեքսանդր Իվանովիչ (1843-1900), իշխան

Փ

Փափազյան Ստեփան (1839-1888), հասարակական գործիչ, Կ.Պոլսի ազգային ժողովի երեսփոխան
Փափազյան Գևորգ, թուրքական պառլամենտի երեսփոխան

Ք

Քարիբդիս, առասպելական էակ
Քեամիլ բեյ, թուրքական սուլթանի արարողապետ
Քիշմիշյան Ստեփան Օսիպի, գեներալ

Օ

Օբրուչև Նիկոլայ Նիկոլաևիչ, գեներալ-լեյտենանտ, գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայի պրոֆեսոր
Օլգա Ֆեոդորովնա, Կովկասի փոխարքա մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչի կինը
Օլդենբուրգսկի Պյոտր Գեորգիևիչ (1812-1881), արքայորդի, պետական գործիչ
Օկլադսկի, նարոդնիկ
Օկլոբժիո, գեներալ
Օմար փաշա, Աբխազիայում գործող թուրքական բանակի հրամանատար:
Օսման փաշա (1837-1900), Բալկանյան ռազմաճակատում թուրքական բանակի գլխավոր հրամանատար
Օսման բեյ, թուրք ավանտյուրիստ
Օստրովսկի Ալեքսանդր Նիկոլաևիչ (1823-1886), դրամատուրգ
Օրբելիանի Իլյա, իշխան, գեներալ
Օրմանյան Մաղաքիա (1841-1918), Կ.Պոլսի պատրիարք (1896-1908)

Ֆ

Ֆադեև Ռոստիսլավ Աներեևիչ (1824-1883), գեներալ, ռազմական պատմաբան
Ֆայիկ փաշա, թուրքական հրամանատար
Ֆիգներ Վերա Նիկոլաևնա (1852-1942), նարոդնիկ, 1884-1904թթ. եղել է բանտարկված Շլիսելբուրգյան ամրոցում
Ֆիլիպ Չորրորդ, Ֆրանսիայի թագավոր
Ֆիլիպով, գնդապետ
Ֆիլիպսոն, գեներալ-լեյտենանտ
Ֆոն Դոններմարկ Հենկել, կոմս, պրուսական մագնատ
Ֆոն Մերենբերգ Օլգա Գեորգիևնա (1898-1983), Մ.Տ.Լորիս-Մելիքովի թոռ Միխայիլ Տարիելովիչի (1900-1980) կինը
Ֆոն Շակ, գեներալ
Ֆորբզ, «Թայմսի» թղթակից
Ֆրոլով Միխայիլ, նարոդնիկ
Ֆուատ փաշա, Թուրքիայի արտաքին գործերի նախարար

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արխիվ

1. Ռուսաստանի պետական կենտրոնական արխիվ. ֆոնդ. 109
2. Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի արխիվ. Ռ. Պատկանյանի, Թ. Ազատյանի, Կ. Կոստանյանի, Գ. Աղանյանի, Լազարյան ճեմարանի ֆոնդեր
3. Հայաստանի պատմության պետական արխիվ - Գ. Եվանգուլյանի, Կ. Եզյանի ֆոնդեր

Գրականություն

Աճեմյան Ա., Պատմութիւն Արեւելեան պատերազմի, հ. Ա. Կ. Պոլիս, 1879.
Երամյան Հ., Հուշարծան Վան-Վասպուրականի հ. 1-2. Ալեքսանդրիա, 1929.
Զարդարյան Վահան, Յիշատակարան, Ա հատոր, Գահիրե, 1933-1939.
Ներսիսյան Մ. Ն., Հայերի մասնակցությունը 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմին, Երևան, 1952.
Սարուխան, Հայկական խնդիրն և ազգային սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912.
Валуев П. А. Дневник 1877-1884гг. Петроград, 1919.
Градовский А. Д. Сборник сочинений, т.т. 1-9, П-б, 1899-1904гг.
Градовский Г. Е. Война в Малой Азии в 1877г. С. Петербург, 1878.
Грязнов Ф. Ф. Военный обзор передового театра в Азиатской Турции, т.т. 1-2, Тифлис, 1895-1897.
Джанишев Братская помощь пострадавшим в Турции армянам, С. Петербург, 1898.
Дневник Д. А. Милютина, т.т. 1-4, Москва, 1947-1950.
История русской армии и флота, т. II, М. 1913.
Кишмишев С. О. Война в Турецкой Армении 1877-78гг. С. Петербург, 1884.
Ковалевский М. М. Русская революция в судебных процессах и мемуарах, М. 1923.
Ковалевский М. М. Конституция графа Лориса-Меликова, Берлин, 1893.
Кони А. Ф. Собрание сочинение, т. 1-8.
Литературное наследство, т. 86.
Материалы и исследования Ф. М. Достоевского, т. 4.
Островский А. Н. т.т. 15,16.
Перетц Е. А. Дневник 1880-1883гг. М-Л. 1927.
Победоносцев К. П. Письма к Александру III, М. 1925-26гг., т. 1-2.

Сборник материалов по пусско-турецкой войне 1877-1878гг. на Кавказско-малоазиатском театре, вып. III, часть 2, С. П. 1903.
Скальковский К. Внешняя политика России и положение иностранных держав, С. Петербург, 1879.
Толстой Л.Н. т. 20
Тургенев И. С. т. 12.
Холмогорова Е., Холмогоров М. Вицеимператор, М. 1998.

Պարբերական մամուլ

Ամահիտ 1899
Արարատ 1877, 1907
Արաքս 1889, 1890
Արձագանք 1889
Արևելյան մամուլ 1878
Մեղու Հայաստանի 1857, 1860, 1877, 1878, 1883
Մշակ 1877, 1878, 1883, 1888, 1889
Սուրճ - 1889, 1907
Նոր դար 1889
Փորձ 1877, 1878, 1879, 1881
Былое 1906
Вестник Европы 1881, 1905, 1907
Вестник права 1905
Голос 1878
Земство 1880, 1881
Исторический вестник 1889
Красный архив 1923, 1925, 1927, 1930, 1932, 1933
Минувшие годы 1908
Новое время 1883
Отечественные записки 1889
Порядок 1881
Русский архив 1873, 1881, 1888, 1889, 1907, 1912
Русский курьер 1883
Русская мысль 1880, 1881, 1889, 1906
Русская старина 1881, 1884, 1888, 1889, 1891, 1914
Современные вести 1877
Современник 1913
Терек - 1883

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՔ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ /Առաջաբանի փոխարեն/ 4
ԱՌԱՋԻՆ ՄԱՍ 9
ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ 35
ԵՐՐՈՐԴ ՄԱՍ 74
ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ 115
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ 219
ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍ 251
ՅՈԹԵՐՈՐԴ ՄԱՍ 281
ՈՒԹԵՐՈՐԴ ՄԱՍ 318
ԻՆՆԵՐՈՐԴ ՄԱՍ 365
ՏԱՍՆԵՐՈՐԴ ՄԱՍ 410
ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՄԱՍ 440

ՎԼԱԴԻՄԻՐ ԳԵՎՈՐԳԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԿՈՄՍ ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎ

ВЛАДИМИР ГЕВОРКОВИЧ ПЕТРОСЯН

ГРАФ ЛОРИС-МЕЛИКОВ

(Жизнь и деятельность)

Համակարգչային մակետավորումը և էջադրումը՝ Նաիրա Կարապետյան

Համակարգչային շարվածքը՝ Մառլենա Բաբայան
Մարատ Պետրոսյան


Ստորագրված է տպագրության 20.06.2005թ.

Գինը պայմանագրային

Թուղթ՝ օֆսեթ: Չափսը՝ 60X84 1/16: Ծավալը՝ 30 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 500:

ՏՊԱԳՐՎԵԼ Է «ՍԱՐՎԱՐԴ ՀՐԱՏ» ՏՊԱՐԱՆՈՒՄ

9(47.925)
П-50



Վլադիմիր Գևորգի Պետրոսյանը ծնվել է Ապարանի շրջանի Հարթավան գյուղում: Ստացել է բարձրագույն մանկավարժական կրթություն: Դասավանդել է դպրոցում, զբաղվել է ժուռնալիստիկայով, վարել կուսակցական-սովետական աշխատանք:

1992թ. Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանի պատմության ամբիոնի վարիչն է: Դասավանդում է Հայ ժողովրդի պատմություն և Ռուսաստանի պատմություն:

Մի շարք գրքերի և գիտական-հրապարակախոսական հոդվածների հեղինակ է: Պատմական գիտությունների դոկտոր է, ինֆորմատիկայի միջազգային ակադեմիայի ակադեմիկոս: